

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՎԱՀ

ՄԻԼԵԳԵՎ 1915





Вид Ереванской крепости в 1821 г.: Гюнтуар и Марине Агарама. Синтаксис написан в Тифлисе.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՅՐԱԳՐԱԳԵՐԸ





ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մավել է 1952-ին, Երևանում:
Հեղինակ է մի քանի գոքերի և
երկու հարյուրից ավելի հոդ-
վածների՝ նվիրված պատմու-
թյան, բանասիրության և ազ-
գագործյան հարցերին:

Աշխարհի ոչ մի երկիր իր պատմության
ընթացքում այնքան մայրաքաղաք չի
փոխել, որքան Հայաստանը: Եթե
նովմին շիազվենք պատմական տարրեր
ժամանակահատվածներում իրենց
անկախ հոչակած Փոքր Հայքի, Ծոփքի,
Սյունիքի, Կիլիկիայի, Տաշիր-Զորագետի,
Փառիսոսի և այլ հայկական

թագավորությունների մայրաքաղաքները
կամ ժամանակավոր
թագավորանիւսները, ապա կունենանք
տասներկու մայրաքաղաք՝ Վան,
Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ,
Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին,
Բագրատ, Շիրակավան, Կարս, Անի և
Վերշապես, Երևան:

Հայ պատմիչները այլևայլ առիթներով
հիշատակելով անցյալի քաղաքներից
որևէ մեկը, հաճախ մանրամաներ չեն
հաղորդել նրա արտաքին տեսքի, ներքին
կյանքի, ընակիչների միասունակցի
մասին: Այս բացը մասամբ լրացնում են
պեղումները, բայց, ցավոք, այդ
քաղաքներից շատերը հնագիտական
ուսումնակիրության քիչ են ենթարկվել,
կամ պեղվել են մասնակիրեն: Այդ է
պատճառը, որ բազում հարցեր մնում են
առկան կամ էլ պատասխանվում են
ենթարկար:

Անգնահատելի են տարրեր ազգերի
պատմագիրների և ճանապարհորդների
աշխատություններն ու
ուղեգրությունները, որոնք օգնում են
լրացնելու այս կամ այն քաղաքի
պատմությունը, երբեմն էլ
հնարավորություն են տալիս
համակողմանի ճանաչելու հրանց
ներքաղաքային կյանքը: Տարեցտարի
հայտնաբերվող նորանոր նյութերի,
փաստաթոշերի, ձեռագրերի,
հիշատակարամների, հնագիտական
հետազոտությունների շնորհիվ
ամբողջավոր է Հայաստանի և նրա
տասներկու մայրաքաղաքների
պատմությունը:

Գիրքն առաջին անգամ տպագրվել է
1985-ին՝ «Հայոց մայրաքաղաքները»
վերնագրով:

Գաղափարական արգելվների
վերացումը և անցած տարիների
ընթացքում հավաքված նյութերը
հնարավոր դարձրին գրի լրամշակված
նոր հրատարակությունը:

ԳՄԴ 63.3 (22)
Վ. 301

Վարդանյան Ս.

Հայաստանի մայրաքաղաքները:
Եր.: Ապոլոն, 1995. - 264 էջ:

Վ. 10503020913
749(01)-95

ISBN 5-8079-0778-7

© Սերգեյ Վարդանյան
Հայաստանի մայրաքաղաքները

Մակետը և ձևավորումը՝
Անահիտ Ֆլշյանի
Հարություն Սամուելյանի

© Հայերեն գլխագրերի տառատեսակը
Հարություն Սամուելյանի


ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՅՐԱՔԱՆՔՆԵՐԸ


SERGEY VARDANYAN

THE CAPITALS
OF ARMENIA

ԱՊՈԼՈՆ
ԵՐԵՎԱՆ
1995



VAN



ԿԱՆ

Քաղաքի պատմությունը դարեր շարունակ «Մթերի դուռ» նման փակ էր ուսումնասիրողների առաջ, իսկ նրա սեպագիր արձանագրությունները, ինչպես մոգական նշաններ, քար լուսաբանում:

Եվրոպացի առաջին գիտնականը, որ սեպագրերն ուսումնասիրելու հպատակով այցելեց Վան՝ Ֆ. Շուլցն էր: Պահպանվել է Վանի միջնաբերդի նրա մանրամասն նկարագրությունը, ըստ որի, բերդի ողջ պահակազորը բաղկացած էր մի ծեր զինվորից և մի վարժեցրած արշից: Բերդում նա տեսել է նաև մի քանի հին բրոնզե թնդանոթներ, որոնք ավելի շատ քանզարանային արժեք ունեին, քան ուզմական: 1827—29 թվականներին Շուլցին հաջողվեց Վանում և նրա շրջակայրում ընդօրինակել մի քանի տասնյակ արձանագրություն: Դրանք նա ուղարկեց Փարիզ, իսկ ինքը մնաց խորանակություն բազում դարերից համրութեն ու անօթարթ նայող սեպագրերի գաղտնիքի մեջ: Բայց գիտնականին շնաջողվեց իրականացնել իր ծրագիրը, քրդերը սպանեցին նրան: Մեկ տասնամյակ անցավ, մինչև Շուլցի ընդօրինակումները հրապարակվեցին և գիտական աշխարհի ուշադրությունը հրավիրեցին մինչ այդ անհայտ քաղաքակրթության վրա²:

Թե Վանում ու շրջակայրում որքան շատ սեպագրեր կային, վկայում է Գարեգին Սրբանձույանցը. «Մթերի դուռը ամենայերջ քար է, որը տաշեր և կոկեր են մեծ դրան ձևով և վրան ընեռագիրեր գրած են, խիստ հստակ: ... Ծատ մը գեղերու և վանքերու մեջ կտոր կտոր քարեր կը գտնվին, որոց վրա նոյնպես ընեռագիրեր կան: Վանա քաղաքամիջի Սուրբ Առաքյալը եկեղեցվոր տաճարի ներքին պատին շարված քարերու վրա բոլորովին առողջ ընեռագիրեր կան. Վարագա տաճարի շենքին մեջ գործածված քարերուն վրա, Կարմրվորա վանքը և այլ տեղեր: Ծատ տեղեր ալ հին դերքուները փորելով կլոր կամ քառակուսի երկար քարեր կ'ենքն ընեռագիրերով: Լեզր գեղի եկեղեցվոր և սեղանի վեմ քարը կլորած և մեշտեղը ծակ, ու շրջապատը ամրող ընեռագիրեր են: Ծիշու ասոր նման քար մ'ալ Վարագ կա»³:

Ֆ. Շուլցից հետո Վան այցելեցին որիշ նշանավոր գիտնականներ ու հնագեններ: Սեպագրերի առաջին գրառումից ուղիղ տասը տարի անց՝ 1838-ին, Վան է գալիս անգլիական քանակի սպա Հենրի Շոռուիթսոննը⁴: Նա գիտական աշխարհին հայտնի է որպես Դարենի հենիսթույցան նշանավոր արձանագրության և այլ հնագույն տերսութերի վերծանող⁵: Այստեղ նրան հաջողվեց նոր սեպագրեր ընդօրինակել: Նեմրուու բլուրի և նինվիի պեղումների շնորհիվ համաշխարհային համբագ վաստակած Օստին Հենրի Լեյարդը⁶ 1850 թ. գծագրեց Վանի մայրափոր շինություններն ու ուսումնասիրեց արձանագրությունները⁷:

1870-ական թվականներին Վանուն պեղումներ սկսեց անգլիական հյուպատոս Ջեյմսոնը⁸:

Գարեգին Սրբանձույանցը, որը եղել է այս հնագիտական որոնումների ականատեսը, գրում է. «Այս քանի տարին հետև այն տեղերն ու փորելով շենքի համար քար կը հանեն. հողակույտերու տակ երկացան կոփած քարերով շենքեր, հողե կարասներ և կումեր, որոց մեկ քանիցին մեջ ցորենի շոր հատիկներ լցված էին, ոսկեզօծ պղնձե շինված արհեստական առողջ կտորներ և մեկ խոյ ու խոյի վրա հեծած մարդ՝ նոյն պղնձե թափծու՝ արձանի կերպով: Այս վերջին կտորը՝ Եղեսայան գեր. սրբազնը այն ժամանակ Վան գտնվելով յուր հետն առած Պոլիս բերած է: Տակավին քար հանել կը շարունակեն, և շենքեր կը քացվին ու կը պատմեն, որ երկար մետեր ալ կը գտնվին»⁹:

...Այնպիսի հոյակապ շենքեր քացվեցին, որ բերդատիրոց մեծությունը և ժամանակի ճարտարապետության վրա կրնան հիացումն պատճառել-

Վանը 1915-ից առաջ և հետո
(էջ 4—5):

Վանի միջնաբերդը,
նկ.: Ժ. Լորանսի,
1847 թ.:

Վանի
բրդապարհսպաներն
ու բուրգերը:

Վան.
Արարատյան
թագավորության շրջանի
ուլուր արձանիկներ:



Դամիլիճներ, ավազաններ, ձևավոր և խորհրդավոր շենքեր, դիտարանի կամ գրունաց համար, ապաստարանի կամ գաղտնարանի համար կամարաշներ, ընդունելության կամ հանդիսավորության սրահներ և այլ շատ մը խանգարյալ շատ մը ևս դեռ ծածկալ կ'երկին: Իսկ ոդրքն շատ հիանալի է, քան բուն Վանա բերդին կամ ինչպես սովորություն եղած է ըստ՝ Շամիրամակերտի¹⁰:

...Պ. Քելյթին պեղել տված էր նաև Զորո-վանից բերդաբլուրն և հոն ալ բացվեր էին շենքեր, և հայտնված էին քանի մը կտոր քաներ, մենք ալ էլաճք և տեսանք մեր աչոք: Ինչ որ լինին այդ գտնված և վերցված քաները, որք շատ մը ևս գեղացիներու ձեռքով կը ժողովվին, և Վանա քանի մը ծանոյ անձինք կը գնեն ու կը վաճառեն գաղտնապես թե հոն, թե ի՞նքինիս և թե ի՞ Կ. Պոլիս համելով, ցավ է ինձ ըստ որ՝ չեն իմացվիր գեր, թե ի՞նչ են, և եթե ազգային թանգարանի մը մեջ չը պահվիր շահասիրության շնորհիվ, գոնե պատկերներ և չափերն առնուն և նկարագրեն ու ստորագրեն իրեղինաց Այուղը, գովար, մեծությունն և տիան, և թե՝ ո՞ն տեղ գտնված է որո՞ ձեռքով և ո՞ն տարին: Այդ, ուրվականն ևեթ գոնե ունեանք այդ հնությանց¹¹: Շատ հնագիտական հուշարձանների պեղումներին ուղեկցող գողությունը, գանձախուզությունը, առ ու վաճառքը, ցավոր տեղ էր գտել նաև Վանում, և մեր ժողովրդի պատմության ու մշակույթի բազում գանձեր ցրվեցին աշխարհի թանգարաններով ու մասնավոր հավաքածուներով, ընկան բախտահնդիրների ձեռքը, կորան, անհետացան¹²:

Այդ տարիներին պեղումներ էր կատարում նաև Որմիզդ Ռասասմը: Նա եղել էր Լեյարդի օգնականը և գիտական հարուստ փորձ ուներ: Մինչ Վան գալը Ռասասմը ևս հասցել էր հնագիտության աշխարհում հայտնագործություններ անել, հայտնաբերել էր «Գիլգամեշ» էպոսը¹³: Վանում Ռասասմին հաջողվեց հսկայական Այութ հավաքել, որի մի մասը հանգրվանեց Բրիտանական թանգարանում, իսկ մնացյալը ձեռքից ձեռք անցավ¹⁴:

Որոշ դադարից հետո Վանում մեծածավալ պեղումներ սկսեցին Կ. Լեման—Հառիպատ և Վ. Բելը, որոնց հավաքած արձանագրություններից հարյուր տասը հրապարակվեցին¹⁵:

Դեռևս 19-րդ դարի կեսերից սեպագրերով գրադարձություն հայության մասին ամենահին հիշատակման համար պարտական ենք Մովսես Խորենացուն, որը դրանց ծագումը Շամիրամին վերագրելով, ասում է. «Իսկ քառասայի ամբողջ երեսը հարթելով, ինչպես գրչով հարթում են մեղրամումը, վրան շատ գրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմանաւում է: Եվ ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշխարհում շատ տեղերում արձաններ կանգնեցրեց և նոյն գրերով իր մասին ինչ-որ հիշատակ հրամայեց գրել, և շատ տեղերում նոյն գրով սահմաններ էր հաստատում»¹⁶): Էջմիածնի միարան Մեսրոպ Սմբատյանցի շանքերով Հայատանի տարբեր մասերում հայտնաբերվեցին բազմաթիվ նորանոր արձանագրություններ, որոնց ընդօրինակությունները հրատարակվեցին հայ և օտար մամուլում¹⁷: Իր հավաքածուն Մ. Սմբատյանցը հետագայում ամփոփեց «Բնեուածն





արձանագրութիւնք Արարատեան ճահանգի, 1862—1910» ժողովածուում, որը պահպում է Մատենադարանուու:

Որքան էլ շնորհակապ աշխատանք էր բնեուագրերի հավաքումը, կարեւորը դրանց ընթերցման բանալին գտնելն էր, որին ձեռնարկեցին մի շարք գիտականներ՝ Է. Հինքը, Ֆ. Լընորմանը, Ա. Մորդումանը և այլք: Նրանք, ցավոր, հաջողության չիսան: Միայն 1880 թ. Ս. Գյույարին հաջողվեց ընթերցել մի քանի բառ¹⁸: Սեպագրերի վերծանման փառքը, իրավամբ, պատկանում է Օքսֆորդի Բամալսարանի պրոֆեսոր Ա. Սելյին, որը 1882-ին հրատարակեց մի շարք արձանագրությունների թարգմանություններ, և Բագրամյակներ լուծ բնեուագրերը կրկին լեզու առան: ¹⁹ 1896 թ. «Անդրկովկասի սեպան արձանագրությունները» գրքում Մ. Նիկոլսկին, որը մինչ այդ Վ. Դվանովսկու հետո ուսումնասիրություններ էր կատարել Հայատանում, Բամալսարանի վերծանմամբ հրապարակեց մի շարք արձանագրությունները²⁰: Չորս տարի անց, Միհիթարյան միարան Հ. Սահմանյանի ջանքերով ֆրանսերեն տպագրվեց արձանագրությունների Բամալսարան:

Ուստի անվանի գրող Սերգեյ Գորոդեցկին, որ առաջին Բամալսարանին տարիներին Վանում էր, կապտակորակ ծովի ափին, սաղարթախիտ այգիների մեջ սուզված երեքհազարամյա քաղաքի հնությունների մասին գրում է: «Պոմակը Վանի համեմատ մանկական խաղալիք է: Վիթխարի կողմեցումն անգամ, որի ներում միշնադարում մի ամրող քաղաք էր ապրում, անագնությամբ զիջում է Վանի կառուցներին, եթե պահպանված բեկորներից դատելով դրանք պատկերացնենք այն տեսքով, ինչպիսին եղել են: Նոյնիսկ Ֆորումը՝ աշխարհի խոշորագույն հավաքավայրը, որ իր հոծությամբ ու նեղվածքով շատ է հիշեցնում մարդկային գործերի մասին, կարող է խամբել Վանի ժայռ-քաղաքների տարերային պարզության առաջ»²¹:

Առաջին Բամալսարային պատերազմի եղերական օրերին՝ 1915—16 թթ. Վանի շրջանում աշխատում էին Ա. Տեր-Ավետիսյանը և Ա. Կազնակովը, որոնք բազմաթիվ արծերավոր ցութերից և Բ. Շախովսկու կատարած լուսանկարներից քացի Կովկասյան թանգարան տարան 20 սեպագիրը²²: Նոյն թվականին Հովսեսի Օրբելին, որ դրանց մի շորս-հինգ տարի առաջ արդեն եղել էր Վանում, նիկողայու Մատի հետ նոր պեղումներ կատարեց²³: Ա. Լյահովի և Ա. Բորբինսկու ջանքերով լուսանկարվեցին մի շարք արձանագրություններ, իսկ Ա. Ֆլորինսկուն նոյնիսկ հաջողվեց մի սեպագիր քար Մոսկվա հասցնելիք: Բայց շուտով Բամալսարային պատերազմի պատճառով ուսումնասիրություններ ընդհանությանը հաջանական դարձաւ:

Անա, Բամառուտակի, այսպիսի նախապատմություն ունի Վանի կամ Արարատյան Բայոց թագավորության (Ուրարտու) ուսումնասիրությունը:

Հայոց առաջին մայրաքաղաք առասպելական Տուշպան աշխարհի ԲԱՆԱԳՈՒՅՆ քաղաքներից էր: Այն պատմությանը հայտնի է մի քանի անուններով՝ Տուշպա, Տոսպ, Վանտոսպ, Երվանդավան, Շամիրամի քաղաք... Բայց ամենասիրելին Վանն էր, անոն, որ քաղաքի նման հասնում է հազարամյակների խորք և ծագել է հնային Բիայնա անոնից:

Երբ «սիեզերքի արքա» Սարդուի Առաջին Առաջին (Մ. թ. ա. 840—825 թթ.) քագավորն արքունիքը Արգաշկուից տեղափոխում է Վան, քաղաքում կառուցվում է Ծիփինիի՝ արևի աստծու տաճարը, և Տուշպան դառնում է Արա սաշտամունքի գլխավոր կենտրոնը: Աշ ուրբով ծնկաշոր և արևի սկավառակը գլխից վեր պարզած այս աստվածն ուներ մի հրեշտակաթև կից՝ Տուշպուեա աստվածուին²⁴, որի անունով էլ կոչվում է արևոտ այս քաղաքը:

Հազարավոր ստրուկներ օրնիբուն կարծր լեռան լանջերին փորում են գինանցներ ու սենյակներ, պահեստներ ու զորանցներ, ախոռներ ու դիտակներ: Միջնաբերդի շորջը կառուցվում է հզոր պարիսպ, որը Վանը դարձնում է անխորտակելի: Բայց ինչպես հաճախ է պատահում, ծողովորի հիշողությունը քանաստեղծականցնում է անցյալը և Սարդուի հզոր արքայի գործը վերագրում Ասորեստանի Շամիրամ թագուհուն: Պատմահայր Խորենացու շնորհիվ մեզ է հասել առասպելախանու այդ զորոյցը. Շամիրամը թերեւ է մի քանի հազար ընտիր փալտագործ, պղնձագործ, քարազործ և երկարագործ: Բազմաշնորհ վարպետները լարված աշխատանքով կառուցում են հրաշալի շինվածքներ, պղնձակերտ դոներով ամրակուռ պարիսպներ, երկարկ և եռաշարկ ապարանքներ ու պալատներ՝ զարդարելով նորակերտ խճանկարներով: Շամիրամը, ինչպես նորենացին է գրում. «Քաղաքը մասերի է քածանում գեղեցկագույն և ընդարձակ փողոցներով: ...Գագաթի շորջը պարիսպ քաշելով՝ Երսը շինում է ոմվար մտնելու և ոմվար դուրս գալու ինչ-որ ծածուկ և ամոնի արքայանիստ շինվածքները: ...Իսկ քարածանի ուահ արեգակը դարձած կողմը, որտեղ ալժմ մարդ ոչ մի գիծ չի կարող երկաթով գծել, այսպիսի կարծր քարի մեջ զանազան

Կան.
բրոնզ արձանիկ:

Ծիփիսի աստծու
պատկերը բրոնզ:
գոտու վրա,
(Կարմիր բլուր):



սեմյակներ, զաջարաններ, գանձարաններ և երկար վիթեր, հայտնի չեն ինչ բանի համար հրաշակերտեց»²⁶: Քաղաքի մաքրակենցաղը բնակիչների համար կառուցվում են նաև «չընաղ ու զարմանքի արժանի բաղնիքներ»²⁷: Ծեղ ապարանքների, այգեստանների ու ծաղկանցների այս քաղաքը պետք է որ առատ չուր ունենար, և մ.թ. ա. 8-րդ դարում անց է կացվում 70—80 կմ երկարությամբ վիթխարի ջրանցք, որն սկիզբ առնելով Վերին Մծնկերտի աղբյուրներից, անցնում էր լեռնալանջերին փորված և տեղ-տեղ քարե պատճեններով ամրացված հունով, իսկ ձորերի վրայով ջրանցքի համար կառուցվում են հատուկ կամուրջներ²⁸:

Խորենացին հիշատակում է նաև այս մեծագործությունը. Շամիրամը «հրամայում է՝ նախ գետի ամրարտակը շինել ապառաժ խոշոր քարերով, կրի և ավազի շաղախով, շատ լայն և բարձր, որ մինչև այժմ, ինչպես ասում են, հաստատ մնում է: ...Եվ եթե մեկը կամենա փորձել, չի կարողանա ամբարտակի շինվածքից պոկել թեկուզ պարսատիկի մի փոքր քար, որչափ էլ աշխատի: ...Այսպես երկար ասպարեզներով ամբարտակն անցկացնելով՝ հասցնում է քաղաքի համար որոշված տեղը: ...Գետի մի մասը քաղաքի մեջ բաշխելով՝ անց է կացնում ամեն տեսակ կարիքների և բուրաստանների ու ծաղկանցների ոռոգման համար, իսկ մյուս մասը (անց է կացնում) ծովակի աջ ու ձախ ափերով՝ քաղաքի և բոլոր շրջակայի ոռոգման համար»²⁹: Զրանցքն իր ժամանակի համար եզակի կառույց էր, ուներ 4,5 մ լայնք և 1,5 մ խորը և հորդահոս ջրերով կյանք էր հաղորդում հրսկայական հողատարածությունների: Հիմնվում են խաղողի այգիներ ու ծառաստաններ. Ասորեստանի արքա Սարդոն Երկրորդի պատկերավոր արտահայտությամբ՝ «պատուղները և խաղողը թափվում էին հորդառատ անձրևի նման», իսկ «քրուումավետ գինին հոսում էր հանց գետի ջուր»³⁰:



Մենուա Առաջինի (մ.թ. ա. 810—780 թթ.) ջրանցքը, որ կառուցումից 28 դար հետո էլ բանեցնում էր 40 քրաղաց³¹, սերունդների համար շպահեց Մենուայի անունը, և նրա փառքը նույնպես բաժին ընկավ Շամիրամին: Խորենացին գրում է, որ ջրանցքը Վան հասցնելով, Շամիրամը «քաղաքի ամրող արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է դաստակերտներով, վարսագեղ, սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով ու տերևներով, և այնուեղ տեկում է քազմաթիվ առատաքեր և գիներեր այգիներ: Պարսպած քաղաքն ամեն կերպ հոյակապ ու հոչակավոր է դարձնում և մեջը բնակեցնում մարդկանց անթիվ քազմություններ»³²: Պատմահոր այս Ակարագործության մեջ կարելի է որսալ Վանի կախովի այգու հեռավոր արձագանքը: Այս, աշխարհի յոթ հրաշալիքներից մեկի՝ Բաբելոնի հոչակավոր կախովի այգու ավելի փոքր կրկնօրինակը կառուցվել է նաև Հայաստանում՝ Վանում, և հրաշագործության հեղինակը կրկին Մենուա Առաջինն էր: Նա այս արքաներից էր, որին իրավամբ կարելի է տալ «Ծինարար» մականունը: Նա նաև անձեռազանցելի հեծյալ էր, պահանջնելի է մի արձանագրություն, որից հմանում ենք, որ «Արծիբեն»՝ «Արծիվ» անունով նրա նժոյզը ցատկել է 22 կանգուն, այսինքն 11 մ 44 սմ: Այս, իսկապես որ արծվային թոիշքն անգերազանցելի մնաց մոտ երկու հազար ութ հարյուր տարի՝ մինչև 1975 թ., երբ գերմանացի Բերգմանն իր «Սվինգեր» նժոյզով սահմանեց համաշխարհային նոր ունկորդը³³:

Մենուայի Արգիշտի որդին ևս քաջ էր ու շինարար: Ասորեստանի Սալմանասը Երրորդ թագավորի զորահրամանատար Շամշիիլուն այնպես է վախեցած Արգիշտիի զորությունից, որ անունն իսկ չի կարողանում լսել: Մ.թ. ա. 780 թ. մի գրության մեջ նա խոստովանում է, որ Արգիշտիի «անունը սարսափելի է որպես ծանր հողմ»³⁴: Նրա օրոք ևս շարունակվում է շենանալ երկիրը, կառուցվում են բերդեր ու ամրություններ, տաճարներ ու պապանքներ: Եվ ավելի է հաստանում ու ճնշանում երկրի մայրաքաղաքը:

Բայց Վանի հայոց թագավորության հաղթական դափնիները հանգիստ չեն տալիս Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար Երրորդին: Եվ Արգիշտիի որդի Սարդորի Երկրորդի ու ասորական զորքերի միջև 743-ին տեղի ունեցած ճակատամարտում ասորեստանցիները հաղթեցին: Մի շարք բնակավայրեր ավերելուց հետո նրանք պաշարեցին Տուշպան, բայց գրավել չկարողացան: «Ես կողպեցի նրան Տուրուշպալում՝ նրա քաղաքուն: Մեծ կոտորած արեցի նրա դարպասների առջև: Խմ արքայական պատկերաքանակը Տուրուշպա քաղաքի դիմաց ես կանգնեցրի»³⁵,— այսպես է սեպագրել տալիս մեծամիտ Թիգլաթպալասարը և հուսահատված հեռանում անառիկ քաղաքի մատուցմերից:

Սարդորի Երկրորդի որդին՝ Մուսա Առաջինը (մ.թ. ա. 735—713 թթ.) ապահովության համար արքունիքը տեղափոխում է Վանի հյուսիսարևմտյան ծայրամասը՝ Մուսախինիի կամ, ինչպես ժողովուրդն է ասում՝ «Ագուավար»: Այն տարիներին Վանը բազմամարդ և հսկա քաղաք էր, միայն



Սամանասար Երրորդ
Կանա լիի ափին,
(հատված դարպասների բրոնզե
հարթաքանդակից):

արքունիքում ապրում էր 5507 մարդ: Պահպանվել է Ռուսայի պալատական անձնակազմի ցուցակը, ըստ որի, արքունիքում բնակվում էին 1113 անվանի անձինք կամ պալատական, 3784 պաշտոնյա, 152 ծառայող, 10 գինեգործ, 400 այլ անձինք, ըստ երևույթին՝ զինվորներ, արթևստավորներ, ախոռապետեր և ջորեպաններ, ստրուկներ և ստրկութիններ³⁶: Այս մարդաշատ արքունիքը Ռուսայից հետո 123 տարվա ընթացքում յոթ թագավոր փոխեց: Բայց երկիրն անդարձ իր մայրամուտն էր թեքվում, և մ. թ. ա. 590—585 թվականներին երբեմնի հզոր Վանի հայոց թագավորությունը կորցրեց անկախությունը: Հայ ժողովրդին անհնար էր ընկճել և շուտով, ընդամենը երկու տասնամյակ անց, նա վերականգնեց իր անկախությունը, և գահի բարձրացավ Երվանդ Սակավակյացը: Երկորի մայրաքաղաք մնաց Վանը, քանզի Հայաստանի ամենամեծ ու ծաղկուն քաղաքն էր: Կարևոր էր և այն, որ Երվանդունի տոհմն իր գործունեությամբ տևական ժամանակ կապված էր Վանին և մոտակա Հայոց Զոր գավառին: Եվ քաղաքի անվանափոխությունն էլ Երվանդավանի այս տոհմի թագավորանիստը դառնալու արդյունք էր:

Ըստ Աքեմենյան Իրանի իշխանության տակ, Հայաստանը տրոհվեց երկու ընդարձակ սատրապությունների³⁷, որոնցից մեկի կենտրոնը Վան

Հայերի պատկեր
Պերսեպոլիսի
բարձրաքանդակում:



Էր մ.թ.ա. 331-ին Հայաստանը վերանվաճեց իր անկախությունը, նոր մայրաքաղաք հոչակցեց Արմավիրը:

Երվանդոնի հայոց արքաները ևս հոգ էին տանում Վանի ծաղկման ու բարգավաճմանը, բայց քաղաքը բուն զարգացում ապրեց հատկապես Արտաշեսյան թագավորության շրջանում, Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95—55 թթ.) օրոք, երբ նա այստեղ բնակեցրեց բազմաթիվ արիստօնավորներ ու առևտրականներ: Այնուհետև Վանը քանից ավերվեց ու վերացինվեց: 4-րդ դարի դեկտեմբերը նկարագրելիս Փափստոս Բուզանդը պատմում է, որ պարսից արքա Շապոհ Երկրորդի զորքերը 368—69 թթ. Հայաստանի մյուս քաղաքները նվաճելուց հետո «Առան նաև Վան ամուր քաղաքը... կրակ տվին, այրեցին, հիմքերը քանդեցին. այնտեղից էլ դուրս բերին հինգ հազար տուն հայ...»³⁸: 9-րդ դարի պատմիչ Թովմա Արծրունին, լրացնելով Բուզանդին, հայտնում է, որ «Երանց քեցին Ասպահան...»³⁹, այսինքն պարսից Սպահան քաղաքը:

Արարական տիրապետության շրջանում քաղաքն անկում է ապրում: Բայց Հայաստանի անկախության վերանվաճումից հետո և հատկապես 10—11-րդ դարերում, երբ Վանը Վասպորականի թագավորության (908—1021 թթ.) մայրաքաղաքն էր, կրկին Հայաստանի խոշորագույն քաղաք-ներից է դառնում, և բնակչությունը հասնում է տասնյակ հազարների: Նորից է ճոխանում Վանը ու պալատներով զարդարվում: Մեծ շինարարություն է ծավալում իշխանական Դերենիկ Արծրունին: Նրա որդին՝ Գագիկ Արծրունին, 908-ին Վասպորական աշխարհն անկախ թագավորություն, իսկ իրեն՝ հայոց թագավոր է հոչակում: Սա, անշուշտ, լուրջ հարված էր հայոց թագավորության միասնության ու հզորությանը: Գագիկ Արծրունու արքայությունն ընդունեցին և թագ ուղարկեցին արարական խալիք Մուրտադիրը, Աստրպատականի Յուսուֆ ամիրան, հայոց Սմբատ թագավորը: Թովմա Արծրունու շարունակող Անանուն պատմիչն այսպես է նկարագրում թագադրման հանդեսը: Գագիկը «ձի նստեց, հոյակերտ ու ոսկեթյուն զարդերի մեջ փայլելով, ինչպես արեգակն աստղերի մեջ: Աջից ու ձախից սպառազինված զորականների քազմությունն էր: Թնդում էին ձայները, փայլակում սրերը, հնչում եղչերպափողերը, սրինգներն ու հետշտալոր քնարները, տավիդները, հանդերձ դրշներով՝ առջևից ու հետևից: Սրանց ահեղ ձայններից սարսենի արքունի զորաբանակը»⁴⁰:

Թեև Գագիկ Արծրունին ժամանակավորապես գրավում է նույնիսկ Դվինը, և Անանուն պատմիչը նրան անվանում է հայոց մեծ թագավոր, բայց, ի վերջո, Արծրունիներն ընդունում են Բագրատունյաց գերիշխանությունը:

Գագիկ Արծրունին հաղթանակներ տանելով, ջարդելով, ցրելով հայոց թշնամիների քազմությունները, Վասպորական աշխարհում խաղաղություն է հաստատում: Անանունը հիացմունքով գրում է. «Նա քաջությամբ և աշխարհաշն խաղաղասիրությամբ, իրոք հայր և խնամածու, հոգ էր տանում Հայոց աշխարհի մասին: Բարեխնամ գթությամբ դարմանում էր աղքատներին, վերադարձնում գերիներին, փրկում հափշտակվածներին, իրավունք տալիս որբերին ու այրիներին»⁴¹:

Գագիկը բարձրագագաթ լեռների ու բլուրների վրա ամրոցներ ու բերդեր հիմնելուց, հները նորոգելուց հետո Մանվել ճարտարապետի հետ ճեղմարկում է Աղթամարի վանքի կառուցումը: Բայց մինչ հրաշակերտ տաճարի շինարարությունն սկսելը Վասպորականի թագավորը Աղթամար Կղզում արքայանիստ քաղաք է հիմնում: Աղթամար քաղաքն ըստ Անանուն պատմիչի հիացական նկարագրության, եղել է հայ մտքի ու ճարտարվեստի հանճարեղ արտահայտությունը, որից այսօր, ցավոք, բացի եկեղեցոց, ոչինչ չի պահպանվել, և մեզ մնում է միայն գոհանապ անհետ կորած քաղաքի նկարագրությամբ: Գագիկը «հրաման տվեց քազմաթիվ արիստավորների և անթիվ մարդկանց՝ կտրել ծանր ու դժվարակիր վեմ քարեր և զցել ծովի անհնարին խոր հատակը: Այսպես մեծն արքան մի առ ժամանակ զանքեր թափեց և անսպասելիորեն կանգնեցվեց, ծովից հինգ կանգուն քարձրությամբ, քարահատակ ամբարտակ, որը մտքի աչքերով, ինչպես ցամաքի վրա, հաստատուն կերպով դրեց մեծ քարերի շարքով: Նրա վրա շուրջանակի լարաձգությամբ կառուցեց պարիսապը՝ մոտ հինգ ասպարեզ տարածությամբ: Եվ պարիսապն էր հրաշակերտ, ամելակերպ, զարդարված էր քարձրաբերձ, լայնանիստ բուրգերով ու քարձ աշտարակներով և ուներ իր մեջ անկյունավոր, խորանանման, տախտակածն հանգստանալու գանուքներ, որտեղ միշտ զվարձանում էր արքան իր որդիների և ազատակույտ զորքերի հետ: Իսկ պարսափ ծայրերը նա տարավ քարանձավի դրժվարամած կիրճերը և սերտ միացրեց իրար: Ծովի խորհանակ հիմքերի բերանին նա դրեց ամափորատես, հաստատահեղույս, բնեուապինդ դոներ: Այսպիսով ծովի մի մասն առնելով կղզու կողմը, նա հրաշալիք գործեց և ստեղծեց խաղաղ ու անքոյթ նավահանգիստ՝ նավերի խմբի համար»⁴²:







Էջ 13-ին:

Աղթամար կղզու ուրվագիծը:

Աղթամարի վանքը,
Նկարը՝ թ. Դեկտորի,
1876 թ.:

Աղթամարի վանքը,
Նկարը՝ թ. Դեկտորի,
1876 թ.:

Աղթամարի վանական
համալիրի հատակագիծը:



Աղթամարի նավահանգստի մնացորդները հիացրել ու զարմացրել են քրա կառուցումից հովհանուկ տասը դար հետո ապրած շինարարներին ու ճարտարապետներին։ Այդ նավահանգստի ավերակները տեսնելով, Թորոս Թորամանյանը գրել է. «Գագիկ Ա ուզելով ծովի մեջ մի խաղաղ նավահանգստ շինել, չորս ձիարշավ երկարությամբ (ավելի քան երկու կիլոմետր) ծովը լեցուցեր է մեծամեծ ժայռերով և վրաներով շինել է հաստատուն պարիսպներ՝ նավահանգստար շրջապատող։ Այդ պարիսպները երևում են չը մեջ, որովհետև վերևի մասերը փլել են, նաև ջրի մակարդակը քարձուացել է դարերի ընթացքում և պարիսպի ստորին մասերը մնացել են ջրի մեջ։ Այս նավահանգստի շինության մասին չափազանց ուշագրավ է Թովմայի (Արծրունու) նկարագրությունը։ Ականա մանրամասնությամբ և ճշգրիտ նկարագրում է քարերի տեղափոխումը, ծովի մեջ հոսեցման եղանակները և այլ մանրամասնություններ, որ այսօրվան միննույն նպատակով աշխատանքներից ոչ մի տարրերություն չի երևում, միայն եթե կա մի տարրերություն, որ մեզ հայտնի չէ, այն ժամանակ ջրի մեջ քարեր ամրացնելու համար գործածված կրաշաղախի տեսակը և բնույթը»⁴⁸։ Ծարու-



Կանի բերդապարսպի
համայնապատկերը:

Անակենք Բետևել Անանունի նկարագրությանը. «Այնժամ ինքը՝ թագավորը, հովզ խելացի ըմբռնմամբ բազմաթիվ ճարտարապետների թետ, վարպետի լարը ձեռքին, լեռան ստորոտում, որը կղզու գագաթն է, միանգամից տեղը նշանակեց և գծագրեց վայելուշ զրոսատեղեր, բուրաստաններ, ...փողոցներ, պարտեզներ, թագավորավայել նստելատեղեր: Մաղկոցների ու պարտեզների համար հատկացրեց հովհաններ: ...Տնկվեցին նաև բազմաթիվ ծառեր, որոնց ոռոգեցին անուշահամ աղբյուրի անհատնում ջրերով, որ նախախամող Աստծո կամքով (բխում է) քաղաքի մեջ:

...Պալատի շինվածքը, հիմքից մինչև օդի մեջ կախված նրա գագաթը, մնում էր հաստատուն, առանց սյունների, ինչն արդարն մտքից վեր է ու զարմանքի արժանի: Պալատն ուներ նաև կամարակապ խորաններ, անկյուններ և գեղապանույն բուրապատեր, որոնց ո՞չ միտքը կարող է թվարկել և ո՞չ էլ աչքերը՝ զննել: Այն ուներ նաև երկնքի պես բարձր, ոսկեզրարդ և լուսամանանչ գմբեթներ, որոնց, եթե մեկը կամենար նայել, թագավորին իբրև պատիվ անելով, նախ պետք է հաներ գլխից խովը և ապա, տաճելով պարանոցը, հազիվ կարողանար նշմարել զանազան ներկերով նկարված պալատները:

Եվ պալատի շինվածքն այնքան ահեղ է ու զարմանալի, այնքան բարձր և մտքի համար անհասանելի, որ օրինակ՝ եթե որևէ խմաստուն մարդ մի խորանի բազում ժամեր նայի, դուրս գալուց հետո որևէ մեկին չի կարող պատմել իր տեսածի մասին:

...Իսկ փառաց պալատի դիրքը քաղաքի մեջ երևում է որպես մի մեծ բլուր, գավառի բոլոր կողմերից: Այն իր բարձրությամբ ավելի ցածր չէր, քան կղզու ժայռոտ ծայրը:

Անմերձենալի ամրություններով արքան պարսպեց նաև ամրոցի ծայրերը և նրա մեջ շինեց մեծամեծ շտեմարաններ ու համբարանոցներ, ինչպես նաև գանձերի, անհուն ու բազմաթիվ գենքերի ու ծիու զարդերի համար պահեստներ»⁴⁴:

Եթե Արծրունյաց արքաները հրաշափառ պալատներ էին կառուցում Վանա ծովի կղզիներից մեկում, ապա հեշտ է երևակայել, թե ինչեր կերտած կլինեին թագավորության մայրաքաղաք Վանում, որոնք, սակայն ժամանակի ու ասպատակիչների ձեռքով հողին են հավասարեցվել:

Չդիմանալով արևելքից ու արևմտուքից արշավող թշնամիների հարձակումներին, բյուզանդական կայսր Վասիլ Երկրորդի պարտադրմամբ Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունին 1021 թ. ստորագրեց մի պալմանգիր, որով Արծրունյաց թագավորությունն իր 8—10 քաղաքով, 72 բերդով և 4000 գյուղով միացվեց Բյուզանդիային: Սենեքերիմ Արծրունին այդ ամենի փոխարեն ստացավ Սերբաստիա քաղաքն ու գտվառը, որը և փոխադրվեց շուրջ 70—80 հազար հպատակներով⁴⁵: Թագավորի հետ գաղթեց նաև վանեցիների մի մասը:

12—13-րդ դարերի արար աշխարհագիր հրն ալ-Ասիրի վկայությամբ, Վանի ամրոցը «մեծագույն և ամենից անառիկ բերերից էր»⁴⁶:

Բայց ծովագարդ քաղաքին վիճակված չէր խաղաղ կյանք: Իրար են հաջորդում սելջուկ թուրքերը, մոնղոլներն ու թաթարները, պարսիկները:

1387 թվականի սեպտեմբերին, ինչպես Լեռներմուրի մասին գրում է



Ապա դարձեալ ի Վան
եկեալ,
Զամուր դրդեակըն
պաշարեալ,
Վեց ու քան ար
հրարեալ,
Եւ ապա ի ձեռ նոցա
մատնեալ,
Բազմաց մահիամբ
քարավլիմեալ,
...Մինչ մըսադէզըն
բարձրացեալ
Եւ որք անկեալ՝ այլ ոյ
մնոնեալ⁴⁸:

Թումա գրիչը, «շուն մի եկեալ խորասանցի»⁴⁷, որը պաշարում է Վանը: Քաղաքի բնակիչները 28 օր ու գիշեր անօրինակ քաջությամբ պաշտպանում էին բերդը, բայց Թեսուրի մեծաթիվ զորքն ի վերջո, ճեղքում է պաշտպանների շղթան և ներխուժում քաղաքը: Նրանք Վանի բնակիչներից շատերին իրար կապելով ցած են նեսում բերդի բարձրաբերձ պարիսաներից: Գրիգոր Խլաթեցու շափածո հիշատակարանի վկայությամբ, վերջին նետվածները, ընկենուկ դիզված դիակների վրա, ողջ էին մնում:

Այսպես գահավիմվելով՝ յոթ հազար մարդ է սպանվում, իսկ կանայք ու երեխաները գերեվարվում են:

Կարա-կոյունլու, ապա և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում (1410—1502 թթ.) և Վանը խաղաղություն շտեսավ: 1424-ին կարա-կոյունլուների առաջնորդ Խորանդարը հիսուն օր օղակում է Վանի բերդը, բայց չի կարողանում նվաճել: Հաջորդ տարվա գարնանը նա վերադառնում է և պաշարմամբ գրավում քաղաքը: Բայց իրար հաջորդող ասպատակիչները չեն կարողանում կոտրել հայերի անկախության ձգումը: Հանուն հայրենիքի ազատության պայքարը շարունակվել է բոլոր դարերում: Գաղթ ու կոտորածների, իրի բաժին են դարձել բազմաթիվ ձեռագրեր ու հիշատակարաններ, և շատ քիչ, երբեմն էլ ոչ մի տեղեկություն չի պահպանվել մեր ժողովրդի մղած բազում ճակատամարտերի ու հերոսամարտերի մասին: Հայոց արքայատոհմների, նախարարական և իշխանական տների տարբեր ճյուղեր ու ժառանգներ միշտ էլ փորձել են վերականգնել հայոց պետականությունը: Մի այդահսի փորձ են արել նաև Արծրունիների շառավիղներից Սեֆերինյանները, որոնք կարողացել էին մեծ ազդեցություն ձեռք բերել Վասպուրականում⁴⁹: Աղթամարի կաթողիկոսներ Զաքարիա Երրորդ (1434—1464 թթ.) և Ստեփանոս Չորրորդ (1465—1489 թթ.) Սեփերինյանների տարիների պայքարը, ի վերջո, պասկվում է հաջողությամբ, և 1466-ին Ստեփանոս Չորրորդն իր եղբորը՝ Սմբատին, Վասպուրականի թագավոր է օծում: Նրան թագավոր է ճանաչում և աջակցում նաև կարա-կոյունլուների տիրակալ Զհանշահը: Հայոց այս վերջին թագավորի արքայանսատը Աղթամար քաղաքն էր⁵⁰: Թեև Սմբատի թագավորությունը կարճ է տևում, բայց 15—16-րդ դարերում Վասպուրականում ընդօրինակված մի շարք ձեռագրերի հիշատակարաններում Աղթամարն անվանվում է «թագավորական աթոռ»: Իսկ Աղթամարի կաթողիկոսներն իրենց կոչում էին «թագավորազն», ի թոռանց և ի շառավիղէ արքային Գագկայ»⁵¹: Ի դեպ, հնում Աղթամար Կղզին շատ ավելի ընդարձակ էր և դարերի ընթացքում Վանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով նվազել է: Գագիկ Արծրունու հիմնած քաղաքը դեռևս 18-րդ դարում գոյատևում էր, և վենետիկցի մի վաճառական 1510-ական թվականներին կղզի այցելելով՝ գրել է: «Կղզու վրա կա մի փոքրիկ քաղաք՝ երկու մղոն շրջագծով. քաղաքն ունի այնքան տարածություն, որքան կղզին: Այս քաղաքը կոչվում է Արմենիկ, շատ բազմամարդ է և միայն հայ քրիստոնյաններն են բնակվում այնտեղ, առանց որևէ մահմենականի. ունի շատ եկեղեցիներ»⁵²:

Իսկ Վանը նա այսպես է նկարագրել. «Վանի բերդը կառուցված է քարածայոի վրա, որից անուշ ջուր է բխում... Այն մի մողնից ավելի շրջագիծ ունի, բայց ինչպես այն ժայռը, որի վրա կառուցված է՝ նեղ է և երկար: Ամ-

Գասիր միջնաբերություն,
ՆԿ.՝ 1840 թ.:


Վանաբերդը,
ասհալս Նկարիչ,
1806 թ.:

լոցից ներքև կա մի մեծ քաղաք, որի բնակչության մեծ մասը հայեր են...»⁵³. Եվրոպական աղյուսների վկայությամբ, 1490-ական թվականներին, ակ-կոյունուների պետության գահակալ Ռուստամի (1493—1496 թթ.) Բետապնդումներից Աղթամարում է ապաստանում գահի հավակնորդներից շեյս Հեղյարի որդին՝ պատաճի Խսմայիլը: Ըստ Զ. Անջիոլելլոյի⁵⁴, Նախորինա Չենոյի⁵⁵ և այլ եվրոպական հեղինակների, Խսմայիլը 13 տարեկանուն թարմում է Աղթամարում՝ հայ քահանաների մոտ, որ մնում է մի քանի տարի, որից հետո անցնում է Ղարաբաղ: Այնուհետև հոր քարեկամների միջոցով գորք է հավաքում ու իրար ետնից հաղթանակներ տանելով՝ ի վերջո նվաճում է Թավրիզը, իրեն հոչակում հրանի շահ Խսմայիլ I (1502—1524), իմանում Սեֆյան արքայատոհմը (1502—1736 թթ.) և շիհզմը դարձնում պետական կրոն:

Հետաքրքրական են վեճետիկյան հիվանագետ Ռոտայի հիշատակարանի այն գրառումները, որոնցում շահ Խսմայիլը, որն իրեն մարզարե էր Բոշակել, բնակ էլ մահմեդական սրբի պահվածք չուներ. «Գինի է խմում, բայց գաղտնի, խոզի մին է ուստու: Մրանք այնպիսի բաներ են, որ արգելվում են մահմեդական օրենքով: Եվ քանի որ թուրք ազգի նկատմամբ մեծ ատելությամբ է լցված, ուստի իր տնտեսության մեջ նա պահում է մի խոշոր ու գեր խոզ: Եվ որպեսզի զայրացնի ու նսեմացնի թուրքերի թագավորին, այդ խոզի անոնքը դրել էր Բայազիտ, որը ներկայումս իշխող թուրքի անոնն է»⁵⁶: Շահ Խսմայիլին Ռոտան ներկայացնում է որպես թուրքերի հաղածողի և քրիստոնյաների հովանավորի. «Նա էլ ավելի հայածում էր թուրքերին և բոլոր Օրանց, ովքեր ընկենում են իր ծեռքը, չեն խոսափում վատրարագույն մահից: Նա նույնիսկ քանդել էր տալիս Օրանց տաճարներն ու մզկիթները: ...Քրիստոնյաների նկատմամբ նա քայլացակամ է, որովհետև որևէ թշնամական վերաբերունութ չի ցուցաբերում Օրանց եկեղեցների և մատուռների նկատմամբ: Իր հետ տանում է նաև հայ պատրիարքին և մեր դավանաբին պատկանող քազմաթիվ քահանաների ու կրոնավորների, դրանով ցանկանալով ցուցադրել մահմեդական օրենքը խորտակելու, տակնուրա անելու և կործանելու իր մեծ ցանկությունը»⁵⁷: Ի դեպ, քրիստոնյաների հանդեպ նորընած շահի հանդուրժողականությունն են վկայում նաև որոշ հայկական աղբյուրներ, որոնք տեղեկացնում են, որ նա քրիստոնեական սրբատեղիներին ձեռք շտապով, Թավրիզում մինչև «յատակը» ավերում էր մզկիթներն ու մինարեները⁵⁸: Ըստ երևոյթին, շահ Խսմայիլը առաջնորդվում էր ոչ միայն շիաների ու սուստիթների թշնամանքով ու աղթամարյան հուշերով, այլև, ինչպես Ռոտան է վկայում, Թուրքիայի դեմ եվրոպական պետությունների հետ դաշինք կնքելու ցանկությամբ⁵⁹:

16—17-րդ դարերում Թուրքիայի և Դիանի միջն անդաման պատե-





ուազմների ընթացքուն Վանը ձեռքից ձեռք անցավ: 1533-ին այն գրավեցին թուրքերը, սակայն շուտով քաղաքը պաշարեցին պարսիկները, և սովոր ու սրբ 16 հազար մարդ զոհվեց⁶⁰: Վանի հետօքավումն այնքան նշանակալից իրադարձություն էր, որ եթե սովորաբան Սովեյման Կանունին 1548-ին այն նվաճեց, շտապեց նամակով հայտնել Թրանսիայի թագավորին: Իր նամակում նա Վանի բերդն անվանում է «ամրակուո» և «երկնամբարձ»: Ըստ թուրքական բանակում գտնվող ֆրանսիական դեսպան և ուսումնական խորհրդական դ'Արամոնի, սովորաբանը Վանի բերդը համարում էր «Պարսկաստանի ամենանշանավոր և ամենաանառիկ ամրոցը»⁶¹: Թեև սովորաբանը մեծամտաքար գրում է, որ Վանը գրավել է «կարճ ժամանակում»⁶², բայց թուրք պատմիչ Սոլաք Զադենի հաղորդած մանրամասներից պարզվում է, որ Վանը կատաղի դիմադրություն է ցույց տվել: «Բազմաթագարանոց քանակը կանգ առավ Վանի դաշտում,— գրում է նա, — զինվորների հետ նախապես ուղարկված թնդանոթների համար տեղեր պատրաստվեցին, խրամատներ փորձեցին և բերդի նվաճման համար ձեռք առան բոլոր անհրաժեշտ միջոցները: Մոտ տասը օր թնդանոթներով, հրացաններով ու գետերով պատերազմելով հետո բերդում պաշարվածները... բերդը հանձնեցին»⁶³: Թուրք պատմիչը չի թաքցնում իր հիացմունքը հայ ճարտարապետների ու շինարարների հանդեպ. «Այդ ամրակուո բերդը կառուցող փորձված երկրաչափների մարդիկ հազվագյուտ են, և սրա վաստակավոր ճարտարապետները միայն իրենց երևակայությամբ են նկարել նրա պատկերը: Այս բերդը Պարսից երկրի բանալին է և այդ կողմերի ամրակուո պարիսպը: Սոլորյալ շահը պարծենալով ասում էր. «Քանի որ (Վանի) դեղին ժայռն իմ հրովարտուկի տակ է, օսմանյան սովորաններից ի՞նչ վախ ունեմ»⁶⁴:

Վանը կառուցող հայ շինարարների հանճարը հարուցել է նաև 17-րդ դարի թուրք պատմիչ Զելերի զարմանքը: Նրա նկարագրությունից կարելի է պատկերացնել, թե ինչպիսին է եղել Վանը մեծ երկրաշարժից առաջ. «Քաղաքն ունի ներքին և արտաքին պարիսպներ: Ներքին պարիսպը քաղաքի արևմտյան կողմում, բարձր և կտրված ժայռի վրա է, որի մեջ կողմում քաղաքն է... մյուս կողմում, պարսից դուրս՝ ամրակուո բերդը: Արևմըտյան կողմը, որտեղ քաղաքն է, կա պարսից նման կտրված ժայռ: Ար-

Վանի համալսարանի տեսք,
Նկարը՝ Շառլ Տերսիեի,
1842 թ.:

Վան.
Թագարիքի դուռը,
Նկարը՝ Շառլ Տերսիեի,
1842 թ.:



տաքին կողմը, դեպի դաշտն իջնող մի բլոր է, որի վրա առանձին տեղերում կառուցվել են երկու հարկանի ամուր աշտարակներ և պատմեշներ: Պարսից դուրս, հարթ տեղում, ըստ սովորության, ժայռերը փորելով, երեք դուներ են շինել. արևելքում՝ Թավրիզի դուռը, հարավում՝ Խոբելեյի դուռը, իսկ հարավ-արևելքում այգիներ ու պարտեզներ են: Քաղաքը և պարիսպները լճից բավական հյուսիս են: Սակայն պարսից դեպի լիճ ճանապարհ կա: Պաշարման ժամանակ կարող են ճավեր երթևեկել: ...Թեմուր Գերրանը, գրավելով Վանը, իր մեծ էմիրներից մեկին պատվիրել էր բերդը քանդել: Զանազան միջոցներ և ամեն տեսակ ջանքեր գործ դնելուց հետո, հնարավոր չեղավ բերդը լիովին ավերել: Չկարողանալով քանի այդ լեռնանման բերդի քարաշեն հիմքերը, քավականացան հետագայում շինված մի քանի աշտարակներն ու պատմեշները փլուզելով: Սակայն այս ավելումները չսասանեցին բերդի ամրությունը: Դրանից կարելի է պատկերացնել, թե ինչ աստիճանի ամրակուր էին Վանի բերդը և նրա պարիսպները»⁶⁵:

**Վանի բերդապարիսպները,
Նկարը՝ Շաոլ Տերսիեի,
1842 թ.:**

**Վան քաղաքից մի
հատված,
Նկարը՝ Ժյուլ Լորանսի,
1853 թ.:**

Ինչ շհաջողվեց անել բարբարոս էմիրի զորքերին, 1648-ին ընդամենը մի քանի վայրկյանում կատարեց ահավոր երկրաշարժը: Թե ինչ ուժգնություն է ունեցել տարերքը, վկայում է այն, որ փուլեր են նույնիսկ Վանի անխորտակ համարվող պարիսպները. Առաքել Դավրիթեցին մանրամասն նկա-

բագրել է ավերումները. «Փլւեց Վան քաղաքի ներքին բերդի պարիսպը Թավրիզի դարպասից մինչև Խղարի բուրգը: Նաև այստեղ-այստեղ շատ տեղեր պարսպից վիլովզեցին ու փլվեցին, իսկ ճարանք, որ չփլվեցին, խախտվեցին, որոնք բոլորը հետո քանդեցին և որից ամբողջը շինեցին»⁶⁶: Բերդն ու պարիսպները շինարար վանեցիները վերականգնեցին, աჩավորը մարդկային մեծ կորուստներն էին, որ պատճառեց երկրաշարժը: Դավրիմեցու նկարագրությունը բացահայտում է մեր ժողովրդի ողբերգական էջերից մեկը. «Բազմաթիվ տներ, ապարանքներ, շինվածքներ փլվեցին և իրենց տակ թռին բազմաթիվ մարդկանց ու անասունների: Մեռածներն այնքան շատ էին, որ բարձած սալլով տանում էին քաղաքից դորս: Թաղեկիս չէին կարողանում գերեզման փորել, այլ գետինը ճեղքելով մեծ վիճ էին անում և մեռելներից ուժին, տասին փաթաթում էին կտավով, դնում վիճը և հողով ծածկում:

Ութ օր երկիրը երկրաշարժի մեջ էր այնպէս, որ չէին կարողանում տներում բնակվել, այլ բացօթյա վայրում վրանով էին մնում, որովհետև այդ ութ օրը երկիրն անհաղար շարժման մեջ մնաց, ինչպէս նավը ջրի երեսին: Դրանից հետո մի քիչ հանդարտութեց, բայց չորս օրը, հինգ օրը, տասն օրը մեկ անգամ շարժվում էր:

...Առաջին երկրաշարժից հետո յուրաքանչյուր ոք, ով մեռնելուց ազատվեց, եկավ իր տունը, սկսեց պեղել հողը: Հողի տակից հանում էին ունեցվածք, մարդիկ: Թեպետ մեռածներն անթիվ էին, բայց և կային շատերը, որոնք Աստծու խնամքով կենդանի էին մնացել. դրանց հողի տակից հանեցին, այնպէս, որ տասը-տասնինց օր հետո կենդանի մարդ էին հանում հողի տակից»⁶⁷: Դավրիմեցին պատմում է նաև, որ Վանում երկու մանկահասակ եղբայրներ 40 օր տաճ փլատակների տակ ողջ են մնացել⁶⁸:

Տարերի ամուսին ուժգնությունն է վկայում այն, որ ավերվել են նոյն իշխակ քաղաքի ու շրջակայի քարակոփ եկեղեցները, իսկ «Նորագեղի եկեղին մի արտաշակի հեռու թռավ իր տեղից, հեռացավ, ապա փլվեց»⁶⁹:

Երբ փլատակների վրա նստեց փոշին, և ողբացյալները թաղեցին հարազատներին, անկոտրում վանեցիներն սկսեցին խորհիմ վանքերն ու եկեղեցիները վերականգնելու մասին: Բայց դրա համար անհրաժեշտ էր ոչ միայն մեծ գումար, այլև, ըստ ժամանակի օրենքի, սովորանի համաձայնությունը: Վաճի մեծահարուստ խոչաները մարդ են ուղարկում Կոստանդնուպոլիս, և խոչա Ռահիջանին հաջողվում է ստանալ սուլթանի թույլտվությունը: Դավրիմեցին թվարկում է բոլոր նրանց, ովքեր վերականգնելով հայոց սրբությունները՝ բարի անուն են թռել. «Սուրբ Սահմակ անունով եկեղեցին բոլորովին ավերվեց, որը հետո խոչա Ախիջանը շինեց: Էջմիածին անունով եկեղեցին խախտվեց, որը դարձալ նոյն խոչա Ախիջանը նորոգեց ավելի լավ, քան առաջ էր: Սուրբ Առաքելոց եկեղեցու Շերսի կողմից առաստաղը փլվեց, որը խոչա Աստոմյանները նորոգեցին: Նաև Սուրբ Պողոս եկեղեցու գմբեթը փլվեց, որ Գերաքենց Զիրաքը շինեց»⁷⁰:

Ավերվել էր նաև նշանավոր Վարագավանքը: Վաճի մեծահարուստները ձեռնարկեցին նվիրական վանական համալիրի վերականգնումը. «Կիրակոս վարդապետը, որ Վարագա վանքի առաջնորդն էր, հանձն առաջ նախ շինել ժամատուն, որը և կառուցեց, վերջացրեց: Խոչա Ամրիանը շինեց Սուրբ Խաչի եկեղեցի, Մարիամ չելերին՝ Աստվածածնի եկեղեցին, խոչա Դիլանչին՝ Սուրբ Սիոնի եկեղեցին, խոչա Հովհաննեսը՝ Սուրբ Նշանի եկեղեցին: Այդ եկեղեցիները շինեցին, մնաց Բերդով եկեղեցին, Քառասուն արեղաների եկեղեցին: Վաճի պարիսպը ևս... շորջանակի շինցին»⁷¹:



Վարագավանք:

Միայն բնական աղետները չեն ամայացնում երկիրը: Ավարառութերն էլ կողոպտում ու ոչնչացնում էին հայ ժողովրդի դարերով երկանած հոգնոր ու մշակութային գանձերը: Երկրաշարժից երեք տարի անց, Վանի շրջակայրում վիստացոյ թուրք ու քորդ ավազակները, ցանկանալով տիրանալ նոր վերականգնված Վարագավանքի գանձերին, հարձակվում են միարանության վրա, իրեցավոր տանջանքներով ենթարկում հոգևորականներին, բայց նրանցից չեն կարողանում կորզել մագաղաթյա ձեռագրերի ու եկեղեցական թանկարժեք սպասրի պահոցների տեղը: Տեսնելով, որ մարտնական տանջանքներով ի զորու չեն ստիպել վանականներին, սկսում են բարութան անել վանքը և ի վերջո, գտնում են թաքստոցում պահպող «Ավագ Սուրբ Նշանը բազմաթիվ կերպաւներով պատված և գեղեցկաշեն արկոյի մեջ դրված և բազմեցրած բոլոր անոթների վրա, որը Սովեյման բեկը ինքը գիրկն առած բերեց դուրս: Ապա դուրս բերին այլ անոթներ ևս, բազմաթիվ արծաթեղեններ, սկիթներ, խաչեր և մարդաշափ խաչ, որի կշիռն էր մի խոնդկարի (բագավորական) լիտր և վրան գրված ուներ «Դավթի խաչ» և բազմաթիվ ուկետուի ու արծաթապատ ավետարաններ և այլ գրքեր, արծաթեղեններ, քշոցներ, բուրվառներ, կանքեղեններ, թանկագին կտորից մեծագին շորջառներ, վարագույններ, բեմի ծածկոցներ և այլ բազմաթիվ սպասքներ»⁷²: Կողոպտված գանձերի մեջ հիշատակվող մարդաշափ «Դավթի խաչը», անսովոր մեծությունից դատելով, ըստ երևույթին, կապված է եղել Սասունցի Դավթի հետ: Այս սրբապղությունից Վանի և շրջակայրի բնակիչները «սրտաբեկ, մեջքակոտոր, տրումաթախիծ, անմիտթար»⁷³ են դառնում և ուղիներ որոնում կողոպտվածը հետ բերելու: Խանենց խոչա Թումայի որդիի՝ Մարիսան չելերին, որ մինչ այդ վերականգնել էր Աստվածածին եկեղեցին, գնում է ավազակապեն Սովեյման բեկի մոտ, մեծամեծ նվերներ է մատուցում, օրերով մնալով միշնորդների միջոցով փորձում է համոզել վերադարձնելու կողոպտածը: Նա խոստանում է հսկայական գումար յոթ հազար դուրուց, բայց Սովեյմանը հայոց սրբությունները եւս չի տալիս: Վարագը կողոպտած ավազակները անպատճ չեն մնում, շոտով նրանց պատուհասեցին փորձանքները, նրանք բոլորը տարբեր առիթներով սպանվեցին, շատերը ընտանիքներով բնաշնչվեցին, շատ արհավիրքներ եղան նրանց ապրած գավառներում: Ինչպես Դավթինեցին է պատմում. «Հոգ բերք չեր տալիս, իսկ եթե լինում էր, հազիվ սերմը վերցնում էին, Բեծյալների արշավանքով ու խոռվությամբ գավառը լցվեց, նաև կենդանիները չեն աճում, այլ դեռ պակասում են: Այս ամուսն օրերին... սաստիկ ու անշափ ձյուն եկավ»⁷⁴: Գավառի բնակիչները հավաքվում են և գնում երրահիմ բեկի մոտ, որի ձեռքն էին անցել գանձերը, և աղաշում են, որ պատուանից ազատվելու համար հայոց սրբությունները վերադարձն, վանեցիներն էլ մեծ գումարներ տալով, ի վերջո, չորս տարի անց, կարողանում են Վարագա վանքի գանձերը եւս ստանալ:

Ինչպես տեսնում ենք, Վանի կյանքում չափազանց մեծ դեր ունեին հայ մեծահարուստ խոչաներն ու չելերիները, որոնք ոչ միայն վերականգնում էին ավերված տները, եկեղեցիներն ու վանքերը, այլև ազգային հոգնոր արծնքների համար հսկայական գումարներ ծախսում:

Այն ամենը, ինչը հոգել է վանեցիներին, գրի է առնել ձեռագրերի հիշատակարաններում ու ժամանակագրություններում, ու թեև դրանց մեծագույն մասն այրվել ու ոչնչացվել է, բայց պահպանվածների շնորհիվ կարելի է որոշ պատկերացում կազմել Վանի գլխով անցած-դարձածի մասին: 13-րդ դարի վերջերից մինչև 18-րդ դարի կեսերը Վան-Վասպուրականում ընդորինակվել և ծաղկվել է շորոշ 1500 ձեռագիր, գոյատել է Վասպուրականի մանրանկարչության դպրոցը⁷⁵: Դրան մեծապես նպաստել է այն, որ դեռևս 1113 թ. Աղթամարում հիմնված կաթողիկոսությունը մինչև իր գոյության ավարտը՝ 1895 թվականը, հովանավորել և աջակցել է Վան-Վասպուրականի գեղարվեստի զարգացմանը: Վասպուրականի բարեխիլճ ժամանակագրեներից տեղեկանում ենք, որ 1684 թ. «մարդակերպ զայլ մի երեվեցաւ», որը օրը ցերեկով շրջում էր Վանի այգիներում և «պատերազմում» մարդանց թեւ և «խօսէր եւս»: Ի վերջո, մարդագալլը անմետանում է, և վանեցիներն ազատ շունչ են քաշում⁷⁶: Երեք տարի անց Վան է գալիս մի քանամակ երիտասարդ, «որոյ ոչ գոյր երկու ձեռն բնաւ, որ այնպես ծնեալ էր ի մօրէն, և զմաց ուսով ուտեր, սա էր ի Խիզանայ, ազգաւ թայ»⁷⁷: Նոյն թվին, ինչպես տեղեկացնում է ժամանակագիրը, մի կին միանգամից չորս տող է ծնում⁷⁸, իսկ 1707-ին, մայիսի 27-ին Վանի վրա «քամպակ տեղաց», հուլիսի 5-ին քաղաքում սաստիկ երկրաշարժ եղավ⁷⁹: Մի քանի տարի անց՝ 1715-ին, երկրաշարժը կրկնվում է, և չորս առջի են զոհվում: Վանի Բարդուղիմոս Առաքյալի եկեղեցու գմբերն ընկնում է⁸⁰: Երկրաշարժ է լինում նաև 1750 թ. մարտի 7-ին⁸¹: Ժամանակագիրները, որպես հիշարժան դեպք, սերունդներին են հայտնում, որ 1763 թ. սեպտեմբերին Վան են եկել լար-



խաղացներ. «Եկին փաթիվանք և խաղացին ի վերայ պղնձէ; թելի»⁸²:

Ժամանակագրութերը հիշատակում են նաև Վանի պարունակի, իշխանների, իշխանաց իշխանների մասին: Երբ քաղեցին մի քուրդ մոլլա 1705 թ. Վան գալով, փորձում է հայ երեխաններին կրօնափոխել, Վանի հայոց «իշխանաց իշխան պարոն խօսա Ախիշան Ղարասաֆարը» նրան քաղաքից վտարել է տալիս⁸³: Ականատեսը, որպես նշանակալից իրադարձություն, արձանագրում է, որ 1776 թ. «Ախիշան մեծափառ իշխանաց իշխան գնաց Ստամբուլ»⁸⁴:

Այս, Վան-Վասպուրականում պահպանվել էին հայկական իշխանական տները, որոնց մի մասը նոյնիսկ մեծակազոր ուներ:

Վանը պաշտպանում էին Վան-Կովերի զորամասերը, որոնք մեծ առանձնաշնորհումներ էին ստացել⁸⁵: Խնչպես ուսումնասիրողներից մեկն է գրում, «Օսմանեան տիրապետութիւնը սկիզբները շատ անհատաւ է եղել, ուստի օսմանցիք տեղական ուժեր կը կազմակերպէին» Վանը... պարսից յարձակումներուն դէմ պաշտպանելու համար: Այդ ուժերուն կը հրամայէին Վանգովի զսուած հայ եւ մասամբ քիրու երեւելիներ եւ իրեն աւատառու գերիշխան պետութեան:

Կը պատմուի թե Վանգովիներէն ոմանք երբեմն իրենց սեփական ուժերու վրա յենած՝ կրմրուտանային Վանի կուսակալին դէմ զայն պաշտօնանկ ընելու եւ նոյնիսկ կախել տալու աստիճան»⁸⁶: Սովորանը, վախենալով հայ իշխանների զինյալ ուժերի համախմբումից ու ապստամբությունից, հայ ազ-ըրվականությանը հնազանդ պահելու նպատակով, նրանց ընտանիքներից Կոստանդնուպոլսում պատահներ էր պահում: Մեզ են հասել Վանի հայկական իշխանատներից մի քանչիսի անունները՝ Պոչովյաններ, Ղարաբեկյաններ, Թորամանյաններ, Պարոննենց (Պոյուն). Վերջին գերդաստանից Կարապետը նոյնիսկ մահապատիծ կայացնելու իրավունք էր ձեռք բերել⁸⁷: 17-րդ դարի վերջերին Վանի բերդն իր թնդանոթներով Տեր-Բարսեղենց գերդաստանին էր պատկանում, իսկ 18-րդ դարում անցավ Դանկովյաններին⁸⁸:


Վանում կային նաև այնպիսի հայ իշխաններ, որոնք իրենց տիրապետությունը տարածել էին նոյնիսկ քաղաքից հեռու գյուղերի վրա: Օրինակ, Արմենում Վանի իշխաններին էր պատկանում յոթ հայկական գյուղ⁸⁹: Խնչ իշխանաց իշխան Ղարաբեկյաններից Հակոբը, խնչպես «Արձագանք» է գրում. «կարողացել է քացարձակ իշխան ինեւ Վանա համայն երկրին»⁹⁰: Այս ամենն ապացուցում է, որ հակառակ դարեր շարունակ կրկնվող ասպատակություններին, թուրք-պարսկական ավերիչ պատերազմներին, օսմանյան Թուրքիայի վարած քաղաքականությանը, հայերը պահպանել էին իրենց իշխանական տներից շատերը: Եթե Վանում տիրում էին հայ իշխաններն ու մեծատունները, ապա գավառներում Ռշտունիքում, Բգնունիքում, Հայոց Զորում և այլոր՝ նախարարական տների բներները՝ իշխանապետերը, իշխաններն ու մելիքները⁹¹:

19-րդ դարի կեսերին Վանա լճի Լիմ կղզու անապատի միաբան Գևորգ Վարդապետ Տեր-Բարսեղյանի կազմած վիճակագրության համաձայն Վանը և նրա շրջակա 76 գյուղերը մեկ վարչական միավորման մեջ էին, և «յուրաքանչյուր գյուղ ունի մեկ հատուկ իշխան... և յուրյանց ամեն մեկ գործ անմիջապես Վանա ժողովով կտեսնվի»⁹²: Ցավոք, Վան-Վասպուրականի և Արևմտյան Հայաստանի մյուս նախանձների հայոց իշխանությունները, իշխանապետությունները, մելիքությունները, նրանց ներքին ինքնավարությունն ու ինքնուրուսնությունը բավարար չափով չի ուսումնասիրվել, և համայն հայոց աշխարհը ներկայացվել է միայն որպես անտերունչ հպատակների արցունքի հովիտ:

Խնչպես նշեցինք, Վասպուրականում կային նաև իշխանապետեր և մելիքներ: Օրինակ, 1872 թ. Վասպուրականից Ամենայն հայոց կաթողիկոսին գրված նամակի տակ ստորագրել են Նորդովի մելիք Գասպարը, մելիք Մարտիրոսը և իշխանապետ մելիք Հովհաննեսը⁹³:

Վան-Վասպուրականի հայ իշխանները բազմիցս զինյալ դիմադրություն են կազմակերպել թուրքերի ու քրուերի դէմ և հաճախ անհավասար մարտերում հաղթել: Վասպուրականի այդ քաջազն հայորդիների մատին ականատեսը՝ Գ. Արվանդտյանցը, գրում է. «Հայն յուր մանկությունից մինչև զերեզմանը մեկ ուսի վրա ուներ դրած բահը, մյուսին՝ հրացան, մեկով իր գործը կը գործեր, մյուսով յուր թշնամին կը հալածեր, մեկ ձեռքը կը բռներ մանգաղ, մյուսը՝ սուր, մեկով յուր հունձը կը հնձեր, մյուսով յուր հնձածը կը պաշտպաներ ու այդպես կապրեր»⁹⁴:

Վան-Վասպուրականի հայերի ազատասիրական ոգին ընկճելու, նրանց զինյական ուժերը ջլատելու, իշխանությունները քայրայելու նպատակով օսմանյան կառավարությունը թուրքերի և քրուերի ավազակալյան բնագիներն ուղղում էր հայերի դէմ, ճնշում ու հալածում, ծանր հարկեր դնում, դիմում

«Արծուի Կասպորական»
հանդեսի շապիկը:

Այս տպագրական
մեջնան, որով տպագրվել է
«Արծուի Կասպորականը»:

ստորև և բարբարոս միջոցների: Հետևանքը լինում է այն, որ շատերն են զնում օտար երկրներ, այդ թվում և Արծունիների ժառանգները: 1813-ին Վանից Թիֆլիս է տեղափոխվում հայ նշանավոր հրապարակախոս և հասարակական գործիչ, «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծունու պապը՝ Գևորգ Արծունին: Նա Վանում ուներ անրապ հարստություն, որն ավելի էր մեծացել Արծունյաց մեկ այլ շառավիկի՝ Պողովյանների դստեր հետ ամուսնանալու շնորհիվ: Պատկերացներու համար, թե Վանի իշխանները մոտավորապես ինչ կարողության տեր էին, խիստ համառոտ թվարկենք Գեվորգ Արծունուն պատկանող միայն այն սեփականությունը, որը թողել էր հայրենիքում՝ ընդարձակ տարածքներ Մոկսում և Շատախում, ուր կային նաև հարուստ հանքեր, Վանի բերդի եկամուտների մի մասի ժառանգական իրավունքը, բազմաթիվ տներ, խանութներ, այգիներ ու ձկնորսարաններ և այլն: Թիֆլիսում հաստատվելուց հետո նա իրեն կոչում է «Վանից գաղթած հայոց իշխան» և ոստական ցարին է դիմում ազնվականի կոչումը հաստատելու համար, որին կցում է վկայություններ Արծունյաց առքայատնից ծագած լինելու մասին և իրենց տոհմանուղը՝ 1530 թվականից սկսած⁹⁶:

Բայց ոստական տիրակալները, իրենց քաղաքականությանը հավատարիմ, խոսափում էին հայերի ազնվականության կոչումներն ու իրավունքները հաստատել: Խճախես Ղարաբաղի մելիքական տներին, այնպես էլ Արևմտյան Հայաստանից գաղթած մելիքներին ու իշխաններին, իշխանապետներին ու իշխանաց իշխաններին ոստական կայսրերը որպես ազնվականներ չեն ընդունում, այն դեպքում, որ նոյնակ պարսից շահն ու թուրքական սուլթանը ճանաչում էին նրանց ժառանգական իրավունքները: Այդ խոստովանում է Վրաստաճ կառավարչապետ Երմոլովը, Ալեքսանդր կայսրին գրած միջնորդագրում նշելով, որ Արծունին «քողել է իր հայրենիքում իր սեփական գյողերը և եկամուտները, Վանի բերդի մի մասով հանդերձ, որ շնորհել է օսմանյան կառավարությունը նրա ցեղին ժառանգարար... այն պատճառով, որ նրա նախնիքն են եղել բերդի շինողներն ու տերերը»⁹⁷: Ի վերջո, 1820-ին Արծունիները ոստական կայսրության մեջ նոյնակ ժառանգական ազնվականություն ստացան:

Թուրքական անտանելի լծի հետևանքով Վանից գաղթում էին ոչ միայն ազնվականները, այլև առավել շատ մանր արհեստավորները: Նրանց մի մասն էլ մեռնում էր օտար ափերում, պանդիստության մեջ:

19-րդ դարի վերջին Վանի կուսակալությունն զբաղեցնում էր հսկայական տարածք՝ 39 հազար 300 քառ. կմ, ըստ Ռաֆֆու⁹⁸, այն ուներ շուրջ 370 640 հայ բնակչություն (ըստ 1882 թ. մարդահամարի՝ 400 հազար)⁹⁹, 1652 գյուղ, 382 գործող եկեղեցի, 87 վանք ու մենատան: Հայերից բացի կուսակալությունն ընակվում էին նաև որոշ թվով թուրքեր, քրդեր, եզիսեր, գնչուներ, չերքեզներ ու հրեաներ:

19-րդ դարի երկրորդ կեսին Վանում աշխատանում է տնտեսական, մշակութային կյանքը, նոր վերելք է ապրում ազգային-ազատագրական շարժումը: Դրան նպաստեց նաև Խրիմյան Հայրիկի վերադարձը Վան: Նրա հետ հայրենիք են դառնում նաև բազմաթիվ վանեցիներ:

Երեսունվեցամյա Խրիմյանն արդեն հասցերէ էր մեծ հեղինակություն ձեռք բերել արևմտահայության շրջանում: Կոստանդնուպոլիսից Վան վերադարձ և մոտակա Վարագա վանքի վանահայր ձեռնադրվելով, 1858-ին նա վերսկսում է Արևմտյան Հայաստաճի առաջին պարբերականի՝ «Արծվի Վասպորական» շարաթաթերթի հրապարակումը, իր շուրջն է հավաքում մտավորականությանը, որնք ակտիվորեն թղթակցում են թերթին, ազատասիրական գաղափարներ տարածում, մեծապես նպաստում ազգային ինքնագիտակցության արթնացմանը: Թերթում իր առաջին թղթակցություններն է տպագրում տասնութամյա Գարեգին Սրբանձույանը:

Ազատասիրական գաղափարների հիմնալի դպրոց էր 1857-ին Խրիմյանի հիմնած ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը, որի սաներից շատերը հետագայում դարձան մշակութային գործիչներ և հերոս մարտիկներ:

Նոյն թվականին Վան գալով՝ Վարագա վանք ու Աղթամար է այցելում պատաճ Ռաֆֆին, ուր և գրում է իր նշանավոր բանաստեղծություններից մեկը.

Զայն տուր, ով ծովակ, ինչո՞ւ լուս ես,
Ողբակից լինել չկամի՞ն դժբախտիս,
Ծարժեցեք, զեփյուրք, ակիք վետ-վետ,
Խառնեք արտասուրս այս ջրերի հետ:

Այս բանաստեղծության մեկ որիշ բառատող շուրջ երեք տասնամյակ անց փորագրվեց մեծ գրողի մահարձանին.



Քայ ո է քո սիրտը, և խիղճը՝ մեռած,
Քանի՝ արյուններ, քանի՝ կոտորած
Տեսար, լոեցիր և դարձյալ պայծառ
Հայ երկրի վերա կապում ես կամար¹⁰⁰:

1860-ական թվականներին ավելի ուժեղացավ Բայերի հանդեպ ճնշումը, որին ի պատասխան բռնկվեց 1862 թ. Վանի գինված ելույթը¹⁰¹: Թուրքերը Բայերին կոտորելու և թալանելու առիթը բաց չէին թողնում: Եվ ահա, նոր պատրիակ: Թուրքերը երկրի քրիստոնյաներին արգելում էին հուղարկավորության ազգային ծեսը, ահարեկում, որը կոտորեն բոլորին: Ծուտով մահանում է մենց ինքը՝ փաշան, նաև հայ հարուստներից մեկը: Հուղարկավորության ժամանակ թուրքերը հարձակվում են հայերի վրա, սկսվում է ծեծկոտուք, ապա և հրացանաձգություն: Վանի և շրջակարի հայերը զինվելով պաշտպանում են հուղարկավորության մասնակիցներին: Ինչպես ժամանակի մի շարք թերթեր են գրում. «Բուն բերդի մեջ սկսվեց սոսկալի կոիվ և կոտորած: Բերդը մնաց Բայերի ձեռքը, որովհետև նրանք թվով շատ էին տաճիկներից»¹⁰²: Ըստ որոշ տվյալների՝ երկու կողմերից սպանվում կամ վիրավորվում է շուրջ հազար մարդ: Ժամանակակիցներից մեկը այդ օրերի մասին գրում է, որ Վանը «մեծ խովությունից ծիռում էր՝ ինչպես Բարելոն»¹⁰³:

Վանի գինված ելույթից տասը տարի անց՝ 1872 թ. տեղի Բայրենասեր-մերը կազմակերպեցին «Միություն» կամ «Ազատության միություն» ընկերությունը, որին անհամագրվեց նաև քաղաքի մեծահարուստ-ների ու երկելիների մի մասը: Ընկերությունը դիմեց Բայրողիկոսին, Կովկասի փոխարքային ու Երևանի Օահանգապետին, հուսալով, որ Երանց միջամտությամբ Վանի Բայության վիճակը կրարելավվի¹⁰⁴:

1877—78 թթ. ուսու-թուրքական պատերազմի հախորենին Վան էին լցվեց թուրքական և քրդական դասալիք զորքերը: Նրանք չէին ցանկանում ուղմանակատ մեկնել՝ գերադասելով կողոպտել ու սպանել անզեն ժողովրդին:

Կառավարությունն այդ օրերին Վանի Բայերից պահանջեց մեծ գումար-ներ ընծայել թուրքական բանակին, անամորաբար Բայտարելով, թե «խուլամ զօրքերը ձեր Բանգստութեան, ինչքի և կեանքի ապահովութեան համար բանակ պիտի եղթան...»¹⁰⁵: Մոտալուտ պատերազմի պատրվակով Վանի Բայերից շորթվեցին ամենի գումարներ, բայց կառավարության նպատակը միայն այդ չէր: Ցանկանալով մահացու հարված հասցնել հայ վաճառականությանը, նրան դուրս մղել, և սապարեզը թողնել միայն թուրք շարշիներին, առ ձեռնարկեց Վանի Աշանավոր շուկայի հրդեմումն ու կողոպութը¹⁰⁶, որին մասնակցում էին զինվորականները, ոստիկաններն ու մահմեդական խաժամուժը: Այդ շարադես դեպքի մասին վանեցի Աշանավոր գործից Արմենակ Եկարյանը գրում է. «Հետզինետ Բաստատուեցաւ, թէ ատիկա պատահական աղետ մը չէր, այլ լատկապէս պատրաստուած կառավարութեան



Վանի բերդը արևելքից.
Թագրիգի դուռը:

կողմէ, փճացնելու համար հայ տարրին բարգավաճ կեանքը, և կառավարութիւնը աջողեցաւ իր ձեռնարկին մէջ, որովհետեւ փճացած էր ոչ միայն ամբողջ շուկան՝ իր լեցուն խանութներովն ու վաճառատուններովը, ալեւ կրակեն կարելի չէր եղած ազատել հայ առևտրական դասուն հնչուն հարստութիւնը, որ... վաճառատան արկղներուն մէջ կը պահուէր»¹⁰⁷:

Հրդեհի բոցերը լավեցին շորջ երկու հազար արհեստանոց, խանութ ու կրպակ¹⁰⁸, միայն նյութական վնասը կազմեց 10 միլիոն օսմանյան ռուփի¹⁰⁹: Անշուշտ, կորստի ընդհանուր գումարի մասին ճշգրիտ դժվար է ասել. այդ է պատճառը, որ ժամանակի մամուլը հրդեհի հասցրած վնասը տարբեր թվերով է գնահատում¹¹⁰:

Հայերը բողոքի ձայն բարձրացրին, բայց մի երկրում, ուր կյանքի երաշխիք չկար, միամտություն էր գույքի երաշխիք պահանջել: Մ. Խրիմյանը գրեց «Վաճ-գոյժ» գրքովկը, որը Կոստանդնուպոլսում լուս տեսնելուց հետո խկոյն արգելվեց: Շուտով այն վերահրատարակվեց Թիֆլիսում՝ զայրացնելով կառավարությանը, որը հեղինակին ազատեց թուրքական սենատի անդամությունից¹¹¹:

Վաճի շուկայի հրդեհից հետո բազմաթիվ սնանկացած հայեր գնացին Կ. Պոլիս: Մ. Փորթուգալյանի հաշվարկներով, 1877 թ. Կ. Պոլսում կար 20 000 պանդոխտ վաճեցից¹¹²:

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայերը, որպես օսմանյան կայսրության հպատակներ, կառավարության պահանջով նյութապես օճանդակում էին թուրքական բանակին: Ռուսական կայսրությանն անցած Արևելյան Հայաստանի հայերն էլ իրենց պարտականությունն էին կատարում ցարական կայսրության հանդեպ:

Կոստանդնուպոլսի ազգային ժողովի տվյալներով, 1877-ի հունիսին վաճեցիներն ու Վասպորականի մյուս հայերը թուրքական բանակին տվել են 230 հազար ռուփի, մեկ միլիոն 377 հազար դուրուց, սննդամթերք ու հագուստերն, ձիեր ու գրաստեր, ընտանի կենդանիներ: Եվ այսքանը միայն պատերազմի սկզբին¹¹³:

Պատերազմն անասելի գրկանքներ բերեց Վաճի ու գավառների հայությանը, ծայր առավ ահավոր աղքատություն ու սով: Նրանց օգնելու համար Մ. Խրիմյանի ջանքերով ստեղծվում է «Սովելոց հանձնաժողով»: Վաճ քաղաքում կուտակվել էին 66 հազար սովյալներ, որոնցից շատերը մահացան: Զկային բժիշկներ ու դեկտոր, ամենուրեք ծանր վիճակ էր: Վաճեցիներին օգնելու հպատակով քաղաք է գալիս նշանավոր գրող Շերենցը, որը մասնագիտությամբ բժիշկ էր:

Տարասիյուու հայությունը կրկին իր ուժերը հավաքեց և Արևելյան Հա-

Տեսարան Վաճից,
լուսանկարը՝ Էռնեստ
Շանթրի, 1881 թ.:

Հայ վաճառականի տուն
Կանում, XIX դ.:

Վաճի երամյան
վարժարանը:



յաստանից ու Կովկասի հայաշատ վայրերից օգնություն հասցրեց տառապյալներին¹¹⁴:

Պատերազմից հետո, 1878-ին Վանում ստեղծվում է «Սև խաչ» կազմակերպությունը, որը նպատակադրվել էր «ժողովրդի մեջ ինքնապաշտպանության ոգին տարածել, իր իրավանց տեր ընել և իրու մարդ ապրել»: Կազմակերպությունն ուներ ակումբ, որը հավաքման ու դասախոսություններ էին կայանում:

Երբ պատերազմից վերադարձան թուրք և քորդ գինվորները, սկսեցին վաճառել իրենց գենքերը, «Սև խաչն» ու տեղի հայությունը որոշեցին զինվել: Այդ տարիներին Վանում ստեղծեց նաև «Զինակիր» ընկերությունը, որը գենք էր ձեռք բերում և երիտասարդության համար գինավարժություններ կազմակերպում¹¹⁵:

1870—80-ական թվականներին Վասպորականի լեռներում արդեն արձագանքում էին առաջին ազատամարտիկների կրակոցները: Վանի հայերից ունանք, նույնիսկ 1880-ական թվականներին պատրաստվում էին հարձակվել և գրավել Վանի բերդն ու զինաթափել պահակազորը: Բայց Մ. Խրիմյանի և այլ հեղինակավոր անձանց միջամտությամբ այս վտանգավոր ձեռնարկումը կատարվում է:

Դեռևս 1820-ական թվականներին Վանի իշխանապետ Հակոբ Ղարասեֆերյանի շահերով բացվում է դպրոց, իսկ քանի տարի անց քաղաքում արդեն վեց դպրոց կար: 1860-ական թվականներին տրվում են առաջին թատերական ներկայացումները: 1863-ին կազմակերպվում է «Գինեհատ ընկերությունն», որը պայքարում էր հարբեցողության դեմ, իսկ 1865-ին հիմնվում է «Ռուսմնաշահ ընկերությունը», որը նպատակադրվել էր օգնել դպրոցական գործին, կազմակերպել գորերի վաճառք, հավաքել հազվագյուտ գորեր, ստեղծել ազգային թանգարան: Վարագա վանքում ևս գորեր են հրատարակվում¹¹⁶:

1870—80-ական թվականներին ավելի են աշխուժանում Վանի կրթօջախները¹¹⁷: Մեծ աշխատանք են ծավալում Սանդիխտյան իգական դպրոցը, Հայկազյան վարժարանը, Մ. Փորրուգալյանի հիմնած նշանավոր վարժապետանոցը, որի փակումից հետո՝ Կենտրոնական վարժարանը, Խրիմյան Հայրիկի նախաձեռնությամբ Վարագում բացված Երկրագիտական ուսումնարանը, որի խնդիրն էր երիտասարդներին ծանոթացնել երկրագործության նոր մեթոդներին ու նոր մեթենաներին, և այդ նպատակով Մանշեստրի հայերը դպրոցին նվիրեցին հնձող մեթենան¹¹⁸: Լայն ծավալ էին ստացել նաև կիրակնօրյա լսարանները, որոնց մասին ժամանակակիցներից մեկն այսպես է հուշագրում. «Կային նաև կիրակնօրյա լսարաններ, որտեղ ժողովորդ որոշած օրերում մեծ փափառով խոնվում էր ատենախոսություններ և ճառախոսություններ լսելու: Խավարի մեջ նաև ժողովով ժողովուրդը մի քիչ լույս տեսավ և խանդով ու սիրամարված գրեկց նրան: 40—50 տարեկան մարդիկ կարճ միջոցով գրել և կարդալ սովորեցան: Ամեն տեղ կյանքն սկսեց եռ գալ, ամեն որ մոռացության տալով անցյալը՝ ուրախ ժպիտով գործ էր անում, թե՛ քաղաքում, թե՛ գյուղերում պարապ մարդ չէր գտնվում, լեռները, ծմակները, բլուրները, ձորերը և դաշտերը ծրաջան մշակների աշխատությամբ բոլորը մշակված էին»¹¹⁹:

1880-ական թվականներին ուժեղացավ հալածանքը հայ մշակույթի նկատմամբ, փակվեցին մի շարք թերթեր, արգելվեցին գրքեր, ձերքակալվեցին բազմաթիվ մտավորականներ: 1886 թ. «Վանայ գրեթե բոլոր դպրոցները փակուեցան, դասատուր հալածեցան ու վտարուեցան, Վանայ միսիոներական աշակերտոր լցան, շատ մը ազգայիններ Վանէն հեռացուեցան անհիմն կասկածներով, թաղական խորհուրդը լուծուեցան և թոյլ շտրուեցան որ նորերը ընտրուին...»¹²⁰: Բայց միայն դպրոցների փակումով գործը չափարտվեց: Լավ հասկանալով, որ նոր սերունդը ևս հայոց պայքարը պիտի շարունակի, 1886-ի վերջին Վանի «կիրակնօրեայ վարժարանի բոլոր աշակերտները հաւաքելով բանտարկեցին... մի քանի ժամ յետոյ փոքրերին հարցարնեցին և ազատ թողեցին, բայց երեք մեծ աշակերտներն, որոնք իրենց աշքերուն խորթ երևացած էին, բանտը պահեցին»¹²¹: Վանում ամենանշանավորը հմուտ մանկավարժ ու եռանդուն կազմակերպիչ Համբարձում Երամյանի մասնավոր միջնակարգ դպրոցն էր: Դարավերջին Վան քաղաքում կամ Վանի 12, իսկ ողջ կուսակալությունում 120 հայկական դպրոց: 1870-ական թվականներին Վանում զարգանում է գրականությունը, որը լեռի բնորշմամբ հայ գրականության մեջ նոր ուղղություն է բացում և կոչվում Վանի կամ Վարագի դպրոց: Այդ գրական դպրոցի մասին լեռն գրում է. «Մի տաղանդավոր ժողովուրդ էր (Վանա լճի) այս ափի բնակչությունը և կատարեց նա այդ մեծ պատմական գործը վարպետորեն: Տաղանդավոր էր նա թե՛ իր արթեստներով և թե՛ գրական հյուսողության թափով և այդ պատմառով էր, որ այնքան շատ տվեց բանավոր վեպեր, երգեր, գրույցներ:

...Հիճը բանաստեղծություն է սովորեցնում իր եզերքի բնակչությանը, որ ամեն դեպքում ճակատագրի սահմանած բոլոր դիրքերում մնաց բանաստեղծ-մտածող, նույնիսկ վանքի մոռայլ խուզի մեջ էլ կարողացավ Գրիգոր Նարեկացու մեծությունը պարփակել:

...Եվ ահա, անցյալ դարի հիմնական թվականներից Վանն իշնում է գրական հրապարակ, որ մի կարճ միջոցով քողնում է խոր հետքեր, մի ամբողջ նոր ուղղություն է հաստատում: Մագում է Վանի, կամ ավելի ճիշտ, Վարագի դպրոցը, որի հիմնադիրն ու ոգին էր Խրիմյան Հայոցիքը: Դպրոց է դա ոչ միայն իր ենդ մասնագիտական մտրով: Այդ դպրոցը գրականություն էլ էր կուս: Նրա կոստ-կոփածն է Վանի գրականության թագն ու պարձանը՝ Գարեգին եպիսկոպոս Սրբանաւտյանը: Դպրոցի շունչ ու հոգի ներշնչող հիմնադիրն էր՝ Խրիմյանը, որ օժտված գրական մասնությունով, խուզքով ու գրով հուզելու մեծ ձիրք էր ստացել, կուստոտ հայունաւեր, ժողովրդի մարդ, ժողովրդական մարդ, որին տված էր բազմություններ դյութելու շնորհը:

Սրանչելի հատկություններով էր գինված Վանի դպրոցի գրիչը: Նրան տված էին նուրբ երանցներ, բանաստեղծական քննչություն, մի խոսքով՝ սրտի խոսք, այն, որ գիտե գերել իր կարոտով, իր տենչերով հավետ երգելու թուզի ու կրակու անուշությամբ»¹²²:

Ահա ազգային այսպիսի զարթոնքի պայմաններում սկսվեց Վանի 1896 թվականի կոտորածը¹²³: Դեռ նախորդ տարվա աշնանը Վանն ու շրջակա հայաբն շրջանները լցվեցին ոստիկաններով ու գինվորներով: Այդ օրերին Վանում համարյա ամեն օր կողոպուտի ու սպանության բազմաթիվ դեպքեր էին լինում:

Օսմանյան կառավարությունը քրդական ցեղերին բաժանեց նոր տիպի զենքեր: Զարդերն սկսվեցին գյուղերից, որոնցից մի քանիսը գինված ինքնապաշտպանության դիմեցին և ետ մեցին քուրդ թափթփուկներին: Բայց ուժերն անհավասար էին. մի կողմում օսմանյան կայսրությունն էր իր հրական բանակով, քրդական զորամիավորումներով ու խառնամբոխ ավարուուններով, մյուսում՝ հայ գյուղացին: Ավերվեցին բազմաթիվ գյուղեր, սպանեցի փրկվողները լցվեցին Վան, իսկ 1896-ի հունիսի 3-ին սկսվեց Վանի բնակչության կոտորածը: Անգեն մարդկանց, կանանց ու երեխաների մի մասը պատսպարվեց օտարերկրյա հյուպատոսարաններում: ԱՄՆ-ի հյուպատոս, Վանի հնություններն ուսումնասիրող Ռեյնոլդսը, որը շուրջ քառորդ դար միսիոներական նպատակով Վանում էր, սկզբում նրանց թուլատրեց հանգրվանել հյուպատոսարանում, իսկ հետո մեծ մասին հանձնեց քուրքերին, որոնք տեղն ու տեղը սպանում էին խեղճերին: Իսկ իրենց տունն ու պատիվը պաշտպանող հայերին Ռեյնոլդսը հորդորում էր գենքը վայր դնել և մարտիկների մեջ իր ծանոթ մի երիտասարդի տեսնելով ասում է. «Քեզ խորհուրդ կուտամ, որ գենքը վար դնեն և Հիսուս Քրիստոսին ապավինիս, եթե քուրդ սպանեն, թե՛ թեզ, թե՛ հոգիին և թե՛ մանավանդ քուրդին վնաս է»¹²⁴: Այսպիսին էր հզոր երկրի քրիստոնյա քարոզիչ հյուպատոսի բարոյականությունը:

Չնայած թշնամու բազմությանը, վանեցինները դիմեցին ինքնապաշտպանության: Տարբեր կուսակցությունների ներկայացնություններից ատենեցին ինքնապաշտպանությունը գինավորող մարմին: Թեև վանեցինների գինական ուժերը քիչ էին (արմենականներն ունեին 370, դաշնակցականները՝ 42, հնչակյանները՝ 30 հրացան), այնուամենայնիվ որոշեցին կովկլ: Շատերն էլ գինվեցին ինչով կարող էին, և ինքնապաշտպանների թիվը հասավ 700—900 հրացու¹²⁵: Համեմատության համար նշենք, որ միայն քրդական զորաբանումների թիվը հասնում էր շուրջ 10 հազարի: Բայց Վանը երդուում է կովկլ ու անձնատոր շիհնել:

Սկսվում է անհավասար մարտ, որին անօրինակ քաջությամբ են մասնակցում Վանի բոլոր թաղերը:

Ականատեսն այսպես է ներկայացնում հերոսամարտի դրվագներից մեկը. «Դեռ առաւտու արեգակը նոր էր Վարագայ սարից բարձրացել, երբ Վանից հարաւ գտնուող Հայոց-Զորի կողմից «Լո», լո՛» գոռալով քաղաք կը թափուի քիւրերի վորմակը, սակայն՝ հակառակ իրենց սպասածին՝ դիմադրութեան կը հանդիպեն. Մանդակունեաց և Պոլունեաց դիրքերից արձակած գնդակները գետին կը փոնեն քիւրերից 8—10 հոգի, որոնք դիակներ թողած փախուստ կուտան: Շաբք (ավազակապետ— Ս. Վ.) լսելով իր մարդկանց կորուստը՝ 800—1000 հոգու գլուխ անցած, ետևիցն էլ կառավարչական գինուորներ, կը յարձակուի մինեցն կտսի վրայ: Կոռուուների դիմադրութիւնը զարմանալի կը լինի, սակայն ինչպէ՞ս կարող էին երկար դիմանալ իրենցից հարիւրապատիկ աւելի խուժանին. շուտով օգնութեան կը հասնեն Մ. Աւատիսիսանի օգնական Մուշեղ և որիշներ և այս երկու պաշրուած փողոցների 8 դիրքերում կը լեցուին 200-ից աւելի հայ անձնու-

ոացներ: Կոհիը բաւական կերկարի, հայեր չկարողանալով համբերել դիրքերում, դուրս կը գան պատ դաշտ և Այեջօղու արտում, արտի պատերը պատճեշի տեղ ծառայեցնելով՝ կոհիը կը շարունակեն, միշտ իրենք անվնաս, իսկ թշնամուն մահու գնդակներ ուղարկելով: Միայն արտի միևն երեսում գտնուող ձորից ամստեղ ապահինած խուժանը բաւական նեղութիւն կը պատճառէ հայերին, որից կատաղած՝ հայերից 4 հոգի, Մուշեղ, Վահեն, Քօչար և Տիգրան դուրս կը գան պատի եւտից և կը սկսեն կոռուկ կարկտի նման տեղացող գնդակների դէմ: Խուժանը սարսափած նոցա յանդգնութիւնից՝ կը սկսի վատաքար յետ քաշուել և ձորում ապահնողներն էլ բլուրն ի վեր բարձրանալով փախուստ կը տան, սակայն դիրքերից տեղացող գնդակները չեն խնայի նոյանից շատերի կեանքք: Չորս կոռուդերի օրինակին հետևելով՝ 60 հոգի դաշտ կիշնեն և երեք ժամ տևող կատաղի կոհիը կը վերջանայ թիրքաց փախուստ տալով: Ծաքք կատաղած կը հեռանայ իր թոյնը ուրիշ թաղերու վրա թափելու, սակայն այն տեղերում էլ առ յաջողութիւն չի գտնում, որպես յետոյ կը տեսնենք: Նա կորցրեց այստեղ իր 40-ի չափ արբանեակներին, բայց գնդակահար եղած բոլոր թիրքերի թիւը 80 էր: Հայերից կատաղի կոռու ժամանակ կը սպանուի մի երիտասարդ Ոզմեցի Օհաննես անունով, մի ուրիշն էլ կը վիրաւորուի»¹²⁶:

Կոհվը հատկապես արյունահեղ էր հունիսի 8-ին, երբ թուրքական կանոնավոր բանակն ու քրդական հեծելազորը ընդհանուր հարձակման անցան, բայց հայերը ոչ միայն չընկրկեցին, այլ հակահարձակման անցնելով՝ թշնամուն եւտ շպրտեցին և նոյնիսկ գրավեցին բանակի թնդանոթները:

Օսմանյան կառավարությունը տեսնելով, որ Վանի առյուծասիրու պաշտպաններին չի կարողանում ընկնել, օտար հյուպատոսներին ուղարկում է նրանց մոտ՝ առաջարկելով, որ, եթե դեկավարներից տասը հոգու հանձնեն, ապա կոհվը կողադարի: Դեքնապաշտպանության դեկավարությունը համաձայնվում է, ասելով, որ. «Եթե մենք մեռնենք և ծողովուրդը ապրի, քիչ ժամանակեն մեզ պես շատ շատերը պիտի արտադրե դարձեալ, իսկ եթե մենք ապրինք ու ծողովուրդը մեռնի, մենք չենք կարող ծողովուրդ մը ստեղծել»: Բայց մարտիկները հասկանալով, որ կառավարությունը ցանկանում է խորամաննությամբ ինքնապաշտպաններին գրկել դեկավարությունից, հրաժարվում են այս առաջարկից:

Օտարերկրյա հյուպատոսները բանակցելու պատրվակով քանից ինքնապաշտպանների մոտ գալով, ուսումնասիրում են նրանց դիրքերը և հայտնում թուրքերին, իսկ անգլիական հյուպատոս Ս. Ուշիամը ճշտում է թուրքերի թնդանոթների դիրքը և ուղում հայկական պաշտպանական գծի խոցելի տեղերի վրա: Դեպքերի ականատեսը անգլիական հյուպատոսին այսպես է նկարագրում. «Նա ներքնապես թրքացած լինելով, արտաքին կերպով էլ չէր ուզեցել յետ մնալ կատարեալ թիւրք լինելուց. հագել էր թիւրք ժանտարմի շորեր և գլխին ծածկել թրքական կարմիր ֆես...»¹²⁷:

Արամ Մանուկյանը, որը 1905-ից Վանում էր, հետագալում իր օրագրում նկարագրելով սրան հաջորդած անգլիական հյուպատոսին, գրում է. «Երեկ ծանոթացա անգլիական հյուպատոսին մոտ մարդկանց հետ, շատ տարօ-



Վանեցի մայրը
Երեխայի հետ,
լուսանկարը՝ Ռ. Շանթրի,
1892 թ.:

րինակ կերպով են Ակարագրում առհասարակ եվրոպական ներկայացուցիչներին և մասնավորապես էլ անգլիական հյուպատոսին: Տեսականապես մասամբ հասկանալի է, քաղաքակիրթ Եվրոպայից հոս եկողները մեծ մասամբ հացկատակներ են. Օրանք, որոնք Եվրոպայի կյանքի կովում անընդունակ են հանդիսանում, ճանապարհվում են դեպի Տաճկաստան...

Սա իրեն շրջապատել է ամենակեղտոտ մարդկանցով, հավասարապես իր թե ատում է և հայերին, և թուրքերին, բայց իրականությունն այն է, որ իր տեղեկությունների համար ավելի հավատում է թուրքական, քան հայկական աղյուրներին:

Հայերի մասին նրան զեկուցում տվողը իրեն թուրք շավազներն են և իր շրջանի միակ հայը — յուր սեփական հայ խոհարարը իրև հայ ժողովրդի դատի պաշտպան... անգլիական հյուպատոսի առաջ միշտ ներկայանում է այդ հոչակավոր աշճին: Անձամբ չեմ տեսել, բայց պատմում են, թե ինչ որ կարող է անել մի աշճի, նա անում է, բայց ծիծաղերին այդ չէ, այլ այն, որ փառարանած Անգլիայի ներկայացուցիչը հայերի մասին գաղափար կազմելու համար բավականանում է միայն իր աշճիով, որի տված տեղեկություններին էլ մատների արանքով է նայում:

Պաշտոնական թարգմանը մի տաճկահպատակ խոլացի է, որ աքսուր է Պոլսից հոս. ո՞չ անգլերեն գիտե և ո՞չ հայերեն, հյուպատոսի և թարգմանի միշտ անձը և իր կողմից թարգմանը հանդիսանում է վերոհիշյալ աշճին, որ գիտե անգլերեն և հյուպատոսի ասածները կթարգմանեն թարգմանին և թարգմանին էլ հյուպատոսին:

Իտալացի թարգմանը որևէ բարոյական Ակարագրից գուրկ մարդ է և մասնավորապես պարապում է մաքսանենգությամբ:

Այս հոչակավոր թարգմանը 96-ի կոտորածի ատեն, այն ժամանակվա անգլիական հյուպատոսի հետ միացած փառահեղ կերպով դեկավարում էին տաճկաց զորքերին, ավելի շեշտակի նշան բոնելու դեպի հեղափոխականներին:

Պատմում են ականատեսները, որ դեպքին, երբ տաճիկ գորքերը չեն կարողանում թնդանորով նշան բոնել, անգլիական հյուպատոսը անձամբ մոտենում է, ձևերը սովորեցնում և յուր ձեռքով թնդանորները ուղղում դեպի այն թաղերը և տեսերը, որը հեղափոխականներ կային: Այնպես են պաշտպանում փառարանած անգլիական ներկայացուցիչները հայերին...

Մնացածներն էլ նոյն կարգի մարդիկ են, ոչ մի հասարակական խընդուռով զբաղվելու ոչ խելք ունին, ոչ տրամադրություն: Առհասարակ զբաղվում են քեֆով և եվրոպացի միսիոնարությների հետ ժամանակ անցկացնելով... իսկ եվրոպական արտաքին գործոց նախարարները փառահեղ կերպով վկայում են, թե հյուպատոսների ներկայությունը բարերար ազդեցություն է ունենում տաճիկ կառավարության և ժողովրդի վրա»¹²⁸:

Վաճի հերոսամարտը տևեց ինն օր: Ի վերջո, կոիվը դադարեցնելու պայմաններն ընդունվեցին, ըստ որի քաղաքի պաշտպաններից շորջ հազար հոգի պետք է իրենց զենքով անարգել հեռանային Պարսկաստան, իսկ օսմանյան կառավարությունն էլ չափուի ճշգրիտ Վաճի հայերին: Պաշտպանները խմբերի բաժանվեցին և տարրեր ճանապարհներով փորձեցին հեռանալ Վասպուրականից: Բայց ամենուր նրանց դարանակալել էին թուրքական զորքերն ու քրդական զինախմբերը: Միայն Խանասորի դաշտի ընդհարման ժամանակ հայերից զոհվեց 340, իսկ դարանակալ թշնամոց՝ 1700 հոգի¹²⁹: Ի վերջո, հայերը մեծ կորուսներ տալով, կարողացան անցնել Պարսկաստան: Դեպքերի ժամանակակիցն այսպես է գրում. «Տիուր մի սարսու է պատում մարդու, երբ մտածում է, որ այլևս Վաճ երիտասարդ չի մնաց: Մի քանի ամիս առաջ, Վաճի ամեն կողմերում վիտացող հասուն երիտասարդների հետքերը՝ հազիվ թէ կը նշարուին, որոնց սակաւագիտ ներկայութիւնն անգամ կարծես կառավարութեան աշքին շատ բան երևալով՝ ուղղակի և անուղղակի կերպով նոցա ևս հայածում և ոչ մի միշոց չէ խնայում, որպեսզի նորա էլ թողնեն ու հեռանան հայրենիքց»¹³⁰:

Վաճի պաշտպանների դավադիր սպանության վրեժը լուծվեց հաջորդ տարի՝ 1897-ին: Տարբեր վայրերից ի մի եկած 320 հայ վրիմադրութեար մտանասոր և պատժեցին քրդական մազրիկ ցեղը, որը դավադրարար Բարձակվել էր Վաճից հեռացող ջոկատների վրա:

Վաճից աշխարհազորայինների հեռանալուց հետո թուրքերն ու քրդականները սրի քաշեցին անմեղ ու անպաշտպան մարդկանց, ավելեցին ու այլեցին նրանց տնելոր: Զարդն ու քաղանը մոլեգնում էին Վաճի ողջ գավառում: Այս ամենին հաջորդում են սովոր ու հիվանդությունները: Պետքրուգում հրատարակվող «Արարս» ամսագիրը 1898 թ. գրում է, որ մինչ դեկտեմբեր ամիսը տիֆից և այլ հիվանդություններից «միայն Վաճի մեջ 6 000 անձ են մեռել, մեծ և փոքր...»¹³¹: Ի լրումն այս ամենի, քաղաքն ու գյուղերը լցված էին մի քանի հազար անօքնան ու սովալլուկ որբերով:

Ինչպես 1898 թ. դեկտեմբերին «Արարատ» ամսագիրն է գրում. «Քաղաքի նման գիտերու մեջն ալ սպանուած դիակներն երկար ժամանակ, շաբաթներով, մնացին անթաղ, գիտերու, հրապարակներու կամ տանց մէջը, ճամբաներու ու լեռներու վրայ, ու կեր եղան շուներու, գազաներու և թրոշուներու։ Շաբաթներ յետոյ, միայն, երբ գիտացիք գիտը վերադան, անձանաշելի դիակներ կամ կեր եղած ու կրծուած ուկորներ միայն գտան ու թաղեցին»:¹³² «Արարատի» տպագրած Վասպուրականի կոտորածի տեղեկագրից¹³³ իմանում ենք, որ սպանվել է 1865 վանեցի, այդ թվում Յ քանանա և այլնայլ գործերով քաղաք եկած գյուղացիներ, իսկ գավառներում սպանվել է 5336 մարդ, կին ու երեխա, այդ թվում՝ 33 հոգևորական։ Ինչպես միշտ, Բայ հոգևորականությունը, վանքերն ու եկեղեցիները թուրքերի ու քրդերի հարձակումների գլխավոր թիրախներից են եղել։ «Մահմեդական խուժան իր կատաղութիւնը ամենէն աւելի թափեց հայ վանօրէից, եկեղեցաց, դպրոցաց և մատենադարանաց վրայ։ Ասոնք այսօր առհասարակ աւերակաց կոյտեր դարձած են, մանաւանդ գիտերու և գաւառներու մէջը։ Աղքամարի վանուց դրսի տունն, որ՝ քացի եկեղեցական անօթներէն ու ծանրագին սպասներէն ու սփոռներէն, կը գտնուէր վանուց բոլոր հարստութիւնն, կաղոպտուեցաւ։ Կողոպտուեցան և մեծաւ մասամբ այրեցան Նարեկի, Վարագի, Կարմրաւորի, Ս. Խաչի, Ս. Գրիգոր Լուսավորչի, Մեծոփայ, Անգոյի, Ս. Աստուածածնայ, Սայիտակ վանոց և այլն, մեծ ու փոքր վանօրայք, և վանահարը ու Միարանական անդամք ալ մեծաւ մասամբ սպասնուեցան։

...Նարեկի վանահարը և Բանգուցեալ կաթողիկոսի եղբօրորդի Տ. Եղիշէ վարդապետի գլուխն կտրուելով, շուներու առաջ կը ձգուի, որը զայն կը տանեն մինչ Վրկինեւ քիրոդ գիտն։ ...Իսկ Երեմնորուի վանուց վանահայր Տ. Մարտիրոս քահանայի մարմինը ողջամբ, վառուած թոնրի մէջը հրելով, խորվացին շարաշար։ ...Ս. Գրիգոր Նարեկացիի գերեզմանն ալ խորտակուեցաւ։ Այսօր զորքեր և որիշ թիրդ կամ թիրդ աւարառումներն կը բնին ու կը ծախտեն, կամ շարդել կը տան արծաթեայ և ուկեայ ծանրակշիռ սկիթներ, խաչեր, գաւազնեներ, թագեր, բորվաներ, արծաթապատ կամ ուկեապատ աւետարաններ և այլն։ ...Մահմեդականացեալ ժողովրդեան թին պակաս չէ, քան 30 000 անձ, որոնք այժմ, իր հաշան մահմեդականութեան, գլուխներ մերմակ շորով մի փաթաթած և վրամին հաշոյն մի կապած են։ Գտնուեցան շատ մը հայեր ալ, որը մահմեդականութիւնը ընդունելէ յետոյ, նորէն շը խնայուեցա իրենց՝ սպասնուեցան»¹³⁴։

Փոքրաթիվ հայ ազատամարտիկներից ահ ու դոդի մեջ ցնկնող թուրքական բանակն ու զինյալ քրդերի ումակները համարձակ էին դառնում, երբ հրաման էին ստանում կոտորել անգեն մարդկանց, կանանց ու երեխաների։ Եվ այս «քաջազործությունների» համար նրանց շոալլորեն պարգևատրում էր սոլքանք։ Այս առթիվ 1898-ին «Արարս» գրում է. «Կայսրական քննիչ և Վանի կուսակալութեան փոխանորդ Սաադ-Էղդին փաշան, իր սիրագործութիւնների ապացույնները... Սոլքանի բարձր ուշադրութեան արժանացնելու համար՝ իր վայրագութեանց զոհ և աւերումներին ենթակայ այրուած և փած տների սուած իր լուսանկարները քանից համել տուեաց, որոց մէջ պատկերանում էր ինքը՝ խրխտ և գոհունակ դէմքով։

...Շատ շանցած՝ հեռագրերով կայս. պալատից հաղորդուեց, թէ՝ վեր. Սոլքան ի նկատի ունենալով Սաադ-Էղդին փաշայի մատուցած թանկագին ծառայութիւնները... բարեմանեց ի նշան կայս. գոհունակութեան շնորհել նրան օսմանիկի ակնակուր աւագ պատուանշանը, ինչպես նաև այլ և այլ կարգի շքանշաններ Վանի կոտորածի և երիտասարդների շարդին մէջ փայլող գինուրական սպասներին և Համիդիյէի քորդ ցեղապետներից շատերին»¹³⁵։

Վանի սարասիներից փրկվածների մի մասը գաղթում է և պատառում սք. Էջմիածնում։ Նրանց անձախանձելի վիճակի մասին է պատմում Ռետևյալ քոյքակցությունը. «Մեպո. ամսուան վերջերն է. ս. Էջմիածնայ շըրջապատում տեղ չկայ, որ գաղթականը բռնած չինի, նոյն իսկ ախոռները լիք են այլ դժբաղներով։ Լիք են և Ղազարապատ կոչուած հիւրատունը, որի ամեն մի սենեակում, վերև թէ ներքի, տասը-քան հոգի, աւելի մեծ սենեակներում յիսում-վաքսուն, իսկ բակում, պատշգամիք տակ, բացօնայ սաստիկ մեծ բազմութիւն։ Գիշերուայ ժամի 11-ը է, վանքի դարպանները փակ են, միաբանները հանգիստ քուն են մտած, միայն վեհարամուն է, որ ճրագի լոյս է երկում, այդտեղ, ազգի Պահապան Հրեշտակը (Խրիմյան Հայուիլը— Ս. Վ.) աչքի է անցնում Վանի կոտորածի մասին նոյն օրը ստացած աղեխարշ տեղեկացրեր։ Այդ լոյս ու անդորր գիշերային խաղաղ բնութեան մէջ, յուզիչ ու սիրո կորատող տխուր մեղեդիների ձայներ են լսվում. արագ արագ վանքի բակից մեր քայլերը ուղղում ենք դնախ՝ Ղազարապատ, որի դուռը, բարեբաղդարար, դեռ գոց չէ, Տէ՛ր Աստուած, ի՞նչ տեսարան, սիրտ պէտք է, որ չ'թեկեկայ։ Ղազարապատի բակում, որպես պատերազմի



Կոտորածից յետոյ, խառն ի խուռն թափթափած են միմեանց վերայ, բաց գետնին, մարդ ասուած թշուառ արարածներ, վերև պատշզամբի մեծ սենեակներից մինչում ժողովուած մի քանի տասնեակ կին ու մարդ, մանջ ու աղջիկ, կարծեօք Հորիսիստ մի գաղթական աղջկա, ձեռնէրեցութեամբ, խմբովին, լաց ու կոծով շալկապուած դիրազգաց մեղեդիներ կ մրմնչան, երգեր կ'երգեն, ուր սուլթանի ու անօրէնների վայրագութիւններ կ'պատմուին, մերձաւրների մահերը կողքան, ձայնները արտասուրի կ'փոխուեն, սրտի այդպիսի յուզմունքից կանգ կառնեն, մի երկու երեք վայրեկեանից «Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք Վասպուրական մեր աշխարհ» սրտաշարժ երգ կ'երգեն, որ խմբի մելամաղձային տրամադրութիւնից աւելի և յուզող, աղոյ արտասունքի շիթեր առաջ կ'բերեն: Զարմանալի գուգադիպութիւն, մնշող պատկեր. պատի միս կողմը ազգի Հայրապետը կոտորածի Ըկարագիր ի ձեռին աղի արցունք կ թափէ իր թշուառ հօտին հասած դժբաղդութեան վերայ, իսկ և իսկ այդ միջոցին այստեղ, հայ տնազորկ գաղթականութիւնը կ'երգէ. «Վարդի փոխան քեզ փուշ բերա, ցաներդ դառան բիր հազար»: Այնուին մէկը միւսից սրտաճմլիկ մեղեդիներ էին որ երգվում էին: Սուսկալի տպաւրութիւն բողեց մեզ վերայ և այս երգը, որ առաջ ենք բերում ամրողովին:

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր, երկինքը լի աստղերով,
Եւ լուսինը մեղմ վայրում էր, կաթնանման իր լուսով:
Նա ճայում էր լոյն մնջիկ, իրք մի կոյս դէպի Վան
Նորա աշքին երևում էր, բիր ցաւալի տեսարան:
Նա տեսնում էր անթի քրդեր, առած սուր, թուր, հրացան,
Կոտորում են, կողոպտում են, աներում են անտէր Վան:
Եւ կարծես թէ երկնքիցը, ասում էր այդ լուռ վկան,
Վրայ հասիր հայ ազգաւէր, ձեռից գնաց Հայաստան»¹⁸⁶:

Վանի կոտորածներից հետո աշխուժացան տարբեր դավանանքների քարոզիչները: Նրանք Վանում մնացած վեց հազար որբերից շատերին ընդգրկեցին ամերիկյան, գերմանական և ֆրանսիական որբանոցներում: «Արաքսը» գրում է. «Դոմինիկեան կրօնաւորներն այժմ այնտեղ, ինչպես և ուրիշ կեղրոններում, ազատ ասպարեզ են գտել: Քսան տարիներից ի վեր, այս հայաշատ կեղրոնում հաստատուած այս եզրիսի կրօնաւորները չեն յաջողել և ոչ մի հետևող ունենալ, այսօր այս տագնապանց օրերում, իրենց բաշխած նպաստների շնորհիվ 500—600 տուն հետևողներ են գտել, որոնց նպաստ տրուած է այն պայմանով, որ եթե կրկին մայուննի եկեղեցւոյ գիրկ վերադառնան, ետ վճարեն իրենց ստացած նպաստները: Վանի Այգեստանի Կլոր-դար թաղի բնակիչները ամրողովին կաթոլիկութիւն են ընդունել և նոյն թաղում առանձին մատուր է հիմնուել նոցա համար: Այս ամենի պատճուր, անշուշտ սովու ու կարօտութիւնն է...»¹⁸⁷:

Արամ Մանուկյանը 1905 թ. մարտի 8-ին իր օրագրում միսիոներների կազմակերպած որբանոցներից մեկի մասին գրում է. «Մի գիշեր, բավական վատ եղանակով, կարծեմ Բարիկենդանի օրերից մեկն էր, բեռնավորված հրացաններով և փամփուշներով գնում էինք հետու թաղերից մեկը, հասարակ տեղափոխություն էր, պատահական կերպով անցա ամերիկյան որբանոցի առաջից և հանկարծ լսեցի եվրոպական մի երգի ձայն, զօր երգում էին մի խումբ հավանօրեն կանայք, դաշնամուրի ներդաշնակությամբ. հատկապես տեղու մեխավեցի և մի քանի վայրկյան ականջ էի դնում: Երգի ելեւցները մեջս ծնեցին տխուր, տխուր մտքեր, մտածում էի, որ այս եվրո-

Պիեր Անեն ժորեր:



Կան. Խաղաղ կեսօր:
Կանի փողոցներից մեկը:

պացիները հանուն գթության և մարդասիրության, եկել են մեր Երկիրը ու մեր թշվառության վրա մի բորժուական երջանկություն հիմնել, և դրանով իրենց մարդկայնական պարտականությունը կատարած են համարում, իսկ որքանոցից մի քանի քայլ անդին, հազարավոր գյուղեր ու քաղաքի թաղեր մերկ ու անորի հենեկում են, նրանք էլ թշվառության երգն են մրմնում...: Բայց ինչո՞ւ մեր թշվառությունների վրա եկրոպացիների իրենց համար հիմնած երջանկությունը մենք մարդասիրություն ենք համարում... Մտքերի զուգորդությունը հեռու հեռու տարավ ինձ: Վերջը խորին համոզմունքով բացականչեցի— երանի թե այս ծով դժբախտության վայրում այս մի հատիկ ովասիս էլ չիներ, ովասիս, որ խարուսիկ և օդային է: Կարծես եկրոպական երգի մեղենիները դիտնանս էին համատարած վշտի երգի ալիքների մեջ...»¹³⁸:

1896 թ. ջարդերի ողբերգական արարվածով 19-րդ դարը փակեց իր վարագույրը, իսկ 20-րդ դարը, որ նոր արշալույս պիտի բերեր, արևմտահայերի համար շարունակվող գիշեր եղավ և նոր ողբերգությունների սկիզբը: Բայց այն նշանավորվեց նաև նոր դյուցազնամարտերով: Ժնևում հրատարակվող «Դրոշակ» ամսագրի 1904 թ. հոկտեմբերյան համարի՝ Վանից ուղարկված «Աղթամարի կոփիք» թղթակցությունից իմանում ենք, որ Տարոնից Վասպուրական, այնտեղից էլ երկու նավով Աղթամարի կողի են անցնում Անդրանիկը, Գևորգ Զավուչը, Խշխանը, Սուրանը և նրանց 70 քաջազն ընկերները: Թուրքական հարյուրավոր գինվորներ մի քանի նավերով շրջապատում են կողմին և թնդանոթներով ոմքակոծում: Հայ ազատամարտիկները դիմուկ կրակ են բացում և թուրքերին մեծ կորուստներ պատճում: Երկխամայ ընդհարումից հետո պաշարող նավերը հեռանում են, որպեսզի նոր ուժերով համարվեն: Նրանց վերահարձից հետո կոփիք շարունակվում է առավել կատաղությամբ, բայց ոչ մի թուրք գինվոր այլպես էլ չի համարձակվում կողի ոտք դնել: Մութն ընկնելուց հետո Անդրանիկի մարտիկները փոքր նավակներով հարձակվում են թուրքական նավերի վրա, ապա լողում դեպի հանդիպակաց ափ: Հայ մարտիկները ապաստանում են Վանում, իսկ թուրքերը, վախենալով հետապնդել Անդրանիկի քաշերին, իր բանից անտեղյակ, նրանց հեռանալուց հետո էլ դեռ երկու օր շարունակում են ոմքակոծել Աղթամար կողմին¹³⁹:


Այդ տարիներին Վանը շուրջ հիսունինգ հազարանոց քաղաք էր, իսկ ողջ նահանգում հայ բնակչությունը հասնում էր 220 հազարի:

Բուն քաղաքը կամ ինչպես վանեցիներն էին անվանում «Քաղաքամեջը, Վանի բերդի հարավային կողմում էր՝ հարթության վրա, և զբաղեցնում էր 65 հեկտար տարածություն: Այն ևս ժամանակին պարսպապատված էր և ամրացված, բայց դարակզբին արդեն կիսավեր էր: Պարիսպներն ունեին չորս դարպաս, որոնցից մեկով քաղաքը կապվում էր Վանի նավահանգիստ Ավանցի հետ:

Նշանավոր արևելագետ, լեզվաբան, պրոֆեսոր Պիեր Ամենի Ժորերը, որ նապունն Բոնապարտի առաջադրանքով դիվանագիտական առաքելությունը Պարսկաստանում ավարտելուց հետո 1806 թ. Վան է այցելել, գրել է. «Թեև Վանա լիճը հարմար է նավարկության և հայերը լավատեղյակ են նավաշինության արվեստին, սակայն, տակավին չեն կարողացել ծեռք բերել այնքան հաստատուն նավեր, որոնք կարողանային դիմանալ անհշան փոթորիկներին: ...Այդ փոքրիկ ծովի վրա կար միայն լոթ կամ ութ առագաստանավ, որոնք հազիվ էին քավարարում Բիթլիսի հետ կատարվող առևտինին»¹⁴⁰:

Ավանցը շուրջ 300 տուն ունեցող նավահանգիստ էր, որի բնակիչները հիմնականում նավավարներ ու նավագներ էին: Այնտեղ կար մոտ հարյուր





մերմակաթույր առագաստանավ, որոնցից ամեն մեկը կարող էր տեղափոխել 40—50 մարդ: Կային շատ ավելի մեծ տարրողության նավեր¹⁴¹: Վաճառութեր նաև իր գյուտարարներն ու հմուտ վարպետները: Նրանցից Ալ. Իշխանյանը Վաճառ լճի նավերից մեկի վրա սեփական ուժերով շղթներենա էր սարքել¹⁴²: Դեռևս 19-րդ դարի կեսերին մի խումբ պոլսեցի հարուստ հայեր, մտահոգվելով Վաճառ և հարակից գավառների զարգացմամբ, ածխահանքերը արդյունահանելու և շղթնավերով տեղափոխելու նպատակով Վաճում շղթնավային ընկերություն հիմնելու արտոնագիր են առանում սովորականից:

Քաղաքամեջում էին նահանգային և պետական հիմնարկությունները, քաղաքապետարանը (1908-ից քաղաքագլուխ՝ Ավ. Թերզիքաչյան), Ազգային առաջնորդարանը, Հիսուսյան-Շուշանյան դպրոցը, «Հայրիկյան» և «Ավետիսյան» գրադարան-ընթերցարանները, Ամերիկյան միսիոններության եկեղեցին, դպրոցն ու մանկապարտեզը և, Վերջապես, Վաճառ նշանավոր շուկան: Քաղաքում կար լուս եկեղեցի, որոնցից ս. Նշանը, Պողոս-Պետրոսը, ս. Աստվածածինը, ս. Վարդանը, և Սիրանավորը գործող էին, իսկ ս. Սահմակը և Առաքելոց՝ քաղաքի մյուս շինությունների հետ այրվել ու կիսավեր էին դարձել 1896 թ. ջարդերի ժամանակ:

Արամ Մանուկյանը, որը 1905 թվականից հայ ազատամարտիկների խմբերի հետ գաղտնորդն գործում էր Վաճում և հաճախ էր ստիպված լինում մութ գիշերով կամ վաղ արևածագին տեղափոխություններ կատարել մի թաղից մյուսը, իր օրագրում այնպէս նոգեթով է նկարագրում վաղորդյան լուսության մեջ մեղմորեն տարածվող ժամկոչի երգը և «կոչնակին»՝ այդ եռանկյունի տախտակին հարվածելուց առաջացող զուսպ ձայնը, որը հավատացյալներին աղոթքի էր հրավիրում. «Թուրքիայում քրիստոնեա հավատացյալներին եկեղեցի հրավիրելու համար զանգակ գործ ածելու իրավունք չկար, այլ «կոչնակ» էին զարնում, որի ձայնը թույլ է և մնում է նոյն փողոցի մեջ: Այս ոչինչ տարօրինակն այն էր, որ «կոչնակ» զարնողը ամուր զարկում էր և բոլոր դուները ժողովրդին արթնացնելու, և ժամ հրավիրելու համար:

Խճճ համար ավելի տարօրինակ էր ժամիարի երգը «կոչնակի» մետ: Եվ ի՞նչ անուշ եղում էր ինչ-որ եկեղեցական մենեղի այս գիշերային լուսության մեջ, Այգեստանի ծառախիտ ու մութ փողոցներում, որոնց լուսությանը խանգարում են միմիայն առուների վազող քրքացող ջրերը... Սարդու վրա կրոնական ջերմեռանդություն է իշխում: Երգը երկար վայելելու համար մեր քայլերը դանդաղեցնում ենք: Խեղճ ժամիարը մեզ չի տեսնում և մեր քայլերի ձայնը անկարող է լսել, այնքան զգուշ ենք քայլում»¹⁴³:

Ծովայական հրապարակը քաղաքի ամենաշխատույթ մասն էր: Այստեղ էին կենտրոնացված նաև արթևատանցները: Վաճառ Արևմտյան Հայաստանի վաճառաշահ քաղաքներից էր: Վաճառ առևտրական ընկերությունները ներկայացնուին ունեին Արևելքի երկրներում, Թուրքիայում ու Ռուսաստանի մի շարք քաղաքներում, Մանչեստրում ու Համբուրգում¹⁴⁴: Նրանք վաճառահանում էին վաճեցի վարպետների քաջմաքանակ ու քազմահմուտ արտադրանքը և նոյնիսկ, ինչպես «Մուրճ» ամսագիրն է նշում «Վաճառ փամպիկ սպիտակ կատուներ, որոնք հոչակած ենք»¹⁴⁵:

Վաճեցիների եռանդուն գործունեության մասին այսպիսի զրույց կա: Էջմիածնից մի հոգևորական աշխարհի տարբեր երկրների հայ համայնքներն այցելելիս ամենուր վաճեցիների է հանդիպել: Երբ հասել է Զինաստան, այստեղ մի կադ հայ է տեսել, հարցուել է, թե որտեղացի է, պատասխանել է, թե վաճեցի է: Արտեղից է ժողովրդի մեջ տարածված առած է դարձել, թե «Վաճեցից կադ մինչև Զինաստան է հասեր»¹⁴⁶:

Վաճի անբաժանելի մասն էին արվածանները, որոնք մոտ 15 անգամ գերազացում էին բուն քաղաքին: Ամենարարեկարգն ու հարուստն Այգեստանը էր: Պիեր Ժորերը «շքեղ տաղավարներով» ու պարտեզներով զարդարված արվածանների մասին գրում է. «Ուինչ այնքան հաճախի չէ, որքան քազմաթիվ վտակներով ոռոգված և գեղեցիկ ծառերով հովանավորված այս մրգաստանների տեսքը»¹⁴⁷: Ուսումնասիրողներից մեկի հաշվումներով, միայն քաղաքի այգիներում 70 տեսակի տանձ և 40 տեսակի խնձոր էր աճում:

Թե ինչպես է կյանքը հոսել առուների ու ալգիների այդ քաղաքում, հրաշալի է պատկերում բնիկ վաճեցի Գարեգին Մրվանձյանը. «Վաճառ այգեստանը, որ տեղական բարբառով կ'ըսկի եգեստար, բնույթան և բնակչաց ձեռքով վայելչագեղ զարդարած երանակետ վայրեր են, որը յուրաքանչյուր տունը իրեն կից ունի ծառաստան, այգեստան, բուրաստ և իր դռան առջևի փողոցին երկու եզերքը՝ առուներ ջրալից, որոց ափերը կարգով տնկված են սաղարթախիտ մանրատերն ուղիներ, տեղ տեղ ևս բարդին, կաղամախ, հացնենին, թեղին: Փողոցներու մեջտեղը՝ հասարակաց ընդարձակ ուղին, և ճղազար ծառոց թներն ու տերները այսնալն կողմն իրարու գըրկված, խոնված, սրանչելի հովանոց կը կազմեն անցորդաց. որոց մեջն արևու

Վաճի տառիցներից:

Վաճեցիներ:

Վաճեցի հացըովներ:

Վաճի ամերիկան որբանոցի հուսարություն:

ճառագայթները մանր մանր հողմածփիկ աստղերու նման կը ծագի գետնին վրա, անցնողին կամ նստողին գույխն ու երեսաց վրա ծածանելով, ինչպես խաղաղ գիշերվան մը մեջ յուսն հով ճաճանճները կը փայլեցնե զեփյուռը ծովուն ափանց մոտ եղած նոսր ջրերուն ծոցիկ:

...Ծիշտ այն րոպեին, երբ Վաճա երկուտան եկեղեցյաց կոչմակները որոտալիր կը հնչվին, աքլորն իր թևերը թափ ու ծափ տալով իր «Կուկուկուն» կը կանչն...

...Տուներու մեջնն ընդհանուր շարժման ձայներ և ճշանեներ կ'ելնեն: Մանկիկը արթնցեր կուլա, մեկին մայրը կաթ կուտա, մեկ՝ կ'օրորե դար դար ասելով: Ծոշ մամեն՝ շահմախ և կայծքար իրար կը զարնե, որ կըրակ հանե, ճրագ վառե: Քեն մամեն՝ շապիկ միւել (սպիտակ սպան) հագեր՝ ժամ երթալու: Տանտիկին՝ թոնիրը կպուցեր, կը վառե: Հացթուխը՝ թոնիրի շուրթը նստած՝ հաց կը կողեն, թագեն հացի և գիշերանվի հոտը չորս կողմը բռներ է: Մեկ թաղ՝ հաց կը բաժնեն փողոցնեն անցուղարձին. մեկալ տեղը՝ մատաղ, ուրիշ տեղ մը՝ հարիսա: Դեռ լուս աստղը մեր ցուց տված հորիզոնին վրա կեցած՝ այս ամենը տեղի կ'ունենան:

Տունեն մը ճախարակ մամենու ձայն կուգա, տեղ մը՝ կտավ կը գործեն: Փողոցն շուրը վեր երթացողներ կանցնին...

Ամեն դու մեկ աղջիկ կամ հարս կ'երևան, որոնք ձև ծն ջրշանք (ջրցանք) ըրած են և ներսի բակերը ավելին զկնի՝ եկած են փողոցներն ավլելու. ժամանակ մը, երբ իբրև զարդ երթապեմնեն բերած շիշ ապարանշաներ կը շարեին իրենց բազուկներն ամեն նորահարսներ, մի նոր ներդաշնակություն ալ ասոնց ավել ըրած ժամանակ այն շիշերու շընկընկցեն կը հորիններ: Ամեն առուներու եգերքը լի են արք, կանայք, մանկտիր, որք իրենց երեսները կը լվանան և իրենց անգիր աղոթքներ կը մրմնչեն դեպ աղոթքան դառնալով և խաչակնելով:

Եթե օրն ուսիր է կամ տոռ է, գլխավոր փողոցներու հրապարակները, զոր տեղացիք՝ փողնիգլոխ կ'անվանեն և փողոցը՝ փողան, մեծ լուսով ճրագեր կ'երևին, ուր ճրագուն կը վառեն մագործները և ճիշտ ժամհարի ժամուն կը գենուն պատրաստեն միսերը, որպեսզի թոնիր վառելուն հասնի և մինչև ժամեն ելնելը եփվի:

...Այսպես ընդհանուր շարժում, արթնություն և փառաքանություն կը սփոռ բոլոր մեր աշխարհի արարածոց մեջ Արուայակն լուսաբեր. և ահա արշալուս անոր ետնեն կը սկսի բացվիլ, զոր «աղոթքան» կ'անվանեն տեղացիք: Արշալուսին ամեն տոռն ընկողվանք վերցված են. թոնիրն իշած է վառվելե: Ն գարնան, այս պահուս, Այգեստանյաց փողոցներն եւսէ եսն ձայներ կը լսվին. «Չո՛կ առեք, ձուկ»: Այս ձայները ամեն տարի ապրիի կիսեն մինչև հունիսի կեսը կը շարունակվի. քանզի այն միջոցը միան վանա ծովն, Հայկա լիճն, այս միակ ու համեղ տարեխ ձուկն կ'ընծայէ բնակչաց այնքան առատությամբ, որպես ապրի ամսույն հարավ քամիին հալեցուցած ձյուներուն լեռներն ի վայր ՚ի լիճն հոսող հեղեղները: Չուկ ծախողները կառավարության ստակ կը վճարեն, գրաստով բառնալու բերելու վարձք կը վճարեն, իրենց աշխատանքն ալ վրան դիր, ու կը վաճառեն հինգ ձուկ՝ մեկ փարա և երեմն մինչև տասն ձուկ մեկ փարա: Ամեն տոռնը կը գենեն հազար հազարներ, աղը դնելին զկնի. քանի որ նորը կուգա, կը գենեն, թոնիրն մեջ կը կողեն, կամ կը վազեն տան մեկ ամելունը՝ հավի նոր ածած տաք տաք ձուն կը բերեն ու ածուեն դալար բանջար, կը տապակեն արդար եղով. ժամեն դարձողները ձկան հոտով կը լսանին. փողոցները կը բուրե անուշ հոտով»¹⁴⁸:

Ծուրջ քանամյա համեմատարար խաղաղ ժամանակաշրջանի ընթացքում Վաճը Վերակառուցվեց, կրկին դարձավ Արևմտյան Հայաստանի բարեւն բաղաքներից:

1904 թ. «Մուրճ» ամսագրում տպագրված մի հոդվածից իմանում ենք, որ միայն Կ. Պոլսում աշխատող վաճեցի պանդոխտները տարեկան 80 000 լիրա փող և շուրջ 4—5 հարյուր լիրայի էլ ընտիր ապրանքներ էին առաքում Վաճ, իսկ «Մասիսի» ու «Մշակի» թղթակիցների հաշվումներով վաճեցի պանդոխտները տարեկան վաստակում էին շուրջ մեկ միլիոն լիրա: Կովկասում, Ամերիկայում, Բուլղարիայում աշխատող վաճեցիները էլ տարեկան շուրջ 500 000 լիրա էին տուն ուղարկում: Նաև այս ամռելի հարստության շնորհիկ էր, որ Վաճը ոչ միայն կարճ միջոցում վերականգնվեց, այլև կրկին աշխուժացվ կրթական-մշակութային կյանքը¹⁴⁹: Արոեն 1903-ին Վաճում կար 25 դպրոց, 10-ը՝ հայկական, 8-ը՝ ամերիկական և 9-ը՝ ֆրանսիական, որոնք բոլորն էլ ունեին իրենց գրադարանները, բացի այդ, գործում էր մի քանի հասարակական գրադարան-ընթերցարան, որոնցից ամենամեծը «Ազգատության լույսն» էր՝ ընդարձակ և շքեղ թատերաբանով: Գրադարաններ էին բացվել նաև գավառներում¹⁵⁰:

Վաճի հինգ տպարաններում տարբեր տարիների լույս են տեսել 24 հայերեն թերթեր: Առաջինն «Արծվի Վասպուրական» էր, որ 1858—1874

թվականներին հրատարակվում էր Վարագա վանքում: Ի դեպ, Աղթամարում էլ են հրատարակվել թերթեր՝ «Կոտոշ» և «Կոյիկ» (1908):

1905-ից սկսած Վանում իրար են հաջորդում «Արյան ձայն», «Հայացք», «Նոր սերունդ», «Ալգատ խոսք», «Կայճ», «Կտակ», «Ասուա», «Երկունք», «Զարթիր», «Ծովակ», «Կոչնակ», «Կոհակ», «Հորդանք», «Մայրենի մամուլ», «Շ.Ք.Ը.», «Օազիս», «Աշխատանք», «Կարկուտ», «Լույս», «Վարագ» թերթերը: Ամենաերկարակյացը «Վան-Տոսպն» էր, որը 1911-ին Վանում հիմնվելով, հետագայում տեղափոխվում է Թիֆլիս, իսկ այնուհետև, մինչև 1919-ը լույս է տեսնում Երևանում¹⁵¹:

Առաջ, մշակութային այսպիսի զարթոնքի պայմաններում 1915 թ. քաղաքի գլխին պայթեց նոր արհավիրք, որը պիտի ջնշեր աշխարհի հնագույն քաղաքակրթության օրբաններից մեկը՝ երեքհազարամյա Վանը, և նրա բնակիչների փրկված թեկորները սփոռեր աշխարհով մեկ:

Թուրքերը, ինչպես ողջ Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Վան-Վապուրականի կոտորածները վաղուց էին նախապատրատել: Դեռևս 1911 թ. Վանի թուրքական կայազորը քառապատկվեց՝ 8 գումարտակից հասնելով 82-ի¹⁵²:

Սուածին համաշխարհային պատերազմի հենց սկզբից ուժեղացան հայերի հանդեպ ճնշումները սկսվեց իսկական թալան: Թուրքական բանակի կարիքներն ապահովելու պատրվակով խլվում էր հայերի վերջին ունեցվածքը, հացահատիկի պաշարները, գրաստները, սալերը, կոշիկ, տաք հագուստեղեն: Վասպուրականի հայությունը հասցելու աղքատության: Բայց սարսափելին այն էր, որ գավառներում թափվում էր հայերի արյունը: Թուրքական կանոնավոր բանակն ու քրդական զորախմբերը, փոխանակ ուազմանակատում կովելու, թնդանոթներով զինված ուղարկվում էին հայկական գյուղերի վրա: Խսկ 1915-ի գարնանը ջարդերն ու կոտորածները մոլեգնեցին ողջ Վասպուրականում: Մի շարք գավառներում թուրքերն ու քրդերն ուժեղ հակահարված ստանալով՝ դիմեցին փախուստի, բայց շատ անպաշտպան գյուղեր ավերվեցին, ժողովրդի մի մասը կոտորվեց, փրկվողները ապատանեցին Վանում: Այս նահանգներու տեղ չկար, և վանեցիները որոշեցին պատնեշվել քազմահազարանոց բանակի առաջ. «Ավելի լավ է տասը օր ազատություն և հետո մեռնել, քան մեռնել ստրուկ»— ասում էին նրանք¹⁵³: Վանը պաշարվում է թուրքական ու քրդական տասներկու հազարանոց բանակով: Միինանցից կտրվում են Քաղաքամեջն ու Այգեստանը, որոնց բաժանում էր 5—6 կմ տարածվող թուրքական թաղամասը: Ապրիլի 4-ից հայկական մասերի միջև բոլորովին դադարում է հաղորդակցությունը, բայց Քաղաքամեջի շուրջ երեքհազարանոց հայությունը չի ընկնվում, որոշում է անվեներ կանգնել թշնամու դեմ: Թե թուրքերի համար որքան կարեն էր Քաղաքամեջը, վկայում է այն, որ այստեղ էին գտնվում նահանգապետարանը, քաղաքային ոստիկանատունը, կենտրոնական դատարանը, բանտը, փոստն ու հեռագրատունը, նաև քաղաքապետարանը, երկրագործական, առողջապահական վարչությունը, կառավարության զորանոցներն ու զինապահետները: Ապրիլի 5-ին կազմվում է «Քաղաքամեջի զինվորական մարմինը», որը նախապատրաստվում է մարտերին և զինում ժողովրդին: Քաղաքամեջի հերոսներն ունեն ընդամենը 101 հրացան և 90 մաուզեր, կային նաև 120 որսի հրացաններ ու փոքր ատրճանակներ¹⁵⁴: Եվ այս ուժերով պետք էր դիմագրավել թնդանոթներով զինված քազմամրու թշնամուն: Կազմակերպվում է զինագործարան, որը օրնիբուն փամփուշտ էր պատրաստում, Կարմիր խաչ, որը վիրակապում էր վիրավորներին, բուժում հիվանդներին, հայուայթիչ խմբերն ապահովում էին սննդամթերքը:

Ապրիլի 7-ին թուրքերն ու քրդերն անցնում են ընդհանուր հարձակման Քաղաքամեջի և Այգեստանի վրա: Վասպուրականի նահանգապետ Զեղեթը հոխորդում էր, որ Վանը 24 ժամում կշնչի: Թե որքան կատաղի է եղել առաջին հարձակումը, վկայում է Քաղաքամեջի ինքնապաշտպանության դեկավարներից մեկը՝ Հայկ Կոսոյանը. «Եվ ահա պայթյուն հրացան, մեկ, երկու և բազմահազար... գնդակները սովորեցին, հազիվ քանի մը վայրկյան ու ահա քերդի բարձունքն գոռացին հրանոթները՝ երկուսը քերդի կետրուն, երկուսը՝ Խոռխոռի քարածայնն: Առաջին ժամերը... համատարած կրակ, որու, պայթյուն, Վարագն ու Արտոսը զարգանդի ալիքներով արձագանքնեցին... մինչև Սիփան, մինչև Մասիս և Արտազ...»

...Աչքը և ականջը ամառեկ, կիրածարեկն իրենց դերին մեջ, քանակառությունը լոել էր... Ամկարելի է պատկերացնել առաջին վայրկյանները, երբ երեկ մատղաց հոգիներն, արթեստավոր, աշակերտ, աշխատավոր ու մշակ, հրացայտ զններով՝ խոլական խոյանքով մը դուրս եկան կովի դավադիր թշնամու դեմ¹⁵⁵: Երբ դադարեց ահասարսուն աղմուկը, աշխարհը բռնած ծովան ու փոշին նստեց քաղաքի վրա, թշնամին զարմանքով տեսավ, որ հայոց էպոսի հերոսի նման Վանի պաշտպաններն աներեր կանգնած են



իրենց առաջ: Առաջին մարտի ընթացքում թուրքերը տվեցին 60-ից ավելի զոհ և 80 վիրավոր, իսկ Քաղաքամեջի պաշտպաններից վիրավորվեցին ընդամենը 4—5-ը¹⁵⁶: Թշնամին դեռ չեր հասցեն ուշի գալ, երբ Քաղաքամեջի կորիճները նետվեցին հակահարձակման, գրոհով գրավեցին մի շարք կառավարական շենքեր և հիմնահատակ այրեցին, ոչնչացրին դրանցում դիրքավորված գինվորներին, պայթեցրին գինապահեստները:

Այգեստանի առաջին մարտը նկարագրում է գինվորական մարմնի անդամ Օնիկ Մխիթարյանը: Դժվար չէ նկատել այն զարմանալի նմանությունը, որ կա Քաղաքամեջի և Այգեստանի կողմերի միջև. նոյն ահադոր, աշխարհ թնդացնող հարձակումը, նոյն դյուցազնական հանգստությունը, որ պարուրել էր Վանի մեկ սիրո, մեկ հոգի դարձած հայությանը. «Խորհրդավոր լուությունը կիսզվի հանկարծ և ամեղասատ կայծակի որոտի ուժգնությամբ բոլոր դիրքերու վրա կլսվի ուղղակի դժոխային աղմուկ մը: Անհնար է պատկերացնել այդ դժոխային աղմուկի ամբողջ կատաղությունը: Մարդկային լսելիքն ուղղակի խլության կդատապարտէր և ամեն մարդ անգիտակցորնեն կփակեր իր աշքն ու ականջը՝ այդ ահավոր, մարդկային կյանքին մեջ թերևս մեկ անգամ միայն լսվող շնագալյային վմվծոցին դիմաց: Պահ մը կթվեր, թե այդ բոլորը պարզ մտապատրանք է, թե քիչ առաջվա լուությունն է նորեն, թե սխալ է, ոչ մեկ աղմուկ կա, բայց ահա ծառերու խշրտությը՝ հրացանի գնդակներու տակ, լուսամուտներու ապակիներու անընհատ դդրոցը, կայծակնային փայլը կամ օդին մեջ զիգզագ և ալետատան հրթինները և վերջապես այս արի մարդիկ, որոնք ամբողջ օրն այն-

ԽՆՁՆԱՊԱՇՏՈՎԱՆՆԵՐԻ
ԴԻՔԵՐՈՒՄ:

Կանի պաշտպանները.
Հրուայս հինգ եղբարները
իրենց ընկերներով:

Դիքերում:



քան քաջարար կովեցան և որ ահա այս անդնդային որոտին մեջ դալկացած ջղային անընդհատ կծկումներով...

..Նժոխային աղմուկն ավելի ու ավելի կլատադի դուրսը: Բայց ահա տարօրինակ աղմուկ մը, ծանոթ թ, շատ ծանոթ երգի մը ձայն, կարծես երգված թնդանոթի փողերով.

«Ամենայն տեղ մահը մի է...»:

— Ի՞նչ աղմուկ է:

Ներս կմտնե սուրբանդակը: Մահակ աեյի դիրքի սուրբանդակը...

— Մեր քանդուած դիրքերն արդեն վերաշինած ենք: Տղաները «Մեր հայրենիք» կերգեն ու ձեր քեֆը կհարցնեն:

— Քանի՞ զոհ ունիք:

— Ոչ մեկ զոհ»¹⁸⁷:

Վաճի հերոսամարտի ընթացքում քաղաքի վրա նետվել է 16 հազար արկ:

Ինչպես Քաղաքամեծում, Ալգեստանում էլ ապրիլի 5-ին, տարրեր կուսակցությունների համախմբումով ստեղծվեց «Վաճի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին»: Թեև թիշ զենք կար, բայց այգեստանցիներն անդրդվելի էին: Թշնամու տասներկուինակարանոց բանակի առաջ բունցքվեցին ընդամենը մի քանի հարյուր աշխարհազորայիններ: Հետագայում, թուրքերից խլված զենքի և գալվառներից եկած զինյալների շնորհիվ

Հայքայրիչ խումբ
սնունդ է հասցնում
դիրքերը:

Զինագործները
փամփուշտներ են
պատրաստում:

Հայ կամավորական գունդը
մտնում է Կան:

Հայ կամավորների
հեծելազաշտը
Կանում:

Արանց թիվը հասավ 1054-ի (505 հրացան և 549 մաուզեր) և մի 40 հոգի էլ թիկնապահներ ու շտարականներ¹⁵⁸:

Թշնամուն դիմագրավելու նպատակով խիստ կարգապահություն էր մտցված: Ստեղծվել էր «Ուտիկանակամ վարչություն» իր 50-ի չափ օրինապահ ուժերով, դատարանով ու բանտով, «Հայթայթիչ» և «Նպաստից» հանձնաժողովներ, որոնք օգնում էին սովորական ու գաղթականներին, «Հայկական Կարմիր խաչն» ուներ իր հիվանդանոցը, բժիշկներն ու հիվանդապահները, դեղագործները, «Ամրաշեն խումբը» ուներ մոտ 500 բանվոր, որոնք վերականգնում էին քանդված դիրքերը, փորում նորերը, թումելներ բացում: Այս խմբի մեջ էին քանքանները, որոնք թշնամու դիրքերի տակ ստորերկրյա անցրեր էին փորում և «Հրձիգների խմբին» հնարավորություն տալիս այրելու համ պայթեցնելու դրանք: Խճանես վկայում են հերոսամարտի մասնակիցները, «Ամրաշեն խմբի» անդամները միշտ գտնվելով առաջապահ դիրքերում, համարյա նույնքան զոհեր են տվել, որքան կովողները: Զինագործարանը պրոֆեսոր Միքայել Մինասյանի ղեկավարությամբ պատրաստում էր անծով և ծխավոր վառող, փամփուշտներ: Վանի զինագործների գլուխգործոցը Բուլղարացի Գրիգորի պատրաստած թնդանոթն էր: Մարտերի ընթացքը լուսաբանում էր «Աշխատանք» թերթը¹⁵⁹:

Կանի հերոսամարտի մասնակիցներից Ա. Փոխարյանն այդ օրերի մասին խորհրդածում է. «Ովքեր չեն տեսել Այգեստանը, Վանի այդ ընդարձակ քաղաքամասը և չեն եղել այնտեղ Ապրիլյան օրերին, չեն կարող պատկերացնել, թե բաց դաշտում փոված, անպատ ու անպարհապ, պտղատու և անպտու ծառերի այդ արթեստական անտառն ու այդ անտառում կորած հո-





Շուսական բանակի հայ և ռուս սպասները գեներալ Նիկոլասի և Արամի հետ:

ղակերտ ու փայտաշեն տմերը, համկարծ ի՞նչ հրաշքով միշճաբերդի վերած վեցին: Այդ հրաշքի բացատրությունը պիտի փնտրել առաջին՝ այդտեղ բնակվող հայ ժողովրդի դիմադրական անձնագիրը ոգու մեջ, և երկրորդ՝ կար և այն բացառիկ հաճագամանքը, որ այդ ընդարձակ տարածության վրա բնակվող 20 000 հայությունն անխառն էր, հոծ ու միատարր, շիազված հայ ծայրամասերը: Գուցե Արևմտյան Հայաստանի մեջ չեր գտնվի մի երկրորդ անկյուն, որ այդքան հոծ հայություն քով-քովի խմբված լիներ:

...Այս հոծ ժողովուրդը, որ անքակտելի սիրով կապված էր իր հայրենական ու պատեմական կալվածքին և դարերի ընթացքին թույլ չեր տվել ոչ մի թուրք ընտանիքի թափանցել իր սրբազն օջախը, միակամ ու միասիրու ուրքի կանգնեց և Այգեստանը դադրեց հայկական անառիկ մի միջնարդերը¹⁶⁰:

Կանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը՝ Ակարիշ Փանոս Թերլեմեզյանը, իր հուշերում գրում է, որ վանեցիները «կկովեն եղութեանը ատրճանակներով, որսի հրացաններով և կդիմադրեն Կրուպի թընդանոթներուն, որովհետև հավատքն իրանց կուրծքերն ըրոնքն պատմեշներ կերտեց: Շորս-հինգ տարեկան երեխաներ տեսա, որոնք գետին փշկորելով թշնամին գննակները կհանեին հողերուն մեջն ու մեզի կրերեին»¹⁶¹: Պահպանվել են ականատեսների հիացական նկարագրությունները, թե ինչպես 10—15 տարեկան դպրոցահասակ տղաները, շուրջ 50 հոգի, նետպում էին փողոցներում ընկառող թշնամու արկերի վրա, վայրկենապես դուրս քաշում պատրույցները, վնասազերծում և նրանց մեջ եղած վառողը հանձնում զինագործներին¹⁶²: Դպրոցականներից կազմված «Խանֆատ» փողային նվազախոսքը թեծ կովի ժամանակ ազգային երգեր էր հնչեցնում և ոգևորում Վանի հերոսներին: Վանի երեխաները նաև շտարի և դիրքերի միջև սուրբանդակների դեր էին խաղում: Ծորի կտորտամբները նավողվ թրջելով, նրանք գաղտագողի մոտենում էին թուրք զինվորների գրաված տներին և այդ լաթերը այրելով՝ ստիպում էին դիրքավորված զինվորներին փախչել հրդեհին տներից և հայ մարտիկների ձեռքն ընկնել:

Վանի նավահանգստի՝ Ավանցի բնակիշ Խ. Բարանյանը, որին թուրքերն ստիպել էին իրենց փոխադրել մյուս ափը, լճում թուրք զինվորների մետ խորտակեց իր զույգ նավերը և իր նավաստինների մետ լողալով Ավանց վերադարձավ¹⁶³: Այսպիսի հերոսներ էին Վանի բոլոր պաշտպանները, որոնցից շատերին քաշության համար «Զինվորական մարմինը» շնորհեց «Պատվո խաչ» շքանշան:

Թուրքական բանակը չկարողանալով ընկնել Վանի հերոսներին, օգնության է կանչում քրդական պալատականիմբերին, որոնց Զնիեթը խոստանում է ընծայել ողջ ավարը: Հայերի արյամբ թաթախված հարստություն ձեռք բերելու գայթակղիշ հույսով Վանի վրա են հարձակվում նոյնիսկ Բիթլիսի քրդերը, որոնց քաշություն հաղորդելու համար համոզել էին, թե հայերի գնդակները չեն կարող խոցել իսկական հավատացյալ մահմեդականներին: Բայց այդ 500 ավարառուներն առաջին խկ մարտում 44 հայերի ուժեղ դիմադրությանը հանդիպելով, չախչախվում են և գլխապատճ փախչում¹⁶⁴:

Վանում անհաջողության մատնվելով, Զնիեթն իր կատաղությունը թա-

փում է շրջակա գյուղերի հայ կանանց ու երեխանների վրա: Եվ մարտի դաշտում վախկոտ թուրքերն անասելի համարձակ են դառնում կանանց ու երեխաններին կոտորելիս: Տերքեզ Ահմեդի գլխավորած այս դամբճները գյուղերում այնպիսի արյան խրախնաճք սարքեցին, որ, ինչպես գրում է ժամանակակիցներից մեկը, «Յովեհսկ քրուրը զարհուրեցին՝ այդ դիվային բարբարոսությունները տեսնելով»¹⁶⁵: Այս Տերքեզ Ահմեդն էր, որ շորջ մեկ ամիս անց, վայրագորեն սպանեց Զոհրապին, Վարդգեսին, Տաղավարյանին և այլոց:

Հայերի հանդեպ թուրքերի ճիշաղությունների մասին կարդախի շատերն այն տպավորությունն են ստանում, թե դրանց կատարողները ևս ճիշաղի արտաքին են ունեցել, և եթե թուրքերը կրթվեին, ապա բարբարոսությունն էլ նրանց միջից կվերանար: Այս պատկերացումը մասամբ է ճիշտ: Նրականում, ինչպես հայոց եղենը կազմակերպող երիտրուրքերի դեկավարներից, այնպես էլ բուն նահանգներում դրանք իրագործողներից շատերը բարձրագույն կրթություն էին ստացել Եվրոպայի լավագույն համալսարաններում: Նրանք հատկապես հոգ էին տանում իրենց արտաքինին, հազ ու կապին, բայց հոգին միշտ մնում էր նոյնը: Այս առիթով արժե ներկայացնել թուրքական բանակի գերմանական խորհրդատու Ռաֆայել Նոդալեսի հուշերից մի հատված: «Նահանգապետը (Զենեթը) նստած էր իմ դիմաց երեկոյան լավ զգեստով, սպիտակ փողկապով և ծաղիկը կոճկանցքի մեջ... կապիտան Ռաշիդ բելը իմ ձախ կողմում էր՝ անթերի համազգեստով... նրան այնտեղ տեսնելով նրբին և բարեկիրթ, ես ինչպես կարող էի պատկերացնել, որ այդ նորագեղորեն մանիկուր արված և գոհարազարդ ձեռքերը կարող էին թրջված լինել մեծ քանակությամբ անմեռ զոհերի արյունով: Զենեթը կոչվող (Տերքեզ) Ահմեդ բելը... նստած էր իմ աջ կողմում, հագել էր լավ տվիդից կարված հագուստ: Նա կատարելապես տիրապետում էր մի քանի լեզուների, անդամ էր Կոստանդնուպոլիսի որոշ լավագույն ակումբների և շատ տարիներ էր անցկացրել Լոնդոնում: Իր արհատուկրատական շարժումներ և իր, ավելի ճիշտ, փայլուն արտահայտչականությամբ, նրան կարելի էր մի պճամոլի տեղ դնել, որը Հայդ Պարկի ծառուղու երկարությամբ կառք էր քշում»¹⁶⁶:

Ահա, այս մանիկուրած ձեռքերով պճամոլներն էին Վան-Վասպուրականի կոտորածների դեկավարները:

Վերջապես, շորջ մեկամյա դյուցանամարտն ավարտվեց հայերի հաղթանակով: Մայիսի 3-ին գոռող և արյունաբրու Զենեթն իր հրոսակների մնացորդներն առաջ՝ փախավ Վանից: Հաղթանակը կատարյալ էր: Այս մեկ անգամ ևս ապացուեց, որ երբ ժողովուրդն է կովի ելնում, նրան անհնար է հաղթել: Հայկ Կոսոյանի վկայությամբ, շորջ մեկամյա պաշարման մեջ թշնամու դեմ կովող ու ակնդետ Ալգեստանին հետևող Քաղաքամեջի համար մայիսի 4-ի առավոտն այսպես բացվեց. «Արեգակի գունդը Աստղկան կատարեն ճիզ կրներ դուրս թոշիլ. համատարած ևն ծովիսը ծառացած կմնար ողջ Ալգեստանի վրա, կարծես խճնկած ծառ-ճյուղի մեջ չեր կարող բարձրանալ: Հեռու հարավային դաշտերով կիմախչեին հետ մնացած թուրքերը, ճիավոր, հետևակ: Արևմուտքն Ծովակը կծփար: Իր մակերեսին լողացող հինգ հավերը՝ փախստական թուրքերով բեռնավորված, ճերմակ առագաստով խոլու կտային: Խոկ մենք բերդի արևելյան մասը գրաված, հմայված մնացել էինք»¹⁶⁷: Այդ օրը, մայիսի 4-ին առաջին անգամ հանդիպում են Քաղաքամեջի ու Ալգեստանի հերոսները:

Հաղթանակից երկու օր անց, մայիսի 5-ի երեկոյան Վան մտավ հայկական կամավորական հեծելազորը: Միայն հաջորդ օրը տեղ հասան ոուսական գորքերը, որոնց մեջ էլ մեծաթիվ էին հայերը: Սրբեն մայիսի 7-ին Վանի հերոսամարտի դեկավարներից Արամ Մանուկյանը նշանակվեց Վասպուրականի ժամանակավոր նահանգապետ:

Հաջորդ օրն իսկ նա կոչ արեց վասպուրականցիներին՝ համախմբվել նոր կառավարության շորջ. «Այսօր արդեն կազմակերպվեցան ուազմական, դաշտական, գիղատնատեսական, գաղթականական, քաղաքապետական և այլ վարչութիւններ: Ասով կյայտարարեւ ամբողջ ժողովոդին, որ նոր կոսպարութիւն կազմակերպած զլալով, անհրաժեշտ է բոլոր նոր գործերու համար դիմել նոր կառավարութեան յանձնախմբին, քաղաքի և շրջակայքի մեջ բնական վիճակ ստեղծելու համար: Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մեջ ժողովուրդը միայն մեկ նշանաբար պիտի ունենայ՝ համախմբի ամբողջ եռանդով կառավարութեան շորջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի և շրջանի մեջ, արժանի լինելու քառորդ դարեւ աւելի մղած պայքարի մեջ ընկած հերոսներու յոյսերուն և յիշատակին»¹⁶⁸:

Կարճ ժամանակում նորաստեղծ կառավարությունը շատ բան է անում, բայց առանց օգնության դժվար էր կերակրել ու դարմանել Վասպուրականի ավերված գյուղերի հազարավոր բնակիչներին, որոնցից շատերը ապա-

տանել էին Վանում: Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին մայիսի 26-ին գրած նամակում Արամ Մանուկյանը ներկայացնում է ստեղծված ծանր կացությունը և կովկասահայությունից օգնություն ակնկալում. «Ամբողջ գիղերը արուած և հրկիզուած, ոչխար, եզ, տուն, երկրագործական գործիքներ՝ թալանուած: Երկամսեայ դէպքերու շնորհիվ հոս-հոն փակուած կամ լեռներու վրայ խոսով կերակրուելուն պատճառով սոսկալի հիւանդութիւններով բրոնուած (տիֆ, և մանաւանդ դիզանթէրի), երեխաններու սոսկալի և մեծաքանակ մահացում, գիղական աշխատանքներու վերսկսման և գիղերու վերաշնուրեան անկարելիութիւն, որովհետև լեռներն ապաստանած քիրտերը դեռ հանգիստ չեն տար հայ գիղացիններուն իրենց գիղերը տեղաւորուելու և վերաշնելու: ...Եթէ անմիջական դրամական օգնութիւն շիասնի Կովկասէն, այն ինչ որ չկոցավ ընեն թիրքի յաթաղանը, պիտի ընէ անհիշանութիւնը և մանաւանդ տարափոխիկ հիւանդութիւնը»¹⁶⁹: Թուրքն ու քուրդը, սովոր ու համաճարակները բավական չէին, ուստի զինվորներն էլ իրենց ներթին էին թալանում հայկական կիսաքաղց գյուղերը, խում այն ամենը, ինչ չէին տարել քուրք ու քուրդ հրոսակները: Նոյն նամակով Արամ Մանուկյանը կաթողիկոսի միջնորդությունն է խնդրում. «Այս բոլորի հետ պիտի խնդրէի Ձեզմէ, վեհափառ տէր, որ դիմէք ուր որ հարկն է, որպէսզի վերջ տրուի պաշտոնապէս և անպաշտոն կերպով այս կամ այն կողակի ձեռքով հայ գիղերու կողոպտման և զինաթափման գործին: Ցանախ ուղղակի կը մտնին գիղեր, ամրող հացը, տաւարը, ոչխարը, մալ կը քշեն կը տանին... Այս շարժումը աղետներու պատճառ կը դառնայ: Շուտափոյթ կերպով առաջն առնելու ջանքեր չպիտի խնայել: Նոյնիսկ չեն խնայեր վանքերու տաւարները: Անցեալ օրը քշեցին տարան Վարագ վանքի նախիրը, քաղաքի քի տակ»¹⁷⁰: Ըստամենը մեկ-երկու օրում կազմակերպվեց կառավարություն, որի հիմքը դրվել էր ներոսամարտի օրերին: Ստեղծվեցին նահանգային վարչություն, նաև տնտեսական, քաղաքական, կրթական, երկրագործական, առողջապահական, առևտրական, ուսիւկանական և դատական մարմիններ: Միայն Վանի քաղաքապետարանն ուներ 60 հետևակ և 12 հեծյալ ոստիկան¹⁷¹:

Վանի քաղաքապետարանն իսկույն ձեռնամուխ եղավ ավերված քաղաքի վերականգնմանը: Ըստ երկրաշախներից մեկի զեկուցագրի, միայն մեկ շաբաթվա ընթացքում Վանում «նորոգված է 420 մ երկարության և 8 մ լայնության... ճանապարհը... Յ քանդված կամուրջներ, լցված են փոսերը: Նորոգված են նաև Թերզիբաշյանի տնից մինչև Մարաջանի տան ճամփան ու կամուրջը, Խաչ փողոցից դեպի Արարը տանող 2 կամուրջները... Զրադացանների փողոցի անկյան կամուրջը շինված է»¹⁷²: Շատ կարճ ժամանակամիջոցում նահանգային վարչության ու քաղաքապետարանի ջանքերով կրկին աշխուժանում է քաղաքի կյանքը, սկսում են աշխատել արհեստանոցները, խանութները, շոկան, փուրը և այլն:

Ինկ ինչպիսին էր վիճակը գավառներում: Յոհաննես Լեփսիուսն իր «Գերմանիան և Հայաստանը 1914—1918 թթ.» գրքում վկայում է, որ թուրքերն ու քրդերը գավառներում «կոտորեցին տղամարդկանց, կանանց և երեխաներին, այրեցին նրանց սեփական հայրենին օշախները: Փոքր երեխաններին սպանեցին իրենց մայրերի գրկում, իսկ մնացածներին խեղդեցին ահազոր ձևով, ծեծեցին կանանց, զրկեցին հագուստից: Հայկական գյուղերը նախապատրաստված չէին հարձակման, ժողովրդի մի մասը դիմադրում էր մինչև ոսպմաթերի սպառումը»¹⁷³:

Ինքնապաշտպանական կովի ելան Արճակը, Թիմարը, Հայոց Զորը, Շատախը, միուները: Ինչպես Վանում, գավառներում էլ թուրքերն ու քրդերը ապրիլի 4-ին համընդհանուր հարձակման անցան: Եթե որոշ գավառներում հայերը զենք ու զինամթերքի պակասի պատճառով շատ կորուստներ տալով, մարտերով նահանջեցին Վան՝ իրենց հետ տանելով անպաշտպան գյուղերի ժողովուին, ապա շատ վայրերում թշնամին այդպես էլ շկարողացավ առաջանալ և ամեն անգամ աղմկու հարձակումից հետո ստիպված եղավ խայտառակ փախուստի դիմել: Այս կոփեները նոյն ոյուցազնապատուի տարրեր ճյուղերն են, և դրանցից ամեն մեկն արժանի է հիացումի: Երբ Վանում վաղուց էին լոել համազարերը, գավառներում դեռևս շարունակում էին մարտերը. Փեսանդաշտում կոփել տնեց մինչև մայիսի 10-ը, Շատախի կենտրոնը՝ Արծվարոյն թաղը կովեց մինչև մայիսի 11-ը, այսինքն մոտ 40 օր, և անհաղթ մնաց: Այս ներոսամարտի դեկավար Սամվել Մեսրոպյանը հաղթանակի օրն այսպես է նկարագրում. «38 օրից ավելի ընդհատված եկեղեցու զանգերը ղողանչեցին, երկա՞ր խոլական, սար ու ձոր, լեռ ու քար արձագանքեցին: Բարձունքներում անվերջ ուսանեեր, ցածում ցնծություն, իսկ թշնամու կողմից թնդանոթի համազարկեր: ...Եկեղեցում լցված ժողովուրդը, ծունկի եկած մեր զենքի հաջողության և հաղթանակի համար կաղոթեր... Քուրդերն իրենց ունեցածներով հեռու լանջերով կփախ-



չեին»¹⁷⁴: Երբ հայ կամավորական գնդերն ու Վանի հերոսները գավառներին օգնության հասան, թշնամին արդեն ջախչախված ճողոպրում էր:

Գավառներում ևս ստեղծվեցին տեղական իշխանություններ, և կյանքը հունի մեջ մտավ: Գյուղեր վերադարձողներին թուրքերի ու քրդերի հարձակումներից պաշտպանելու նպատակով ստեղծվում են զինյալ ջոկատներ, իսկ գյուղատնտեսական աշխատանքներին օգնելու համար բաժանվում է հազար գերանդի, այլ գործիքներ: Վանի հայ կանանց բարեգործական ընկերությանը կից ստեղծվում է որբախնամ մարմին, որը գավառներում հավաքում է որբերին և բերում Վանի որբանոց:

Կարճ ժամանակում Վան-Վասպորտականի հայությունը ուրիշ կանգնեց, բայց, ցավոք, հայերի ինքնավարությունը ընդամենը 70 օր տևեց: Մուսական կայսրության շահերին անհարիք էր Արևմտյան Հայաստանի ազատագրումն ու անկախության վերականգնումը, և ոուսական բանակն անակընկալ ետ տանելով՝ թուրքերին հնարավորություն տրվեց ուժերը հավաքել և հակահարձակման անցնելով բնաջնջել դեռևս մնացած հայությանը: «Հայաստան առանց հայերի» կարգախոսը գործում էր անգութ համառությամբ: Արամի կառավարությունը և հայկական կամավորական գնդերի հրամանատարությունը դիմեց ուազմաճակատի դեկավարությանը, որպեսզի թույլ տրվի մնալ Վանում և պաշտպանել ժողովրդին, բայց մերժում ստացավ:

Ետք քաշվող ոուսական բանակի հետ գաղթեց նաև Վասպորտականի հայությունը, դատարկվեց մեր ժողովրդի հինգհազարամյա բնօրրանը: Թուրքերը մտան անպաշտպան քաղաքը:

Շուտով ոուսական բանակը վերադարձավ, բայց Վանն արդեն «ուրվա-

Անմարդաբնակ քաղաքի
կույր պատուհանները:

Վանից մնացած
ավերակների կուտ:



Կանենի քաղաք» էր: 18-ամյա Եղիշե Չարենցը, որ հայ կամավորների մետ Վան էր մտել, իր «Դաճթեական առասպել» պոեմում քաղաքը նկարագրում է սահմուկեցուցիչ պատկերներով.

Մեռած քաղաքում ոչ մի մարդ չկար:
Եվ ամայացած շենքերը ավեր,
Մութ, մահատեսիլ, կույրերի նման
Փորած աշքերով նայում էին վեր:
...Եվ մեռելների շուրջպարն էր թոշում
Լուսնահար, խելառ, տխուր, արճաներկ...

Ծուտով իրենց ավերված հայրենիքն են վերադառնում գաղթականներից շատերը. Վանն ու գյուղերը սկսում են կենդանանալ: Դանդաղորեն վերականգնվում են ավերակները, կյանքով լցվում, Վասպուրականի սարերից ու ձորերից հավաքվում են հայ որբուկները, որոնց համար Վանում որբանց է ստեղծվում, բացվում են բուժարաններ, թեյարաններ ու խանութներ, պետական հիմնարկություններ, աշխատանքի են անցնում արհեստավորները, ջրաղացները ցորեն են աղում, լեռներում հնչում է հայ շինականի խրիստ ձայնը, առագաստանավերը ակոսում են կապտակորհակ Վանա լիճը, ձկնորսներն ուղանեներն են նորոգում, հարսանիք ու ծնունդ, մասի ու թաղում հաջորդում են իրար: Վան-Վասպուրականում ժողովվում է շուրջ 30 հազար հայություն՝ հավատալով, որ էլ երբեք այն չի լրելու: Թուրքերն ու քրդերը փախել, աներևութացել էին: Ռուսական զորքն ու հայկական կամավորական գնդերն ամուր պահում էին Վասպուրական աշխարհի սահմանները: Օրեցօր վերադառնում էին հայերի նոր խմբեր: Թուրքերը տարրեր ու ուզմանակատներում ջախչախվելով, անվերջ նահանջում էին: Հաղթանակը մոտ էր, ևս մի քիչ և ողջ Արևմտյան Հայաստանը կազատագրվեր. կիրականանար դարավոր երազանքը, որի համար անկուր տառապանքներ կրեց հայ ժողովուրդը:

Բայց 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումն ամենայն ինչ իրար խառնեց, աշխատիր շոտ եկավ: Ռուսական բանակները ետ կանչվեցին:

Մինչ ռուսական բանակում ծառայող ավելի քան 200 հազար հայ զինվորները գերմանական ու ուզմանակատներից կվերադառնային հայրենիք, հայկական կամավորական գնդերը պիտի պաշտպանեին հազարավոր կիլոմետրեր ձգվող նոր սահմանագիծը:

Այս խառնաշփորթից օգտվելով, թուրքերը մեկը մյուսի հետևից նորանոր քաղաքներ գրավելով՝ առաջ էին շարժվում: Նրանց ձեռքն ընկան ու ազմամթերքի ու պարենի անհաշիկ պահեստները: Կոտորվեցին տասնյակ հազարավոր հայեր, որոնք վերադարձել էին իրենց հող ու ջրին: Սկսվում էր ռուս-թուրքական սիրախաղը, որը ողբերգական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար:

Ռուսական զորքերի հեռանալուց հետո ստեղծվեց տեղական կառավարություն՝ «Վասպուրականի իշխանություն»¹⁷⁵, որի նախագահ ու արտաքին հարաբերությունների վարիչ ընտրվեց Կոստի Համբարձումյանը: Կառավարության մեջ մտան 1915 թ. հերոսամարտերի հերոսներից ու դեկավորներից մի քանիք: Ստեղծվեցին Ներքին (Բոլղարացի Գրիգոր), Եղանական

Վասեցի որբեր:

Գաղթի ծանապարհին հավաքված վիրավոր որբեր:

(Սամվել Մեսրոպյան), Առողջապահական (թ. Ն. Տեր-Թովմասյան), Խնամատարության (Զավեն Կորկուտյան) և Գյուղատնտեսական (Արմենակ Մաքաբեյյան) գործոց բաժիններ, որոնք եռուն գործունեություն ծավալեցին 39 հազար 300 քառ. կմ հակայական համանգի հայ բնակչությանը պաշտպանելու, քաղաքական-տնտեսական կյանքը կարգավորելու ուղղությամբ: 20—35 տարեկանների գորահավաքի միջոցով կազմվեց երկու գունդ՝ ամեն մեկը հազարական զինվորով, որոնցից երկու հարյուրը՝ հեծյալ: Վասպորականի իշխանության նորակազմ բանակն իսկովն մեկնեց երկու սահմանները պաշտպանելու: Սպանների պակասի պատճառով Վանում կազմվեց «Սպայից դպրոց»: Փորձված սպանները շուրջ 30 զինվորների շորս ամիս ուղղագիտություն ուսուցանելով՝ բանակն ապահովեցին հրամանատարներով:

Ստեղծվեց ոստիկանություն: Ոստիկաններն ունեին իրենց տարրերաշահները՝ թերին կրում էին «Վասպորականի իշխանության» սկզբանական ները՝ «ՎՌ»:

Տնտեսական կյանքը կարգավորելու համար ցուցակագրվեցին համագի ողջ ունեցվածքը, ուտեստելեմի պաշարները: Պարսկաստանից բերվեցին հացարատիկ, այլ մթերքներ, կենաչափներ: Այգեստանում և գավառներում կառուցվեցին պահեստներ, որոնցում ամբարվեցին ցորենը, ալյուրը, շաքարը, նաև խոտն ու հարյուրը: Ընդունված մի քարք օրենքներով ու հրամաններով կարգավորվեց համանգի ներքին կյանքը, Վասպորականի իշխանությունը սկսեց թողարկել սեփական դրամ՝ մեկից մինչև հիսուն ութիւնի արժողությամբ. դրանք կոչվում էին «Փոխգիր ներքին գործածության համար»:

Նախանգի տարածքում դեռևս մնացած մի քանի թուրքական զորախըմքներին դուրս քշելու նպատակով նույնիսկ ծովային համարձակ ուղմներթ կազմակերպվեց: Երկու նավերով և ցամաքից ուղեկցող ձիավորների խըմքով հարձակվելով Արծկեի թուրքական զորանցի վրա՝ փետրվարի 13-ին գրավվեց Արծկեն: Հաջորդ օրը Խալաթի թուրքական զորաբանի հետ ընդհարվելուց, նավերից թնդանորներով ոմբակոծելուց հետո, հայ զորայինները վերադարձան Վան:

Բայց ուղմանակատից օրեցօր տխուր լուրեր էին հասնում: 1918 թ. փետրվարի 28-ին, հայկական զորքերն աներելի անփութությամբ Կարինը թողին թուրքերին: Կարնո անկումը հարուցեց Վանի ժողովրդի զարմանքն ու զայրությունը: Վասպորականի վիճակն առավել անտանելի դարձավ, երբ նոյն թվականի մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում ստորագրված պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային ընծայեց Կարսն ու Արդարանը: Մազմանակատի գիծը թեռանում էր, թուրքերի օղակը սեղմվում, և Վասպորականը պաշարման վտանգի մեջ էր ընկնում: Մեն-մենակ մնացած Վասպորականի իշխանությունն օգնության հոյս չուներ, միակ աջակցությունը, որ կարողացավ Երևանի ազգային խորհուրդը տալ՝ 80 հեծյալներն էին և 80 հազար շնչին գումարը: Արևելյան Հայաստանը ևս կենաց-մահու կովի էր պատրաստվում, և ընդհանունը մեկ-երկու ամսից թուրքական բանակները պիտի հայտնվեին Երևանի մատուցմերում:

Երբ Վասպորականում գտնվող հայկական 5-րդ գնդի 400 զինվորները ևս մարտին վերադարձան տուն, այլևս ոչ մի հույս չմնաց: Եվ Վասպորականի իշխանությունը, 1918 թ. մարտի 28-ին (հ. տ.) որոշեց ժողովրդին զայթեցնել: Շուրջ 30 հազար ժողովուրդն անվերջ, անդադար մարտերով, դեռ ձյունապատ լեռներով ու ձորերով, քայլ առ քայլ դուրս էր գալիս շրջապատումից: Բայց դեպի հյուսիս ճանապարհ փակ էր: Որոշվում է անցնել Ուրմիա, որ նրանց են միանում Սալմաստի հայերն ու ասորիները: Անդրածիկը ցանկանալով օգնության հասնել հայերին ու ասորիներին, հունիսին իր փոքրաթիվ ուժերով համարձակ ուղմներթ է ձեռնարկում դեպի Սալմաստ, բայց Խոյում թուրքական 4-րդ բանակին հանդիպելով, մի քանի մարտերից հետո ստիպված է լինում վերադառնալ¹⁷⁶: Հուլիսին շուրջ 20 հազար ժողովուրդը, օր ու գիշեր կովելով՝ թեռանում է նաև Ուրմիայից: Մարտերից մեկում զոհվում են Վասպորականի իշխանության հախագամ Կոստի Համբարձումյանն ու Հովհաննես Թումանյանի ամագ ողոյին Արտավագը: Կորչում են նաև Վասպորականի իշխանության կարևորագույն փաստաթյուրը, որոնք հնարավորություն կտային գրելու այլ հերոսական ու ողբերգական իշխանության պատմությունն ու պաշարումից նուա դյուցազնական ժողովրդի ճնշեքումը: Ի վեջու, օգոստոսին գաղթողները մարտերով հասնում են Համադան, որն անգլիացիների ճերքին էր: Ըստ Խարքի ներքին գործոց վարչության աշխատակից, անգլիացի Ռ. Ստեֆֆորդի, որը սերտ կապի մեջ էր գաղթողների թետ, այս դժոխային ճանապարհին զոհվել են ավելի քան 17 հազար հայեր ու ասորիներ, իսկ ավելի քան 10 հազարը՝ գերվել են տարրեր ցեղերի կողմից, տղամարդկանց սպանել են, իսկ կանաց ու երեխաներին վա-

ճառել տարբեր գյուղերում¹⁷: Թե այդ աստվածաշնչան մաքառումները, անցման ժամանակ ինչպիսի ծանր պայմաններում են եղել գաղթողները վկայում է և այն, որ միայն 1918 թ. նոյեմբերին են նրանք պատահարար իմացել, որ դեռևս մայիսի 28-ին Հայաստան անկախ է հոչակել, բայց, ցավոք, արդեն կորաված էր Արևմտյան շքնար հայաշխարհն ու Վանա դրախտը:

Որու անվանի բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին, որ որբերին օգալու նպատակով քանից եղել է Վանում, նրան նվիրել է մի շարք սրտաբուխ բանաստեղծություններ ու հրաշալի ակնարկներ, նաև «Ծամիրամի արձիներ» վեպը, Վանա պատրիարք դրախտի մասին այսպես է գրում. «Խորարաց անկերպարանք խոռոչներ պատուինների ու դոների տեղ: Օղում խանձախու ու նեխախու: Եվ հանկարծ՝ ամուելի քաղցած շան ոռնոց: Բզիկ-բզիկ մազով վայրենացած կատու: Եվ նորից՝ փլատակներ, մոխրակույտներ, ածխացած պատեր՝ անվերջ, անխնա:»

...Անո գիշավոր փողոցը: Նրանից միայն առուն ու բարդիներն են մնացել: Իսկ բարդիների եւնում տների կիզակ կմախքներն են՝ հոգնություն ու սարսափ պատճառելու չափ անվերջ:

Հետագայում ինձ վիճակնեց լինել այդպիսի մի տաճ հրաշրով պահպանված սենյակում և տեսնել ոչ վաղ անցյալի կենցաղակերպը:

Սաղափով դրվագազարդված, փորաքանահակված ընկուզափայտն կանուքը: Ֆրանսիական հնամենի հենապակենեն: Հին հրաշալի գրքեր: Դըրվագված պղնձե ամանենեն: Եվ սա հարուստ տուն չէր. արվեստը տարածվում էր ամենուր, քափանցում Վանի կյանքի խորքերը: Այստեղ չափազանց մեծ էր ֆրանսիական մշակույթի ազդեցությունը:

Յուրաքանչյուր տաճ բուն հարդարանքը խոսում էր լնտանեկան կեցացի ճոխ զարգացման, տնտեսության հիմանալի դրվագքի մասին: Զըրմունները, խոհանոցները, մառանները, վառարանները, տնային բաղնիքները՝ ամեն ինչ արված էր ամուր, սիրով, իրենց համար: Մեզ ինեղող գործարանային արտադրանքի գոեթությունից հեռու էին նրանք: Ամեն բան ձեռքի գործ էր, վարպետորն արված և հաճախ գեղարվեստական գործ՝ շրամությի վերնապատումնի վանդակից մինչև վերջին մեխը: Փայտը, արծաթն ու պղնձը վանեցու կենցաղի նախասիրած տարրերն էին:

Եվ այս ամենը կործանվեց, այրվեց մինչև վերջին ծեղը, դարձավ մոխիր ու փոշի: Բայց մի՛ են իրեն էին ափսոս: Իրեր կարելի է էլի պատրաստել: Ափսոս էին մարդիկ, որ ապրում էին այնքան հաշու ու համերաշխ, որ այս կործանված ամեն ինչի ստեղծողը էին»¹⁷⁸:

Այո, մի՛ են իրեն էին ափսոս, ափսոս էին մարդիկ...

Բայց այդ իրեն էլ այսօր թան են մեզ համար, ինչպես Վանից մնացած բուշ, թանկ են որպես վանեցի վարպետների հանճարի վկայություններ: Իսկ Վանը հնուց ի վեր հայտնի էր մետաղագործությամբ ու պղնձագործությամբ, կավագործությամբ ու մետաքսագործությամբ, բազմաթիվ այլ արհեստներով:

Վանա լճի ափերից հանվում էր բորակ աղ, որն աշխարհում հայտնի էր Վանա բորակ անունով: Ինչպես 10-րդ դարի արար աշխարհագիր իրն Հառիկան է ճշում, այս տարվում էր Իրաք և վաճառվում հացքուխներին¹⁷⁹: Հեռավոր երկրների հետ առևտրական սերտ կապի մասին է վկայում նաև միջնադարի մեկ ուրիշ արար աշխարհագիր՝ Արու Ֆիդային, որը գորում է. «Այստեղ որսում են տառեխ կոչված ծուկը, որը տարածվում է ամրող աշխարհում»: Արաքներն այնքան «սիրեցին» այս ծուկը, որ արարական տիրակալության շրջանում օմայան խալիֆները, այսպես ասած, պետականացրին լինը և նրա ձկնային հասույթները¹⁸⁰, իսկ նրանց հաջորդած Աբրասյանները Հայաստանից գանձվող հարկերի մեջ մտցրեցին նաև տարեկան 20 հազար տառեխն¹⁸¹: Արաքները տառեխին ասում էին թիրրին և օռյանիկ Վանա լիճը կոչեցին լուրով՝ Թիրրինի լիճ¹⁸²:

Արար ճշանավոր պատմի նրա Ալ-Ասիրն աշխարհի անցուղարձի, պետությունների կործանումի, խալիֆների ու նախատամարտերի նկարագրությունների կողքին չի մոռանում քննադատել Վանա լճի վրա Բարկ հողուներին և հիացմունքով խոսում այդ ձկան մասին. «Այս տառեխն աշխարհի հրաշալիքներից է, քանզի փոքր ծուկ է, որը տարվա որոշ եղանակին է երեկան գալիս լճում: Առաջանում է մի գտնի մեջ, որը բափվում է լիճը, այնքան շատ, որ կարելի է ձեռքով որսալ, մանավանդ հատուկ պատրաստված գործիքների միջոցով»¹⁸³:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Վանում կար հարյուր կտավագործական արմեստանոց, որոնցում գործում էին շուրջ երկու միլիոն արշին կտավ¹⁸⁴:

Ժամանակակիցներից մեկը Վանում կտավագործության զարգացման մասին գորում է. «Կտավագործությունը յառաջ գնաց, նորանոր գործուածներ



Հեռոց, XIX դ.:

Ծրագներ, XVIII դ.:

Կարպետ:

Սորիչ, XVIII դ.:

Տարմանդներ, XVIII դ.:

Ժանյակ, XIX դ.:

Զարանես սփոց, XIX դ.:

Բրոյա գուպա, XIX դ.:

Գողակներ:



դուրս եկան, մանելու, գործելու ինքնաստեղծ նոր նոր մեքենաներ շինուեցան: Մեր աշխարհումն են մանում ու գործում Շատախի ընտիր շալը, որից եվրոպացի տիկնայք իսկ իրենց շրջազգեստ ունենալ առանձութիւն կը համարեն: Շալը բաւական քանակութեամբ դեպի Կ. Պոլիս ու արտասահման կողարկուեք:

Մեր աշխարհում առհասարակ ամենը հագնում են եվրոպական ձևով: Սակայն փնտոնեցք ամենի վրայ էլ հագած հայաւը, բոլոր մեր աշխարհում գործուածներ են, լաւ մահուտ, դիմացկուն շայեադ, արա, գոյնօքոյն զանազան ձևերով: Նախանձախնդրութիւն կար, գեր Վանի համար եմ ասում, իրենց երկրում պատրաստած ապրանքից հագուստ ունենալ, մրցում՝ նոյնպէս գործարանների մէջ լավ ապրանք դուրս բերելու համար: Արմեստը յառաջադիմում էր: Սակայն ի՞նչ եղաւ այդ ամենը...»¹⁸⁵: Վանեցի կաշեգործների, ատաղագործների ու կահույքագործների, ժամագործների ու մոմագործների, մուշտակագործների ու շալագործների համբավը վաղուց դուրս էր եկել նահանձի սահմաններից: Բարձր զարգացման էր հասել պղնձագործությունը: Թե եղեռնից հետո ինչպիսի անգթությամբ էին վերացվում վանեցի վարպետների անզուգական ձեռակերտները, վկայում է Ս. Գորոդեցկին: «Մի անգամ շրջանում պղնձ հավաքող համբարակի մոտ բերին երեք սայլ գյուղական ամանեղեն՝ ընդամենը մեկ օրվա ավար: Ոչ մի բան հնարավոր չէր փրկել՝ ոչ գնել, ոչ գողանալ, և ինձ մնում էր միայն անհագործ նայել ու միանալ այդ նախապատմական փառահեղությամբ:

Ամեն ինչ կուծոն էր՝ եզրերը փորաքանդակված, երկու արշինանոց տրամագծով սկսուելուները, հոյակապ ձև ունեցող կաթամերը, թավաները, որոնց համար այդ անունները վիրավորական կարող էին թվալ, մեծ ու փոքր, մեծ ու լայնարերան սահորները, դրվագազարդերով ափսեները, թեյի պնակները, շերեփները, գավաթներն ու սկահակները՝ ձևերի այնպիսի նոյն բազմազանություն, ինչպիսին լինում է տարաշխարհիկ պարտեզի ծաղկանց-ներում:

Եվ չկար մի ձև, որ կեղծ, մտացածին, անհարկի լիներ. ամեն ինչ ներդաշնակ էր, բարեկանն, դարերով մշակված ու հարմար:

Եվ այդ ամենը ջարդոն պիտի դառնար: Այդ ամենը կոպտորեն նետվեց կշեռքի վրա, շատ բան ճգնվեց, ծոմովեց, փշացավ:



Եվ ես լսում էի, թե ինչպես կշեռքի վրա նետվող պղնձը բողոքում էր Բաշեղ տնքոցով: Սոսկ նրա բաշն էին ուզում իմանալ:

...Ես հիշեցի միայն պղնձի մասին, այնինչ Վանում ոչ պակաս լավ են մշակվել նաև փայտը, արծաթը, սաղափը: Այնուեղ ընկույզափայտի հիանալի դրվագազարդումներ են արել, և այնքան տարածված է եղել այդ գործը, որ դրվագազարդեր կարելի է տեսնել պատահած բազմոցի թիկնակին»¹⁸⁶:


Վանում կայ ավելի քան երկու հարյուր ուկերիչ ու արծաթագործ: Տասնամյակներ անց, թուրքական «Վարան» թերթը գրում է, որ «Վանն ուներ իր սեփական համբավը: Այնուղ պատրաստվում էին արծաթյա և սեպակի իրեր: Արտադրանքն ուղարկվում էր երկրի բոլոր կողմերը և արտասահման... Վանում ևսաշին աշխարհամարտի թուրուրիի մէջ անհնտացան ոչ միայն արծաթագործությունը, այլ նաև կտավագործության առնչվող մի քանի զարգացած արհեստները»: Նոյնիսկ թուրքական հանրագիտարանը խոստովանում է, որ «անհետացավ Վանի փայլուն ժամանակներում գոյություն ունեցող մանր ապրանքային արտադրության կարևոր մի մասը, և բնակչության ապրուստը կապվեց նոյի և անասունի հետ»¹⁸⁷:

Այժմ Վանը շուրջ 50 հազար բնակչությամբ քաղաք է, համանուն նահանձի (վիլայեթի) կենտրոնը, իսկ ողջ նահանջում բնակվում է տարբեր ազգությունների մոտ 400 հազար մարդ¹⁸⁸, նոյնիսկ Աֆղանստանից վերջին տարիներս հատուկ այստեղ բերված փախստականներ:





ARMAVIR



ԱՐՄԱՎԻՐ


Առաջելական Արմավիրի քաղաքի պեղումները տեսնելու համար պետք է գնալ Արմավիրի շրջանի Հայկավան գյուղը: Գյուղի մոտ վեր է խոյանում մի հսկա բլուր: Կարծես աշխարհստեղծման հրարությ նոր է հանգել, և նոր վարդագույն ալիքներից մեկը, հալած տուֆի փրփուրը վրան, չհասցընելով փլվել, խոյանքի պահին ստել է: Ամենուր տուֆի ծակոտեն, մանր կտորներ են, խեցեղենի մեծ ու փոքր բեկորներ, անձնից ու քամուց փխըրված, փոշի դարձած հում աղյուսի փափուկ թմբեր: 76 մետր բարձրությամբ բրից երևում են Արարատյան դաշտի հսկա մասը, Արարատն ու մինչև Արաքս ձգվող խաղողի այգիները: Արմավիրի պատմական Սույաց անտառի տեղում կանչ ալիք են տալիս նոր Արմավիրի, նոր Ամասիայի, Նալբանդյանի, Հայկավանի ու Զրաշենի այգիները: Բլրի գագաթին պահպանվել են բաց կապտավուն, հղկված բազալտ պարիսպների, պալատների, տաճարների ու այլ շինությունների հիմքերն ու հետքերը: Պեղումներն ի հայտ են բերել օան հում աղյուսից կառուցված սենյակների մի ողջ համալիր: Պահպանվել են շուրջ երեք մետր բարձրության հողագույն պատերը: Արմավիրի բլրից թիջ արևմուտք, շուրջ 2,5 կմ ձգվում է Դավթի բլրաշարքը, որի մյուս ծայրին էր արևմտյան ամրոցը: Այնտեղ եղել է Վաճի հայոց քավորության ծաղկուն քաղաքներից մեկը՝ Արգիշտիխինիլին, որի տեղում էլ Երվանդունիները կառուցեցին Արմավիր մայրաքաղաքը: Նոր Արմավիր գյուղի մոտ գտնվող արևմտյան բլրի վրա նոյնական կարծր բազալտից կառուցված պալատներ ու ամրոցներ, տաճարներ ու աշտարակներ են եղել: Քաղաքի հիմնադրման մասին Արգիշտիի սեպագրից պետի քան 2750 տարի հետո տուֆի հսկա քարարեկորի վրա արվել է նոր արձանագրություն: «Երախտագիտությամբ կանգնեցրինք ողեցույց կոթողս ի հիշատակ հնագետ Հարություն Մարտիրոսյանի՝ պեղողին և ուսումնասիրողին Արգիշտիխինի քաղաքի»:

Արմավիրի ուսումնասիրությունը մեկ հարյուրամյակից ավելի պատմություն ունի: 19-րդ դարի առաջին կեսին նրանով հետաքրքրվել են արևմտակերպացի հետազոտողներ Քեր-Փորթըրը, Սեն-Մարտենը, ավելի ոչ և Շանտըրը: Խոկ Դյուրուա դը Մոնտերն, Շույն դարի 30-ական թվականներին ճանապարհորդելով Հայաստանով, ճիշտ է գուշակել Արմավիրի տեղը¹: Խորենացու Պատմությունից հայտնի քաղաքի հետքերը գտնելն այնքան էլ դյուրին չեր. ժամանակը հոդի հաստ շերտով ու մոռացումով էր ծածկել նրա հիշատակները: 1869-ին Մերուա Մերատյանցի հրատարակած Արգիշտի Սուաշինի և Ռուսա Երրորդի սեպագիր արձանագրությունները նորից հետաքրքրություն բորբոքեցին կորած մայրաքաղաքի հանդեպ²: 1880-ին Ա. Երիցյանի ու Ա. Ռվարովի, խոկ 1892-ին Նիկողայոս Մատի որոնումներն զգալի արդյունքներ չտվեցին: Այնուհետև այնտեղ կարճ ժամանակով պեղումներ սկսեց ակադեմիկոս Մ. Նիկոլսկին և մի շարք արժեքավոր հետևողությունների հանգեց³: 1927-ին Ն. Մատը Ա. Տեր-Ավետիխյանի հետ շարունակեց Արմավիրի ուսումնասիրությունը, բայց այն ընդհատվեց: Հետագայում, տարբեր տարիներին, շրջակա գյուղերում հողային աշխատանքներ կատարելիս հայտնաբերվեցին հնագիտական արժեքավոր հյութեր: Դեռևս 1928-ին Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի գիտական քարտուղար, Եշանավոր հնագետ Աշխարհբեկ Քալանթարը ներքին գործոց ժողովին ամսագագում էր, որ Ղուրդուղովի (1935-ից՝ Արմավիր) և Դվինի հնավայրերն ավերվում ու կողոպտվում են, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար. «Արմավիրը և Դվինը՝ Հայաստանի երեմնի մայրաքաղաքները, հին հայկական կուլտուրայի այդ դարավոր կենտրոնատեղիներն իրենց համաշխարհային եզակի գիտական ար-



ԺԵՐՈՎ՝ ԱԵՐԿԱՅՈՒՄ ՎԵՐԱԴՎԱԾ ԽՈՉՈՐ ԲՈՂԱԹՄԵՆԻՇ՝ այսօր մեր աչքի առաջ քանդվում են, ոչնանում, և մենք ոչ մի կերպ չենք կարողանում այդ ցավակի երևոյթի առաջն առնել:

Ժողկոմիտորիի հնությունների պահպանման դեկրետով Հայաստանի հողի վրա գտնված բոլոր հնությունները լինելով պետական սեփականություն՝ պետք է մնան անձեռնմխելի և անաղարտ, որոնց պահպանության վերահսկողությունը մտնում է տեղական վարչական մարմինների պարտականությունների մեջ: Չնայած դրան, վերոհիշյալ հնությունները, մեր հնագիտական այդ գոհարները, շարունակում են մնալ ենթակա անվերջ քանդումների, ծառայել իրքն «քյովի» (պարարտացնող հող) աղբյուր՝ շրջակայրի բնակչության համար: Սակայն ինչպես պարզվում է մեր քիմիկունների փորձերից, մին քաղաքների այդ մնացորդները թյուրիմացարար միայն ենթարկվում են այդպիսի հոշոտման, քանի որ նրանց հողը, իրքն պարտավորութ, այնքան չնին դրական էլեմենտներ է պարունակում իր մեջ, որ դրա համար շարժե նույնիսկ քանդման և փոխադրության աշխատանքը, ուր մնաց ոչնչացնել պետական եզակի գիտական հարստությունը: Բայց, միայն այդ չե, որ, ըստ երևոյթին, հետաքրքրում է այդ քանդողներին: Արանք փորփրելով այս ու այնտեղ, հոյս ունեն գտնել հնագիտական արժեքներ, որ և գրունում են հաճախ շատ արժեքավոր իրեր, և, իհարկե, վարվելով նրանց հետ իրենց հասկացած և ցանկացած ձևով, կորստի են մատնում և գիտական արժեքից գրկում թե՛ հայտնաբերված իրերը, թե՛ նրանց գտնված տեղերը:



Արմավիրում գտնված
սեպագիր արձանագրություններ:

Արգիշտիխինիլի-Արմավիրի
հատակագծից հատված:


Ներկայում այդ քանդումն ստացել է տարերաշին բնույթի կերպարանը: Ծրջանային վարչական մարմիններն այդ երևույթի առաջն առնել չեն կարողանում, կամ, տարօրինակ ձևով, ցուց են տալիս անտարբեր վերաբերմունք»⁴:

Միայն 1962-ին վերսկսվեցին քաղաքի պեղումները: Հնագետների մի մասը՝ Հարություն Մարտիրոսյանի ղեկավարությամբ, պեղեց Արգիշտիխինիլին, մյուս մասը՝ Բարկեն Առաքելյանի, իսկ 1970-ից Գ. Տիրացյանի ղեկավարությամբ՝ Արմավիրը⁵:

Նրանք ապացուցեցին, որ Արմավիրի բլուրը հնուց անտի բնակելի էր: Վանակատե (օրսիդիան) գործիքները, բրոնզե իրեն ու խեցեղենի մնացորդները վկայում էին, որ մ. թ. ա. 5—4 հազարամյակներում այստեղ վաղ երկրագործական և վաղ բրոնզեդարյան բնակատեղի է եղել: Հետագա հազարամյակներում ևս բրի վրա ծխացել են օջախներ, ու շարունակվել է կյանքը: Իսկ մ. թ. ա. 13—12-րդ դդ. այն քավական մեծ բնակավայր էր⁶:

Սովոր Խորենացին Արմավիրի հիմնադրումը վերագրում է Հայկ Նահապետի թոռ Արամահյսին: Պատմահյայը գրում է, որ Արամահյսը «իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլուրի վրա և իր անունով այն կոչում է Արմավիր, իսկ գետի անունն իր թոռան՝ Երաստի անունով դնում է Երասիս: ...Այս Արամահյսը տարիներ ապրելով սերեց իր որդի Ամասիային, որից հետո էլի տարիներ ապրելով մեռավ: Ամասիան Արմավիրում բնակվելով՝ տարիներ անցնելուց հետո սերում է Գեղամին և Գեղամից հետո արի Փառոխին ու Ցոլակին: ...Իսկ Գեղամը տարիներ անցնելուց հետո Արմավիրում սերեց Հարմազին. նա Հարմազին թողեց Արմավիրում բնակվելու իր որդիների հետ, իսկ ինքը գնաց հյուսիս-արևելքում եղած մյուս լեռան հետևի կողմը՝ մի ծովակի ափ: ...Հարմազ տարիներ ապրելով սերեց Արամին: Արամի մասին պատմում են, թե շատ քաջագործություններ է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր երկիրը, ինչպես հովաները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ»⁸:

Ինչպես քաղաքը է վկայում, Արմավիրը երկար տարիներ եղել է հայ ժողովողի ազգային կյանքի կարևորագույն կենտրոնը, ուր հայկական զարմն ապրել է սերնդե սերունդ, շենացրել ու ընդարձակել հայոց աշխարհը: Խորենացին հրճվաներով և հպարտությամբ է ներկայացնում հանուն հայրենյաց սահմանների պաշտպանության Արամի քաջագործությունները: Նա Արամի մասին գրում է. «Սա աշխատանք և հայրենասեր մարդ լինելով... լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացել ազգերը ունակոյն են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա:






Արմավիրի
բլուրը:

Արմավիրի բլրի վրա
շինությունների
հետքեր:

Արմավիրի բլրի վրա
բացված հում
աղյուսե պատեր:



Այս Արամը նինոսի ասորեստանցիներին և նինվեին տիրելուց քիչ տարիներ առաջ, շրջակա ազգերից նեղվելով՝ հավաքում է հարազատ, քաջ և աղեղնավոր մարդկանց մի բազմություն՝ մոտ հինգ բյուր մարդ, վարժ նիզակավոր շատ ուժեղ երիտասարդներ, հաջողակ ձեռքերով, սրտու ու հմուտ պատերազմող։ Նա համելիպում է հայոց սահմանների մոտ գտնվող մեղացիների քաջերին, որոնց առաջնորդում էր մի ոմն նյութար Մադես, հպարտ ու պատերազմատեր մի մարդ... Դրանք մի անգամ բոշաների նման ասպատակելով սմբակներով ուժնակոն արին Հայաստանի սահմանները (և Մադեսը) երկու տարի իրեն ենթարկեց (Հայաստանը): Արամը համկածորեն նրա վրա հարձակվելով արևը ծագելուց առաջ՝ կոտորեց նրա բազմաթիվ ամբոխը և իրեն՝ նյութարին էլ, որ Մադես էր կոչվում, ծերակալ անելով բերեց Արմավիր և այնուղի պարսպի աշտարակի ծայրին հրամայեց պատին վարսել, երկայեն ցից միտելով ճակատի մեջ՝ ի ցոյց դնելով անցորդներին և բոլոր այնուղի եկվորներին, իսկ նրա երկիրը մինչև Զարասպ կոչված լեռն իրեն հպատակեցնելով հարկատու դարձրեց մինչև նինոսի թագավորելն Ասորեստանի և նինվեի վրա»⁹: Արմավիրում է ծնվում հան Արայի որդին՝ Արա Գեղեցիկը, և վավաշու Շամիրամն էլ Արա Գեղեցիկին նվաճելու համար զորաց գլուխն անցած, որոշում է Արմավիրը նվաճել, քայլ Արարատյան դաշտի ճակատամարտում Արան զոհվում է: Արայի որդուն Շամիրամն ի հիշատակ նրա գեղազն հոր՝ Արա է կոչում: Այս Արայան Արան ունենում է որդի՝ «շատ գործունյա հանճարախոս»՝ Անուշավան Սոսանվերին, որն, ըստ հեթանոսական հպատի, Արմավիրի սոսի ծառերի տերևների սոսափյունն ունենդրելով գուշակություններ էր անում¹⁰:

Ծեն ու ծաղկուն էր Արարատյան դաշտը, և այդ էր պատճառը, որ Վանի արքաները ջանք ու եռանդ չեն խնայում այն միավորելու հայոց թագավորությանը: Մենուայի որդի Արգիշտին (786—764 մ. թ. ա.) ոչ միայն իր թագավորությանը միացրեց Արարատյան աշխարհը, այլև քաղաքներ ու բերդեր կառուցեց: Ամրացնելով պետության սահմանները, նա Ասորեստանի դեմ պատերազմից հաղթանակով վերադառնալով, մ. թ. ա. 776 թ. Ազաերկրու հիմնեց իր հաղթության քաղաքը՝ Արգիշտիխինիլիին, և սեպագրեց այսպես. «Խալլյան մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, ասում է՝ ամրոց հոյակապ կառուցեցի, հաստատեցի Արգիշտիխինիլի անունը: ...Գետից չորս ջրանցք անցկացրի, խաղողուտ և անտառ հիմնեցի, կատարեցի մեծագործություններ այնուղի»¹¹:

Քաղաքը կառուցում էին բազմաթիվ ուազմագերիներն ու ստրուկները: Նրանք ուղտերով, շորիներով ու եզներով օրնիբուն քար էին կրում, բարձրացնում պարիսպները, պալատների ու տաճարների պատերը: Նրանց կատարած աշխատանքի մասին թեկուզ հեռավոր պատկերացում կազմելու համար ասենք, որ քաղաքի ավերակներից տարված քարերով են կառուցվել շրջակա տասից ավելի գյուղերի տեղերի հիմնապատերը, քակերի պարիսպները, ինչպես և Սարդարապատի բերդի դարպանները և այլն¹²:

Մեսրոպ արքեպիսկոպոս Մըրատյանցը, որ Արմավիրի ավերակներն է այցելել 1869 թ., ցավով է գրում, որ «մերձակա բնակիչքն քարերը հանել տանելով՝ քիչ է մնացել պարսպի և աշտարակի հետքն անհետացնեն, թե՛ և խիստ հրամաններով արգելում է իշխանութիւնը: Ամօթ մերձակայ հայ գիշացուց, որ իրենց նախնեաց թանկագին լիշտառակը խնամքով չեն պահպանում»¹³: Նույնիսկ Արգիշտիխինիլիի հիմնադրման մասին Արգիշտիի արձանագրությունը 1892 թ. հայտնաբերվել է ոչ թե քաղաքի ավերակներում, այլ Սարդարապատում, մի գյուղացու ձիթհանքի պատի մեջ¹⁴: Թալանվել են ոչ միայն սրբատաշ քարերը, այլև հողի հաստ շերտի տակ թաղված դամբարանները, որոնցից հայտնաբերված սարկոֆագներն այսօր են նոր Արմավիրի գյուղացիները օգտագործում են տնտեսական նպատակներով և խաղող ճամունմ¹⁵:

Քաղաքի պարիսպների հաստությունը հասնում էր 3,5 մետրի, իսկ Սրգիշտիի փորած ջրանցքների ընդհանուր երկարությունը մոտ 40 կմ էր, միջին խորությունն ու լայնը՝ 2-ական մետր¹⁶:

Արգիշտիին կառուցվել ու քարեկարգվել է շուրջ 200 տարի և իր ժամանակի մեծ քաղաքներից էր, տնտեսական, մշակութային և կրոնական նշանավոր կենտրոն: Նրա ուղիղ փողոցների, պաշտպանական այլ կառույցների ուսումնասիրությունից պարզորոշ երևում է, որ քաղաքն ունեցել է լավ մշակված, ճարտարապետորեն նախանշված կենտրոն, որի շորջը, հարթավայրում փոփած էին աղքատ թաղամասերը: Արգիշտիին իր արվարձաններով գրավել է մոտ հազար հեկտար տարածությունը¹⁷: Քաղաքային բնակչության մեծ մասը շարունակում էր զբաղվել աշխատործությամբ ու քանչարարությամբ, մասամբ նաև անամապահությամբ: Բուն քաղաքը պետական պաշտոններության, քրոմության, գինվորականության և արհեստավորության քաղաքամասն էր, որը գտնվում էր պարսպի ներսում, բրի վրա: Արգիշտիին ինչի աշքի էր ընկնում նաև արհեստագործությամբ: Պեղումներից հայտնաբերվել են բրոնզագործի, դարբնի, քարագործի, հյուսնի, դեղագործի տներ: Զարգացած էին նաև խեցեգործությունը, ջուկակությունը, կաշեգործությունը, մանածագործությունը¹⁸: Դրոշմազարդ գոտիներն ու մետաղա արձանիները, վահաններն ու սաղավարտները վկայում են երկաթագործության ու գինագործության ծաղկումը:


Արգիշտիին արևելյան և արևմտյան բլուրների վրա ուներ երկու ամրակուն, եռապարիսպ ամրոց, որոնցում կային հացահատիկի պահեստներ, գինու մառաններ, արհեստանոցներ, շքեղազարդ ու մեծահարուստ պատճեր, մոտ մեկ տասնյակ տաճարներ:


Երբ Արգիշտի Երկրորդի որդի Ռուսա Երկրորդը (մ.թ.ա. 685—645 թթ.) Արգիշտիինից 60 կմ հեռավորության վրա կառուցեց Թելշերահինի քաղաքը, այնտեղ տեղափոխեց պետական պաշտոններության, քրոմության և քարձը գինվորականության մի մասը: Նրանք տարան նաև իրենց կահ-կարասն, պերճանքի առարկաները, ողջ հարստությունը¹⁹: Խակ որքան էր այն ժամանակ Արգիշտիինի բնակչությունը: Ենթադրվում է, որ այնտեղ բնակվում էր շուրջ 30 հազար մարդ: Քաղաքի զարգացմանը զուգընթաց ավելանում էր բնակչության թիվը²⁰: Բայց նրան վիճակված չէր խաղաղ բարգավաճում: Անվերջ պատերազմներից արդեն երերում էր Վասի հայոց թագավորության գահը: Նրա վերջին արքաները՝ Ռուսա Երկրորդն ու Ռուսա Չորրորդը, չկարողանալով համարձակ ուազմերթերի գնալ հեռավոր երկրամասները, բավարարվեցին տնտեսական բնույթի մանր-մունք շինարարություններով: Եվ նրանց անուններն են մեզ են հասել լոկ մի քանի արձանագործությունների միջոցով, որոնցից երկուսը վերաբերում են Արգիշտիինի հումքում և Երերունիում հացահատիկի պահեստների կառուցմանը:

Մարա-քարելական և սկզբանական ուժերը, տիրելով ու քածանելով Ասորեստանը (մ.թ.ա. 605 թ.)՝ վերջ տվին և Վասի հայոց թագավորությանը, որը մ.թ.ա. 590—585 թթ. ընկապ նրանց հարվածներից: Թշնամին կողոպտեց ու մոխրացրեց շեն բնակավայրերը, այդ թվում և Արարատյան աշխարհի քաղաքները՝ Թելշերահինին, Երերունին ու Արգիշտիինին:

Պեղումների և հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր է ինչ-որ չափով վերականգնել ավելի քան երկու հազար հինգ հարյուր յոթանասուն տարի առաջ տեղի ունեցած դեպքերը:

...Իմանալով թշնամու գորքերի մոտենալու լուրը, աղքատ թաղամասերի բնակիչները խուճապահար պատսպարվում են քաղաքային պարիսպների հետևում: Այրելով ու կողոպտելով քաղաքի հյուսիսարևմտյան անպարիսպ թաղամասերը, ճեղքելով առաջին ամրությունները, թշնամին իր գրինային ջոկատներն է կուտակում հյուսիսային դարպանների մոտ, քանի որ այն համեմատարար հարմար էր ավերող գործիքներ, քարանետ սարքեր մոտեցնելու համար: Քաղաքի պաշտպանները բարձր պարիսպներից տեսնում են, թե ինչպես են այրվում աղքատ թաղամասերը: Առանց այն էլ շոգ ամուս պատճառով շնչել չէր լինում, իրենքն ու ծոխն էլ խեղում էին պաշտպաններին: Հրդեմն այնպես ուժեղ էր բռնկվել, որ հում աղյուսն տեսնը կարմրավուն էին դարձել: Ծուտով կրակը թափանցեց նաև բուն քաղաք, որի վրա այրվող հետերի տարափ էր տեղում: Մեկը մյուսի հետևից սկսեցին այրվել հարուստների տները, տաճարներն ու պալատները, մթերքների պահեստները: Թշնամու հետերը ջարդվում էին պաշտպանների վահանների վրա, բայց շատերին էլ խոցում էին: Մարտը երկարում էր: Քաղաքում խուճապ էր սկսվել, փլկում էին այրվող տները: Հրդեմի լեզվակներն ու պաշտրող գորարանակը անելանելի վիճակի մեջ էին գտել պաշտպաններին, որոնց թիվը նվազում էր: Վերջապես թշնամին վայրագ ճիշերով հյուսիսային դարպաններից ներխուժում է արևմտյան բեր: Մարտը շարունակվում





Արմավիրի հունարեն
արձանագրություններից
հատված:

Արմավիրի բլուրը
ըստ Մեսրոպ Սմբատյանցի,
1890 թ.:

Արմավիրում 1886 թ.
Մեսրոպ Սմբատյանցի
գրառած սեպագիրը:

Է արդեն ամրոցի ճերսում, փողոցներում, ամեն տան մոտ: Շուտով քաղաքն
ընկավ²¹:

Պեղումները բացեցին ավելի քան երկուսուկես հազարամյակ առաջ տեղի ունեցած անլոր ողբերգության պատկերներ: Մետաղագործի տանը հայտնաբերվեցին կնոջ և երեխայի կմախքներ: Ծենքերից մեկի միջանցքի ծայրին գտնվեց սպանված կնոջ կմախք: Կինը պառկած էր մեջքի վրա, սարսափից գլուխն ու դեմքը ձեռքերով ծածկած, թշնամու նետաւալքը գույկանեղում: Նա երկի սպասավոր էր կամ աղքատ թաղամասի բնակիչ, քանի որ նրա վզին, ձեռքերին և ոտքերին պահպանված զարդերը շատ հասարակ էին²²: Նրանց քիչ հեռու, միջին շափի կարասի մեջ գտնվել է մոտ տասներկուամյա աղջկա կմախք: Աղջնակը, հավանաբար, թաքնվել է կարասում, վախից կծկվել, դեմքը ձեռքերով փակել, բայց թշնամին նրան չի խնայել, ինչպես չի խնայել բրոնզագործի տան մեկ տարեկան երեխային²³: Այդ տանը գտնվեցին նաև վայրի կատվի, մուֆլոնի, ջեյրանի, վագրակատվի ոսկորներ, ըստ երևոյթին բրոնզագործը սիրել է որսորդությամբ զրադվել²⁴: Իսկ դեղագործի տանն այրված գերանների տակ հայտնաբերված կնոջ ոսկորներից ոչ շատ հեռու ամենաբազմազան կենդանիների, թռչունների ու ձկների մնացորդներ կային: Այդ կենդանիների տարբեր մասերից այն ժամանակ դեղագործները զանազան դեղեր էին պատրաստում:

Պեղումներից գտնված զարու, քակլայի, ոլոնի, աշորայի (տարեկանի) հատիկներից կարելի է ենթադրել, որ հարձակումը տեղի է ունեցել Բուլիսօգոստոս ամիսներին, քանի որ դրանք Արարատյան դաշտում հավաքում են այդ ամիսներից ոչ շուտ:

Արգիշտիհնիկի կործանման ամիսը որոշելուն օգնեցին դեղագործի տանը պահպանված մնացորդները: Գալի և աղվեսի ձագուկները վեց ամսական էին. հայտնի է, որ գալլերն ու աղվեսները սերունդ են տալիս մարտապրիկին, գումարելով վեց ամս՝ ստացվում է օգոստոս-սեպտեմբեր: Այսպես, հնագետներին հաջողվեց որոշել քաղաքի կործանման ճիշտ ժամանակը՝ օգոստոսի վերջ, սեպտեմբերի սկիզբ²⁵: Էրեբունու և Թեյշեբանիի պեղումները ևս ապացուցեցին, որ Արարատյան աշխարհի այս մեծ քաղաքներն ավերվել են միաժամանակ:

Վանի հայոց թագավորությունից հետո էլ Արգիշտիհնիկիում շարունակվեց կյանքը: Մ. թ. ա. 331 թ. Ասորեստանում, Գավգամելայի մոտ Ալեքսանդր Մակեդոնացու հաղթանակից հետո Աքեմենյան պետությունը կործանվում է: Աքեմենյան Երանի կողմից ճակատամարտին մասնակցում էր նաև հայոց 47 հազարանոց քանակը²⁶: Հայաստանի կառավարիչ Երվանդը մարտապատից վերադառնալով Հայաստանը անկախ է հռչակում: Պետության նոր մայրաքաղաք է ընտրվում Արմավիրը:

Արգիշտիհնիկի տեղում, հատկապես նրա արևելյան բլրի վրա, Երվանդունիները կառուցում են իրենց նոր մայրաքաղաք Արմավիրի միջնաբերդն ու մեհյանները, պալատական համալիրները: Շուտով Արմավիրը





Օծագլուխ ապարանշան:

Ոսկյա մեղալիոններ:

Կավե ծիսանոր:


Արմավիրում գտնված
կնիքներ և դրանց
դրոշմները:

Ոսկյա կրծքազարդ,
մ.թ.ա. VI—IV դդ.:

փոռում է իր թևերը բլրից հեռու, տարածվում նրա շուրջը, զարդարվում բնակելի նոր թաղամասերով ու այգիներով:

Մայրաքաղաք դատնալուց հետո Արմավիրը վերածվում է պետական, ուսումնական, մշակութային և պաշտամունքային խոշոր կենտրոնի²⁷:

Շարունակվում էր նաև Արմավիրի, այսպես ասած, թատերական կյանքը, որը սկզբնավորվել էր դեռևս մ.թ.ա. 8-րդ դարում: 1985 թ. պեղումների ժամանակ անսպասելիորեն հայտնաբերվեց Էլամերեն երեք սեպագիր սպիրալ, դրանք հանրահայտ «Գիլգամեշ» էպոսի բեմականացումից հատվածներ էին, որոնցում համեմետ էին գալիս Գիլգամեշն ու Սիլուրին, նաև երգչախոսումք: Մինչ այդ էպոսը հայտնի էր 4 լեզվով գտնված արձանագրություններով, նորություն էր նաև էպոսի այսպիսի թատերականացումը: Ենթադրվում է, որ այն բեմադրվել է մ.թ.ա. 760 թ. Արմավիրում, Սարդուր Երկրորդի գահակալման և ամուսնական համեմետների ժամանակ²⁸: Հնարավոր է, որ այն ավելի հին է: Այսպիսակ, Հայաստանում թատրոնի սկզբնավորումն սկսվել է ոչ թե Արտաշատում, այլ Արմավիրում, և շարունակվել է մի քանի դար, ինչը հաստատում են նաև Արմավիրի հունարեն արձանագրությունները, որոնցից մեկը մ.թ.ա. 7-րդ դարի հովանքությունում «Գործեր և օրեր» երկի հետ առնչվող մի հատված է: Մեկ այլ արձանագրության մեջ տողեր են համեմատում հանճարեղ Եվրիափիդեսի (մ.թ.ա. 480—406 թթ.) «Հիպալիխոս», «Օրեստես», «Անդրոմեդա» ողբերգություններից: Մյուս տողերը ևս հունական դրամաներից և ողբերգություններից դեռևս չպարզաբանված, գուցեն չպահպանված երկերից հատվածներ են²⁹: Այս արձանա-





գրություններից դատելով՝ կարելի է վստահաբար ասել, որ Արմավիրում դեռևս հնագույն ժամանակներում գոյություն է ունեցել թատրոն:

Արմավիրում կային բազմաթիվ մեթյաններ ու սրբատեղիներ: Այնտեղ էին ժեթանոս հայերի բագիններն ու Արտեմիտի և Ապոլոնի պղնձաձույլ, ոսկեզօծ արձանները³⁰: Քաղաքի մոտակայքում էր Արամանյակի Սույաց անտառը, որի ծառերի տերևների սոսափյունով քրմերը գոշակություններ էին անում:

Գտնվելով առևտրական ճանապարհների խաչուղիում և լինելով մայր քաղաք, Արմավիրում խիստ զարգանում են առևտուրը, արհեստներն ու արվեստները: Այդ են հաստատում պեղումներից հայտնաբերված խեցեղնեններ³¹ ու մետաղյա իրերը³², թանկարժեք զարդերը³³, իսկ հոյակապ ոսկյա կրծքագարդը վկայում է, թե ինչ բարձր աստիճանի էին հասել Արմավիրի ոսկերինները, որոնք ոսկին բերում էին Սոյթի հաճերից³⁴: Քաղաքի արհեստավորների ձեռակերտերը հասնում էին մինչև Կովկաս, Իրան, Միջագետք ու Ասորիք, Միջերկրականի և Սև ծովի ափերը: Այնտեղից էլ դեպի Արմավիր էին հոսում տարաշխարհիկ ապրանքներ:


Տարաբնոյթ էր քաղաքի բնակչությունը: Երվանդունի արքայատոհմի ներկայացուցիչներից, Արանց մերձավորներից զատ, այստեղ էին ապրում նաև բարձր պալատականությունն ու քրոնությունը, զինվորականությունը՝ բազմաթիվ սպասավորներով, ծառաներով, գրագիրներով, թիկնապահներով: Զգալի քանակ էր կազմում նաև արհեստավորական խավը: Բայց քաղաքի բնակչության մեծ մասն այն քաղաքացիներն էին, ովքեր շարունակում էին իրենց ավանդական զբաղմունքը՝ այգեգործությունը:

Ծուտով Արմավիրի փառքը խամրեց: Երվանդունի արքայատան երկանի Վերջին քագավորը, որն ըստ Խորենացու գահակալել է շուրջ 20 տարի (մ.թ.ա. 220—201 թթ.), մայրաքաղաքը տեղափոխում է Երվանդաշատ:

Սակայն Արմավիրը դրանից հետո էլ երկար ժամանակ Հայաստանի խոչոր քաղաքներից էր: Մինչև 4-րդ դարն այն ապրեց վերելքներով ու վայրէքներով հարուստ կյանք, այնուհետև լքվեց ու մոռացվեց: Մոնղոլական արշավանքներից հետո՝ 13-րդ դարից սկսած, քաղաքն անմարդաբնակ դարձավ³⁵: Ժամանակի ավերիչ ձեռքը, երկրաշարժներն ու ասպատակիչները հայոց երևելի մայրաքաղաքի նշանավոր կոթողներից, պարիսաներից ու պալատներից քիչ բան խնայեցին:

Հետաքրքրական է, որ Արմավիրի անկումից հարյուրամյակներ անց, Հյուսիսային Կովկասի շերեգական գյուղերում ապրող հայերը՝ Բիմելով նոր քաղաք, 1848-ին այն անվանեցին Արմավիր, ի հիշատակ նախնայաց մեծ ու փառավոր մայրաքաղաքի: Խոհ 1992 թ. Արմավիր վերանվանվեց Հոկտեմբերյան քաղաքը, որից հետու չէ պատմական հնագայրը:

YERVANDASHAT



ԵՐՎԱՆԴԱԿԱՏ

Երվանդ Վերջին թագավորը մ. թ. ա. 220 թվականին բարձրանալով Հայաստանի՝ ժամանակի ընդարձակ պետություններից մեկի¹ գահին, ձեռնարկում է հսկայածավալ շինարարություն: Նախ, Այրարատյան Շահանգի Երասխանոր գավառում, որը Արաքսը և Ախուրյանը միախառնվում են, բլրի վրա կառուցում է նոր մայրաքաղաք Երվանդաշատը: Մայրաքաղաքի տեղափոխության հիմնական պատճառը Խորենացին համարում է Արաքսի հովի փոփոխումը, որի հետևանքով քաղաքի բնակչությունը զրկվել էին ջրից: «Եվ ձմեռն երկարելիս, երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում, վտակը սառչում էր բոլորովին, և թագավորանիստ տեղի համար խմելու բավական չուր չէր ճարիւում: Մրանդ Երվանդը նեղվելով, մանավանդ ավելի ամուր տեղ փնտրելով՝ արքունիքը տեղափոխում է դեպի արևմտյան կողմը...»²: Բայց այս տեղափոխությունն ավելի շատ ուազմաքաղաքական բնույթ ուներ: Երվանդը միջնաբերդն օղակում է բարձր պարիսպներով, պղնձակոփ և ամուկու դրներով ամրացնում քաղաքի մուտքերը, մինչև բլրի հատակը անցքեր փորում, որպեսզի Երվանդաշատի պաշարման դեպքում հնարավոր լինի գետից չուր ստանալ:

Երվանդի զամբ երերուն էր, և դավադիրներից գգուշանալով, նա միջնաբերդում բազմաթիվ գաղտնի որոգայթներ է շինել տալիս³: Երվանդի բուռն շինարարությունից քանինեկ դար հետո, հայ ճարտարապետության անխոնջ հետազոտող, մեծանուն գիտնական Թորոս Թորամանյանը գրել է. «Ավերակները մինչև այժմ գոյություն ունեն և զարմանք են պատճառում այցելուին ոչ միայն դիրքի ամրության համար, այլև բերդապարսպի մեջ բազմաթիվ բնակության բաժանումների համար, որ կնշանակեն, թե Երվանդն իր ապահովության համար ինչքան համակիրներ հավաքել էր այդ ընդարձակ բերդին մեջ:

Բերդապարհապները նախաքրիստոնեական ձևով անշաղախ վիթխարի որձաքարերով շինված էր, սակայն մի առավելություն ևս ուներ, որ բոլոր քարերը միմյանց կապված էին երկաթով:

...Պետք է ասել, որ մինչ քաղաքից մի քանի նմուշներ մնացած են ստորոտում, որոնք ամուր որձաքարով շինված են, վիթխարի քարերից դուռ բարավորներ կան բնակարանների մուտքի համար, միայն թե այլևս վրաները ծածկույթ չունեն...»⁴:

Երվանդը նոր մայրաքաղաք է տեղափոխում արքունի ողջ հարստությունն ու Արմավիրի բնակչության մի մասը: Թագավորից դժգոհ էին նաև անարարներն ու ծողովուրդը և երկյուղ կրելով, որ զինաբերությունների ու հեթանոսական տոների ժամանակ անհնար կլինի ապահովել իր անվտանգությունը, Երվանդը մեհյանների հարստությունն ու աստվածների արձանները տեղափոխում է Բագարան⁵:

Նոր մայրաքաղաքին շատ մոտիկ, Արաքսի աջ ափին, նա կառուցում է նաև Երվանդակերտ հաստակերտը: Այստեղ էին բնակվում թագավորի ընտանիքը, մերձավորները, թիկնապահներն ու սպասավորները: Արքունի այս ձեռակերտի մասին Խորենացու Եկարագրությունը նրա պատմության ամենագողտրիկ էջերից է. «Ինձ համար քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նոյն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ Առինվաճքով: Որովհետև մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, հնչան աչքի բիբը, իսկ բնակության շորջը կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շորջն աչքի մոլու բուրակը: Խակ այգիների բազմությունը նմանվում էր խիս արտևանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը հսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերին: Խակ հարա-



Արարատ լեռ,
Նկարիչ՝ Շառլ Տեքսիե,
Փարիզ, 1842 թ.:

Վային կողմից հարթ դաշտերը (հիշեցնում էին) ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերանում էր մի բերանը՝ իր երկու շրթունքներով»⁶:

Ծուտով քաղաքական լարված պայմաններում ծագեց Արտաշեսի պատրազմը Երվանդի դեմ: Այն հրահրեց Սելևկյան Անտիոքոս Երրորդ թագավորը, որը ցանկանալով Սելևկյան գերիշխանությունը վերահաստատել Փոքր Ասիայի վրա, շանում էր վերջ տալ Հայաստանի անկախությանը: Արտաշեսը Անտիոքոս Երրորդի զորավարներից էր: Նա մ. թ. ա. 201 թվականի գարնանը պատերազմ է սկսում Երվանդի դեմ: Երվանդը շտապ զորք է գումարում, օգնություն ստանում Վրաստանից, Միջագետքից ու Կեսարիայից⁷: Զրավարարվելով՝ դրանով՝ վարձկաններ է հրավիրում, առատորեն վարձատրում հայոց նախարարներին, որ օրհասի պահին չըեն իրեն, բայց շատերն են անցնում Արտաշեսի դրոշի ներքո: Խորենացին մանրամասն է նկարագրում այս բախտորոշ ճակատամարտը, որից հետո շուրջ երկու դար Հայաստանը ընդարձակվում էր և հզորանում: Արտաշեսի համախոհները Երվանդի «զորքերի բազմությանը նշանակություն չեն տալիս, միայն Սուրացյան Արգամից էին ակնածում, որովհետև քաջ մարդ էր և իր իշխանության տակ ուներ բազմաթիվ հիգակավորներ: Եվ Երվանդի բանակն ավելի քան երեք հարյուր ասպարեզ դեպի հյուսիս հեռու էր իր քաղաքից և գրտեցվում էր Ախուրյան գետի ափին: Երվանդը երր լսեց (Սմբատի մոտենալը), նրա դեմ հանեց իր զորքերի բազմությունը և ճակատ կազմեց իր բանակից ոչ հեռու: Իսկ Արտաշեսը Սուրացյան նախապետին պատգամ ուղարկեց հաստատում երդումներով, որ նրան կթողնի, ինչ որ նա ստացել է Երվանդից, և էի որից բաներ կավելացնի, միայն թե նա Երվանդին լրի, մի կողմ քաշվի:

Երբ Արտաշեսի դրոշակները Երվանդի զորքի ճակատի առաջ երևացին, Արգամը հետևակների բազմությունն առավ ու մի կողմ քաշվեց: Իսկ Սմբատը հրամայեց պղնձե փողեր հնչեցնել և իր զորքի ճակատն առաջ շարժելով պլացավ. ինչպես արծիվը կարպաների երամի վրա: Իսկ հայոց նախարարները, որոնք (Երվանդի ճակատի) աջ և ձախ թերեն էին կազմում, խառնվում միանում են նրա հետ: Վրաց զորքերը թեպետ իրենց Փարաման թագավորի հետ հանդուգն հարձակում գործելով ընդհարվեցին, բայց շուտով եւս փախան: Այդուել պետք էր տեսնել Երվանդի գնդի և Միջագետքի զորքերի սարսափելի կոտորածը: Երկու ճակատներն իրար խառնվելիս Արտաշեսի դեմ են գալիս տավրոսից քաջ մարդիկ, որոնք մահն աչքերն առած՝ Երվանդին խոստացել էին, թե Արտաշեսին կապանեն: Սրանց հետիւնն պատահում է Գիսակը՝ Արտաշեսի դայակի որդին, և մեջ մտնելով նրանց սպանում է և հաղթություն է տանում, որի ժամանակ նրա երեսի կեսն էր սրով կտրում են, և նա մեռնում է այսպես: Մնացած զորքերը փախուստի են դիմում:

Իսկ Երվանդն իր ձիով շատ ասպարեզներ անցնելով և իր բանակից մինչև քաղաքը շինված իշխանները նորանոր ձիեր փոխելով, փախչում էր իշխանից իշխան: Սմբատը էլ նրան հետամուտ լինելով՝ սաստկապես հալածում է գիշերով մինչև քաղաքադուրը: Իսկ մարաց զորքերը Երվանդի գնդի կողմն անցնելով՝ մթության մեջ բանակ են դնում դիակների վրա: Արտաշեսն էլ հասնելով Երվանդի վրանը, որը նա շրջափակել էր կտավով ու կաշվով, իջավ և այն գիշերը նրա վրանում մնաց: Իսկ երբ լուսացավ, նա



Արարատը և Արաքս,
Նկարիչ՝ Փ. Բ.՝
1859 թ., Փարիզ:

տիրաբար կարգադրելով հրամայեց սպանվածներին թաղել: Այն հովիտը, որտեղ (մարաց) զորքերը դիակների վրա բանակ դրին, կոչեց Մարաց մարզ, իսկ ճակատամարտի տեղը՝ Երվանդավան, իբր թե այսունի վանեց Երվանդին. այսպես էլ կոչվում է մինչև այսօր: Ապա գնաց Երվանդի քաղաքը...

...Եվ երբ քաշերն սկսեցին ամրոցի դեմ կովել, ամրոցի մարդիկ անձնատուր եղան և քաղաքի դուռը քացին»⁸: Արտաշեսի զինվորներից մեկը դաշույնով սպանում է Երվանդին: Արտաշեսը թեև թշմամի էր Երվանդին, բայց գիտակցելով, որ հայոց խագափորը չէր կարող անշիրիս մնալ, հրամայում է թաղել և մահարձան դնել: Կարեւոր էր և այն, որ Արտաշեսը իրեն ևս Երվանդունի էր համարում և հետագայում տեղադրած սահմանաքարերի վրա⁹ արված արամեներն արձանագրություններում իրն անվանում էր Երվանդավան¹⁰:

Ծուտով գրավվում է նաև պետության պաշտամունքային գլխավոր կենտրոն Բագարանը:

Կարծես թե իրականանում էր Սելևկյանների ձգտումը՝ վերացնել Հայաստանի անկախությունը: Հայոց աշխարհի արևմտյան մասում ուազմավարչական կառավարիչ է նշանակվում Զարեհը, իսկ արևելյանում՝ Արտաշեսը: Բայց Անտիոքոսը սխալվեց: Ծուտով Արտաշեսը Հայաստանն անկախ հոչակեց, դառնալով Արտաշիսյան հարստության հիմնադիր: Նա կառուցեց հայոց չորրորդ մայրաքաղաքը՝ Արտաշատը:

Երվանդի մահից հետո էլ գոյատնեցին նրա կառուցած քաղաքները: Մինչև չորրորդ դարը Երվանդաշատը Հայաստանի խոշոր քաղաքներից էր, բայց պարսից Շապուհ Երկրորդի զորքերը, ինչպես Փակստոս Բուզանդն է գրում. «առան Երվանդաշատ մեծ քաղաքն էլ, այստեղից դուրս քերին քան հազար տուն հայ... իսկ քաղաքը հիմնաթատկ կործանեցին»¹¹: Հետագայում Երվանդաշատն անշրանդով, վերածվում է փոքրիկ բնակավայրի:

1827 թ. դեկտեմբերին ոռուական բանակի մի քանի բարձրաստիճան սպանների հետ այդ գյուղում հյուրընկալվելով՝ դեկարթիստ Ե. Լաշինովը գեղանկարչութեն և մեծ ոգեշնչումով է նկարագրում Երվանդաշատի շրջակա բնությունը. «...Գիշերեցինք... Հաշի-Բայրամ (Երվանդաշատ) գյուղում: Այս ճանապարհի վրա շրջակայքի սարերից մի քանիսը կարմրավուն են դառնում կանաչ և դեղին շերտերը ծովզում են կարմրի հետ: Դա հյութալի խոտի կանաչը չէ, թառամած խոտի դեղնությունը չէ, այլ մանրախճի թանձր գույնն է: Հազիվ թե որուէ տեղ կարենի լինի տեսնել լույսի և ստվերների ճաման միացում:»

Ալիքավոր տեղանքը և շատ գարդարված սրածայր բլուրներն անասելի գեղեցիկ են: Հանճար-պուտը սքանչելի կերպով կնկարագրի այս կախարդի տեղերը, հանճար-նկարիչը կզմայլեցնի նրանք պատկերելով: Բայց բնությունն ընդօրինակողներ՝ Թողե՛ք գրիշները, Շետե՛ք վրձինները ձեր հիմանալի է ձեր արվեստը, բայց կախարդութիւնը բնության արվեստն անզուգական է: Որտե՞ղ դուք կտեղավորեք նրա ստեղծագործությունները զարդարող բոլոր մանրամասնությունները: Ինչպես կյանք կտաք ձեր գործներին: Քյոոողլու գեղատեսիլ լեռնաշղթան իր վրա է բնեուում մարդու հայացքը, բայց նրա գեղեցկությունը գիշում է շրջակայքի գեղեցկությանը և վերջին բարձունքից հիանքան տեսարան է բացվում Արաքսով ոռոգվող Բարթավայրի վրա, որի (Արաքսի) կոհակներին է նայում Կըզլ-Դաղ (Կարմիր սար) բարձր, սրածայր լեռը: Այս ժայռների շերտերը և առհասարակ մնացած



Երվանդակերտ.
Նկարը՝ Թեսդների:



ամբողջ լեռնաշղթան անհման են: Կըզլ-Դաղի փեշի մոտ, Արաքսի ափին կա երկու ոտնաշափից պակաս մի ծանծաղուտ, ապա քարքարոտ կածանը տանում է դեպի Հաջի-Բայրամ գյուղը, որտեղ կա փոքր ու վատ ամրություն: Այստեղ Արփաշայն իր ջրերն եւ թափում Արաքսի մեջ, իսկ նրանց վրա խոյացած սարերը մեզ բաժանում են Թուրքիայից:

...Հաջի-Բայրամից ճանապարհը Արփաշայով բարձրանում է դեպի վեր և չափազանց անհարմար է նոյնիսկ գրաստարենների համար: Ժայռերը կախված են նրա վրա: Հսկայական քարերը փակում են ճանապարհը, ձին չգիտե որտեղ դնի ոտքը՝ մի անզգույշ քայլ, և մոտ է ճանապարհորդի մամը, իսկ տանջանքներն անխուսափելի են: Ուր վերստի վրա Արփաշայը կրտսուկ թերվում է դեպի ձախ, ամեն կողմից բարձրացած ամեն լեռները վախեցնում են անսովոր մարդուն: Քարից-քար սանդուղքներով բարձրանալով սարը, դուք Սարդարապատի հարթավայրում եք»¹²:

Երվանդաշատն ու Երվանդակերտը, գտնվելով սահմանամերձ գոտում, քիչ են ուսումնասիրվել¹³: Մինչև օրս էլ Բաղրամյանի շրջանի Երվանդաշատ գյուղի մոտ պահպանվել են նրա պարիսպների, տարրեր շինությունների, ճարտարապետական համալիրների հետքերը, միջնադարում կառուցված երկու եկեղեցու փլատակներ և խաչքարեր:¹⁴ Արքունի ամրոց Երվանդակերտին նույնպես բախտը շմպտաց¹⁵: Որոշ ժամանակ դառնալով Կամսարական նախարարական տաճ սեփականությունը¹⁶, նա նոյնպես կիսեց Երվանդաշատին հասած օրինամերն ու ճակատագրի հարվածները: Հենց Երվանդակերտում է 1804 թ. շահ Արամ իր խորհրդակիցներին հայտնում, որ որոշել է հայերին տարագրել Պարսկաստան, որպեսզի թուրքական բանակը, երբ երկիրը գրավի, սնվելու ու թալանելու ոչինչ չգտնի¹⁷: Ախորյանի և Արաքսի միախառնման վայրում, նրանց ժայռակերտ ափունքին, ապառաժների և այգիների մեջ պահպանված պարիսպների ու պալատների ավերակները միայն տիսուր խորհրդածությունների առիթ են տալիս: Բոլորովին այլ կերպ դասավորվեց Բագարանի ճակատագիրը: Նրան վիճակված էր դառնալ հայոց ութերորդ մայրաքաղաքը:



ARTASHAT



ԱՐՏԱՀԱՅ

Թոթափելով Սելևյանների լուծը, Արտաշես Առաջինը մ. թ. ա. 189-ին իրեն հոչակեց Մեծ Հայքի թագավոր: Այն ժամանակ Մեծ Հայքից բացի կային և երեք հայկական թագավորություններ՝ Կոմմագեննեի, Ծոփքի և Փոքր Հայքի, որոնք բոլորն էլ միաժամանակ անկախ հոչակվեցին: Արտաշեսին հաջողվեց մեծապես ընդարձակել երկիրը, հասնել Սև և Կասպից ծովերի ափերը, բայց միասնական հայկական պետություն նրան վիճակված չէր ստեղծել¹, այդ իրագործեց նրա թոռը՝ Տիգրան Մեծը: Արտաշեսը մեր ծողովորի պատմության ընթացքում հանդես եկած քաղաքական և ուզմական ամենախոշոր գործիքներից էր: Նա էր, որ միավորեց Հայաստանի մեծ մասը, այնպես որ «բոլորը միալեզու եղան»²: Թագավոր դառնալով, նա առաջին հերթին հիմնադրեց նոր մայրաքաղաք՝ Կոչելով Արտաշատ: Այժմ դրվար է ասել, թե երբ է դրվել քաղաքի առաջին քարը. ենթադրվում են տարբեր թվականներ՝ մ. թ. ա. 189 թ., 185 թ.³, 180—170 թթ.⁴, 166 թ.⁵ և այլն: Նախընտրելին, թերևս, 189 թ. է, քանզի, ինչպես Ստրաբոնը ու Պլուտարքոսն⁶ են վկայում, քաղաքի կառուցման վայրը ընտրել է հին աշխարհի համավոր զորավարներից մեկը՝ Կարթագենցի Հաննիրալը, իսկ նա Արտաշեսի մոտ կարող էր հոռմեացիներից ապաստանել հենց այդ թվականին⁷: Հայ Պլուտարքոսի, «կարթագենցի Հաննիրալը եկավ Արտաշես Հայի մոտ և հրամանգիշ խորհրդատու դառավ քազմաթիվ օգտավես գործերում: Բացի այդ, այս երկրում նկատելով չօգտագործված ու անտեսված հարմարավետ ու խիստ հաճելի մի վայր՝ այդ տեղում ուրվագծեց քաղաքի հատակագիծը: Հաննիրալը տարավ Արտաշեսին, ցույց տվեց հատակագիծը և համոզեց հիմնել այդ տեղում քաղաք: Թագավորն ուրախությամբ համաձայնեց և խնդրեց, որ նա իր վրա վերցնի այդ գործի նեկավարությունը: Այսպիսով կառուցվեց մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք, որն անվանվեց թագավորի անունով և հայտարարվեց Հայաստանի մայրաքաղաք»⁸:

Իսկ Ստրաբոնն ավելի մանրամասն է նկարագրում նորակառույց Արտաշատը, որը «գեղեցիկ է շինված և երկրի թագավորանիստ քաղաքն է: Նա գտնվում է գետածոցում, որը նման է թերակղզու և նրա շուրջը, բացի պարանոցի մասից, գետի առջև ձգվում է պարիսարը, իսկ պարանոցը փակված է խրամով և պատվարով»⁹: Այս նկարագրության մեջ սխալներ չփնտռելու համար հիշեցնենք, որ Արաքսը քանից փոխել է հունը, և Ստրաբոնի ժամանակներում Արաքսն ու Մեծամորը, որոնք շատ ավելի ջրառատ էին, միախառնում էին՝ ստեղծելով մի գեղատեսիլ թերակղզի, որի վրա էլ կառուցվել է Արտաշատը: Պատկերացնելու համար, թե այն ժամանակ ինչ հզոր գետ էր Մեծամորը, ասենք, որ նրան էին միախառնվում Քասախը, Հրազդանն ու Ազատը¹⁰: Այնպես էր նաև Խորենացու ժամանակ, որը ևս հցում է, որ Արտաշատը հիմնադրվել է Արաքսի և Մեծամորի միախառնման վայրում¹¹: Տեղանքն, հիրավի, հոյակապ էր ընտրված, վեհափառ Արաքատին ակնետ բլուրները, որ բրոնզեդարյա լքված քնակավայր էին¹², երկրի մայրաքաղաք լինելու ամենագեղատեսիլ վայրն էր: (Հետագայում այդ բլուրներից մեկի վրա կառուցված Խորվիրապի վանը հիացնում է իր անկրկնելի դիրքով): «Հայկական Կարթագենը», ինչպես Արտաշատն անվանեցին ժամանակակիցները, միասնական հատակագիծ է ունեցել, եղել է ժամանակի խոշորագույն և գեղեցկագույն քաղաքներից:

Նկարագրելով Արտաշատի հիմնադրումը, Խորենացին գրում է, որ Արտաշեսը «ըլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ: Արաքսն էլ օգնում է անտարի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնուն մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը:



Արտաշտում գտնված
Տրյանոսի լատիներեն
արձանագրություն:

Արտաշես Առաջինի
սահմանացարը՝
արձանագրությամբ,
մ. թ. ա. II դ.:

Բայց Ապոլոնի արձանը կանգնեցնում է քաղաքի դուրս՝ ճանապարհին
մոտ:

...Երվանդի քաղաքի ամբողջ վայելչությունները, ինչ-որ նա փոխադրել
էր Արտաշատը, և ինչ-որ հենց ինքն էր շինել, բերում է Արտաշատ և ավելի
շատ քան էլ իր կողմից շինելով՝ սարքավորում է իրեն արքայանիստ քա-
ղաքը¹⁴:

Արտաշեսը քաղաքը շրջափակում է հսկայածավալ պարիսպներով, բայց
շուտով Արտաշատն այնքան է տարածվում, որ դաշտավայրով մեկ փուլում
են նրա արվարձաններն ու այգիները: Կառուցվում են նաև քազմաթիվ պա-
լատներ ու տաճարներ և, իჩարկե, քաղաքի պահապան աստծուն՝ Անահի-
տին նվիրված մեխյան:

Տիգրան Մեծի օրոք (մ. թ. ա. 95—55 թթ.) Հայաստանը դարձավ աշ-
խարհակալ տերություն: Արտաշատը մնացել էր պետության հյուսիսում, և
թագավորության կենտրոնական մասերում նոր մայրաքաղաք ունենալու պա-
հանջ էր առաջացել: Եվ Տիգրանը մ. թ. ա. 80-ական թվականների վերջին
հիմնադրում է Տիգրանակերտը: Ստեղծվում է մի իրավիճակ, որ կարծես
Տիգրանակերտը դառնում է ողջ թագավորության, իսկ Արտաշատը՝ բուն
Հայաստանի մայրաքաղաքը: Հատկանշական է, որ Տիգրանը դրամահա-
տարան ուներ և Տիգրանակերտում, և Արտաշատում: Նրա օրոք ավելի է
քազմամարդ դառնում քաղաքը, որը բնակեցվում են հազարավոր արինս-
տավորներ ու առևտրականներ:

Արտաշատը բուն զարգանում է նաև Տիգրան Մեծի որդու՝ Արտավազ-
նի օրոք: Ըստ երևության, հենց նա է կառուցել Արտաշատի ամֆիթատրոնը¹⁵:

Հոռմին դիմագրավելու նպատակով Արտավազոյ դաշնակցում է պար-
թևներին և իր քրոջ կնության տալիս պարթևական թագաժառանգ Բակու-
րին: Այդ առիթով տղամահանդեսներ և խնջուքներ են կազմակերպվում, որոն-
ցից մեկի ժամանակ՝ մ. թ. ա. 53 թվականին, երբ պարթև Օրոդես արքան և
Արտավազոյ դիմում էին Ցասոն ողբերգակի ու նրա խմբի Յերկայացրած
Եպիպիտեսի «Բարոտուիթիները», ներս է մտնում Սիլլակ սատրապը և գե-
տին նետում Սպարտակի ապստամբությունը դաժանորեն ճնշող հոռմեացի
զորավար Մարկոս Կրասոսի գլուխը: Նկարագրելով այդ պահը, Պլուտար-
քոսն ասում է, որ Արտավազոյն ինքն էլ ողբերգություններ, ճառեր և պատ-
մություններ եր գրում, որոնցից մի քանի պահանջել էին նաև Արտա-
վազոյից շուրջ երկու դար հետո ապրած Պլուտարքոսի ժամանակ¹⁶:

Որքան քաղաքը ծանկում էր ու շենանում, այնքան իրեն էր գգում օտար
ավարտունների: 58 թվականին հոռմեացի Կորրուլոնը հարձակվելով Բայցո
աշխարհի վրա, գրավում է Արտաշատը¹⁷: Զմեռելուց հետո հոռմեացիներն
ուղղվում են դեսպի Տիգրանակերտ, մինչ այդ Կործանելով հոչակավոր քա-
ղաքը, թեև բնակիչներն իրենք են բացում դարպանները¹⁸: Հոռմեացի պատ-
միչ Տակիտոսն այսպես է փորձում արդարացնել այդ բարբարոսական արար-
քը. «Արտաքսատան (Արտաշատը) հրդեհվեց, քարութան արվեց և հավա-
սարվեց հողին, որովհետև պարիսպների ձգվածության պատճառով առանց
ուժեղ պահակազորի չեր կարելի պահել այն, ոչ էլ մենք այնքան ուժ ունեինք,
որ զորքը բաժանվեր թե՝ պահակազորն ուժեղացնելու և թե՝ պատերազմը
վարելու համար, իսկ թե մայրաքաղաքը անվթար մնար և առանց պահա-
կազորի, ոչ մի օգուտ և փառը չկար նրանից, որ քաղաքն առնված է»¹⁹: Թե
ինչպիսի հսկայական նշանակություն էին տալիս Հոռմը և նրա կայսր Նե-
րոնը Արտաշատի գրավմանն ու պարտավորության վեջանում է նոյն Տակիտոսը.
«Այս հաղորդյան պատճառով ներոնը բարձրածայն ուղղունվում է իրեն
իմաստառոր, ծերակույտի որոշմամբ, մադամը է կատարվում, որոշվում է...
արձաններ կանգնեցնել, հաղորդակամարներ կառուցել... որ տղամակն հայ-
տարարվեն թե տարած հայուանակի, թե այդ մասին հայտարարվելու և
գեկուցելու օրերը, ինչպես նաև ընդունվեն այլ, նման որոշումներ...»²⁰: Բայց
ընդամենը յոթ տարի հետո Ներոնը ինքը 50 միլիոն դիմար և քազմաթիվ
հմուտ վարպետներ է տալիս Տրդատին՝ ավերված քաղաքը վերականգնե-
լու: Ներոնի այս առատածենությունը, իչարկե, պայմանավորված էր նրա-
նու, որ հայ-պարթևական միացալ ուժերը Հռանեայի մոտ հաղթեցին հոռ-
մացիներին, և Ներոնին մնում էր իր իսկ ծեռով Հոռմում քադ դեմք Տրդ-
դատի գլխին և շոայորեն ընծաներ մատուցել Բայց արքային: Կայսեր ցան-





կությամբ քաղաքը պետք է կոչվեր Ներոնիա, սակայն այդ անունը շուտով մոռացվեց²¹:

Նկարագրելով Տրդատի պատվիճ Հռոմում կազմակերպված շրահան-նեսները, Դիոն Կասիոսը զարմացած ավելացնում է, որ մի անգամ Տրդատը ըմբշամարտի և բռնցքամարտի տարրերից կազմված մենամարտ՝ պանկրա-տիոն դիտելիս, տեսնելով, որ մենամարտողներից մեկը Վայր ընկելուց հե-տո ծեծվում է, բացականչում է. «Մարտն անարդար է, քանզի արդար չէ ընկնողին ծեծելը»²²: Հաղթանակի հասնելու համար Միջոցների խորություն չհնող հոռմեացիներին, իհարկե, դա տարօրինակ պիտի թվար:

Վերականգնելով Արտաշատը, Տրդատն այն դարձնում է ավելի մեծա-շուր, մանավանդ որ տեսել էր հին աշխարհի ամենանշանակոր քաղաքնե-րից մեկը՝ Հռոմը: Ծուտով հայոց գամին է քազմում Վաղարշ Առաջինը (117—140 թթ.): Կարծես արդեն զգրված օրենք էր, որ նոր թագավորը նոր մայրաքաղաք հիմներ, և Վաղարշը կառուցում է Վաղարշապատն ու այն-տեղ տեղափոխում արքունիքը: Բայց Արտաշատը, ինչպես Տիգրանակեր-տին, այնպէս էլ Վաղարշապատին զիջեց առաջնորդյան դափնին:

Զանցած մի քանի տասնամյակ, 163 թ. հոռմեացիները նորից են ար-շավում Հայաստան, պաշարում և համար գրոհներից հետո գրավում Ար-տաշատը, կողոպտում ու ավերում²³: Արտաշատը թեշտությամբ չի նվաճվել: Խորվիրապի բլուրների դեռևս մակերեսային պեղումներից հայտնաբերվել են հազարավոր հետալաքներ. անկասկած, քաղաքի համար արյունաթեղ մարտեր են մղվել: Միայն մեկ բլուրում գտնվել է տարբեր ձևերի ու շա-փերի 3 000 հետալաք, իսկ փողոցներից մեկում՝ 1700 հետալաքի մի կույտ, նաև սրերի, տեգերի, դաշույնների մնացորդներ²⁴:

Պեղումների ժամանակ հնագետները հայտնաբերեցին նաև Արտաշատի քաղաքային դրամներ՝ «Արտաշատ մայրաքաղաք» մակագրությամբ: Դրա-մի կողմում պատկերված էր քաղաքի աստվածութին՝ Անահիտը, մյու-սում՝ հաղթանակի թևավոր դիցութին²⁵: Այդ հաստատում է, որ Արտաշատի դրամահատարանը գործել է ավելի քան երկու դար՝ Տիգրան Մեծին մ. թ. երկրորդ դար²⁶: Այն, որ քաղաքի ավերումից և հոռմեացիների կողմից Վաղարշապատը մայրաքաղաք հոչակվելուց ուղիղ քան տարի անց՝ 183 թ. Արտաշատը հատել է հատուկ դրամ, վկայում է, որ անցած տասնամյակ-ների ընթացքում այն կրկին հատել էր մոխիներից, վերաշինվել և շարու-նակում էր առաջնային դեր խաղալ երկրի տնտեսական կյանքում ու մի-ջազգային առևտություն: Գտածն հուշում է նաև, որ Արտաշատն ունեցել է քաղաքային ինքնավարություն²⁷: Այդ և հետագա տարիներին Արտաշատը հայոց ամենամեծ քաղաքն էր, նրա թաղամասերը հսկայական տարածք էին գրադեցնում հասնելով մինչև Արարածի ափերը, ձգվում մինչև Երևակյիս Լու-ստառա, նոր կյանք ու Փոքր Վեհի գյուղերի ամամանեները²⁸: Տները հողե-նարք տանիքով էին կամ կղմինդրածածկ, սենյակները՝ սալահատակված²⁹: Քաղաքն ուներ շեռուցվող քաղնիքներ, կրակարանից ծովսը կավե խողո-վակներով անցնում էր քաղնիքի հատակով ու պատերով և տաքացնում դրանք³⁰: Քաղաքի միջնաբերդը գտնվում էր Խորվիրապի բլրի վրա և ուներ երկշար պարիսպ, որն այնպէս էր կառուցված, որ վտանգի պահին այն վե-



Հռոմում հատված
արժաքը դրամ՝
«Հայաստան նվաճված-
մակագրությամբ»:

Արտաշատի քաղաքային
դրամ, մ. թ. ա. 11 դ.:



բածում էր առանձին բերդերի⁸¹: Միջնաբերդում էր գտնվում արքունի դրյակը, նաև նշանավոր բանտը՝ այն հսկայական քարապատ փոսը՝ խոր վիրապը (խորությունը՝ 6 մ, տրամագիծը՝ 4,4 մ), որը նետում էին մահապարտներին: Ազգաբանգեղոսի վկայությամբ, նախքան քրիստոնեությունը ընդունելը, երրորդ դարի վերջերին հայոց Տրդատ թագավորի հրամանով Գրիգոր Լուսավորչին տարան «Արտաշատ քաղաքի բերդի դղյակը և իշեցրին ներքին վիրապը, որի խորությունից դուրս գալ անհնարին էր»⁸²: Այնուհետև «այն տասներեք տարիներում, որ Գրիգորը մնաց բանտի բերդում և Խոր վիրապում, մի այդի կին, որ այդ բերդում էր, երազում հրաման ստացավ, որ օրական մի նկանակ պատրաստելով՝ Խոր վիրապից վայր գցեր: Այսպիսով՝ Աստծու հրամանով նա կերակրվեց այնտեղ մնացած տարիներին: ...Նակայ մարդիկ, որոնք մի անգամ այնտեղ իշեցված էին, բոլորը մեռել էին՝ դժմանակ, մեղծոցից, անտանելի տեղի, թանձր տիղում, օձախառն ու խորունկ լինելու պատճառով»⁸³: 301 թ. քրիստոնեությունը պետական կրոն Ռոշակելուց հետո, Տրդատ թագավորն ու Գրիգոր Լուսավորչը զորքի գույնն անցած՝ պվերեցին հեթանոսական մեհյաններն ու բագինները: Զինայլեցին նաև Արտաշատում գտնվածները: Ինչպես Ազգաբանգեղոսն է պատմում, «Թագավորն ամբողջ զորքով հանդերձ, Վաղարշապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը՝ պվերելու այնտեղ Անահիտ դիցություն բագինն և այն, որ Երազամուն կոչված տեղերում էր գտնվում: Նախ ճանապարհին հանդիպեցին... Երազացոյց, Երազահան պաշտամունքի Տիր աստծու ճարտարության ուսման մեհյանը և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, պվերել»⁸⁴:

Որ նոր կրոնի հաղթարշավը անարյուն չի եղել և ճախճաց հավատքին հավատարիմ արտաշատցիները զինավառ դիմադրել են, կրկին վկայում է Ազգաբանգեղոսը, որն Անահիտի մեհյանը պաշտպանողներին դներ է անվանում. «Այնտեղ երևացին կերպարանակիուսված դեկր, այրուծիու բազմության ու հետևակազորի գնի կազմության ճմանությամբ, մկնդավորներ ու մուրճավորներ, առաջ էին ընթանում մարդկային կերպարանքով, Շիզակներով ու զինանշաններով, գենք ու զարդով զինավառ, մեծ գոչումով աղաղակ բարձրացրին և փախչելով ընկան Անահիտի մեհյանը: Այնտեղից հարձակվուների դեմ սկսեցին կովել շինվածքի վերևից ներքև մարդկանց վրա անուծ նետեր ու թանձրատարափ քարահոսք թափեցին, որոնցով և մի քիչ զարհութեցրին նորամավատ մարդկանց»⁸⁵:

Չորրորդ դարի երեսնական թվականներին նոր մայրաքաղաք Դվինի հիմնադրումից հետո Արտաշատն անդառնեն զիջում է դիրքերը: Երեք տասնամյակ անց, պարսից Շապուհ Երկրորդ արքան, խարեւությամբ գերելով հայոց Արշակ Երկրորդ թագավորին, 368—369 թթ. արշավում է Հայաստան, ավերում Արտաշատն ու բազմաթիվ այլ քաղաքներ ու բերդեր: Քաղաքին հասցված այս մահացու հարվածի մասին այսպես է պատմում Փավստոս Բուզանդը. «Եկան Արտաշատ մեծ քաղաքը, գրավեցին, նոր պարհապնդը կործանեցին. այնտեղ էլ պահված գանձերը առան և ամրող քաղաքը գերեվարեցին: Արտաշատ քաղաքից գերի տարան... քառասուն հազար տուն հայ: ...Քաղաքի շինություններից փայտաշենները կրակ տվեցին, այրեցին, քարաշենները քանդեցին, նոյնպես և պարհապնդը. քաղաքի բոլոր շինվածքները հիմնահատակ կործանեցին, ոչ մի քար քարի վրա չռողին, քաղաքը բնակչեներից քափուր, անմարդի, ավերակ դարձից»⁸⁶: Այնուհետև նայոց Պապ թագավորը (մոտ 358—374 թթ.) և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը քանից զախչախում են պարսկական զորքերին, վրեժինիր լինում Հայաստան աշխարհն արյան մեջ խեղողներից: Այն, որ 451 թ. Վարդանանց ապստամբության նախօրեին հայոց երևելիները, եպիսկոպոսներն ու քրիստոնեական խորհրդակցելու են հավաքվել Արտաշատում⁸⁷, իսկ պարսից դեմ պատերազմի հայոց զորքը Ավարայրի դաշտ է մեկնել Արտաշատից⁸⁸, վկայում է, որ երկրի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կյանքում ինչ մեծ դեր էր պահպանում Արտաշատը: Եղիշեի «մեծ Արտաշատն իր պահներով»⁸⁹ արտամայտությունը ևս հավաստում է, որ մինչերորդ դարում քաղաքն այնքան մեծ է եղել, որ հեռու ձգվող արվարձաններ՝ ավաններ է ունեցել:

Յոթերորդ դարում երեսնակի մեծ ու ծաղկուն քաղաքի տեղում դեռևս գոյատևում էր մի փոքրիկ բնակավայր, որի բնակիչներն զբաղվում էին որդան կարմիրի մշակությամբ: Արաբները Արտաշատն այդպես էլ անվանում էին՝ «որդան կարմիրի գյուղ»⁹⁰:

Նույն արդեն 1408 թվականին իսպանացի դիվանագետ Ռույ Գոնցալեց Կլավիխուի առջև փուզած էին միայն Ռոշակավոր քաղաքի պվերակները. «Ենուն զարկվայրի վրա տեսանք մի ընդարձակ քաղաքի պվերակներ, ուր, թվում էր, թե դարձրից ի վեր բնակչություն չի եղել, և մեկ փարսին հետու վորությունից, ամեն կողմից երևում էին այս մնացորդները: Մեզ պատմեցին, թե դրանք այն առաջին քաղաքի պվերակներն են, որը շրմեղելից

Արտաշատի պեղումները:



անմիջապես հետո միմնել են նոյն ու իր որդիները»⁴¹:

Կլավիխոն ևս հիշատակում է որդան կարմիրի մասին, ինչը վկայում է, որ 15-րդ դարում Արտաշատը շարունակում էր արդյունաբերել այդ արծերավոր ներկանելութը. «Լեռան ստորոտոց, հովիտներում գտնվում է կարմիր որդան, որով մետաքսը ներկում են բոստրագովն»⁴²:

Թեև Արտաշատը մարեց, բայց մինչ այսօր վառվում է այն կանթեղը, որ այնեց Գրիգոր Լուսավորիչը Խորվիրապում, որն արդեն տասնյոթ դար մայ ժողովրդի համար ուխտատեղի է: Այստեղ դեռևս 7-րդ դարում է Ներսես Գ կաթողիկոսը մատուռ կառուցել, որի ավերումից հետո, 17-րդ դարում հորն է կառուցվում, որը կանգուն է մինչև այսօր: Նոյն դարի է նաև Ս. Աստվածածին եկեղեցին⁴³: Արտաշատի միջնաբերդի տեղում կառուցված վանական համալիրն ունի նաև 13-րդ դարի հոգևոր կառույցներ՝ թվակիր և անթվակիր այլ շինույթուններ՝ սեղանատուն, զանգակատուն, պարիսպներ...

Խորվիրապի վաճքը մեր ժողովրդի համար հավատի ու գիտության լույս է տարածել. այստեղ 13-րդ դարում գործել է վարդապետարան, որը դասավանդում էր Վարդան Արևելցին: Դպրոցում ուսանում էր 40-ից ավելի աշակերտ, որոնցից առավել հայտնի են Ներսես Մշեցին, Գրիգոր Բալոնեցին, Հովհաննես Երզնկացին, Գևորգ Ակնացին (Լամբրոնացին), Գրիգոր Բջնեցին: Այստեղ գրվել են նաև ձեռագրեր, որոնց մի մասը պահպանվել է⁴⁴:

Դարերի ընթացքում Արտաշատը երկրի ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական, առևտրական ու արհեստագործական կենտրոնն էր: Գտնվելով միջազգային առևտրական ուղիների վրա, քաղաքն ապրանքներ էր ներմուծում հեռավոր Հնդկաստանից ու Միջերկրականի ափամերձ երկրներից, ինքն էլ արտահանելով իր քաղմահուտ արհեստավորների ձեռակերտերը⁴⁵: Արտաշատով էր անցնում հոչակավոր «Մետաքսն ուղին», որով Հրանդկաստանից, Զինաստանից ու Արևելքի այլ երկրներից առևտրականները երկար ճանապարհ կտրելով թերում էին բրինձ ու համեմունքներ, թանկագին քարեր ու գոհարեղեն, փղոսկր ու սև փայտ, բամբակ ու գործվածքնեն, պերճանքի իրեր: Խոկ Հայաստանից ու նրա մայրաքաղաք Արտաշատից էլ այլ երկրներ էին արտահանվում հացահատիկ ու գինի, կապար, պղինձ, անգա, ոսկեթել ու ոսկեկար շորեր, ոսկյա ու արծաթյա սպասք, գեղարվեստական իրեր, բուրդ, կաշի, ձիեր ու ջորիներ, դեղարույսներ ու ներկեր, սրաքարեր և այլն⁴⁶:

Հեղենիստական ժամանակաշրջանում Հայաստանում հաշվում էր շուրջ հիսուն արհեստ: Մայրաքաղաք Արտաշատում կային բազմաթիվ «գործոց տներ», որոնցում պատրաստված զենքերն ու զրահները⁴⁷, շքեղ գգեստները, կամիրասիներն ու պերճանքի առարկաները, ոսկյա զարդերը⁴⁸, բրուտագործական⁴⁹ ու մետաղագործական արտադրանքը⁵⁰, ապակյա անոթներն ու սրբակները⁵¹, կավե և բրոնզե արձանիկները⁵² ողողել էին քաղաքի շուկան ու խանութները, հասել Հայաստանի հեռավոր անկյունները: Արտաշատի հատուկ քաղամասում էր մշակվում նաև որդան կարմիր ներկը, որը շատ մեծ պահանջարկ ուներ մինչ աշխարհում:

Ժամանակի արհեստների, քաղաքի բնակչների սովորույթների և հավատալիքների մասին մեծ նյութ են մատուցում հատկապես դամբարանադաշտների պեղումները: Քանի որ իր գոյության ընթացքում Արտաշատը ընդարձակվել է, ապա նախկին գերեզմանոցները մնացել են քաղաքի տարած-



բում, երբեմն դրանց վրա բնակելի թաղամասեր կառուցվել, իսկ քաղաքից մեռու նոր գերեզմանոցներ հիմնել: Պեղումներից պարզվեց, որ արտաշատցիներն ունեցել են թաղման տարրեր ծեսեր, նայած թե որ դարին է Վերաբերում դամբարանը, կամ հանգույցյալը հարո՞ւստ, թե՝ աղքատ է եղել⁵⁴: Հին արտաշատցիներն իրենց հարազատներին թաղում էին կավե սարկոֆագներով, կարասներով կամ փայտե սովորական դագաղով: Նույնիսկ հանդիպում են դեպքեր, երբ թաղումները կատարվել են մենց տաճը, իոդէ հատակի մեջ⁵⁵: Դիակիզումը ևս Հայաստանում տարածված էր: Այս ծիսակարգը գոյատևել է ընդհուպ մինչև Հայաստանում քրիստոնեության ընդունումը: Արտաշատի դամբարաններից շատերում գտնվել են մարդկանց և զոհաբերված կենդանիների ածխացած ոսկորներ: Հենց դիակիզման ժամանակ էլ տրվում էր հոգեհաց, զոհաբերվում էին ընտանի կենդանիներ: Այնուհետև շարդվում էր հոգեհացի համար բերված սպասքը:

Նման ծեսը շատ թանկ էր, և քաղաքի աղքատ բնակիչները նախընտրում էին կարասային և այլ թաղումները⁵⁶:

Մեծահարուստներն այս մեղադրությունը հեռացողի համար զոհաբերում էին ոչ միայն կենդանիներ, այլև մարդկանց՝ ստրուկների, ծառաների, հարճների, երբեմն էլ կանանց, երեխաներին և այլն:

Արտաշատի հիմնադիր Արտաշես արքայի թաղման Մովսես Խորեացու նկարագրությունը ևս այդ է վկայում. «Միքա՛ն բազմություն մեռավ Արտաշեսի մահվան ժամանակ՝ նրա սիրելի կանայք, հարճները և մտերիս ծառաները, և ինչպէս բազմատեսակ շքեղ պատիվներ մատուցեցին դիակին, քաղաքակիրթ (ազգերի) կարգով, և ոչ թե բարբարոսների նման: Նրա դագաղը... ոսկեղեն էր, զար և անկողինը բերեզից և մարմինը պատող պատմուճանը ոսկեթել, գլուխը թագ դրած, ոսկյա զենքն առջեւ: Գահը շրջապատում էին որդիներն ու ազգականների բազմությունը, և սրանց մոտ զինվորական պաշտոնյաները, նախապետները, նախարարական գնդերը և ընդհանրապես զորականների վաշտերը, ամենքը զինված, որպես թե պատրաստվում են պատերազմի, առջևից պղնձե փողեր էին հնչեցնում, իսկ հետևից սևազգեստ ձայնարկու կույսներ և լալկան կանայք, բոլորից վերջը՝ ուսմիկների բազմությունը: Եվ այսպես թաղեցին: Նրա գերեզմանի վրա կամավոր մահեր էին լինում...»

...Արտաշեսի մահվան ժամանակ հեթանոսական սովորությամբ շատ կոտորածներ էին լինում. սրա վրա, ասում են, Արտավազդը նեղանում է և ասում է հորը.

Երբ դու գնացիր,
Ու ամբողջ երկիրը քեզ մետ տարար,
Ես այս ավերակների վրա
Ո՞ւմ թագավորեմ»⁵⁷:

Ցավոք, Արտաշատի դամբարանների պեղումներից նման շքեղ թաղում-

Կանց մարմարյա արձան,
Ձ. թ. ա. II-I դդ.:

Արարատը Խորվիրապից:





Արտավազի արքայի
պատկերով դրամ:

Արտավազի արքան
գահավիժում է
Ալոռի վիճ:



Շերի Բետքեր, ոսկե զար, թագ ու գենքեր չեն հայտնաբերվել, բայց գտնվել է ոսկյա տերևներից (22^o սոսնու, 4^o ծիթնու) հյուսված պսակ:

Գտնվել են նաև ոսկե շրթնակալներ՝ ոսկյա շրթնածն բարակ թիթեղիկներ, որոնք դրվում էին հանգուցյալի շրթունքներին, նաև ոսկե ականջօղեր³⁸ և այլն: Դամբարաններում հաճախ են հանդիպում նաև արդուզարդի առարկաներ՝ ովոնքներ, հայելիներ, ապակյա սրվակներ և այլն:

Խոկ ե՞ր են սկսվել Արտաշատի պեղումները: Երկար ժամանակ գիտնականները չեն կարողանում ճշտել աշխարհաբաշխակ քաղաքի տեղը: Վեճը լուծվեց միայն 1920—30-ական թվականներին, բայց դրանց հետո էլ կասկածները չեն փարատվում: Եվ դեռ կես դար էլ պիտի անցներ, որ պեսզի այստեղ հնագիտական աշխատանքներ սկսվեին: 1970 թ. հնագետներ Բ. Առաքելյանի, Գ. Տիրացյանի և Ժ. Խաչատրյանի գիտավորությամբ պեղումներ սկսվեցին Խորվիրապի բլուրներում և շրջակա դաշտավայրում³⁹: Հնագետների բրիչի ամեն մի հարվածը, ամեն մի գտածոն լրացնում է «Հայոց Կարթագենի», «Մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք» Արտաշատի պատմությունը, իսկ նորօրյա Արտաշատը նոր էջեր է գրում այդ պատմության մեջ:





TIGRANAKERT

ՏԻԳՐԱՆԿԵՐԸ

Տիգրան Առաջինի մահից հետո գամը ժառանգեց նրա որդին՝ Տիգրան Երկրորդը (մ. թ. ա. 95—55 թթ.): Հայկական բանակի գլուխն անցած՝ Տիգրան Երկրորդը (Մեծը) իրար եւսկից հապատակեցրեց հարևան Երկրներն ու թագավորությունները՝ Հայաստանի սահմանները հասցնելով Միջերկրական ծովի ափերից մինչև Կասպից ծով, Կուր գետից մինչև Միջազգետք: Նրա տերության մեջ խոսում էին տասնհինգից ավելի լեզուներով:

Տիգրան Մեծին շատ դիպոլ է բնութագրում պատմահայր Խորենացին. «Իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներին ցանկալի թէ՝ ինքը և թէ՝ իր ժամանակը»¹, ապա ավելացնում. «Մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ լօի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահնեներ. ուկու, արծաթի, պատվական քարերի, զգեստների և զանազան գոյնների գործվածքների՝ հարստություններ տղամարդկանց ու կանացն համար՝ առնասարակ բազմացրեց, որոնցով խիստ տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ աստվածանում էին: Հետևակ կովողները ձիավոր դարձան, պարսերով կովողներն՝ հաջող աղեղնավորներ, լախտերով կովողները զինվեցին սրբով ու տեգավոր նիզակներով, մերկները պատվեցին վահաններով ու երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու գենքերի փայլն ու շողքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու»²:

Որպեսզի Խորենացու նկարագրությունը չափազանցություն շրվա, դիմենք նաև Պլուտարքոսին, որը Տիգրանին ներկայացնում է բարի բուն իմաստով որպես արքայից արքա. «Նրա մոտ գտնվում էին շատ թագավորներ, որոնց ծառաների դիրքն էր դասել, իսկ նրանցից շորսին նաև մշտակեն իր մոտ էր պահում որպես ուղեկիցներ կամ թիկնապահներ. և երբ նա գնում էր ձիով, նրանք կարծ քիտոններ հագած վազում էին կողքից, իսկ երբ նրա տաճած էր լինում և գրադարձ պաշտոնական գործերով՝ ձեռքները կրծքներին խաչած կանգնում էին նրա երկու կողմում: Համարում էին, որ այդ դիրքը ամենավագ ձևով է արտահայտում նրանց ստրկական կախվածության լրիվ ընդունումը. այն ընդունողները տիրոջ տրամադրության տակ էին դնում իրենց մարմնի հետ միասին նաև իրենց ազտությունը և պատրաստակամությունը էին հայտնում ամեն ինչ հանդուրծել ու տանել առանց առարկությունների»³:

Ստեղծված պայմաններում, երբ Հայաստանն աշխարհի մեծագույն տերություններից էր դարձել, մայրաքաղաք Արտաշատը մնացել էր երկրի հյուսիսում: Տիգրանն իրեն նատավայր էր ընտրել այն ժամանակավա խոշորագույն քաղաքներից մեկը՝ Անտիոքը, որն ուներ շուրջ 500 հազար բնակիչ: Սակայն նա ցանկանում էր, որ հայոց մայրաքաղաքն ու իր նատավայրը նայկական հողում լինի, և մ. թ. ա. 80-ական թվականներին Աղձնիքում, Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակ Քաղիդր գետի հովտում, հիմնադրեց նոր մայրաքաղաք Տիգրանակերտուք⁴: Հայտ հույն պատմագիր Ապահանոսի, քաղաքը կառուցվում է Տիգրանի թագավորության վայրում⁵:

Ընդունված կարգի համաձայն, Տիգրանն իր նորակառույց մայրաքաղաքը բնեց Կիլիկիայի, Կապաղովկիայի և Ասորիքի մի շարք քաղաքների բնակչությանը: Այնտեղ բնակեցվեցին նաև բազմաթիվ հայեր և հայ ավագանու գերեկայացուցիչներ, որոնք արքային սիրաշամելու համար շռայրուն փող էին նվիրում քաղաքի շենացմանը, ոնին ապարանքները ու պալատներ կառուցում: Խճան Պլուտարքոսն է գրում, «Տիգրանակերտը վիթխարի քաղաք էր»⁶ և «ոյի էր գանձերով ու աստվածներին նվիրաբերված թանկարծք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծատոհմիները, ցանկա-

Զալով հաճոյանալ թագավորին՝ միմյանց հետ մրցում էին քաղաքի շինույան ու ընդարձակման համար»⁸:

Տիգրանը քաղաքը շրջափակեց 25 մետր բարձրության հաստարեսատ պարիսպներով, որոնց մեջ տեղափորված էին ախոռներ և այլ շինություններ: Արվարձանում կառուցեց իր պալատը, շուրջը՝ լճեր, գրուայգիներ, որսատեղեր ու մի հզոր բերդ:

Տաս-տասնինգ տարվա ընթացքում Տիգրանակերտի բնակչությունը հասավ շուրջ հարյուր հազարի¹⁰: Որոշ պատմաբանների ենթադրությամբ, քաղաքն ուներ նույնիսկ 300 000 բնակիչ¹¹, ինչը հավանական չէ, քանի որ այն նորաստեղ էր, և այդքան մեծ քաղաքը Լոկուլոսն իր ոչ մեծաթիվ զորքանակով չէր կարող պաշարել ու նվաճել: Տիգրանի արքունիքում էին ապրում հոյն փիլիսոփաներ, հոետորներ, պատմագիրներ, որոնցից հայտնի են միայն աթենացի հոետոր Ամփիկրատեսի և «քազմագիտուն» և ճարտասան» Մետրոդորոս Սկեփսիացու անունները¹²: Ամփիկրատեսը հեղինակել է «Տիգրանի վարքը», իսկ Սկեփսիացին՝ «Տիգրանի պատմությունը», որոնք, ցավոք, մեզ չեն հասել:

Ամա այս մթնոլորտում է կրթվել ու դաստիարակվել Տիգրանի որդին ու հաջորդը՝ Արտավազդ Երկրորդը: Հայու երևոյթին, թատերարվեստի հետ գրա ծանոթությունը կայացել է հենց Տիգրանակերտում, որտեղ մ. թ. ա. 70 թվականին թատրոն էր կառուցվել: Բայց առաջին հերկայացումը, որ պիտի տրվեր թատրոնը կառուցողի՝ Տիգրանի պատվին, ճակատագրի հեգմանքով հայուվեց հոռմեացի նվաճող Լոկուլոսին: Ամա թե ինչպես դա տեղի ունեցավ:

Մ. թ. ա. 59 թվականի գարնանը Տիգրանը գտնվում էր իր հսկայածավալ տերության հարավ-արևմտյան ծայրամասում: Նրա բանակը պաշարել էր Պատղոմայիս քաղաքը՝ Սելևկան Սելենն թագուհու նստավայրը¹³: Հարուստ ընծաներով Տիգրանի մոտ եկան հրեական Ալեքսանդրա թագուհու հեսապանները՝ նպատակ ունենալով Տիգրանին են պահել Պաղեստին արշավելու մտադրությունից: Ծուտով Պաղոմայիսը նվաճեց, և Սելենն թագուհին գերվեց: Թագավորն ու զորքը տոնում էին հայթանակը, երբ լուր ստացվեց, թե հոռմեական բանակը մտել է Հայաստան և սրբաց արշավում է դեպի Տիգրանակերտ: Հասնելով Տիգրանակերտ, Լոկուլոսը պաշարեց մայրաքաղաքը¹⁴: Տիգրանը վեց հազարանոց մի զորամաս ուղարկեց, որն անակրնկալի բերելով հոռմեացիներին, ներխուժեց քաղաք, այնտեղից վերցնելով արքայի կանանցն ու գանձերը, կրկին նեղքեց անցավ հոռմեացիների պաշարող շղթան¹⁵: Ծուրջ կես տարի քաղաքը հերոսաբար պաշտպանվում էր: Պարիսպներից պաշարողական մերենաների վրա նավթ էին լցնում, այրում, մոխրացնում: Աշնանը Տիգրանն իր ութուն հազարանոց բանակով հասավ Տիգրանակերտի մատուցները:

Լոկուլոսին հաջողվեց հայկական զորքի թիկունքն անցնելով, անակրնկալ հարձակումով խառնաշփոր առաջացնել և հաղթանակ տանել: Հոռմեացիները կրկին պաշարում են Տիգրանակերտը, և այս անգամ քաղաքի օտարազգի բնակչությունը ապատամբելով այն հանձնում է թշնամուն¹⁶:

Ծուտարքուր գրում է. «Խմանալով, որ քաղաքում գտնվում են մեծ թվով ներասաններ, որոնց Տիգրանն ամեն կողմից հավաքել էր հիմնադրած թատրոնի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցելու՝ Լոկուլոսն օգտագործեց նրանց իր հաղթանակի առթիվ կազմակերպված խաղերի ու հանդիսությունների ժամանակ»¹⁷:

Զետելով Տիգրանակերտում, հոռմեացիները հաջորդ տարի վիթխարի հարստություն ավարառած՝ շարժվում են դեպի Արտաշատ, բայց Արածանիի գետանցում հարյուր հազարանոց բանակով նրանց էր սպասում Տիգրանը: Միայն հայթանակը կարող էր պահպանել երկրի անկախությունն ու ամրողականությունը: Հայերը փոխել էին իրենց ուազմավարությունն ու զենքերը: Նրանց հետերի մասին ահա թե ինչ է գրում հոռմեական պատմիչ Դիոն Կաստուը. «Նրանք գործածում էին երկաւոր հետեր, և ծայրերն այնպես էին իրար ագուցված, որ հետերը թե՛ մարմնի որևէ մասում մնալու և թե՛ դուրս քաշվելու դեպքում արագորեն սպասում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերջի մեջ»¹⁸: Ճակատամարտըն ավարտվեց հայերի հաղթանակով:

Տիգրանակերտի հետագա շուրջ մեկդարյա պատմությունը համեմատարա խաղաղ էր: Այն շարունակում էր մնալ Հայաստանի մեծագոյն քաղաքներից մեկը: Մեր թվարկության 59 թվականին, Արտաշատը նվաճելուց հետո, դեպի Տիգրանակերտ ուղղվեց հոռմեական մեկ ուրիշ զորավարի՝ Կորրուլոնի զորքը: Այս անգամ ևս քաղաքը դավանանությամբ հանձնեցին նրա օտարազգի բնակչները. Տակիսոսի Վկայությամբ, նրանք ուկել պսակ նվիրելով՝ Կորրուլոնի առաջնորդեցին քաղաք, որից «ոչինչ չհափշտակվեց, որպեսզի շթալանված ժողովուրդն ավելի պատրաստ լինի հնագանդության»¹⁹:

Զանցած մեկ-երկու տարի, հայ-պարթևական միացյալ ուժերը պաշ-



րում և Տիգրանակերտը. ուր իշխում էր Տիգրան Վեցերորդը, որպեսզի հայոց գահին վերահստատեն Տրդատ Առաջինին: Այդ նրանց հաջողվեց Հուանդեայի հաղթանակից հետո:

Մի քանի դար Տիգրանակերտը Մեծ Հայքի հարավային սահմանային Աղձնիքի բդեշխության կենտրոնն էր²⁰: Աղձնիքի բդեշխությունն ուներ հրսկայական տարածք՝ մոտ 18 հազար քառ. կմ և բաժանված էր 11 գավառների՝ Անգեղ տուն, Սասուն, Նիդրկերտ և այլն: Տիգրանակերտը կարևոր դեր էր կատարում Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքում:

Քաղաքը քանից ենթարկվել է կողոպուտի և թալանի, ավերվել ու վերաշինվել: Բայց, երսի, ամենածանր հարվածը հասցրել են պարսից Շապուհ Երկրորդի զորքերը: Տիգրանակերտը գրավելու Շապուհի առաջին փորձն ավարտվում է պարտությամբ, որովհետև «նրա դեմ են կանգնում քաղաքի մարդիկ և քաղաքապահ զորքը... Տեղի ունեցավ խիստ կորուս, որի ժամանակ շատ պարսիկների սպանեցին»²¹: Իր զորքերի մնացորդներն առած, պարսից արքան վերադառնում է Մծրին: Տեսնելով, որ զենքի ուժով չի կարողանում հաղթել, դիմում է խորամանկության: Համակ է գրում քաղաքի պաշտպաններին, համոզելով, որ ինքը եկել էր խաղաղությամբ և «քաջին վայել ազնվականությամբ», իսկ քանի որ քաղաքն ընկած էր իր ուղու վրա, ուստի նա ոչ թե պատերազմելու, այլ «ուղևորության նպատակով էր գահիս»²²: Բայց Տիգրանակերտի պաշտպանները չհավատացին:

Շապուհը չմոռացավ պարտությունը և, եթե ավերեց հայոց շենքից շատերը, կրկին պաշարեց Տիգրանակերտը: Պարսպարանդ մեքենաներով նրանք ճեղք բացեցին ամրակուր պարիսպների մեջ, և քշնամու բանակը մեղեղութեաց քաղաքը: Տիգրանակերտի գրավման դրվագում-Մովսես Խորենացին նկարագրում է պարսպարանդ մեքենաները. «Սա մի անվագոր մեքենա է, որ քշելով տանում են երեք մարդ. Օրանց մերքերում կան կացիններ, երկրեան սակրեր և սրածայր մուրճներ՝ հիմքերը փորելու համար, և այն պատերը, որ Հայկացյան Տիգրանը շինել էր հաստ ու ամուր, հիմքից քանդելով տապալեցին, դոներում և բոլոր կողմերում կրակներ վառեցին և նետում էին քարեր, նետեր և տեգեր: Մերոնք խոցոտվելով շփորվեցին: Ամրող զորքը ճերս մտավ, պարսկական ճեռքը չէր հոգնում բազմախորդ սուրճ արյունով հագեցնելուց, այնպէս որ, սպանվածների արյունով լցվում էին հիմքերը»²³: Քաղաքը հրի ու սրի է մատնում: Փավստոս Բուզանդի վկայությամբ, Շապուհը Տիգրանակերտից քառասուն հազար ընտանիք է գերեվարել²⁴:

Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո Աղձնիքի մեծագույն մասն անշատվեց Հայաստանից և անցավ Սրեւեյան Հոռմեական կայսրությանը: Այդ շրջանում են կառուցվում Տիգրանակերտի նոր պարիսպները, որոնք ունեին քառասուն ոտնաշափ քարձրություն և տասներկու ոտնաշափ լայնություն: Հոռմեացիները քաղաքն անվանափոխելով՝ կոչեցին Մարտիրոսուպոլիս կամ Մարտիրոպոլիս: Հուստինիանոս կայսեր 536 թ. վարչական բաժանումից հետո այն Զորրորդ Հայքի կենտրոնն էր²⁵:

Արարական առաջին արշավանքի շրջանում (640 թ.) Բաքը արարական ցեղը տոմսակից Տայրանիների հետ շարժվելով հյուսիս՝ գրավեց Ամիդի ու Տիգրանակերտը: Ամիդում հաստատված արարակի քաղաքն անվանեցին Դիարքերի (Բաքը ցեղի երկիր, տուն): Դիարքերի ունաք ստուգարանում են նաև որպես Կույսի երկիր, իսկ Օրա Ամիդ անվանումը կապում են քաղաքի մոտակա ամիդեան բազալտանան քարի հանքի հետ²⁶: Տիգրանակերտն ընկավ Շայրանիների ճեռքը, որոնք այն վերանվանեցին յուրովի՝ Մայաֆարիկին, Միաֆարիկին, Մուֆարկին և այլն: Նոկ հայկական աղբյուրներում Տիգրանակերտը հանդիպում է Մարտիրոսաց քաղաք, Մարտիրոս, ավելի հաճախ՝ Նիդրիտ անուններով:

Արար-բյուզանդական հակամարտությունների և ընդհարումների ողջ ընթացքում Տիգրանակերտն արարական ուզմական կարևոր հենակետ էր:

10-րդ դարի սկզբից Միջագետքում և Ասորիքում բայց դիրքի հասավ Համհանյան արարական տոհմը: Այն հատկապես ուժեղացավ նաև ալ-Դաուլայի և նրա եղբոր՝ Սայֆ ալ-Դաուլայի օրոք: Վերջինս նգիտուսից խեց Հայեաը և դարձեց Ասորիքի ամիրայության կենտրոն: 936 թ. Սայֆ ալ-Դաուլան նշանակվեց Աղձնիքի կառավարիչ: Նա մեծաթիվ զորքով 956 թ. հարձակվեց և ավերեց բյուզանդական մի քանի քերդեր: Բյուզանդացիներն էլ փոխադարձար կողոպտեցին Տիգրանակերտը: Արար պատմագիր իր ալ-Ասիրը այս դեպքերի առիթով գրում է. «Եթե հոռոմները լսեցին, թե ինչ էր արել, հավաքվեցին ու հարձակվեցին Նիդրիտի վրա, հըրկիցեցին երկիրը, կողոպտեցին, ավերեցին, գերեվարեցին ժողովրդին և ամրող ունեցվածքը հափշտակելուց հետո վերադառնա»²⁷:

959 թ. հայոց շամնշաբ Աշոտ Ողորմածը պարտության մատնեց Համդանյաների զորքերին: Չանցած մի քանի տարի, 967 թ. Օրանց են խեց և հայոց թագավորությանը միացրեց Մանակերտն ու Տարոնը: 978 թ. Տիգ-





բանակերտը կովախնձոր դարձավ Համբանյանների Մոսուլի ճյուղի ամիրաներից Արու Տաղլիքի և Ալուտ ալ-Դառլայի միջև, որը երեք ամիս պաշարեց քաղաքը, և բնակիչները համաձայնության գալով նրա հետ, բացեցին դարպասները²⁸:

10-րդ դարի երկրորդ կեսին արաբներին փոխարինեցին հայոց լեռնաշխարհ խուժած քրերը: Այժմ էլ ստեղծվեցին քրդական ամիրայություններ, որոնցից մեկն էլ Մրգանյանների ամիրայությունն էր, որի հիմնադիրը Բովիկ և ավազակ Բատն էր: Ինչպես իրն ալ-Սահրն է պատմում, Բատը Մոսուլ գնալով, ցանկանում է ծառայության մտել Ալուտ ալ-Դառլայի մոտ, բայց նրան տեսնելով, Դառլայն վախենում է և որոշում սպանել, քանզի Բատը «ջապին» է և ուժեղ, նրանում շարություն կա և այդպիսին չի կարելի (Կենդանի) թողնել»²⁹: Բայց Բատին հաջողվում է փախչել: Դառլայի կանխագգացումը շուտով պիտի իրականանար: Բատի և նրա ավազակախմբի սուրը պիտի ուղղվեր ոչ միայն Հայաստանի հետ, այլև հարվածներ հասցներ Համբանյաններին: Նա նվաճեց Արծեշը, Տիգրանակերտը, Ամիդը և Մոսուլը, որը շուտով կորցրեց³⁰: 990 թ. նա փորձեց վերագրավել Մոսուլը, բայց Համբանյանները հաջեցին և սպանեցին նրան³¹: Բատը՝ Կողքադին անունով, որպես Կեղեցիշ ու Բարկապահանջ, միշտառակում է «Մասն ծոեր» պատում:

Բատին հաջորդեց քրոջորդին՝ Մրգանը: Նրա օրոր Տիգրանակերտի արաբների և քրերի միջև Բակասությունները խիստ սրվեցին: Արաբները քաղաքի շուկայում սպանում էին քրերին, և քաղաքի կառավարի Մամայը որոշեց Վրեժխնդիր լինել: Մահմետական տոներից մեկի ժամանակ, 994—995 թթ., երբ արաբների մեծ մասը քաղաքից դուրս էր եկել, դարպասները փակվեցին և արաբների կոտորածից հետո կրկին բացվեցին: Ասողիկի (Ստեփանոս Տարոննեցի) վկայությամբ, դրանց հետո Տիգրանակերտում հիմնականում մնացին միայն հայեր³²:

Տիգրանակերտը որոշ չափով բարգավաճեց նասր ալ-Դառլայի իշխանության ընթացքում, քանզի այդ հիսուն տարիները (1011/12—1061/62 թթ.) համեմատաբար խաղաղ էին: 1058—59 թթ. Տիգրանակերտում լինում է սաստիկ ձմեռ: Որպես ընության զարմանալի երևոյթ այն նկարագրել է Բայ Շահնավոր մատենագիր Մատթեոս Ուոհայեցին: «Մի օր առավոտյան, մարդիկ տնից դուրս գալով տեսան, որ երկինքը պարզ է, իսկ գետնին տեղացել է կարմիր ձյուն, որը ծածկել է երկիր չորս կողմը՝ արևելք և արևմտուք, հյուսիս և հարավ: (Չյունը) սկսեց տեղայ երկուշարթի օրը և վարսուն օր շարունակ եկավ: Գիշերը գալիս էր, իսկ ցերենկը՝ ճապում: Կարմիր ձյուն, սակայն, միայն մեկ օր տեղաց»³³: Խստաշունչ ձմռան պատճառով Կենդանիներն ու թռչունները սաշոշում են ու սովամահ լինում: Վերջապես նրանք գալիս են մարդկանց մոտ՝ պատսպարվելու: Կենդանիները՝ խմբերով, իսկ թռչունները՝ երամներով լցվում են քաղաքի փողոցները, բակերն ու տները: Գրահրատ քաղաքացիներն ամրող ձմռն կերակրում ու խնամում են նրանց: Խսկ դաշտերում ու լեռներում շաղ են տալիս ցորեն, գարի ու կորեկ, փոռում խոտ ու հարդ, փրկում վայրի կենդանիներին ու թռչուններին³⁴:

Ծուտով տիգրանակերտցիներն իրենք են օգնության կարիք գգում: Խիստ ձմռանը հաջորդում է անանձն գարունն ու երաշտը, և «երկրում սաստիկ սով եղավ, և շատերը չարաշար սովամահ եղան»³⁵: Սակայն հաջորդ տարի կրկին լիություն և առատություն է լինում:

Երբ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին Վասպուրականի, Տարոնի և Վերին Միջագետքի կառավարի Շահնակվեց (1045—1058 թթ.), Մրգանյաններն ընդունեցին նրա գերիշխանությունները³⁶: Այդ շրջանում Տիգրանակերտը Բարավային Հայաստանի ամենամեծ քաղաքներից էր: 1046-ին պարսիկ աշխարհագիր և բանաստեղծ նասիր Խոսրովը, այցելելով Տիգրանակերտ, թողել է այսպիսի նկարագրություն: «Քաղաքն ուներ մի մեծ պարիսպ՝ կառուցված սպիտակ քարից, յուրաքանչյուր քարը մոտ 500 ման (շուրջ 5,8 տոննա) և յուրաքանչյուր հիսուն գազի վրա մի աշտարակ էր կառուցված նոյն սպիտակ քարից, իսկ պատերի ծայրերին ամրող ատամներ են դըրված, որ կարծ վարպետու հենց այսօր է իր գործն ավարտել: Այս քաղաքն արևմտյան կողմից մի դարպաս ունի՝ մեծ քարե կամարով, իսկ դուրս պատրաստված է երկարթից, առանց փայտի»³⁷: Այս և այլ վկայություններ հավաստում են, որ Տիգրանակերտում զարգացած էին երկաթագործությունն ու պղնձագործությունն, քարագործությունն: Բնուկիչները գրավում էին նաև այգեգործությամբ³⁸, գինեգործությամբ ու մեղվարությամբ: Իրն Հայուալը միշտառակում է Նիդրերտի արտադրության գինաշորերն ու շալերը, նախշագարդ ծածկոցները³⁹: Այստեղ է ծնվել 12-րդ դարի պատմի Ալ-Ֆարիկին: Նա ճանապարհորդել է Հայաստանում, գրել Տիգրանակերտի պատմությանը և իր ժամանակի հեաքերին նվիրված գիրք, որի ձեռագիրը պահպանվել է և գտնվում է Անգլիայում⁴⁰:

Սելջուկների ավերիչ արշավանքների շրջանում նասր ալ-Դառլան կարողացավ սիրաշահել նրանց և իր տիրույթները գերծ պահել ասպատակություններից: Բայց նրա հաջորդները հպատակվեցին (1071 թ.) Ալփ Արսլանին:


Քաղաքի հետագա պատմությունը լի է դրամատիկ դրվագներով: Խալքում և հարավային Հայաստանում իշխող Ալ-Կութբին 1109 թ. երկար ամիսներ պաշարեց Տիգրանակերտը: Մթերքը սպառվեց, բնակիչները սովոր մատնեցին և երաշխավորագիր ստանալով, հանձնեցին քաղաքը: Այնուհետև 1184 թ. Տիգրանակերտը պաշարեց եգիպտոսի և Հալեպի տեր Սալահ ալ-Դինը: Բայց քաղաքը պաշտպանվում էր հերոսաբար: Կոհվը սաստկացավ, պաշարողները գործի դրեցին քարանետ և խորտակիչ մեքենաներ: Սալահ ալ-Դինը չկարողանալով գրավել, ճամակ գրեց քաղաքի տիրութուն՝ Խալքունին, և փոխադարձ համաձայնությամբ նիգրկերտը հանձնվեց⁴¹:

Սալահ ալ-Դինն այն տվեց Ալյուրյաններին:

1260 թվականին, շուրջ երկու տարվա պաշարումից հետո, Տիգրանակերտը Ալյուրյաններից խլում են Հուլավու խանի մոնղոլ հրոսակները: Թաթար-մոնղոլներն ունեին բարաններ ու քարանետ մեքենաներ, կտրել էին քաղաքի ջուրը, բայց Տիգրանակերտի պաշտպանները երկու տարի հերոսաբար կովում էին թշնամու դեմ⁴², մինչև որ սպառվեց ուժելիքը, և բնակիչները դատապարտվեցին սովամահության: Տիգրանակերտի (Մարտիրոսք) վերջին օրերի մասին սահմոկեցուցիչ մանրամասներ է հաղորդում Կիրակոս Գանձակեցին⁴³: Թաթար-մոնղոլների քանակում գտնվող Պոռշ իշխանի հայ զորականներին քաղաքի անկումից հետո հաջողվում է համոզել նվաճողներին, և նրանք «եկեղեցիները չքանդեցին, ոչ էլ սրբերի անթիվ մատունքները, որ սուրբ Մարութան հավաքեց բոլոր ազգերից և դրեց այնտեղ, որովհետև զորքի մեջ եղած քրիստոնյաները թաթարներին ծանոթացրին նրանց նշանակության հետ, իրենք էլ բազմաթիվ տեսիլքների պատմեցին սրբերի մասին, թե ինչպես պարսպի վրա ուժեղ լույս էր ծագել և լուսատեսք մարդիկ էին երևացել»⁴⁴:

Սոնդոլական արշավանքից հետո Տիգրանակերտը վերածվում է գլուխաքաղաքի, որը թուրքական տիրապետության շրջանում Դիարբեքիրի փաշայության Միոֆարկին գավառի համանուն կենտրոնն էր: Այսօր էլ Թուրքիայի Ֆարկին գյուղի մոտ կարելի է տեսնել հին աշխարհի հոչակավոր քաղաքներից մեկի՝ Տիգրանակերտի պարիսպների ու այլ շինույթունների մնացորդները: Հենց այդ գյուղի մերձակայքում էլ, 1899-ին հայտնի գիտնական Լեման-Հառաւտը հայտնաբերեց հունարեն մի արձամագրություն⁴⁵, որի օգնությամբ հնարավոր եղավ ապացուցել, որ դրանք Տիգրանակերտի պվերակներն են⁴⁶: Դեռևս լիովին չի ուսումնասիրված քաղաքի պատմությունը: Ավելին, մինչև օրս գիտնականները Տիգրանակերտը հաճախ շփոթում են Ամիդ-Դիարբեքիրի հետ⁴⁷: Պատճառ այն է, որ 6-րդ դարից սկսած, կողք կողքի գոյություն ունեին Չորրորդ Հայք անունով երկու համանգմեր, որոնցից մեկի կենտրոնը Տիգրանակերտն էր, մյուսինը՝ Ամիդը (Դիարբեքիրը):

VAGHARSHAPAT



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Զնայած այն հսկայական դերին, որ դարեր շարունակ հայ ժողովոյի քաղաքական, տնտեսական, մշակութային և հատկապես հոգևոր կյանքում խաղացել է Վաղարշապատոց, նրա պատմության մասին այսօր քիչ բան է հայտնի: Խճշպիսին էին նրա փողոցներն ու տները, թրապարակներն ու այգիները, ինչպես էին ապրում նրա բնակիչները. այս և բազմաթիվ այլ հարցեր վաղուց են հոգել գիտնականներին: Թեև հայ առաջին պատմչների աշխատություններից սկսած, մագաղաթի ձեռագրերում հիշատակվել է Վաղարշապատ-Էջմիածինը, այնուամենայնիվ, պեղումներն էին հաստատելու կամ ժխտելու քաղաքի պատմության մասին եղած այս կամ այն վարկածը:

Դեռևս 1893-ին Էջմիածնի մի խումբ վարդապետներ և ճեմարանի աշակերտներ, այսպես ասած, պեղել են Վաղարշապատի մոտակա մի բուր: Արտերը պարարտացնելու համար բլրից հող տանելիս, գյուղացիներից մեկի բրիչը բացում է անհայտ շինություն, իսկուն իմաց է տրվում Էջմիածնի միաբաններին. «Վարդապետներ և վարժապետներ, ճեմարանի աշակերտներ հավաքվելով և բար ու բրչով գինեվելով կգնան կսկսն անկարգ կերպով բլուրի գլխից քանդել: Բանից դուրս կուգա, որ եղել է բլուրի տակ մի շենք՝ արևելյան կողմից մի դուռով, վրան՝ կամարակապ, հաստատում գաջ ու կիր շաղախով շինված. դեռ այն ժամանակ անշնորհք պեղիչներ վրայի կամարը ծակել էին: Այժմ կամարն ամրողովին փլած է: ...Պատերից և կամարից քանդված քարերը տարածված են և տարվում են հետզհետե, ինչպես նաև բլուրի հողը կրում են արտերը պարարտացնելու համար»¹:

Առավել ցավալի և անդառնալի կորուստների են հանգեցնում հայ ճարտարապետական հանճարի գլուխգործոցներից մեկի՝ Զվարթնոց տաճարի պեղումները, որը դեռևս 1901-ին սկսում է Էջմիածնի միաբան, վարդապետ Խաչիկ Դադյանը: Թորոս Թորամանյանը, որը 1904-ից մասնակցում է տաճարի փլատակների ուսումնասիրությանը, անհուն կսկիծով է գրում, որ «Խաչիկ Վարդապետը... տաճարին մեջը օր առաջ մաքրելու համար, մեջը թափված քարերն ու շաղախի փշրանքները դուրս թափելուց հետո մնացած մեծազանցված փուլքերը, որոնք պիտի բնորոշեին շենքին ներքին կազմությունը և գմբեթի մանրամասն ձևն ու նկարագիրը, վառողով պայթեցրել և փոշի վերածել եր, որովհետև այդ զանգվածներն անհնար է եղել բրչով կամ շենքով մանրացնել: Ահա այս իսկ պատճառով է, որ այդ հոյակապ տաճարին ներքին կազմությունը, թեև բավական ծոշված է շենքից դուրս թափված մեծ բնեկորների միջոցով, սակայն ուրիշ ճարտարապետական մանրամասնություններ ընդմիշտ կորած են հուշարձանի պատմության համար: ...Զվարթնոցի շինարարական պատմության համար անդարձ կորած են հարավային կողմից ընդարձակ շինությունների կառուցվածքը, նրանց ծածկի ձևերը, լուսամուտների դասավորությունները և ուրիշ բազմաթիվ մանրամասնություններ, որոնք այսև անհնարին են որևէ կերպով վերակազմել և գաղափար կազմել ժամանակակից շինարարական ոճերի մասին: ...Այժմ այդ բոլոր շենքերից անհետացել են շինարարական ապացույցներ և քարեր, իսկ տեղում մնացած մասերը լոկ հատակագծի միայն արժեք ունին»²: Թ. Թորամանյանի ջանքերով պեղումները գիտական բնույթ են ստանում, և հայտնարեռված բնեկորների օգնությամբ հանճարեղ ճարտարապետը կարողանում է գիտականորեն վերակազմել տաճարի նախկին տեսքը, որի խկույժունը մեծապես հաստատվեց նաև Անիի Գագկաշեն եկեղեցու հայտնաբերումից հետո: Զվարթնոցում և Անիում, Հայաստանի մյուս մասերում Թ. Թորամանյանի հավաքած հսկայական Այուշի և գիտական կուսական թուժումների միման վրա 1918-ին Վիեննայում նշանավոր գիտնական Յոթեֆ Ստրժգովսկին հրատարակում է իր «Հայաստանի շինարվեստն ու Եվրոպան»

Ս. Էջմիածնի, ս. Հորիսիմեր և ս. Գայանեի տաճարները, անհայտ Նշարիչ, 1717 թ. Ամսաթերթամուն հրատարակված Տուրնեֆորի Շամփորդական նորերի գրքից:



Զվարթնոցի արծվախոյակը:

Անձարժեք ուսումնասիրությունը: 1928-ին Հայաստան այցելելով, գրող Ամերիկյան Բելին հաճիպում է Թ. Թորամանյանին և ծանոթանում Զվարթնոցի վերակազմությանը, որը ցնցող տպավորություն է թողնում: Այդ մասին իր համակենքից մեկում նա գրում է. «Պետք է նշեմ, որ Ստրժիգովսկին պատկառանք է ազդում եվրոպական ձևերի իրազեկությամբ, աակայն նրա համար կրակից շագանակ է հանել այդ գործի ֆանատիկ Թորամանյանը՝ մի հիմնալի մարդ, որ մինչև օրս էլ ողջ է ու ապրում է Էջմիածնում: Թորամանյանն իր ամբողջ կյանքում ծաղրուծանակի սարսափի տակ փորել է, շափագրել ավերակները, կոհիումներ արել և քաղցած մնացել: Նա է վերականգնել Զվարթնոցի տաճարի մոդելը. մոդելի վրա ծիծաղել են՝ իր այդպիսի ձևեր չեն եղել: Իսկ մի քանի տարի անց, Մառլ հենց այդպիսի չեղած ձև է հայտնագործել Անդում:

...Երբ տեսա Զվարթնոցի մանրակերտը, տարակուսանքի մեջ ընկա՝ որտեղ եմ տեսել այդ ձևը: Հետո հիշեցի՞ դա Կամպանելլայի «Արևի տաճար» ուսուպիսի ձևն է»⁴: Բելինց առաջ, 1924-ին Զվարթնոցի պեղումներով հիմքել է Անատոլի Լունաշարսկին. «Երևանից Էջմիածին տաճեց վերստ ճանապարհ անցնում է շիլացած տեղանքով, որ թվում է, պետք է լինի Աստիայի ու Աֆրիկայի հեռավոր անապատների ինչ-որ նախադուու: Էջմիածին չհասած՝ անցնում ես հսկայական ավերակների մոտից: Դա ամենակախարդիչ պեղումներից մեկն է, որպիսին երբեմն ես տեսել եմ:

Պեղումները դեռևս բոլորովին ավարտված, վերջացած չեն, այնուամենայնիվ, արդեն հաջողվել է նոյն այդ տեղում պեղել ու բացել ընեռագիր տաճարութեակներ, որոնք գալիս են վկայելու, թե այդտեղ մի ժամանակ ապրել է Ուրարտուի թագավորը: Կրակապաշտների տաճարի մնացորդները տեղ-տեղ համարյա բոլորովին ավերված չեն, պահպանվում են իրենց բազմաթիվ կրակարաններով ու իրենց առանձնահատուկ կառուցվածքով: Դրանց վրա քրիստոնեական շրջանի սկզբանվորման ժամանակներում բարձրացել է արքայական մեծ ապարանքը, և, վերջապես, այդտեղ էլ, հավանաբար վեցերորդ կամ յոթերորդ դարում կանգնել է հոյակապ տաճարը: Նրա սյուների խոյակները կուտակված են իրար վրա և ապշեցնում են զարդարանակների խոր իմաստությամբ և աշխատանքի արտասովոր մաքրությամբ: Դա դրվագավոր քանդակագործության հսկայական գլուխգործոց է: Մանաւագանում է այն խոյակը, որին կարծեն փակցրած լինի իրը ճակատի զարդանախչ, թենոր հզորությամբ պարզած արձվի հումկու կերպարանքը: Դա հին Հայաստանի գինանշանն է: Բացված է նաև անհավանական խորությամբ մի ջրհոր, որի մեջ, երբ քար են գցում՝ ջրի հեռավոր ծփանքով արձագանքում է համարյա թե մի րոպե հետո: Այստեղ, քո աշքերի առջն. տեսնում ես հազարամյակների խորքերն իշխող հայկական քաղաքակրության արմատը»⁵:

Այս հիացական հկարագրությունից դժվար չէ կոնկական որ խորը Զվարթնոցի մասին է: Իսկ ինչ վերաբերում է հայտնաբերված ընեռագիր տաճարակներին, որոնք, ինչպես Լունաշարսկին է գրում, վկայում են, թե այդտեղ ապրել է Ուրարտուի թագավորը, ասենք, որ այդ արձանագրությունը հայտնի է դարել 1900 թ. ամուսն և այժմ պահպում է Զվարթնոցի թագարանուն: Այն պատկանում է Վանի հայոց թագավորության (Ուրարտու, Արարատ) արքա Ռուսա Երկրորդին (մ. թ. ա. 685—645 թթ.), որով նա սերուների համար թվարկում է իր կատարած հիշարժան գործերը՝ խաղողուտի, ցորենի արտի և այգու հիմնադրման, նոր քաղաքի կառուցման, ջրանցքի անցկացման մասին: Ուսումնասիրողներից ումանք կարծում են, որ քարը հետագայում է բերվել Կարմիր բլուրից: Ենթադրում է նաև, որ այն ի սկզբանե եղել է տաճարի տեղունք:


Այս հայտնաբերությունից հետո Զվարթնոցում գտնվում են մի շարք այլանգու արձանագրություններ: Իսկ մինչ այդ Էջմիածնում եղած խաչքարերի և պղնձե ամանների գրություններն է 1897 թ. ամենայն հնամքով հավաքում և վերծանում վանքի միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանը⁶:


1920-ական թվականներին պեղումները դրվում են լուրջ գիտական հիմքերի վրա, դրանց դեկապարումը հանձնարարվում է Թ. Թորամանյանին, Ա. Քայանթարին և Ս. Տեր-Հակոբյանին⁷:

Հին Վաղարշապատի տեղադրության հարցին պատասխանեցին հետագա պեղումները, որը գլխավորում էր «Հին Վաղարշապատի պեղումների հանձնաժողովը»¹⁰: 1908 թ. Թ. Թորամանյանը ճշտեց Մայր տաճարի հայտնական տեսքը, իսկ 1959 թ. ճարտարապետ Ալ. Սահմանյանը փորելով տաճարի և Հոփիսիմեի որմնամույթերի հիմքերը, պարզեց, որ զոյց տաճարներն էլ կառուցվել են հետանուական մեհյանների տեղունքուն: Հետագայում պեղումները շարունակվեցին, գտնվեցին նոր դամբարաններ ու նյութական մշակույթի առարկաներ, արձանագրությունները¹²:

Վաղարշապատի տաճարությունը բնակավայր է եղել դեռևս քարե դարում: Հազարամյակներ անց, հայոց Երվանդ Սակավակյաց (մ. թ. ա. 570—

Զվարթնոցի հատակագիծը:





Մայր տաճարի նախնական
տեսքը ըստ Թ. Թորամանյանի:

560 թթ.) արքայի փեսա Վարդգեն Մանուկն այնտեղ հիմնում է Վարդգեսավանը: Տիգրան Մեծն այն դարձնում է շուկա ունեցող գյուղաքաղաք:

Երկրի զարգացումն ու միջազգային առևտությունը նոր քաղաքների հիմնադրման հնարավորություն են ստեղծում: Հայոց Վաղարշ Առաջին (117—140 թթ.) թագավորը, պարսպապատելով Վարդգեսավանը, այն վերանվանում է Վաղարշապատ և հոչակում մայրաքաղաք: Թեպետ երկրի խոշորագույն քաղաքը մնում է Արտաշատը:

Երկրորդ դարի կեսերին հոռմեացիները փորձ արեցին նվաճել Հայաստանը ու դարձնել Հռոմի նախանձ: Բայց Տրդատ նախարարի գլխավորությամբ համաժողովրդական ապստամբություն բարձրացավ, և հոռմեական կայսր և գորավար Մարտին Վերոսը հազիկ կյանքը փրկեց Տրդատի սրի հարվածից: Զնայած ապստամբությունը ճնշվեց և Տրդատն աքսորվեց Բյետանիա, բայց վերականգնվեց Հայաստանի անկախությունը: Եվ Վաղարշապատը Կայենապոլիս՝ նոր Քաղաք անունով, հոռմեացիների կողմից 163 թ. երկրորդ անգամ հոչակվեց հայոց մայրաքաղաք: (Նոր Քաղաք անվանումը պահպանվեց մի քանի դար: Նոյնին 5-րդ դարի հայոց պատմիչներ Կորյուննից¹³ ու Ղազար Փարպեցին¹⁴ են Վաղարշապատը երբեմն նոր Քաղաք անվանում): Երեք տարի անց, հարավային Միջագետքից եկած հոռմեացի զինվորները ժանտախտ տարածեցին ոչ միայն Վաղարշապատում, այլև Առաջավոր Ասկայում ու Եվրոպայում: Քաղաքի բնակչության մեծ մասը զոր գնաց համաճարակին: Հռոմեական կայսրության մեջ սկիզբ էին առել գարակալական կոյփերը: Օգտվելով հարմար առիթից, Բայերը Վաղարշապատից վոնդեցին հոռմեացիներին: Մինչ այդ նրանք մի շարք կառուցումներ էին կատարել, իրենց ապահովության համար ամրացրել քաղաքի պարիսպները:

Իսկ ինչպիսի՞ն էր Վաղարշապատի քաղաքաշինական պատկերը. միջնաբերդը մոտավորապես զբաղեցնում էր այժմյան Էջմիածնի վանքի պարսպապատ տարածքը: Այնտեղ էին թագավորի պալատը, Անահիտ-Արտեմիսի տաճարը, պետական և հասարակական շենքերը, գորանցները, բանտը, բաղնիքը և այլն¹⁵:

Քանի որ Վաղարշապատը տեղադրված էր դաշտավայրում և զուրկ էր պատշաճական բնական առավելություններից, ապա ենթադրելի է, որ Միջագետքի և Արևմտյան Իրանի քաղաքների մասն նրա հատակագիծը ևս կլորավուն էր¹⁶: Քաղաքն ուներ հզոր աշտարակներով պարիսպներ: Վաղարշապատը հարավից պաշտպանված էր նաև Քասաղի ջրով լցվող Պառկենիս կոչվող խոր խրամով, հարավ-արևմուտքից՝ ընդարձակ ճամփունով, որտեղ էլ կատարվում էին մահապատճենները¹⁷: Պարիսպներից դուրս գրտնըվում էին որոշ արթեստանցներ, անտիկ տաճարը և գերեզմանցը: Տաճարը, ըստ երևույթին, նվիրված էր արևի աստված Միթրին և գտնվում էր Հոհիսիմեի եկեղեցու տեղում:

Վաղարշապատի նշանակությունը մեծացավ հատկապես քրիստոնեական կրոն հոչակելուց (301 թ.) հետո:

Հայ ժողովորի այդ ճակատագրական շրջադարձի՝ սր. Գայանեի, սր. Հոհիսիմեի և մյուս կոյսերի համատակության, Գրիգոր Լուսավորչի և Բայց Տրդատ թագավորի կողմից Հայաստանում քրիստոնեության տարածման և պետական կրօն հոչակելու մանրամասն պատմությունը պահպանվել է 5-րդ դարի պատմիչ Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոցում»: Կործանելով Սանդարամետի մերժանը, նոր կրոնի նվիրյալները նրա տեղում կառուցեցին Կաթողիկե եկեղեցին՝ Հայաստանի քրիստոնեական անդրանիկ Մայր տաճար սր. Էջմիածնին: Նրա անունով էլ հետագայում, հատկապես 13—15-րդ դարերից սկսած, քաղաքը կոչվեց Էջմիածն:

Քաղաքը հաճախ է կործանվել, իսկ բնակչները՝ սպանվել ու գերեզվարվել: Պարսից Շապուհ Երկրորդի արշավանքների մասին (368—369 թթ.) այսպես է պատմում Փալմատո Բուզանդը. «Գրավեցին Վաղարշապատ քաղաքն է, քանիում, բրում, հիմքից կործանում էին. այս քաղաքից էլ գերի տարան տասնինը հազար տուն: Ամբողջ քաղաքում շենք չթողեցին, բոլոր քարուքանդ արին, կործանեցին: Ասպատակներ ուղարկելով՝ բոլոր չափահան մարդկանց կոտորում էին, կանանց, երեխաներին գերի էին վերցնում»¹⁸:

Հայաստանում քրիստոնեական կրօնի գլխավոր կենտրոնը լինելու շնորհիվ Վաղարշապատը դարեր շարունակ երկրի համար ուներ հոգևոր-մշակութային խոշոր նշանակություն: Հայոց գույքի գյուտից հետո 405 թ. Վաղարշապատ է վերադասում Մաշտոցը, ուր նրան ցնծալից ընդունելություն էր սպասվում: Ականատես պատմիչ Կորյունն այսպես է նկարագրում. «Եվ արդ, երբ Բիշելին եկավ, մոտեցավ թագավորական քաղաքին, իմաց տվեցին թագավորին և սուրբ եպիսկոպոսին: Նրանք նախարարագունդ ավագանու բոլոր բազմությունն առնելով՝ քաղաքից դուրս եկան, ուահ գետի ափին դիմավորեցին երանելիին: Եվ ցանկալի ողջոյնը միմյանց տալուց

հետո այնտեղից ցնծության ձայներով և հոգևոր երգերով ու բարձրաձայն օրմնություններով ետ դարձան քաղաքը և տոնական ուրախությամբ անց կացրին օրերը»¹⁹:

Մաշտոց և Սահմակ Պարթևը հենց Վաղարշապատում էլ հիմնեցին հայոց առաջին դպրոցը:

Թեև դարավերջին, 484-ին կաթողիկոսարանը տեղափոխվեց Դվին, Էջմիածինը շարունակում էր բուռն կերպով զարգանալ: Մեր առաջին մատենադարանը ևս այստեղ է հիմնվել, երբ 486—491 թթ. վաճքի հոգաբարձուն ճշանավոր պատմագիր Ղազար Փարպեցին էր (ի դեպ, մեկուկես հազարամյակ անց՝ 1959' թ., այս ձեռագրատան հետազայում հարստացված հայքածուի հիմքի վրա ստեղծվեց Երևանի Մատենադարանը):

Ղազար Փարպեցուն ենք պարտական Օան այն ժամանակների Վա-



Գրիգոր Լուսավորիչը.
մկրտում է հայոց Տրդա
թագավորին:

դարշապատի ու Արարատյան դաշտի կյանքի հրաշալի և հյութեղ նկարագրության համար, որը թեն աչքի է զարնում իր հովվերգականությամբ, բայց հայ պատմության այն սակավ էջերից է, որոնք ոչ թե ավեր ու կոտորած են պատկերում, այլ արևով ու առատորթյամբ ողողված հայոց աշխարհիկ կյանքը, դրանով իսկ հնարավորություն տալով առավել ամբողջական պատկերացնելու մեր ժողովրդի անցյալը. «Հոյակապ, հոչակավոր, երևելի գավառն Այրարատյան, որն ամեն ինչ բուցնող է, ամեն ինչ տվող, ամեն ինչով լի, մարդկային կյանքին, վայելքին ու երջանկությանն անհրաժեշտ օգտի ու դեղի համար ամեն ինչ ունեցող դաշտեր լայնատարած ու որակաց, շուրջ բոլորը լեռներ գեղեցկանիւս ու փարթամ արոտներով ծածկված, կենցաղային ու որոնող անստուներով և նրանց հետ էլ ուրիշ բազմատեսակ կենդանիներով լեցուն: Լեռնեց բարձր կատարներից ջրեր են հոսում լիովի ոռոգմամբ արբեցնելով դաշտերը, որոնք անթիվ կին ու տղամարդ բնակչությամբ փարթամացած ոստանն են մատակարարում առատ հացով և գինով, անուշաբույր ու մեղրահամ բանջարեղենով և յուղատու զանազան սերմերով: Իսկ թե հայացք առաջին անգամ ես դարձնում դեպի լեռնափեշերը կամ սարահարթները, ապա նրանց վրա սփովածը հանդերձներ կկարծես և ոչ թե ծաղկաբույր երանգներ՝ տարածված փարթամորեն, անուշաբան ու պարարտ արոտներ, որոնց թանձրախիտ աճած խոտերն արտական ընտանի անթիվ էջերին ու վայրի կատաղի կենդանիների խմբերին հագեցնելով՝ նրանց գիրացնում են, գավակները՝ պարարտացնում, ճարպակալած մարմինները տողեցնում: Իսկ անուշաբույր ծաղկանց բույրերը, որ քաջ նետածիք ու որսաւեր տղամարդկանց և բացօթյա ապրող հովիվներին պարգևում են առողջություն, զորացնում են մտքի զգայությունը և թարմացնում: Այնուեղ կամ նաև տեսակ-տեսակ բոյսերի արմատներ՝ դեղերի համար պիտանի և օգտակար, որոնք ըստ ճարտարագետ ու հմուտ բժիշկների երկասիրությունների ճարտարագետ ճանաչողության՝ ախտերն արագորեն բուժում են իրեն սպեղանի և ցավերի մեջ երկար տառապածներին պարզում առողջություն:

...Իսկ նախարարների գումող, ազատների որդիների հետ, թակարդների շրջափակությամբ, երազագինք-ուուկաններով, հատուկ կողովներով որսի էին ենում: Ոմանք ցիոների ու այծյամների ետևից արշավելով՝ իրենց աղեղների մասին էին հորդորալից բարրառում: Ուրիշները, եղջերուների ու եղնիկների հոտերի ետևից ծիարձակ սլանալով, կորովածիք տղամարդկանց արիությունն էին ցուց տալիս: Մնացածներն էլ սուսերով, մենամարտիկների պես, վարազների երամակն էին գետին տապալում, կոտորում: Եվ նախարարություն շատ մանուկներ էլ, դաստիարակների ու ծառաների հետ, բազեներով տարատեսակ թռչուններ որսած, դարձյալ բերում էին, ճնշացնում որախության ընթրիքները: Եվ այսպես, յուրաքանչյուրը, որսով լիացած, գնո՞ւմ էր երջանիկ: Չքանուակ ձկնորսների մանուկներն էլ, ըստ իրենց հանապազորյան սովորության, քայլելով նախարարագուն խմբի առջևից, բերում, իշխաններին ընծառ էին մատուցում որսած ձկներից, գետի կողմաններից բռնած վայրի թռչունների ձագեր կամ նավաքած ձվեր էին տալիս, իսկ նախարարները, ընծայանների մասն ընդունելով հոժարությամբ, իրենք էլ նրանց էին առավել շատ պարզում իրենց ունեցածներից: Եվ ամենայն բարիքներով լի՛ համելով իրենց ապարանքները, տանը մնացած աշխատավորներին, առավել ևս՝ օտարներին, պարզում էին կենդանի բերած, անբի որսերը: Տեսնելու են այս բոլորի ընթրիքների սեղանները, իրար վրա շեղակույտ արած բազում էրեները, նրանց առջև դարսված գլուխները: Դրանցով ուրախացած խնդում էին ձկնակեր ու մսակեր մարդիկ...

Եվ ահա այսպիսի ըղձալի գավառը, շնախարիկ, ամենախնամ արարիչ Աստծո տվյությամբ ամեն ինչով լցված գավառն Այրարատյան, որ գլուխն է հայոց աշխարհի, գավառը բարեմամբավ, գավառն ամենալի, որ ինքնին օրինակ է առատարաշխության, ինչպես սուրբ գրքի երկիրը Եգիպտացոց ու դրախտն Աստծո, — և Արշակունյաց տոհմի բնիկ սեփական կալվածքը, Արշակունի թագավորների բնակավայր ոստանը Վաղարշապատ, անթիվ ապարանքների բարձրաբեր շինությունները, անհագորեն առատ բերկրանքը դաշտերի...»²⁰:

Մինչև արաբական տիրապետության հաստատումը Վաղարշապատն ավելի է շենանում, զարդարվում նորանոր կառույցներով, որոնցից մի քանիսը ճարտարվեստի գլուխգործոցներ էին. Կոյս Հոհիսիսիմեն և Գայանեի նահատակության վայրերում 818-ին կառուցվում են սր. Հոհիսիսին և 630 թ. սր. Գայանեն եկեղեցիները, իսկ 841—661-ին բուն բաղարից ոչ հեռու, Արարատի հայացքի ներքո վեր է խոյանում Զվարթնոցը:

Արաբական տիրապետության շրջանում քաղաքը քանից ավերվեց, բայց Բագրատունյաց հայոց թագավորության հաստատումից հետո կրկին վերածնվեց: Այս անգամ էլ արևելքից եկան սելչուկները, մոնղոլները, թարարներն ու վաչկատուն այլ ցեղեր, ամայացրին երկիրն ու նրա քաղաք-



Անը: 1321 թ. Վերագրվող մի վարչագրության մեջ ասվում է, որ մոնղոլներն այրեցին Էջմիածնի վանքը և «զկես քաղաքին»:

15-րդ դարի սկզբից, մոտ հարյուր տարի, ինչպես ողջ երկրում, այնպես էլ Վաղարշապատում իշխում են թուրքմենական կարա-կոյունու և քոչվորական ցեղերը: Բայց հենց այս շրջանում է, որ Կրկին հայ ժողովրդի քաղաքական և հոգևոր կյանքում մեծանում է Վաղարշապատի դերը, քանի դեռևս 1105 թվականից Կիլիկիայում գտնվող հայոց կաթողիկոսարանը վերահսկատվում է Էջմիածնում: Քանի դեռ գոյություն ուներ Կիլիկյան Հայկական թագավորությունը (1080—1375 թթ.), կաթողիկոսությունը գտնվում էր հայոց թագավորների պաշտպանության ներքո, իսկ այնուհետև, քանի ուժեղ էին հայ իշխանները, անհանգույթության առիթ չկար, բայց երբ 1428-ին Կիլիկյան Հայաստանի վերջին հայ իշխանավորը՝ Կոստանդինը, բազմահազար գաղթողներով Սսից տեղափոխվեց Կիպրոս, հայոց կաթողիկոսության պանդխոսությունը դարձավ անհմասն և վտանգավոր: Եվ հայ հոգևոր ու քաղաքական գործիքները դիմում են գործնական քայլերի: Էջմիածնի վանքը տնտեսապես ամրապնդելու և աթոռանիստ դարձնելու համար իշխան Ռուտամ Օրբելյանը, որը կարա-կոյունուների շրջանում մեծագույն հարգանք էր վայելում և բարձրագույն պաշտոնների էր արժանացել, 1431-ին վանքին է նվիրում յոթ խոչոր գյուղ: Ինարկե, կաթողիկոսության մայր հայրենիք տեղափոխումը հետանդում էր նաև քաղաքական նպատակներ: Այն իրեն կծեր և կհամախմբեր ժողովրդի տարբեր հատվածները, կապ կատեղծեր գաղթօջախների հայության հետ, և վերջապես, կանանապատրաստեր անկախության վերականգնման պայքարը: 1441 թ. Էջմիածնում գումարվում է մեծ ժողով, որին մասնակցում էին 12 եպիսկոպոս, 18 վարդապետ և 300-ից ավելի քահանաներ, իշխաններ, մեծահարուստներ և ժողովրդի ներկայացուցիչներ: Այս հսկայական թափորը մեծ հանդիսավորությամբ, փող հնչեցնելով ու թմրուկ զարկելով նրեվանից ճանապարհվում է Էջմիածնին, որ և կատարվում է Մայր աթոռի վերահսկատումը: Էջմիածնը դարձավ հայ ժողովրդի կենական ուժերի համախմբման կենտրոն, շատ անգամ ձեռնարկեց կամ գիշավորեց ազգային ազատագրական պայքարը, իսկ կաթողիկոսները ոչ միայն ինքնուրույն էին լուծում Հայաստանի ներքին խնդիրները, այլև երեմն էլ միջամտում էին իշխուների գործերին, իսկ նրանք էլ ատիթը բաց չէին թողնում սահմանափակելու հայոց կաթողիկոսության իրավունքները:

Ինչպես ողջ հայ ժողովրդին, այնպես էլ Վաղարշապատին ու սր. Էջմիածնին մահացու հարված հասցեց շահ Արա Երկրորդ՝ 1604-ին Արարատյան աշխարհի ժողովրդին բունագաղթեցնելով Պարսկաստան, որպեսզի թուրքական առաջացող բանակն իր առջև ծաղկուն գյուղերի փոխարեն այրված հող գտնի: Ծահ Արասի բազմահազարանոց բանակի հետ էր նաև Հարսրուգների կողմից պարսից շահի մոտ ուղարկված դեսպանության ան-



դամ Գևորգ Թեկտանդերը, որը պետք է ճախապատրաստեր հակաթուրքական դաշինքի ստեղծումը: Այն ժամանակ, երբ շահ Արքաը բանակ էր խփել Երևանի մոտ, Թեկտանդերը գահակալից խնդրում է, որ թուլատորի այցելել սր. Էջմիածին: Նա իր ուղեգրության մեջ, որը տպագրվել է մի քանի լեզուներով, գրում է, որ Էջմիածնում «հայերի կողմից ընդունվեցի արքայական պատիվներով և առաջին հերթին նրանք ինձ տարան եկեղեցի, որտեղ ցույց տվեցին ուկով պատված մարդկային չորացած ձեռքը»: Էջմիածնի հայերը թարգմանչի միջոցով Թեկտանդերին բացատրում են, որ դա Գրիգոր Լուսավորչի Աջն է, Բայ եկեղեցու գլխավոր սրբություններից մեկը, ապա հյուրերին ծանրութացնում են Մայր տաճարին:

Թեկտանդերը հիանում է եկեղեցու կառուցման արվեստով, և զարմանում, որ տաճարը զուրկ է զարդերից ու սրբերի պատկերներից, նույնիսկ զանգ չունի: Նրան բացատրում են, որ թուրքերն այդ ամենն արգելում էին: Այնուհետև հյուրերին տանում են կաթողիկոսի մոտ, որ կրկին արքայավայել հյուրասիրվելուց հետո, որպես քրիստոնյայի, «քնքշորեն խնդրում են», որ Թեկտանդերը պարսից շահին բարեկասուի, որ Բայ եկեղեցուն վերադարձնի նախկին իրավունքները: Թեկտանդերը շահի մոտ վերադառնալով գեկուցում է «այն ամենը, ինչ կատարվում է Բայերի մոտ» և մինչև Երևանի բերդի գրավումը չորս շաբաթ շահի բանակում մնալով՝ վերադառնում է Բայրենիք²¹:



Սր. Էջմիածնի վաճականները, որ շահից Մայր աթոռի առանձնաշնորհ-ների վերականգնում էին ակնկալում, որտեղից իմանալին, որ ընդամենը մեն տարի անց դատարկվելու է Արարատյան աշխարհը և իրենց հավատացյալների հոտը քշվելու Պարսկաստան, իսկ սուրբ տաճարն էլ առավել անշքանալով՝ դառնալու է գեռունների բնակավայր: Քիչ էր մնում, որ նույնիսկ սր. Էջմիածնը տեղափոխվեր օտար հող²²: Պատճառն այն էր, որ շահ Արքաը Բայերին տեղահանելուց հետո, տեսնելով, որ նրանք շարունակում են կապված մնալ Բայեններին և ցանկանում են վերադառնալ, և որպեսզի կտրի Բայրենիքն կապող հոգևոր թելերը, որոշում է Էջմիածնի տաճարը քանդել, քարերը տեղափոխել Սպահան և այնուղի կառուցել: Շահի հրամանով Թահմազ Ղուկի խանը տեղահանում է Էջմիածնի տաճարի մի շարք քարերը՝ «սուրբ սեղանը, որի վրա սուրբ պատարագ էր մատուցվում, Քրիստոսի իշման տեղի քարը, ավազանը, մի քար բեմի Բարավային կողմի աստիճանից, մի քար բեմի Բյուսիսային կողմի աստիճանից, ...չորս քար եկեղեցու չորս անկյուններից»²³ և այլ սրբազն քարեր, ընդամենը 15 քար, այդ բոլորը Բատ-Բատ դնում է կաշվի մեջ, կարում և զինվորների ուղեկցությամբ 1815 թ. Բասցնում Սպահան: Միայն տաճարի բոլոր քարերի տեղափոխության դժվարությունը սր. Էջմիածնին փրկեց կործանումից:

Այն ժամանակ, երբ երկիրը Բամարյա անմարդաբնակ էր դարձել, Էջմիածնն անշքացել, Եկրոպայից Բայտնվում են մի խումբ միսիոններներ:




Ժողվ Տուրնեֆոր,
1710 թ.:

Մայր աթոռ և Էջմիածնի
ընդհանուր տեսք,
Նկարիչ՝ Գրելո:



A. Projet de l'Eglise d'Etchmiadzin.




Էջմիածնի Մայր տաճարի
հատակագիծը,
Նկարիչ՝ Գրելո:

Հայ ավանդության Թրիստոսին
խոցած գեղարջու,
Նկարիչ՝ Հ. Սասսե, 1879 թ.:

Եթե շամ Արար ավարատել էր երկրի աշխարհիկ հարստությունները, ապա միսիոներները փորձում էին փախցենել մեր հոգևոր արժեքները՝ բրիստ- նեական հավատքի սուրբ մատուցմեները: Պատկերացնելու համար, թե Բայոց բրագաղթից հետո ինչ օրինասական վիճակում էին նրա սրբաւելի- ները, դիմենք դեպքերին ժամանակակից պատմիչ Առաքել Դավոհծեցուն, որը պատմում է մատուցմերի առևանգման այս ամոթայի պատմությունը: Միսիոներ հայրերը «շատ ու քիչ շրջագայելուց հետո եկան Սուրբ աթոռ Էջ- միածնին և այնտեղ օթևան բռնելով, մնացին շատ օրեր: Հատ իրենց մար- դագող հնարքների մտերիմ երևալով վաճականների և գյուղացիների աշ- քին՝ նրանց առինքնել էին: Հայրերն ամեն օր գնում-գալիս էին սուրբ Կույ- սեր Գայաների ու Հոհիսիմեի տաճարները: Այս երեք տաճարներն են՝ թե՛ Էջմիածնի, թե՛ Գայանեի և թե՛ Հոհիսիմեի, ավերված, խախտված, խար- խլված ու անշքացած էին... Էջմիածնում միայն սակավաթիվ միարաններ կային և այն էլ խիստ տգետ ու գոնիիկ: Խակ Գայանեի ու Հոհիսիմեի վաճ- քերը ամենին անբանկ էին ու անպարհսաւ: Նաև եկեղեցիներն ու խորան- ները դրներ չունեին, իսկ արտաքին կողմից՝ ամբողջ տաճիքը և որմնաւե- րեսները քանդված էին, իսկ հիմքերը խարխլված ու խրամատված: Ներսի կողմից քեմ ու եկեղեցու հատակը քանդքնդված էին ու ամրող եկեղեցին և խորանները անասունների աղբով լցված, որովհետև ամուն ու ձմուն օրերին անասունները՝ եզներն ու ոչնարները, մակաղում էին եկեղեցիների մեջ: Գայանեի տաճարի տաճիքը ամբողջովին ճատել էր, միայն պատերն էին կանգուն և ուրիշ ոչինչ»²⁴:

Միսիոներները երկիրն ու Բայոց սրբաւելիները քանդութարափ, ան- տերունչ տեսնելով, մոռանալով քրիստոնեական հավատքի պատվիրան- ները, քանդում են Հոհիսիմեի դամբարանը և... գողաճում նրա մարմնի մնացորդները՝ սուրբ մատուցմերը: Բարեբախտաբար, մի քանի հայեր այդ նկատելով՝ Վրա են հասնում և արգելում, քայլ, ինչպես Դավոհծեցին է վկա- յում, Մելքիսեթ կաթողիկոսը կաշառված լինելով, թույլատրում է, որ գերվեն սուրբ կույսի մատուցմերը: Մի քանի եախկոպաններ ըմբռատանալով, մի- սիոներներից են են խոր մատուցմերի մեծ մասը և վերաթաղում դամ- բարանում: Մնացյալը միսիոներները տանում են նախիչեանի Երնջակ գա- վան, մյուս մասը՝ Սպահան, ուր հայերը մի շարք արկածներից հետո, շամ Արասի միջամտությամբ, են են խորս:

Ի վերջո, տարիների թափառումներից հետո, Հոհիսիմեի մատուցմերից մի փոքր կտոր հասնում է Հնդկաստանի Գուահանգ, որը 16-րդ դարից գտնվում էր պորտուգալացիների ձեռքին, և այնտեղ դրա վրա կառուցվում



Մայր տաճարը:

Մայր տաճարը
Ա. Հոհվսիմեն և
Ա. Շողակաթը,
Նկ.՝ 1796 թ.:



Մայր աթոռ ս. Էջմիածինը,
XVIII դ. նկար:

Մայր աթոռ ս. Էջմիածինը,
XVIII դ.:



է եկեղեցի ու կուսանոց: Նշխարմերից մի փոքրիկ կտոր էլ հանգրվանում է նախիջևանին մոտիկ մի գյուղում, որտեղ կառուցվում է և Հոդիսական եկեղեցի²⁵:

Անշուշտ, սրբության սրբոցի՝ Մայր տաճարի անշքանալու ու խարխլվելը շատերին էր խոր վիշտ պատճառում, և ամա, 1627-ին, երբ Էջմիածնի լուսարար է դառնում Մովսես վարդապետը (Խետագայում՝ Կաթողիկոս), Բայրենավեր ուժերը համախմբելով նրա շուրջը՝ վերականգնում են Բայոց գլխավոր սրբատեղիները²⁶: Դեպքերի ժամանակակից Առաքել Դավիթինցին պատմում է. «Սուրբ աթոռը, որովհետև բոլորովին դատարկվել էր ունեցվածքից, կողոպտվել էր զարդերից, ոչ գիրք կար, քանի որ այնտեղ ժամանացություն չկար, և ոչ էլ ընթերցում, ոչ գգեստ ու շուրջառ, որովհետև ժամանակագություն ու պատարագ չկային: Մինչև անգամ Քրիստոսի իշման տեղն ու սուրբ սեղանը ծածկոց չունեին: ...Ոչ խնարկություն, որովհետև բուրգառ ու խուն չկար: Եկեղեցու սպարակած հատակը քանդրենաված էր, դարձել էր գեռութեաների ու սուրբութերի բույն, իսկ ունեցած ամենամեծ լուսամուտները բոլորը բաց էին առանց շրջանակի, որտեղից թռչունները ներս էին մտնում, եկեղեցին լցում ծիրաներով ու ծեղերով և այլ աղբով, որոնք ամեն օր հարկադրված սրբում էին: Իսկ առավոտյան լուսանալիս թռչունների ձայները խացնում էին ժամանացությունը»:

Հողն ու մոխիրն այնքան էին բարձրացել, որ եկեղեցու շուրջն ամեն կողմից աղբն ու հողը լոթ կանգուն բարձրացել, եկել ծածկել էր եկեղեցու հիմքերն ու աստիճանները, որ դրսի կողմից են:

Իսկ եկեղեցու կամ տաճ զարդեր, սպասքներ ու անոթներ բնավ չկային, որովհետև ինչ-որ եղեկ էին հին ժամանակներից, կաթողիկոսները բույրը վաճառելով կամ գրավ դնելով վատնել էին...

Մրանք Մովսես վարդապետը ազատեց. դրանք էին սուրբ Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակես Բայրապետի Աջը, Զան Աղջոց վաճքի սուրբ Ստեփանոսի Աջը, որոնց հետ խաչ, սկիբ, բուրգառ, շուրջառ և այլ իրեր:

...Կաթողիկոսներն այստեղ՝ Էջմիածնում չեին բնակվում, այլ Երևան քաղաքում՝ Կաթողիկե եկեղեցում կամ երկրություն շրջագայում էին»²⁷: Մովսես վարդապետը տաճարը կարգի բերելով, կառուցում է լայն ու ընդարձակ պարիսայ, որն ուժ բուրգ ուներ: Այս պարիսամերը պիտի եկեղեցին մեծապես ազատենին գողերի ու ավազակների ունաճգություններից: «ապա արևմրտյան կողմում պարապի մեջ շինեցին դարպաս, տներ իրենց և հյուրերի պետքերի համար: Հյուսիսային և արևելյան կողմերում շինեցին միաբաների բնակության խցեր, իսկ հարավային կողմում շինեցին սեղանատուն, փուռ, տնտեսատուն, ցորենի և այլ հյութերի ամբարանոց: Այս բոլոր շինվածքներից միայն պարիսան է հողից շինված, իսկ մնացած բոլորը շինվեցին տաշված քարով, թրծված աղյուսով, կրով ու գաջով, գեղեցիկ ու վայելու հորինվածքով»²⁸:

Բայց ե՞րբ է եղեկ, որ Հայաստանն ու Բայլ շունչ քաշելու, կառուցելու ժամանակ է ունեցել: Դեռ նոր-նոր էին կարգի բերգում Մայր աթոռն ու Վաղարշապատը, երբ 1636 թ. բոնկված նոր՝ թուրք-պարսկական պատերազմը երկրի սակավ բնակչությանը նոր արթավիրքներ բերեց, իսկ նորակառուցներն էլ ավերվեցին: Թշնամիներն այրում են Էջմիածնի բոլոր փայտաշեն կառույցները, և նոր կաթողիկոս Փիլիպոս ստիպված այդ ամենը վերականցնում է այս անգամ քարով, նոյնիսկ վանականների հացկերույթի սեղանն ու նստելատեղերը քարից է պատրաստել տպիս, որ հրոսակները չկարողանան այրել: Արևելյան կողմում կառուցվում են նոր խցեր, պարսկից դուրս երկու գմբեթավոր ծիթքանքը²⁹ և այլն: Այնուհետև Փիլիպոսը ձեռնարկում է սր. Գայանեի և սր. Հոհիսանի տաճարների նորոգումը, որովհետև, հնացես տեսանք, երկուսն էլ ավերակների էին վերածվել, փլվել էին տաճերներն ու գմբեթները, նոյնիսկ հատակի սալարկն էր հանվել: Այրողը նորոգվեց, և կրկին գմբեթներին հատեց «տերունական խաչի հշանը»: Այս ամենն արվեց ընդամենը երեք տարվա ընթացքում և ավարտվեց 1653-ին³⁰, իսկ մեկ տարի անց, սկսվեց Էջմիածնի զանգակատան շինարարությունը³¹:

Մինչ այդ Էջմիածնի էր փոխարքությունը Հովհաննավանքի դպրատունը, որը Բայտնի դարձավ «Վարդապետարան» անունով. այնտեղ դասավանդում էին ժամանակակից ուսուցչապետներ և հաւատնի գիտականներ Ուկան Երևանցին, Միենան Զուղակեցին և Ստեփանոս Լեթացին:

1694-ին իշխան Աղամայ Շոռորեցին Վաղարշապատում կառուցեց Շողակաթ եկեղեցին: Ղազար Զամեկեցի կաթողիկոսի օրոք (1737—1751 թթ.) լուսուցվում են հին վեհարանը և Ղազարապատ հյուրանոցը: Այդ տարիների Էջմիածնի հյուրերից էր նադիր շահը, որը 1735-ին վաճք այցելելով որոշ արտոնություններ է տալիս:

Հայերեն առաջին տապահի գրքի հրատարակությունից ուղիղ 260 տարի անց՝ 1772-ին Էջմիածնում, Սիմեոն Երևանցու հիմնադրած տպարանում լույս է տեսնում Հայաստանի առաջին տպագիր գիրքը: Իսկ չորս տարի

անց կառուցվում է նաև թղթի գործարան: Սիմեոն Երևանցին ձեռնարկեց լայնածավալ շինարարություն: Նա քանդել տվեց վաճքի հարակից գյուղական շինությունները և Մայր տաճարն առանձնացրեց Վաղարշապատից ու ազատված ընդարձակ տարածությունը շրջափակեց հողաշեն պարիսպներով³²: Խակ Վաղարշապատ գյուղի համար կառուցեց նոր եկեղեցի՝ և Աստվածածինը³³: 19-րդ դարի վերջին պարիսպների և գյուղի միջև ընկած տարածքում կրկին շինարարություն ծավալվեց: Կառուցվեցին խանութներ, արհեստանոցներ, բաղնիք, մեկ-երկու հարկանի քարե և աղյուսե տներ³⁴ և այլն:

Հետաքրքրական է, որ երբ 18-րդ դ. վերջին Հովսեփ արքեպիսկոպոս Արդությանը ուսուաց կառավարության հետ բանակցում էր հայոց անկախությունը ուսուաց կառավարությունը վերականգնելու նպատակով, որպես ապագա մայրաքաղաք առաջարկում էր կամ Անին, կամ Վաղարշապատը³⁵:

1783 թ. հայ-ուս դաշնագրի նախագծում հայկական կողմը գրում է, որ հայոց ապագա թագավորը պետք է հայոց օրենքով «Վաղարշապատ թագաւորական քաղաքն ի սուրբ Էջմիածին օծանիցի» և որ «զթագաւորական քաղաքն պատրաստեալ ի Վաղարշապատ կամ լԱնի»³⁶:

18-րդ դարի վերջերի Վաղարշապատի և ընդհանրապես հայ իրականության մասին անգնահատելի սկզբանարյուր է թիկ վաղարշապատի Հարություն Արարատյանի հուշագրությունը, որ 1813-ին ուսուերեն հրատարակվելուց հետո, կարճ ժամանակում թարգմանվեց գերմաներեն և անգլերեն:³⁷

Խակ որքան էր այդ տարիներին Էջմիածին վաճական միարանների թիվը: Ըստ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի 1781 թ. գրած մի նամակի, այդ թվականին, բացի վաճքի բազմաթիվ հյուրերից և ուխտավորներից՝ «երթենկողաց բազմաց», սուրբ Աքոռոի «մշտական հացակերքն լինին» 500 հոգի³⁸: Էջմիածին բարեկեցությունն ու միարանների թիվը կտրուկ ընկավ ի հետևանք հետագա տասնամյակներում իրար հաշորդած ասպատակությունների, կողոպուտների, նաև 1787 թ. Արարատյան աշխարհում մոլեգանած ժամանակից:³⁹ 1801 թ. կազմված մի ցուցակի նամաճայն, վաճքն ուներ 22 եպիսկոպոս, 30 վարդապետ, 6 քահանա, 25 սարկավագ, 15 դպիր և այլք, ընդհաննը 197 հոգի⁴⁰: Վաճռում կար նաև գինյալ պահակախումբ, որը պաշտպանում էր կաթողիկոսարանն ու միարաններին, ճամապարհորդությունների ժամանակ ուղեկցում բարձրաստիճան նոգեռականներին: 1801-ին վաճքն ուներ 23 հրացանակիր⁴¹, որոնց, վտանգի դեպքում, միանում էին նաև Վաղարշապատի գինյալ գյուղացիները: Խակ 1812-ին Սերովը Կարնեցին Բաղրամից Էջմիածին կատարած իր ուղևորության նկարագրության մեջ գրում է, որ Էջմիածնում «Երեմանի 20-ի փոխարեն այժմ միայն 8 եպիսկոպոսներ կան, 15 վաճահայրեր և 30 արելաներ: Բացի այդ, այնուղի կան շուրջ 100 սարկավագներ, դպիրներ և ուսանողներ, չհաշված վաճքին սպասարկող 200 մարդկանց: Ընդհաննը 350 մարդ»⁴²:

19-րդ դարը ևս սր. Էջմիածին ու Վաղարշապատին նանգատություն շրերեց: Դարասկզբի առաջին երեք տասնամյակները փորձության տարիներ էին, և վաճքի ու Վաղարշապատի գինյալ շատ մուր ամպեր կուտակվեցին: Էջմիածին, այսպես ասած, ավանդական կողոպությներին պեկացավ ևս մեկը՝ հանձին Անդրկովկաս Շերիտում ուսական բանակի:

Ինչպես հայունի է, 1801 թ. Վրաստաճ հետ ուսուական կայսրությանը միացվեց նաև Արևելյան Հայաստաճ մի մասը:

Մի քանի տարի անց 1804-ին ցանկանալով ընդարձակել կայսրության սահմանները՝ Ցիցիանովի (Ցիցիշվիլի) գիշավորությամբ ուսուական բանակը պաշարեց Երևանը: Հայերը հավատալով ուսուերի խոստումներին և կարծելով, թե քրիստոնյա պետությունը քրիստոնեաբար կվարվի հավատակիցների հետ, օգնում են Ցիցիանովին: Էջմիածին միարանությունն էլ սնընդամքերը հսկայական պաշարներ է տրամադրում պարենի խստ կարիք ունեցող բանակին: Բայց չկարողանալով Երևանը գրավել, Ցիցիանովն ստիպված է լինում վերադառնալ Թիֆլիս՝ նահանջի ճանապարհին կողոպտելով սր. Էջմիածինը⁴³: Ինչպես ժամանակի կաթողիկոս Դավիթն է գրում. «Եւ այս ինչ մտաք աստ այնպէս տապալեալ և քայքայեալ՝ որ տեսողաց ամենից զսուկումն և զդառնադառն կակիծ և մորմոր առ քերեր ի սիրտս»⁴⁴, եկեղեցու դոմենը կոտրված էին, գանձեր գտնելու նպատակով պատ ու հատակ քանդված, շատ բան անարգված ու ջարդուիչոր արված, սուրբ մատուցներն աղբի հետ խառնված: Ուսուական բանակն իջ գտել՝ թալանել էր, տարել էր ոչ միայն բանկարժեք իրերը, ուկեղենն ու արծաթեղենը, այն միարանների ուտելիքը, հագուստեղենը, ուղյան նրանց համեստ կաթ-կարասին, ինչպես կաթողիկոսն է գրում, «ոչ ուտելոյ բան էին թողեալ մեզ, ոչ նստելոյ և ոչ ագանելոյ»⁴⁵:

Այս կողոպուտից մի քանի օր անց, Էջմիածին է այցելում Իրանի Ֆարալի շահը, որը երեք օր մնալով, կարգի է քերել տախու եկեղեցին ու շրջակայքը, ուսուերի հասցրած վնասի շափերը տեսանելով, հրամակում է, որ

առժամանակ կաթողիկոսարանն ու Վաղարշապատն ազատվեն հարկերից, ինչպես կաթողիկոսն է գոհունակությամբ գրում, «ինչ բան պահանջող չլիցի ի մեջ և ի գիտացոց մերոց»⁴⁶:

Ցիցիանովի կատարած կողոպուտի մասին իմանալով, հավատացյալ հայերը բազում զրկանքներով, շուտով Էջմիածինը կրկին դարձնում են զանձախտ: Այս ամենն էլ, ցավոք, հաջորդ տարի բաժին է հասնում գեներալ Նեսվետանին և նրա զինակիցներին, երբ 1805-ին գրավելով Արթիկն ու Շիրակավանը, ոուսական բանակը գալիս, երեք օր մնում է Էջմիածնում: Մինաս Լազարյանին երկու Բայ հոգևորականների գրած նամակից տեղեկանում ենք, որ «Ենարալ» Նեսվետանը փնտրում-գտնում է վաճրի թաքըստոցները «բացեալ զամենայն զդրուս ծածոկ սենեկաց սրբոյ Աթոռոյն, ժողովն զամենայն զոր ինչ գտան»⁴⁷: Ինչպես նամակագիրներն են գրում, սբ. Աթոռը մինչ «ուղղ ու ծուծն»⁴⁸ թալանվում է, տարվում են հազարավոր ուկերամներ, զարդեղնեն, գոհարեղնեն և այլն, անշուշտ նաև հոգևոր արարողությունների սպասքներն ու հոգևորականների թանկարժեք, ոսկեկար հագուստները:

Բայց Էջմիածին էին գալիս ոչ միայն կողոպտիշները, այլև հազարավոր ուխտավորներ, Բայ և օտար ճանապարհորդներ: Խակ 19-րդ դարի սկզբներից, ուսի և եկորպացի շատ գիտնականներ ու ուղեգիրներ ուղղակի իրենց պարտը էին համարում այցելել այդ ճշանավոր կենտրոնը: Նրանցից ամեն մեկը յուրովի է նկարագրել վաճրն ու նրա սպասավորներին, բայց այդ ամենի մեջ, գուցեն, ինչ-որ չափով ընդհանրական են ոուսական բանակի սպա Մորից ֆոն Կոցերովի 1817 թ. կատարած գրառումները. «Ինչպես նկարագրեմ այն հաճելի զգացումը, որ արթնացավ մեր մեջ, երբ խվանմական մի երկրում հոգնեցուցի ճանապարհից հետո հանկարծ երևացին մի փառավոր վաճրի գմբեթներն ու պարիսպները: Սա ճշանավոր Էջմիածինն էր, Բայ պատրիարքների բնակավայրը. անպաշտպան մի գառ՝ գալերի մեջ: Այս նվիրական վայրը վերջին հազար հինգ հարյուր տարվա ընթացքում դիմագրավել է պատերազմներին և դրանց քայլքից հետևանքներին, և այս երկար շրջանի ընթացքում... նրա բարեպաշտ բնակիչները չեն դադարեցրել իրենց աղոթքը»:

...Էջմիածնի վաճրը... մի փառավոր շենք է: Ունի բազմաթիվ սպարկված բակեր, որոնցում կան ավագաններ և աղբյուրներ, տնկված են գեղեցիկ ծառեր»⁴⁹:

Այդ նույն թվականին Վաղարշապատ է այցելում նաև ոուսական բանակի մեկ ուրիշ սպա՝ Դմիտրի Բորարիկինը, որն Ա. Երմոլովին հղած իր զեկուցագրում Էջմիածնի վաճական համալիրը ներկայացնում է որպես բարիքների շտեմարան, որ առատ սեղանների շորջ միաժամանակ կարող էին նստել շորջ հազար մարդ: Ըստ նրա հաշվումների, վաճրն իր խաղողություններից ու այգիներից ամեն տարի ստանում էր 15 հազար դույլ գիմի:

Գեներալ Ա. Երմոլովի և
Շիրեմ կաթողիկոսի
հանդիպումը.
Վիմագրությունը՝ Շուշի:



Բորարիկինը պշում է նաև, որ վաճական ողջ համալիրում տիրում էր կարգությունը⁵⁰:

19-րդ դարի առաջին տասնամյակներին, չնայած կողոպուտներին, զգալիորեն համարվում է կաթողիկոսական գանձարանը՝ շնորհիվ նաև Արևմտյան Հայաստանում ունեցած հսկայական տիրությունների ու սեփականության, հավատացալների նվիրատվությունների: Միայն 1818 թ. Կ. Պոլսի հայերից Էջմիածնի նվիրակները հավաքել են 559735 դուրուց⁵¹, եթե սրբ գումարենք նաև Արևմտյան Հայաստանից հավաքված նվիրատվությունները, ապա պարզ կդառնա, թե ինչո՞ւ էին դեպի Էջմիածնի ձգվում թուրք, որու ու պարսիկ կողոպտիչները:

1827-ին ողջ Արարատյան դաշտը, Էջմիածնն ու Վաղարշապատը վերածվեցին պատերազմի թատերաբեմի: Առաջացող ոռուական գորաբանակների համար Էջմիածնի պարսպապատ վաճքը լավ ուզմակայան էր, որտեղ պահում էին նաև վիրավորներին, որտեղից հայթայթում էին սննդի հսկայական պաշարներ: Ոռուական բանակում ծառայող դեկարտիստ Լաշինը 1827 թ. օգոստոսի 14-ին այդ մասին գրում է. «Վաճքը և նրանում գտնվող հիվանդներին պաշտպանելու համար այնուղի թողնված են հինգ թերթ հրանք և մի հետևակային գումարտակ»⁵²: Թե որքան սրտաբացորեն ու առատորեն էին Էջմիածնի ամրաբները բացվել ոռուական գորքերի առաջ, վկայում է դեկարտիստ Պուշչինը, գրելով, որ Ներսես Աշտարակեցին «իմ Էջմիածնում գտնվելու ամրող ընթացքում շատ սիրալիր էր իմ նկատմամբ և ինձ ուղարկում էր ամեն տեսակի պաշարներ: Երբ մենք անցանք դեպի Երևան, ապա այն ժամանակ էլ Ներսեսը շմորացավ ինձ, այնտեղ ուղարկում էր ինձ համար սննդամթերքների ամբողջ բարականներ, որը ես կիսում էի ընկերներին մենք»⁵³:

Բայց Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրությանը միացվելուց հետո, կարծես ի հեճուկս Ներսես Աշտարակեցու և մյուս հոգևորականների ու նայ կամավորականների, ընդհանրապես բոլոր նրանց, ովքեր հաճախ իրենց կյանքը չխնայեցին ոռուական գենքի հաղթարշավի համար, ցարական վարչականի առաջին գործերից եղավ հայոց կաթողիկոսների իրավունքների սահմանափակումը, հայոց եկեղեցու վրա հսկողության սահմանումը: Այդ նպատակով Առաջինը 1836-ին վավերացրեց «Պոլոժենիե» կոչվող կանոնադրությունը, որով պիտի առաջնորդվեր հայոց եկեղեցին Ռուսական կայսրության սահմաններում: Ըստ այդ կանոնադրության, խիստ նեղացվում էին կաթողիկոսի իրավատարդյունները, նոյնիսկ հայոց կաթողիկոսին, որին համազգային ժողովում էին աշխարհիկ և հոգնոր պատգամավորները, պետք է հաստատեր ոռուական ցարը, իսկ կաթողիկոսի առաջարած թեմակալ առաջնորդներին՝ ցարական բարձրագույն իշխանությունները: Կայսրության սահմաններից դուրս պարող հայերի հետ էլ կաթողիկոսը կարող էր կապ պահպանել միայն Ռուսաստանի արտօքին գործոց նախարարության միջոցով: Այս և նման մյուս սահմանափակումները նոյնիսկ օսմանյան սուլթանների ու պարսից շահերի մտքով չեր անցել, և բնական է, որ ավանդաբար անկախ հայոց եկեղեցու հանդեպ ցարական ուժնագործուները խիստ դժգոհություն և խորը հիանափություն առաջարին հայերի շրջանում:

Անկախ այս ամենից, ոռուական կայսրությանը միացվելուց հետո համեմատաբար խաղաղվեց երկրի վիճակը, ուխտավորների և ճանապարհորդների համար առավել մեծ հնարավորություններ ստեղծվեցին այցելու Էջմիածնին, տեսնելու Արարատ սրբազն լեռը:

Առաջին այցելուներից էր Դորպատի (Տարտու) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը, որն այսուղի էլ հանդիպել է երիտասարդ սարկավագ Խաչատոր Արովյանին, որն ստանձնել է թարգմանչի դեր: Հայաստան կատարած այցելության, Խ. Արովյանի հետ Արարատը բարձրանալու մասին Ֆ. Պարրոտը գրում է «Ինքառամից Արարատ» գիրքը, որում մանրամասն պատմվում է նաև Էջմիածնի կատարած իր առաջին այցելության մասին: Էջմիածնում Պարրոտին սրտաբաց ընդունելություն են ցույց տալիս. «Երբ ժամանեցին իմ ուղեկիցները, հայր Հովսեսի կարգադրեց թել մատուցել, միևնույն ժամանակ գորգերից, բարձերից, բարձիկներից ու ծածկոցներից պատրաստեցին մեր գիշերելու տեղերը: Վերնահարկում ինձ տրամադրեցին առանձնասենյակ, որտեղ կար լավ կարգավորված մահճակալ: Սենյակում կախված էին խաղողներ և խմձորներ, որոնք հաճակի ու թարմացնող բուրմունք էին տարածում:

Մեկ շաբաթից ավելի մենք չենք հանգստացել և լիովին պատրաստ էինք վայելելու այն բոլոր դյուրահարմարությունները, որոնք առատաձեռնորեն հատկացրել էին մեզ սիրալիր վաճականները: ...Մյուս օրը վաղ առվոտյան մեզ այցելեցին մի քանի արքեպիսկոպոսներ և վարդապետներ: Հայտնեցին, որ պատրիարքը մեծ հաճույքով կը նդունի մեզ: Մենք թուլավորվություն խնդրեցինք ներկա լինել մեծ պատարագին: ...Պատկառելի պատ-



րիարքը, շնայած աչքերի տկարությամբ, անձամբ վարում էր ժամերգությունը: Պատարագի մեծ մասը նա նստած էր նրագեղ փորագրերով զարդարված աթոռին: Ողջ հայոց եկեղեցու բարձրագույն հոգևոր հովվի ներկայությունը, բարձրաստիճան հոգևորականների կուտակումը, բոլոր թանկարծեր հանդերձանքով՝ ոսկով, արծաթով և մետաքսով ասեղնագործված, ազնիվ մետաղներից և թանկարծեր քարերով ծածկված գավազանները եպիսկոպոսների ձեռքերում՝ այդ ամենը հավատացյալի գգացմունքներին խոր, տպագորիչ և նվիրական ազդեցություն էին թողնում:

Պատարագից հետո մեզ տարան կաթողիկոսարան: Մտանք մեծ, սակայն մոտայլ սենյակ, որի միակ կահույքը դեմ դիմաց երկու շարք աթոռներն էին: Առանձին նստած էր պատրիարքը, իսկ նրա առջևում՝ վարդապետները և արքապատուածները՝ երկու շարքով: Մեզ հրավիրեցին տեղավորվել աջ կողմում, ինչը շեշտում էր մեր նկատմամբ ցուցաբերվող հարգանքը»⁵⁴: «Պարրուց մանրամասն նկարագրել է նաև վանքն ու նրա շրջապատը. «Եջմիածնից մի քանի հարյուր քայլ հյուսիս ընկած է Վաղարշապատ մեծ հայկական գյուղը, որը համախ նույնական կոչվում է Եջմիածնի: Այստեղ ապրում է 500 հայ ընտանիք: Ոչ հեռու Արարատի դիմաց գտնվում է սուրբ Գայանեի վանքը, մի մղոն կամ մի քիչ ավելի հեռու Երևան տանող ճանապարհի վրա փոքր, սակայն գեղատեսիլ Ծողակաթը և ոչ պակաս գեղեցիկ սուրբ Հոգիսիմեի վանքը:»

«Եջմիածնի պարհապը ոչ լրիվ քառակուսի է կազմում և ինչքան հիշում եմ մոտ 30 ոտք բարձր է: Կառուցված է չորացած աղյուսից: Նմանն օգտագործվել է նաև Երևանի ամրաշինություններում: Մղոն և քառորդ շրջագիծ ունեցող պարիսամ անկյուններում և բոլոր կողմերից ունի աշտարակներ, երկու գլխավոր և երեք ավելի փոքր մատուցներով: Ախոռները գրտերվում են արևելյան և մասամբ հարավային պատերի մոտ:

Այգիներով և բակերով պատճեշից առանձնացված են մեկ կամ երկու հարկամի տները, արևմուտքում՝ պատրիարքարանը, եպիսկոպոսարանը, վարդապետների, սարկավագների և ծառայողների բնակարանները, հյուրանոցը, գրադարանը և դասասենյակները: Իմ այցելության ժամանակ դրացը չէր գործում: ‘Իրանից քացի կամ նուկայական շտեմարաններ և մութ, երկար սեղանատում՝ կահավորված քարե սեղաններով ու նստարաններով մոտ 100 մարդու համար: Այստեղ սովորաբար վաճականները պատրիարքից և մի քանի շատ ծեր եպիսկոպոսներից քացի իրենց օրվա հացն են ճաշկում: Կա նաև փուռ, բաղնիք և շոկա: Ծովայում առևտուվ և արհեստներով գրաղվում են Վաղարշապատ գյուղի բնակիչները»⁵⁵:

Այդ տարիների Վաղարշապատի մասին անփոխարինելի է նաև 1827-ին, ըստ երկույթին, ուազմական նկատումներով ուստանակագիծը⁵⁶, ըստ որի, Վաղարշապատը ծուռումուու փողոցներով, իստ կառուցապատված բնակավայր էր և զբաղեցնում էր մոտավորապես 18—20 հեկտար տարածքը: Եջմիածնի վանքը գյուղից մի 120—130 մետր հարավ էր. Նրա պարսպապատ տարածքը չուրջ 8 հեկտար էր⁵⁷: Բարեխնդորեն գծագրված են նաև պարսպի ներսում եղած շինությունների հատակագծերը: Ար. Գայանեն նոյնական պատկերված է առանձնակի, քանի որ նրա շրջակայրում բնակելի կառույցներ չեն եղել: Ար. Հոգիսիմեն ու ար. Ծողակաթը ևս բավական հեռու են Վաղարշապատից, իսկ ար. Գայանեի մոտակայքից մինչև սրբական առջևում է հնում կառուցված պարսպի պատը՝ ար. Հոգիսիմեն քաժանելով Վաղարշապատից ու Մայր տաճարից: Ար. Ծողակաթից հյուսիս նախագծուա-


Մայր տաճարը
1890-ական թվականներին,
դրվագ «Արարատ»
ամսագրի շապիկից:

պատկերված են ղմդարձակ այգիներ, որոնք իրենց տարածքով թի են զիջում Վաղարշապատին: Վաղարշապատ—Երևան ճանապարհը ոչ թե Արեկային նման անցել է սր. Հոփիսիմեի մոտով, այլ ըստ այս հատկագծի, Վաղարշապատից սկիզբ առնելով, անցել է Մայր տաճարի արևմտյան պարսպի մոտից, հյուսիսից շրջանցելով սր. Գայանեն՝ ուղղվել է Երևան:

Հետագա մի քանի տասնամյակների ընթացքում, թեև նոր շինարարության ծավալմանը, պատկերը թի է փոխվում:

1847-ին Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսն սկսեց լճակի շինարարությունը, որն ուներ 170 մետր երկարություն և 70 մետր լայնք: Վերակառուցվեց քաղաքային շուկան, փողոցները բարեկարգվեցին, տնկվեցին հազարավոր թիեր, թթենիներ ու ծիրանենիներ: Ծառատնկումը շարունակվեց նաև հետագայում, ընդհուպ մինչև 1880-ական թվականները⁵⁸: Կառուցվեցին շաբաթի և մետաքսի փոքրիկ գործարաններ⁵⁹: 1868-ին լուս տեսավ «Արարատ», հաջորդ տարի հիմնադրվեց Էջմիածին թանգարանը, իսկ Խրիմյան Հայրիկի (1892—1907 թթ.) օրոք, նոյնիսկ վանքում անցկացվեց էլեկտրականություն: 19-րդ դարավերջին և 20-րդ դարի սկզբին Վաղարշապատում բացվեցին փոքրիկ ձեռնարկություններ, արհեստանոցներ և շոգիով աշխատող ձիթարան: Խայտարդես էր արհեստագործության տեսականին՝ արծաթագործություն ու ոսկերչություն, մոմագործություն, մետաքսագործություն, փայտագործություն ու քարագործություն: Վաղարշապատիներն աճեցնում էին բրինձ, ցորեն ու բամբակ և «ամեն տեսակի առատ պտուղներ»⁶⁰:

19-րդ դարի վերջին Էջմիածինը դառնում է որերի ու գաղթականների հանգրվան: 1895—96 թթ. ջարդերից հետո Արևմտյան Հայաստանից հազարավոր փախատականներ են պատսպարվում Վաղարշապատում: «Արարսի» թղթակիցը, այդ օրերին ինեւով վանքում, գաղթականների տառապանքների ականատեսն է դառնում. «1896 թվականին, աշնանը, մոտ մի ամսի շափ, մենք բաղդ ունեցանք ս. Էջմիածին գտնվելու: Այդ օրերումն էր, որ այդտեղ էր դիմում Վանի սոսկաի ջարդերից զկնի բազմաշարչար տաճկահայ գաղթականութիւնը: Խրաքանչիր շաբաթ, իրաքանչիր օր գաղթականների նորանոր հոսանք էր տեղում ս. Լուսաւորչի տաճարի հովանոյն ներքոյ պապատարան գտնելու: Ծանապարի երկարութիւնը, գաղթականների սոսկաի վիճակը, ծծեր երեխաներով ծանրաբեռնուած՝ բաւական էր, որ գաղթականութեան մէջ բազմաթի հիւանդութիւններ յառաջ բերեին: Վեհափառ Հայրաբանի հրամանաւ այս դժբաղդներին տրվում էր ամմիշական օգնութիւն. վանքի ներսը, շրջապատը, անտառը և պլանը լիբն էին անել վիճակի մէջ գտնուած գաղթականներով: Հիւանդների լաց ու կոծը, որդեկորոյս մայրերի աղիողորմ ճիշ ու աղաղակները, դժբախտութիւնից խելագարուած երիտասարդ ու պառա կանանց տիրագին հառաջանքները սիրու էին մորմոքում և կտրատում, և օրն ի բուն ներսին անտառի և տիրագգեաց ս. Գայիանէ վանքի շրջապատի օդը թնդացնում: Սակայն որո՞նց զգացմանց վերայ պէտք է ազդէին այդ աղեխարշ աղաղակները ու հեկեկանքներ, երբ բացի ս. Գայիանէի ի վերուատ օգնութիւն հայցող գմբեթներից, ներսէսից լիշաւուկ թողած տիրատեսիլ անտառից ու Արարատեան դաշտի այդ մասի



բնութիւնից, համարեա ոչ ոք չէր երևում այդտեղ, ուր ոտք անգամ չէին կոխում մեր բոլոր սրբազնեները առանց բացառութեան, թէն այդ առթի իրաքանչիրին դիմումներ էլ էին լինում, իսկ մեր սրբակրօն վարդապետները, սոցա մասին հօ՛ աւելի լաւ է լուել: Այս բոլորի մէջ միայն մէկն էր, որ լացում, ողբում, այցելում ու հովանաւորում էր այդ թշուառներին: Նա էր միայն, որ այս դժոնակ ժամանակում անուշադիր չէր թողնում տառապեալին և անկեալին, մեծին ու փոքրին, բոլորին էլ իր հայրական թեւերի տակ առնում ու խնամում. դա ամենայն Հայոց Հայրապետն էր, հայ ժողովրդի Հայրիկը, որ չ'նայած իր ալեզարդ հասակին՝ երիտասարդին յատուկ եռանդով դժբաղդ հօտի վիճակով էր գրադաւած ու նորա ներկան յացում և ապագան ողբում: Այս դժբաղդ գաղթականութեան և ս. Էջմիածնի միաբանութեան բռնած անտարբերութեան մասին գրելիք շատ ունենք, բայց յետոյ: Այստեղ մենք չենք կարող չյիշել մի առանձին հոգեկան հրճուանքով տարարադ գաղթական հիւանդաներին բժշկող վանական բժիշկ ա. Կարապետ Տեր-Խաչատրութեանի բարեխիղճ գործունեութիւնը, որ արժանի է մեծ շնորհակալութեան և ուշադրութեան այն բոլոր անձինքների կողմից, որոնց համար այնքան թանձ պետք է լինի գաղթականի թշուառ վիճակը»⁶¹:

Բայց սր. Էջմիածնին միայն վշտի հովիտ չէր. քրիստոնեական տոներին այն վերածվում էր ուխտավորների ուրախության վայրի: «Արարսի» թղթակիցը նոյն 1896-ին ներկա է լինում մյուսոնօրինությանը և գրում է. «Ս. Միոնօրինութիւնը, որ աւանդաբար կատարվում է եօթը կամ երեսմն երեր տարին մի անգամ, ներկայացնում է ոչ միայն իբրև կոնսական, այլ և ազգային միացնող, շաղկապող ծես, որը ս. Լուսաւորչից սկսած մինչև այսօր ի սիհիոս աշխարհի ցրուած հօտին հոգեպէս միացնում է Ս. Աթոռի հետ, անշէց պահելով վառ սէր և չերմեռանդ հաւատ դեպի Մայր տաճարը»:

Ս. Միոնօրինութիւնան հանդէսը բովանդակ ազգի մէջ տեսանելու փափագը այնքան մեծ է, որ նա դորա համար պատրաստ է զոհելու ամեն միշոց: Եթէ օր առաջ յայտարարութիւններ լինեն, մենք հաւատի ենք, որ փոխանակ 10 000-ի, ս. Էջմիածնին այդ օրերը դիմած կիմէր հինգ, վեց անգամ աւելի քազմութիւն, մասնաւանդ այժմ, երբ ազգին Սրբազնասուրը Հայրապետն է Տ. Տ. Մկրտիչ Ա. անուանի մեծ հոգեռականը:

Ս. Միոնօրինութիւնան նախընթաց ու յետազայ օրերին ս. Էջմիածնին կենդանութեան մէջ էր: Մի տեղ հայ գեղջկութիք եայլի են պարում և ցընծութեան զգացմունքներ արտահայտում, մի այլ տեղ գիշացիք հացի նըստած՝ ուրախ երգերով «Ս. Էջմիածնի» ու «Հայրիկի» կենացը բաժակներ տառաջարկում, մի այլ կողմում կոյր աշուն է ողը թնդացնում իր զգացուալից նրգերով, որոնցով փառարանում է Ս. Աթոռը ու նորա Հայրապետը»⁶²:

Ուխտավորների հոսքին նպաստում է և այն, որ 19-րդ դարավերջին կանոնավորվում է Վաղարշապատի, Երևանի ու Թիֆլիսի միջև հաղորդակցությունը: Հրայրա Աճառյանը, որ 1898-ին Էջմիածն է զայիս ուսուցչության, իր հուշերում գրում է. «Երևանի և Էջմիածնի միջև այն ժամանակ շատ կանոնավոր հաղորդակցություն կար: Բացի ֆայտոններից, կային մի քանի տեսակ հասարակ կառքեր, շատ էժան գնով: Ամենից հասարակն էր օմնիրուս կոչված կառքը, որի մէջ նատում էին մեջք-մեջքի տված ութ կամ տասը հոգի: Ծանապարհը միջն Էջմիածն տևում էր երկու ժամ և վճարում էինք 25 կոպեկ»⁶³: Իսկ «Արարատ» ամսագիրը 1903-ին գործունակությամբ գրում է. «Երկարուուին Երևաննան նահանգը միացրել է և մօտեցրել Ռուսաստանին և երրական կենդրոններին: Հայկական բարձրաւանդակն այցելող, Էջմիածնը, Արարատ պատմական սրբազն լեռող տեսնել ցանկողները ընդմիշտ ազատուել են փոստի, զանազան հանրակառերի պատճառած դժուարութիւններից, գիշերները անմաքուր փոստային կայարաններում քնելու պատժից. այժմ այցելուն գիշերը Թիֆլիզում նատում է վագոն և մեծ հանգստութեամբ, ծախսելով մօտաւրապէս այնքան, որքան առաջ միայն կառապաններին էր նույն տրուում, կես օրին կամ երեկոյան հասնում Էջմիածնին, Երևան, աւելի շուտ Ակերսանդրապօլ և Կարս: Ծանապարհի դիրութիւնը, ինչպես արդէն սպասում էր, սկսել է ճանապարհորդների մեծ հոսք բերել մեզ մօտ և օր չի անցնում, որ վաճքը նորանոր այցելումներ և ուխտավորներ չունենայ: Այդպիսի յաճախ կրկնուող այցելութիւնները ունենալու են իրենց մեծ օգուտները — ծանօթանալ միենանց և ճանաչել իրերի դրութիւնը և այդ պետք է որ առաջ բերի աւելի ուղիղ հայեացք՝ մեր Երկրի և յատկապէս Էջմիածնի վաճքի վերաբերմամբ:

Բացառապէս հաղորդակցութեան դիրութեան շնորհին էր, որ ոչ թէ գործով, այլ յատուկ այցելութեան նպատակաւ յունիս և յուլիս ամիսներում մեզ մօտ հիմք եկան այր. Ն. Մատը իր ընտանիքով, այր. Գ. Խալաթեանը, այր. Լեօն և այր. Մելիքն: Պր. Մատը, ինչպէս գրել ենք իր ժամանակին, ամառու պիտի անցկացնի Կովկասում հանգստանալու իր անցեալ տարուայ կատարած ծանը և երկարատն ճանապարհորդութիւնից և վերջացնելու է իր մի քանի սկսուած աշխատութիւններ: ...Պր. Մատը Էջմիածնում մնաց



10 օր, միաբաններից մի քանիսի հետ այցելեց Սաղմոսավանք, Յովհաննավանք, որոնց աւերակները ոչ պակաս քան Ասիմինը գրաւում են մասնագետների և սովորական այցելուների ուշադրութիւնը:

...Կերչին տարիներու Էջմիածին այցելողների համար մեծ հետաքրքրութիւն է Անրկայացնում Զուարքնոց եկեղեցու աւերակների պեղումը և մեր վերոհիշեալ հիւրերը մի քանի անգամ գնացին քննելու այդ աւերակները:

...Մայր Աթոռի մատենադարանի մէջ եկող հիւրերը շատ պարապելու ժամանակ չունեցան. պր. Մարդ խնդրեց իրեն ուղարկել Մխիթար Այրիվանցու ձեռագրից Մնացորդաց և Եզրի գրքերի արտապարութիւնն ու լուսաւկարները, պր. Խալաթեանը վերցրեց Անդրէասի և Անանիայ Ծիրակացու հատուածները, որ Գալուստ Տէր-Մկրտչեանը արտագրել էր մատենադարանի... ձեռագրից, իսկ ա. Լէօն տեսնելով մատենադարանի հայ լրագիրների ժողովածուն, ցանկութիւն յայտնեց գալու և հիւրեր ժողովելու իր ձեռնարկած աշխատութիւնների համար: Նա խոստացաւ մեր մատենադարանին ուղարկել իր ունեցած հայերէն գրքերի հին հրատարակութիւնները:

Պր. Մեյէն մեզ մօս դեռ երկար կմնայ, նա գրադուած է Հայոց լեզուի ձայնական քննութեամբ, հին ձեռագրերից, գիշաւորապէս հնագույն աւետարանների, օրինակների մէջ որոնում է հնչինների արտասանութեան և գործածութեան հնագույն ձևերը, միննոյն ժամանակ ցանկանալով աւելի ընտլանալ աշխարհաբար լեզուի հետ: Թիֆլիսից պր. Մեյէն ընկերացել էր «Բանասէրի» հրատարակից պր. Բասմանեանը, որը իշխանել էր վաճքի հիւրատան մէջ և հիւրասիրում էր այնտեղ:

Այրպիսի այցելութիւնները երանի թէ սովորական դառնան, հայկաբան մասնագետները դեռ շատ քան ունին ուսանելու մեր մատենադարանից, վաճքի միաբանների յաճախակի շփումը, մտքերի անձնական փոխանակութիւնը նոցա հետ պէտք է որ ունենայ զօրեղ քարերար արդինք, Երոպայում անձնական մերձաւորութիւն առաջ բերելու համար կազմակերպում են ամառուայ գիտնական կոնգրեսները, մենք գոր կմնանք գոնեն առանձին առանձին տեսնելու հայագետ մասնագետներին»⁶⁴:

Թե ինչպես էին վերաբերվում հայերը Էջմիածին եկող հայագետներին, իր հուշերում պատմում է Հր. Աճայանը. «Անգլիացի Կոնհրեր հայագետը եկել էր Տիգիս, Էջմիածին յաճախակի շփումը, մտքերի անձնական փոխանակութիւնը նոցա հետ պէտք է որ ունենայ զօրեղ քարերար արդինք, Երոպայում անձնական մերձաւորութիւն առաջ բերելու համար կազմակերպում են ամառուայ գիտնական կոնգրեսները, մենք գոր կմնանք գոնեն առանձին առանձին տեսնելու հայագետ մասնագետներին»⁶⁵:

Մի գրախանութիւն առաջով անցնելիս տեսնում է ցուցափեղկում Ամին ավերակների նկարներ և մտնում է ներս գնելու համար: Գրավաճառը կապոցը պատրաստում է, Կոնհրերը գումարը վճարում է և հասցեն տալով խնդրում է, որ ուղարկեն այսինչ հյուրանոցը: Գրավաճառն անշուշտ լրագրում կարդացած լինելով Կոնհրերի մասին հարցնում է.

— Դուք այն նշանավոր անգլիացի հայագետ Կոնհրերն եք, որ եկել եք Էջմիածին գնալու համար:

— Այս:

— Հետ վերցրեք այդ փողը: Դուք այդքան նեղություն եք քաշել, Անգլիացի եկել եք այստեղ մեր ազգին ծառայություն մատուցելու համար: Ես ձեզնից գումար պիտի վերցնեմ:

Կոնհրերի պեղումներն անհաջող են անցնում: Սրա վրա, ասում են, թե երբ որ առիթ է ունեցել Կոնհրերը խոսելու հայոց մասին, ասել է. «Հայոց պես ազնիվ, ուսումնասեր, անշահանդիր, ազգասեր ժողովուրդ չկա»⁶⁶:

Այդ տարիներին Բատկապես կաթողիկոս Խրիմյան Հայրիկի ջանքերով Էջմիածինը իրապես դարձավ գիտուական և մշակութային կենտրոն. Բրատարակում են հայագիտական գորքեր ու հանդեսներ, ուսումնասիրություններ: Այստեղ էին ապրում գիտության, գրականության և արվեստի բազմաթիվ նշանավոր գործիչներ. Հովհաննես Հովհաննեսիսանը, Գալուստ Տէր-Մկրտչյանը, Սարգսի Հայկունին, Մանուկ Արենյանը, Կոմիտասը, Եղիշե Թաղևոսյանը, Գարեգին Հովսեփյանը, Հակոբ Մանանյանը, Հրաչյա Աճայանը, ուրիշներ, որոնք համախմբված էին Գեղրգյան ճեմարանի շուրջը:

Բայց ցարական կառավարությունը ցանկանալով տրորել ազատությամ, գիտության ու մշակույթի ծիերը, որոշում է հարված հասցեն առաջին հերթին հայ եկեղեցուն, որի հովանու տակ էին հայ մշակույթի ու գիտության շատ գործիչներ, ազգային դպրոցները և այլն: Այդ նպատակով, ըստ 1903 թ. ցարական հրովարտակի, հայոց եկեղեցիները գրկվում էին կալվածքներից և հարքունիս գրավվում:

Այս հայատյաց քաղաքականության դեմ ուրի է ելառում ողջ հայությունը: Այդ օրերին Էջմիածնում և Վաղարշապատում տիրող վիճակի մասին Հրաչյա Աճայանը պատմում է. «Ազգային մարմինները և ամբողջ ժողովուրդը մի մարդու պես դուրս եկան այս հրամանի դեմ: Պահանջեցին հոգեսր իշխանությունից և Բատկապես կաթողիկոսից, որ չստորագրեն հրամանը և կալվածքները չհանձնեն: Կառավարությունը կարող էր բռնի ուժով գրավել այդ բոլորը՝ իրն ավազակ: Էջմիածնում ևս կազմակերպեց դիմադրություն: Մի քանի երիտասարդներ ներկայանում են կաթողիկոսին և առա-


Գևորգիան Շեմարանը:

Էջմիածնի Մայր տաճարը.
Վիմագրությունը՝ Ժակոտեհի,
Փարիզ, 1850 թ.:



Էջմիածնի կաթողիկոսարանի
գլխավոր հատակագիծը.

1. Մայր տաճար; 2. Նոր վեհապահներ; 3. Հին վեհարանը;
4. Ղազարապատ՝ վանական
սեղանատունն ու մկրտարանը;
5. Երկրորդ հարկը՝
հանրակացարան; 6. Երեմյան
խցեր; 7. Տպարանը;
8. Շեմարանը; 9. Գանձատունը;
10. «Նրիմյան» շենքը;
11. Վարչական շենք;
12. Տրդատի դուռը;
13. Վանատուն; 14. Արևելյան
դարպաս; 15. Ժամացուցի
աշտարակը; 16. Լվացքատուն;
17. Ավտոկայուց;
18. Կարսայատուն,
արհեստանոցներ;
19. Կաթնաղբյուր; 20. Հնագույն
կոթող; 21. Նահատակաց
Հուշարձան; 22. «Հայրիկան»
աղբյուր; 23. Աղյուր-հուշարձան
վեհամոր հիշտակին;
24. Աղյուր-հուշարձան
Ա. Զբացյանի հիշտակին:





Ամենայն Հայոց կաթողիկոսներ
Գլուք Չորրորդ,
Ներսէս Աշտարակեցին և
Սկրտիչ Խրիմյանը:

Մայր տաճարը:

Մայր տաճարի ընդհանուր
տեսքը վերնից:



չարկում են, որ կաթողիկոսը չատորագրի. «Խա՛, ո՞յ էիք դուք, երբ Հայութիկը երիտասարդ էր, ձի նատած զյուղե-գյուղ ման կուգար և ժողովրդին հեղափոխություն կառվեցներ: Գացե՛ք, գացե՛ք, Հայրիկը գիտե իր ամենիքը, ձեր խրատին պետք չունի»: Երիտասարդներն ուրախացած մեկնում են:

Երևանում նոյնական կազմակերպում է ժողովրդական ցույց՝ առաջնորդարանի առաջ: Բանաստեղծ Ավետիք Խահակյանը երկու ընկերներով վերցնում են առաջնորդ Սուրբիա եպիսկոպոս Պարզյանին և գնալով Էջմիածին, ներկայանում են կաթողիկոսին և հանուն ազգի և ժողովրդի պահանջում են, որ չատորագրի: Կաթողիկոսը խոստանում է:

Թղթեր են գալիս նաև Կոստանդնուպոլիսի պատրիարքարանից և պահանջում են շուայ մեր ազգային գումարները կառավարությանը, որովհետեւ նրանք ոչ թե պատկանում են միայն ոռուահայոց, այլև մեծագույն մասամբ հնդկահայոց, պարսկահայոց, տաճկահայոց, ամերիկահայոց և այլն:

Հասնում է վճռական օրը: Նահանգապետ կոմս Դիզենհաուերը Անդրկայանում է կաթողիկոսին և խնդրում է, որ ստորագրի, կաթողիկոսը մերժում է: Կոմսը մի քանի անգամ կրկնում է իր խնդրանքը, բայց կաթողիկոսը պատասխանում է.

— Գնա՛, գնա՛ կրսեմ քեզի, կհասկնա՞ս ինչ կնշանակե գնա. իշտե անոր «փաշոյ» կրսեն:



Գաղթականները
ս. Էջմիածնի շրջակալքում:

Դիզենհաուերը մեկնում է: Կանչում են Վաղարշապատի հայ դարբիններին, որպեսզի կոտրեն գանձարկը, որի բանալին կաթողիկոսը չէր հանձնած: Հայ դարբինները հրաժարվում են: Այն ժամանակ կոմսը Երևանից բերել է տալիս ոուս դարբինները, որոնք տապարներով սկսում են ջարդել գանձարկը: Գիշեր էր: Կաթողիկոսը վերևի հարկում լսում էր այդ հարվածների ձայնը և շդիմանալով՝ թողենում գնում է Հոփիսիմեի վանքը: Մինչև լուս դարբինները ջարդում են գանձարկը և վերջապես կոտրում: Բայց են անում և գտնում են, ինչպես ասում են, մի մուրիսկ և 5 ոուրի: Ուրիշներ ասում են, թե մինչև 30 000 ոուրի եղել է: Այս եղավ ամեն կողմէ: Գալիցինը, որ կարծում էր, թե Հայոց եկեղեցն միլիոններ ունի, ձեռքը գլխին է խփում և ասում է. «Ես հայերին չեմ ճանաչել»⁶⁶:



19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին բարեկարգվեցին Էջմիածինն ու Վաղարշապատը: Կառուցվեցին Հոփիսիմեի տաճարի հարավային և արեւալի պարսպապատերը, «Հայորիկյան» թանգարանը, տպարանի շենքը, հիվանդանոցը, սերտարանը, մատենադարանի շենքը: 1910-ին՝ Ալ. Մամթաշյանի նվիրատվությամբ սկսվեց նոր վեհարանի շինարարությունը⁶⁷:

Առաջին աշխարհամարտի տարիներին Էջմիածինը գործուն էր էր խաղում հայ ժողովրդի քաղաքական պայքարում, այստեղից էին հայկական կամավորական գնդերը կաթողիկոսի օրինությունը ստանալով՝ մեկնում ուղամաճակատ: Էջմիածինի հոգևորականներին կարելի էր հանդիպել ամենուր, թե՛ մարտադաշտում զինվորներին ոգևորելիս և ի մարտ առաջնորդելիս, թե՛ որբերի ու անտունների կողքին: Այդ տարիներին Էջմիածինն ու Վաղարշապատը դարձել էին հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի կենտրոններից, ուզմանաճակատից այստեղ էին բերվում նաև հայուրավոր վիրավորներ, այստեղ էին առաջին հերթին ապաստան փնտրում Արևմտյան Հայաստանի հայուր հազարավոր գաղթականները: Էջմիածնում կազմակերպվել էին հիվանդանոցներ ու որբանոցներ, գաղթականնե-

րին օգնող կոմիտեներ, այստեղից էին Հայաստանի տարրեր վայրեր առաջ-նորդվում գաղթականներն ու որբերը: Մարտիրոս Սարյանն այդ օրերի մաս-սին իր հուշերում գրում է. «Դիակները թափված էին փողոցներում, պա-տերի տակ, դժոխքի այդ սպանդանոցում... Կենդանի մարդկանց կողքին: Գևորգյան ճեմարանը Հովհաննես Թումանյանը դարձել էր որբանց: Ծեմ-քի շորջը փոփած էին հարյուրավոր երեխաների սառած դիակներ, որոնց արանքներում, այստեղ-այնտեղ, նստած կամ պառկած էին մահամերձ ու այյունահոսությամբ տառապող փոքրիկներ:

Գաղթականների այդ խմբի մեջ էր նաև մի գեղեցիկ հայութի, իր մինչ որդիների հետ: Ամեն անգամ նրանց մոտով անցնելիս, չէի կարողանում հիացմունք ու հոգմունք պահել: Երեխաններից մեկը հիվանդացել էր... Տարա մանկական հիվանդանոց, բայց չփրկվեց: Իրար ետևից մեռան նաև նրա երեք սևաչյա եղբայրները: Մայրն ամեն մեկին պատաճք էր կարել իր հագուստներից ու դիակները շարել կողք-կողքի... Մի երկու օր հետո այ-ցելեցի նրանց: Մայրը պատաճքում էր վերջին զավակին, հագուստի վերջին պատափիկով: Գրեթե մերկ էր: Եվ, որովհետև թելը վերջացել էր, իր եր-կար, սաթի պես սև հյուսքերից քաղել, անցկացրել էր ասեղին ու կարում էր»⁶⁸: Ամա այսպիսի նժոխային պայմաններում էր հայ գաղթականությունը, երբ 1917-ի գարնանը, Վաղարշապատում գտնվող ոուսական գնդի գիննվոր-

Որբերը եջմիածնում:





Զվարթնոցի վանահայրը
օրինում է VII հալկական
գնդի մարտիկներին:

Վեհափառը
օրինում է հայ կամավորներին:

Հայ կամավորների
զորահանդեսը Եջմիածնում:

Աերը, երևի թուրքական բարբարոսություններից ոգերված և օգտվելով համանքից, որ հայ ուազմիկները մարտադաշտերում էին, թալանի նպատակով հարձակվում են վաճքի և անպաշտան գաղթականության վրա: Այդ մասին Էջմիածնի «Արարատ» ամսագրի հաղորդագրության մեջ կարդում ենք: «Մարտ 7-ի գիշերը, Վաղարշապատ ձմերոց եկամ XXX գնդի գինուրների մի մասը, Բարբած դրութեան, անկարգութիւններ սկսելով յարձակութեան Ս. Աթոռի մեծ դարպասի առաջ գտնուող ս. Էջմիածնի սեփականութիւն կազմող խանութերի վերայ և սկսեցին կողոպատել անխնայ խանութերի մեջ եղած ապրանքները, որ պատկանում էին Վաղարշապատի վաճառականներին և զաղթականներին՝ դուրս թափելով, ավարի ու թալանի ենթարկեցին, իսկ յետոյ աւելի և տարրուելով իրենց վայրի հակումներով հրդեհեցին թէ Քին, մեծ խանութերը և թէ նոր շինածները:

Հրդեհն սկսվեցած գիշերուայ ժամը 12-ին և ամբողջ գիշեր կրակի ու բոցերի մատնուած ապրանքն ու խանութերներին ոչ ոք չեր համարձակում մուտենալ, ո՞չ խանութպանները, ո՞չ ապրանքի տերերը և ո՞չ գինուրական վարչութեան պետերը, սրանք անզօր էին գտնում իրենց միջամտել սանձառակ գինուրներին: Հրացանագութիւնն անընդհատ, աղաղակն ու հարբած գինուրների ձայները թագավորում էին: Հրդեհի բոցավառ լոյսը երկինք բռնած, բռոր էր զգել Մ. տաճարի աւագ գմբեթի և նորա խաչի վերայ, որ դարեր շարունակ այդպիսի տեսարանի ականատես չէին եղած: Միաբանական ուխտը, լրուած ու անարեն շրջում էր Մ. տաճարի շուրջը, անզօր որևէ միջոց ձեռք առնելու այդ վայրի զգացումները զապելու համար:

Հրդեհը տևեց մինչև առաօտ և ծագող արևը վկայ եղաւ այն համարի գործին, որ գործուել էր: Վեասների քանակը հասնում է մի քանի հարիւր հազար րուրու, թէ Մայրավանքին և թէ գիլացիներին ու զաղթականներին»⁶⁶: Միայն երկու օր անց՝ մարտի 9-ին է հաջողվում գինուրական իշխանություններին Վաղարշապատից հեռացնել կտիացած գինուրական:

1918-ի մայիսին, Սարդարապատի ճակատամարտի օրերին ևս Էջմիածնը վճռորչ դեր է խաղում հայ ժողովրդի ճակատագրում: Վաղարշապատում կազմավորվում են մարտական գնդեր, այստեղ, Գևորգյան ճեմարանում էր գտնվում գնդերալ Սիլիկյանի շտաբը: Այդ օրիսաւական օրերին անձնուրաց քաջություն են հանդիս բերում Օսն հայոց հոգևորականները՝ կաթողիկոսից մինչև քահանաներն ու սարկավագները: Արամ Մանուկյանը, անհանգուտացած Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի անվտանգությամբ, երկանի պարես Արշավիր Շահնարթունու հետ շտապում է Էջմիածն: Ա. Շահնարթունին կաթողիկոսի հետ հանդիպումն այսպես է նկարագրում: «Կաթողիկոսը մեզ ընդունեց անմիջապես: Մենք անցանք իր առանձնասենակը: Նախ՝ մեզ օրինեց, ապա հարց տուեց.

— Ի՞նչ է հշանակում ձեր այցելությունը այս ժամին: Որևէ վտանգ կա: Արամը պատասխանացեց.

— Ամեն ինչ կարգին է, վեհափառ: Մենք եկանք Ձեզ մոտ խնդրելու, որ եթե կարելի է Բիրական մենքէք:

Նա իր աշքերը սեռեց մեզ վրայ և ասաց.


— Կաթողիկոսը արձակուրդի կը գնայ յունիսին, ս. Լուսաւորիչի տօնից յետոյ: Այդ օրը ինքը կը կատարէ ս. պատարագը: Ուրեմն վիճակը ծանր է: Ո՞չ, տղերքս, Հայոց կաթողիկոսը նահանջող չէ:

Եւ, դառնալով Տիրայր արքայիսկոպոսին, հրամայեց զարկել բոլոր եկեղեցների զանգերը: Մի քանի վայրկյանից յետոյ, բոլոր զանգերը սկսեցին դողանջել: Կաթողիկոսը դուրս ելաւ իր անձնական յարկարածնից՝ ս. Տաճար իշնելու համար: Զանգերի մեջ լաւում էին մին հայկական շարականները և լալագին աղոթքը Հայաստանի ազտութեան համար: Հաւում էին նաև ս. Գայանեի եւ ս. Ծողակաթի եկեղեցների զանգերը:

Ես հիանում էի վաճքի կարգապահութեան վրայ: Ամենակարճ ժամանակամիջոցում բոլոր եպիսկոպոսները, քահանաները եւ զանազան վաճականները իրենց կրօնական զգեստները հագած, եկեղեցի էին մտնում: Ծեմարանի աշակերտները արդեն այնտեղ էին կաթողիկոսի ժամանումից առաջ՝ «Հրաշափառ» երգելու համար:

Կաթողիկոսը մտաւ տաճար: Իր բարձր հասակը մի առանձին տպաւրութիւն էր թողնում: Նրա ետեւից ամրող խումբը յառաջանում էր: Տաճար մտնելուց առաջ, 12 սարկաւագներ խնկարկում էին մասնաւոր համաշափութեամբ: Արամը եւ նա մտանք և. Տաճար բոլորից յետոյ:

Կաթողիկոսը ծնրադրեց ս. Կայքի առջեւ: Այդ միջոցին Էջմիածնի եւ շրջակայքի բոլոր եկեղեցների զանգերը դողանջում էին մահասարուու զանգով: Բոլոր ժողովուրդը հաւաքրած էր Մայր Տաճարի մեջ և շուրջը: Կաթողիկոսը աղօթում էր ծնկաչօք: Նրա հետ միասին աղօթում էին բոլոր կրօնաւորները և ժողովուրդը: Պարզ երեւում էր, որ Հայոց վեհափառ աղերսում էր Աստուծոյ, աստուածային հրաշքի համար: Երբեմն արտասուրք կառում էր նրա աշքերից, բայց միշտ նա պահում էր պաղարին:





Գավազան, XVII դ.:

Ծիսական
աղավնի-մեռուաթափ, 1797 թ.:

Մասնատում:

Բուրվառ:

Երկաթյա խաչեր, XIII դ.:

Eng. XVIII n.:

Մասնաժուղեր, XIX դ.:

Արժապատկեր գործ, XVIII հ.:

PUBL. XVIII

Տեսական խաչքար. XVII—XVIII դար.

ԿՐԱՅՔՆ. XVIII թ.

Հունական պատմ. XVIII թ.

(to 104-105).



Ծագիկի օձիք, 1712 թ.:

Մայր տաճարի
գանգակատունը, 1658 թ.:

Յետոյ, աս իր մոտ կանչեց Գարեգին արքայիսկոպոսին (ապագայ Կիլիկիոյ կաթողիկոսին) ու Զաւեն արքայիսկոպոսին և հրամայեց նրանց.

— Գնացէ՞ք, ասացէ՞ք, որ կաթողիկոսը այս սուրբ Վայրից պիտի չենուամ: Ինչ որ իրեն աւանդ է տրուած իր հայրերից, նա պարտաւոր է պաշտպանել, եթէ նոյնիսկ հարկաւոր լինի ընկեր այս սուրբ տաճարի մէջ: Եթէ Բայ ժողովուրդը, Բայ զինուորը չեն կարող պաշտպանել աստուածատուր և Միածնի Էջրով կրկնապէս սրբացած այս սուրբ Վայրը, ինքը առանձինն կը մնայ՝ նրան պաշտպանելու համար: Գնացէ՞ք, ասացէ՞ք, որ այդ հրամայեց Վեհափառ Եպիսկոպոսներին:

Յետոյ դառնալով ժողովուրդին՝ կաթողիկոսը ասաց.

— Ինձ առաջարկում են թողնել և էջմիածինը եւ գնալ հանգստանալ Քիրականում: Ես մերժեցի:

Վերջապես, մեզ դառնալով, ասաց.

— Ասացէ՞ Բայ բանակին թէ՝ Ես տեղից չեմ շարժում: Ես չեմ թողնում ս. Էջմիածինը: Եթէ մեր զինուրեները Արան չեն կարողանում պաշտպանել և թուրքերը մտնելու են ս. Էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն ս. Իջման սուրամալուս:

Ցետու ծնրադրեց, Բամբուրեց և Խջման վայրը եւ շատ տխուր արտահայտութեամբ ասաց.

— Տե՛ս, օգնէ իս զաւակներին, որ յաղթեն թշնամուն:

Ապա կրկին դարձաւ ժողովորուին և ասաց.

— Ինչու Մեծ Վարդան Քրիստոն անոնքով յաղթեց հեթանոսներին Տղմունի ափին և ընկաւ հերոսարար, նոյնպէս և այժմ պետք է յաղթենք: Այս սուրբ պատերազմին մէջ Ղետոն երեցը գնում էր իր խաչով կոռուպտերի առաջից: Այս օրուայ լիշտակութիւնը մեզ համար մեծ տօն է:

Այդ պահուն Գարեգին և Զատեն արքեսկզբովսները յառաջացան բազմութեան Միջից և ծնրադրեցին կարող իկուն առցել:

— Վեհափառ տեր, — ասացին Օրա

բանակի գումար, ինչպես Ղետնդ երցը:
Կարողիկոսը նրանց օրինեց և ասաց.
— Գնացեք, ասացէք զինուորերին, որ նրանք պատասխանատու են
բոլոր հայերի կյանքի համար: Մենք ոչ ոք չունենք մեր կողքին, բացի Քրիս-

Այնքան յուզի եւ մեծապահն էր այս պատկերը, որ Արամը եւ նազի էին կարողանում զայել մեր արտասուրքը⁷⁰:


Հայաստանի անկախության վերականգնման տարիներից՝ 1918—1920 թթ., Կրկին բարձրացավ Էջմիածնի ղերը, բայց խորհրդային կարգերի Բատատումից հետո Կորուկ Հավաքեցվեցին Կաթողիկոսության իրավասությունները, փորձեր արվեցին չեզոքացնելու հրա ազգահավաք և ազգապետան ուռու:

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալությունը (1955 թ.) շրջադարձային եղավ. Կրկին բարձրացավ և Էջմիածնի միջազգային հեղինակությունը, ձեռնարկվեց այնպիսի ազգաշահ շինարարություն, ինչպիսին Մայր աթոռը վաղուց չեղ տեսել: Նոր փառ ստացան թին շինությունները, Թիմովեցին Շորերը. Թիմովովին վերանորոգվեց Մայր տաճարը, 1962-ին ավարտվեց Շոր վեհարանի վերաշինությունը, 1968-ին վերանորոգվեց թին վեհարանը և վերածվեց կաթողիկոսների թանգարանի, 1974-ին կառուցվեց սեղանատունը, 1978-ին՝ վանատունը, 1982-ին՝ Ալեք և Մարի Մանուկյանների անվան գանձատունը, բարեկարգվեց Մայրավանքի շրջանարկը. բամբեսին հուշառություններ, տեղառութեահն խաչքաներ և այլն⁷¹:

Եթե 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին Վաղարշապատը կառուցապես այլուստեն և քարակերտ մեկ-երկու հարկանի գեղեցիկ տներով, փայտյա նախշազարդ պատշգամբներով քարե ամուր առանձնատներով, ապա հետագայում դրանք քանիւով, կառուցվեցին շատ դեպքերում անդեմ ու անորակ շենքեր, որոնք աղարտեցին հնագույն բնակավայրը: Եթե 1925 թ. ակադ. Ալ. Թամանյանի կազմած Վաղարշապատի գիտակոր հատկագծում ս. Գյայանեի, Հոփիսիմեի և Շողակաթի շրջակայրում թողնվում էր բավական ընդարձակ կանաչ գոտի, ապա 1939-ին կազմված նոր գլխավոր հատակագծով ս. Գյայանեի և Շողակաթի շրջակայրը կառուցապատվում էր: 1945-ին Վաղարշապատը վերանվանվեց Էջմիածին: 1958-ին և 1970-ին կազմվեցին Էջմիածին-Վաղարշապատի նոր գլխավոր հատակագծեր², քաղաքը կառուցապատվեց հիմնականում 4—5 հարկանի շենքերով: Վերջին 160 տարվա ընթացքում Վաղարշապատի բնակչությունը սրբաթաց աճեց, եթե 1831-ին այն ուներ 2175 բնակիչ, ապա 1873-ին՝ 2787, 1914-ին՝ 5755, 1919-ին՝ 6 886, 1926-ին՝ 8 400, 1959-ին՝ 19 580, 1968-ին՝ 27 100, 1978-ին՝ 44 040³, ապա 1991-ին Էջմիածին-Վաղարշապատում բնակվում էր 80 հազարից ավելի մարդ:



DVN



ԴՎԻՆ

Աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկի՝ Դվինի ավերակները միշտ է ձգել են հայ և օտար ուսումնասիրողների, ճանապարհորդների ու գիտնականների: Այն հաճախ շփոթել են Արտաշատի հետ. պատճառը, թերևս, երկու հշանավոր քաղաքների մոտիկությունն էր: Դեռևս 17-րդ դարում Դվին են այցելել Փրանսիացի ճանապարհորդներ Տավերնիեն և Շարդենը, իսկ 1814-ին՝ անգլիացի դիվանագետ Զեյմս Մորիերը, անցնելով Դվինով, գրել է. «Այս ավերակները... քաղաքաց են հողե քարութանդ պարհապների բլուրներից, այս ու այնտեղ թափված են գունավոր կղմինորի և ամանեղենի կտորտանքները: Պետք է շատ վառ երևակայություն ունենալ եղած մնացորդներից մեծ ու փառահեղ քաղաքը պատկերացնելու համար...»¹: Մորիերից հետո, երեք տարի անց, Դվին են գալիս նրա հայրենակիցներ գնդապետ Զոնստենը, պապ և հնագետ ու նկարիչ Ռոբերտ Քեր-Փորթըրը: Ահա թե ինչպիսին է տեսել Դվինը Քեր-Փորթըրը, որն ի դեպ, կարծել է, թե կանգնած է կործանված Արտաշատի տեղում. «Հողը ծածկել էր հսկա տարածություն, և ամենուրեք անկանոն բլրակներ կային, որոնք ժամանակի ընթացքում առաջացել էին ավերակների կոյստերի վրա: Սրանք և երկար, խասմանման շարքերը զգացնել էին տալիս, թե ես գտնվում էի մի քաղաքում, որն այս չկա... Այլևս չկային ո՞չ կոթող, ո՞չ գմբեթ և ոչ էլ որևէ բնակարանի պատ. ամեն ինչ խորտակված էր և ոչինչ չկար ներկայումս զգացնել տվող նրա գոյությունը. այստեղ ամեն ինչ վերջացել է և ծածկվել հողի բումբերի տակ՝ շիրիմներ, ոչ միայն ժողովրդի, այլ նաև նրանց տների, տաճարների, պալատների՝ ամեն ինչ քաղված մահանման լուսվան մեջ: Անիում ես շրջապատված էի հսկայական մեծության փառաթեղ հուշարձաններով: Արտաշիրում (իմա՝ Դվինում) ես կանգնեցի նրա գերեզմանի վրա... Չուր փնտրեցի որևէ տաշված քար կամ շենքի ակնհայտ հետք կամ կամոնավոր ճարտարապետական կառուցվածքի շինանյութ... այս վայրերում կարելի է տեսնել հսկա հաստությամբ մեծ պարհապների շատ մասեր: Նրանք շինված են արեվով չորացրած աղյուսով, որ նոյնիսկ այսքան դարերից հետո տակավին երեվում է կանոնավոր շարվածքը»²:

Քաղաքի անունը տարբեր ազգեր տարրեր են արտասանել. Բայ պատմիշները հիշում են Դուին, Դվին ձևով, արաբները՝ Դարիլ, Սիարին, Բոյները՝ Դուվիլ և այլն: Երբեմն Դվին կոչել են միայն բերդ ու բլուր, այնուհետև՝ ողջ քաղաքը, երբեմն էլ Արարատյան դաշտի մի մասը և Արաք գետը կոչվել են Դվին դաշտ և Դվին գետ:

Դվինի մասին հիշատակություններ ունեն ոչ միայն Բայ պատմիշները, այլև Բույն, արաբ, հոռմեացի, վրացի և ասորի բազմաթիվ մատենագիրներ: Սակայն անհնար էր ամբողջական պատկերացում կազմել Դվինի մասին, քանի որ հաճախ նրանք սոսկ հիշատակել են քաղաքի անունը: Հուզող շատ հարցերի պատասխանները միայն պեղումները կարող էին տալ:

Բայց դարեւ շարունակ շրջակա գյուղերի բնակչները քաղաքի ավերակներից տարել էին այն ամենը, ինչ հնարավոր էր: Քանի որ մոտակայքում քարհանքեր չեն եղել՝ տներ ու գոմեր կառուցելու համար նրանք Դվինից տեղահանել են նաև սրբատաշ քարերը, խոյակներն ու զարդարանակները: Տարել են ոչ միայն գտնված կենցաղային իրերն ու առարկաները, այլև 20 կոպեկ վճարելով, սալերով կրել են հողը՝ այգիներն ու արտերը պարարտացնելու համար³:

Դվինի առաջին գիտական պեղումները 1899-ին կատարել է Նիկողայյոս Մատը, որը ցանկանում էր պարզել Բայագետներին վայուց հուզող այն հարցը, թե ընդարձակ տարածություն զբաղեցնող հողաթմբերն ու ճարտարապետական մնացորդներն Արտաշատի, թե՝ Դվինի հիշատակներն են: Այդ



ჩետაխուզական պեղումներին մասնակցել է նաև Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երիտասարդ ուսուցիչ Հրաչյա Աճառյանը, որը ჩետափայում այսպես է հիշում իրենց թուղթիկ որոնումները. «Մարդ հայտնեց ինձ, որ պիտի գնա Արտաշատ գյուղը պեղում անելու, ուզում է մի օգնական վարձել: Խսկույն ես ասացի. «Ինձ իրքն օգնական չե՞ք վերցնի, առանց դրամական վարձատրության»: «Ամենայն ուրախությամբ,— պատասխանեց Մարդ, ձեզանից ավելի լավ օգնական ո՞ւր պիտի գտնեն»: Էջմիածնի վերադարձալով, ես ու Մարդ կառով մեկնեցինք Արտաշատ գյուղը, ուր նա մի մեծ սենյակ վարձեց մեր երկուսի համար: Կարծեմ 10 օր մնացնեք այնտեղ և հաջորդ օրվանից պեղումներն սկսեցինք: Նա ընտրեց մի ավերակ բարձունք, որ երկու մասին բաժանեց: Բարձունքի ձախ կողմը վերցրեց ինքը և բանվորների մի մեծ խմբով սկսեց փորել: Մի քիչ դեպի աջ, մի քանի բանվորներ էլ տվեց ինձ, փորելու համար բարձունքի աջ կողմը: Այսպես սկսեց մեր աշխատանքը: Մեր դիմացն էր Դվինը, կես ժամ հեռավորությամբ, որ նոյնական ուզում էր պեղել Մարդ:

Այնքան տարբած էր Մարդ երևակայությամբ, որ սպասում էր, թե պեղման ժամանակ նա կիշնի Արտաշատի հրապարակը, կգտնի Դավիթ Դվինեցու շիրիմը, կկարդա նրա տապանագիրը և կմոցնի իր վկայաբանության մեջ, որ պատրաստում էր տպագրության: Երազները շատ քաջալերիշ են, բայց Մարի երազը չկատարվեց: Ոչ մի հրապարակ մենք չգտանք: Մենք գտանք մի քանի խավ թողին, մեկը մյուսի ետևից, ինչ որ հշանակում էր, թե այնքան անգամ բնակություն և ավերած է կատարվել: Վերջապես հասանք հատուկը, դրսից ջրի խողովակները մտան ներս, բայց ունեցած գումարը վերջացավ և պեղումը շարունակելով հետաձգելով հաջորդ տարվան, Մարդ վերջ տվեց իր գործին»⁴:

Կայսերական հնագիտական հանձնաժողովին ներկայացված հաշվետվության մեջ Մարդ այդպես էլ չի կարողանում պատասխանել, թե ինքն Արտաշատու, թե Դվինն էր պեղում:

1904-ին Խաչիկ վարդապետ Դայյանը Դվինում պեղումներ է սկսում, որը տևում է մի քանի տարի: Նա Կաթողիկե եկեղեցում հայտնաբերում է տիրամոր պատկերով խճանկար, դրամներ, կերպարայ և ասեղնագործ բանվածքներ, խոյակներ, ջնարկած ամաններ, ձիթաճրագներ և այլն⁵:

Հետափայում, անբարենպաստ պայմանների հետևանքով Դվինում պեղումներ չեն կատարվում: Երեք տասնամյակ պիտի անցներ, մինչև որ այնտեղ նորից հնագետներ երևային՝ Սմբատ Տեր-Ավետիսյանի գլխավորու-



Թյամբ: Արշավախմբին աշխատակցում էին Հովսեփ Եղիազարյանը, Նիկոլայ Տոկարսկին, Բարկեն Առաքելյանը, Հարություն Մնացականյանը, Վարագատ Հարությունյանը, Արտև Կարապետյանը և Կարո Ղաֆադրյանը, որը և 1948-ից ղեկավարեց պեղումները⁷, արդյունքներն ամփոփելով «Դվին քաղաքը և նրա պեղումները» երկմատոր մեծարժեք աշխատության մեջ⁸: Հետագայում նորանոր գիտականներ են մասնակցում մինչև օրս շարունակվող Դվինի պեղումներին⁹, լոյս են տեսնում տասնյակ գրքեր ու հոդվածներ¹⁰:

Դվին բլուրը շուրջ 30 մետր բարձրություն ունի և հնուց ի վեր գրավել է մարդկանց ուշադրությունը¹¹: Նրա վրա բնակավայր է եղել դեռևս մ.թ.ա. 5-րդ հազարամյակում: Պահպանվել են մ.թ.ա. II—I հազարամյակների կիլոպայան պարիսպների հետքեր: Հայտնաբերվել են նախաքրիստոնեական ժամանակաշրջանի կրոնական շինությունների մնացորդներ և առարկաներ, դամբարանադաշտ՝ քարե արձանների ու քանդակների բեկորներով¹²: Այստեղ կյանքը հարատեսել է բազում դարեր՝ բլուրի բնակիչներին բերելով հաղթանակներ ու պարտություններ, ուրախություններ ու դառնություններ: Բայց Դվինը որպես քաղաք հիմնադրվել է 4-րդ դարի 30-ական թվականներին, երբ հայոց Խոսրով Կոտակ թագավորը (382—388 թթ.) արքունիքն Արտաշտիկ տեղափոխեց այստեղ և Դվինը հայտարարեց նոր մայրաքաղաք: Պատճառը Արտաշտիկ կիման էր: Քաղաքի շրջակա ճամփաները բազմաթիվ մահաբեր հիմքանդություններ էին տարածում: Խոսրովը, նոր մայրաքաղաքի կիման բարելավելու համար, քանզի այնտեղ շոգ էր և անտառազորկ, հիմնում է հնկայազանգված անտառներ, և ինչպես Փավստոս Բուզանդն է վկայում. «Երկու անտառներն են պարիսպներով փակեցին, առանց իրար մետ կցելու, անցուղաբջի ճանապարհի համար: Անտառն ամեց ու բարձրացավ»¹³: Խոսրովը բերում է նաև կենդանիներ և անտառ դարձնում արքունի որսատեղի: Նրա հիմնած անտառն այսօր էլ՝ շուրջ մեկուկես հազարամյակ անց, կա և պահպանելով հիմնադրի անոնց, դարձել է պետական արգելանոց:

Խոսրովից հետո էլ նրա հաջորդները մի քանի դար շարունակում են կառուցումներ անել՝ ամեն մեկն ըստ իր ժամանակի ոճի ու ճաշակի: Հետաքրքրական է, որ 1962 թ. միջնաբերդի պեղումների ժամանակ բացվեց սրբատաշ քարով այունազարդ մի մեծ դամբին: Ըստ հնագետների, այն 4-րդ դարում կառուցված Արշակունի թագավորների գահանիստ սրահն է, որը հատակին դեռևս պահպանվել էր աստիճանավոր այն բարձրությունը, որի վրա դրվում էր արքայական գամբը¹⁴: Հավանական է նաև, որ այն վաղ քրիստոնեական պաշտամունքային կառույց է եղել, մանավանդ, որ սրահում հայտնաբերվել են թևավոր խաչեր և թաղումներ¹⁵:

Արշակունիների անկումից (428 թ.) հետո Դվինը Մարզպանական Հայաստանի կենտրոնն էր: Երբ Գյուտ Կաթողիկոսը (461—478 թթ.) կաթողիկոսարանը Վաղարշապատից տեղափոխվեց Դվին, այն դարձավ Հայաստանի հանրապետությունը: Պահպանվել են կաթողիկոսարանի դամբին, դիվանատան, ճեմարանի, գանձատան, մատենադարանի հետքերը: Քաղաքի ճարտարապետական զարդը հետանոսական տաճարի տեղում կառուցված Կաթողիկե եկեղեցին էր: Պեղումների ընթացքում նրա մոտ բացվեց ամբողջությամբ մոխրով լցված 3,2 մետր խորության մի հոր: Այն ապացուցում

Զութակահարի պատկերով
սրբակ, X-XI դդ.:

Թոշնի պատկերով
հախճապակե թաս, X-XI դդ.:

Զսրակակած քրեան
արագիլի պատկերով:






Եր, որ այստեղ հեթանոսական կրակարան է եղել: Մոխրի մեջ գտնվեց մարդու այրված ծնուռ¹⁶: Թովմա Արծրունին պատմում է մի դեպքի մասին, որն ամենայն հավանականությամբ, կապ ունի գոտածոյի հետ: Ըստ նրա, պարսից Պերոզ արքան Հայաստան է ուղարկում մոգպես Վեղոյին, որը Շավասպ Արծրունու հետ խոշտանգում է քահանաներին ու հասարակ ժողովրդին, հափշտակում նրանց ունեցվածքը: Ապա և մեջյանի վերածում Դվինի Կաթողիկե եկեղեցին: Այդ ամենի մասին պատմին այսպես է գրում. «Մտան մեր երկիրը, Վրդովեցին քրիստոնեական միաբանությունները, փոթաչանորն ավերեցին եկեղեցները, աղոթատները, գետնին հավասարեցրին փրկչի սուրբ խորանը, հիմնավեր կործանեցին Սուրբ հոգու մկրտության մաքրափայլ ավազանը, ցավագնորեն շարչարեցին նոր կտակարանի սպասավոր քահանաներին, տղամարդկանց և կանանց մատնեցին ծանր հարկերի, բանտարգելության ու խոշտանգումների, որպեսզի դյուրությամբ հեռացնեն քրիստոնեան սուրբ հավատից: Բազում էր ունեցվածքի հափշտակությունը: Վատաքարագույն մասն արհամարհողներն ու մարտիրոսական շարչարանքներով նահատակվածները շատ էին, քան տատանվողները¹⁷: Այս մասին լուր ստանալով, Վարդան Մամիկոնյանը 450 թ. 1200 զինվորով հարձակվում է Շավասպ Արծրունու վրա և, «գոչելով այլուծի պես, արագությամբ, ամբողջ ուժով միասայր սրով երկատեց նրան»: Խակ Վեղոյին այրում է նրա իսկ հիմնած կրակարանի վրա¹⁸: Ըստ երևույթին, մոխրամորից գտնված ծնուռն այս վատահամբավ Վեղոյինն է: Այնուհետև, Դվինում քրիստոնեություն վերահաստելով, հայոց նախարարներն իրենց համար կառուցեցին արքայական պալատներ ու երեկի դատակերտներ, իսկ քաղաքը պատեցին որմնապարհապնդրով¹⁹: Հետագայում քաղաքը քանից ավերվեց ու վերակառուցվեց, քայլ առաջին ամենամեծ ավերածությունը կատարեցին արաբները, երբ 840 թվականին արշավեցին Հայաստան²⁰: Գրավելով ու ավերելով երկրի հարավային գավառները, նրանք շարժվեցին դեպի Դվին: 7-րդ դարի ականատես պատմիչ Մերետոսն այդ մասին գրում է. «Իրենց գալու հինգերորդ օրը նրանք հարձակվեցին քաղաքի վրա: Նրանց հաջողվեց վերցնել քաղաքը, որովհետև կրակ վառեցին քաղաքի շորս կողմում, ծխով ու նետագությամբ կարողացան հեռացնել պարհապնդրի վրայի եղած պահպաններին, աստիճաններ դրեցին, բարձրացան պարհապը և, ներս մտնելով քաղաքը, բաց արեցին դարպանները»:

Թշնամու զորքերը ներս մտնելով քաղաքը, կոտորեցին բնակիչներից շատերին և վերցնելով մեծ քանակությամբ ավար ու կողոպուտ, դուրս եկան ու հավաքվեցին նախկին ճամբարում: ...Նրենց նետ նրանք գերի տարան երեսունհինգ հազար հոգի»²¹:

Երկու տարի անց, արաբները կրկին հարձակվում են հայոց աշխարհի վրա: Թեղողորու Ռշտունին, զորք հավաքելով, ցանկանում է Հայկական Տավրոսի Կենտրոնական մասում՝ Զորա կիրճում փակել թշնամու ճանապարհը²²: Ինչպես 8-րդ դարի պատմիչ Ղոնդն է գրում, «Մակայն չկարողացավ նրանցից առաջ ժամանել, քանի թշնամիները, թևավոր օձերի նման, օդաքն արագությամբ հարձակվելով, իրենց ետևում թողեցին հայկական գորքը և առաջանալով ընթացան Դվին մայրաքաղաքը: Նրանք քաղաքը պատերազմելու ընդունակ ալրերից քափուր գտան, քանզի Թեղողորու իշխանի մոտ էին գնացել և միայն կանայք, մանուկներ և այլ խառնիճաղանչ (բնակչություն) կար, որի մեջ պատերազմելու ընդունակ այրեր չկային: Հասան քաղաքը, անմիջապես գրավեցին ամրոցը և այստեղ գտնվող տղամարդկանց կոտորեցին, իսկ կանանց ու մանուկներին երեսունհինգ հազար հոգի, գերեզմանության մեջ էր»²³:

652 թ. հայոց իշխան Թեղողորու Ռշտունու և Աստրիքի կուսակալ Մուավիայի միջև կաքվեց հայ-արաքարական պայմանագիր, ըստ որի Հայաստանը համարվում էր խալիֆայությանը հպատակ պետություն²⁴: Բայց երկու տարի անց, արաբները կրկին հարձակվեցին Հայաստանի վրա և շրջապատեցին Դվինը: Ըստ 9-րդ դարի արաք պատմիչ Բալազուրու. «Դվին քաղաքի բնակչները ամրամալով (բերդում), սկսեցին նրա (իմա՝ արաբների) վրա տեղայ նետերի տարափ: Այդ ժամանակ նաև քաղաքի պարիսպներին մոտեցին քարանետ մերենաներ և սկսեց քարեր տեղայ բնակիչների վրա՝ այս ժամանակ, մինչև նրանք հաշտություն և ողորմածություն խնդրեցին»²⁵:

Հայերը չեն հաշտվում արաքարական գերիշխանության հետ և Մոխրեն



Կաղանկատվացու վկայությամբ մի քանի տասնամյակ անց՝ 697—698 թթ., «արարքներին արգելափակում են Դվինում և դրանցից վաթումներկու հազար կոտորում»²⁶:

Մինչև 701 թվականը, այսինքն՝ մինչև արարական խալիֆայության բուն տիրապետությունը, Հայաստանը պահպանում էր որոշ անկախություն: Արարական տիրապետության շրջանում Դվինը դարձավ համարյա ամբողջ Անդրկովկասն ընդգրկող Արմինիա վարչական միավորի կենտրոն²⁷: Արմինիան կառավարում էր արար ոստիկանը, իսկ բուն Հայաստանը՝ հայոց իշխանը: Դվինը դարձավ արար ոստիկանների նստավայր: Այնտեղ հատվում էին պղնձեն և արծաթյա դրամներ՝ Դվին և Արմինիա մակագրությամբ:

Արարական խալիֆայությունը նույնիսկ Հարուս ալ-Ռաշիդ (786—809 թթ.) նշանավոր խալիֆի օրոք հանգիստ վիճակում չէ: Արար պատմիշ Յակուբին վկայում է, որ այդ ժամանակ Աղվանքում հանդես եկավ Արու Մուալիմ անունով մի ապատամբ, որի դեմ երկար պայքար մնեցին Արմինիայի ոստիկանները: Նրա հրոսակենքը 794 թ. հարձակվեցին Դվինի վրա, չորս ամիս պաշարեցին, բայց անհաջողության մատնելով՝ հեռացան²⁸:

Երկու տասնամյակ անց Դվինը նոր փորձության ենթարկվեց Զահիաֆ անունով մի արկածախնդրի կողմից: Սա ամուսնանալով Մուշեղ Մամիկոնյանի դատեր հետո, երազում էր գավթել Մամիկոնյանների տիրությունները, բայց Տարոնում ու Արշարունիքում հայոց իշխան Աշոտ Մասկերը շախչախնց նրան: Զկարողանալով Հայաստանի որևէ գավառում հաստատվել, Զահիաֆն իր որդո՞ւ՝ Արդ ալ-Մալիքի հետ ապստամբելով, 813 թ. հարձակվեց Դվինի վրա և գրավեց այս: Դեռևս 8-րդ դարի վերջերից Արմինիայի ոստիկանները հիմնական նստավայր էին դարձրել Պարտավը և Դվին էին այցելում դեպքից դեպք²⁹: Անդրկովկասի խոշորագույն քաղաքի գրավումը մարտահրավեր էր խալիֆայությանը, որի քաղաքական դրությունը կայուն չէր, և իշխանությունը նոր գրաված Մամուն խալիֆան ժամանակավորապես զիջեց ու Արդ ալ-Մալիքին ոստիկան կարգեց: Մի քանի ամիս անց Մամունը նոր ոստիկան նշանակեց: Արդ ալ-Մալիքը չհնազանդվեց և ապստամբելով՝ պաշարեց Պարտավը, բայց պարուվեց ու հապատակություն հայտնեց: Սակայն Արա անպատիծ մնալը չգոհացրեց Հայաստանում իշխող դիրք գրավող Բագրատունիներին, քանզի Զահիաֆյանները նրանց համար շարունակում էին մնալ վտանգավոր ախոյաններ: Սպարապետ Շապուհ Բագրատունին, ցանկանալով վերջ տու Զահիաֆյանների անօրինականություններին, հարձակվեց Դվինի վրա: Արդ ալ-Մալիքը զորք ուղարկեց նրա դեմ, սակայն Դվինում ներքին ապստամբություն ծագեց, և Վարդան պատմիչի վկայությամբ, քաղաքացիներն սպանելով նրան, բացեցին դարպասները³⁰:

Բագրատունիները քաջ գիտակցում էին, որ Հայաստանում գերիշխող դիրք գրավելու համար անհրաժեշտ է տիրել երկրի մեծագույն քաղաքին՝ Դվինին³¹: Այդ հաջողվեց Աշոտ Բագրատունուն (862—890 թթ.), բայց Հայաստանի անկախության վերականգնումից (885 թ.) հետո, հաշվի առնելով քաղաքի անապահով վիճակն ու ոտար ազգաբնակչության առկայությունը, նա գգուշացավ այն նորաստեղծ քաջավորության մայրաքաղաք Բուշակե: Աևն, որ Դվինն իրոք Աշոտ Առաջինինց էր և նրանից հետո անցավ որդուն՝ Մմրատ Բագրատունուն, հավատում է իր Հառիկալը. «(Դվինը) պատկանում էր մին ժամանակներում Աշոտի որդի Մմրատին՝ բոլոր հայերի թագավորին և նրա նախնիներին, և այդպես էլ այն մնաց նրանց մեծամեծների ձեռքում»³²: Մմրատ Բագրատունին ևս գգուշանալով, Դվինը թագավորական շղարձրեց, այլ երկրի նոր մայրաքաղաք Բուշակեց Ծիրակավան անառիկ բերդաքաղաքը: Ըստով Դվինի արար կառավարիչներ Մուհամմադ և Ումմայյա ներայինները շցանկանալով հայոց արքային հարկ վճարել՝ ապրս-

Երկարէ մկրատ:

Երկարէ կացին:

Քարէ արձանների գույններ:

Գիպս վարդյակ:



Դվինի շրամատակարարման
խողովակներից:

Նրբունելի:

Արծաթագործի
պղնձե թաս:

Պղնձյա ծրագ:



Մամբեցին: Սմբատ Բագրատունին գրոհում է Դվինի վրա, բայց ապստամբ եղբայրները փախչում են, սակայն ճանապարհին բռնվելով, բերվում են հայոց թագավորի մոտ: Սմբատը նրանց չարչարելուց և բավական ուսկի վերջնելուց հետո շղթայական ուղարկում է Բյուզանդիայի կայսր Լուսին³³:

Իր պատության ընթացքում Դվինը քանից ավերվել է: Սոսկալի աղետներ էին 854 թ., 858 թ., 869 թ. երկրաշարժերը, բայց ամենասարսափելին 893 թվականի երկրաշարժն էր: Արար պատմագիր Իրն ալ-Ասիրը այն այսպես է նկարագրում. «Լուսինը խավարեց, և Դվինի ու ամբողջ երկրի ժողովուրդը խավարի մեջ մնացին: Եվ խավարը մնաց, մինչև որ երեկոյան սև քամի փշեց և տևեց մինչև գիշերվա երրորդը: Իսկ գիշերվա երրորդին երկրաշարժ եղավ և քաղաքն ավերվեց: Նրա տներից միայն հարյուրի չափ տուն մնաց: Սրանից հետո մինչ անգամ ցնցվեց: Ավերակների տակից հանգածների թիվը էր հարյուր հիսուն հազար, բոլորն էլ մեռած³⁴: Իսկ Մովսես Կաղանեկատվացին գրելով, որ երկրաշարժը «անդունդ տարավ մոտ տասներկու բյուր մարդ», փիլիտփայորեն ընդհանրացնում է, թե «ամա ինչու է ասված, թե մարդը խոտի է հման»³⁵: Թովմա Արծրունին նկարագրելով երկրաշարժը, այն մեկնարանում է որպես երկնային պատիժ դվինցիների հղփացած վարք ու բարքի պատճառով. «Դվին քաղաքը՝ մարդաշատ, պատվարված պարապավոր պատճեշներով, հղփացած ու հափրացած վաճառականությամբ, տեսակ-տեսակ պղծություններով: Այն հիմքից տապալեց, դժոխքի պես լայն բացեց իր բերանը, շատերին վիժեցրեց անդունդը, նրանցից ումանց տներն իսկ գերեզմաններ դարձան իրենց համար: Բայց Դվինի քաղաքացիների քարեղեն սրտերի պատճառով չխնայեց նրանց: Սրբունիները, աղոթքի տները նույնպես ներգործվեցին շարժից, ճեղքվեցին, պատերը խարխլվեցին: Ասվում է, թե շարժից խեղված մարդկանց թիվը ավելի քան 70 հազար էր»³⁶: Այս սարսափելի աղետից հետո դվինցիներն ուժ գտած վերակառուցելու իրենց սիրելի քաղաքը, նորից վերականգնելու եկեղեցիներն ու պալատները, վաճառատներն ու արհեստանոցները:

Դվինը եղել է ժամանակի խոշորագույն քաղաքներից մեկը: Նրա միջնարեցին օղակված էր հզոր պարիսպներով, որի շորջը կառուցված էր ստորին բերդը, նրանց միջև ընկած տարածքում բնակվում էին բարձր խավի մարդիկ, պաշտոնյաներն ու գինվորականությունը: Ստորին բերդի կավա-



Հիբածրագ:

Հիբածրագ:

Նրկաթյա շերեփի:

Կերտ պարիսապներն ամուելի չափեր են ունեցել՝ 12—15 մետր հաստություն և 15—20 մետր բարձրություն, իսկ պարսպի շորս ծայրերին կային հզոր աշտարակներ³⁷: Յուրաքանչյուր 40 մետրի վրա կառուցված էին հսկա բուրգեր, այդպիսի երեսունից ավելի բուրգեր են եղել³⁸: 10-րդ դարի արար ճանապարհորդ Ալ-Խատամիրին գրում է. «Դվինը Հայաստանի մայրաքաղաքն է և նրա մեջ է իշխանի պալատը: Դվինի շուրջը (շատ բարձր և զարմանալի) պարիսա (կա) այսուել շատ քրիստոնյաներ կան...»³⁹: Քաղաքացիները հույսները չեն դրել միայն հաստարեսաւ պարիսաների վրա: Այն թշնամուց պաշտպանվել է նաև հինգ-վեց մետր խորություն և 30—50 մետր, տեղ-տեղ էլ 65—70 մետր լայնք ունեցող խրամով, որը լցվել է Ազատ գետի ջրերով: Խրամի վրա կային մի քանի կամուրջներ⁴⁰: Քաղաքը հիմնականում կառուցված էլ է միհարկանի և երկիրկանի տներով, նրա բոլոր թաղերը շրջակա լեռներից կավե խողովակներով ջուր են ստացել: Սա այն ժամանակվա համար մեծ նվաճում էր:

Դվինն իր լավագույն տարիներին ունեցել է 150 հազարից ավելի բնակչություն:

Ալսքան մեծ քաղաքը, որը ապրում էին քազմաքիվ աշխարհիկ և հոգեվոր բարձրաստիճան անձինք, նախարարներ ու իշխաններ, կաթողիկոսներ ու եպիսկոպոսներ, պետք է որ ունենար իր դիվանը (արխիվը), որում պահպեին քաղաքին և նրա բնակիչներին վերաբերող հրամաններ, փաստաթղթեր, գործարքներ հաստատող վավերագրեր և այլն:


Դեղումներից հայտնաբերվել են Մարզպանական շրջանի (V—VII դդ.) Դվինի պետական դիվանի մնացորդները՝ կերաղրոշմներ, որոնց ամրացված մագաղաթներն այրվել ու ոչնչացել են քաղաքին քազմից հասած արհավիրքների ժամանակ: Այդ կերաղրոշմների վրա, եթե դեռ կավը չէր չորացել, քարձրաստիճան իշխանավորը կամ հոգևորականը իր մատանու վրայի դրոշով հետք էր թողնում, այսինքն՝ կերում էր, որը չորանալուց հետո անհնար էր կեղծել: Հետաքրքիր է, որ 7-րդ դարի այդպիսի մի կերաղրոշմի վրա մյուս կնիքների կողքին դրոշմվել է նաև ոմն Համազասպի որդի Սահակի մատնահետքը, որով առ հաստատել է փաստաթղթի վավերականությունը⁴¹: Ուրեմն, մատնահետքերի անկրկնելիության մասին հմացել են դեռևս այն հնագույն ժամանակներում, և մինչև 20-րդ դարը հասած այն սովորությունը, եթե անգրագետները ստորագրելու փոխարեն իրենց մատնահետքը էին դնում փաստաթղթերի տակ, այդքան հին արմատներ ունի: Տվյալ դեպքում կերաղրոշմը մատնահետքով վավերացնելը, կարծում ենք, անգրագիտության հետևանք չէր, այլ պարզապես հասարակ ծագման մարդիկ կնիք չունեին:

Դեղումները հաստատեցին, որ իր գոյության համարյա ողջ ընթացքում Դվինը եղել է զարգացած արհեստանոցներ, ձուլարան, որը պատրաստվել են նետալարներ ու նիզակների ծայրեր, տեգեր ու դաշույններ, սրեր, նաև կենցաղային իրեն՝ ուրագներ, շղթաներ, կացիններ ու մկրատներ⁴²: Զարգացած է եղել նաև պղնձագործությունը. այդ են վկայում մեծ ու փոքր կաթսաները, սափորներն ու ձիթաճրագները, զարդանախ թասերը և այլն⁴³: Դվինցի ուկերիչների և արծաթագործների բարձր ճաշկակի ու վարպետության վկայությունն են հայտնաբերված օճագլուխ ապարանջանները, շղթայաձև մանյակները, մատանիներն ու ականջօղերը, արծաթյա գոտիներն ու սափորները⁴⁴: Իսկ





Պակա ապարանքան:



խեցեգործությունն ու բրուտագործությունն այնքան էին զարգացել, որ պատրաստվում էին նույնական հազար լիտր տարողության կարասներ⁴⁵:


Դեղումներից ի հայտ եկան նաև ուկրե իրեր⁴⁶, այդ թվում և նարդու զար, ինչը վկայում է, որ այսօր շատ տարածված խաղը 10—11-րդ դարերում Դվինի բնակչության համար ևս սիրելի ժամանց է եղել⁴⁷: Դվինի հայնապակեգործների ու ապակեգործների արտադրանքը ժամանակին համարվում էր աշխարհում լավագույններից: Այդ արհեստները, որ դվինցի վարպետները հասցեր էին արվեստի աստիճանի, մեծ վերելք ապրեցին հատկանքն 8—13-րդ դարերում: Գտնվել են ապակյա հազարավոր իրեն, զարդեր ու բաժակներ, սրբակներ, թասեր ու գավաթներ, ափսեներ, նաև քիմիկոսների փորձանորմներ ու սրբակներ, ընդհուպ լուսամուտի հարթ ապակիներ⁴⁸:

Խիստ հետաքրքրական է, որ Դվինի պեղումներից գտնվել են նաև երաժշտության պատկերող ապակյա իրեր: Դրանցից մեկի՝ հայսապակյա անորի վրա նկարված է ծալապատիկ նստած քյամանչահար (IX—X դդ.)⁴⁹, իսկ ապակյա սրբակի վրա՝ ծալապատիկ նստած ջութակահար (XI)⁵⁰: Երկուսն էլ այս նվազարանների՝ աշխարհի հնագույն պատկերներից են և ոչ միայն երաժշտության, այլև արվեստի պատմության բնագավառում կարևոր հայտնագործումներ են: Հնուց ի վեր բարձր զարգացման է հասել նաև քանդակագործությունը: Գտնվել են հետանոսական քարե արձաններ, մարդու գլուխներ՝ սրագազար գլխարկով: Սրանք քրիստոնեության մոտքի ժամանակ չարդվել էին և թաղվել հողի մեջ⁵¹: Դվինցի քարագործները հետագա դարերում ևս շարունակել են իրենց արհեստը՝ զարդարանդակել պալատներն ու ապարանքները, եկեղեցիների ու բնակելի տների ճակատներն ու շրամութքները:

Եթե անցյալի վարպետների ձեռակերտերը հողի մեջ պահպանվել են երկար դարեր, ապա դվինցի աշխարհանուչակ ջուլհակագործների արտադրանքից համարյա ոչինչ չի մնացել⁵²: Ալ-Խստահրին գրում է, որ «Այս քաղաքում արտադրվում են բրդյա շորեր և գորգեր, բարձեր, բազմոցներ (մինար), ժանյակներ և հայկական արտադրության այլ առարկաներ: ...Ես իմացա, որ հենց այդտեղ էլ արտադրում են բազմաթիվ մետաքսյա բանվածքներ»⁵³: Նրա ժամանակակից մեկ որիշ արաք ճանապարհորդ՝ Իբրահիմակար վկայում է. «Խսկ հայկական անլամք ծանոթ նրանց արտադրանքը՝ ինչպես հաստ գործվածքնենը, բազմոցները, գորգերը, վարագույրները, երկար գորգերը, կաշվե նենարարձերը, բարձերը, ծածկոցները ոչ մի տեսակետից իրենց նմանը չունեն աշխարհի որևէ մասում»⁵⁴:

Բնական էր, որ այս պայմաններում խիստ զարգացում ապրեց միջազգային առևտուրը: Դվինից սկիզբ էին առնում վեց մայրուղիներ, որոնք վաճառականներին տանում էին Կովկաս ու Հարավային Ռուսաստան, Փոքր Ասիա ու Հարավային Եվրոպա, Հյուսիսային Աֆրիկա ու Բյուզանդիա, Միջազգեստը ու Միջին Ասիա⁵⁵: Պրոլոցիոնի Կեսարացու վկայությամբ Դվինը դեռևս 5—6-րդ դարերում միջազգային առևտուրի կարևորագույն կենտրոն էր. «Դվինը շատ բերքատու երկիր է, ուսի բարեկատն ու և լավ չուր: Այստեղ դաշտերը հարթ են և համար ճիշվարության: Միմյանց շատ մոտիկ գրտերով բազմամարդ գյուղերը բնակված են առևտորականներով, որովհետև Հնդկաստանից, հարևան Վրաստանից ու պարսիկների և նովհիսկ հոռմեացիների հապատակության մերք գտնվող գրեթե բոլոր տեղերից այդտեղ են բերում ապրանքներ, որոնցով նրանք առևտուր են առնում»⁵⁶: Այսպիսի առևտորական կենտրոնը պետք է որ ունենար իր վաճառատեղին: Երկար տարիներ հնագետները փնտրում էին Դվինի շուկայի հետքերը: Վերջապես նրանց հաջողվեց հողի շերտից ազատել քարաշեն հսկա շինության մնացորդներ՝ չորս շարք պուներով և սպասարակ միջանցքներով: Դա նշանավոր շուկան էր, որ կառուցվել էր 5—6-րդ դարերում միջարգույն սրբատաշ տոփ քարով: Հետագայում շնչքը կործանվել է և վերակառուցվել նոյն հիմքերի վրա, արդեն թրծած աղյուսով: Ծենքն ավերվել է նաև 893 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ, բայց կրկին վերակառուցվել է 10-րդ դարում, որից երեք դար հետո վերջնականացեն կործանվել է ու այդպես էլ հասել սերունդներին: Դվինի գլխավոր շուկան երկու երկարածիք միջանցքների կողմերում ունեցել է չորս շարք խանութներ⁵⁷:

Որքան էլ ահավոր է եղել Դվինի երկրաշարժը, այնուամենայնիվ, այդ մեծահամբավ ու վաճառաշահ քաղաքն ավերել են իրար հաշորդող զավթիչները: Եթե հայոց Սմբատ հագրատունի արքան կործանված քաղաքի վերաշինությամբ էր զրադված, Աստրապատականի կառավարիչ Ավշշինը մեծ բանակով 894 թ. եկավ գրավեց Դվինը⁵⁸: Բայց նրան դառը պարտություն էր սպասում: Արագածոտն գավառում նրա գորքերը չարդ կերան Սմբատի բանակից և վունդվեցին Հայաստանից⁵⁹: Ծուտով, Ավշշինի մահից հետո, Աստրապատականի ամիրա դարձավ Ցուտուփը: Սա ևս Բագրատունյաց Հայաստանի ոխերին թշնամին էր: Նրան հաջողվում է Հայաստանի բազում





ՆՎԻՆ

բնակավայրեր ավերելուց հետո խարեւությամբ գերել Սմբատին, գլխատել և մարմինը 914 թվականին խաչ բարձրացնել Դվինի հրապարակում⁸⁰: Աշմբատին հաջորդած Աշոտ Երկաթը անօրինակ քաջությամբ կոհվելու է մղում զավթիչների դեմ և ազատագրում քաջավորությունը: 922 թ. բյուզանդական բանակը Աերխուսում է Հայաստան, Բասնում մինչև Դվին: Իրն ալ-Ասիրը գրում է. «Քաղաքի բնակիչները դիմադրեցին: Հոռոմները... համար պայքարով հասան քաղաքի պարիսպներին և այնուն բազմաթիվ ճեղքվածքներ բացին ու մտան քաղաք: Քաղաքի ժողովուրդը և զորքը սաստիկ պատերազմ տվեցին, և... Բաղրեցին ու հոռոմներին դուրս քշեցին, սպանելով մոտավորապես տասը հազար մարդ»⁸¹: Հինգ տարի անց հովները վերադարձան և կրկին Դվինի պարիսպների տակ պարտություն կրեցին:

Աշոտ Երկաթից հետո գամ բարձրացավ նրա եղբայր Արա քաջավորը (928—953 թթ.): Մի երկու տարի անց՝ մոտավորապես 930-ին Ալորպատականի կողմից Հայաստանի վրա է հարձակվում տասներեք հազարանոց մի զորքանակ, գրավում Դվինը և Արա Բագրատունուց հարկ պահանջում: Բագրատունիների և Արծրունիների միացյալ ուժերը Խորվիրապի մոտ կոտորում են թշնամու զորքանակի մեծ մասը՝ ուր հազար հոգու, և մտնում

Ոսկրե սրինգ:

Ոսկրե առարկաներ:



Խոյակներ:

Կաթողիկոսական պալատի սյունազարդ սրահն ըստ Ն. Տոկարսկու:

Կաթողիկոսական պալատի սյունազարդ դահլիճն ըստ Վ. Հարությունյանի:

Դվին: Անանուն մատենագիրն այս հաղթական ճակատամարտն այսպես է նկարագրում. «Այնժամ արքան զինավառվեց արիությամբ, առավ հավատացյալների բանակը, հանդարտ առաջ շարժեց զորագունդ զորագնդի ետեւից և պատշաճարար հարդարեց ճակատ. Այնուհետև սուսերավորմերի խըմբերն իրար խառնվեցին, (լսվեցին) ճայրութեներ, թնդյուններ, երևացին ասես ամպերից ցած թափող կայձեր: Օրն սկսեց դառնալ ահավոր: ...Անցնելով հայոց զորագնդերի միջով, արքան եկավ ու կանգնեց այլազգիների զորքի կենտրոնի առջև, որտեղ կային մոտ 4000 հետևակ տղամարդիկ՝ ըմբշամարտ զինակիցներից: Նրանց մետ ընդհարվելով, արքան, ինչպես կայծակն է հարվածում եղեգին, այդպես խորուակեց այլազգիների զորաբանակը: Եվ այնուհետև գետին ընկածների բազում դիակներ թանձրացել են դաշտի երեսին, ինչպես Բնձի օրերին ցորենի խորձերի դեզեր: Այնուն սրախողին և գետավեժ արվելով սպանվեցին ուժ հազար մարդ, իսկ շատերին նրանցից ձերբակալեցինք⁶²: Իր հետագա շուրջ քանամյա պատմության ընթացքում Դվինը քանից ձեռքից ձեռք անցավ:


951 թ. Ատրպատականի Կողմերից եկած քուրդ Մուհամմադ իբն Շահդադը տիրեց Դվինին⁶³: Եթե հավատանք պատմագիր Մուհաչջիմ Բաշին, ապա դվինցիները քաղաքը ինքնակամ են հանձնել Մուհամմադին, որպեսզի նա ավազակներից պաշտպանի իրենց անձն ու ունեցվածքը⁶⁴:

Հայոց Աշուն Ողորմած քազավորը (953—977 թթ.) իր գահակալության առաջին իսկ տարում փորձեց ազատագրել Դվինը: Նա երեսուն հազարանց բանակով պաշարեց քաղաքը, բայց ըստ Բաշին, անզգույշ գտնվեց, և երբ նրա զորքը «ցրված էր ստվերում տեղերում» պատսպարվելով սաստիկ շոգից», հանկարծակի նրանց վրա հարձակվեցին Շահդադի ուժերը և պարտության մատնեցին⁶⁵: Ինարկե, հայրանակը հեշտությամբ շտրվեց, և այս ճակատամարտից հետո Շահդադի դիրքերը սասանվեցին:

Ատրպատականի ամիրա Սալար Մարզուրանը չեր կարողանում հաշտվել Դվինի Կորսուի մետ, և 954 թ. նա հարձակվեց քաղաքի վրա: Շահդադի զորքում քրդերը թիջ էին, և նա ստիպված քաղաքի պաշտպանությունը հաշճակեց Հյուսիսային Իրանի բնակիչներից՝ դեմիկներից կազմված կայագորին, որը էլ բացելով միջնաբերդի դռներից մեկը, ներս թողեց հարձակվողներին: Քաղաքացիների մի մասը ևս միացավ Մարզուրանին, և Շահդադաների վիճակը օրհասական դարձավ: Բայց նրանց հաջողվեց իրենց ընտանիքներն ու հարստությունն առնելով՝ «Գերեզմանների դոնից» փախչել⁶⁶: Ծուրջ երեք տարի մնան Դվինը մվաճում է հարևան Գոյթնի ամիրայությունը⁶⁷: Բայց նրանից էլ այն 966-ից Կրկին անցավ Ատրպատականի Սաղարյաններին⁶⁸: 982 թ. Դվինը խոլու է Գոյթնի ամիրա Արու Դուլաֆը⁶⁹:

Ծուռով Ատրպատականում իշխանությունը զավթեցին քրդական ծագուն ունեցող Ռավադյանները, որոնցից էլ Արու-Լ-Հայջա անոնվ մեկը 987 թ. հարյուր հազարանց բանակով հարձակվեց Արու Դուլաֆի վրա, գրավեց





Երա տիրույթների մի մասն ու Դվինը: Բայց երկու տարի անց, Հայշայի մահից հետո, Դուլաֆը կրկին ետ նվաճեց հոչակավոր քաղաքը:

Երբ Բագրատունյաց գահին է բազմում Գագիկ Առաջինը (990—1020 թթ.), թագավորությունը նոր ծաղկում է ապրում: Նրա իշխանության տարիներին Դվինն իր գավառով միացված էր հայոց թագավորությանը:

Բայց կրկին վերադառնանք Շահդադյաններին, քանզի նրանք այսուհետև ակտիվ դեր են հաղալու ոմ միայն Դվինի, այլև Բագրատունյաց թագավորության կյանքում: Մուհամմադ Շահդադի մահից հետո, որոշ ժամանակ արկածախնդիր կյանք վարելով, նրա որդիներից Փատլունը հաստատվեց Գանձակում: Քանի դեռ ողջ էր հայոց Գագիկ Առաջին թագավորը, Շահդադյանները գգուշանում էին նրա հետ առակատումից: Շուտով Փատլունին հաջողվեց գրավել նաև Պարտավը, իսկ Փատիսոսի հայկական փոքր թագավորությունը 1003 թ. բաժանվեց նրա և Գագիկի միջև:

Գագիկ Առաջինի մահից հետո, 1020 թ. նրա որդիները՝ Հովհաննես-Սմբատն ու Աշոտը, վիճաքանություններից և ընդհարումներից հետո բաժանեցին առանց այն էլ փոքրացած թագավորությունը⁷⁰: Ավագ եղբայրն ստացավ Անին ու մի շարք կենտրոնական գավառներ, իսկ Աշոտը՝ Իրանին սահմանակից «դրսի աշխարհը» և այլն: Հովհաննես-Սմբատի գահ բարձրանալու հենց հաջորդ տարում՝ 1021 թ. Հայաստանի վրա հարձակվեցին Ատրպատականի Խավադյաններն ու Գանձակի Շահդադյանները, որոնց բանակում ծառայում էին դեմիխներ և թուրքեր: Կողոպտելով Դվինը, նրանք ուղղվեցին երկրի հյուսիսային շրջանները: Բջնիում հերոսական դիմադրություն կազմակերպեց Վասակ Պահապունին և կասեցրեց նրանց առաջնահացումը: Ավարառուները անբավ հարստություն առած՝ վերադառնան իրենց երկիրը:

Այս հարվածից դեռ Դվինը ուշի չէր եկել, երբ քաղաքին տիրեց Փատլուն Շահդադյանի որդին՝ Արու-լ-Ասվարը: Թե ինչպես այդ նրան հաջողվեց՝ անհայտ է: Գոյցե ասպատակիչները, Հայաստանից հեռանալով, քաղաքը հանձնել էին իրենց տոհմակցին: Այս մասին հայ և օտար պատմիչները մահրամաններ չեն հաղորդում: Մունացիմ Բաշիի և Հովհաննես Ակիլիցեսի վկայությունների հիման վրա կարելի է ենթադրել, որ այդ տեղի է ունեցել 1022 թվականին⁷¹: Իսկ ըստ Մատթեոս Ուռայեցու, Ասվարը Դվինի ամիրա էր դարձել ավելի վաղ, քանզի, երբ Հովհաննես-Սմբատը թագավոր բնչակմեց, ապա նրա եղբոր՝ Աշոտի կողմանակիցներից Ասվիրատ իշխանը, վախենալով թագավորի վրեժինդրությունից, իր տասներկու հազարանց այրումինք ապաստանեց Դվինում՝ Արու-լ-Ասվարի մոտ, բայց վերջինս «բարեկամական գրուցի է հրավիրում և ծածուկ սպանում այս քաջ, հզոր և բռվանդակ Հայաստանում հոչակված մարդուն»⁷²:

Աշոտն ու Հովհաննես-Սմբատը գրեթե միաժամանակ վախճանվեցին, և 1041 թ. հայոց թագավոր հոչակվեց Աշոտի որդին՝ տասնութամյա Գագիկ Երկրորդը: Բյուզանդացիները մի քանի անգամ մեծաքանակ զորքով փորձեցին գրավել Անին և վերջ տալ հայոց անկախ թագավորությանը: Զկարդանալով Բայերին Բաղթել, նրանք Բարեկրցին Դվինի ամիրա Արու-լ-Ասվարին, որ ասպատակի Գագիկ թագավորի տիրույթները, խոստանալով նրան թողնել Բագրատունյաց թագավորության բոլոր այն շրջաններն ու քերդերը, որոնց գենքի ուժով կտիրի Ասվարը: Դվինի ամիրան շիապաղեց օգտվել առիթից:

1045 թ. Բագրատունյաց թագավորությունն ընկալվ: Անին գրավելով՝ բյուզանդացիները սահմանակից դարձան Դվինի ամիրայությանը: Ցանկանալով ընդարձակել իրենց նվաճումները, ըստ Մատթեոս Ուռայեցու, բյուզանդացիները 1045, 46 և 47 թվականներին երեք արշավանք կազմակերպեցին Դվինի վրա⁷³: Բայց Արու-լ-Ասվարը բացելով ոռոգման շրանցքները՝ ողողեց Դվինի պարիսպների շորջը տարածված խաղողի այգիները, և Բարձակուները գեխսի մեջ խրվելով ու պարիսպներից ու թարատոցներից արձակվող նետերի տարածի տակ ընկնելով, պարտվեցին⁷⁴: Հետաքրքրական է, որ այս դեպքերը Ակարագրելիս, 11-րդ դարի բյուզանդական պատմա-

Մենագոր սյան
խոյակ ծիաբանակով, V—VI դդ.:
Գիպսե որմնագարդ:

Կանացի դեմքը
հայնծապակյա սափոր:

Կավե սափոր:

Շորակով սափոր:

Սափոր:

Հայնծապակէ
թելիկ, XII—XIII դդ.:

Հայնծապակյա թաս:

Պղնձագ ծրագ:

Չնարկած թաս:

Ժիսական եռաբերան
սափոր, մ. թ. ա. VI—V դդ.:

Չնարկած գավազ:

Հայնծապակյա թաս
արմավենու պատկերով:

Գավազ:

Թագոր խաչ:



գիրներ Հովհաննես Սկիլիցեսը ոչ թե Ամին, այլ Դվինն է անվանում «Համայն ազգի մայրաքաղաք»⁷⁵: 1049-ին, Արու-լ-Ասվարը, ըստ երևոյթին, ավելի ապահով տեղ փնտրելով և խուսափելով բյուզանդացիների իրար հաջորդող արշավանքներից, Դվինից տեղափոխվեց Գանձակ, բայց նրա հեռանալուց հետո էլ քաղաքը մնաց Շաղադյան քանտամիքի ձեռքում⁷⁶:

Մեջուկյան արշավանքների շրջանում սելչուկ Տուրիի Բեկին 1054 թ. հաջողվեց հպատակեցնել Դվինը: Արու-լ-Ասվարը հնազանդություն հայտնելով, գործուն մասնակցություն ունեցավ Ալփ Արսանի 1064 թ. Ամինի դեմ կատարած ավերիչ արշավանքներին: Սակայն այդ համագործակցությունը ժամանակավոր էր: Երեք տարի անց մեռավ Արու-լ-Ասվարը, իսկ 1075-ին Շաղադյանները կորցրին Գանձակի տիրույթները⁷⁷: Գանձակի կորստից հետո Շաղադյանները մնացին միայն Դվինում և Ամինում⁷⁸: Բայց Դվինում ևս նրանց իշխանությունը հաստատում չէր, քանի որ 1105 թ. սելչուկ ամիրա Կարլը գրավեց այն⁷⁹: Զնայած Շաղադյաններին հաջողվեց 1118-ից նորից տիրել Դվինին, բայց 1130-ին այն կրկին կորցնում են: Քաղաքն ընկնում է Բաղեշի և Արգենի տեղ Իրն-ալ-Արդարի ձեռքը: Հաջորդ տարի հաղթելով Դվինի վրա հարձակված Խվանն Օրբելիին, նա կտրել է տալիս նրա զոհված գինուրների գլուխները և գանգերը շարում Դվինի միհարենի վրա: Այս բարբարոս ամիրան Դվինում իշխում է շուրջ 32 տարի:

Վրաց Գեորգի թագավորը քանից փորձեց նրանից խել այդ «հոչակավոր և մեծ» քաղաքը, ինչպես վրաց Անանուն ժամանակագիրն է բնութագրում Դվինը⁸⁰: 1162 թ. օգոստոսին նրան հաջողվեց մտնել Դվին և վրեժինելու լինել: Դեպքերի ժամանակակից արար պատմիչ Ալ-Ֆարիկին հայտնում է, որ Գեորգիի գործերը քանդեցին այն աշտարակը, որ սարքել էր Կուրուի Իրն ալ-Արդարը՝ վրացիների գանգերից, կործանեցին մզկիթներն ու տների մի մասը և վերաբարձան Տփինս: Ինչպես երևում է արար պատմագիրների Ակարագրություններից, վրացիների հարձակումից առավելապես տուժել է քաղաքի օտարազգի բնակչությունը: Իրն ալ-Ասիրի վկայությամբ, նոյն թվականի վերջերին Ալտրատականի ամիրա Ելտկուզը միացյալ մեծ բանակով շարժվեց Արարատյան դաշտ և մահմեդականություն ընդունած մի վրացու դավաճանության շնորհիվ հայտեց վրացական գորքին և նվաճեց Դվինը⁸¹:

Վերջապես 1203 թ. Զաքարյաններին հաջողվում է «առյուծավայել ճակատամարտում» ետ խել Դվինը: Այն տրվում է Խվանն Զաքարյաններ՝ որպես սելիականություն:


Դվինը դառնում է Խվաննի ընդարձակ տիրույթների կենտրոնը: Այս շրջանում քաղաքը կրկին բարգավաճում է: Նրա պարիսպները ճգկում էին մի քանի կիլոմետր դեպի հարավ և հարավ-արևմուտք, կային պարապատ առանձին թաղամասեր:

Բայց կարճատև խաղաղությանը հաջորդեց նոր ամպրոպ: 1225 թ. մոնղոլներից հալածված Խորեզմի շահ Ալա աղ-Դին Սուրհամմատի որդին՝ Զալալ աղ-Դինը, նպատակ ունենալով վերականգնել Խորեզմի հզորությունը, ասպատակում է Իրանը և Անդրկովկասը: Նրա վաթուն հազարաց քանակը խուժում է Արարատյան դաշտ և գրավում Դվինը, ավերում ու շարժվում դեպի Կոտայքը: Գառնի ամրոցի մոտ Խվանն աթաքեկի գրինակորած հայ-վրացական միացյալ ուժերը, մեծ կորուտներ տալով, պարտվում են⁸²:

Այս հայթամակից հետո արյունուշտ հրոսակները Դվինում կայացող թողմելով՝ ասպատակում են Հայաստան ու Վրաստանը: Նրանց գագանությունների մասին Ստեփանոս Օրբելյանը պատմում է: «Խորեզմցիները մեր երկիրը անտերունչ գտնելով, անխնա կոտորեցին և հրդեհեցին քաղաքների, գյուղերի ու վանքերի բոլոր շինություններն ու տները, նաև այրեցին մեր ամրող վաստակը և կտրատեցին այգիներն ու ծառերը, որի պատճառով սաստիկ սով տիրեց ամենուրեք»⁸³:

1227 թ. մարտին Խվանն աթաքեկի գորավարներից Պոռշ իշխանը մտնում է Դվին, կոտրում այնտեղ եղած խորեզմյան կայազորն ու հեռանում: 1236-ին Դվինն ընկավ թաթար-մոնղոլների ձեռքը, ավերվեց ու կողոպտվեց, բայց իր գոյությունը պահպանեց ևս մեկ դար: Դվինը վերջին անգամ Բիշատակում է 14-րդ դարի վրացական մի ժամանակագրության մեջ՝ բոլոր կողմից ավերված այլ քաղաքների շարքում: Այնուհետև մեծաթոշակ քաղաքի տեղում, նրա պերակների վրա հիմնվում են մի քանի գյուղեր, որոնք գյուտենում են մինչև այսօր:

Դվինի հողածածկ պերակները փոփած են ներկայիս Արտաշատի շրջանի Վերին Դվին, Ներքին Դվին, Հողաբերդ, Հնաբերդ, Վերին Արտաշատ, Նորաշեն, Բզովյան, Այգեստան գյուղերի տարածքներում՝ հասնելով մինչև Կանաչյան և Այգեզարդ:



BAGARAN



ԲԱԳԱՐԱ

Աշխարհի խոշորագույն բռնապետություններից մեկը՝ Արարական խալիֆայությունը, 9-րդ դարում ճգնաժամ էր ապրում, ուստի էր քայլայման ու անկման եզրին: Նրա դեմ հուժկու ապստամբություններ բարձրացան Եգիպտոսում, Իրաքում, Իրանում և Անդրկովկասում, ստեղծվեցին տարրեր կիսանկախ ու անկախ պետություններ, ամիրայություններ և իշխանություններ: Արարական ողջ տիրապետության ընթացքում Հայաստանում և չեին դադարում ժողովրդական ազատագրական շարժումները:

703 թվականի ամռանը Մերաւ սպարապետը Արաքի ձախ ափին՝ Վարդանակերտ գյուղի մոտ համարյա ամբողջովին ոչնչացրեց արաբների զորքանակը¹: 747—50 թթ. ապստամբություն բռնկվեց Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների օհիավորությամբ²: 774-ին խալիֆայության դեմ ծագեց նոր ապստամբություն, այս անգամ Արտավազդ Մամիկոնյանի դեկավարությամբ: Նա, Կոմայրիոս սպանելով արաք հարկահանների պարագլխին, ետ վերցրեց հավաքած հարկը³:

Ապստամբությունն ավելի լայն ծավալ ստացավ: Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ ապստամբները կոտորեցին հարկահաններին, ապա Բագրևանդում պարտության մատնեցին արարական զորքանակին: Այնուհետև հաղթեցին իրենց դեմ Արմինիայի ոստիկանի ուղարկած 4000 հեծելազորին⁴: 850 թվականին Հայաստան ուղարկվեց Յուսուֆ ոստիկանը, որը ավերելով Վասպուրականի գավառները, խարեւությամբ ձերբակալեց Բագարատ Բագրատունուն: Բայց Յուսուֆն էլ անպատճ չմնաց: Սասունի լեռնականները Հովհան Խութեցու և Բագարատի որդիների՝ Աշոտի և Դավթի գլխավորությամբ հարձակվեցին Մուշում գտնվող արաբների վրա և սպանեցին նրանց: Երկու տարի անց Հայաստան ներխուժեց արարական նոր զորքանակ՝ Բուղայի գլխավորությամբ: Նրանք գերեցին Հովհան Խութեցուն և բազմաթիվ այլ ապստամբների, Խութի լեռնականներից կոտորեցին շուրջ 30 հազար մարդ⁵: Բուղայի դեմ ապստամբնեցին Արցախի Եսայի Արու-Մուսե Առաջարիկ իշխանը և Գուրգեն Արծրունին⁶: Արաբների դեմ մղած ազատագրական պայքարն իր արտացղումը գտավ հայ ժողովորդի հերոսական եպոսում «Սասնա ծոերում»:

Այս դարաշրջանում երկրի հասարակական, քաղաքական և ուգմական կյանքում խիստ մեծացել էր Բագրատունիների դերը: Նրանց տիրույթներն ընդգրկում էին երկրի զգայի մասը՝ Շիրակը, Վանանդը, Տաշիրը, Կոգովիտը, Բագրևանդը, Տարոնը, Սասունը, Վասպուրականի մի հատվածն ու Մուկաց աշխարհը: Նրանց ազդեցության ոլորտում էին նաև Այրարատի Կենտրոնական և Բյուսիսային գավառները⁷:

Երկրի անկախության ճանապարհին քաղաքական խոշոր հաջողություն էր 862 թ. Աշոտ Բագրատունու Հայաստանի իշխանաց իշխան դառնալը, խալիֆը ճանաչեց նրա գերիշխանությունն ամբողջ Արմինիայի վրա: Այդ շրջանում խիստ նվազեցին երկրից գանձվող հարկերը՝ 8-րդ դարի վերջերին վճարվող 13 միլիոն արծաթ դրամի փոխարեն Արմինիայից արդեն գանձվում էր 4 միլիոն⁸: Իհարկե, այսպիսի հսկայական զիջողություններ խալիֆայությունն անում էր, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, և որ ամենակարևորն է, Հայաստանի ուղմունակությունը: Այս տարիներին Բագրատունիների բանակը հասավ վաթսուն հազարի. իր ժամանակի համար սա քավական մեծ ուժ էր:

Արարական խալիֆայության և Բյուզանդիայի միջև շարունակվող անգիծում պայքարում մեծանում էր Հայաստանի դերը: Պատահական չէ, որ Բյուզանդիայի գանձին բազմելով, Մակեդոնական-Հայկական դինաստիայի Բիմաղիրը, հայագգի Վասիլ և Կայսրը 876 թ. Հայաստան է ճամփում իր պատ-

Վիրակին և խնդրում, որ Աշոտ Բագրատունին թագ ուղարկի իրեն, երկու երկրների դաշինքն ամրապնդելու նպատակով նա փորձում է վերակենդա-նացնել Թին ավանդույթը. չե՛ որ Բագրատունիները Արշակունիների օրոք թագաղիր ասպետներ էին¹⁰:

Ծուտով Աշոտ Բագրատունու իշխանությունն այնքան հզորացավ, որ նա դարձավ երկրի լիիրավ տերը: Արաբական խալիֆին մնում էր նրան Հայաստանի թագավոր ճանաչել և թագ, թագավորական զգեստներ, գենք ու գրահ ուղարկել: Այսպէս, 384 թ. կամ 885 թ. հայոց երևլիները թա-գաղիրում են Աշոտ Բագրատունուն, և Արշակունիների անկումից չորս ու կես դար անց, Հայաստանը կրկին վերագտնում է իր պետականությունը¹¹:

Աշոտ Բագրատունին մեր ժողովրդի պատմության ընթացքում հանդես եկած պետական-ռազմական ամենատաղանդավոր գործիշներից էր: Հետա-տես գործունեությամբ նա կարողացավ իր հայրենիքի կորսված անկախու-թյունն ու գահը վերադարձնել, և երկրի տնտեսական ու ռազմական հետա-գա հզորության հիմքը դրեց:

Հայոց թագավորի վարչապարական իրավասության մեջ էին նաև Արևելյան Վրաստանը և Աղվանքի մի մասը: Աշոտ Բագրատունու գերադա-սությունն էին ընդունում վրաց գահերից իշխան Ատրներսեհը և Աղվանից Համամ թագավորը, Հայաստանի հարավում կազմավորված արարական ամի-րայությունները:



Գիտական արշավախումբը
Բագրատունում:

Նորաստեղծ Բագրատունյաց թագավորությունը պետք է որ ունենար իր մայրաքաղաքը: Չնայած Արշակունիների մայրաքաղաք Դվինը շարունա-կում էր մնալ Հայաստանի մեծագույն քաղաքներից, բայց այն մշտապես գտնվում էր Ատրպատականի հարձակման վտանգի տակ:

Աշոտ Բագրատունին մայրաքաղաք ընտրեց անտակի Բագարանը¹²: Այն Արշարունիք գավառում, Ախուրյանի աջ ափին էր:

Աշոտ Բագրատունու որդիները ևս՝ Սմբատը, Շապուիրը, Դավիթը և Սա-հակը, կարևոր էին էին խաղում երկրի քաղաքական կյանքում, վարում ար-քունի պաշտոններ: Սմբատը իշխանաց իշխան էր, իսկ թագադրվելուց հետո այդ պաշտոնն անցավ Եղբորը՝ Դավիթին, մյուս եղբայրը՝ Շապուիրը, սպարա-պետ էր, որն էլ հոր մահից հետո ժառանգեց Բագարանը, իսկ Սմբատը ար-քայանալով, մայրաքաղաք դարձրեց իր սեփական տիրությի կենտրոնը, աթոռանիստ Երազավորը: Շապուիրից հետո Բագարանը ժառանգեց նրա որդին՝ նոր սպարապետ Աշոտ Շապուիրյանը¹³: Նր 925 թ. Նասր ոստիկա-նը գրավեց Բյուրականը, Աշոտ Շապուիրյանի մոտ ապատանեց հայոց կա-թողիկոս Հովհաննես Դրախտանակերտցին¹⁴:

Բագարանը Հայաստանի հնագույն բնակվայրերից էր, այն հիմնադրել է դեռևս Երվանդ Վերշինը (մ. թ. ա. 220—201 թթ.) իր նոր մայրաքաղաք Երվանդաշատի հետ միաժամանակ: Հայ Մովսես Խորենացու, թագավորը Երվանդաշատից «մոտ քառասուն ասպարեզ հեռու, Ախուրյան գետի վրա, շինեց փոքր քաղաք՝ նման իր քաղաքին և կոչեց Բագարան, այսինքն՝ թե բագիներն այնտեղ են տեղափոխված, և այնտեղ փոխադրեց Արմավիրում

եղած բոլոր կուռքերը: Ծինեց նաև մեհյաններ և իր Երվագ եղբորը քրմապետ նշանակեց»¹⁵:

Երվանդը տնկել է տվել մի մեծ անտառ, որը պարսպապատելով և բազմաթիվ արագավազ այծյամներ, եղնիկներ, եղջերուներ ու վարազներ արգելափակելով՝ վերածել արքունիք որսատեղիի և այն կոչել Մննդոց անտառ¹⁶: Բայց շուտով Արտաշես Առաջինը հաղթում է Երվանդին, ապա Բագարանի մոտ նրա եղբոր՝ Երվազի վահց երկանաքար կապելով գետի հորձանուտում խեղդել է տալիս, բազում գանձեր վերցնում մեհյաններից, գերում Երվազի 500 ծառաններին, իսկ հետազայում կուռքերը տեղափոխում Արտաշատ¹⁷: (Մինչև այժմ էլ պահպանվել են Երվանդի կառուցած մեհյանների ու այլ շինությունների հետքերը, իսկ դարասկզբին Բագարանի գյուղացիները Միջին Գյուղ կոչվող բլրի վրա նոր տների հիմքեր փորելիս հաճախ էին գտնում հեթանոսական շրջանի գերեզմաններ, քարե փոքրիկ կուռքերի արձաններ և այլն)¹⁸:

Բայց Բագարանում կյանքը կանգ չի առնում, այն մինչև 8-րդ դարը Արշարունիքի թիշ թե շատ մեծ բնակավայրերից էր և Կամսարական նախարարական տաճ սեփականությունը: 780-ական թվականներին այն անցնում է Աշոտ Սսակեր Բագրատունուն, որն իր նատավայրը Դարույնքից տեղափոխում է այստեղ: Բագարանն ուներ հաստարեսատ պարիսաններով միջնաբերդ, որի շորջը տարածված էր ոչ մեծ քաղաքը: Այստեղ էին Բագարա-



Բագարանի կիրք:

տումինների ապարանքներն ու տոհմական դամբարանը: Կային նաև մի քանի եկեղեցիններ՝ ս. Թեռդորոս, ս. Գնորգ, ս. Շուշանիկ և այլն, որոնցից հատկապես նշանավոր է ս. Թեռդորոս եկեղեցին: Այն 624-ին հիմնադրել է իշխան Բուտ Առավելյանը, որի մահից հետո շինարարությունն ավարտել է նրա կինը՝ իշխանութիւն Աննան: «Ուրիշ պատմական պանծալի հիշատակարաններու նման այս տաճարին ալ վիճակված է անտերություն, քայլայում և կործանում,— 1909 թ. գրել է Թ. Թորամանյանը:— Գմբեթը վաղուց ընկած է մեջք, պատերը թեև որոշ չափով հաստատուն, սակայն աննեք ալ հետզինտե փշանալու վրա են»¹⁹: Բագարանի տաճարը հայ ճարտարապետության գանձերից է և ըստ հեղինակավոր ուսումնասիրողների՝ նախատիպն է 9—10 դդ. բյուզանդական, ֆրանսիական և իտալական մի շարք նշանավոր կոթողների՝ Օվկեանի Ժերմինի դե Պրեի, Միլանի Ս. Սատիրոյի, Կ. Պոլսի կայսերական պալատի նեայի, Հունաստանի Աթոն լեռան Մեծ մայրավանքի և ուր եկեղեցինների և այլն: Բագարանի տաճարը բազում արհավիրքների դիմանալով, դեռևս մեր դարի 80-ական թվականներին կանգուն էր: Բայց այն Բագարանի նոր բնակիչները՝ քրդերն ու թուրքերը քանդեցին, սրբատաշ քաղերով գոմեր ու մարագներ կառուցեցին, իսկ տաճարի տեղում՝ սահմանային ուղեկալի շենք²⁰:

Եթե քաղաքը ծաղկում էր Բագրատունյաց թագավորության օրոք, ապա նրա անկումից ընդամննը երեք տարի անց՝ 1048-ին այն զավթեցին, ավերեցին և բնակիչներին կոտորեցին սելցուկները: 12-րդ դարում Բագարանն անցավ Շահ Արմենների ձեռքը, 1211-ին այն ազատագրեցին հայ-Վրացա-

Բագարանի և Թեոդորոս
տաճարը հարավ-արևմուտքից:

Բագարանի տաճարը
հարավից:

Բագարան. խաչքարեր:



Կան զորքերը: Ինչպես Հայատանի գրեթե բոլոր քաղաքների, այնպէս էլ Բագարանի համար ճակատագրական եղավ Լեռնկթեմուրի հրոսակների հարձակումը, որոնք 1394-ին ավերեցին և կողովուեցին քաղաքը, որն այլևս չվերկանգնվեց և XX դարի սկզբին այն սովորական գյուղ էր:

1909 թվականի հունիսի 2-ին Բագարան է այցելել Բայ ճարտարապետության երախտավոր Թորոս Թորամանյանը²¹: Նրա ուսումնասիրություններն ու գրառումները եզակի են և դրանով իսկ՝ անգնահատելի: Ուղեկից ընտրելով Թորամանյանին, փորձենք մտովի շրջել Բագրատունյաց թագավորության առաջին մայրաքաղաքի ավերակներում. «Մարդ եր կմոտենա դաշտի եզերքին և դեպի Ալտուրյանի ձորը կը տեսնե Բագարանի ընդհանուր դիրքը, անմիջապես կը մրոննե, թե որչա՞փ զորավոր եղեր է մի ժամանակ թըշնամու երկյուղը և այդ երկյուղի ազդեցության տակ մարդիկ ինչպիսի տաժանելի կլանք անցնելու կապարտավորվին:

Դաշտավայրի եզերքին մոտենալով, հանկարծ կպարզվի աշքի առջև մի ընդհարձակ փոս, որուն մեջ ոչ այլ ինչ կտեսնվի, բայց եթե ամազին ապառնեներու կույտեր ու բարձրաբերձ ժայռեր, խորախոր փոսեր, նեղ ու ոլորուն կիրճեր, մինչև գետին եզերքը և այսպես կտնե հետիուն ճանապարհորդի մը համար, գրեթե մի ժամ: Երկյուղը և սարսափը պարզապես բերեր ամալի ժողովուրդը խցկեր է այս ապառաժուտ քարքարուտներուն մեջ գոյություն պահպանելու համար, և զարմանալին այն է, որ այդ գոյության պահպանության համար այդ քարերուն ու ապառաժներուն կլանք ու կենդանություն են տվեր:

...Բերդն ունեցած է ի հնումն մեծ տարածությամբ որձաքարե պարիսպ, որուն մեջ շրջափակված են երեք հատ զանազան բարձրությամբ բարձր քարածայոնք, այս շրջափակին մեջ է եղած հին քաղաքը, որուն մեջ դեռ պարզ նշմարելի են բնակությանց անթիվ հիմունքներ պինդ որձաքարով չոր շարված, և խիստ հաստ պատերով մեծամեծ շինության մնացորդներ անթիվ են և այսօրվան քարքարուտներու մեծ մասը բոլորովին անքան կերպով այդ բազմաթիվ շինությանց փլատակներն են առաջ եկած, այնպիսի խոշոր զանգվածներն են հյուսված պատերը, որ ներկա ժողովորդի համար դըմքար է երևած նույնիսկ անոր փլատակներն գոյացած քարերն իսկ տեղեն շարժել»²²:

Զորում և հանդիպակաց բլուրների վրա պահպանված շինությունների փլատակները, ինչպես և հինգ եկեղեցների գոյությունը վկայում են, որ քաղաքը հիանալի կառուցապատված էր ու բազմամարդ:

Ախուրյանի ձախ ափին²³, Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի ներկայիս սահմանագլխին, մեր կողմում է գտնվում Բագարանի նշանավոր եկեղեցներից մեկը՝ սուրբ Շուշանիկը: Սահմանային գոտում լինելու հետևանքով եկեղեցին մի քանի տասնամյակ է անմատչելի է գիտնականներին, որոնցից շատ քերին է դժվարությամբ հաջողվել թողոցիկ ուսումնասիրել ճարտարապետական այդ մարգարիտը: Պեղումները և երկարածամկետ ուսումնասիրությունը, հասկանալի պատճառներով, բացառվում էին: Այնուամենայնիվ, հնարավոր է եղել ճշտել նրա հատակագիծը, ճարտարապետական այլ մանրամասներ: Հավանաբար, այն կառուցել է սպարապետ Աշոտ Շապուհյանը՝ 914—918 թվականներին²⁴: Հովհ. Դրասիանակերտցին գրում է, որ Աշոտը եկեղեցին զարդարել է «բազում երևելի սպասուք»²⁵:

Ս. Շուշանիկի մասին հազար տարի անց Բագարանի բնակիչները պատմում էին մի այսպիսի ավանդություն, որը 19-րդ դ. վերջին գրառել է նշանավոր բանահավաք Բենսեն. «Բագարանից տիկին Շուշանն ուզում է ներկա գտնվել քաղաքից մի փոքր հեռու սուրբ Թեոդորոսի վանքում կատարվող պատարագն: Մինչև նա զարդարվում է, պատարագն ավարտվում է: Դրա համար էլ նա իր ծախսով Բագարանին մոտ մի ուրիշ եկեղեցի է կառուցել տախի, որը նրա անունով կոչվում է Շուշանա վանք»²⁶:

1920-ին Բագարանից գաղթած և Ախուրյանի ձախ ափին, նախկին մայրաքարտից շուրջ 8 կմ գետի հոսանքն ի վար բնակություն հաստատած նոր Բագարանի և Երվանդաշատի հնաբնակներն ու նրանց սերունդներն այսօր էլ պատմում են և Շուշանիկի ավանդությունը, բայց մի փոքր այլ տարրերակով. «Հայոց արքայադուստր Շուշանիկը մի անգամ անցնելով Ախուրյանի կամուրջը, ձախ ափին տեսնում է անհաշիվ-անհամար գեղանի թիրիկներ: Սկսում է քաղել: Մոտենում է կեսօրը, բայց Շուշանիկը դեռ շարունակում է փաջեր կապել: Երկինքն ամպում է, հորդ անձնել է գախի, սակայն աղջիկը հնապատ էր ծաղիկներով: Ու հանկարծ ականջին են հասնում եկեղեցու զանգերը, որ հավատացյալներին կանչում էին ժամերգության: Արքայադուստրը ցնցվում է և վազում դեպի կամուրջը: Գոգնոցից համափուտ շաղ են գալիս ծաղիկները: Խոկ անձրևից հորդացած Ախուրյանը քելտարել էր երկու ափերն իրար կապող միակ կամուրջը: Շուշանիկն անզորությունից հոնգուր-հոնգուր լաց է լինում: Ժամերգությանը չի կարող հասնել: Արքան դատեր համար և նրա անունով նոր եկեղեցի է կառուցում այս ափին, որ նա ծաղիկներ հավաքելիս այլև ժամերգությունից չուշանա»²⁷:

Թեև ս. Շուշանիկը գետի այս ափին է, բայց, ցավոք, այն ևս անխնամ մնալով, վերջերս վերից վար ճեղք է տվել և կործանման վտանգի տակ է²⁸:

Բագարանի շրջակայի ձորերի ու կիրճերի բնական ու արհեստական մեծաթիվ քարայրները ունեցել են նաև ուսումնական նշանակություն:

Բագարանցիները եղել են արտակարգ աշխատանք, ժայռերի ու կիրճերի մեջ սեղմակած ապառաժոտ քարքարուտները մաքրելով՝ պարտեզներ ու այգիներ են հիմնել: Անիի մայրաքաղաք դանաւալուց հետո, Բագարանը միրգ էր մատակարարում նրա բազմամարդ բնակչությանը: «Թեևս այդ ջապինդ ժողովուրդին անպարտելի ուժը չէ կարողացեր ձորը կամ ավելի ճիշտ, այդ փոսն իր լեռնացած ապառաժի կույտերն ըոլորովին ազատել, դեռ ամենամեծ մասը կմնա, սակայն ինչ-որ ալ լրեր են, արդեն շատ մեծ փաստ է այդտեղ ապրող հին ժողովուրդին տոկուն ու չարքաշ կյանքին, երկրագործության և մշակության մեջ ունեցած հմտությունների»²⁹— գրել է Թորոս Թորամանյանը: Բայց նրա այցելության ժամանակ արդեն վաղուց խամբել էր Բագարանի փառքը, և հետագա սերունդները մշակում էին միայն նախնիներից ժառանգած հողակուրները՝ այդպես էլ գուխ շիանելով ամենուր սփոված քարարեկորներից:

Բագարանը միայն կարճ ժամանակ մայրաքաղաք եղավ: Բագրատուն-լաց թագավորությունն իր գոյության շուրջ 160-ամյա պատմության ընթացքում չորս մայրաքաղաք փոխեց, և Բագարանին հաջորդեցին Շիրակավանը (Երազգավոր), Կարսը և Անին:



SHIRAKAVAN



ԵՒՐԱԿԱՎԱԾ

Աշոտ Բագրատունու մահից հետո գահը ժառանգեց որդին՝ Սմբատ Բագրատունին (890—914 թթ.): 892 թ. նա նույնականացրել է իր համար և ստուգայով պատճենացրել ավերներ ստանալով, իր նույնականությունը համարելով թագաղրից¹:

Սմբատ Բագրատունին իր հաղթանակներով ու պարտություններով հարուստ հերոսական ու ողբերգական կյանքն ամբողջովին նվիրեց Ծորաստեղծ թագավորության ամրապնդմանը:

Աշոտ և Սմբատ Բագրատունինների ժամանակների մասին հայոց կառողիկոս և պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին ցնծությամբ գրում է. «Եսկ մեր Հայաստան աշխարհին նրանց օրոք Տերն էր այցի եկել, և պատրապաված բոլոր բարի գործերի մեջ հաջողած բնակեցվեցին ամենը իրենց ժառանգությունների մեջ և սեփականելով հողը՝ տնկեցին այգիններ և արմատացրին ձիթենինների և պարտեզների բուրաստաններ. Բերկեցին հերկերն ազատելով փշերից և հարյուրապատիկ պտուղ հավաքեցին: Լեփ լեցուն էին ցորենի շտեմարանները, երբ հունձը ավարտվեց, լցվեցին գինու հորերը՝ այգեկութին, և լեռները ցնծություն գտացին, որովհետև նրանց վրա բազմացան արոտական արջառների նախիրները և ոչխարների հոտերը»²: Բայց Դրասխանակերտցու հովվերգականորեն նկարագրած երկրի կյանքը ստեպ-ստեպ խոռվում էր:

Երբ Սմբատը թագաղրեց իր գինակից վրաց Աստրենակ գահերեց հշխանին, պատճառարանելով, թե թագաղրելու իրավունքը պատկանում է միմիայն խալիֆին, Աստրապատականի ամիրա Ափշինն իր հրուսակներով հարձակվեց Հայաստանի և Վրաստանի վրա: Բայց նրա գորքի մեջ համաձարակ ընկապ, որին զոհ գնացին ոչ միայն բազմաթիվ գինվորներ, այլև ինքը՝ Ափշինը: Այսպես, 898 թ. տառած ճակատամարտ տալու, թշնամին փախավ հայոց երկրից³: Ափշինն փոխարինեց նրա եղբայրը՝ Յուսուփը, և նոր պատուաս կախվեց հայոց գլխին: Նա գրավեց Դվինը և հարկեր պահանջեց, բայց բանակցությունների միջոցով հարցը հաշտությամբ լուծվեց⁴: Թվում էր՝ Վերջապես երկրում խաղաղություն պիտի տիրեր, բայց այս անգամ էլ իրադրությունը սրվեց Վիրքում: Եգերաց (Ափխազաց) թագավոր Կոստանդնոյ փորձեց գրավել վրաց թագավոր Աստրենակի հողերը: Աստրենակը և Սմբատը միասին ելան Կոստանդնոյի դեմ, որը շուտով ձերբակալվեց և հանձնվեց Սմբատին: Կոստանդնոյ թագավորին չորս ամիս Անհում պահելուց հետո Սմբատն ազատ արձակեց: Այս պատճառ դարձավ, որ Սմբատի դեմ ըմբուտանար Աստրենակը⁵: Խոկական փորձությունը դեռ առջևում էր: 908 թ. Յուսուփը և խալիֆը, ամեն մեկն իր հերթին, հարկեր պահանջեցին Սմբատից: Երկու ամեղ թշնամինների դեմ երկու ճակատով կովելը Հայաստանի ուժերից վեր էր, և Սմբատը դիմում է խելամիտ քայլի. որոշում է վճարել պահանջվող գումարը և երկիրը զերծ պահել արյունահեռությունից ու ավերումից: Այդ նպատակով նա կրկնապատեց գանձվող հարկերը⁶: Բայց այս անգամ էլ նրա դեմ դուրս եկան հայոց տասնինգ իշխան: Այդ ժամանակ Սմբատը Տաշիրում էր, և ապստամբները բազում զորքով գրավեցին Անհն, այն հանձնեցին Աստրենակին, իսկ իրենք մտնելով երկրի մայրաքաղաք Ծիրակավան (Երազգավորս), ամրացան այնտեղ: Սմբատը դավադիրների դեմ զորք ուղարկեց: Հայրենադավաները կողոպտելով Անհն, փախան Տայր, բայց նրանց բռնեցին և կուրացրից⁷:

Չուտով, 909 թվականին Յուսուփը ասպատակեց Հայաստանը: Քանի որ թշնամու ուժերը գերակշիռ էին, Սմբատը խուսափեց ճակատամարտից: Թըշնամին որոշեց ձմեռել Դվինում, որպեսզի գարնանը կրկին մահ ու ավեր սփոխ, իսկ Սմբատը ամրացավ Ծիրակավանում (Երազգավորս): Գարնան

բացվելուն պես, իր որչից դուրս գալով, Ցուսուֆը շարունակեց կողոպուտը⁸: Հավատալով իր անձի անձեռնմխելիության մասին Ցուսուֆի տված գրավոր խոսուումին և ցանկանալով երկիրը զերծ պահել Բետագա կոտորածից, Արտագերս ամրոցում պատսպարված Սմբատը հանձնվեց թշնամուն: Խոշտանգումների ու տանջանքների ենթարկելով հայոց թագավորին, Ցուսուֆը պահնեցէց, որ նա անձնատուր լինելու հրաման տա Երեշակ անառիկ բերդի պաշտպաններին: Բայց կորովի արքան հրաժարվեց: Ցուսուֆը գլխատեց Սրբատին, իսկ Մարմինը 914 թ. խաչ բարձրացրեց Դվինի հրապարակուս⁹: Այսպես եղերական վախճան ունեցավ նորաստեղծ Բագրատունյաց թագավորության երկրորդ արքան՝ Սմբատը: Եվ Կրկին վերսկսվեց իր անկախության և պետականության համար ժողովրդի անգիշում պայքարը, որն այս անգամ դեկավարեց Սմբատ Բագրատունու որդին՝ Աշոտ Երկաթը: Նա իր եղբայր Արքայի մետ, ջոկատներ կազմած, Ծիրակում ու Գուգարքում, Տաշիրքում, Արշարունիքում ու Աղստևի Բովտում, լեռներում ու անտառներում, կիրճերում ու անհնդախոր ձորերում անակնկալ ու սրաքն հարձակվում էր Ցուսուֆի զորքերի վրա, կոտորում, փախստական դարձնում նրանց: Այսպես նա մետքետե ազատագույն հայուննի երկիրը և նոյնիսկ հարձակվելով Տիգիսի վրա, կոտորեց կայազորը և շատ արք ու ատրպատականցի մեծամեծներ գերեց¹⁰: Ուկորվելով Աշոտի հաջողություններով, ժողովուրդը ազատագրական մարտերի դրոշ պարզեց նաև Սյունիքում ու Վասպուրականում: Բայց նոր փորձություն էր սպասում երկրին. Կովկասից եկած լեռնական ցեղերն ավերեցին ու կողոպտեցին Հայաստանի հյուսիսային շրջաններն ու Արարատյան դաշտը: Այս ամենին հաջորդած երաշտն ու սովոր մեծ վնաս հասցին Հայաստանին¹¹:

Այս պայմաններում Բյուզանդիայի կայսր Կոստանդին Ծիրանածինը, ցանկանալով դաշն կնքել Աշոտի մետ, նրան Կոստանդուպոլիս հրավիրեց:

Կոստանդուպոլիսից Աշոտը վերադարձավ բյուզանդական օգնական զորքով, որը շուտով ետ գնաց, քանզի Ցուսուֆը մեռացել էր Հայաստանից:

Աշոտը մեռնամուխ եղավ երկրի մերձերի կարգավորմանը, հնագանեցրեց ըմբռատ իշխաններին: Երկրում և երկրից դուրս այնքան էր մեծացել նրա մեղինակությունը, որ նոյնիսկ ոյսերիմ թշնամին՝ Ցուսուֆը, նրան թագ ուղարկեց¹²: Խալիֆը և Աշոտին թագ է ուղարկում և մանաշում նրա գերագույն իրավունքը մյուս թագավորների մկանամբ և նրան շահնշահի կամ արքայից արքայի տիտղոս է շնորհում¹³: Բայց երկրի մերքին կյանքը խաղաղ չէր, կրկին գուխ են բարձրացնում նախարարներն ու իշխանները, և Աշոտը ճնշելով նրանց, 922 թվականին հայուում է Դվինի վրա հարձակված բյուզանդիներին: Հաղթանակի բերկրանքը կարճ է տևում, նորից Հայաստան են խուժում Ցուսուֆի զորքերը, խարեւությամբ ձեռքակալում հայոց մեծամեծներին և իշխաններից շատերին և նոյնիսկ Հովհաննես Դրախնակերտցուն, կողոպտում և դատարկում երկրի գանձարանները:

Աշոտը Երկաթը մի փոքրիկ գնդով ամրանում է Սևանա կղզում, որտեղից, հավատարիմ իր ուազմակարությանը, համարձակ հարձակումներով ոչնչացնում է թշնամուն, ցիր ու ցան անում նրա գնդերը: Այս կովկաներում իր փոքրաթիվ մարտիկներով անօրինակ սխրանքներ է գործում Գուրգ Մարզպատունին: Սևանի հաղթանակը շատ խոշոր նշանակություն ունեցավ, Աշոտը վերադարձավ Ծիրակ և շարունակեց ազատագրել երկիրը:

Սմբատ Առաջինի և Աշոտ Երկաթի օրոք, մոտ 40 տարի, Բայոց արքայանիսն ու մայրաքաղաքը Ծիրակավանն էր¹⁴: Երկու թագավորներն եւ, քաղաքական վիճակից ելնելով, ավելի հաճախ գտնվում էին երկրի այս կամ գավառում, ավելի շատ լինում էին թամբին, քան գամին:

Ինչպես Բագրատանի, այնպես էլ Ծիրակավանի (Երազգավորք, Երազգավոր) մասին պատմիչները շատ քիչ տեղեկություններ են հաղորդում: Եվ քանի որ կանոնավոր պեղումներ չեն կատարվել, ապա դժվար է հատուկենության կամ այլ գավառում, ավելի շատ լինում էին թամբին, քան գամին:

Այդտեղ բնակավայր է եղել դեռևս մ. թ. ա. 3—2-րդ դարերում: Այդ է վկայում վրաց մատենագիր Լեռնահանության պատմելով, որ վրաց թագավորն ու հյուսիսային լեռնականները Արտաշես Առաջինի օրոք անսպասելիորեն հարձակվում են Հայաստանի վրա, կողոպտում Ծիրակավանն ու այլ բնակավայրեր¹⁵: Աերեսու պատմության մեջ՝ 7-րդ դարում այն միջատակում է իրեն գյուղ¹⁶: Այն փաստը, որ 869 թ. Զաքարիա Զագեցի կաթողիկոսի գլխավորությամբ գումարված դավանարանական ժողովը տեղի է ունեցել Ծիրակավանում, հաստատում է, որ դեռևս աթոռանիստ և մայրաքաղաք դառնալուց առաջ էլ այն կարես բնակավայր էր¹⁷: Պատմիչ Վարդան Արևելցին գրում է, որ Սմբատ Բագրատունին (890—914) Ծիրակավանում կառուցել է ս. Փրկիչ եկեղեցին և այնտեղ է օծվել: (Ի դեպ, այդ

Ս. Փոկիչ
Եկեղեցին. VII դ.:

Եկեղեցին, որին Կիրակոս Գանձակեցին «սեծապայծառ զարդարանքով տաճար» է անվանում¹⁹, կանգուն էր Մինչև 1950-ական թվականները): Ավելի ուշ կառուցվել է նաև ս. Աստվածածին Եկեղեցին:

Քանի որ Սմբատ Առաջինի և Աշոտ Երկաթի արքայանիստը Ծիրակավանն էր, բնականաբար, այն ուզմական տեսակետից պետք է պահովված լիներ: Ծիրակավանում կար ամրոց, պաշտպանական այլ կառույցներ: Նրանց Յ կմ հեռավորության վրա էր գտնվում Տիգնիս նշանավոր ամրոցը: Հավանաբար այն կառուցվել է Ծիրակավանի մայրաքաղաք լինելու տարիներին: Հետագայում Տիգնիս ամրոցը խոշոր նշանակություն ունեցավ Ամին պաշտպանության համար:

Ծիրակավանը 11-րդ դ. ավերեցին սելջուկները, բայց Բարսեղ Եպիսկոպոսի մի արձանագրության վկայությամբ՝ վերականգնվեց 12-րդ դարում:

1249 թ. մոնղոլների դեմ հայ և վրաց իշխանների ապստամբության առիթով վրաց Անանուն ժամանակագիրը հիշատակում է Ծիրակավանը, որ կալանավորվելուց հետո ուղարկվում են ապստամբ իշխանները²⁰:


Ինչպես Հայաստանի այլ քաղաքներն ու շենքը, Ծիրակավանը ևս քանից ավերեցին և կողոպտեցին թուրք-սելջուկները, թաթար-մոնղոլները:

Թուրքական տիրապետության շրջանում Ծիրակավանի անունը հնչումափխվելով դարձավ Ծորագյալ: Հաճախ այդպես էին կոչում նաև ողջ Ծիրակը, իսկ Ծիրակավանը՝ Բաշ Ծորագյալ: Թուրք պատմիչ Փեչինին հաճույքով է նկարագրում 1553 թ. թուրքական արշավանքն ու կատարած ավերածությունները. «Թուրքերը վերջապես հասան Ծորագյալ... և այնուղի իշեվանեցին: Այս երկիրը շատ բարեշեն է եղել, ունեցել է մշակված հողերով հարուստ բազմաթիվ գյուղեր: Երկիրը լեռնային է: Հաղթական բանակը քանդեց ու ավերեց այդ բարեշեն գյուղերը, շինությունները ոչնչացրեց և հողին հավասարեցրեց»²¹:

Որ հետագա դարերում Ծիրակն ու Ծիրակավանն իրենց աշխատաեր բնակիչների շնորհիվ բարիքների շտեմարան էին, վկայում է Մ. Թաղիադյանը, գրելով, որ Թիֆլիսին «Ծիրակաւան մատուցանե զիր ցորեան»²²: Ըստ ավանդության, հենց Ծիրակավանի մոտ եղած բարայրներում էին Խորենացու հիշատակած որկրամոլ Շարայի ամբարները²³:

1807 թ. մարտի 16-ին Ծիրակավան գյուղում ճակատեցին Կարսը Ավա-





Ճելու Ապատակով Ախուրյանն անցած ոուսական զորքերն ու թուրքական հազար հոգիանոց զորամասը, որի հետևանքով թուրքերը մեծ կորուստներ և 400 գերի տվեցին²⁴: Ծիրակավանը ոուսական կայսրության անցավ 1877—78 թթ. ոուս-թուրքական պատերազմի ժամանակ, մոտավ Կարսի մարզի մեջ և որոշ չափով առաջադիմեց: Գյուղի Սահմակյան վարժարանը հիմնադրվել է 1877-ին և ուներ 25 աշակերտ: 19-րդ դ. վերջերին Ծիրակավանն ուներ 790, իսկ 1907-ին՝ 1532 հայ բնակիչ²⁵. Լեռն 1903 թ. Անի այցելության ժամանակ եղել է Ծիրակավանում և տիսուր խոհերով համակվել, մտովի համեմատելով անցյալի փառապանձ քաղաքն ու ներկա քարակույտ գյուղը. «Դա Բաշ-Շորագյալն է. առաջին մեծ հայ գյուղը Ալեքսանդրապոլից մոտ 15 վերսա հեռավորության վրա: Նրա միջով հոսող գետակը, որ կոչվում է Կարախանի ջուր, մեր խմբից շատերին հիշեցրեց ծարավը: Ծիրակի դաշտերում աղբյուրներ շատ քիչ կան և ծարավից տանջվելն այդ հովատոն, կանաչ տարածությունների վրա նոյնքան սովորական է, ինչպես, օրինակ, Սարդարաբադի այրված, անջրդի անապատում, որ գտնվում է այստեղից դեպի արևելք, Երևանի երկաթուղու վրա: Մեր կառքերը կանգ առան, այս ու այն կողմից երևացող գյուղացիներից ու գեղջկութիներից ջուր էինք խընդրում:

Մերկ, սև, քարե գյուղ է դա: Ամեն տեղ չոր քարե պատեր միայն, ցածրիկ տեղերը կույր են, առանց պատուհանների, դեպի փողոցի կողմը դարձրած ունեն հաստ, բութ պատեր, որոնք կիկլոպյան անարվեստ շինարարություններն են հիշեցնում: Ոչ մի կանաչ ճյուղ, ոչ մի փունջ կանաչ խոտ ամբողջ գյուղի մեջ:

...Բաշ-Շորագյալի այս մոխրագոյն իրականությունը խլել էր իմ ամբողջ ուշադրությունը: Մենք, քաղաքացիներս, սիրում ենք այդպիսի տեսարանների առաջ փիլիսոփայական խոհերի մեջ ընկնել, մտածել մարդկային կյանքի հոգեբանության վրա: Ե՞ր պիտի լինի, որ խորին, անմիտար նահապետականությունը ազատն ժողովուրդը իր հայրական պինդ գըր-

Տեսարան Ծիրակավանից.
XX դ. սկիզբ:

Ա. Փոկիչ

Էկեղեցու բակում հավաքված
հնագիտական նյութեր, քահանան՝
մի խումբ շիրակավասնցիների հետ:



Կից: Ե՞րբ այս ժողովուրդը կատանա իր թոքերի համար այնքան հարկավոր օդ ու լույս: Մտածում են, իսկ չիշերոնե կառապանդ, այդ ծանր խոհերի անգիտակ, ուշադրությունն դարձնում է գյուղից դեպի վեր, բարձր թումբի գլուխը պասկող մին շինության վրա:

Նոր միայն միջում են, որ Բաշ-Ծորագյալն այն կետն է, որտեղից ճանապարհորդին սկսում է ուղեցել Բագրատունի թագավորների մեծագործ ոգին: Այդ անակնկալ միջողությունը ցնում է մարդուն: Համեմատելու, տարբերություններ գտնելու կարողությունը մարդկային ամենաթանկագին սեփականություններից մենքն են, բայց երբեմն ինչպես և մա տանջում...

Այժմյան սկզբունք, աղբաթաթախ Բաշ-Ծորագյալի մեջ ինչպես կարող են ենթադրել անգամ, թե դա մին Շիրակավանն է, որ ավելի մին ժամանակներում նրազգավորս էր կոչվում: Միայն կառապանդից ցոյց տված մին ավերակն է, որ պահպանել է այս պատմական իրողությունը: Ավերակը, որ բարձրից, երկնքի կապուտակության միջից, իր հնամաշ կողերն է ցոյց տալիս, Սմբատ Առաջինի շինել տված եկեղեցին է:

Շիրակավանը մայրաքաղաք էր այն ժամանակ, երբ Անին դեռ մի անհայտ բերդ էր: Այստեղ էր ապրում Սմբատը, քանի թագաժառանգ էր: Այստեղ էին վճռվում Աշոտ Առաջինի միննած բավական լայնածավալ պետության գործերը: Այստեղ էին գորածողություններ լինում, այստեղ էին արշավանքների ծրագիրներ կազմվում: Իսկ արշավանքներն անթիվ էին: Սըմբատը իր ամրողջ կյանքը պատերազմների մեջ անցկացրեց:

...Բաշ-Ծորագյալի աղբու փողոցներում անցնողը տեսնում է մին, ավերակ եկեղեցին, այնտեղ նահատակ թագավորի անունը հիշատակող գիր է չկա: Այսպես է եղել յուրաքանչյուր լավ հայի նակատագիրը: Ոչ գերեզման, ոչ անոն: Միայն պատմությունն է փոշոտած, մոռացության մատնված էշերի միջից մրմնջում այդ եկեղեցին տեսնողին, թե ինչպես մի ժամանակ մարդիկ գիտեին մեռնել իրանց հայրենի հողի համար...

Տիտոր է Բաշ-Ծորագյալի քարե տեսքը, ինչպես տխուր է առհասարակ մարդկային բնակությունների ընթանուր տեսարանը Շիրակում: Ուր տուն եք տեսնում, կարծում եք, թե առ լաց է լինում կանաչ բնության ծոցում, կարծեք ճնշված, մի ինչ-որ ճակատագրական ծանրության տակ: Եթե առաջին Սմբատով վերջացած լիներ Բագրատունիների գահը, եթե արյունի և կրակի դարեր անցած չլինեին այս երկրի վրայով, մարդ կնորսեր, թե դըրախտ թագավորի արյունոտ որվականն է անեծքի տակ պահում այս մերկությունը, աթարի, ցնցուտիների, անճար նահատակության այս աշխարհը...»²⁶:

Արշակ Ասլամազյանը (նշանավոր նկարչութիւն Մարիամ Ասլամազյանի հայող), որ Գերմանիայից իր բերած սարքավորություններով այստեղ ջրաղաց էր կառուցել, ոգեսրբում է Անիի պեղումներով ու Մատի խորհրդով Շիրակավանում պեղումներ ձեռնարկում, և հայտնաբերված հսկայական հյութը հավաքում եկեղեցում: Շիրակավանը Թուրքիային անցնելուց հետո այդ հյութերը ոչնչացվեցին և անհետացան: Ն. Մատի հանձնարարությամբ 1914 թ. Շիրակավանում ուսումնասիրություններ են կատարում հնագետ Աշխարհբեկ Քալանթարյանը, ճարտարապետներ Ն. Բոնիաթյանն ու Տարագրոսը, լուսանկարիչ Արամ Վրույրը²⁷: Ուսումնասիրելու նպատակով կամ էլ որպես հյուր Շիրակավանում հաճախ էին լինում Ն. Մատը, Հ. Օրբելին, Թ. Թորամանյանը, Ավ. Խարակյանը, ուրիշներ:

Շիրակավանի բնակչությունը տեղահանվել է 1920 թ., և մի մասը բնակություն է հաստատել Անիուրյանի շրջանի Երազգավորս գյուղում:

KARS



ԿԱՐՍ

Կարսի բերդը Բնուց ի վեր Վաճանդի Աշանավոր Ամխարարկան տան աթոռանիստն էր: Կարսի վերելքն ու բարգավաճումն անմիջականորն կապված է Բագրատունյաց թագավորության ստեղծման հետ: Ռևենալով ուղամական խոշոր Աշանակություն, այն կարևոր պատվար էր բյուզանդական և արարական հարձակումների դեմ և բնական է, որ Հայաստանի անկախության թշնամիները ձգտում էին Կարսում անկայուն վիճակ ստեղծել: Նրանց հրամանամբ 888 թվականին նորաստեղծ թագավորության դեմ պատամբեց Կարսի տեր Սահակ Մշեհ Վաճանդեցին: Աշոտ Առաջինը պատժելով ապստամբին, Վաճանդի համարարական տնից խեց նրանց տիրությունները: Կարսը դարձավ Աշոտ արքայի եղբոր՝ սպարապետ Արաս Բագրատունու նատավայրը¹: Նա ամրացրեց Կարսը և իր համար պալատ կառուցեց: Որպես սպարապետի նատավայր, Կարսում էր կենտրոնացած Բագրատունիների արքունի գործը:

Աշոտ Առաջինի մամից հետո Արասը փորձեց իշխանությունը խեց իր եղբորորդի Սմբատից, բայց անհաջողության մատնեց:

Երբ Թուղինի ճակատամարտում Սմբատ Առաջինի վաթուն հազարանց բանակը պարտվեց, Բայոց իշխանների ուժերը ցրվեցին: Այս պատեհ առիթից օգտվեց Աստրատականի ամիրա Ափշինը, որը Բնկայական բանակով Ուտիքի և Գուգարքի վրայով ներխուժեց Վրաստան ու դորս եկավ Բայոց թագավորության թիկունքը: Հայ իշխանները ամրանալով բերդերում, կատաղի դիմադրություն ցոյց տվեցին թշնամուն: Ափշինը 897 թ. խուժեց Վաճանդ, իսկ Սմբատ թագավորը ի վիճակի չինելով հավաքել ցաք ու ցրիվ գործը, ապաստանեց Տայքում: Ափշինը պաշարեց Կարսը, որտեղ ուրիշ ազնվազարմ տիկնանց հետ գտնվում էր Բայոց թագութին: Այստեղ էին պահված նաև արքունի գանձերը²: Կարսի համար դիմադրությունից հետո, բերդապահ Հասան Գնթունին հավատալով քաղաքի և նրա բնակիչների անվտանգության մասին Ափշինի տված երաշխիքներին, հանձնեց միջնաբերդը: Երդմնազանցորեն գերելով թագուհուն և մյուս ազնվազարմ կանանց ու բերդապահ Հասան Գնթունուն, Ափշինը զնաց Դվին:

Սմբատի և Ափշինի միջև հաշտությունը կնքվեց շատ ծանր գնով: Նա հարկադրված էր մեծարժեք նվերներով բացի, որպես պատան Ափշինին հանձնել թագաժանան Աշոտին, իր եղբոր՝ Սահակի որդի Սմբատին, իսկ մյուս եղբոր՝ Շապուհի դստերն էլ կնության տալ նրան: Ահա այս պայմանով հաջողվեց գերությունից ազատել թագուհուն և Հասան Գնթունուն³: Հետագայում Սմբատն ազատեց նաև Աշոտին⁴, որը Սմբատ Բագրատունու ողբերգական մասից հետո հոչակվեց Բայոց թագավոր (914—928 թթ.): Նա սպարապետ Աշանակեց իր հավատարիմ գինակից Գևորգ Մարգարետունուն, իսկ իր եղբորը՝ Արասին, իշխանաց իշխան դարձնելով, կարգեց Կարս քաղաքի կառավարից (921—928 թթ.):

Աշոտ Երկաթը մահացավ անժառանգ, ուստի թագավոր Բոչակվեց Արասը (928—953 թթ.): Նա չտեղափոխվեց Ծիրակավան, այլ մնալով Կարսում, այն դարձրեց մայրաքաղաք⁵:

Արասի թագավորության տարիները Բամեմատարար խաղաղ էին: Արարական խալիֆայությունը տրոհվել էր հաճախ իրար թշնամի ինքնուրույն պետությունների, մեծ ու փոքր ամիրայությունների, իսկ Բյուզանդական կայսրությունը կովում էր ոչ միայն արաբների, այլն իր մյուս հարևանների հետ: Բացի այդ, կայսրությունը ժամանակ առ ժամանակ ցնցվում էր Ենթական ապստամրություններից ու գարսկալական կովկասից: Այս ամենի շնորհիվ Հայաստանի համար ստեղծել էին քիչ թե շատ նպաստավոր պայմաններ:



Իր նոր մայրաքաղաքում Արասը լայն շինարարություն ծավալեց: Թագավորական պալատներն ու այլ շինությունները գտնվում էին միջնաբերդում, որի շորջն էլ, հատկապես ըլի արևելյան լանջերին արդեն ձևավորվել էր քաղաքի միջուկը: Արասը Կարսագետի ափին կառուցում է նաև ս. Առաքելոց մայր եկեղեցին: Կանցնի հազար տարի, և Եղիշե Զարենցն իր հայրենի քաղաքին նվիրված «Երկիր Նախրի» վեպում այսպես կգրի. «Առաքելոց եկեղեցին ամենամեծ ու ամենավիրական հրաշալիքն է, զարդն է, զարմանքն է այդ հնամյա քաղաքի— և բացի նրանց չկա մի ուրիշ ավելի հմայիշ զարմանք քաղաքացիների համար:— Ինչ որ է հոգին մարմնի հկատմամբ, ինչ-որ է ուղեղը, աչքը կամ սիրտը՝ մարդու կազմվածքում— նույնն է Առաքելոց եկեղեցին նախրյան այդ քաղաքում: ...Նա թողնում է նստած վարդապետի տպավորություն: Քարե ծեր մի վարդապետ է կարծես, նրանել է բլուրի լանջին ու մնացել է նստած— դարեր, ու կմնա նստած, քանի դեռ կա աշխարհը և անհուն աշխարհում— երկիր Նախրին»⁶:

Երբ Աշոտ Ռողորմածը (953—977 թթ.) մայրաքաղաքը 961 թ. փոխադրեց Անի, Կարսի կառավարիչ ճշանակվեց նրա եղբայր Սուչեղ Բագրատունին, որը 963 թ. իրեն հռչակեց Կարսի թագավոր՝ «Թագավոր Կարուց»: Լեռն Բագրատունյաց թագավորությունից Կարսի առանձնացումը իրավացիրեն համարում է կործանարար հայոց պետականության համար. «Անիից Կարս հազիվ 50—60 վերստ տարածություն լինի: Երկու քայլ մի պետության համար: Եվ երկու քայլի վրա՝ բաժանում, քայլայում: Ֆեղալի հասկացողությունը տարածության վերաբերմամբ էլ տարօրինակ էր, նա չի իմանում, որ տարածությունը պետության համար չունչ է, նրա փառասիրական տեսչն էր, որ գիտեր քավականանալ նոյնիսկ Կարսի փոքրիկ, մանրադիտական թագավորությամբ:

Որքա՞ն են, ճնշող է մեր հին իրականությունը: Միևնույն մեծ լեռնադաշտի երկու, համարյա հանդիպակաց ծայրերում, միևնույն գետի ափին կանգնած երկու մայրաքաղաքներ: Նրանք իրար չծեծեցին, իրար չկործանեցին զենքով: Ծնորհակալություն և այդքանի համար: Բայց մի՛թե կործանումը միայն զենքով է կատարվում: Իսկ առանձնացումը, իսկ իրարից անտարբերության, սառնության խոր խրամատներում անջատվե՞լը: Զկար զենքի թշնամություն, բայց չկար էլ զենքի բարեկամություն: Միևնույնը չէ՝ սա երկու դրկից, արյունակից, միևնույն վիճակին ենթարկված հարևանների համար: Բնությունից անախիկ դիրք ստացած Կարսը պիտի լրացներ Անիի կես-դաշտային դիրքի պակասությունները, պիտի նրա պատվարը, հզոր մարտկոցը դառնար: Սակայն նոյնիսկ օրինասական վտանգի, կործանման ռոպեներին էլ նրանք իրար ձեռք չմեկնեցին: ...Միևնույն տոհմի հատվածն էր այստեղ թագավորում մոտ մի դար. երկու սահմանակից գավառները միև-

Առյան երկիրն են իրանց բնությամբ, աշխարհագրական համգամանքներով։ Կարսի թագավորները չունենոր մարդիկ չեն։ Բայց և այնպէս, մեծագործության հիշտակներ նրանցից մեզ չեն մնացել։ Չե կարելի ասել, թե ժամանակն է անհետացրել նրանց բոլոր գործերը, որովհետև ժամանակակից պատմագրությունների մեջ էլ մենք չենք տեսնում, որ նրանք մի բան արած լինեն։

Բացառություն է միայն Կարսի հոյակապ Մայր եկեղեցին, որ շինել է Արա թագավորը... Բայց ուշադրություն դարձրեք, թե երբ է առ շինված Նախան թագավորության պառակտումը»⁸։

Նոր թագավորության տարածքը շուրջ տասը հազար քառակուսի կմ էր և ընդգրկում էր ութ գավառներ, որոնցից կենտրոնականը Վանանդն էր, որի անունով էլ երբեմն այն կոչվում էր Վանանդի թագավորություն։ Այն տնտեսապես ինքնուրույն շրջան էր։ Զարգացած էր երկրագործությունը, անասնապահությունը, այգեգործությունը։ Մեծրաց լեռների անտառները տալիս էին շինափայտ, որի մի մասն արտահանվում էր։ Արտահանվում էին նաև հոկայական քանակությամբ ցորեն և աղ։ Պղնձի, արծաթի, արճի, երկաթի հանքերի շնորհիվ զարգանում էր արհեստագործությունը։ Թագավորությունը պաշտպանված էր մի շարք ամրոցներով, որոնցից Շատիկը՝ գրտերվելով առևտրական ճանապարհների վրա, մաքաղանձման կարևոր կետ էր¹⁰։

Աշուտ Ողորմածի մահից հետո նրա եղբայրը՝ Կարսի թագավոր Մուշեղը, փորձեց տիրել Անիի գահին, բայց Անիի պավանին ընդդիմանալով՝ թագաղրեց օրինական ժառանգորդին՝ Սմբատ Երկրորդին։

Բագրատունյաց կենտրոնական թագավորության և Կարսի միջև հիմնականում հաստատված էին բարիդրացիական հարաբերություններ, որը միայն դեպքից դեպք էր խոռվում։

Մուշեղին հաջորդեց նրա որդին՝ Արաս թագավորի թոռը՝ Արասը (984—1025 թթ.), որը գահ բարձրացավ իր «ազգապետի» հայոց Սմբատ Երկրորդ «Տիեզերակալի» հրամանով։ Անիի Բագրատունիները համարվում էին Վասպորականի, Սյունիքի, Խաչեն-Փառհոսուի, Կարսի և Տաշիր-Ջորագետի թագավորների գահերեց, իսկ հայ և վրաց Բագրատունիների նկատմամբ՝ «ազգապետ» և գերադաս դիր ունեին։

Կարսի Արաս թագավորին Ստեփանոս Ասողիկն այսպես է բնութագրում. «Երբ հասավ թագավորական աթոռին, դարձավ շրեղ տղամարդ, հանճարով լի իմաստուն, հսկամբելով իմաստունների մեջ առաջինը...»¹¹։ Նա իր քառասունինգամյա գահակալության ընթացքում ոչ միայն խաղաղություն պահպանեց, այլև իր թագավորության մեջ վերացրեց գողությունն ու պավագակությունը։ Նա բարձրացրեց զինված ուժերի ուազմունակությունը և նոյնիսկ զինվրական կարմիր համազգեստ մոցրեց¹²։ Բացեց բազմաթիվ դպրոցներ, որտեղ սովորում էին նաև ուազմավարություն։


Բյուզանդիայի և վրաց Բագրատունիների միջև տեղի ունեցող արյունահեղ պատերազմների ժամանակ Կարսի թագավորությունը, ուազմարեմ դառնալով, ավերածությունների ենթարկվեց¹³։

Կարսի թագավորությունը համեմատաբար խաղաղ էր նաև Արասի որդու՝ Գագիկ Կարսեցու օրոք (1029—1065 թթ.): Այդ նրան հիմնականում հաջողվեց շնորհիվ այն սերտ ազգակցական կապերի, որ ստեղծել էր Բագրատունիների, Տաշիր-Ջորագետի Կյուրիկյանների, Վասպորականի Արծրունիների և վրաց Բագրատունիների հետ. նա ամուսնացած էր «քագավոր ափխազաց և վրաց» Բագրատ Զորբրորդի թրոց՝ Գուրանդուխտի հետ¹⁴։

Երբ ընկավ Անիի Բագրատունյաց կենտրոնական թագավորությունը (1045 թ.), հայ Բագրատունիների պավագ ներկայացուցիչը մնաց Գագիկ Կարսեցին, որը և ձևականորեն կրում էր «շահնշահ» տիտղոսը¹⁵։ Նա կատաղի պայքար մղեց օտար նվաճողների դեմ՝ ապահովելու Կարսի թագավորության անկախությունը։

1053 թվականին սելջուկ թուրքերի արշավամբի ընթացքում Տուղրիլ բեկի գորքերը հարձակվելով Հայաստանի վրա, քրիստոնեական տուներից մեկի ժամանակ գրավեցին Կարսը։ Դեպքերի ժամանակակից պատմիչ Արիստակես Լաստիկերցին այսպես է նկարագրում. «Հանկարծակի վրա հասան անօրենների գորքերը և որովհետև քաղաքը գիշերապահներ չուներ, ներս խուժելով սուրը քաշած՝ անողորմաքար կոտորեցին բոլորին. մեծ ողբերի է արժանի այս պատմությունը»։

Քաղաքների կարգն է, որ տերունական տոների ժամանակ թե՛ տղամարդ, թե՛ կին, թե՛ ծեր, թե՛ երեխա, ամեն մեկն իր ուժի ու կարողության չափ, գարնան ծաղկանոցների նման մեծ վայելչագեղությամբ զարդարվեն։ Թշնամիները սրանց այսպես էլ գտան, բայց հանկարծակի քաղաքը լցվեց ողբ ու կականով։ ...Զորբերն ամրող օրը մնալով այնտեղ՝ կողուտեցին ու քարութանդ արին տները, հետո կրակ տալով այրեցին քաղաքը, իսկ իրենք առնելով պարն ու գերին՝ գնացին իրենց երկիրը»¹⁶։



Հաջորդ տարի՝ 1054 թ. թուրք-սելջուկները՝ Տուղրիլի գլխավորությամբ «Անհամար զորքերով ու փղերով, կառքերով ու երիվարձերով» կրկին հարձակվեցին Հայաստան աշխարհի վրա, շատերին սպանեցին ու գերեցին, բայց երբ հասան Վանանդի սահմանները, նրանց դեմ իր իշխանների հետ դուրս եկավ Գագիկ Կարսեցին և շատերին կոտորեց, բայց շուտով վրա հասավ թշնամու զորքի ավելի մեծ խմբավորում։ Հայերն արյունահետ կրովից արդեն հոգնել էին և թշնամու թարմ ուժերին հանդիպելով՝ պարտվեցին։ Հայ իշխաններից երեսունն ընկան այդ մարտում, իսկ Թաթով անոնվ մի քաջազն ու անվախ իշխանի թուրքերը տարան Տուղրիլի մոտ, և քանի որ Թաթովը ճակատամարտում ծանր վիրավորել էր պարսից Արսուրան ամիրայի որդուն, ապա Տուղրիլը, ինչպես գրում է Լաստիկերցին. «Նրան տեսնելով ասաց. «Եթե դա ապրի, թեզ կազատեմ, բայց եթե մեռնի, կմրամայն, որ թեզ դրան մատադ անեն»։ Իսկ Թաթովը պատասխանեց. «Եթե իմ զարկածն է, չի ապրի, իսկ թե ուրիշինց է, այդ չգիտեմ»։ Քիչ օրերից հետո նա մեռավ։ Երբ Սովորանն այդ լսեց, իրամայեց Թաթովին սպանել և նրա աջ բազուկը կտրելով՝ ողարկեց Արսուրանին որպես միսիթարություն, թե քո որդին վատ բազկից չի մեռել»¹⁷։

Սելջուկների հետո Կարսի թագավորությունը պահպանեց իր անկախությունը, բայց այս արշավանքից ուղիղ տասը տարի անց՝ 1064 թ., այս անգամ Ալփ Արալանի գլխավորությամբ (քանզի Տուղրիլը մեռել էր նախորդ տարում), կրկին ասպատակեցին Հայաստանը։ Գագիկն իր թագավորությունն ավերածությունից փրկելու համար, ինչպես Մատթեոս Ուռիայեցին է վկայում, դիմեց դիվանագիտական քայլի. «Նա հագավ սգավորի հանդերձներ և հաւեց սկ բարձի վրա։ Երբ սովորանի դեսպանը նրան այդպես սգավոր տեսավ, ցանկացավ իմանալ պատճառը և հարցրեց. «Ինչո՞ւ ես սկ հագել, չե՞ որ դու թագավոր մարդ ես»։ (Գագիկը) պատասխանեց, թե՝ «Երբ մեռավ իմ բարեկամ Տուղրիլ սովորանը, Արալանի եղբայրը, աჩա այն օրվանից եմ ես այս սկ հանդերձները հագել»։ Մարդն ապշեց և գնաց սովորանին պատմեց, որը նույնպես շատ զարմացավ։ Ամրող բանակով վեր կենալով, նա եկավ Կարս, Գագիկի մոտ, նրա հետ մեծ բարեկամություն հաստատեց և ուրախություն արեց. Նա Գագիկին թագավորական հանդերձներ հագցրեց։ Գագիկը սովորանին ճաշկերոյթ տվեց»¹⁸։ Սակայն Գագիկ արքան, վախենալով սելջուկների հետագա հարձակումներից՝ 1065 թ. Կարսի թագավորությունը գիշեց Բյուզանդիայի կայսր Կոստանդին Դուկասին և փոխարենը կալվածքներ ստացավ Կապաղովկիայի շրջանում։ Ալյանս, շուրջ մեկ դար գոյատևելուց հետո, Կարսի թագավորությունը վերացավ։ Մատթեոս Ուռիայեցին գրում է. «Անա այս ձևով ստրկացվեց Հայոց ամրող աշխարհը և ծովի նման ծփում էր արյան մեջ։ Քանդիպեց, ավերվեց մեզանից նկված մեր հայրենիքը, խախտվեց հայ ժողովրդի տան հիմքը, ոչ մի տեղից հույս,



ապավեն չմնաց, ու մենք ընկանք անհավատ ժողովուրդների և օտար գազանների ծառայության լի տակ»¹⁹:

1071 թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական բանակը ծանր պարտություն կրեց, և կայսրությունն ստիպված եղավ թուրք-սելջուկներին զիշել մի շարք քաղաքներ ու գավառներ, այդ թվում և Կարսը:

Վրացիների և սելջուկների միջև տեղի ունեցած պատերազմների ընթացքում Կարսը ձեռքից ձեռք անցավ: Վրաց Գեղրդի թագավորի մահից հետո գահը ժառանգեց Թամար թագուհին: 1206—1207 թթ. հայ-Վրացական միացյալ բանակը Զաքարյան եղբայրների գլխավորությամբ պաշարեց Կարսը: Կարսը միացվեց Վրաստանին և հանձնվեց Թամար թագուհու որդուն, իսկ հայկական մյուս մարզերը տրվեցին Զաքարյաններին:

11—12-րդ դարերում Կարսը արհեստագործության և առևտի խոչոր կենտրոն էր և կապված էր Անիի, Դվինի, Արծնի, Կարինի, Տփիսի, Տրապիզոնի և այլ քաղաքների հետ: Արար աշխարհագիր Յակուտը գրում է, որ Կարսից արտահանվում էր մետաքս: Ներսէ Ծնորհալին Կարսն անվանում է «անմատույց դյակ և հոյակապ քաղաք» և նշում, որ այնտեղ ապրում էին «ձեռնահմուտ» արհեստավորներ ու վաճառականները²⁰: 11-րդ դարում Կարսում եղել է հոգևոր քարձորագոյն դպրոց՝ Վարդապետարան:

Զալալ աղ-Դինը, հարձակվելով Հայաստանի վրա, 1226 թ. պաշարեց Անին, այնուհետև, ինչպես Ալ-Ասիրին է վկայում. «Զորքի մի մասն ուղարկվեց Կարս քաղաքը... Դրանք երկուսն էլ այդ երկրի ամենաամուր և անառիկ բերդերից են: Նա եկավ, պաշարեց, կորվ մղեց այնտեղ եղած (զորքերի) հետ: Նա քարանետ մեքենաներ դրեց և համար պայքար սկսեց երկուսի համար էլ»²¹: Ուղիղ տասը տարի անց՝ 1236 թ. թաթար-մոնղոլները Զարմաղանի գլխավորությամբ արշավեցին Հայաստան և Վրաստան: Գրավելով Անին, բնակիչների մի մասին կոտորեցին, շատերին էլ գերեցին: Կարսեցիները ցանկանալով խուսափել անեցիների ճակատագրից, ընդառաջ գնացին ասպատակիչներին, և նրանց սիրտը շահելու համար հոժարակամ մատուցեցին քաղաքի բանալիները: «Բայց որովհետև նրանք պարի համար տոշորվում էին և ոչ ոքից երկուով չունեին,— գրում է Կիրակոս Գանձակեցին,— նոյն աղետները նաև նրանց վրա թափեցին ինչ որ Անիի հետ էին արևել ինչքի և ստացվածքի հափշտակություն, բնակիչների կոտորած, քաղաքի ավերում. անշքացրին նրա վայելչությունը, գերեվարեցին նրա բնակիչներին. սակավաթիվ սրիկաների թողեցին, հեռացան: Հետո հոռոմների սովորանի զորքը եկավ, թաթարների կողմից ձերքատվածներին ոչնչացրեց գերությամբ և սրով ամսամարը...»²²:

Այս շրջանում հսկայական հարստություն էր կուտակվել Հայաստանի ոչ միայն հայ, այլև օտարազգի առևտրականների մոտ: Մեծահարուստ Մուհիմեդ Շամս-էղ-Դինը 1269 թ. ամուսնանալով Ալվագ Զաքարյանի աղջկա հետ՝ որպես օժիտ ստացավ Կարս քաղաքը²³:

Վրաց Դավիթ թագավորի մահից հետո թագավոր հոչակվեց նրա անշահանա որդին՝ Դեմետրը (1271—1289 թթ.): Այդ պատճառով վրաց աթարեկ (թագավորահայր) նշանակվեց Մահմանաբերդի իշխան Սաղոն Արծունին, որը փաստորեն դարձավ երկրի կառավարիչ տերը: Նա 1284-ից իր նախավայրը դարձրեց Կարսը:

Լեռնահմուրի երկրորդ արշավանքի ժամանակ՝ 1394 թ. նրա հորդաներն

այլ քաղաքների մետ գրավեցին նաև Կարսը: Նրա մահից հետո այն կովախնձոր դարձավ Լեռներնուրի հաջորդների ու թուրքմենական կարա-կոյունուն և ակ-կոյունուն ցեղերի միջև:

Համարյա ողջ 16—17-րդ դարերում թուրքերն ու պարսիկները պայքարում էին Հայաստանին տիրելու համար: Այդ ընթացքում Կարսը կարևոր ռազմակեն էր:

Թուրք սուլթան Սուլեյման Առաջինը Կարսը նվաճելով՝ ամրացրեց բերդը, սակայն Թահմազ շամը երկու անգամ գրավելով այն, քանի ունեց, բայց հետո կրկին ստիպված եղավ գիշել թուրքերին: 1555 թվականին կերպված համաձայնագրով Հայաստանը բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև, իսկ Կարսի շրջանը հայտարարվեց չեզոք: Այս համաձայնագիրը խախտելով, 1578 թ. սուլթան Մուրադը վերականգնեց պարսիկների պվերած միջնաբերդն ու Կարսի բերդը: Այն հարավային և արևելյան մասերում ուներ կոկնակի պարհապնդեր, իսկ քաղաքի 4 ծայրերում մեկական բարձր ու հզոր հրականատափու աշտարակ, որոնց վրա կային 12-րդ և հետագա դարերի հայերեն արձանագրություններ: Պարհապնդերի բարձրությունը 10—12 մետր էր, լայնություն՝ 1,5 մետր: 17-րդ դարի թուրք ուղեգրող Եվլիիյա Զելերին նշում է, որ Կարսի բերդի քարակոփ պարհապնդերն ունեին երկարեւ դարպաներ, 220 աշտարակներ, 2080 պատճեն և պատվար: Հետագայում Եղիշեն Զարենցն այսպես է նկարագրել նրա պվերակները. «Բերդից, քարեւ այդ վիթխարի սննդուկի երկու կողքերից սկսվելով՝ ծուռումուո, հսկա սապատավոր ուղտերի նման, դեպի վար, դեպի քաղաքն են իշնում քաղաքի երբեմնի պարիպների հիմիկվա մնացորդները: Առաջ, շատ հնում, քարեւ ուղտերի անընդհատ ձգվող մի քարավան է եղել, ամրակուու մի պարհապ, որ բերդից իշնելով՝ անցնելիս է եղել գետը և ամբողջ քաղաքն իր մեջ առնելով՝ տարիներ շարունակ պաշտպանել է բնակիչներին չարից ու ոսուից: Բայց հիմա քարեւ այդ հսկա ուղտերի սապատներն են միայն՝ ծուռ, կոշկու բլուրների նման տեղ-տեղ մնացել: Մնացել են հիմա այն հին պարհապնդերի գարմանք հետքերը միայն — մեկն այնտեղ ահա, բերդի պատերին կպած, մյուսն այնտեղ, գետեզերքին, մեկն էլ հեռու հեռուն՝ քաղաքից դուրս: Ամեն մեկը հիմա մամուպատ մի պատ է կատարյալ, չիմացողը կասի՝ ո՞վ է այս բլուրի քարերը հոկել, ազնվացրել և մամուռով պատել...»²⁴.

Կարսի բերդն ավերվել է 1877—78 թթ. ուսու-թուրքական պատերազմի ժամանակ, իսկ մինչ այդ նրա ամրակող պարհապնդերին զարնվելով շարդվել են բազմաթիվ հորդաներ:

Չափ Արքասին հաջողվեց Կարսը գրավել միայն երկարատուն պաշարումից հետո: Հայերի բռնագաղթը Պարսկաստան (1604 թ.) նվազեցրեց ոչ միայն Արարատյան աշխարհի, այլև Կարսի և հարակից շրջանների հաւերի թիվը: Ինչպես պարսիկ պալատական պատմիչ Խորանդար Մունշին է վկայում, շահ Արաք հրամատուու է, որ Կարսի շրջանում «մի քանի օրվա ճանապարհի տարածության վրա գտնվող շեն վայրերն ամայացվեն, իսկ դաշտերուն եղած ցանքսերից, արոտավայրերից ու բնակավայրերից ոչ մի հետք չմնաց»:

17-րդ դարի առաջին քառորդում, Թահմազ-դուկի խանը, օգտվելով, որ Կարսի թուրք կառավարիչների միջև տարածայնություններ էին ծագել, և նրանք երգրումի փաշայի մոտ էին գնացել, ներխուսեց և մի շարք շրջաններ ավերելուց հետո Կարսի բնակիչներից շատերին գերեց:

1639 թ. թուրք-պարսկական նոր համաձայնագրով, Կարսը մնաց Թուրքիայի տիրապետության տակ: Սակայն պարսիկները չիրաժարվեցին Կարսին տիրելու մտքից, 1735 թ. և 1747 թ. նադիր շահը պաշարեց քաղաքը, բայց գրավել չկարողացավ:

17—19-րդ դարերում Կարսը համանուն փաշայության կենտրոնն էր և իր հերթին մտնում էր Երգրումի կուսակալության մեջ: Ըսկ հետագայում դարձավ առանձին վիլայեթ:


Թուրքական տիրապետության շրջանում անկում ապրեցին քաղաքային կյանքը, արթեստներն ու առևտուրը: Ռուսական զորքերը Կարսն առաջին անգամ գրավեցին ուսու-թուրքական պատերազմի ժամանակ՝ 1828-ի հունիսին:

Դեկաբրիստ Լաշինովը, որը մասնակցել է ուսուական զորքերի վճռական գրոհին, իր նամակներից մեկում այսպես է նկարագրում խելաթեղ մարտը. «Արև ծագելուն պես 20 մարտկոցային, Յ թեթև և 4 հրասանային հրանոթների գործողությունն ապշեցրեց թուրքերին: Միջնաբերդը, ամրոցը և արվարձակն աշտարակներն սկսեցին պաշտպանվել, պատասխան կրակ բացելով, ծուխը չհասցնելով ցրվել ծածկեց շրջակալքը, նոնակների և ուսուբերի անդադար պայտունները, արկերի սուլոցը ցույց էին տալիս, որ երկու կողմերն էլ մտադիր են լուրջ կոկմեր մնել և որ Կարսին տիրելը հեշտ չի լինելու... Ծուտով նկատելի դարձավ հայկական արվարձակն վրա իշխող ամրացված բարձունքը պաշտպանողների մեջ տիրող իրարանցումը, ամ-

Կարսի առողմք,
Նկարը՝ Կարագինի, 1829 թ.:

Սովորական բանակի գլխավոր
հրամանատարի հանդիսավոր
մուտքը Կարս,
Նկարը՝ Կարագինի, 1829 թ.:





Կարսի համայնապատկերը,
XIX դ. վերջ:

Կարսի համայնապատկերը
ըստ Շառլ Տեքսիէի, 1842 թ.:

Կարսի միջնաբերդը, XIX դ.:



բողջ գիշեր կենտրոնի աշխատանքները պաշտպանող 39-րդ եգերական գնդի վաշտի հրամանատարը որոշեց առանց հրամանի սպասելու առաջ գնալ և գրավել գերեզմանատունը: Մոտեցողների վրա գնդակների և հրանոթային արկերի տարափ էր տեղում, բայց Լարինցովը տեսնելով բարձունքին թղթամու տեղադրած մարտկոցին տիրելու հնարավորությունը, 42-րդ գնդի եգերների գալուն պես նետվեց թշնամու խրամատները: Թուրքերը տեղատարափ կրակից հետո այլևս չհասցելով լցնել հրացանները, ինչպես նաև ատրճանակները, սկսեցին գործի դնել թրերն ու դաշունները, իսկ ումաք է փորձեցին գուխներն ազատել՝ քարեր շարտելով: Մերոնք առանց կրակելու մոտեցան խրամատներին և կատաղի գոտումարտի բռնվեցին թշնամու հետ: Զարհուրելի էին այդ դոպենները: Այնուհետև նկարագրելով ոռուսական բանակի հերոսությունն ու հաղթանակը, Լաշինովը գրում է. «Աշտարակների դրոշակները մի քանի անգամ ցած իշեցվեցին ի նշան այն քանի, որ բերդը հապատակվում է... թուրքերը տեսնելով, որ դիմադրելն անհնարին է, որոշեցին անձնատուր լինել: Սարսափահար փաշան բարձրաստիճան պաշտոնյաների հետ միասին թաքնվեց միջնաբերդում, կոմսի մոտ ուղարկելով մարդ՝ առաջարկելու հանձնվելու պայմանները: Ամբողջ բերդը մեր ձեռքում էր և զորքերի մի մասը կանգնած էր միջնաբերդի փակ դարպասների մոտ, իսկ նրա (միջնաբերդի) պատերի վրա ցրված էր կապարոր, որը զենքը դեպի մեզ դարձրած՝ սպասում էր բանակցությունների վախճանին: Փողոցներում սարսափելի իրարանցում էր տիրում. ամեն տեղ զինված թշնամիներն ավելի շատ էին, քան մերոնք, բայց նրանք իրենց կաշվի վրա արդեն գգում էին, որ ո՞չ բազմամարդ լինելը, ո՞չ արգելքները և ո՞չ էլ պարիսպները չեն փրկի իրենց և այն դար, որ տրվել էր նրանց, ամենավճռական մարդուն անգամ զրկում էր վերջին խիզախությունից. ամենքը հավատացած էին, որ անհնարին էր դիմադրել»²⁵:

Թուրքական 10 հազարանց²⁶ կայազորը 2.000 զոհ և 1361 գերի տալով՝ հանձնվում է, ոռուսները գրավում են 129 թնդանոթ, մեծ բանակությամբ զինամթերք, ուտելիքի պահեստներ²⁷ և այլն:

1829 թ. Էրզրում գնալու ճամապարհին Կարսում է օթևանում Ա. Պուշկինը, որն իր «Ծանապարհորդություն դեպի Արգրում» երկում գրում է. «Աճը ըշշուալով թափում էր վրա: Վերջապես մոտիկ տնից դուրս եկավ մի երիտասարդ հայ և... ինձ կանչեց իր մոտ, խոսելով բավական մաքուր ոո-

սերեն: «Նա ինձ նեղ սանդուղքով տարավ իր տան երկրորդ մասը: Ցածր բազկաթոռներով և հին գորգերով կահավորված սենյակում նստած էր մի պառավ կիճ՝ նրա մայրը: Կիճը մոտեցավ ինձ և համբուրեց իմ ձեռքը: Որդին պատվիրեց նրան կրակ անել և ինձ համար ընթրիք պատրաստել: Ես համվեցի ու նստեցի կրակի մոտ: Ներս մտավ տանտիրոջ փոքր եղբայրը, մոտ տասնյոթ տարեկան մի տղա: Երկու եղբայրն էլ եղել էին Թիֆլիս և այնուեղ ապրել մի քանի ամիս: Նրանք ինձ ասացին, որ մեր զորքերն առաջ են շարժվել նախընթաց օրը և որ մեր ճամբարը գտնվում է Ղարսից 25 վերստ հեռու: Ես միանգամայն հանգստացա: Շուտով պառավն ինձ համար սոխով ոչխարի միս պատրաստեց, որն ինձ թվաց խոհարարական արվեստի գագաթնակետը»²⁸: Հաջորդ օրը՝ Պուշկինը տանտիրոջ՝ Արտեմի հետ գնում է քաղաքում շղագայելու, տեսնելու Կարսի նշանավոր ամրոցը, որից հետո Պուշկինը զարմացած գրում է. «Ես չեի հասկանում, թե մենք ինչպես ենք կարողացել Ղարսին տիրանալ: Իմ հայն ինձ մի կերպ բացատրում էր



Կարսի առումը, 1828 թ.,
Նկարը՝ Վ. Մաշկովի:

Գրոհ Կարսի վրա.
Նկ.՝ 1829 թ.:

ուազմական գործողությունները, որոնց ականատես էր Եղել»²⁹: Պուչկինի այցելությունից մի երկու ամիս անց, Ադրբանապոլիսի պայմանագրով Կարսը վերադարձվեց Թուրքային: Խուսական բանակին աջակցելու պատճառով թուրքերի վրեժմանը խոսափելով՝ 1830 թ. շուրջ հինգուկես հազար հայ Կարսից գաղթեց Փամբակ և Ծիրակ:

Ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքերը կրկին ամրացրին Կարսի բերդը: Կարսագետի բարձրադիր ափերին հիմնվեցին նոր ամրություններ, որոնք միմյանց միացվեցին ճանապարհներով ու կամուրջներով:

Ղրիմի պատերազմի ժամանակ՝ 1855 թ. ուստի նոր կրկին ցանկացան իրագործել իրենց վաղեմի նպատակները: Թուրքերը Կարսում կենտրոնացրել են երեսունութ հազարանոց լավ զինված բանակ: Վեցամյա պաշտումից հետո թուրքերը անձնատուր եղան և հանձնեցին Կարսը: Սակայն այս պատերազմը Խուսատանի համար անհաջող վահճան ունեցավ, 1856 թվականի օգոստոսին Օրանք կրկին թուրքերին վերադարձրին Կարսը: Այս անգամ ևս բաղաքի ու շրջակայքի հայ և հույն բնակչության մի մասը ուսական բանակի հետ հեռացավ:

Հնայած Ղրիմի պատերազմում Կրած պարտությանը, ցարական Ռուսաստանը չէր հրաժարվում իր ազդեցությունը տարածել Բալկանների և Մերձավոր Արևելքի վրա: 1877 թ. սկսվեց ուսւ-թուրքական նոր պատերազմ: Ի դեա, կովկասյան ուազմանակատում գործող ուսւական բանակի կազմում կային յոթ հայ գեներալներ, 500-ից ավելի սպաներ և հազարավոր հայ կամավորներ: Թուրքական ճակատում Կարսի գրավումը կարող էր վճռական նշանակություն ունենալ և Կովկասյան կորպուսը՝ հայազգի գեներալ-ադյուտանտ Մ. Լորիս-Մելիքովի հրամանատարությամբ, իր գլխավոր հարվածը հասցեց Ալեքսանդրապոլ—Կարս ուղղությամբ:

Կարսը Արևելքի անառիկ բերդերից էր և արտաքին ամրությունների հետ միասին գրավում էր 40 կմ շրջագիծ և նրա պաշարման համար պետք էր մեծաքանակ բանակ, մանավանդ որ քաղաքում կուտակված երեսուն հազարանոց թուրքական զորքն ուներ երեք հարյուր հրանոթ: Որոշվեց այն գրավել հարձակումով: Եվ նոյեմբերի 18-ի լուսարացին, գեներալ Հովհաննես Լազարեկի գրոհային ջոկատները՝ հայ կամավորների աշակեցությամբ, ճեղքեցին թուրքերի պաշտպանական օդակը և մտան բաղաք:

Կարսը նվազվեց³⁰: Նրա գրավմանն աշքի ընկան նաև ուսւական բանակի մյուս հայազգի գեներալները:

Հայերի և ոստիների կողքին մարտնչում էր նաև չեմ գրող Բոհումիլ Հավլասան, որը հեռավոր Շեխիայից Հայաստան գալով՝ քաջարար է կը վկայում թուրքերի դեմ և նոյնիսկ ներկայացվում Գեղրդիկյան խաչի: Կարսի ուազմանակատի իրադարձությունների մասին նա թղթակցություններ էր ուղարկում Պրագա, որոնք ընդհատվեցին 1877-ի հոկտեմբերին, եթե նա վարակվեց տիֆու և տեղափոխվելով Ալեքսանդրապոլի հիվանդանոց, 25-ամյա տարիքում մահացավ³¹:

Պատերազմի պարտից հետո Խուսատանին միացված տարածքից ստեղծվեց Կարսի մարզ՝ Կարս, Օթի, Արդարիան և Կաղզվան օկրուգներով և գրավում էր մի հսկայական տարածք՝ շուրջ 18 646 քառ. կմ³²: Այն կառավարում էր նահանգագետը: Կարսը դարձավ համանուն մարզի կենտրոն, զարգացավ, ավելացավ բնակչության թիվը:

Մարզում բնակեցվեցին մեծ թվով ոստիներ, հովաներ, պարսիկներ, Էստոնացիներ, գերմանացիներ և այլն³³: Հնայած ցարական վարչակարգի արգելքներին³⁴, Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարրեր վայրերից՝ Կարինից, Ալեքսանդրապոլից, Ախալցիխայից, Ախալքալաքից շատ հայեր գաղթելով Կարս՝ նոր շունչ հաղորդեցին Օրան³⁵:

Նախկինում Կարսը չէր կառուցապատվել ընդհանուր հատակագծով: Փողոցները ծուռումուն էին ու նեղ: Դրանք իրար էին միացնում քաղաքի ու միջնաբերդի դարպասները, հատվելով ստեղծում անկանոն ձևերով հրապարակներ: 19-րդ դարի սկզբներին քաղաքում կար շուրջ երեք հազար տուն:

1812-ին Կարս այցելելով՝ արևելագետ և դիվանագետ Ուիլյամ Առուլեյը գրում է. «Ես նկատեցի բազմաթիվ լավ քարաշեն տներ՝ շորո կամ հինգ ուր դորս փայտյա պատշգամբներով: Ծրջափեղկերը նոյնակես փայտյա էին, ինչպես նաև պատուհանների խաչաձևած մասերը, որոնցում շատ քիչ ապակի էր գործածած: Ծննարարական ընդհանուր ոճն այս քաղաքը դարձում էր ավելի նման եվրոպական հին քաղաքներին... Եթե մի քանի քարձը ծխնելուցներ (լինեին), նմանությունն ավելի զորավոր պիտի լիներ: Մի կարգ շենքերում տեսնվում էին գեղեցիկ ու լավ կոփված քար, շատ տներ ունեին եզերված ճակատ և շատերն երևում էին, որ եղանի որմնադրվագներով եզերված էին, քշերը միայն շունեին վերնահարկեր և փայտյա սանդուխներ... Ես տեսա երեք հատ քարե զորավոր ու գեղեցիկ կամուրջներ և մի շորրորդը՝ փայտյա»³⁶:

Նրան լրացնելով, անգիտած նկարից Քեր-Փորթը 1819-ին գրում է.





«Բացի վեհ տեսքից, որ նշմարվում է հեռվից, նրա տպավորիչ միջնաբերդի դիրքի ու պարիսպների տարածության պատճառով, տները մի քանի հարկ բարձր են թվում, մեծ մասամբ շինված քարից, տալով մասնավոր շրեղության մի կերպարանը:

Բարձրանալով քաղաքի զանազան ծուռ ու մոտ ճանապարհներով շուկաների միջից ու նրանցքներից, կանգ առանք փոստատանը, որ զորանոցի շափ ընդարձակ էր, բայց նրա բազմաթիվ բարձր սենյակներն արագորեն քայլավում են: Սենյակների պատերը փայտածածկ են, ունեն զանազան պահարաններ, բայց ամենից համեմին այն մեծ բոցակեզ կրակարանն էր, ուման Անգլիայի մեր բարոնների դարիխներում եղածին, որ երբ տեսա, զգացի անգլիական հանգստավետություն»³⁷:

Կարսի տների որոշ մասը դարպանադն դասավորված էր լեռան լանջին՝ միջնաբերդի ստորոտում: Խոկ միջնաբերդը կարծես Կարսի թագավորությունից մնացած թագ լիներ քաղաքի գլխին: Այստեղ էր գտնվում դղյական, մի քանի հարկանի պալատը, որը պայթեցվեց 1829 թվականին:

Նրա մասին Եղիշե Զարենցը գրել է. «Քաղաքի արևմտյան ծայրում, վերը, ժայռակոտ, դեղին բլուրի վրա՝ խիստ, խոժոռ, որպես արևելյան քար ու մի բռնակալ, բազմել է բերդը: Ժայռե իր զամի, աթոռի վրայից նայում է քաղաքին: Քարե մի վիթխարի արկղ լինի կարծես՝ ծանր ընկել է վերից ու կախված մնացել է բլուրի վրա, նատել է՝ ծանր ու հաստատ: ...Այստեղից՝ բերդի ժայռակերտ պատմենեների վրայից հջնի պիտի մի օր որպես երկաթե մի բոունցք՝ պիրկ, անպարտ կորովը հաիրյան ցեղի: Որպես երկաթե բոունցք՝ իջնի պիտի մի օր թշնամու գլխին»³⁸:

Բուն քաղաքի կամ բերդաքաղաքի շուրջը էին տարածված տարրեր ժամանակներում առաջացած Կարսի տասն արվարձանները: Դրանցից ամենամեծն ու կենտրոնականը Օրթա-Կապոնն էր, որ գտնվում էր միջնաբերդից հարավ ընկած հարթավայրում³⁹: Խուսաստանին միացվելուց հետո այս արվարձանը հիմնովին վերակառուցվեց: Դրան նպաստեց նաև այն, որ գրավվելուց մեկ տարի անց՝ 1878 թ. հունիսին, հրեհին պատճառով այն համարյա ամբողջովին այրվեց: Մոխրակույտերի վերածվեցին շորոշ 200 կոպակ և արհեստանոց ու մեկ կարավանատուն⁴⁰:

Կարսի կառուցապատման գլխավոր հատակագծով քաղաքի հետազա զարգացումը հիմնականում կապվեց այս արվարձանի հետ: Կառուցվեցին միհարկանի խանութներ, թիթեղա տաճիրներով երկարկ և եռահարկ գեղեցիկ տներ, որոշ փողոցներում անցկացվեց լուսավորություն:

Կենտրոնական փողոցները Ալեքսանդրյանն ու Լորիս-Մելիքյանն էին: Առաջինում կային բազմաթիվ խանութներ, վարչական, ուսումնական, հա-



սարակական շենքեր ու բնակելի տներ: Խակ Լորիս-Մելիքյան փողոցի մասին Եղիշե Չարենցն իր հանրահայտ վեպում գրում է. «Քաղաքի առևտրական մասը Լորիս-Մելիքյան կոչված փողոցն է, որ երկու շարք, կողք կողքի ձգված են ցածրիկ, միհարկանի խանութներ՝ երկար-երկար, մինչև կայարան: Քաղաքի ամենաբանուկ փողոցն է այդ և որպես աղղախիմ՝ ամենափոշոտն ու ամենացեխոտք»⁴¹: Բայց քաղաքի առևտուրը միայն այս փողոցով չէր սահմանափակվում: Հին, փայտաշեն, անկանոն շարված խանութներից ու կրպակներից քաղկացած նախկին շուկայի փոխարեն կառուցվեց ուղիղ միջանցքների երկու կողմերում տեղադրված քարաշեն խանութներով ու կրպակներով քարեկարգ շուկա: Բացի այդ, Կարսում ամեն տարի կազմակերպվում էին տոնավաճառներ: Այդ տարիներին Կարսում կար 436 խանուր⁴²:

Քաղաքի քաղնիքները հիմնականում գտնվում էին Կարս գետի աջ ափին: Այդ ափին էր նաև քաղաքային գրոսայգին, որ պատաժեկան տարիներին հաճախ էր լինում Չարենցը: Քաղաքի տարբեր մասերն իրար էին կապվում Կարսագետի վրա կառուցված շորս-հինգ կամուրջների շնորհիվ: Դրանցից ամենահինն ու ամենագեղեցիկը Վարդանի քարաշեն կամուրջն էր, մյուսներից մեկն ավերվել է 1880 թվականին, իսկ հին շուկայի մոտ գտնվող փայտաշեն կամուրջը 1891-ին շարքից դորու է եկել: Չորրորդ կամուրջը, որ մետաղյա էր, կառուցվել է 1899 թվականին⁴³:

Այդ շրջանում Կարսում կային շորս հայկական (1915 թվականին կառուցվեց նաև հինգերորդը), մեկական՝ ոուսական և հունական եկեղեցներ: Կարս ուներ նաև «Ելլուզիոն» և «Տրիումֆ» անուններով կինոթատրոններ և քաղաքային ակումբ:

Աշխուժանում է նաև դպրոցական կյանքը: Բացվում են մի քանի պետական դպրոցներ, արական և իգական ուսումնարաններ, գիմնազիա, քացի այդ, հայկական եկեղեցիներին կից գործում էին տղաների ու աղջիկների տարրական վարժարաններ, կային նաև մասնավոր ուսումնարաններ, 1880-ական թվականներին նոյնիսկ բացվեց մանկապարտեզ: 1910 թ. Կարսի մարզում կար 67 եկեղեցական-ծխական դպրոց և 86 պետական դպրոց, որից 12-ը՝ Կարսում⁴⁴: 1882—1917 թվականներին հրատարակվում էր «Կարս» ոուսերեն շաբաթաթերթը⁴⁵: Խակ 20-րդ դարի սկզբին՝ «Բանվոր» (1917 թ.), «Աշխատավորի ձայն» և «Դիրքերում» թերթերը: 1885 թ. մարզում կար 34 թիշկ, որոնցից 10-ը՝ Կարսում⁴⁶:

Քաղաքի տնտեսական կյանքը քավական աշխուժացավ, երբ 1899 թ.



Հատված Կարսի
համայնապատկերից,
XX դ. սկիզբ:

Վերին դուռն թաղը, Առաքելոց
եկեղեցին և Վարդանի կամուրջը
XX դ. սկիզբ:

Առաքելոց եկեղեցին և
հարակից շինուազները,
XIX դ.:

Կարսի համայնապատկերը
արվարձաններով, XX դ. սկիզբ:

Կարս 1910-ական թվականներին

Կարս XX դ. սկզբին:





ավարտվեց Խիֆլիս—Կարս շուրջ 300 կմ երկարությամբ երկաթուղու շինարարությունը, որի վրա տարեկան աշխատում էր շուրջ 10 հազար մարդ:

Հայերը գրաղվում էին առևտորք և արհեստներով, մասամբ՝ երկրագործությամբ, անասնապահությամբ և մեղվարուծությամբ: Կարևոր արհեստներն էին ղերձակությունը, կոշկակարությունը, քարտաշությունը, հյուսնությունը, թիթեղագործությունը, պղնձագործությունը, ոսկերչությունը:

Կարսում և մարզում հաշվվում էր 30 տեսակի արհեստ⁴⁷: 19-րդ դ. Վերջին քաղաքում կային 4 ալրաղաց, երեքական՝ խեցեգործական և կրի, երկուական գարեջրի և աղյուսի, նաև հանքային ջրերի, մերկարարական և այլ ձեռնարկություններ⁴⁸, գինու, օղու, կահույքի, կաշվի գործարաններ:

Զարգացած էին այգեգործությունը, բանջարաբուծությունը, ծխախոտագործությունը, շերամապահությունն ու մեղվապահությունը: Կարսի մարզում լայնորեն մշակվում էին ցորեն, գարի, եգիպտացորեն, կարտոֆիլ, բրինձ, կորեկ: Մարզում գրաղվում էին նաև անասնապահությամբ: Կար մեկ միլիոն հց ավելի անասուն:

Կարսի ռուսական
եկեղեցու խորանը:

Կարսի ռուսական եկեղեցին:



Մինչև Առաջին Բամաշխարհային պատերազմը շարունակվում էր զարգանալ Կարսի տնտեսական-մշակութային կյանքը:

Պատերազմի նախօրեին՝ 1914 թ. Կարսի մարզում բնակվում էր 114 938 հայ, իսկ Կարս քաղաքի 30 086 բնակիչներից 25 252-ը հայ էր⁴⁹:

1890-ական թվականներից Կարսը հայ ազատագրական պայքարի կենտրոններից էր, Արևմտյան Հայաստան անցնող ազատամարտիկների կարևոր ուղղմակայաններից: Հայ ազատամարտի նշանավոր գործիչ Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան), որ 1903—1904 թթ. գործել է Կարսում, Բիացմունքով է հիշում հինավոր քաղաքն ու նրա հայրենասեր բնակիչներին, գրելով՝ Կարսը «ստեղծած էր իր ծոցին մեջ այնպիսի նահապետական եւ ազգային մթնոլորտ մը, որ ամէն մէկ հայ, անկախ իր ծագումէն եւ դասէն, իրեն հարազատ ընտանիքի մը մէջ կը զգար, կը մոռնար իր հատուածական, հայրենակցական նեղ եւ վնասաբեր զգացմունքները եւ կը տոշորուէր ընդհանուր հայութեան ուրախութեամբ ու վշտով: Իր գոլքն ու արինը չեր խնայեր անոր ինքնուրույնութեան ու ազատութեան համար: Հոն բարոյապէս կը մեռ-

Կարսի առման 36-ամյակին
նվիրված զորահանդես
զոհված զինվորների
հիշատակին կառուցված
հուշարձանի մոտ, 1913 թ.:

Նորին կալսերական մեծություն
Մեծ իշխան Գեորգի Միխայլովիչը
Կարսի զորանոցում,
փետրվարի 4, 1915 թ.:

Աէին այն բոլորը, որոնք իրենց եսականութեամբ եւ օտարամոլութեամբ արգելք կը հանդիսանային հայութեան դատի լուծմանը: ...Իրեն կայան հիսկային եւ հարաւային Հայաստաններու, կը խրախուսէր եւ ամէն ինչով կ'օժանդակէր բոլոր այն մտադրական եւ ոշ-մտադրական անհատներու, որոնք մէկ կողմէն միւս կողմը կ անցնեին՝ ազատութիւնը կերտելու նպատակով: Բոլոր գործիշները և մարտիկները, որոնք նահատակուած են միջին Հայաստանի մէջ, մեռած են երախտագիտութեան զգացմունքով դեպի Կարսը՝ իրենց հետ տանելով անոր գորովը և խրախուսանը:

...Ապաստարան կու տար ազգի համար տառապողմերուն, փախստականներուն, յոգնած մարտիկներուն, ջարդերէն փախած բազմութիւններուն: Բայց այդ ապաստարան տալը չեր նկատեր իբր մէջ շնորհ, իբր ազգային ծառայութիւն մը հանդէա աղէտեալներուն, այլ իբր անոնց բնական իրաւուքն է յօցնածներու և վիրատրներու համար՝ իրենց տունը վերադառնալը եւ իրենց մայրիկի խնամքին ենթարկուելը:

...Երբ կը հարցնես մէկուն, թէ որո՞ւն տղան ես, ան իր հօրը անուն կու տայ, թէկուզ իր հօր ազդեցութիւնը իր վրայ չնշին լինի: Չի տար իր մօր անունը, թէեւ հաստատ գիտէ, թէ ով է իր մայրը, եւ որ անորմէ կախուած է իր ամբողջ էութիւնը եւ անօր պարտական է իր բոլոր յատկութիւնները:

Բոլոր մայրերու համան, Կարսն ալ անձանոթ կը մնայ, թէեւ ան եղած է մայրը յեղափոխական դաստիարակութեան, անոր գորովագութ ծնողը, որ իր ամէն ինչը նուիրած է բոլոր հայերուն՝ անխտիր կերպով:

Եւ եթէ ինձ հարցնէք, թէ որո՞ւն զաւակն ես, ես չեմ սխալիր, երբ ձեզի ըսեմ, թէ Կարսի մանշն եմ, թէկուզ ես հոն ծնուած չեմ:

Կարսի զաւակներն են բոլոր անոնք, որոնք անոր հողերով անցած եւ անոր ջրերը խմած են: Խսկ եթէ չեմ խմած, միեւնոյնն է, Կարսը մամիկ մըն է, որ բոլոր հայերը իր հարազատ զաւակը կը համարէ, թէկուզ զանոնք տեսած չիմի: Կարսը անոնց անխտիր կ'օգնէ, անոնց համար կը ցախի, կ'ուրախանայ, թէկուզ ոչ որի ուշադրութիւն չգրաւէ:

Կարսը իր շրջաններով հստած էր Երկիր տանող ճանապարհներուն վրայ: Անոր փէշերուն տակէն էր, որ կարելի էր գնալ Բագրեանդ, Էրզրումի շրջանները, Խնուս եւ Ալիպաթ, Հարք եւ Ապահունիք, Անուատը Քաշքրունիք եւ Տմորիք, Վարդո, Տարօն եւ Լեռներու մէջ կորած Սասնոյ աշխարհն ու աւելի հեռունները, մէկ խօսքով՝ ամբողջ Հայքը եւ Հայաստանի կետրոնը: Կարսը հյուսիսային եւ հարաւային Հայաստանի օդակն ու բանալին էր»⁵⁰:


Առաջին համաշխարհայինի տարիներին Կարսը կովկասյան ուզմանակատի հենակետերից էր, որտեղ կենտրոնացված էին հսկայական թվով ուզմական ուժեր և զինամթերք: 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը թէկում մտցրեց հաղթական պատերազմի ընթացքի մեջ և առաջացող ուսուական բանակը սկսեց նահանջել, լքել Արևմտյան Հայաստանն ու ողջ ուզմանակատը, որտեղ այդքան արյուն էր թափել հայ ծողովուրդը: Բոլցիկլան քարոզությունից բարոյալքված նահանջող ու կազմակուծվող ուսուական բանակի ետևից թուրքերն առաջ էին շարժվում: Հայքը թշնամու հանդիման մեն մենակ էին, իսկ շուրջ 200 000 հայ զինվորներ այդ ժամանակ ուսուական բանակի կազմում կուլում էին գերմանական ուզմանակատում: 1918 թ. մարտին Խորհրդային Խուսաստանը կնքեց Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որով այլ հողերի հետ Կարսի մարզը ևս հանձնվում էր թուրքերին: Ռուսության սիրախանը պաշտոնական քնույթ ստացավ: Հայաստանի անկախության նվաճումից հետո, 1919-ի մարտին հայկական զորքերը մտան Կարս, և մարզը միացվեց Հայաստանի Հանրապետությանը: Անվերջ պատերազմների, ուսու-թուրքական սիրախանը պաշտոնական դավադրությունների, Երկրի ներսում հրահրվող բոլշևիկյան խոռվությունների, սովի և համաճարակների պայմաններում դժվար էր դիմագրավել բոլոր կողմերից Հայաստանի վրա հարձակվող բանակներին, և, որպես այդ ամենն արյունը, 1920 թ. հոկտեմբերի 30-ին թուրքերը գրավեցին Կարսը, որը համարվում էր անառիկ, ուներ անհրաժեշտ քանակի գենք ու զինամթերք, սննդի պաշարներ: Նշանավոր հայագետ, հետագայում Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը, որ այդ օրերին Կարսում էր, հոկտեմբերի 30-ն իր կյանքի ամենադժբախտ օրը անվանելով, իր հուշերում գրում է: «Տաճիկների այս հաջողությունն ու հարձակումը Կարսի վերա, բոլորովին անակնկալ էր. անակնկալ էր նոյնիսկ զինվորական բարձր իշխանության համար: ...Ո՞վ կարող էր մտածել, թէ մի երկու ժամում դաշտից հարձակվող տաճիկները լեռնաշղթայի բարձունքը կը հասնեա, և գրեթե, առանց կովի կը տիրանան առաջնակարգ ամրություն ունեցող բերդին: Եթե Կարադաղի ամրություններից մեր թմբանոթները միայն գործեին, ոչ միայն քաղաքը պաշտպանված կը լիներ, այլ նոքա չին կարող բերդին իսկ մոտենալ: Բայց մեր թղնանոթաձիգներն ու զորքը թողել էին ու փախել, իսկ թշնամին մագլցել էր հինավուրց բերդի բարձունքները առանց ընդհիմության հանդիպելու: Ազ-



Հայկական 7-րդ գուսդը
անցնում է թուրքական սահմանը:

Հայ կամավորների հեծելազորը:

Թիֆլիս—Կարս երկաթուղին:



գերի պատմության մեջ դժվար է գտնել այնպիսի խայտառակ պարտություն, ինչպես մերն էր այդ օրերին: Միայն թաթարների արշավանքների ժամանակ պատահել են այդպիսի անհասկանալի երևություններ, ընդումության կատարյալ բացակայություն թշնամու ուն: Լավ կհամարենք մի քանի հազար կոտորվենք բերդի տակ, բայց պաշտպանելով մեր հայրենիքը, մեր պատիվն ու ընտանիքը, քան անարգ փախստյամբ փրկենք մեր կաշին:

Ո՞ւմ մեղադրել և վերագրել այս երևույթը, ժամանակի կառավարությա՞ն, զորքի դեկավարների՞ն, ժողովորի անտարքերությա՞ն և հայրենասիրության պակասությա՞ն, բոլշևիկների քարոզությա՞ն, ինչպես պնդում են ոմանք, թուրքերի զորության թերագնահատությա՞ն, պատմական ձախորդ պայմանների՞ն, որին ենթարկված էր մեր ժողովուրդը նախընթաց պատերազմի վերջին տարիներից սկսած, որուական հեղափոխության հետևանքով առաջ եկած վիճակի՞ն... Մի բարդ խնդիր է այս, կարոտ անաշար և մանրազնին ուսումնասիրության, որպեսզի մեղադրող դատախազի պաշտոն չառնենք շտապով»⁵¹:

Կարսի վրա հարձակվող թուրքական բանակը Խորհրդային Ռուսաստանի բարեկամն էր և հեղափոխական, բանվորագյուղացիական կարմիր դրոշ էր պարզել: Նրանց իրենց բարեկամ էին համարում նաև հայ բոլշևիկները, որոնք Կարսի պաշտպաների մեջ տարածած թոռուցիկներով կոչ էին անում. «Կազմակերպել հայկական կովող բանակը բոլոր միջոցներով, այն է. ա. Կազմակերպել դասավորություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին, բ. Ռուսականակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լրելով դիրքերը վերադառնան թիկունք, գ. Զենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց: Այս ամենի հետ ամենաէկականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասքյարը հեղափոխական ասքյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի լերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցականների

Կարսի համայնապատկերն
այսօր:

տիրապետությունից: Յ. Նորից ու Առից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով, Հայաստանը ընդմիշտ կկապվի Խորհրդային Ռուսաստանի հետ, ընդմիշտ վերջ կտրվի պատերազմին և սովոր ու մշտական ընդհարումներից քայլայված երկիրը կիհանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործին»⁵²:

Կարսում գերի ընկան շուրջ 1500 հայ սպաներ ու զինվորներ, որոնց մեծագոյն մասը սպանվեց: Զերբարկալվեցին քաղաքի բոլոր երիտասարդները՝ մոտ 2 000 հոգի, և 18 վագններով ուղարկվեցին Թուրքիայի խորքերը, որ ոչնչացվեցին⁵³: Ականատեսներից մեկի վկայությամբ, «Հինգ օրվա ընթացքում արյունողություն ասկյարները և բրդերը խաղաղ ժողովրդի գլխին գործադրեցին իրենց բոլոր գազանությունները, որոնք վեր են մարդու երեւակայությունից: Բոլոր պահեստները, մառանները, թաքստոցները լիրը էին թաքնված երեխանների, կանանց և երիտասարդների դիակներով: Եղան ընտանիքներ, որոնցից և ոչ մի մարդ չազատվեց կենդանի, մոտ 500—600 հոգի ազատվեցին ամերիկյան հիմնարկություններում: 5—6 օրվա ընթացքում 50—60 սայլ դիակները դուրս տարան քաղաքից: ...Բանտարկվեցին նաև շատ կոմունիստներ, որոնց չեն ազատում, թեպետև ներկայացնում էին վկայականներ իրենց կոմունիստ լինելն ապացուցող»⁵⁴:

1961 թ. թուրք պրոֆեսոր Մումթուզ Թուրիհանը գրում է, որ Կարսի մոտակա գյուղերում տեսել է խարիսքած երկիրակ տներ, որոնց մասին նրա նախկին ուսանողներից մեկն այսպիսի բացատրություն է տվել. «Պատմում են, որ այս գյուղի բոլոր տները ձեր տեսած այս շենքի նման երկրարկանի էին, խմամքով կրածեփված: Կարսը մեզ անցնելով հետո այստեղ բնակեցրել են զանազան տեղերից եկած գաղթականների, որոնք ստվոր էին բնակվել միհարկանի և պարզ տներում: Հիմա, ինչպես տեսնում եք, երկրարկանի շենքերից մնացել է միայն մեկը, այն էլ օգտագործվում է որպես գավառապետի պաշտոնատուն և ժամանակակից պահականոց»: «Մեր հետագա ուսումնասիրությունների ժամանակ,— շարունակում է Մումթուզ Թուրիհանը,— վիլայեթի սահմաններում հանդիպեցինք նաև մի քանի այլ դեպքերի»: Թուրքիայի այլ գավառներում էլ նման վիճակի ականատես լինելով, պրոֆեսոր Թուրիհանն ընդհանրացնում է. «Նախքան Թուրքիա գալը լեռնային սովորական հյուղակներում մի քանի այծով բնակվելու սովոր գաղթականները երկրարկանի առանձնատների երկրորդ հարկը հատկացրել են անասուններին: Թողել են, որ անասունները կրծեն խաղողի այգիները, և ապա մնացածն արմատից հանելով, օգտագործել են որպես վառեափայտ: Հարկ չկա ավելացնելու, որ նոյն վախճանն են ունեցել նաև ձիթաստանները»⁵⁵:



ANI



ԱՆԻ

Անի մասին գրվել են բազմաթիվ գրքեր ու հոդվածներ, վեպեր ու պատմվածքներ, պոեմներ ու երգեր: Երևի հայոց ոչ մի մայրաքաղաք այդքան լավ չի ուսումնասիրվել, որքան Անին: Նրա վիմագիր արձանագրություններն առաջին անգամ ընդօրինակվել են դեռևս 1804 թվականին¹: Բայց գտնվելով Թուրքիայի տիրապետության սահմաններում, Անի այցելելն անվտանգ չէր, և այս հանգամանքը մեծապես խոշընդոտել է նրա ուսումնասիրությանը: Ինչպես Լեռն է պատկերավոր ասել, «Անին նման էր հերիաթների կախարդական ամրոցներին, որոնց մեջ հրաշքներ կան, բայց որոնք վիշապների ու այլ հրեշների ձեռքին են գտնվում»²:

1830-ին գրավոր աղբյուրների հիման վրա Մինաս Բժշկյանը գրում է Անիի պատմությունը³: Վեց տարի անց, լքալ քաղաքն է այցելում անգլիացի Հեմիլտոնը, իսկ հաջորդ տարվա գարնանը՝ գերմանացի Շաննավոր գիտնական, բուսաբան Կոխը: Համարյա նույն օրերին Անիի ավերակներում է լինում մեկ ուրիշ անգլիացի՝ Էբրուոր, իսկ ձմեռնամուտին՝ նրա հայրենակից Ուիլրենինը⁴: Անին ոչ որի անտարբեր չէր թողնում, և Ուիլրենին իր ուղեգրության մեջ գրում է. «Այս անապատացած քաղաքի տեսքից սրտին մելամաղուտ տիրություն է իշնում. նրա լքված եկեղեցիները հիշեցնում են, որ այստեղ մի հզոր քրիստոնյա ազգ է ընկած Ասիայի ամենաանգութ քարքարուների և քրիստոնեության անհաջու թշնամիների բազմից կրկնված հարվածների տակ»:

...Բաբենոնի անկերպարանք հոդարլուրները մեռելաների կմախքներ են թվում, իսկ այս ամայացած և դեռ կանգուն քաղաքը կարծես նոր անշնչացած դիակ է, որի մեջ դեռ կենանության ջույղներ կան»⁵:

Ֆրանսիական կառավարությունը 1838 թ. Անի է ուղարկում լեզվաբան Էնթեն Բորեին: Ցոթ օր անմարդաբնակ քաղաքում մնալով, նա ուսումնասիրում և մի շարք արձանագրություններ է արտագրում: Անին մի զարմանալի կարողություն ուներ. նա բանաստեղծ էր դարձնում բոլոր նրանց, ովքեր գեթ մեկ անգամ տեսնում էին իրեն: Եվ ահա, ֆրանսիացի հոչակավոր լեզվաբանը ևս ընկնում է քնարական խոհերի գիրկը. «Մեծ բաղձանքով մտանք Անիի հյուսիսային Ավագ դռնով, որ բացված էր կարծես մի տոնական օրվա համար, որպեսզի ուրախ քաղաքացիների բազմությունը դուրս գա. նրա ներքին մասը մեզ թափուր թվաց, ինչպես կողոպտված գերեզմանը»:

Եկվորն այս ավերակների մեջ միայնակ թափառելով և ամեն քարից հարցուիդր անելով այդ տեղի և նրանում մի ժամանակ ապրած ազգի հիշատակներն իմանալու համար, տիրությամբ է համակվում, երբ տեսնում է, թե մարդն ինչ ավերածություններ և անգթություններ է գործադրել իր եղբայր-մարդու վրա, որի հետ պարտավոր և արժանի է, որ ապրեր խաղաղության ու հաջողության մեջ»⁶:

Հաջորդ տարի՝ 1839-ին, ֆրանսիական կառավարությունը Անի ուղարկեց նոր հետազոտող՝ ճարտարապետ Տեքսիեին, որն իր երկու օգնականների հետ, ընդունենք չորս օրում գծագրեց մի շարք հուշարձանները: Այնուհետև, 1841-ին մի շարք արձանագրություններ է ընդօրինակում Գնորգ վարդապետը⁷, իսկ չորս տարի անց՝ Միսիթարյան միարաններից Ներսն Սարգիսյանը⁸: Այդ նույն շրջանում Անիի տեղագրական հատակագիծը կազմեց և մի շարք հուշարձաններ նկարեց ու տասն արձանագրություն պատճենահանեց Դորպատի համալսարանի պրոֆեսոր Հ. Արիիսը⁹, որը հիացած միշնադարյան քաղաքով, գրում է, որ Անին «Հայաստանի խոշորագույն քաղաքների աստղն է: Նա իր պայծառությամբ փայլել է բարբարոս ժամանակների խավարի մեջ»¹⁰:

1848 թ. ձմունը, արհամարիելով սաստիկ ցուրտը, Անիին տեսության



գնաց ուս գիտնական Խանիկովը¹²: Հաջորդ տարի Վեց շաբաթ Անհում մնացով, Ակարիչ Կեստեռն իր հետ Թիֆլիս տարավ 65 նկար ու 42 արձանագրություն և մի շքեղ ալբոն հրատարակեց: Խսկ նրա հավաքած նյութերի հիման վրա ակադեմիկոս Բրոսսեն Անիի մասին ուսումնասիրություն գրեց¹³:

Անին Ռուսաստանին անցնելուց հետո նրա այցելուների թիվը բազմապատկվեց, և Անիի պահպանման նպատակով գործնական քայլերի դիմելու հնարավորություն ստեղծվեց: 1878 թ. կազմվեց Անիի պահպանության հոգարձություն, որն ուներ իր «Կանոնադրությունը»: Հոգարձությունը Անդրկովկասի հայաշատ վայրերից, Աստրախանի, Ցարիցինի և Խարկովի հայերից դրամական օգնություն ստանալով, Անիում վերանորոգեց երկու եկեղեցի և ապագայում հիմնվելիք միարանության համար կառուցեց հինգ սենյականց մի տուն:

Ռուսական բանակի լուսանկարիչ Հ. Քյուրքչյանը պատերազմի տարիներին այս հերիաթային քաղաքը տեսնելով, ուխտում է անպայման լուսանկարել: 1879 թվականին հինգ ամիս Անիում ապրելով և նյութական զրկանքներ կրելով, նա լուսանկարում է բազմաթիվ հուշարձաններ: Ցավոք, նրան հաջողվում է հրատարակել իր կազմած ժողովածովի միայն առաջին հատորը՝ շուրջ 40 նկար¹⁴: Հետագայում նրա գործը շարունակեց դերասան Արամ Վրույրը, որը որդո՞ւ Արտաշեսի հետ լուսանկարեց համարյա բոլոր կառուցմանը:

19-րդ դ. Վերջին ֆրանսիացի արևելագետն ըրուզանդագետ Գուստավ Շլումբերժն Անի գալով՝ Փարիզում հրատարակվող «Ժունալ տե Տեպա» (1 հոկտ. 1895 թ.) հանդեսում իր տպավորություններն այսպես է արտահայտում. «Անգնահատելի թանգարան մըն է ատիկա, կարծես կախարդությամբ պահպանված միջնադարյան քաղաք մը, ինչպիսին ոչ մեկ որիշ ազգ ունի:

Ավերակներուն շրջակայքը՝ ամեն կողմ, անապատն է անծայրածիր, բացի իւղին հայ գյուղի մը քանի մը բնակարաններն: Այդ անհարթ լեռնադաշտը, ուր հողը մերթ կխոռոշնա ու մերթ կգմբեթնա, ուր ատենով այնքան հաճախ հնչեց արշավող բյուզանդացի, վրացի, արաք, պարսիկ, թաթար կամ մոնղոլ ձիավորներուն քառամբակ վազքը, ամբողջովին մերկ է: Հրակեց արեգակի մը ներքն թափառիկ հոտեր կարածին Բագրատունյաց կառուցած եկեղեցիներուն շուրջը, իրենց ուրբար շարժելով բեկորները պատերուն, որոնց ներքն կարիճը կրնանա, հեղեղատին խորը անզուս Ախուրյանը կոստնե, ինչպես արքայից արքաներու օրով»¹⁵:

Անիի պատմության լուսաբանման համար անգնահատելի են Ղնոնդ Ալիշանի ուսումնասիրությունները, որոնցում նա ի մի է հավաքել քաղաքի մասին տարբեր դարերի ձեռագրերում հանդիպող հիշատակումներն ու վկայությունները¹⁶:

Համառոտակի այսահին նախապատմություն ուներ Անիի ուսումնասիրությունը, երբ 1892 թվականին երիտասարդ գիտնական Ն. Մատն սկսեց քաղաքի պեղումները: Սակայն մեկ տարի անց, ընդհատվելով, պեղումները վերսկսեցին 1904-ին և շարունակվեցին մինչև 1917 թվականը:

Դրանք անց էին կացվում Ռուսաստանի Կայսերական գիտությունների ակադեմիայի հնագիտական հանձնաժողովի հանձնարարությամբ, իսկ նյութական միջոցներն ապահովում էին Արքայական հնագիտական ընկերությունը, Պետերբուրգի հայկական եկեղեցական խորհուրդը և հայ մեծահարուստները: Անիի ուսումնասիրությունը ժամանակին այնքան լայն արձագանք էր գտել հայ իրականության մեջ, որ այնտեղ աշխատող գիտնականներին օգնել և աջակից են եղել հայ հասարակայնության բոլոր խավերը: Ստացված նյութական օգնության շնորհիվ նորոգվել են մի շարք եկեղեցիներ, կառուցվել է թանգարան¹⁷: Թե որքան մեծ է եղել առ Անին եղած հետաքրքրությունը, վկայում է թեկուզ այն, որ միայն վաճառված տոմսերից դատելով, 1908—10 թթ. Անիի թանգարան տարեկան այցելել է երկու հազար մարդ²⁰:

Տարբեր տարիներին, Ն. Մատի հետ պեղումներին մասնակցել են բազմաթիվ հայ գիտնականներ, այդ թվում՝ Հ. Օրբելին, Թ. Թորամանյանը, Ն. Աղոնցը, Գ. Հովսեփյանը, Գ. Ղափանցյանը, Աշխ. Քալանթարը և ուրիշներ: Զնայած Անիի ուսումնասիրության գործում շատ գիտնականների բերած անգնահատելի նպատակն, այնուամենայնիվ, Մատին է, իրավաբար, պատկանում հայոց մայրաքաղաքի գաղտնիքների բացահայտման և պեղման անանց պատիվը: Անիին նրա նվիրվածության մասին է պատմում Թ. Թորամանյանը. «Պ. Մատ չարաշար գրադարան է իր գործով, ո՞չ միայն գիտնականի լուրջ դերը կատարե գործին գլուխը, այլ նաև, հսկողի, գործավորապետի և շատ անգամ գործադրողի ալ գործ կատարե: Առավոտ կանուխ դուրս կուգա բնակարանն և կերպա գործին գլուխը, արհամարիելով օրվան մերթ անձնն ու քամին, մերթ շոգն ու փոշին, իսկ վերադարձին անկարելի է զանազանել զինքն իր նողաթախ կերպարանքով այնտեղ աշ-

Ա. Գրիգոր
Եկեղեցու խորակներից:

Հ. Օրբելին, Թ. Թորամանյանը,
Ն. Մատի Անիում, 1910-ական թթ.:

Ն. Մատի գիտախմբի
անդամները Անիում, 1912 թ.:

Անիի մի խումբ այցելուներ:





խատող բանվորներն: Բայց նա դարձին ուրախ ու զվարթ է, և մոռացած բոլոր կրած նեղությունները, կըլլած փոշիները, երբ ձեռքին մեջ ունի քանի մը կտոր նորագյուտ առարկաներ իր սիրելի Անիի թանգարանը ճոխացնելու համար»²¹: «Մեծահարգ գիտնական պր. Ն. Մառ, Անիի պեղումներու ժամանակ հուսահատ շեշտով մը հաճախ կըրկներ, թե «Անիի մասին առաջ բավական բան գիտեինք, այժմ ոչինչ չգիտենք» վասն զի օրըստօրե կտեսներ, որ գրվածներու հման ոչինչ չկար, նորագոյն հետազոտություններ և պեղումներ բոլորովին տարբեր և նոր բաներ երևան կրերեին»²²:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Անիի ուսումնասիրությունն ընդհատվում է, այդպես էլ դեռ շատ բան թաքցնելով քաղաքի ավերակներում: Ընկելով թուրքերի ձեռքը, կորսույան են մատնելում նաև հայտնաբերված հսկայաքանակ արժեքները, որոնք պահպանվում էին տեղում ստեղծված թանգարանում: Այդ ցուցանմուշների միայն մի փոքր մասն է Աշխ. Քալանթարին և Հ. Օրբելուն հաջողվում փրկել և տեղափոխել²³:

Անիի պատմության պերճախոս վկաները ոչ միայն պահպանված հյութական արժեքներն են, այլև այն ձեռագիր մատյամները, որոնք մեզ են հասցընում այդ «տիեզերահոչակ» քաղաքի պատմության դրվագները: Նրա մասին հիշատակում են Եղիշեն ու Ղազար Փարպեցին, Հովհաննես Դրասխանակերտցին ու Ստեփանոս Ասողիկը, Արիստակես Լաստիվերցին ու Մատթեոս Ուռհայեցին, Սմբատ Սպարապետն ու Սամոնել Անեցին, Կիրակոս Գանձակեցին ու Ստեփանոս Օրբելյանը, Մխիթար Անեցին ու Մխիթար Աշրիկանեցին ու շատ ուրիշներ: Անիի մասին վկայություններ կան նաև բյուզանդական, Վրացական, պարսկական, արաբական ու թուրքական պատմիչների մոտ: Խեկ 13-րդ դարից սկսած նրա մասին տեղեկություններ են հաղորդում նաև արևմտաեվրոպական ուղեգիրներն ու ճանապարհորդները: Պահպանվել են ավելի ուշ շրջանի՝ հատկապես 18—19-րդ դարերի հարյուրավոր նկարագրություններ: Մեզ են հասել նաև Անիի մասին մի շաքր ավանդություններ ու զրուցներ:

Այս ամենի հիման վրա ստեղծվել է անհագիտական հարուստ գրադարան. բազմաթիվ են նրա պատմությանը, քաղաքաշինությանը, ճարտարապետությանը ու վիմագրությանը, արվեստներին ու արհեստներին նվիրված հոդվածներն ու մենագրությունները:

Անիի հանդեպ հետաքրքրությունը չի մարել նաև մեր օրերում: Վերջին տասնամյակներում լույս տեսած ուսումնասիրություններից հատկապես արժեքավոր են Ն. Տոկարսկու, Հ. Խալիֆախչյանի, Ա. Ցակորսոնի, Վ. Հարությունյանի և ուրիշների գրքերը²⁴: Այստեղ պետք է հիշատակել նաև Լեռնի «Անի» գրական-պատմական չքնաղ ուսումնասիրությունը, որը թեև գրրվել է դեռևս 1904 թվականին, բայց ամբողջությամբ հրատարակվեց միայն 1963-ին²⁵: Անհագիտական գրադարանը հրատացավ Թադևոս Հակոբյանի «Անիի պատմություն» երկիրատորանոց աշխատասիրությամբ, որում ի մի են



թերքած և գիտական վերլուծության ենթարկված Անիի մասին հարյուրավոր վիմագիր և ձեռագիր հյութեր²⁶:

Անին գտնվում է Շիրակում, Անիի շրջանի Խարկով գյուղի դեմ-դիմաց, Ախուրյանի աջ ափին: Քաղաքը երեք կողմից խոր ձորերով առանձնացված եռանկյունաձև մի սարահարթի վրա էր, որը հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմտութք ուներ շուրջ մեկ կիլոմետր երկարություն, իսկ ամենաընդարձակ մասում՝ 500—600 մետր լայնք: Անիի մայր գետը Ախուրյանն էր, որ հոսում էր խիստ դժվարամատչ ձորով և հարավից անառիկ դարձնում մայրաքաղաքը: Հյուսիս-արևելյան մասում, աջից Ախուրյանին էր միանում փոքրիկ Գայի գետը, որի պատճառով էլ ձորը կոչվում էր Գլիծոր (Գլիճնոր, Գայլիճնոր): Քաղաքի արևմտյան կողմով, հյուսիսից հարավ հոսում էր Ալաշա գետը: Մյուս գետակը՝ հգաձորը, սկսվելով հյուսիսից, հոսում էր արևմտութք և միանում Ալաշային:

Բնականից անառիկ այս սարահարթում բնակավայր է եղել դեռևս վաղնաշական ժամանակներում:

Բնակավայրի հնությունն են ապացուցում նաև Անիի տարածքում պահպանված կիկլոպյան շինությունների մնացորդները: Դրանք տեսել և նկարագրել են ակադեմիկոս Հ. Աբիխիր (1844 թ.), քանասել Կոնիքները (1888 թ.), այնուհետև Լինչը և ուրիշներ: Քաղաքից 5—6 կմ հեռավորության վրա ևս կան կիկլոպյան ամրոցի լավ պահպանված հետքեր, որոնք նկարագրել է Թ. Թորամանյանը:

Անիի շրջակա ձորերում եղած քարանձավները մարդկանց կացարան են ծառայել անհիշելի ժամանակներում: Նրանցից մեկում հայտնաբերվել է մ. թ. ա. երկրորդ հազարամյակի բրոնզե ապարանջան: Պեղումներն ի հայտ են բերել նաև նորբարեդարյան ևս փայլով խեցեղեն: Իսկ մ. թ. ա. 8—7-րդ դարերով թվագրվող հյութական մշակովթի մնացորդներ են հայտնաբերվել քաղաքի մերձակա ընդարձակ գերեզմանոցում: Եվ, վերջապես, հելլենիստական շրջանի դրամները վկայում են, որ այս բնակավայրն անընդմեջ իր գոյությունը պահպանել է երկար դարեր²⁷:

Իսկ Անիի ավելի ուշ շրջանի պատմությունն այսպիսին է: Շիրակ գավառը, որտեղ գտնվում էր Անին, 321 թվականին Կամսարական նախարարական տանն էր տվել հայոց Տրդատ Երրորդ թագավորը²⁸: Կամսարականների հայրենական կալվածքը կամ ոստանը հնուց ի վեր գտնվում էր Արշարունիքում՝ Արտագերսում, որին, հավանաբար, Անին փոխարինեց 4-րդ դարի վերջերին: Անին հայ պատմիչներից առաջինը հիշատակում է Եղիշեն. 450—51 թթ. Գառակի, Արտագերսի հետ այն պարսիկներից ազատագրում է Վարդան Մամիկոնյանը: Դեռ այն ժամանակ Անի ամրոցն ուներ իր ավանը²⁹: Երկրորդ հիշատակությունը, կապված 481—84 թթ. Վահան Մամիկոնյանի գլխավորած ազատագրական պատերազմի հետ, պատկանում է Ղազար Փարավեցուն³⁰:



Այն բլուրը, որի վրա հետագայում քաղաքի միջնաբերդն էր, դեռ Կամսարականների օրոք պարսպապատված էր և ճրանց իշխանանիստ ամրոցն էր: Այստեղ, բացի պալատից, 7-րդ դարում կառուցվել է նաև մի եկեղեցի, որին Հ. Արինս անվանել է «Անիի թանկագին ակը»³¹: Կամսարականները շինարարություն են ծավալել նաև ամրոցին կից ավանում. հատկապես արժեքոր է 7—8-րդ դարերին պատկանող, այսպես կոչված «նոներով եկեղեցին»³²:

Կամսարականներն արաբների դեմ բռնկված 773—75 թթ. ապստամբությունից հետո հեռանում են Բյուզանդիա, իսկ ճրանց տիրությունները անցնում են Բագրատունիներին:

Բագրատունիների թագավորության հաստատումից հետո (885 թ.) Անին երկրի կարևորագույն բերդերից էր, որ, որ, հատկապես Սմբատ Առաջինի ժամանակ, պահպանվում էր արքունի գանձերի մի մասը:

Բագրատունիները կարճ ժամանակաշրջանում երեք մայրաքաղաք փոխելուց հետո, Վերջնականապես հաստատվեցին Անիում: 961 թվականին Աշոտ Ողորմածը հանդիսավոր պայմաններում Անիում օծվում է հայոց թագավոր՝ «շահնշահ»: Թագադրման ճնշա արարողությանը ներկա էին բարձրատիման պաշտոնեությունը, իշխանները, հոգևորականությունը, զորքն ու զինվորականները:

Անիի ընտրությունը որպես մայր քաղաք պատահական չէր: 10-րդ դարի սկզբին այն արդեն վաճառաշահ կենտրոն էր. Սյունիքի տեր Գրիգոր-Սույփան իշխանը, Մաքենիսի իր արձանագրության մեջ (901 թ.) վաճին նվիրաբերած այլ ունեցվածքի հետ, հիշատակում է նաև 5 կուղակ-խանութ Անիում³³: Անին արդեն որոշակիորեն ձևավորված այնպիսի քաղաք էր, որ, ինչպես Լեռն է գրում, «Կարող էր որոշ գոյն հաղորդել Բագրատունյաց թագավորությանը, որոշ կնիք դրոշմել ճրա կերպարանքի վրա»³⁴: Եվ իրոք, Բագրատունյաց թագավորությունն ու Անին հետագայում այնպես անխօնիորեն են կապվում միմյանց, որ Անին դառնում է թագավորության հետ նույնանիշ, և շատ պատմիչներ ու հետազոտողներ այդպես ել կոչում են՝ «Անիի թագավորություն»: Բացի այն, որ Անին գտնվում էր թագավորության կենտրոնում և բնականից լավ էր պաշտպանված, կարևոր էր նաև, որ ճրա շրջակայրում կային մի քանի ամրակուր ամրոցներ (Մաղաքերդ, Տիգենի և այլն), որոնք հուսալիորեն փակում էին մայրաքաղաքի մատուցները: Քաղաքին մոտ էին նաև մշակութային նշանավոր կենտրոններ Տեկորն ու Հոռոնուր:

Մայրաքաղաք հոչակվելուց ընդամենը 2—3 տարի անց Աշոտ Ողորմածը կառուցում է Անիի ներքին պարիսալը, որը հետագայում կոչվեց Աշոտյան: Ենթադրվում է, որ ճրա օրոք է անցկացվել ջրմուղը և վերակառուցվել Կամսարականների իշխանանիստ պալատը:

Անին զարգանում և կառուցապատվում է այն ժամանակների համար անհայտնեաց արագությամբ: Ընդամենը 10—15 տարվա ընթացքում քաղաքն այնքան է ընդարձակվել, որ Աշոտ Ողորմածի հաջորդը՝ Սմբատ Երկրորդ թագավորը, ստիպված նոր ուժ երկար ու ծիգ տարիներ և հյութական հրսկայական միջոցներ ծախսել նոր պարիսալերի կառուցման վրա: Սմբատյան կոչվող այս պարիսան ուներ շուրջ երկուսուկն կիլոմետր երկարություն և շուրջ 8—10 մետր բարձրություն: Նրա արտաքին կողմում փորված էր մոտ



500 մետր երկարություն և 10—12 մետր լայնք ունեցող խոր խանդակ, որը լցված էր ջրով և պաշտպանական նշանակությունից բացի, խաղաղ ժամանակներում օգտագործվում էր ոռոգման և ջրաղացները բանեցնելու նպատակով³⁵: Բայց միայն այսքանով չէր սահմանափակվում Անիի պաշտպանական համակարգը: Նրա մեջ էին մտնում նաև միջնաբերդը, Սղցկաբերդը, Ախուրյանի, Մաղոցաձորի, Գլիճորի երկայնքով կառուցված պարսպահատվածները, քաղաքի արվարձաններում ստեղծված ամրությունները: Անիի պարիսպներն ունեին մոտ 80—90 բուրգ³⁶, որոնցում կային զորանոցներ ու պահականոցներ: Որոշ բուրգերի մերսի մասը վերածված էր եկեղեցիների ու մատուռների: Անիի գինանշանը՝ վազող հովազի բարձրաքանդակը, գրտերվում էր Ավագ դուռ վրա: Աշտարակները ևս ունեին իրենց գինանշանը, պահպանվել են արծվի, ցոլի և բաց երախով վիշապի բարձրաքանդակներ:

Անին այցելուներից զարմացնում էր ոչ միայն իր ժամեկազարդ եկեղեցիներով, այլև նրբագեղ, բայց ամուր պարիսպներով: Լեռն ևս, Անիի պաշտպանական համակարգը տեսնելով, հիացմունքով գրել է. «Միայն Անին է այն բերդը, որ այսօր կարող է լիովի հասկացություն տալ, թե միջնադարյան հայն ինչպես էր կարողանում իր ստացվածքը պաշտպանել դաշտի վրա: Ես չգիտեմ մի ուրիշ տեղ, որ եկեղեցիների չափ գեղեցիկ և նրանցից էլ ավելի վեր լինի ժողովրդական կյանքի քաղաքական կողմի արտահայտությունը: Աղոթողների կողքին բարձրանում էին գինվորության հուշարձանները: Չընալ եկեղեցու մինչև ամեն պարիսպները մի քանի քայլ տարածություն է: Տեսնում եք, որ այստեղ արտահայտված են մարդկային կյանքի հակադրությունները մի զարմանալի պարզությամբ:

...Գեղեցկություններ՝ միացած ամրության հետ: Քաղաքի համար այդ պայմանը միայն պաշտպանություն չէր, այլև զարդարանք: Նայեցեք այդ սրբատաշ սալ քարերին, որոնք հազգված են պատի մեջ: Նայեցեք այդ կլոր, լայնանիստ աշտարակներին: Խնչպես են նրանք համաշափ ու գեղեցիկ բարձրանում, ներկայացնելով միևնույն ժամանակ ուժ, դժվարամատչելի ամրություն: Դեղին, կարմիր, սպիտակ քարերից է շինված հսկա պարիսպը: Բայց վարպետները շատ տեղ ամբողջ զարդեր են դրել սև քարերից»³⁷:

Պաշտպանական պակաս կարևորություն չունեին նաև Անիի կամուրջները: Միայն Ախուրյանի վրա տասը կամուրջ է եղել, որոնցից մեկը ափերի հետ կապվում էր փայտն շարժական տախտակամածների միջոցով: Վտանգի դեպքում այդ տախտակամածները բարձրացվում էին: Կամուրջը երկու կողմից ուներ կրկնահարկ աշտարակներ, որոնցում գտնվում էին նրա պահպան գինվորները, իսկ աշտարակների կամարան դարպանները փակելուց հետո կամուրջը վերածվում էր մի փոքրիկ բերդ-կեղպու:

«Անին ներկայացնում էր միջնադարյան նոր ծլող իրականություններ՝ քաղաքային կուլտուրան: Նա զարգացնում էր և կարող էր զարգացնել միայն խաղաղ աշխատանքի՝ առևտորի, արհեստների և արդյունագործության քաղաքականությունը, այսինքն՝ գինվորական հափշտակողական քաղաքականության ներկայությունը, և այս տեսակետից նա գուցե միակ օրինակն էր Առաջավոր Ասիայում,— գրել է Լեռն:— Եվ զորքը, բերդերը հարկավոր էին նրան լոկ ներքին հանգստությունը պահպանելու, խաղաղ աշխատանքը հովանավորելու համար: Երկիրն ապրում էր իր կենտրոնով, որ Շիրակն

էր, իսկ այս կենտրոնը բռնված էր շինարարական հարատև տեսնով և այս ընդարձակ գործունեության համար նրան հարկավոր էին նյութական խոշոր միջոցներ, որոնք ձեռք էին բերվում ոչ թե զինված պարապություններով, այլ «հալալ» աշխատանքով»³⁸:

Այդ, արդար աշխատանքի շնորհիվ Անին տնտեսական ու մշակութային առաջընթաց է ապրում, ծաղկում և դառնում իսկապես որ «տիեզերահիոնակ», մեծանուն ու բաղադրի բաղաք: Այն արագորեն վերածվում է արհեստագործության ու առևտուրի խոշոր կենտրոնի, բազմամարդ ու բարեկարգ բաղաքի, որն իրեն էր ծգում հազարավոր մարդկանց: Անիի բնակչությունը բազմապատկել է միջնադարի համար անսովոր արագությամբ: Բնակչության այսպիսի կուտակումն Անիի մայրաքաղաք դառնալու արդյունք էր: Այստեղ էին բնակվում հայոց թագավորն իր մերձավորներով ու բազմամարդ սպասակազմով, թիկնապահներով ու արքունիքով, բարձր պաշտոններունը, ազնվականության մի մասը, բարձրաստիճան զինվորականությունն ու մեծաքանակ հոգևորականությունը: Սակայն, մայրաքաղաքի բնակչության հիմնական զանգվածները կազմում էին արհեստավորներն ու առևտուրականները, նաև այլ կարգի բազմամբուն բնակչությունը՝ օրավարձու աշխատողներ, ծառաներ, զանազան գրադարձների տեր մարդիկ և ուղղակի աղքատներ... Քիչ չէին նրանք, ովքեր շնայած ապրում էին մայրաքաղաքում, բայց շարունակում էի զբաղվել գյուղատնտեսությամբ, այգեգործությամբ ու անասնապահությամբ:

Անիի մարդաշատությունն են հաստատում նրա ընդարձակ արվարձանները, հարյուրավոր եկեղեցիները, բավական խիտ կառուցապատումը: Ըստ հայ և օտար պատմիչների, քաղաքն ուներ պետի քան 100 հազար բնակչի³⁹: Պետք է նշել, որ քաղաքային բնակչության կտրուկ աճը բնորոշ է ոչ միայն Անիին: Այն ուներ տնտեսական և քաղաքական խոր արմատներ: Այսպես, դեռ 893 թ. մեծ երկրաշրժից առաջ նվիճում կար 100 հազարից պետի բնակիչ, իսկ 1049 թ. սելչուկ թուրքերի արշավանքի հետևանքով միայն Արծն քաղաքում 150 հազար մարդ է ապահովել⁴⁰:

Անին կառուցվածքով ևս նման էր միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքներին. նաև բաղկացած էր միջնաբերդից, բուն քաղաքից և արվարձաններից, որոնք հիմնականում ձևավորվել էին Բագրատունյաց թագավորության շրջանում: Միջնաբերդը գտնվում էր քաղաքի հարավ-արևմուտքում, բլրի վրա: Նրա բարձրությունը բուն քաղաքից հասնում էր 80—100 մետրի և օղակված էր հաստարեստ պարիսպներով: Արքունի պալատից բացի, այստեղ էին զանձարանն ու զինանոցը, պալատական պաշտոնյաների ու հոգեվորականների, բերդապահ զինվորների տները, Բագրատունի արքաների պանթեոնը, տարբեր շափի ու մեծության ամրաներ ու պահեստներ, ախոռներ և այլն: Միջնաբերդն ուներ իր քաղաքը, ջրմուղը: Այստեղ մինչև 11-րդ դարը կառուցվել է տարբեր շափերի յոթ եկեղեցի, որոնցից ամենամեծը՝ պալատականը, կանգնեցվել էր դեռևս 7-րդ դարում: Ամբողջ միջնաբերդն ընկերված էր այգիների ու ծաղկանոցների մեջ:

Բուն քաղաքը բաղկացած էր հին և նոր քաղաքամասերից, որոնք այդպես էին կոչվում տարբեր ժամանակներում պարսպապատվելու պատճառով: Հին քաղաքը միջնաբերդի և Աշոտյան պարիսպների միջև էր, իսկ նորն ընդգրկում էր նրա և Սմբատյան պարիսպների միջև ընկած շուրջ 700—720 մետր լայնք ունեցող շերտը⁴¹:

Արվարձաններից ամենաընդարձակը Սմբատյան պարիսպի խանդակի մոտ տարածվող սարահարթի վրա էր: Պարիսպներից դուրս գտնվող այս արվարձանի մասին Թորոս Թորամանյանը գրում է. «Ամբողջ դաշտավայրը, շերտիվ խրամները լցնելու համար այստեղեն անցնող Վտակի պարգևած առատ ջրերու, ծածկված է եղել ծառաստաններով ու մրգաստաններով, որոնց մեջ կղզիացած են եղել առանձին քաղաքաներ կամ արվարձաններ՝ իրարն մեկ-երկու հայուր քայլ հեռավորության վրա: Նոյսին այստեղ կարելի է զանազանել առանձին անհատական սեփականություններ՝ իրենց բնակարաններով, պարտեզներով, եկեղեցիներով ու գերեզմանոցներով»⁴²:

Հարավի արվարձանը, որ միջնաբերդի դիմաց էր, մեկերկու կիլոմետր ձգվում էր Ախուրյանի ձախ ափով: Այստեղ ևս պահպանվել են տների, եկեղեցիների ու գերեզմանոցների հետքեր: Նրա բնակիչները քաղաքի հետ հաղորդակցվում էին Ախուրյանի վրա կառուցված կամուրջներով:

Այս արվարձաններից զատ, կար նաև, այսպես կոչված, այրային Անի⁴³: Քաղաքը շրջափակող ձորերի զարիվեր լանջերին կային հարյուրավոր ժայռափոր տներ, եկեղեցիներ, կողապակ-խանութներ ու արհեստանոցներ, ձիթհանքեր ու ջրաղացներ, գերեզմանոցներ: Այս յուրօինակ քաղաքը հիմնականում տարածվում էր Շաղկոցանորի աջ ու ահակ կողերին: Բազմաթիվ քարայր-տներ կային հգաձորում, Գլիճորում և Ախուրյանի ափերին: Այս



լրված, կույր այրերը վաղուց են անմարդաբնակ. հնագետներին հաջողվել է պաշտպանված շուրջ հազար քարայրների միայն մի մասն ուսումնասիրել⁴⁴: Միայն ժայռափոր եկեղեցիների թիվն այստեղ մի քանի տասնյակի էր հասնում: Դրանք միանավ աղոթարաններ էին, կիսակլոր կամ քառանկյուն, շուրջ մեկ մետր քարձորթյան քեմով, ժայռակոփ սյուներով: Կար նաև եկեղեցական մի բարդ համալիր՝ քազմաթիվ եկեղեցիներով ու սենյակներով:

Ժայռերի կողերին համբերատար ու աշխատասեր անեցիները փորել էին շուրջ 16 աղավնատուն⁴⁵:

Այս ամենից բացի կար նաև ստորերկրյա Անի, որն ուներ ուազմական, պաշտպանական հշանակորթյուն: Նրա սրահներն ու գաղտնարանները, խորշներն ու խորշերը հիանալի թաքստոցներ ու ծուլակներ էին:

Անիի փողոցներն ունեին անկանոն դասավորություն, որոնցից ճյուղավորվում էին մեծ ու փոքր նորանցքներ: Բուն քաղաքում տները սովորաբար մեկուկես, երկու հարկանի էին և բաղկացած էին 3—6 բնակելի և օժանդակ սենյակներից: Առաջին կամ եկուղային հարկում գտնվում էին օժանդակ, իսկ վերին հարկում՝ սենյակները: Փողոցները շատ խիս էին կառուցապատված: Տները դասավորված էին ոչ թե դրանց երկայնքով, այլ խորությամբ և նրանց շրամուտքը գտնվում էր ոչ թե փողոցի վրա, այլ՝ քականի: Տունը կամ մի քանի տուն միաժամանակ փողոցի հետ կապվում էին նեղ միջանցքով: Սա ուներ իր պաշտպանական առավելությունները:

**Ժայռկոցանորի աջ ափին
փորված աղավնաբներ:**


**Ասիի շրջակա այրերը:
Ժայռափոր տուն:**



Գլխավոր փողոցը սկսվում էր Սմբատյան պարսպի գլխավոր մուտքից և երկարում մինչև քաղաքի հարավային ծայրաշրջանը: Նրա լայնը 4—5 մետր էր, և կարող էին երթնեկել ոչ միայն հետիոտներն ու հեծյալները, այլև սայլերը: Փողոցի երկու կողմերում քարե նստարաններ կային դրված⁴⁶: Այստեղով էր անցնում քաղաքի ջրմուղի հիմնական գիծը: Անիի ջրմուղը միշնադարի համար մի խստ բարդ համակարգ էր, որն ուներ կավե և երկար խողովակներ⁴⁷: Այս խողովակաշարերն էին զուր հասցնում Անիի բնակչությանը, որոնք քաղաքի տարբեր մասերում կառուցել էին վեց բաղմբաց: Ամենամինը միշնաքերդում գտնվող բաղմիքն էր, որը կառուցված լինելով Կամսարականների օրոք, Բագրատունիների կողմից վերակառուցվել էր և դարձել արքունիք: Այն բաղկացած էր յոթ սենյակից: Վառարանից ծովան անցնում էր հատակով, տաքացնում հատակն ու պատերը՝ դուրս գալիս ծխնելովզով: Տաք ջրի համար օգտագործվում էին երկարն, իսկ սառի համար՝ կավե խողովակներ:

Անիի եկեղեցիները, պալատները, պարիսպները, տները կառուցված էին տուֆով, որի մշակումը հասել էր կատարելության: Տուֆից էին նաև տաճիքները: Դրանք տուֆի բարակ սալեր էին, որոնք օծում էին ձեթով, որպեսզի չուր և խոնավություն չներծծեն:

Անիի ամենանշանավոր ճարտարապետությունը Սրբատն էր, որն ապրել է 10-րդ դարի երկրորդ կեսին և 11-րդ դարի առաջին տասնամյակներում: Սրբատն իր ժամանակի հանճարեղ ճարտարապետներից էր: Նրա գլուխգործոցը Անիի Մայր տաճարն է, որի շինարարությունն սկսել է Սմբատ



Մայր տաճարի գմբեթը
պահող պյուները:


Մայր տաճարը.
Շառլ Տերսիե,
1842 թ., Փարիզ:

Մայր տաճարը:



Գագիկ Առաջինի
արձանը:

Գագկաշենի (Գրիգոր
Լուսավորչի Եկեղեցու)
համակազմից ըստ
թ. Թորամանյանի:



Երկրորդը 988 կամ 989 թվականին և ավարտվել 1001 թվականին՝ Գագիկ Առաջինի կին Կատրամիդու թագուհու հոգացողությամբ:

Անհան եկեղեցատ քաղաք էր: Երևի աշխարհի ոչ մի քաղաքում այդքան շատ եկեղեցի չի եղել, որքան Անիում: Հայոց և օտար քաղմաթիվ պատմիչներ, ժամանակագիրներ ու ուղեգիրներ նշել են, որ Անիում կար հազար ու մեկ եկեղեցի: Ալ-Ասիրը հաշվում է ավելի քան 500 եկեղեցի⁵⁰: Ավելի ուշ շրջանում, 1255 թ. Անի այցելելով՝ Փրանսիացի դիվանագետն ու հոգևորական Խորրուրը հայտնում է, որ քաղաքում «կան հայերի հազար եկեղեցի և արարական երկու մզկիթ»⁵¹: Վենետին դը Բովեն հաստատում է, որ «Հայաստանում կա մի հոյակապ քաղաք, կոչված Անի, որ կա հազար եկեղեցի և հարյուր հազար ընտանիք...»: Կողմնակալության մեջ հայ պատմիչներին շմեղադրելու համար քավարարվենք այս օտար հեղինակների վկայություններով և ասենք, որ Անիում իսկապես եղել են հարյուրավող եկեղեցիներ: Հիշենք, որ Աշոտ Ողորմածը եկեղեցիների էր վերածել իր կառուցած պարսպի աշտարակները, այրային Անիում և կային մի քանի տասնյակ ժայռափոր եկեղեցիներ, քաղաքի տարբեր ծայրերում կառուցված էին քաղմաթիվ աղոթարաններ:

Մինչև այժմ ուսումնասիրողներից ոչ ոք չի հաշվել Անիի բոլոր եկեղեցիները, աղոթարաններն ու մատուռները, և դժվար է հաստատել կամ ժխտել ժամանակի պատմիչներին կամ ականատես ուղեգիրներին:

Բացի Մայր տաճարից, Անիում կային այլ շշանավոր եկեղեցիներ՝ Գագկաշեն, Ապուղամբենց, Առաքելոց, և Փրկիչ, Հովկի և այլն: Երկար դարեր այս ճարտարապետական գոհարները հիացմունք ու զարմանք են պատճենել:

Մայր տաճարից հետո Անիի Երկրորդ հայտնի տաճարը Գագկաշեն եկեղեցին էր: Այն Տրդատի ձեռակերտն է, կառուցվել է ըստ երևույթին 1001—10 թթ., Գագիկ թագավորի օրոր: Թ. Թորամանյանը գրում է, որ Գագկաշենը «չափով, ձևով ոչ մեկ տարբերություն չունի Զվարթնոցեն, միայն զարդարանդակներն են, որ Զվարթնոցին օտար են»⁵²: Իհարկե, այն Զվարթնոցի կրկնությունն ու պատճենը չեր, այս երկու տաճարներին միացնում է ավելի մեծ ընդհանրություն՝ երկուսն էլ կառուցել են հանձարեղ ճարտարապետներ ու շինարարներ: Բայց ընդհանրությունները սրանով չեն ավարտվում: Ցավոք, Գագկաշենը ևս երկարածի զոհ է դարձել, ինչը հաստատեցին պեղումները. «Երկրաշարժով կործանած ըլլալը հավանական կետպեմ անոր համար, որ արարողությունը չեր դադարած. եթե բնական ընթացքով հետզինետե կործանելու մոտենար, այն ատեն բնականարար, մեջը պիտի չի գտնվեին պեղումները գտնված անորները, անոնք, վաղուց վերցված պիտի ըլլային, նոյնպես անսպասելի վտանգին զոհերն էին այն մարդիկը, որոնց ուսուրները ջարդուիչուր եղած գտնվեցան նախկին իլատականերու և նոր բեկորներու մեջտեղը»⁵³, — գրել է Թ. Թորամանյանը:

Գագկաշենի պեղման ժամանակ հայտնաբերվել է Գագիկ Առաջինի 2,26 մ բարձրության քարակերտ արձանը, որն իր ձեռքում ուներ տաճարի մանրակերտը:

Տաճարը պեղող Թ. Թորամանյանը նրա մասին գրել է. «Այս արձանը, թեև ոչ մեծ արվեստագետի գործ, բայց իր տեսակի մեջ միակը կարելի է համարել ամբողջ Հայաստանի և Կովկասի քրիստոնեական շրջանի մեջ, թե՛ իր մեծությամբ և թե՛ մինչև այժմ տեսնված ողորմելի գծերով մանրունիք արձաններու հետ բաղդատելով:


Արվեստագետը Գագիկի արձանին վրա ամեն ջանք ի գործ դրած է թե՛ դեմքին և թե՛ հազուատներուն ամենափոքր գծերն իսկ բնականին մոտեցնելու, ահա այդ երևացող ճիգն է, որ տեսնողին վրա մեծ տապավորություն կթողու. մասն դետալներն որոշումին գորեկ է, բայց ընդհանուր կազմության մեջ ոչ մի անպատճան համաշափություն չերկի վրան. և հակառակ տեղական քարին արձանագրության համար ունեցած անհարմարության բավական մաքուր տաշած և հղկված է»⁵⁴:

Առաքելոց եկեղեցին ևս Անիի գարդերից է: Այն ըստ երևույթին կառուցվել է 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի սկզբին: Անի այցելած ճանապարհորդներից մեկը՝ Ա. Անդրեևը, 1897 թ. նրա մասին գրել է. «Զարմանցից ես ուղղակի ախ քաշեցի. աղախսի շրեղություն, այդախսի պեղություն ու նրագեղություն Անիի ավերակներից ոչ մեկը չունի: Նկարչի վրձին է պետք, որպեսզի նկարի գելարվեստական սյուները, վաղուց խաչաձևված կամարները, կամարածն շրեղ առաստաղը և անհամեմատելի, անզուգական զարդարանդակը: Իմ ուժերից վեր է նկարագրել այդ ավերակի զմայլելի պատկերը»⁵⁵:

Անիի եկեղեցիները ոչ միայն հոգևոր կենտրոններ էին, այլև մշակութային օջախներ, որոնցում գրվում և հաշվարվում էին քաղմաթիվ ծեռագրեր⁵⁶: Կար նաև բարձրագույն դպրոց⁵⁷: Այն իր բնույթով հիմնականում աշխարհին էր: Միջնադարյան մյուս համասարանների նման այստեղ էլ դասավանդ-

Առաքելոց եկեղեցու
տեսքը արևելքից:

Ս. Գրիգոր Եկեղեցին,
XII—XIII դդ.,
Վերակազմությունը
Թորամանախի:





Վում էին իմաստափառություն, քերականություն, մաթեմատիկա, ճարտասանություն, մարդակազմություն, աստղաբաշխություն, երաժշտություն և այլն: Բարձրագոյն դպրոցը ծաղկում է Գրիգոր Մագիստրոսի (11-րդ դար) և Հովհաննես Նմաստաների օրոք (11-րդ դարի վերջ, 12-րդ դարի սկիզբ): Իմաստաները պատմագիր էր, տոմարագետ, մեկնիչ, բանաստեղծ: Ուշագրավ է, որ դեռ այն ժամանակ նա ընդունում էր երկրի գնդաձնությունը:

Անիում կային նաև մատենադարաններ՝ արքունիքում, բարձրագոյն դպրոցում, կաթողիկոսարանում, վանքերում ու եկեղեցիներում⁵⁸: Անիում զարգանում է թատերական արվեստը. քաղաքն ուներ թատրոնի հատուկ շենք, բայց հավանաբար, հանդեսների ու ներկայացումների մի մասն անց էր կացվում փողոցներում և հրապարակներում⁵⁹:

922 թվականից հաստատված երկարատև խաղաղությունը մեծապես նպաստեց երկրի տնտեսական առաջադիմությանը, ներքին ու արտաքին առևտության առաջնային գործունեությանը: Տեղական և ներմուծվող հոնքի վրա բարձր զարգացման հասան արհեստները: 10-րդ դարում Անիում արհեստների թիվը հասնում էր քառասունից⁶⁰: Տարածված էին զինագործություններ ու դարրնություններ, արծաթագործություններ ու ոսկերչություններ, ջուլհակություններ, գորգագործություններ ու ասեղնագործություններ, շինարարության հետ առնչվող մի շարք արհեստներ (քարտաշություն, փայտագործություն, որմնադրություն և այլն): Զարգացած էին նաև կաշեգործություններ, պայտարություններ, համետագործություններ: Գրչության կենտրոն լինելով, այստեղ ծաղկում էին բազմաթիվ այլ արհեստներ՝ մագաղաթ և թուղթ պատրաստելուց մինչև կազմարարություն:

Անին մայր քաղաք էր, որտեղ ոչ միայն արքունիքն էր, այլև հավաք-



վել էին բազմաթիվ ազնվականներ ու մեծահարուստներ: Բնականարար, բարձր զարգացման են հասնում դերձակությունը, կոչկակարությունը, գոյակագործությունը և հանդերձանքի հետ կապված այլ արինատներ:

Անին նաև ապակեգործության քաղաք էր: Այստեղ արտադրվում էին գավաթներ, սրբակներ, բաժակներ, ափսեներ, գունավոր նախշազարդ անոթներ ու բյուրեղապակյա իրեր: Պեղումներից հայտնաբերված երկրագործական գործիքների ու գործանի երկաթե խոփերը, բաჩերն ու բրիչները, գերանդիներն ու եղանները հաստատում են, որ քաղաքում երկրագործությունը տնտեսության կարևոր ճյուղերից էր: Գյուղատնտեսական հումքով էին աշխատում Անիի ծիթիանքերն ու ջրաղացները: Եկեղեցիները, պալատներն ու տները լուսավորելու համար Անիում օգտագործվում էր հսկայական քանակությամբ ձեռք: Դա է պատճառը, որ Անիում կար շուրջ 20 ծիթիանք⁶¹:

Անիում առևտուրը կազմակերպվում էր ըստ Բագրատունի թագավորների հրամանի, որով սահմանվում էին չափ ու կշռի միավորներ: Ծովա-

Կուսանաց վանքը
Ավուրյանի կիրճում:

Փրկչի եկեղեցին:

Աբովյամբենց կամ
Ա. Գրիգոր եկեղեցին:

Տիգրան Հովեսի
(Ա. Գրիգոր) Եկեղեցու
ըստհանուր տեսքը,
1215 թ.:

Տիգրան Հովեսի
(Ա. Գրիգոր) Եկեղեցու
որմնանկարները:



Ներում կային վերակացուներ՝ «կոփիշներ», որոնք պարտավոր էին Բակեն չափ ու կշորի վրա, կանխել խարդախությունը, դրամանենգությունը, որոնց համար սահմանված էին պատիժներ⁶²: Կոփիշներն, ըստ երևոյթին, ունեին նաև ֆինանսական ու ոստիկանական պարտականություններ: Առևտրում զեղծողները պատմվում էին որպես գողեր: Ծովաների և խանութների տեղադրությունն ամենայն հավանականությամբ հաստատվում էին Բատոնի Բրահմանգներով: Ծովաներն ունեին ընդարձակ Բրապարակ, որը կանգ էին առնում վաճառվող անաստաներն ու վաճառականների գրաստաներն ու ուղտերի քարավանները: Անին, իրուն ժամանակի խոշորագույն քաղաքներից մեկը, ունեցել է մի քանի շուկա⁶³: Պեղումների ընթացքում գլխավոր փողոցում հայտնաբերվել է քարաշեն խանութների երկու շարք, որոնց միջև

կար բավական մեծ հիրապարակ: Ենթադրում է, որ այդ էր Անիի գլխավոր շուկան:

Անիի վիմագիր արձանագրություններում բազմաթիվ հիշատակություններ կամ խանութների մասին: Դրանք սովորաբար կոչվում են «կողոպակ» և հշանակում են թե՝ արհեստանոց, թե՝ կրպակ: Այս խանութների մի մասն ուներ ներքնահարկ և օժանդակ հարմարություններ: Խանութների թիվն Անիում հարյուրների էր հասնում⁶⁴:

Իսկ ի՞նչ դրամով էին այն ժամանակ առևտուր անում: 10—11-րդ դարում Հայաստանում ամենատարածվածը բյուզանդական դրամներն էին, իսկ պատմիչները դրամի միավոր սովորաբար հիշատակում են դահնեկանները: Փողը միշտ էլ յուրատեսակ փորձաքար է եղել, և որոշ մարդիկ փորձում էին հարստանալ դրամանենգության միջոցով: Կեղծ դրամ հատելու համար սահմանված էր խիստ պատիճ՝ կտրում էին գեղձարարի ձեռքը⁶⁵:


Միջնադարյան քաղաքների գարգացման հիմնական նախապայմաններից մեկը միջազգային առևտուրի ծավալումն էր: Բագրատունյաց Հայաստանում արտաքին և տարանցիկ առևտուրի համար ստեղծվել էին բարենպատ պայմաններ:

Անին միջազգային առևտրական ուղիների կարևոր հանգույց էր: Հեռավոր երկրներից եկած վաճառականների համար քաղաքում կառուցված էին օքնաններ՝ հյուրանոցներ ու հյուրատներ, օճանդակ հարմարություններ ունեցող խանապարներ, փնտուկներ կամ պանոններ, որոնց կից կային ախոռներ, կրպակներ և այլն: Խնամատներ էին ստեղծված նաև Անի տանող քարավանային ճանապարհներին⁶⁶: Վիմագիր արձանագրություններից հայտնի է, որ Զաքարյանների օրոք Անիում կար շուրջ 10—15 հյուրանոց, որոնք պատկանում էին ազնվականներին ու մեծահարուստներին:

Անին առևտրական սերտ կապեր ուներ Չինաստանի ու Հնդկաստանի, Միջին Ասիայի ու Պարսկաստանի, արաբական երկրների ու Հյուսիսային Աֆրիկայի, ինչպես նաև Ղրիմի, Հարավային Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի հետ: Չինաստանից, օրինակ, ներմուծվում էր ճենապակի, որի բազմաթիվ բնեկորներ են հայտնաբերվել Բագրատունիների արքայական պալատի պեղումների ժամանակ: Չինաստանը միաժամանակ մետաքսի խոշոր արտահանող էր: Հայտնի է, որ Անիի Մայր տաճարի թանկարժեք ջամը բերվել էր Հնդկաստանից⁶⁷: Արար հերինակ Ալ-Ինդրիսու վկայությամբ, Միջին Ասիայից ներմուծվում էր կուրդի մորթի, իսկ Հայաստանից այնուեւ էին արտահանվում ընտիր գորգեր⁶⁸:


Բայց միայն գորգագործությունը չէր, որ զարգացած էր Անիում: Քանի որ ներքայուն ձեռագործներն ու մետաքսյա հագուստները չեն կարող հողում երկար պահպանվել, այդ պատճառով էլ նրանց մասին հաճախ գիտնականները լուս են: Բայց Անիում գտնված ասեղնագործության նմուշը վստահեցնում է, որ այդ արվեստը ևս զարգացած էր: Այն համաշխարհային հնագիտության եզակի գտածոններից է, այդ իսկ պատճառով Փ. Թորամանյանի նկարագրությունը կներկայացնենք ամբողջովին: «Արևմտահայ թօ. Պալարյան գանձերու ուսումնասիրության համար պրոֆ. Մատի արտոնությամբ, Հնանեց Տիգրանի քարափոր դամբարանի մեջ փորեց մի գերեզման, ուրիշ դուրս եկավ 4—5 տարեկան փոքրիկ աղջկա մը դագաղ: Աղջկան մարմինը բոլորովին փտած էր, սակայն, քարերախտաքար, գրեթե անփուս մնացած էր զգեստը, մարմնոյն վրա հազար էր խիստ նուրբ թույլ շապիկ, որուն հազիվ հետքերը մնացեր են, իսկ վրայեն հազար շապիկը, որուն երկարությունը, ինչպես կերպի, ծուներեն ավելի վար իշած է, բոլորովին անփուս մնացած է: Գոյսը սպիտակ, կերպար մարուր մետաքս, թիմ բերանը և ուրիշ զանազան եզերքներ ասեղնագործված են նաև ուկեթել ծաղկանկարներով, քաղուկներուն վրա կարված էն երկու մատ լայնությամբ իշխանական տոհմի հատուկ քաղակապեր ամբողջովին մետաքսով և ուկեթելով ասեղնագործված, Անիի մեջ հաճախ քարերու վրա քանակական մանվածներու ձևերով: Մարմնոյն վրայեն մեջքին շնորհալի հանգույցով մը կապված էր մետաքսյա քարակ չվան մը:

Դագաղը հանվելեն մեկ օր հետո, Գարեգին վարդապետ Հովսեփյան, որ այստեղ կգտնվեր վերջին տարիներու պեղման արդյունքն ուսումնասիրելու համար, կմտնեն դագաղը հանված քարայրը և կգտնեն մի շորի կտոր, որ անուշադրությամբ նետված էր մեկ կողմ դագաղը հանելու ժամանակ. լվացվելեն հետո երևաց, որ ցանցակերպ հյուսված ասեղնագործ ծածկոց և կամ մի ուրիշ բան էր, որուն վրա խիստ ասեղնագործված էին երկու վագրեր, կանգնած դեմ դիմաց, մեկը՝ մեծ և մյուսը՝ փոքր, մեծին գլուխը փոքրին կոնակեն թիզ քարձ, իսկ փոքրին գլուխը՝ մեծին կուրծքին վրա. Վագրերու մարմնոյն վրայի խատուտիկ գծերն ու բիծերը երկու գույշի մետաքսով և ուկեթելով բանված են՝ գալով նկարին գեղեցկության և բնականության,



Հովհաննեսի եկեղեցին,
Վերակազմությունը
Փ. Թորամանյանի:

Բայստաղեկի (ս. Գրիգոր)
Եկեղեցին (Վերակազմություն):





Ըկարագրութենք ավելի բանատեղծական ներդումներու արժանի է անոր հեղինակը, այդ փոքրիկ պատկերին վրա ոչ մի կետ մոռացված չէ անոնց ջղիներն ։ Առողջաճները և բոլոր կազմական հատվածներն են։ Ասեն ինչ բնական, ամեն ինչ նույն ու ճարտար նկարչական ճաշակով, բոլորովին անկախ մեզ ծանոթ ոճերեն, ինուու բոլորովին պարսկական, բյուզանդական շարլոն-ներն, զուտ տեղական ճաշակի արտադրություն կներկայացնեն»⁶⁹:

Ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսականին հարյուրների և նոյնիսկ հազարների էր հասնում։ Բնականաբար, այսպիսի ծավալուն միշազգային առևտուր ունեցող քաղաքը պետք է, որ ունենար իր մաքատունը։ Ենթադրվում է, որ այն եղել է այսպես կոչված, Մանուչեի մզկիթի համական շենքում կամ էլ Ախուրյանի երկիրականի կամրջի աշտարակում⁷⁰։ Այս առևտուրական մաքս արքունի գանձարանն էր համալրում և հայոց թագավորներին հնարավորություն տալիս հոյակերտ պալատներով ու տաճարներով զարդարել մայրաքաղաքը։

Անիի թագավորությունն իր հզորության գագաթնակետին հասավ Գագիկ Առաջինի օրոք (989—1020 թթ.), որն արձանագրություններից մեկում այսպես է թվարկում իր տիտղոսը. «Հզար և տիեզերակալ շահինշահ և հայոց մեծաց արքայից արքայ»⁷¹։ Այդ շրջանն ամա թե ինչպիսի ցմծությամբ է նկարագրում Արհստակես Լաստիվերցին. «...Երկիրը անապարհորդների դեմ քացվում էր իբրև տնկախիտ, կանաչազարդ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուր ու երշանիկ մի դրախտ, քանզի իշխանները զվարթատես դեմքով քազմում էին գամին, իսկ նրանց առջնից, գարնանաբեր երփնավառ ծաղկանցների նման, երգ ու գրուցների հանդեսներ էին միայն լինում, ուր փողերի ու ծնծղաների և այլ երգարկեսների ճայները մարդկանց սիրուն ու հոգին համակում էին ուրախությամբ ու բերկրանքով, այնուեղ նստում էին նաև ծերերը՝ պատվական ու փառահեղ ալիքներով զարդարված, իսկ մայրերը մանուկներին գիրին առած, մայրական գթով տոշորուն, անհուն բերկրանքից մոռանալով երկունքի ցավերի տխոր ժամանակը՝ աղավների նման իրենց նորագիտուր ձագուկներով էին միշտ հրճվում»⁷²։

Գագիկի մահից հետո սկսվեց երկպատկությունների և հայրենիքի անկախության ոգորումների շրջան։ Նրա որդիներից Աշոտը ձգտում էր տիրանալ ծառանձական կարգի համաձայն ավագ եղբորը՝ Հովհաննես-Սմբատին պատկանող գամին։ Այս վեճը սպառնում էր երբայրասպան պատերազմի վերածվել։ Շուտով կողմերը համաձայնության եկան, և երկիրը մասնաւոր մոռանքների ցավերի տխոր ժամանակը՝ աղավների նման իրենց նորագիտուր ձագուկներով էին միշտ հրճվում։

Զլատված երկիրը շուտով հայտնվեց Բյուզանդիայի ուղղակի հարձակման վտանգի առաջ։ Բյուզանդիայի կողմից վրաց թագավոր Գեորգիի աւաստամբության ճնշումը, որի հետ հավանաբար դաշնակցություն ուներ Հովհաննես-Սմբատը, Վասպուրականի ու Տայքի կցումը Բյուզանդիային, արևելից թշնամական ցեղերի ու Էմիրությունների հարածուն վտանգը սեղմել էին օղակը Բագրատունյաց թագավորության շուրջը։ Խորացել էր անջրպես նաև երկրի ներքին քաղաքական ուժերի հումասերների և անկախության կողմնակիցների միջև։ Բագրատունյաց թագավորությունն ընկել էր քաղաքական իսկառ անբարենպաստ վիճակի մեջ։ Վերջապես Բյուզանդիայի ճնշմամբ, 1021 թ. վերջին կամ 1022-ի հունվարի սկզբին Տրավիզոնում հայոց Պետրոս կաթողիկոսը դավաճանական գործարք է կնքում մեծաքանակ գործով այնուղ գտնվող Վասիլ Բողդարասպան կայսեր հետ, ըստ որի հայոց թագավորի մահից հետո Անին պիտի «ժառանգի» Բյուզանդիան։

1041 թ. մահանում է հայոց թագավորը, և Անիի վրա սրի պես կախվում է 1022 թ. այսպես կոչված «կտակը». Բյուզանդիան անհապաղ «ժառանգորդի» իր իրավունքներն է ներկայացնում։ Մինչ այդ մահացել էր նաև հայոց արքայի եղբայր Աշոտը։ Բագրատունյաց թագավորության անկախությունը պահպանելու համար պետք էր ստեղծել միասնական, ամուր ճակատ։ Բայց երկրի ներսում խառնակ վիճակ էր։

Թափուր գամին տիրանալու ներ նաև Բագրատունի թագավորների խնամակալ վեստ Սարգիսը։ Հափշտակելով արքունի գանձերը, դավաճանը փակվում է քաղաքի միջնաբերդում⁷³։ Շուտով իր զորքերն առած դեպի Անի է շոտառում նաև Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթ Անիողինը, որն իրեն էր համարում գամի իսկական ժառանգորդ։ Իր ճանապարհին նա գրավում և ավերում է մի շարք բնակավայրեր, բայց հականարկած ստանալով, ավար ու գերիներ առած վերադառնում է իր տիրությունը։ Անա, այսպիսի պայմաններում պետք էր փոքրաթիվ ուժերով շախչախնել Միխայիլ կայսեր հսկա բանակը։

Անին հանձնելու մասին Միխայիլ կայսեր առաջարկը մերժելուց հետո, 1041 թ. վերջերին և հաջորդ տարվա սկզբներին բյուզանդական բանակը մի բանի անզամ արշավում է քաղաքի վրա։ Մատթեոս Ուռմանցին այսպես է նկարագրում Անիի համար մղված ճակատամարտը. «Հայոց աշխար-

Մաղասբերդը:

Միջնաբերդի արևմտյան
պարիսպները:

Անին Ախուրյանի կիրքից:





Մայր տաճարի
զարդացնակներից:

Անիի ավերակներում,
Շառլ Տերսիե, 1842 թ.:

Անիի ավերակ Եկեղեցիներից մեկը,
չփափությունը՝ Ն. Տոկարսկու:




Իի օրիասն էր: Հոռոմների հարյուրհազարանոց գորքը համախմբեց ընդհեմ թագավորաբնակ Անի քաղաքի և բանակեց նրա դարպասի առջև: Հայոց մնացած գորքը հավաքվեց մեծ պատրապետ Վահրամ Պահլավունու շորոշը, խնդրելով նրան, պատերազմի դուրս գալ հոռոմոց գորքերի դեմ, որովհետև նրանք մեծապես անարգելով ու նախատելով էին դիմում պատերազմի: Հայոց գորքերը մեծ զայրությունով ու բարկությամբ լցված, գազազած գազամների հման, բոլորը միասին՝ երեսուն հազար հետևակ և ձիավոր, դուրս գալով Ծաղկոց կոչվող դարպատվ, դիմեցին մարտի և որպես կայծակ թափեցին հոռոմոց գորքերի գլխին, անխնա սրի քաշելով և կոտորելով՝ այնքան գազազած ու ամբարտավանացած գորքերին փախուստի մատնեցին: Ախտորյան գետն արյուն դարձավ: Հայոց գազազած գորքերի աղաղակից սարսափած փախստականները չէին կարողանում փախուստի դիմել. խելակորույս գամվել էին տեղում ու սրամար էին լինում⁷⁵: Այս խոչը հաղթանակից հետո, հայրենասեր իշխանները Վահրամ Պահլավունու գլխավորությամբ արդեն կարող էին գրաղվել անիշխանության վերացմամբ: Նրանց թելադրմամբ Պետրոս կաթողիկոսը Անիի Մայր տաճարում մեծ շորով հայոց նոր թագավոր օծեց Հովհաննես-Սմբատի եղբոր՝ Աշոտի որդուն՝ 17–18-ամյա Գագիկ Երկրորդին, որի շուրջը տարրեր կողմերից խըմբված հայոց գորքերի բազմությունը Լաստիվերցին նմանեցնում է իրար վրա կուտակված ծովի ալիքների⁷⁶:


Անտերունց երկիրն իր թագավորությունը վերագտնելով՝ ցնծում է:

Բյուզանդիան չէր հրաժարվում Անիին տիրելու իր ձգտումներից: Նոր կայսր Կոստանդին Մոնոմախը Գագիկ Երկրորդից համառորեն պահանջում է Անին: Հայոց թագավորը մերժում է: Եվ կրկին բյուզանդական բանակները շարժվում են Հայաստան. 1043–44 թթ. երկու արշավանք է կազմակերպվում Անին գրավելու համար⁷⁷: Այսպիսով, բյուզանդական գորքը երկու անգամ Միխայիլի և երկու անգամ էլ Կոստանդին Մոնոմախի օրոք հարձակվում է Անիի վրա և չորս անգամ էլ շարաշար պարտվում:

Եվ Բյուզանդիան դիմում է իր փորձված զենքին՝ խորամանկությանն ու խարենությանը: Մոնոմախը շատ սիրալի համակ է գրում Գագիկին, հրավիրում բանակցությունների և բարեկամության դաշն կնքելու: Հունասեր իշխանների և պետական գործիքների համոզմամբ երկար տատանումներից հետո Գագիկը մեկնում է Կ. Պոլիս: Մոնոմախն ուստադքորեն (ինչպես դարեր առաջ արել էր մեկ ուրիշ հպատող՝ պարսից Շապուհ արքան, արգելափակելով Արշակ թագավորին), Կ. Պոլսում փաստորեն, գերեվարում է Գագիկին և նրանից պահանջում հանձնել Անին, փոխարենը խոստանալով Մելիտինեն և շրջակա գավառները⁷⁸: Հայոց թագավորը երեսուն օր ապարայուն պայքարում է Անիի ճակատագրի համար, բայց շուտով Գրիգոր Մագիստրոսը Մոնոմախին է հանձնում Անիի 40 բանալիները ու դավաճան իշխանների երդմագիրը: Գագիկին այլ բան չէր մնում, քան համաձայնել փոխանակել թագավորությունը Մոնոմախի խոստացած տիրույթների հետ: Բայց այսուեղ էլ Մոնոմախն իր խորը դրժելով՝ Մելիտինեի փոխարեն հայոց թագավորին է տալիս Կալոն-Պեղատ ու Պիզո քաղաքները⁷⁹:

Անիում դեռևս անտեղյակ էին եղելությանը: Գագիկին գահագրկելուց հետո Մոնոմախը 1044 թ. մի հսկա բանակ է ուղարկում Անին գրավելու: Խորի են ելնում մեծ թե մանուկ, զինվոր և հայոց գորքին միացած՝ Անիի դարպասների մոտ շարդում են բյուզանդացիներին: Բայց շուտով մայրաքաղաք է հասնում գումը, թե հայոց երիտասարդ թագավորը չի վերա-





դառնալու: Թե ինչպես ընդունվեց այդ լուրջ, նկարագրում է Մատթեոս Ուոհայեցին. «Քաղաքի ամբողջ բնակչությունը հավաքվեց հայոց առաջին թագավորների գերեզմանոցում և այնտեղ ողբաց հայ ծողովորի ամսերունց դառնալը: Բողոքն աղիողորմ ողբում էին և իրենց թագավորության գահը, իրենց թագավոր Գագիկին, ողբում էին Բագրատունյաց ամբողջ տոհմը և սուկալի անեծքներ թափում Գագիկին դավողների գլխին»⁸⁰:

Զցանկանալով բյուզանդացիների իշխանությունը, անեցիներից ումանք առաջարկում են քաղաքը հանձնել Վրաց թագավորին, ումանք՝ արխազաց, նույնիսկ Դվինի ամիրային, որը խնամիացած էր Բագրատունիներին:

Անլուծելի է մնում այն հարցը, թե ինչո՞ւ նշանավոր անեցիները՝ «Գրիշավորք» քաղաքի ու հայ իշխանները, այդ թեկնածուների շարքում չեն թվարկում Բագրատունիներկու այլ, քավական ուժեղ թագավորների՝ Տաշիր-Չորագետի Դավիթ Անհողինի և Բագրատունիների ավագ Անրկայացոցիշ, Կարսի Գագիկ թագավորի անունները: Տէ՛ որ այդ միացումից ավելի կրզրանար հայկական թագավորությունը:

Ի վերջո, Բյուզանդիան հասնում է իր նպատակին: 1045 թ. Անին առանց կովի, քաղաքացիների համաձայնությամբ, հանձնվում է բյուզանդացիներին: 160 տարի տևած Բագրատունյաց թագավորությունը ընկավ: Բայց դրանից հետո երկու տասնամյակ իր անկախությունը պահպանեց Կարսի թագավորությունը, շուրջ 65 տարի՝ Տաշիր-Չորագետի և 125 տարի՝ Սյունյաց թագավորությունները:

Բագրատունյաց թագավորությունը վերացնելով՝ Բյուզանդիան ավելի ուժեղացեց իր հայահալած քաղաքականությունը, որն արտահայտվում էր ծանր հարկերով, տնտեսական ճնշմամբ, կրոնա-դաշտական խրտուկանությամբ, հայերի զանգվածային բռնագաղթերով:

Օրբատօրէ ահագնանում էր սելջուկ թուրքների հարձակման վտանգը, և այս պայմաններում փոխանակ ավելացնելու Հայաստանի ուազմունակությունը, Բյուզանդիան, ընդհակառակը, կազմալուծում է նրա մի քանի տասնյակ հազարի հասնող քանակը, որն իր հայրենիքի պաշտպանության համար կարող էր կովել մինչև արյան վերջին կաթիլը: Ստեղծված դրույան մասին Արիստակես Լաստիվերցին այսպես է պատմում. «Հեծելազորը շրջում է անտեր, որը՝ Պարսկաստանում, որը՝ Հայաստանում, որը՝ Վրաստանում: Ազնվականներն ու իշխանավորները հայրենիքից տեղահան, փառքից ընկած, ամեն մեկը մի տեղ մոնշում է, ինչպես այդունների կորյուններն իրենց խշտիներում: Արքունական պալատներն ավերակ են ու անմարդի. մարդաբնակ երկիրը թափուր է բնակիչներից: Ոչ այգեկութիւն ուրախության ձայներն են լսում և ոչ էլ հնձանում՝ տրորությունն ուղղված գովեստի խոսքը: Ոչ մանուկներն են խաղում ծնողների առաջ և ոչ էլ ծերերն աթոռով նստում են հրապարակներում: Ոչ հարսանիք ձայն է լսում և ոչ էլ զարդարվում են հարսնարանի առագաստները»⁸¹:

Սամուել Անեցու վկայությամբ, բյուզանդացիները ձգտում էին երկրում խառնակ դրույթուն ստեղծել, պղտորել մթնոլորտը, բանարկությունների միջոցով իրար դեմ հանել հայ իշխաններին: Ահաբեկելով սելջուկան Բարձակունների վտանգով, նրանք տեղահանում էին իշխաններին ու ծողովորդին և ցրում կայսրության տարրեր կողմեր: Բյուզանդական տիրապետության երկու տասնամյակը ջատաման ու քայլայման շրջան էր:

Ահա քաղաքական ու տնտեսական այսպիսի վիճակ էր տիրում, երբ 1054 թ. սելջուկները Տուղրիլի գլխավորությամբ ասպատակեցին Հայա-



Կեռախաչի Խորհրդանշական պարիսպների վրա:

Պարունի պալատը:

Ջարդաքանդակներ:

տանը⁸²: Նրան միացան նաև Դվինի և Գանձակի ամիրաները: Տասը տարի անց⁸³, սելջուկները կրկնում են իրենց աշխարհավեր արշավանքը, այս անգամ Ալփ-Արպանի գլխավորությամբ⁸⁴: Պաշարելով քաղաքը, թշնամին քազում հարձակումներ է գործում, քայլ ամեն անգամ քաջարի անեցիները շարդում են նրանց և ետ շպրտում: Պարտված ու հուսարեկ թշնամին պատրաստվում է հեռանալ, երբ բյուզանդացիների կողմից նշանակված Անիի կառավարիչները լքում են քաղաքի պաշտպաններին և փակվում միջնաբերդում: Ծփորություն է ծագում հայոց զորքի մեջ, սասանվում են նրանց շարքերը, և շատերը փախուատի են դիմում: Անին գրավվում է⁸⁵:

Անին շուրջ 7—8 տարի ամսմիջականորեն ենթակա էր Ալփ-Արպանի նշանակած սելջուկ կառավարչին, իսկ 1072 թվականից այն իր շրջակայքով հանձնվում է Գանձակի Շաղդաղյան ամիրա Փատլուհին, որն իր զորքով օգնում էր թուրքերին: Նա էլ Անիի կառավարիչ է նշանակում իր թոռանը՝ Դվինի Արու-լ-Ասվար ամիրայի որդուն՝ Մանուչեհն: Անին որոշ ընդմիջում ներով Շաղդաղյանների տիրապետության տակ մնաց մինչև 1199 թվականը⁸⁶: Բագրատունիների հետ ունեցած խնամիական կապերի շնորհիվ (Մանուչեհ մայրն Աշոտ Զորբորդի դուստրն էր և հայոց Գագիկ Երկրորդ թագավորի բույրը), իրենց ևս մեծարեցին Բագրատունիներին պատկանող «շահնշահ» տիտղոսով:

Մանուչեհ օրոք Անին որոշ չափով վերականգնվեց: Բնակիչների մի մասը վերադարձավ, կրկին աշխուժացավ քաղաքային կյանքը: Բայց նրա որդու և հաջորդի՝ Արու-լ-Ասվարի օրոք այն կրկին ընկապ անելանելի կացության մեջ, քանի որ նոր ամիրան կույր ատելությամբ կրոնական դաժան հալածանքներ սկսեց անեցիների դեմ: Արդյունքը եղավ այն, որ դադարեց շինարարությունը, անկում ապրեցին արհեստներն ու առևտուրը: Շաղդաղյանների տիրապետության շրջանը դիպուկ է բնութագրել Թորոս Թորամանյանը. «Շետտատյաններու շրջանին մեջ ճարտարապետության և գեղարվեստներու զարգացման տեսակետով առանձնապես աչքի ընկնող ոչինչ չեմ գտնելու, ընդհակառակը, ողբերգակ բանաստեղծ լինել հարկ է՝ հունաց տիրապետութենեն և Արփալանի կոտորածեն սկսած մինչև մեծն Զաքարի տիրապետության փրկարար շրջանը բովանդակ Շիրակի սուզն ու շիվանը ողբալու համար: Ես այսուղի Շետտատյաններու անունով առավելն արձանագրել կարող եմ քանի մը արվեստագիտական այլանդակություններ և պատմական վշտառիթ անցքեր»⁸⁷:

Անիին մեծ հարված է հասցնում նաև 1093 կամ 1094 թվականին քաղաքում և շրջակայքում մորեխի ու երաշտի պատճառով բռնկված սովոր: Այն այնքան զոհին է խլել, որ ողջերը չեն հասցնում մեռյալներին քաղել:

Կարծես սա քիչ էր, թուրքական ինչ-որ ցեղի յոթ հազարանոց բանակ արշավում է Հայաստան և հասնում մինչև Անի: Սակայն Գրիգոր իշխանն իր մարտիկներով պարտության է մատնում թշնամուն և դուրս շպրտում: Այս փաստը հաստատում է, որ նոյնիսկ օտար տիրապետության շրջանում Անիի պաշտպանները հայերն էին⁸⁸:

Անին Շաղդաղյանների տիրապետության շրջանում այնքան ծանր կացության մեջ ընկապ, որ նոյնիսկ Արու-լ-Ասվարը մզկիթի վերածեց Անիի գլխավոր եկեղեցին՝ Մայր տաճարը: Լցում է համբերության բաժակը: Անեցիները պատվիրակներ են ուղարկում վոաց Դավիթ Զորբորդ թագավորի մոտ: Շուտով վրացական վաթուոն հազարանոց բանակը, որի մեջ կային բազմաթիվ հայեր, շտապում է Անի, և ապստամբած անեցիները բաց են անում դարպանները: Քաղաքը գրավելուց հետո վրաց թագավորը մեծ հանդիսավորությամբ կրկին քրիստոնեական տաճարի է վերածում Անիի Մայր եկեղեցին: Անիի կառավարիչները լողացնելով Արու-լ-Ասվարին՝ Զորբորդ իշխանին և նրա որդի Խվանեին, իր հետ առնելով գերված Արու-լ-Ասվարին՝ Դավիթ թագավորը վերադառնում է Տփիխ:

Դավիթ թագավորի մահից հետո Անիի վրա առաջինը հարձակվում է Արու-լ-Ասվարի ավագ եղբայրը՝ Փատլուն Երկրորդը: Նա Խորասանում սելջուկյան սովթանի աշակցությամբ վարձկաներից խոչոր բանակ է ստեղծում և 1125 թ. պաշարում է Անին: Մեկ տարի շարունակ քաջարի անեցիները մարտնչում են թվով գերաշին թշնամու դեմ: Զենքի էին դիմել ծեր ու մանուկ, այր ու կին: Պատմությունը պահպանել է Անիի հերոսութիւններից մեկի անունը՝ Այծեամն, որն իր քաջությամբ ոգևորում էր քաղաքի պաշտպաններին⁸⁹:

Այսպես, շուրջ մեկ տարի թշնամին սոլում էր քաղաքի շուրջը, բայց ներս մտնել չեր կարողանում: Անիում սաստկանում է սովը⁹⁰: Փատլունը բանակցությունների մեջ է մտնում Դավիթ Զորբորդին հաջորդած Ռեմետը Առաջինի և անեցիների հետ, խոստանում ինքնակամ հանձնվելու դեպքում Վրիժառության շդիմել: Փոխադարձ համաձայնությամբ Շաղդաղյանները կրկին վերահաստատվում են Անիում:

Բայց ճակատագիրը նոր հարված էր պատրաստել. 1131 թվականին

Անիում տեղի է ունենում նոր երկրաշարժ, որն իր ուժգնությամբ չէր զիջում 1045 կամ 1046 թ. ավերիչ երկրաշարժին: Կործանվում են բազմաթիվ տներ ու շինություններ, փլվում է Ամենափրկիշ ճշանավոր եկեղեցին: Շուտով Փատլունը կնքում է իր մահկանացուն: Երան փոխարինում է եղբայրը՝ Մահմուդը, ապա՝ Փատլուն Երրորդը:

Վրաց Գեորգի Երրորդ թագավորն իր բանակը համալրելով հայերով, 1161 թ. ջախչախում է Ծաղդաղյաններին և գրավում Անին: Այս ահազանգ է դառնում հարևան մեծ ու փոքր մուտքմանական ամիրայություններին: Նոյն թվականի օգոստոսին Խլաթի և Մանազկերտի Շահարմեն հրոցորշվող սովորան Սուրբման Երկրորդը՝ օգնություն ստանալով և վարձկան թուրքեր հազարագրելով, ութուուն հազարանոց բանակով պաշարում է Անին: Անիի երկու հազարանոց կայազորին վրաց Գեորգի Երրորդը հայերից ու վրացիներից կազմված յոթ հազարանոց օգնական ուժ է ուղարկում: Պաշտպաններին հաջողվում է ջախչախել իրենցից մոտ տասն անգամ գերակշիռ թշնամուն: Հաջորդ տարի ազատագրվում է նաև Դվինը:

Այս երկու նշանավոր քաղաքների կորուստը համախմբում է մուտուման նվազողներին: Խորասանի սովորանի և Գանձակի աթաբեկության հարյուր հազարանոց հսկա բանակը Գանձակի Ելտկուզ աթաբեկի Գըլխավորությամբ գրավում է Դվինը, բանակում Գագի դաշտում: Հայ-վրացական միացյալ բանակը հաղթում է թշնամուն և նեն շարտում: Բայց պայքարը չի ավարտվում: Օգնական ուժեր ստանալով, սելջուկյան սովորան Ասլանը՝ շորս տարի շարունակ լարված վիճակում է պահում Անին: Հնարավորություն չունենալով այսքան բազմամարդ բանակն ամրողցովին ջախչախել և երկրից դուրս վննելի, 1165 թ. Գեորգին առժամանակ կրկին Անին վերադարձնում է Ծաղդաղյաններին: Բայց ինը տարի անց, Անին վերագրավում է, կառավարիչ ճշանակում հվանե Օրբելիին⁹²:

Շուտով սելջուկների ու Գանձակի աթաբեկության միացյալ գործերը Ասլանի գլխավորությամբ պաշարում են քաղաքը: Անեցիները անօրինակ քաջությամբ կովելով՝ հաղթում են թշնամուն: Բայց պայքարը չի դադարում: 1176 թ. Երանք նորից են երևում Անիի մատույցներում: Վրաց Գեորգի թագավորը, ի վիճակի շիմելով կասեցնել իրար հաջորդող հարձակումները, Անին կրկին վերադարձնում է Ծաղդաղյաններին:

Անիի կորուստը ժամանակավոր էր: Այս շրջանում բարձրանում էր մի ուժ, որը շուտով պիտի ազատագրեր քաղաքը և մահացու հարվածներ հասցըներ Հայաստանի և Վրաստանի թշնամիներին. այդ դարերի պատմություն ունեցող հայ-վրացական դաշնակցությունն ու զինակցությունն էր, որի շնորհիվ Վրաստանը իր հզորության գագաթնակետին հասավ և օգնության ձեռք մեկնեց Հայաստանին: Այդ շրջանում Վրաստանի ոզմական և քաղաքական ամենանշանավոր գործիչները հայազգի Զաքարե և նվանե Զաքարյան եղբայրներն էին: Խսկ մինչ այդ պետության մեջ կարևոր դեր էր խաղում նրանց հայրը՝ Սարգիս Զաքարյանը: Գեորգի Երրորդ թագավորը նրան էր տվել ապատամբած Օրբելիների կալվածքները և ճշանակել Անիի կառավարիչ, խսկ Թամար թագուհին Սարգիս Զաքարյանին է հանձնում հայոց և վրաց գործերի գերագույն հրամանատարությունը, դարձնում ամիրապասալար և շնորհում Լոռի քաղաքն ու շրջակայքը: Նա ստացավ նաև Երկայնարագուկ մականունը: Զաքարեն ու նվանեն իրենց հոր արժանի գավակները էին: Թամար թագուհու օրոք Զաքարեն երկրի ընդհանուր զոր-



Անիի թանգարանում հավաքված կարասներ, սափորներ, շրատար խողովակներ:

քերի գերագույն հրամանատարն էր, իսկ կրտսերը եղբայրը՝ պետության խնամակալը:

Հայ-վրացական միացյալ քանակը նրանց առաջնորդությամբ ընդամենը 7—8 տարվա ընթացքում՝ 1196—1204 թթ. ազատագրում է Արցախն ու Սյունիքը, 1199-ից՝ Ծաղրայաններից կուում Անին:

Զաքարյանների իշխանությունն ընդգրկում էր մի հսկայական տարածք, որի մեջ մտնում էին Անի-Ծիրակի, Սյունիքի, Լոռու թագավորություններն ամբողջությամբ և Կարսի թագավորության մի մասը: Այն քաժանակած էր երկու մասի, արևմտյանը՝ Անի կենտրոնով, պատկանում էր Զաքարեն, իսկ արևելյանը, Դվին կենտրոնով՝ Իվանեին: Զաքարյանների իշխանությունն օծված էր ներքին անկախությամբ և փաստորեն, մի թագավորություն էր՝ առանց թագավորի: Եվ զարմանալի չէ, որ սկզբնաղբյուրներում այն Բանախ այդպես էլ անվանվում է՝ «պետություն», «թագավորություն», «աշխարհակալ տերություն», իսկ Զաքարյաններն իրենց կոչում են «թագավոր», «արքա», «շահնշահ», «կեսարոս» և այլն: Վրաց թագավորությունը չէր խառնվում Զաքարյանների ներքին գործերին:

Զաքարյանների իշխանության տասնամյակներում հյուսիսային Հայաստանը ծաղկում էր ապրում: Բայց այդ բարգավաճումը հանգիստ չէր տալիս օտար նվաճողներին: 1208 կամ 1209 թվականներին Անիի վրա է արշավում Արդարիի սուլթանը: Մեծ արագությամբ կորել անցնելով Արաքսին հարող շրջանները, թշնամին անակենալ հայտնվում է Անիի դարպանների մոտ: Ներխուժումն այնքան անսպասելի էր, որ անեցիները նոյնիսկ չեն հասցնում փակել քաղաքի դռները: Ակսվում է կոտորած ու պարապությունը: Փրկվում են միայն նրանք, ովքեր ամրանում են միջնաբերդում կամ թաքնվում այրերում ու ստորգետնյա Անիում: Զատիկի պատճառով եկեղեցիները լիբան էին հավատացյալներով: Խուժելով եկեղեցիները, նրանք անմինա կոտորում են 12 հազար անեցիների: Այս ողբերգության լուրը Զաքարյաններին է համում այն ժամանակ, երբ թշնամին արդեն իր որջում էր՝ Արդարիում: Զաքարեն և Իվանեն իսկովն հայ-վրացական քանակի գլուխն անցած հարձակվում են Արդարիի վրա, պաշարում սուլթանի աթոռանիստը, գերում նրա կանաց ու զավակներին և Անիում գոհկածների փոխարեն 12 հազար մարդ սպանելով՝ վերադառնում Անի⁹³: Զաքարյանների ինքնուրույնության 36—37 տարին բավական եղավ, որ Անին կրկին դառնար բարեկարգ քաղաք, առևտի և արհեստների նշանավոր կենտրոն, ինչ-որ չափով վերագտներ անցյալ փառքը:

Առևտի և արհեստների զարգացմանը զուգընթաց քաղաքում հանդես են գալիս նոր մեծատուններ ու հարուստներ, որոնցից էր նաև Տիգրան Հոնենցը: Թե որքան անբավ հարստություն էր կուտակել նա, վկայում է 1215 թ. մի արձանագրություն⁹⁴, որից իմանում ենք, որ Հոնենցը կառուցելով և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, այն զարդարում է ոսկե և արծաթե խաչերով, կանթեններով, սպասրով, ոսկեզօծ և արծաթազօծ նկարներով, նրան կից շինելով բազմաթիվ բնակարաններ՝ վանականների, քահանաների ու իշխանների համար: Այս ամենից զատ, Հոնենցը եկեղեցուն է նվիրել ութ գյուղ, վեց այգի, տներ ու խանութներ, բաղնիքներ ու պանդոկներ և այլն: Նա կառուցել է նաև մեկ ուրիշ վանք՝ Բենենց անունով⁹⁵:

Անեցիներն այս կարգի նվիրատվություններից բացի մեծ բարեկամատություն և հայրենասիրություն էին համարում սեփական դրամով քաղաքի պարհապնդների տարբեր հատվածներում նոր բուրգեր կառուցելը, հները վերանորոգելը, քաղաքի դարպաններ ամրացնելը:

Վերականգնվում են թշնամու ավերած բազմաթիվ եկեղեցիներ, հասարակական շներեր, կառուցվում նոր եկեղեցիներ, բուրգեր, հյուրանոցներ ու խանութներ, կողղակներ ու արհեստանոցներ, տներ ու կամուրջներ: Վերաշինվում է նաև Բագրատունյաց արքունի պալատը: Նոր տներ, եկեղեցիներ ու մատուններ են փորփում նաև այրային Անիում:

Բայց այս անգամ էլ խաղաղությունը հարատև չէր: 1236 թ. թաթար-մոնղոլները հարձակվում են Հայաստանի, Վրաստանի և Աղվանի վրա: Նրանց մի գորարանակ՝ Զարմաղանի գլխավորությամբ ասպատակ է սրիփում Արարատյան աշխարհում և պաշարում Անին: Կիրակոս Գանձակեցու նկարագրությունից դժվար չէ կոսիել, որ քաղաքը թշնամու ձեռքն է ընկնում դավաճանության շնորհիվ. «Քաղաքը բուրյ կողմերից պաշարեցին, հմտորեն կանգնեցրին բազմաթիվ բարաններ (բարածիկ մերենաներ) և ուժգնապես ճակատամարտելով քաղաքի դեմ՝ գրավեցին այն: Այլև քաղաքի իշխաններից ոմանք օգնեցին թշնամուն՝ իրենց կյանքի փրկությունը ձեռք բերելու համար: Նրանք քաղաքից դուրս կանչեցին բազմությունը, խոստացան ոչ մի չար քան չանել նրանց:»

Եվ երբ ամրող բազմությունը դուրս եկավ նրանց մոտ (թաթարները) նրանց իրենց մեջ բաժանեցին և սրերը քաշելով անողորմաբար համահա-

վասար կոտորեցին՝ թողնելով սակավաթիվ կանայք, մանուկներ և արհեստավոր տղամարդիկ, որոնց քշեցին գերության: Ապա իրենք մտան քաղաքը, գրավեցին բոլոր ինչքերն ու ստացվածքները, կողոպտեցին նաև բոլոր եկեղեցները, ավերեցին ու քանդեցին ամբողջ քաղաքը, եղեցին ու ոչըշացրին նրա վայելչության փառք...»⁹⁸:

Անին մահացու հարգած ստացավ, քայլ Հայաստանի ու Վրաստանի զանազան մասերում ազատատենչ իշխանները Բաճախ էին ըմբռատանում:

Մոնղոլական տիրապետության շրջանում Անին երկար ժամանակ շարունակում էր մնալ Զաքարյանների հայրենական կալվածքը⁹⁹: Մեծ արտոնություններ է ստանում Խվանեի որդի Ավագը, որը մյուս իշխանների հկատմամբ ձեռք է բերում գերադաս դիրք: 13-րդ դարում հիշատակվում են Անիի Զաքարյան իշխանների մի քանի սերնդի ներկայացուցիչները. Զաքարենի որդի Շահնշահ Առաջինը (1230—63 թթ.), նրա որդիներն ու թոռները:

1255 թվականի փետրվարին Անի է այցելում Ֆրանսիայի Լուիդովիկոս 9-րդ թագավորի դեսպան, վաճական Ուլիյամ Ռուբրուշը, որը Վերադառնում էր Մանգու խանի հետ քանակցությունից: Անիում նա հանդիպում է իր հայրենակիցներին. «Ինձ մոտեցան հինգ քարոզիչ եղբարդներ: Նրանցից չորսը եկել էին Ֆրանսիայի Պրովանսից, և հինգերորդը նրանց էր միացել Սուրիայում, և նրանք միայն մի հիվանդու ծառա ունեին, որ գիտեր թուրքերն և քիչ էլ ֆրանսերն, և նրանք նամակներ ունեին տեր Պապից՝ ուղղված Սարդարին, Մանկու խանին և Բուրյին... պահանջելով, որ նրանք արտոնվեն մնալու իր երկրի մեջ և քարոզելու Աստծո խոսքը և այլն»: Անիում Ռուբրուշը տեսակցում է նաև Շահնշահ Առաջինի հետ. «Ես ճաշեցի մի անգամ այս Շահնշահի հետ, և նա շատ մեծ քաղաքավարություն ցույց տվեց իմ հանդեա, ինչպես նաև իր կինը և իր զավակը՝ Զաքարիա անոնվ մի շատ գեղեցիկ ու իմաստուն երիտասարդ, որ հարցրեց.

— Եթե ձեզ մոտ գամ, դուք կպահե՞ք ինձ:

Որովհետև նա այնքան ծանր է զգում թաթարների տիրապետությունը, որ թեև նա ամեն քան առատորեն ունի, սակայն նախընտրում է թափառե օտար երկրներ, քան կրել նրանց տիրապետությունը»¹⁰⁰: Հետաքրքրական է, որ այս Զաքարիան հետագայում Բայ-Վրացական գորքերի հրամանատարն էր: 1258-ին նա մասնակցում է Բաղդադի գրավմանը և իր անօրինակ քաջության շնորհիվ վաստակում է Հուլավու խանի մեծ համակրանքը, քայլ երկու տարի անց, նրան ամբատանում են, և Հուլավուի հրամանով մահվան է դատապարտվում և մարմինը նետվում շներին: Նրա հայրը՝ Շահնշահը, այս լուրը ստանալով՝ մահանում է: Անա, այսպիսի ողբերգական վախճան են ունենում Ռուբրուշին հանդիպած հայր և որդի Զաքարյան իշխանները:

Հետագա շրջանում էլ Անիում կառավարում էին Զաքարյանները. Շահնշահ Երկրորդը (մահ. 1320 թ.), Վահրամը, Զազան (1345—80 թթ.):

Մոնղոլական տիրապետության ամրող ընթացքում Անին անկում է ապրում: Դրությունն ավելի է ծանրանում, երբ Զաքարյաններին փոխարինում են օտար տիրողները, որոնք անուելի չափերի են հասցնում հարկերը:

13-րդ դարի երկրորդ կեսից մինչև 15-րդ դարի առաջին կեսը Անիում հատվել են տարրեր կարգի դրամներ, որոնց վրա պատկերված էին ծալապատիկ նատած Զաքարյան իշխանները, իսկ հետագայում դրամներին դրոշմպում էին մոնղոլ ու կարա-կոյունու իշխողների անունները: Բացի պղնձե դրամներից, հատվել են նաև ոսկե և արծաթե դրամները¹⁰¹: Իր վերջին շրջանի պատմության ընթացքում Անին քանից ավերվել է յուրքմենական ցեղերի և Լենկիենուրի արշավանքների պատճառով: Իսկ 1319 թվականի երկրաշարժը նոր արհավիրը էր առանց այն էլ հազար անգամ մահ տեսած քաղաքի համար:

Ճայած այս պերումներին ու շահարող զանգվածային արտագաղթերին, Անին մի քանի ծեռագերում մինչև 15-րդ դարի առաջին կեսը շարունակվում է հիշատակվել իրեն քաղաքը¹⁰²:

15-րդ դարի սկզբի Անիի մասին մի հազվագյուտ հիշատակություն է պահպանվել է խապանացի դիվանագետ Ռույ Գոնցալեց Կիպիխոյի ուղեգործության մեջ: Նա Հենրի Երրորդ թագավորի կողմից դիվանագիտական առաքելությամբ ուղարկվել էր Լենկիենուրի մոտ և վերադարձն, 1408 թվականին, 3—4 օր մնացել է Անիում. «Անիի բերդը շատ գորավոր մի վայր էր, մի բարձունքի վրա, շրջապատված երեք համակենտրոն պարսպով, գորավորապես կառուցված: Բերդի գավթում շրջապատ աղբյուր կար, և պաշտպանության համար առատ պաշար ու ռուր միջոցները լավ հայթայթված էին»¹⁰³:

Հետագա շրջանում ավելի հազվադեպ է դատարկում Անիի հիշատակությունը: 16-րդ դարում այն արդեն մի սովորական գյուղ էր: Հայոց քաղաքների շնչառ դիցութին դանդաղ մահանում էր: Իսկ թե երբ է Անին լրել նրա վերջին բնակիչը կամ լեռի պատկերավոր արտամայտությամբ՝ «Ով վերջին անգամ փակեց մնոնդի աշքերը»¹⁰⁴, — դժվար է ասել:

Մետաղյա ճարմանդ:

Գագառատունյաց պալատում գտնված հայնձապակե թաս, XI—XII դդ.:

Գրակալ, 1064 թ.:

Կանքենել:

Ըամփորդական կավե տափաշիչ:

Ասփոր:

Հայնձապակե թաս, XI—XII դդ.:

Կողոք պատկերով քրեղան:


Պղնձեն:

Գագկաշենում գտնված շահ:

Սոմակալի բրոնզ ուր:

(Եշ 180—181):







1846 թվականին, երբ ոուս ճանապարհորդ Ա. Մուրավյովն Անի այցելեց, արդեն քաղաքը մեռած էր. «Նրա բոլոր պատուհաններից մահն է նայում. միայն մահն է այդքան բնակարանների մշտական հյուրը. նա է դիմավորում ուղևորին բոլոր դռներում, տաճարներում և ապարաններում»¹⁰³:

Աշխարհի որ ծայրն ասես, որ ճակատագիրը չի նետել անեցիներին: Բագրատունյաց թագավորության անկուսի, երկրաշարժի և քաղաքը օտարի լիճ տակ ընկնելու հետևանքով հեռ 1045 թ. Անից դուրս եկած գաղողների հոծ զանգվածներն սփռվում են Հայաստանի, Վրաստանի տարբեր կողմերում, անեցի վաճառականների բացած արահետներով հասնում Տրավիզոն ու Բարձրավայրի Ռուսաստան:

Բյուզանդական շրջանում ավելի է մեծանում արտագաղթը, որի հետեւ վանքով նվազում է քաղաքի բնակչությունը: Սեղուկյան տիրապետության տարիներին, սկսած 1064 թվականից, անտառելի կացության պատճառով շատերն են լքում հայրենի քաղաքը և ապրուստի միջոցներ փնտրում հեռավոր ափերում: Բայց այն զանգվածային բնույթ է կրում հատկապես մոնղոլական շրջանում, երբ անեցիները հազարներով էին հեռանում քաղաքից: 1319 թվականի երկրաշարժից հետո բնական մեծ թվով անեցիները բնակվեցին Վասպուրականում և Համշենում, Ծաղին Գարաթիարում ու Կիլիկիայում: Նրանց մի մեծ հոսանքն էլ ուղղվեց Ղրիմ, որ մինչ այդ էլ քաղմաթիվ անեցիներ էին հաստատվել: Հետագայում ճակատագրի ուղիներն ավելի հեռու նետեցին Ղրիմի անեցիներին, նրանց հասցնելով Մոլդովա, Ռուսիա, Գալիցիա, Լեհաստան ու Հունգարիա: Անեցիներ էին ապատանել նաև Հունաստանում ու Բուլղարիայում: Այդ երկրներում հայերը հիմնում են նոր բնակավայրեր ու քաղաքներ, զարգացնում արհեստներն ու առևտուրը, գրավում պետական բարձր պաշտոններ, տալիս գիտության ու մշակութիւն նշանավոր գործիչներ: 1778-ին Ղրիմի անեցիների մի հոսանքն էլ ուղղվեց Դոնի ափերը, որ միմնեց նոր Նախիչևնի հայկական գաղութը:

Որտեղ էլ որ բնակություն են հաստատել անեցիները, միշտ հապատագել են իրենց ծագմամբ և երբեք չեն սոուացել իրենց հեքիաթային Անին: Թեև ավերված ու կոխվութված, Անին միշտ էլ իրեն է ձգել հայ և օտար ճանապարհորդներին, գիտնականներին, քաղաքական գործիչներին, գրողներին ու քանաստեղներին: Անին, կարծես, խորիշանշուում էր ազգային իղձերն ու երազանքները: Եվ պատահական չէ, -որ հասարակական-քաղաքական հայտնի գործիշ Հովսեփ Արդությանը 1783 թ. ուսուական արքունիքն ներկայացնած հայկական անկախ պետության ստեղծման իր նախագծում որպես Հայաստանի մայրաքաղաք առաջարկում է նաև Անի¹⁰⁴: 1783 թ. կազմված հայ-ռուսական դաշնագրի նախագծում նախատեսվում է, որ ապագա հայոց թագավորի նատավայր լինի Վաղարշապատը կամ «յԱնի թագաւորական քաղաքն»¹⁰⁵:

Անին միշտ էլ ոգևորել է բանաստեղծներին: Ինչպես Լեռն է գրել, «Անին կարելի է նկարագրել անժիկ անգամ, ինչպես նկարագրում են արշալուսը, լուսինը, ծովը, գելիյուը: Որովհետև նա էլ այդպիսի մի երևոյթ է մեր մարդկային աշխարհում...»¹⁰⁶:

Դեռևս 17—18-րդ դարերում նրան չափած ստեղծագործություններ են նվիրել Մովսես Եպիսկոպոս, Գրիգոր Օշականցին և ուրիշներ: Բայց 19-րդ դարն էր Անիի իսկական բանաստեղծական հայտնագործման շրջանը: Խ. Արքյանը գրում է «Ուղորություն դեպի Անի» հոդվածը, այսուհետև քաղաքն անդառադանում իր բայաթիներում և հանրահայտ վեպում, որ կան Անիին նվիրված բանաստեղծական էջեր և չափած հատվածները: Անոնց Ալիշանը գրում է «Անդորրանք Անվոյ», Շաֆֆին՝ «Անի» պոեմները, 1879 թ. Անի այցելելով, Շահիայել Պատկանյանը՝ «Անիի առումը»: Խակ Ալեքսանդր Արարատյանի «Անի քաղաք նատեր կուլա» հայտնի բանաստեղծությունը վերածվում է ժողովրդական երգի:

20-րդ դարասկզբին քաղմապատկվում է Անիի ուխտավորների թիվը: Հովսեփ Թումանյանը 1904 թվականին Անիի այցելուների մատյանում թողել է այսպիսի քառասող:

Մենք փառքեր ունենք թաղված հողի տակ,
Մենք հույսեր ունենք պահած մեր սրտում,
Մի՛տե հավիտյան կողբանք ավերակ,
Մի՛տե հավիտյան կմնանք տրտում¹⁰⁷:

1910 թվականին լուս տեսավ Դանիել Վարուժանի «Ցեղին սիրու» գիրքը: «Անիի ավերակներուն մեջ»¹⁰⁸ պոեմը քաղաքին նվիրված լավագույն քերթվածներից է:

Ալ այն օրեն դու իբրև շեմք մ'հոյակապ'
Ուրկե հազար կայծակ մեկն է անցեր'
Քայքայլեցար մարմար-մարմար, ծեփ առ ծեփ:



Ո՛թ, ով ցասում, ով ամոթ,
Քեզ դեմ առ դեմ բըզկըտողները Շենգժոտ
Շեղան արծիվ՝ այլ գայլեր...
...Ու կոչնակներն ու շեփորներն ոսկեցոյ՝
Որոնց ի լուր թուր խաչով կը ծովվեր,
Հոն լրուած են՝ ապրեցնելով իրենց տեղ
Բուի հազար սերունդներ:

Անին անտարքեր չի թողել նաև հայ գեղանկարիչներին. Գևորգ Բաշին-ջաղյանը, Արշակ Ֆեթվաճյանը, Հակոբ Կողոյանը և բազմաթիվ այլ նկարիչներ նրան նվիրված մի շարք կտավներ են վրձնել, իսկ Մարտիրոս Սարյանը 1902 թ. Անի կատարած ուստագնացության մասին իր հուշերում պարզապես գրում է. «Անիի մասին գրելեն անհնար է, Անին պեսոք է տեսնել»: Բայց, այնուամենայնիվ, Անիի մասին շատերն են փորձել գրել: Իրենց ուղեգործություններում տարրեր ազգության ճանապարհորդներն ու գիտնականները թողել են զմայլանքի բազմաթիվ խոսքեր ու նկարագրություններ: Անադրանցից մեկը, որը պատկանում է 1817 թ. Անի այցելած անգլիացի հայտնի նկարիչ, հնագետ ու ճանապարհորդ Քեր-Փորթըրին. «Այս մեծ քաղաքի արևմտյան ծայրամասում... տեսանք Հայաստանի երեսնի թագավորների պալատը, մի շենք, որ արժանի է այս հին մայրաքաղաքի համբավին: Նա տարածվում է քաղաքի պարիսպների և ձորի միջև: Արդարն, դա ինքնին մի քաղաք է և այնքան շքաղորեն զարդարված է, թե ներսից և թե դրսից, որ ոչ մի նկարագրական չի կարող տալ ճիշտ գաղափար՝ քաղաքի քանի որ առ քանդակների զանազանության և ճիշտության, որոնք գտնվում են շենքի վրա, և կամ նրբութեան կատարված խճանկարների, որոնք զարդարում են նրա անթիվ սրահների հատակները:

...Որքան հեռու էի գնում, և որքան ավելի մոտիկից էի քննում այս լայնածավալ մայրաքաղաքը, այնքան ավելանում էր իմ հիացումն այս հաստատում ու կատարելագործված ճարտարապետության հանդեպ: Կարճ ասած. այուների խոյակների, սիրուն քանդակների և արարեսկ ծոփորների տիրապետող վարպետությունը գերազանցում է իմ տեսած որևէ նման գործ, թե արտասահմանում և թե Անգլիայի ամենանշանավոր Մայր Եկեղեցներում: Ես նկատեցի մասնավորապես մի կրօնական շենք, ավելի փոքր ծավալով, քան մյուսները, բայց ընտիր ճարտարապետությամբ: Շատ մոտ էր ուժանկյունի աշտարակներին, և նրա բարձր կամարակապ առաստաղը խճանկարի մի գեղեցիկ նմուշ էր, մաքուր էտրուսկյան եզերներով ճնշացած, կազմված կարմիր, սև և դեղին քարերից: Ընթարքի սյուները և բոլոր զարդանախշերը այնքան սուր ու թարմ էին, որ կարծես թե երեկ էր կառուցվել: Հիրավի, ամեն տեղ թվում էր, թե ժամանակն ավելի գթարտությամբ է վերաբերվել այս քաղաքի հետ, քան մարդկային ձեռքը»¹⁰⁹:

Անիի բոլոր ուստափորները բազմից կրկնել են, որ մարդիկ ավելի անգութ են եղել այս հրաշակերտ քաղաքի հանդեպ, քան ժամանակն ու բնությունը: Տասնյակ ու հարյուրավոր վկայություններ կան, թե ինչպես է Անիի նրբակիու, քանդակազար քարերն ու խոյակները թուրք ու քուրդ բնակչությունը սայերով տարել՝ տներ ու ախոռներ կառուցելու համար:

Անիի այցելուներից մեկը՝ Հեղամյանը, իր ուղեգործության մեջ 1880 թ. ըերում է քաղաքի կողոպտման փաստեր. «Բարեկամներից մինը ինձ գրում էր Կարսից, որ նա այնտեղ տեսել էր ամբողջ տներ և մարտկոցներ Անվո քարերից շինված: ...Պ. Քյուրքյանը ինձ պատմեց, որ նա մի անգամ պատահել է սալլերի, որոնք կրում էին Լուսավորիչ եկեղեցու գավթի քարերը... Անին քանդել են Մաղկոցածորի մեջ քանչարներ ցանող պարսիկները և իրենց քանչարանոցները շրջապատել: Քանդել են նույնական և մոտակա քրդերը և իրենց բնակարանները, գոմերն ու ձիանոցները շինել: Անվո հյուսային կողմում շինված տաճկաց պահակատունն Անվո քարերով է շինված: Նոյն քարերով է շինված ասում են և Խոսաց պահակատունն Ախուրյան գետի ձախ ափում: Ցավալին այն է, որ այդ անխիճ մարդիկ միշտ ձեռք են տվել լավ շինությունների լավ և ընտիր մասերին»¹¹⁰:

Անիի թալանը շարունակվել է նաև հետագայում: 1903 թ., Անի այցելելով, Լեռն գրում է. «Այդ քարերով ամրող ամրություններ, ամրող ապարաններ են կառուցվել շրջակա գյուղերում, նոյնին Կարսը, չնայած որ այստեղից բավական հեռու է, Անիի քարերով է ամրացրել իր պարիսպները: Ինչո՞ւ զարմանալ, երբ այսօր իսկ շարունակվում է նոյն թալանը, նոյն հափշտակությունը: Ռուս այցելուներից մեկը, Ե. Մարկովը, ասում է, որ Երևանի երկաթուղու կապալառուները Անիի քարերն էին գործածում կայարանների շինության և այս պետքերի համար»¹¹¹:

Բայց մայր բնությունն էլ Անիի հետ խորթ մոր պես է վարվել: Եվ զարմանալ կարելի է, թե ինչպես է այդքան երկրաշարժ տեսած քաղաքն անխորտակ պահել իր շատ հուշարձաններ: Մի քանի երկրաշարժներ են եղել 11—14-րդ դարերում, հետագա շրջանների արհավիրքների մասին ավելի



թիշ բան է հայտնի. միայն 19-րդ դարում Անին երկու անգամ ենթարկվել է երկրաշարժի փորձության. մեկը՝ 1840 թվականին, մյուսը՝ 1880-ական թվականներին: Եվ բնական է, որ 1904 թվականին Անի այցելած իտալացի Մասսին Ֆոչն Դե Մանտեֆֆելն այն Ամանեցրել է ավերված Պոմպեյի հետ. «Գտնվելով Անիում և հիանալով նրա վերությամբ, նրբությամբ ու հիասքանչ ճարտարապետության ինքնատիպությամբ, ակամայից ես պացա դեպի մի ուրիշ, իտալական քաղաք, նույնպես կործանված՝ քանի դար առաջ: Ես մտքով տեսա Պոմպեյը՝ Վեզովի գոհը, և հրարիս կործանիշ ուժությամբ ու համեմատեցի մարդու կործանարար կատադրյան հետ, որի գոհը դարձավ հիասքանչ Անին: Սակայն ոչ մեկը, ոչ մյուսը չկարողացան ոչնչացնել նուրբ մշակույթի տեր ժողովուրդներին: Խոտակիան արդեն վերակենդանացավ: Կմաղենմ, որպեսզի շուտով գա այն օրը, երբ Հայաստանը վերածնիվ: Այդ ժամանակ նրա ժողովուրդը կհանդիսանա նոր և շրեն մշակույթի ջահակիրն Ասիայի բոլոր ժողովուրդների համար, որոնք այլևս ունենալու չեն անի իրենց ազատարարին, զգալով և հասկանալով այլևս ոչ թե ազգային, այլև համամարդկային մշակույթի օգուտները»¹¹²:

20-րդ դարը ևս բաղադրին հանգիստ չի թողել. 1926 թ. և հետագա (Զան՝ 1988 թ.) երկրաշարժներից վկայել են բազմաթիվ կանգուն պատեր ու կառուցցեր: Ահա թե ինչպես է թ. Թորամանյանը նկարագրում Անիի նշանավոր հուշարձաններից մեկի՝ Հովկի եկեղեցու վիճակը. «Երկար տարիներ է ի վեր նա կողրա իր վիճակը. կխնդրե բարերար մը, որ ծածկե իր մերկությունը և պահպան զինքը ժամանակի ավերիշ հիրաններուն մեջ իսպան անհետանալու վտանգեն, բայց ո՞վ կը եւ, մարդիկ ականջնին փակած են այս աղիողորմ հեծենանքները չլսելու համար: Արվեստի պատմության մեջ թերևս միակն է Հովկի եկեղեցին իր կազմությամբ: Չորս կողմը սուրացող սաստկաշունչ քամին կը շենք, կտանի յուր բոլոր հեծենանքներն ու հաստաշները հեռու, հեռու և կորսնցնե տիեզերի անհունության մեջ: Շենք չէ սա, այլ իր շրեն պարզության և աննման վայելչության մեջ, պարզապես գոհա՞րմ է ուրիշ տակ կոխկրտված»¹¹³:

1877—78 թթ. ուսու-թուրքական պատերազմից հետո Անին մտավ ուսական կայսրությանն անցած Կարսի մարզի մեջ: Անիում կրկին ծարագակում է կյանքը. Իզանորի այրերում բնակություն են հաստատում հինգ հայ ընտանիքներ, հիմնականում Ալաշկերտից, որոնք շունչ են հաղորդում ամայի քաղաքին¹¹⁴:

Անիի մշտական բնակիչն էր Զան Միքայել վարդապետ Տէր-Մինասյանը, որն ստեղծել էր մի փոքրիկ տնտեսություն և օթևանով ու սննդով ապահովում էր Անի այցելողներին ու այնտեղ պեղումներ անող գիտնականներին: Միքայել վարդապետի՝ Անի այցելողների հանդեպ ցուցաբերած հայրական անսահման բարության մասին շատերն են գրել: Նա եղավ Անիի վերջին բնակիչը, որն այն լրեց 1920-ին, բայց առանց իր սիրելի քաղաքի չկարողանալով ապրել, օրեր անց մահացավ Էջմիածնում¹¹⁵:

Թեև պատերազմի բոցերի մեջ և տվի հիրաններում, բայց մաքառող Հայաստանի Հանրապետությունը միջոցներ է տրամադրում Անիի պեղումները շարունակելու նպատակով: Սիմոն Վրացյանը իր «Հայաստանի Հանրապետութիւն» գրքում գրում է. «Հանրային կրթութեան և արևստի նախարարութեան կից ստեղծեց Հայաստանի հնութեանց Պահպանութեան Կոմիտէ, որի նպատակն էր պահել Հայաստանի հնութիւնները, թոյլ շտալ, որ փշանան մարդկանց ծեռորդ կամ բնական պատահարներից ու ժամանակի ազդեցութիւնից: ...Կոմիտէի հնութեան ու գրադումի առաջին առարկան եղան Անիի աւերակները: Ծարտարապետ Թ. Թորամանեանի գեկոցման հիման վրա գիտանտեսութեան նախարարութիւնը որոշեց Հնութեանց Պահպանութեան Կոմիտէին յատկացնել լրեալ Անի գիղի հողերը, տրամադրեց սերմացու, և այդ գիղի դարձաւ Անիի հնութիւնների պահպանութեան կենտրոն: Ծարտ. Թորամանեան հաստատեց այնտեղ: 1920 թ. յուլիսին Կոմիտէն կազմակերպեց գիտական մեծ արշաւանք, որին մասնակցեցին ճարտարապետներ Թորամանեանն ու Տէր-Միքայելեանը, հայ արևստի քաջակինը, նկարիչ Եղիշէ Թաղէոսեանն իր աշակերտներ Մկ. Մարգարեանի և Ստ. Թարխարարեանի հետ, նկարիչ Տեգոյեան ամուսինները, «Գեղարվեստ»-ի խմբագիր Գ. Լեոնեանը, լուսանկարիչ Վաղ. Ցակորեանը և ուրիշներ: Արշաւախմբին մասնակցում էին և Կոմիտէի անդամներ Գարեգին եպ-ը և Մելիք-Քալամթարեանը:

Արշաւախմբն իր աշխատանքների կենտրոն ընդունեց Անին, որտեղից աստիճանաբար պիտի տարածեր դեպի Կարս, Ալեքսանդրապոլ և Արարատեան դաշտ: Օգոստոսի կեսերին, Անիում, նախագամութեամբ ակ. Ա. Թամանեանի, տեղի ունեցաւ խորհրդակցութիւն Կոմիտէի և արշավախմբի տեղ հասած անդամների՝ կատարելիք աշխատանքների մասին. մշակեց հետազոտութիւնների գործադրական ծրագիրը, բաժանեցին աշխատանքները և ամեն ոք անցաւ գործի»¹¹⁶:



Գարեգին Հովսեփյանը, որ 1920 թ. մասնակցել է այդ պեղումներին, գրում է. «Ամունը եղել էինք Անիում Թամանյանի հետ, կազմակերպել էինք հնագիտական արշավի խմբեր, ծրագրել էինք ճարտարապետ-արվեստագետ-հնախույզ Թորամանյանցին Շահնակել Անիի ավերակների հսկիչ, շինուով քաղաքի պարիսպներից դուրս ընդարձակ բնակարան և հյուրանոց՝ գիտական աշխատավորների և այցելուների համար։ Հայագետ պրոֆ. Մանի, նորա աշակերտ Օրբելիի և այլ աշխատակիցների օգնությամբ պեղումներից հանված իրերը դասավորված էին երկու շնչերի մեջ։ Թեև 1918 թ. հայ-տաճկական պատերազմի ժամանակ Անի գյուղի թուրքերը մեծ վնաս էին պատճառել թանգարաններին, հատկապես հայմանապակյա անոթները փշրելով և ճորը թափելով, բայց Աշխարհիների աշխատությամբ մասամբ հավաքված էին նրանք։ Նոր պեղումները նոր մշակութային հարստություններ կրերեին։ Այժմ Հայաստանը մերն է մի կարևոր մասով. դեռ հույս ունենք, թե ավելի պիտ ընդարձակվի»¹¹⁷:

Բայց հույսների արթնացման և ազգային ոգեշնչման օրերին հաջորդեց 1920-ի աշունը՝ հոկտեմբերի 30-ին Կարսի տարորինակ, խայտառակ և ճակատագրական պարտությունը, որից հետո, 1921 թ. մարտի 18-ին հերքած ուսու-թուրքական դաշնագրով Հայաստանը կրկին մասնատվեց, և Անին աճավ թուրքային:

Նշանավոր գրող Կոստանդին Պաուստովսկուն 1923 թվականին հաջողվել է տեսնել Անին։ Ահա թե Պաուստովսկին ինչպես է իրեն հատուկ ներշնչանքով նկարագրում այդ այցելությունը. «Ի՞նչ է Անին։ Կան, ինարկե, բաներ, որոնք չեն կարող նկարագրել, որքան էլ ձգտնեն։ Դա մեր ուժերից վեր է։ Ինչպես նկարագրեմ այն անդորրը, եթե հեռվից լսվում է ոչխարթների կճակների սորուն խշշոր և հասած սերմի տկտկոցը՝ վաղուց շորացած ծաղիկների սերմնարաններուն, որ մանկական շիշխնակների է նման։ Ինչպես նկարագրեմ ծիծունակների թերի ստվերը՝ սովորական խլածաղիկներով ծածկված գավիթների սալերի վրա։ Ամայության, քամու, լուսիյան մեջ ապրում են միայն խոտերը, որմնանկարներն ու երկինքը, որ այնքան նման է այդ որմնանկարներին։

Ամպերն ասես նկարած լիներ իտալացի հոչակավոր վարպետը, և ամպերի արանքից երբեմն երկրի վրա էր ընկնում արևի այն նշանավոր թերու եղակի ճառագայթը, որ սիրում էր պատկերել Դորեն։ Այդ ճառագայթը դեռևս վաղ մանկությունից Հին Կոտակարանի նկարների հատկանիշն է դարձել։ Նրան տեսնելով, Անիի արևախանձ հրապարակների վրա, ես խկույն



հասկացա, որ ընկել եմ նոյնքան հին մի վայր, որքան ինքը՝ երկիրն է:

Արևը մայր էր մտնում: Մենք պետք է վերադառնայինք: Խնչպիսի հաճուրով կգիշերեի այդ ավերակներում, դիտելով աստղերի պտույտը և նախանձելով նոյնիսկ ինքս ինձ»¹¹⁸:

Իսկ հինգ տարի անց, ոռու նշանավոր գրող Անդրեյ Բելին է տեսնում Ազին, միայն թե հեռվից. «Կողքիդ են հնադարյան Հայաստանի ավերակները. ձեռք մենքնես՝ կհանի: ...Նայում եմ այս վայրերին, որ իններորդ դարում գրադարաններում գործեր են կուտակվել, որ վեր է խոյացել հայոց տաճարների հզոր կառուցվածքը... Ոճերն այստեղ կծկվել են նրբագեղ մի կծի-

կի մեջ, որ դժվարությամբ են տալով, ձեռք ես բերում միասնական ձների բարգավաճման դարաշրջանն ընկալելու բանալին, ձներ, որոնք տարածվել են ամբողջ Եվրոպայում...

Տասներորդ դարից սկսած, աշխարհով մեկ ճում է անհական ոճը: Այսօր ավերակների միջից լսվում է նրա կանչը:

...Այդ եկեղեցիներն անցյալ են: Այժմ հին ավերակների վրա գուցե վրանն է ծիում քոչվոր քրդի, որ այնտեղ է մտել մտքերը ցրելու: Թուրքական ողեկալն է թափառում կործանված ճարտարապետության տափատանում, ինուս սարահարթից չգահավիժված կոթողների մեջ»¹¹⁹:

YEREVAN



ԵՐԵՎԱՆ

«Հաղթանակ» գրոսայգուց դիտելիս Երևանը վարդագոյն քարե ծաղիկ է թվում. նրա վարսանդը Հանրապետության հրապարակն է՝ ծաղկաթերթերի նման բոլորված թաղամասերով: Եվ այդ ծաղիկը բացվել է քաղաքը շրջապատող այգիների ու գրոսայգիների մեջ: Դիմացդ հառնում է Արարատը: Հայացքդ վարդագոյն ալիք տված քաղաքի վրայով սահմեցնելով փրնուրում է Արին-բերդը, Կարմիր բլուրը, Ծենգավիթը, Ծիծենակարերդը... Այնտեղ, նեռվում ուրվագծով բլուրների վրա դարեր շարունակ գոյատնել են բնակավայրեր, իսկ Ավանի ձորի լանջերի և Հրազդանի կիրճի քարայրները կացարաններ են եղել նեռն մարդկության պատմության արշալուսին:

Պեղումների և շինարարական աշխատանքների ընթացքում Երևանի տարբեր մասերում հայտնաբերվել են գերեզմաններ ու դամբանադաշտեր, ցյութական մշակույթի բազմաթիվ մնացորդներ¹:

Երևանի տարածքի հնագույն բնակավայրերից է Ծենգավիթը²: Այժմյան Երևանյան լճի ափին գտնվող բլուրը նախկինում շրջապատված է եղել քառանկյուն աշտարակներ ունեցող պարսպով: Պեղումների ընթացքում բացված մ.թ.ա. 4—2 հազարամյակների մշակութային չորս հաջորդական շերտերում հայտնաբերվել են պղնձե ու քարե գործիքներ, ոսկե ու պղնձե նետալաքներ, ոսկե և արծաթե զարդեր: Ծենգավիթի բնակիչները ապրել են քարակերտ և աղյուսաշեն տներում, որոնց հատակը սպարկված էր: Ծենգավիթին հաջորդել են Ծիծենակարերդի, Բերդանի, Կարմիր բլուրի բրոնզեդարյա բնակավայրերը:

Գեղատեսիլ Ծիծենակարերդը չէր կարող չգրավել մեր նախանձների ուշադրությունը: Անտառատնկման և Եղեռնի գոհերի հիշատակին նվիրված հուշարձանի կառուցման ընթացքում հայտնաբերված դամբարանները, կիկլոպյան պարսպի մնացորդները, իրերն ու խեցեղենը վկայում են, որ այն և հազարամյակների պատմություն ունի:

Հնագույն բնակատեղի է նաև երկաթուղային կայարանի մոտ գտնվող բլուրը, որը հայտնաբերվել են միջին և ուշ բրոնզեդարյա ու հետագա շրջանների խեցեղեն, ձուլարան-օչախ³ և այլն:

Հնայած եղել են նաև այլ հնագույն բնակատեղիներ, այնուամենանիվ, քաղաքի բուն պատմությունն սկսվում է Էրեբունի նշանավոր ամրոցի հիմնադրմամբ: Արին-բերդ բլրի ստորոտում 1879 թ. հայտնաբերված հացահատիկի շտեմարան կառուցելու մասին Արգիշտի Առաջինի սեպագիր արձանագրությունը շարժեց գիտնականների հետաքրքրությունը: Բլրի հնագիտական առաջին ուսումնասիրությունն սկսվեց ավելի ուշ՝ 1894 թ., սակայն շուտով այն ընդհատվեց և վերսկսվեց միայն 1950 թվականին⁴: Այդ ժամանակ էլ հայտնաբերվեց Էրեբունու հիմնադրման մասին Արգիշտի Առաջինի մ.թ.ա. 782 թ. սեպագիրը⁵. «Խաղ աստծու մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի քաղաք՝ ի հզորություն բիայնիայի և ի սարսափ թշնամիների: Արգիշտին ասում է... Բողն ամայի էր, այստեղ ես մեծ գործեր կատարեցի»: Այս հայտնագործումով լուծվեցին գիտնականներին հուզող շատ հարցեր: Մինչ այդ, Երևանի անվան ծագման մասին կային տարբեր վարկածներ, իբր քաղաքի անունը կապված է նոյի մասին աստվածաշնչյան առասպելի հետ, և ջրհեղեղից հետո Արարատից նոյին երևացած առաջին վայրը «Երևան» բառից կոչվել է Երևան⁶: Այնուհետև՝ քաղաքի անվանադիր է համարվել Երվանդ Վերջին թագավորը՝ Երվանդավան-Երևան⁷: Արինբերդյան գտածոն վերջնականացես լուծեց հարցը. Երևանի անունը ծագել է Էրեբունիից, ինչը նշանակել է «Հաղթանակ»: Հստ մեկ այլ տարբերեցման, քաղաքի անունը եղել է Երեբոն, այսինքն՝ Երշանիկ բույն, տուն, քաղաք⁸:



**Երեբունիի միջնաբերդի
հատակագիծը:**

Կարմիր բլուր:

«Երեբունի» թանգարանը և
Արին բերդի գագաթին
պեղումներից բացված
միջնաբերդի մսացորդները:

**Երեբունի հիմնադրման մասին
Արգիշտի և արծանազրությունը:**

**Երեբունի. թևավոր կենդանակերպ
արձաններ:**

**Սարդուղի Երկրորդի
վահանի զարդերից:**

**Թելշերա աստծու բրոնզե
արձանիկ:**


**Ծխանոթ,
Կարմիր բլուր,
մ. թ. ա. VIII—VII դդ.:**




Կարաս Շենգավիթից:

**Երեբունի. Խալդ աստծու
պատկերով որմնանկար:**

**Երեբունի. Խալդ աստծու
տաճարը, մ. թ. ա. VIII դ.:**

**Որմնանկար
Երեբունիից,
մ. թ. ա. VIII դ.:**







Արին բերդ, բրոնզե ձիու գլուխ,
մ.թ.ա. VIII դ.:

Կարմիր բլուր:

Կարմիր բլուր.
քարե զարդարուսի.
մ.թ.ա. VII դ.:

Արին բերդ. առղութի բրոնզե
հարթաշանդակ. մ.թ.ա. VIII դ.:

Կարմիր բլուր. Արգիշտի
բրոնզե սաղավարտը.
մ.թ.ա. VIII դ.:



Էրեբունին կառուցելու համար Արգիշտի Առաջինը խեթերի երկրից ու Ծոփից բերում է 6 600 ռազմագերի, որոնք բլրի վրա, հնագույն բնակավայրի տեղում օրնիբուն բարձրացնում են կոփածո պարիսպներ, տաճարներ ու պալատներ, շտեմարաններ ու պահեստներ, տներ ու զորանոցներ: Ինարկե, այս հսկայական շինարարությանը մասնակցել է նաև տեղի բնակչությունը:

Գտնվելով առևտրական ուղիների վրա և լինելով մի հսկայական երկրամասի վարչատնտեսական կենտրոն ու փոխարքայի նստավայր, քաղաքն այնքան է շնչանում, որ նրա բնակելի թաղամասները փոփով են բլրից բավական հեռու: Որմնանկարներով զարդարուն պալատները լցվում են պերճների առարկաներով, ճոյնանում են ու հարստանում նաև տաճարները: Պահեստներում ու շտեմարաններում կոտակվում են Արարատյան դաշտի բարիքները, մառանների հսկայական կարասները լցվում են գինով ու գարնչորով:

Կանի հայոց թագավորության հզոր արքաները բուն շինարարություն են ծավալում Արարատի երկրում: Էրեբունիից մի քանի տարի հետո՝ մ.թ.ա. 778-ին հիմնադրվում է Արգիշտիխինիին, իսկ շուրջ մեկ դար անց, Էրեբունիից ոչ հեռու, Կարմիր բլրի վրա կառուցվում է տարերի ու պատերազմի աստված Թելշերայի թերդ-քաղաքը՝ Թելշերահին: Այս ևս բաղկացած էր միջնաբերդից և նրա շուրջը տարածված քաղաքից: Ծրջապատված լինելով երեք մետր հաստության աշտարակավոր պարապով, այն հզոր պատվար էր թշնամու ճանապարհին: Միջնաբերդում եղել են տաճարներ, պալատներ, արինստանոցներ, մառաններ և այլն: Երբ Թելշերահին դարձավ վարչատնտեսական նոր կենտրոն, Էրեբունիից տեղափոխվեցին բարձրաստիճան պաշտոններունը, գինվորականությունն ու բրմությունը՝ իրենց հետ տանելով պալատների և տաճարների հարստությունն: Թելշերահինի պեղումներից հայտնաբերվել են հնագույն դիվանատան մնացորդները և այլ հյութեր: Խնձուն էրեբունին և Արգիշտիխինիին, Թելշերահին ևս ավերվել է մ.թ.ա. 590—585 թթ. մարասկյութական արշավանքների ժամանակ: Բայց կյանքը քաղաքում գոյանել է էլի մի քանի դար:

Կանի թագավորության անկումից շորջ երկու տաճամյակ անց, հայոց գահ են բարձրանում Երվանդունիները: Սակայն շոտով Հայաստան ընկնում է Արեմենյան Իրանի լծի տակ, բաժանվում երկու սատրապությունների, որոնցից մեկի կենտրոնը դառնում է Էրեբունի: Այս շրջանում վերակառուցվում են Էրեբունիի պարիսպները, պալատական համալիրը, տաճարները և այլն: Հայաստանի անկախության վերականգնումից հետո (մ.թ.ա. 331 թ.) Երվանդունիները կրկին շունչ են հաղորդում Այրարատյան երկրին, և Արգիշտիխինիին Սորմավիր անունով հայոց մայրաքաղաք հոչակում: Իսկ Էրեբունի-Երևանի աստեղային ժամը դեռ շատ էր հեռու...

Էրեբունի-Երևանի հետագա պատմության համար շահեկան էր այն, որ Երվանդունիների, նրանց հաջորդած Արտաշիանների, այնուհետև Արշակունիների օրոք Հայաստանի մեծագույն ու նշանավոր մայրաքաղաքներ Արմավիրը, Արտաշատը, Վաղարշապատը, Դվինը գտնվում էին Արարատ-

յան դաշտում, և Երևանը երկրի քաղաքական ու տնտեսական կենտրոններին մոտիկ լինելով՝ կրում էր նրանց բարերար ազդեցությունը: Ցավոք, Երևանի այս շուրջ հազարամյա պատմության մասին արձանագրություններն ու ձեռագրերը լոռում են¹⁰, և հայ մատենագրության մեջ քաղաքն առաջին անգամ որոշակիորեն հիշատակվում է 7-րդ դարի սկզբին, «Գիրք թըղթոցի» մեջ, որը Դվինի ժողովին մասնակցած հոգևորականների թվում նըշվում է նաև Երևանից Դավիթ անունով մի եկեղեցական¹¹:

Հաջորդը, արարական արշավանքների առնչությամբ, հիշատակում է Սերենոսը¹²: Արարեները երկու անգամ՝ 643-ին և 660-ական թվականներին ճակատամարտել են Երևանի համար: Դա վկայում է, որ Երևանը ուազմական կարևոր հշանակություն է ունեցել:

Մինչ արարական տիրապետության հաստատումը, Երևանի մեջ հայտնի հշանավոր ամենահին եկեղեցին Պողոս-Պետրոսն էր, որը գտնվում էր այժմյան «Մուսկվա» կինոթատրոնի տեղում և 1931 թ. քանդվել է: Աշխ. Քալանքարի կարծիքով, այն 5—6-րդ դարերի քաղիլիկ էր: Եկեղեցու հերսում կային 6—7 շերտ որմնանկարներ: Առաջին երկու շերտերը նկարազարդվել են 5—7-րդ դարերում¹³: Այդ շրջանում է կառուցվել նաև Ավանի ս. Հովհաննես եկեղեցին (6-րդ դար):

Արարական տիրապետության, այնուհետև և Բագրատունյաց հայոց թագավորության շրջանում Երևանի մասին եղած տեղեկություններն աղքատիկ են: Հայտնի է միայն, որ այն վաճառաշահ և ալգեշտ քաղաք էր:

Բագրատունյաց թագավորության անկումից հետո Երևանը դժվարին ժամանակներ է ապրում: 11-րդ դ. բյուզանդական պատմագիր Հովհաննես Սկիլիցեսը վկայում է, որ 1047 թ. բյուզանդական զորքերը «եկան նաև Խելիդիոն կոչվող բերդը, որը գամավեծ լեռան վրա է կառուցված և գրտնըվում է Դվինից ոչ հեռու: Ահա այդ բերդը իրամատներով ու ցանկապատով օղակի մեջ առնելով, ջանում էին (երկարատև) պաշարմամբ տիրանալ. պաշարյալները պարենի պակաս էին զգում, անակնկալ հարձակման պատճառով նրանք չին հասցրել իրենց պարենով պապանկվել: (Հոռմայեցիները) այդ (բերդն) էլ կօրավեհն, եթե Արևմուտքում հանկարծակի չըրունկվեր պատրիկ Լուս Թոռնիկի ապատամբությունը»¹⁴: Բյուզանդական բանակն ստիպված է լինում թողնել պաշարումը և շտապել հայրենիք՝ մասնակելու քաղաքական պայքարին:

Քանի որ Խելիդիոն թարգմանարար հշանակում է Ծիծեռնակարերի¹⁵, ապա մի շարք հայ և օտար գիտնականներ այն վստահաբար նույնացնում են Երևանի Ծիծեռնակարերի հետ¹⁶: Հիշատակված դեպքերից մի քանի հայուրամյակ անց, 1673 թ. Փրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը գրում է, որ այնտեղ եղել է մի հին, բարձր աշտարակ, որի պատերին կային արձանագրություններ, իսկ մոտակալքում նկատվում էին մի մեծ բնակավայրի ավերակները¹⁷: Հետազոյում պեղումների շնորհիվ գտնված հնագիտական նյութերն ու կավե անոթները ևս վկայում են, որ այստեղ բնակավայր է եղել դեռևս հնագոյն ժամանակներից¹⁸: Ծիծեռնակարերի մասին պահպանվել է նաև ժողովրդական ավանդություն, թե իբր բերդը սիրո աստվածութի Աստղիկի անունով կոչվել է Աստղկարեր, և աշտարակի վերին հարկում ապրող ծիծեռնակները ընտրյալներին էին տանում դիցուու սիրո հրավերը¹⁹:

Երևանի համայնապատկերը՝ երևան է Պողոս-Պետրոս եկեղեցին, XX դ. սկիզբ:



Հնուց ի վեր Երևանը հայտնի էր իր այգիներով, այդ են վկայում բազմաթիվ արձանագրություններ, որոնցում նշվում են այգիների վաճառքի կամ նվիրատվությունների մասին: Երևանամերը իր այգիներն է Սևանի վանքին նվիրել Աշոտ իշխանը (874 թ.)²⁰: Սյունյաց Սուփան իշխանը մի արձանագրությունում (901 թ.) Երևանում հիմք այգի է հիշատակում²¹: 1225 թ. Գեղարդի արձանագրությունում, մի երևանց իր այգին նվիրում է վանքին²²: Երևանը հիշատակում է նաև 1261 թ. մի արձանագրության մեջ²³: Այդ նոյն ժամանակներում Երևանի հայ իշխանները և հողատերերն էին Վարդը, Սարգիսը, Դոլը, Վաչեն²⁴:

12—13-րդ դարերի Երևանը գրադարանում էր բավական մեծ տարածություն և, հավանաբար, ուներ 15—20 հազար բնակիչ: Այդ շրջանում է առաջին անգամ (1297 թ.) հիշատակում այգեշատ նորքը:

Երևանի համար էլ ճակատագրական էին սելջուկ թուրքերի մահասպահությունը, ամայացավ երկիրը, անկման հասան քաղաքային կյանքը, առևտուրն ու արթեստները: Բայց ներ չեն ցրվել մահարեր ամպերը, երբ Հայաստանը խոցվեց թաթար-մոնղոլների նետերից: Մոնղոլական տիրապետության շրջանում Երևանի ավտատերերից հայտնի է մեծահարուստ Ավետենց Սահմաղինը, որ 1284 թ. իր «հողով ու ջրով» գնել է Երևանը և դարձրել իր կալվածքը²⁵:

13-րդ դարի վերջին և 14-րդ դարի սկզբին Երևանի տեր է Բիշվում ուն Հուսիկ²⁶: Այս շրջանի մի շափած հիշատակարանում (1388 թ.) Երևանը անվանվում է «պատուական» քաղաք²⁷:

Մոնղոլներին հաջորդեցին Լենկեմուրի Բրոսակները, որոնք չորս ամագամ արշավեցին Հայաստան և բազմաթիվ քաղաքների ու բնակավայրերի մետ 1387 թ. ավերեցին նաև Երևանը: Երևանցիները փորձել են դիմադրել Արևելքի ամել տիրակալին: Գրիգոր Խաթեցի Տերենցն իր շափած պատմական հիշատակարանում գրում է, որ այդ ժամանակ քաղաքում 500 մարդ է գոհվել²⁸:

Լենկեմուրի մահից հետո (1405 թ.) Արա տերությունը մասնատվեց իրար մրցակից ու թշնամի առանձին իշխանությունների: Ծուտով թուրքենական կարա-կոյունու և ակ-կոյունու ցեղերն իրենց տիրապետությունը հաստատեցին Ալտրպատականի և Հայաստանի փառ (1410—1502 թ.):

Երևանի նշանակությունը բարձրացավ Զհանշահի (1437—1467 թ.): Վարչական վերափոխման ժամանակ, երբ այն դարձավ Արարատյան աշխարհի մեծագույն մասն ընդգրկող կուսակալության կենտրոնը: Այդ ժամանակից ի վեր, Երևանը հաճախ հիշատակում է որպես «Ալյարատյան երկիր մայրաքաղաք»:

16-րդ դարում Հայաստանին տիրելու համար արյունաթեղ պայքար սկսվեց Իրանի և Թուրքիայի միջև: Երկիրը կրկին հոշոտվեց ու արյունաքամ եղավ: Թուրք պատմիչ Փեչսին Երևանի փոքր թուրքերի կատարած երկու արշավանքները նկարագրելիս հրճվանքով է պատմում, թե ինչպես են իր հայրենակիցներն ավերել քաղաքը. «Հոյական և գեղազարդ պալատները, պարտեզներն ու այգիները, մասնավորապես «Սուլյանական բաղ» անունով հայտնի դրախտանաման այգին բոլորը կրակ տվին, այրեցին և հողին հավասարեցրին... Բոլոր ոսկեզօծ և գեղեցիկ կառուցված պալատներն ավերվեցին և գետնին հավասարվեցին, գեղազարդ և ոսկենիալ կամարներն ու ծածկերը խորտակվեցին և 20 հազարից ավելի կամանց ու երեխանների գերի տարան»²⁹: Նրան ճայնակցելով, թուրք պատմիչ Սոլաք Զաղեն և 1555 թ. թուրքերի արշավանքը նկարագրելիս հրճվում է ավերածություններով. «Երևան քաղաքն իսկապես Իրանի երկրի մարմնի հոգին էր համարվում: Այստեղ... գեղազարդ, ոսկեզօծ պալատները կրակի մատնվեցին, այգիներն ու պարտեզները հողին հավասարվեցին, բուերի, ագռավների բույս դարձան»³⁰: Նույնիսկ այս չարախինն նկարագրություններն իսկ վկայում են, որ 16-րդ դարում Երևանը պալատներով ու այգիներով զարդարված շեն ու գեղեցիկ քաղաք էր:

1579 թ. թուրքերը կրկին մահացու հարվածներ հասցրին քաղաքին³¹: Ականատես Հովհաննեսն այսպես է ողբում:

Ծուրջ ու բոլոր գրադար պատեալ,
Մեծ ու պատիկ զամեն կախեալ,
...Վայ տանք երկրին Ալյարատեան,
Մայրաքաղաքն ի Երևան³²:

Երևանից և շրջակայի բնակավայրերից գերվում է մի քանի տասնյակ բնագար մարդ³³: Ի վերջո, թուրք-պարսկական դաշնագրով Երևանը մնում է Պարսկաստանի կազմում: Չորս տարի անց³⁴ թուրքերը Ֆահրադ փաշայի գլխավորությամբ կրկին մի նոկա քանակով գրավում են Երևանը: Նրանք բնակչության ստրկական աշխատանքով ձեռնամուխ եղան ավերված բերդի

Վերակառուցմանը, որի համար օգտագործվել են անզամ և կեղեցիների քարերը³⁸: Մտրակների հարվածների տակ օրինակ աշխատելով, Կրկին բարձրանում է Երևանի ճշանավոր բերդը (Անրկայիս «Արարատ» գինեգործարանի տեղում): Այդ նոյն բվականի դեկտեմբերին Երևան է այցելել անգլիացի առևտրական Չոն Նիութերին. «Պարսկաստանի վերջին պատերազմներում շատ քրիստոնյաներ էին գերեզմանի Երևանում և որիշ տեղերում: ...Երևանում շատ քրիստոնյաներ կան և տակավին կանգուն է քրիստոնյաների մի եկեղեցի: Այս քաղաքի հյուսիսակողմում, մոտ մեկ մղոն հեռու՝ մի քարե կամուրջ կա, որի տակից անցնում է Զանգու կոչված գետը...», — գրում է նա:

Երևանը միշտ էլ կովախնննոր է եղել բուրքերի և պարսիկների միջև: Խշխանության գլուխ անցնելով, պարսից շահ Արքասը 1803—04 թթ. ինն ամիս պաշարում է Երևանի բերդը³⁹: Այդ ընթացքում նա զորամասեր է ուղարկում հեռու ու մոտ գավառներ՝ պաշարուելու և բանակի համար սմբադամթերք հայթյալու հակ ինքը մնալով պաշարող «քանակի կենտրոնում, օճի նման նենակ, փառով ու շքեղությամբ շրջապատված, սրնափողերի թաշումներով սարսափ էր տարածում»⁴⁰, — գրում է յուրք պատմիչ Շնկերին: Պարսկական թնդանոթները հսկա քարե արկերով ուժրակոծում էին բերդը: Եթե Բավատանք Փեշնիին, ապա ուժրակոծությունը նույնիսկ եկամուտ է բերել Երևանցիներին, քանի որ այդ քարերից Երևան երկանքներ էին պատրաստում և «ամեն մի քար ծախվում էր երեք դուրություն»⁴¹: Թնդանոթագության օգուտը շտամելով, շամբ «ճանապարհները քանդեց, բերդում եղողների համար կյանքի միջոց հանդիսացող հոսող ջրերը կտրեց և այդպիսով պաշարվածներին թողեց առանց ջրի: Զնյած պաշարվածները բերդում հորեր ու փոսեր փորելով որոշ չափով իրենց ծարավության առաջն առան, սակայն պաշարումը շատ երկար տևեց, դրսից օգնություն ստանալու հույսը կտրվեց, պաշարվածների դրությունը ծանրացավ, որով տոկունությունը և դիմադրական ուժը թուլացավ»⁴²:

Իրանի շահի մոտ ուղարկված Խապանիայի թագավորի դեսպանության պատվիրակներից մեկը՝ ավգուստինյան հոգևորական Անտոնիոն է Գուվեան ևս վկայում է, որ բերդը հանձնվել է Բիմնականում ջրի պակասի պատճառով. «Ամրոցն այնպես էր պաշարված, որ բացառված էր որևէ մեկի ելքն ու մուտքը... Եվ պաշարվածների համար ամենամեծ դժվարությունը ջրի հարցն էր, որը չէր կարող երկար բավարարել ամրոցի հերսի մարդկանց պահանջները»⁴³: Իսկ Երևանի մասին նա գրում է. «Երևան քաղաքը հանդիսանում է ամրող Մեծ Հայրի կարևորագույն քաղաքն ու մայրաքաղաքը... ամրողովին բնակեցված է հայերով, հողը մշակելի ու բերդի է և հարուստ ամեն տեսակի մթերքներով»⁴⁴: Ի վերջո, բերդն ընկնում է, և Երևանը գրավելով, ըստ ոն Գուվեայի, շամբ «ամրոցում գտավ մեծ հարստություններ՝ ոսկի, արծաթ, մետաք և այլ պարանքներ, և քացի այդ 400 թնդանոթ, որից 25-ը անուի մեծության էին»⁴⁵:

Թուրքերը հսկայաքանակ գործ հավաքելով, պատրաստվում են վերագրավել Երևանը: Պարսկիները նախանջում են Թավրիզի՝ իրենց նախապարհին մոխրացներով ցանքերն ու այգիները, գյուղերն ու քաղաքները: Ցանկանալով հայերի միջոցով շենացնել Պարսկաստանը, զարկ տալ արթեստներին ու առևտիններին ինչպես նաև յուրքական բանակին թողնել միայն անապատ, շահ Արքան իրագործում է մի երեխավոր ծրագիր, տեղահանելով 300 հազար հայերի, քշում է Պարսկաստանի խորքերը: Գաղթեցվում է Կարսից մինչև Նախիջևան ու Ագուիս ընկած հսկայական տարածքի հայությունը. սա հայ ժողովրդի պատմության ամենամեծի դրվագներից է, որը ճակատագրական հետևանքներ ունեցավ: Դե Գուվեան այսպես է նշարագրում գաղթի սրտամմիկ պատկերները. «Երարանցումը, լացը, ճիշերն ու աղաղաներն այնպիսի չափերի էին հասնում, որ ամենաքարոշիտ մարդու սիրտը կսկիծով էր լցվում: Այդ վիճակն ստեղծվել էր այն պատճառով, որ արդեն հնարավոր չէր այնուն մնալ, իսկ այնունից հեռանալն անմարդկային մի երևոյթ էր: Պատահում էին մեծ թվով կանայք, որոնց ամուսնութերը մահացել էին հանքերում աշխատելիս կամ հողային աշխատաքններ կատարելիս... ու հրանք մնացել էին հիճար-վեց երեխաներով, որոնք քավական մեծ էին՝ գրկած տամելու համար, կամ շատ փոքր՝ ոտքով գնալու համար: Ինչպիսի խղճահարություն էին առաջացնելու մարդկանց մոտ, եթե լսում էիր հրանք ու տեսնում հրանք արարքները քաղաքի դուռների մոտ: Նրանցից ունանք փոքրում էին գետներն, անընդհատ համրություն փոքրիկներին: Ուրիշները հրամանաւ էին տալիս իրենց հայրենիքին ու հայրենի տանը: Այս ամենը գուգակցվում էր ցավախ խոսքերով ու խղճահարություն ծխականներին: Եվ այսպես, ճիշերով ու աղաղաներով իրենց նախսկին հայրենիքից ողորս գալուց հետո, հրանք ուղղություն վերցրին դեպի Թավրիզ քաղաք, անտեղից էլ դեպի Պարսկաստանի խորքը: ...Տեղափոխվում էր ավելի քան վարսուն հազար քաղաք ծովին:



...Ծանապարհ ընկնելուց հետո այդ խեղճերի համար առաջին անգամ տեսնությունը մոտալուս ձմեռն էր, որ այս շրջանում բավական խիստ է լինում: Եվ քանի որ նրանց մեծ մասը կողոպատվել էր ճանապարհին, հետեւ վարար, հագուստի տեսակետից խեղճ զիմանում ստիպված լինելով գիշերել դաշտերում, բաց երկնքի տակ, նրանցից շատերը չի մասնացն մոտալուս ձմեռվա պայմաններին և կնքեցին իրենց մարկանացուն:

...Զնայած ցրտի ազդեցությունը բավական մեծ էր նրանց վրա, այնուհանդերձ, դա այնքան ծանր հետևանք չունեցավ... որքան սովը, որը... նրանց ընկերակցում էր ողջ ճանապարհին: ...Տեղափոխության ժամանակ այդ խեղճ կանանց գգալի մասն իրենց ուսերի վրա երեխաներ էին տանում, մեկը՝ մի ուսի, իսկ երկրորդը՝ մյուսի: Այդ կանանց կողքով գնում էին մի քիչ ավելի մեծ տարիք ունեցող ու հետիուն գնացող երեխաներ: Նրանք բոլորն առավոտյան արթնանալիս հաց կամ մայրական ստիճաներ էին փնտրում, որոնք սակայն չորացած էին մի քանի օր ոչինչ կերած չլինելու պատճառով: Այնքան եմ հուզվում, որ չեմ կարողանում զապել իմ արցունքները, երբ վերիշշում եմ այն ամենը, ինչ պատահեց ճանապարհին այդ կանանցից շատերին»⁴⁴:


Գաղթող ժողովորդին ոչ միայն ցուրտն ու սովն էր մասի սփոռում, այլև չուրը. Արաքսն անցնելիս շատ շատերը խեղճվեցին, քանզի կանալք ու երեխաները լողապով չեին կարող անցնել հորդանատ գետը: Սուարել Դավրիծեցին, որ մանրամասն նկարագրել է այս բռնազարդը, պատմում է. «Ըստ թշվար ժողովորդը ճայում էր առջև, տեսնում էր ծովի նման անհոն գետը, որ խեղդում էր, իսկ ետևից պարսից սուրն էր, որ ապանում էր, և փախուստի ոչ մի մնար չկար: Ընդհանուր կերպով ալիողորմ ողբեր, հորդ արցունքներ աշքերից թափելով երկրորդ Արաքս էին գոյացնում. իսկ լացի, Բառաշանքների, ճիշերի, վայերի, կածանքների, մորմորների ձայները միմյանց խառնվելով, ուժին գոռում-գոչյուններ էին առաջացնում, բայց ողորմածություն ու փրկություն ոչ մի տեղից չկար: ...Իսկ նրանք, ովքեր լողալ չգիտեին, կամ ուժ չունեին՝ ծերեր, պառավներ, տղաներ, աղջիկներ, մատղաշ մանուկներ, լցված էին ջրի երեսը, և գետը քշած տանում էր նրանց, իբրև չոր ջուղ գարնան ժամանակ»⁴⁵:

Եվ այսպես հայոց աշխարհը, Արարատյան երկիրը հայերից դատարկվելով, դառնում է բորեանիների, մողեսների ու գիշանգղների բնակվայր:

1605 թ. կնքած դաշնագրով վերականգնվում են 1555 թ. թուրք-պարսկական սահմանները, և Երևանը կրկին մնում է պարսկական հատվածում:

Ամայացած երկիրը պետք էր կրկին շենացնել: Երևանի Ամիր-Գունախան այդ հպատակով մի քանի արշավանք է կազմակերպում Կարսի, Էրզրումի, Վանի ու Մուշի շրջանները և մեծ թվով հայեր ու մի քանի բրդական աշխրայների քշում բերում և բնակեցնում Արարատյան դաշտում⁴⁶:

1612 թ. հաշտություն կնքվեց Մեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև, բայց չորս տարի անց թուրքերը կրկին պաշարեցին Երևանը, սակայն



Երկուսուկես ամիս հետո հուսախար հեռացան: Ամիր-Գունա խանի բեկլարքեկության քան տարիների ընթացքում (1605—1625 թթ.) Երևանի խանությունը որոշ չափով բուժեց վերքերը, վերականգնվեցին բազմաթիվ գյուղեր, Երևանը կրկին դարձավ արհեստների ու առևտրի կենտրոն:

Բայց թուրքերին հաճգիստ չեր տալիս Երևանի կորուստը: 1635 թ. ամռանը սուլթան Մուրադը 400 հազարանոց բանակով գալիս, պաշարում է Երևանը: Թե Երևանի գրավմանն ինչ մեծ կարևորություն էր տրվում, վկայում է թուրք պատմիչ Նայիման, պատմելով, որ սուլթան Մուրադը «անձամբ ոտքի վրա կազմ ու պատրաստ կանգնած, քանի բերանները բաց արած, ոսկի և արծաթ էր թափում հրապարակի վրա, գլուխ բերողներին՝ 40-ական դուրուց, այն զինվորներին, որոնց ձիերն սպանվում էին՝ 50-ական ֆլորի, վիրավորներ բերողներին՝ 10-ական դուրուց, թշնամու արձակած թրնդանոթի արկեր բերողներին՝ 1-ական ֆլորի բախչից տալով ասում էր. «Ո՞վ իմ քաջարի գալեր, արիության ժամանակն է, իմ զավակներ», այս կերպով նրանց քաջալերում էր և իր նվերներն ու շնորհներն ապրիյան անձնի նման առատահոս տեղացնում: Մինչև անգամ զանազան տեսակի խմիչքներ բաժակների մեջ լցված պատրաստ դրված էին: Գլուխ բերողներին և դագիներին խմացնում էին դրախտի ջրի նմանվող խմիչքը և նրանց պապակը հագեցնում»⁴⁷:


Ցոր օրվա մարտերից հետո թուրքերը մտնում են բերդ, որ գտնում են մեծարանակ հարստություն: «Բնոր ներսի և դրսի ինչքերը, ինչպես նաև տեսանելի և թարցված բոլոր հարստությունները հաշվառեցին և վերցրին: Նրանք ստացան այն անսպասելի գանձերն ու անթիվ հարստությունները, որոնք Երևանի իշխող և նրա հայրը՝ Ամիր-Գունա խանը, կուտակել էին 30 տարվա ընթացքում: Նրանք մտան պետական գանձարանը և պահեստները, այնքան հարստություն և պաշարներ գտան, որ բանակին երկու տարի կրավականացներ»⁴⁸: Երևանի գրավումը կոստանդնուպոլսում «Երշկեց փառաթեղ շքեղությամբ: Նույնիսկ քրիստոնյա դիվանագետներին ստիպեցին մասնակցել հանդիսություններին՝ այն պատրվակով, որ եթե իրենք հանդիսանում են սուլթանի բարեկամները, ապա պարտավոր են Երևալ և ցուցաբերել իրենց ուրախությունը նորին մեծության հաջողությունների նկատմամբ»⁴⁹, — գրում է Անգլիայի Կաղղոս Երկրորդ թագավոր դեսպան, Զմյուռնիայի անգլիական հյուպատոս Միկլոս:

Սակայն շուտով, դեկտեմբերին, կրկին պարսիկները պաշարեցին Երեվանը⁵⁰: Մոտ երեքուկես ամիս կատաղի դիմադրությունից հետո, 1636 թ. մարտի 28-ին թուրքերը հանձնեցին բերդը:

1639 թ. հաշտության պայմանագրով Երևանը մնաց Պարսկաստանի

Երևան ըստ ժան Շարդենի,
1673 թ.:

Ժան Շարդեն, 1643 թ.:



տիրապետության տակ: Այդ շրջանում՝ 1647-ին Երևանում բնակվում էր մոտավորապես 17—20 հազար մարդ⁵¹:

Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն 1632—1668 թթ. ընթացքում վեց անգամ լինելով Երևանում, գրում է, որ «Երևանը բնակեցված է բացառապես հայերով»⁵²: Նա հայագերել է քաղաքը և գծել նրա հատակագիծը: Գծագրից մեր առջև հատնում է երկու-երեք հարկանի տներով կառուցապատված և պարտեզներով ու խաղողի այգիներով շրջապատված մի գողտրիկ քաղաք: Տեղը ունենի կամարակապ մուտքեր, 5—16 լուսամուտ: Պատկերված է նաև բերդի և քաղաքի միջև տարածվող մեծ հրապարակը, որտեղ գտնվում էին արհեստանոցներն ու կրպակները: Տավերնիեն նկարել է մեկ եկեղեցի և երկու կամուրջ, բերդը՝ իր աշտարակներով ու բնակելի թաղամասով, որն առանձին մի փոքրիկ քաղաք էր: Զափազանցելով՝ նա գրում է: «Քաղաքը տեղ-տեղ շրջապատված է կրկնակի պարիսպներով, որոնք, սակայն, հողից են, ինչպես բոլոր տները: Այդ պատճառով էլ անձնության պահանջման մեջ վճարում է հասցնում, քան թնդանոթները»⁵³:

Տավերնիեն 17-րդ դարում Երևան այցելած միակ եվրոպացին շեր: 1660-ական թվականներին Երևանում հայտնվում է Գարբիել Շինոն անունով մի կաթոլիկ քարոզիչ և երևանցի մեծահարուստ կաթոլիկ Շելեպի Ազարիայի օգնությամբ կարողանում է նոյնին եկեղեցի կառուցել: Ծուտով Շինոնը վախճանվում է, և 1684 թ. Երևան է գալիս հիսուսյան քարոզիչ Լոնժոն, որը շահից հրովարտակ ուներ և հաստատում է մի քարոզատուն, բայց շուտով կնքում է իր մաթկանցուն: Նրան փոխարինում է Ռու անունով մի ուրիշ քարոզիչ: Երկու տարի անց նա ևս իր հախորդի ճակատագրին է արժանանում: Կարելի է ենթադրել, որ քարոզիչներն այս անցողիկ աշխարհին հրաժեշտ են տվել երևանցիների «միջամտությամբ»: Ի վերջո, մի քարոզատուն էլ հիմնում է Դյուպոյի անունով մի միսիոներ, ապա գալիս են նաև ներկա քարոզիչներ⁵⁴: Եվրոպացիների մի մասն էլ Արևելք էր գալիս դիվանագիտական կամ էլ առևտրական նպատակներով:

1665 թ. Երևան այցելած ֆրանսիացի կառավարության ներկայացուցիչներ դեկան և դեկան լա Բուլլեյ դե Գուզը մայիսի 20-ին կուղովիկուն 14-րդին գրած ճամակում նկարագրում են քաղաքը և նրա բնակիչների ծանր վիճակը թերևացնելու ճպատակով դիմում են Ֆրանսիացի թագավորին: «Այստեղ պարիսպներ չկան, բայց հաճելի են նրանց լեփիեցուն այգիներն ու պարտեզները: Քաղաքի արևմտյան մասում կա մեծ տա-

րածություն գրաղեցնող մի բերդ, որը քաղաքին է միանում երկարածիա պողոտայով, որի երկու կողմերում դասավորված են խանութներ ու ծառեր... Ինչպես բերդում, նույնպես և քաղաքում մեծ քանակությամբ հայեր կան, որոնք, ինչպես Թուրքիայում, տներում են օսմանյան հրեշտակոր լիի տակ, ամեն օր սպասելով Զերդ Լեծության հաղթական գենքին, որը կարող է վերջ դնել իրենց թշվառություններին: Նրանք քաջ տեղյակ են Զերդ Մեծության հզորությանը և հատուկ պաշտամունք ունեն Զերդ առարինությունների ու արժանիքների հանդեպ, քանի որ ժողովրդի մեջ տարածված է Զերդ հոչակի լուրը, և նրանք մտածում են, որ արդեն մոտեցել է իրենց մարգարենությունների կատարման ժամանակը. Երանք դրանում այնքան համոզված են, որ Զերդ մասին խոսում են որպես ազատությունը վերականգնողի և իրենց եկեղեցների ու հավատի պաշտամունք»⁵⁵:

1673 թ. վաճառական Ռեզենի և նկարիչ Գրեկոյի ողեկցությամբ Պարսկականի ճանապարհին Երևանում որոշ ժամանակ մնում է ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ, հարուստ գոհարավաճառ, պարսից ակնագործ Ժան Շարդենը: Նա յենս երիտարարդական տարիներից ուրիշ տակ էր Արևելքի շատ երկրներ, հատեւ մինչև Հնդկաստան: Հնդագայում նրա ուղեգործությունները ամփոփվել են Փարհանում 1811 թ. Իրատարակած տասհատորյակում: Օգտվելով Շարդենի նկարագրություններից, փորձենք պատկերացնել այն տարիների Երևանը, մանավանդ որ, նրա այցելությունից ընդամենը վեց տարի անց, ամենի երկրաշարժը երկրի երեսից պիտի շնչեր-տաներ այն ամենը, ինչ տեսել և նկարագրել էր Շարդենը. «Երևանում գտնված բերդն ինքնաւտիքան կարող է մի փոքրիկ քաղաք համարվել: Այն ձվածն է, չորս հազար քայլ շրջագծով և իր մեջ ունի 800 տուն: ...Հայերն այդտեղ ունեն միայն խանութներ, որտեղ նրանք աշխատում և առևտուր են անուն ցերեկները, իսկ երեկոները փակելով խանութները, ցըրպում են իրենց տները: Բերդը շրջապատված է հում աղյուսով, գուցեն միայն հողով կառուցված երեք շարք ատամնավոր պարիսպներով, որոնք ունեն աշխատակներ և բերդն ամրացնելու համար մին արևելյան սովորությամբ անկանոն ձևով կառուցված պատվար:

...Երերի կայազորը բաղկացած է երկու հազար հոգուց: Պարիսպներից ամեն մեկն ունի երկաթագամ դարպան՝ փականավոր շարժական վանդակապատով, և հատուկ պահապաններ: Փոխարքայի ապարանքը գտնվում է բերդում, հիշյալ ասունի անունունի եղրին: Այն մի գեղեցիկ և շատ մեծ շինություն է, որ ամառը շատ լավ տպավորություն է թողնում:






ԱՐԹՈՒՐ

...Ինքը՝ Երևանը, բերդից հեռու է մի ոումբընկեց հեռավորության վրա: Քաղաքի մեջտեղում գտնվում են շուկան և այլ շինությունները. Վերջիններս այնքան խախոս են, որ զարմանալի չի լինի, եթե մի Աստծու տված օր խպան կործանվեն:

...Երևանի Բրապարակը, որի չորս բոլորը ծառատունեւ են, մի քառակուսի տարածություն են, որի տրամագիծը հավասար է չորս հարյուր քայլի. Դա զբուածքների, գոտինմարտերի, ձիարշավների և ամեն տեսակ մարզանքների տեղ է՝ թե հետևակների և թե հեծյալների համար:

...Երևանի օղը լավ է, բայց մի փոքր ծանր է և խիստ: Զմեռ երկար է, երեսն մինչև իսկ ապրիլին ձյուն է գալիս: Այդ պատճառով էլ գյուղացիք թաղում են խաղողի որթերը և բացում միայն գարնանը: Ինքը՝ երկիրը, ընդհանրապես լավ երկիր է և շատ էլ պահպան: Հողն առատ բեր է տալիս. այդտեղ, մանավանդ, շատ լավ գինի կա... Հողը տախու է ամեն տեսակ պտուղներ, որ վաճառվում են չնչին գներով: Երկու կողմերից քաղաքը ողողող երկու գետերը և լիճը... բնակիչներին մատակարարում են ձուկ, իմիջիալլոց, լավ կարմրախայր և ծածան, որոնք հոչակված են ամրող Արևելքում: Երևանը նոյնպես գործ է ածում ոչ սակավ քանակությամբ և կարավ»⁵⁶:

Ժամ Շարդենը պատմում է նաև, որ Երևանի Սեֆի-դուկի խանն ուրբար և շաբաթ օրերին բերդից դուրս էր գալիս և հյուրընկալվում որևէ մեկի



տանը. տանտերը, որպես երախտագիտության հշան, պարտավոր էր խանին նվիրել տան ամենաթանկարժեք իրը: Նվերներ պոկելու համար սարդարն այցելում էր նոյնին իշխանաւութերը: Առանց ծաղրը թաքցնելու Շարդենը գրում է. «Սարդարը պատվեց ինձ իր այցելությամբ, և ես ուրախ կինեի, եթե նա այդ պատիվը ինձ չաներ, որովհետև այդ այցելությունը ինձ վրա նատեց մի ոսկետուիք՝ ութ պիստոլ արծողությամբ... Իմ սենյակում նա մնաց մի քառորդ ժամ. դուրս գալով ին սենյակից, նա կանգնեց հարևան սենյակի առջև, որտեղ իշխանել էին Կոստանդնուպոլիսի մարսատան վերակացուի մարդիկ: Հետո նա մտավ մի թուրք և Բայ վաճառականների սենյակները, որոնք իշխանել էին նոյն կարավանարարություն: Ամեն տեղ, ուր որ մտնում էր, նվերներ էին մատուցում, թեն ճիշտն ասած, ոչ այնքան թանկարժեք: ...Մարսատան վերակացուի մարդիկ տվին նրան երկու դուկան, յուրք վաճառականը՝ մի քանի սուրճ, Բայը՝ երկու գազ մետաքսի կտոր»⁵⁷:

Այս վկայությունից դժվար չէ պատկերացնել սարդարների ընշարադությունը, և պարզ է, որ նրանք չեն խորշում հապատակների վերջին շապիկն էլ հանել:

Ամունը Երևանի կյանքը փոխադրվում էր այգիները: Խնկ սարդարները, դեռևս գարնանից, գնում էին ամառանցներ: Այդ մասին էլ Շարդենը

Հայեր. անհայտ նկարիչ
Ալեն Սահսոսի
«Երևանի նկարագրությունը»
Գրքից, Փարիզ, 1683 թ.:

Յան Յանսոն Սերուսի կազմած
աշխարհի քարտեզի վրա առանձին
պատկերված են Երևանը ու
Արարատը՝ Նոյյան տապանով,
Ամստերդամ, 1681 թ.:



թողել է արժեքավոր նկարագրություն. «Հինգին (ապրիլի) սարդարը փոխադրվեց բանակը, որ զետեղված է քաղաքից մի մղոն հեռու գտնվող մի գեղեցիկ մարզագետնում, որն ամրող զարնան ընթացքում ծածկված է լինում ծաղիկներով: Երևանը ոռոգող երկու գետերը գալարվելով՝ դանդաղ հոսում են այդ մարզագետնով, գոյացնելով բազմաթիվ մանր կղզակներ, որոնք միմյանց են միանում փոքր շարժական կամորջներով: Սարդարի, նրա տիկնոց և մերձավորների բնակարանները տեղավորված են առանձին-առանձին կղզակների վրա: Սարդարի վրանները հոյակապ են. նրանց մեջ կարելի է գտնել այն բոլոր հարմարությունները, որոնք հատուկ են ապարանքներին, միայն, ինարկե, ավելի փոքր չափով, մինչև իսկ նրանց մոտ կան բաղնիքներ: Նրա մարդկանց թիվը հասնում է 500-ի, չհաշված կանանց ու ենրքինիներին»⁵⁸:

Այդ տարիների Երևանի մասին նաղաշ Հովհաննեսը (1661—1722 թթ.) մի երգիծական ուսմավոր է գրել.

Առավտուոց կերթաս բազար,
Բոլ կու ծախեն բողկ ու գազար,
Թթու մածուն, շանախ հազար,
Խմոր հացն կուտս նազար:
Սափոր և կուծ ամենն ծակ,
Քանի ջուր կածես թե դատարկ,
...Ոչ աղբյուր կա և ոչ վտակ,
Թուրքի ահեն դոներն փակ:
...Կուզեն ելեն ամենըն բռչ,
Լի է մոծակ, մժիկ, բլոշ⁵⁹:



Կարմիր կամուրջ:

Ծանապարհորդների և
առևտուրականների ջարավանը
մոտենում է Երևանին,
Տան Յանսն Մթրուս,
Ամստերդամ, 1681 թ.:


Երևանն ըստ Ժ. Տավերնիեի,
1713 թ.:

Երևանում գտնված XVII—
XVIII դարերի գենքեր:



Այսպես լավ ու վատ օրով ապրում էր Երևանը, երբ 1679 թ. Բուջիսի 4-ին համկարծակի դդրոց է լսվում և ինչպես նավը ալեկոծ ծովում՝ օրորդովում է Արարատյան երկիրը: Ամենի երկրաշարժը կործանում է բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, զյուղեր, նաև Գառնիի տաճարը: Մատենադարանի ձեռագրերից մեկում ասվում է, որ երկրաշարժի հետևանքով ցամաքել են աղբյուրները, և այլ տեղերից բխել է սկ չոր, պատովել են ժայռերն ու վեմերը, և հրանց միջից բոց է դուրս եկել, իսկ բարձրացած մասախուղը, Գառնիից մինչև Արագած, ողջ երկիրը ծածկել է վարագույրով: Երկրաշարժը կրկնվել է ամեն օր և տնել մինչև հոկտեմբեր... Հիմնահատակ ավերվել է Երևանը: Ամբողջովին փլվել են բերդն ու պարիսպները, եկեղեցիները, կամուրջները, տները⁶⁰:

Զարարիա Սարկավագը միայն իր հայրենի Քանաքեռում երկրաշարժի 1228 զոհ է հաշվում և ավելացնում, որ «ոչ մնաց շուն, ոչ կատու և ոչ հավ»⁶¹: Ըստ որոշ տվյալների, Երևանում և երկրաշարժի գոտում զոհերի թիվը եղել է 7800 մարդ⁶²: Ի լրումն այս դատաղետ վիճակի, 1681 թվականին սաստիկ սով է տարածվում: Հետագայում է նոր բնական աղետներ են բաժին հասնում Երևանցիներին: Պարսկաստանի կողմից երկու անգամ (1692-ին և 1713-ին) սորենիք, ինչպես Սարգիս Գեղամեցին է իր տաղերից մեկում ասում, ձյան հման իջնում է երկրի վրա և շան հման ուսում արտերը⁶³, որից հետո կրկին սով է սկսվում: Բայց Երևանցիներին չեն կարողանում հաղթել ոչ երկրաշարժը, ոչ բնական աղետները: Եվ այս էլ որերորդ անգամ Երևանը հառնում է մոխիրներից ու փլատակներից, և ամեն անգամ, երբ թվում է, թե վերջն է, բաղաքը բարձրանում է նորովի: Անմարդկային զրկանքներ հաղթահարելով, Երևանցիները շուտով վերաշինում են բաղաքը, և այն շարունակում է կարևորագույն դեր խաղալ Արարատյան աշխարհի և ողջ հայ ժողովրդի կյանքում:





Դեռևս 1701 թ. Բայ պատուագրական շարժման նշանավոր գործից հսկայել Օրին ցարական արքունիքը ներկայացրած զեկուցագրում բացառիկ նշանակություն է տալիս Երևանի պատուագրում:

1722 թ. Բոլիսին Պետրոս Մեծն սկսեց պարսկական արշավանքը: Հստ նախատեսված ծրագրի, Բայ-Վրացական զորքերը Վախթանգ թագավորի ու Ավան լուգարաշու գլխավորությամբ պիտի դուրս գային ընդառաջ և Բանի-պեհն Շամախիում: Բայց Պետրոս Մեծը չկարողանալով առաջ շարժվել, կանգ է առնում Դերքենդում:

Վախթանգ թագավորը Պետրոս Մեծին հղած նամակում խնդրում է, որ եթե ինչ-ինչ պատճառով ի վիճակի չի լինելու գալ, ապա «քող քարեհաճի կարգադրել իր զորքերին՝ շարժվել Ծիրվան. Մենք կօանք այնտեղ, կսիհանանք նրանց և կվերցնենք բոլոր հողերը՝ մինչև Երևան և կաշխատենք վերցնել նաև Երևանը»⁶⁴:

Բայց Պետրոսը զանազան քաղաքական նկատուումներով իր դաշնակից Բայերին ու Վրացիներին մենակ է թողնում և Դերքենդից Բեռանում է: Փիրվազյան վարդապետը, որ գործուն մասնակցություն ուներ քաղաքական այդ շարժումներում, ուստի կայսեր վարմունքից ափ ի բերան զարմացած՝ իր նամակներից մեկում գրում է. «Երկու ամիս զօրաժողով արինք և մնացինք ի Գանձակ քաղաքը և յետոյ լուաք զլուր, թէ թագավորը յետ չոգաւ... Մենք մնացինք շուարած և զլուս ի կոր դառանք և լալ աչօք իրաքանչիր ի բնակութիւնս գնացին. սրտաբեկեալ և տարակուսեալ»⁶⁵:

1724 թ. ապրիլին թուրքերն սկսեցին իրենց արշավանքը, Երևանի խանը 12 հազարանոց բանակով փորձեց Եղվարդի մոտ կասեցնել նրանց առաջխաղացումը, բայց պարտվեց ու ամրացավ բերդում: Երևանը մեն-մենակ կանգնեց մեծ փորձության առաջ: Եղանակ գյուղերից բազմաթիվ գյուղացիներ, արհավիրքից փրկվելու հոլյուվ, լցվեցին քաղաք: Երևանի Բայ իշխանները զինելով Փարաքարի, Գյոր գմբեթի, Կավակերտի, Ալինչի, Ավանի, Զագի, Զազավանի, Նորազյուղի գյուղացիներին, կազմում են 9443 հոգիանոց մի բանակ՝ «ամենեքնան վառեալք սուսերաւ և թվանքաւ» և պատրաստվում կովիչ: Մինչ այդ, Բայերն ընդհանրապես չեն մասնակցել թուրքարսկական կոհվեներին, որովհետև մեկին մլուսից չեն գերադասում: Հայերը կամ Բեռանում էին, ամրանում լեռներում ու անտառներում, կամ ապաստանում էին Երևանի բերդում: Բայց այս անգամ, ցարական արքունիքի խոստումներին Բավատառով, Բայերին թվում էր, թէ փրկությունը մոտ է: Բացի այդ, Երևանցիները ցանկանում էին փակել Ղարաբաղի և Սյունիքի վրա արշավող թուրքերի ճանապարհը:

Եվ այսպես, շուրջ մեկ ամիս Արդուլա փաշայի մեծաթիվ քանակին շնաջողվեց կոտրել Երևանցիների դիմադրությունը: Նրա, ինչպես թուրք պատմիչ Չելեքի-Զաղեն է գրում, «զինվորները կոկորդիլոսի նման գետն անցան» և հարձակվեցին անպարհսապ քաղաքի Վրա, բերդի շրջակալիքի տները ավերեցին, և «շուրջանակի պարիսպների շրջակալիքը ազատ հրապարակի վերածվեց»⁶⁶: Այս հերոսամարտը Բայ ժողովրդի պայքարի տարեգրության փայլուն էջերից է: Ժամանակին այն գրի է առել Արքահամ Երևանցին, և նրա շնորհիկ է, որ այսօր մեզ Բայտնի է այդ անօրինակ Բերոսամարտի պատմությունը: Երևանցիները Հովհաննես Հովհանիքյանի, Պողոս Քեչիբեկյանի, Դավիթ Միհրանյանի, Կարճիկ Հովհաննեսի առաջնորդությամբ քաջարար կովում են և երկու հազար զոհ տալով, թշնամուն են շպտուում:⁶⁷

Համոզվելով, որ Բայերին քաջությամբ չեն Բաղրեհ, թուրքերը սպասում են օգնական զորքերի, չնայած առանց այդ էլ մի բանի անգամ թվով գերակշիռ էին: Ծուտով Եղիպատոսից օգնության է Բասմում երեք հազարանոց մի բանակ, ինչպես թուրք պատմիչն է անվանում, «ընտրյալ կտրին զինվորներ»⁶⁸, որոնք իրենց քաջությանը և ուժերին վստահ տեղ Բասմելուն պես, շուապում են գրավել քաղաքը և այդպիսով փառք ու ավար վաստակել: Նրանց ետևից շարժվում է նաև թուրքական երեսուն հազարանոց բանակը, Նորազյուղի կողմից մտնում Զորագյուղ: Տեղի Բայց պահապան զորքը համաջում է Բառասուն շաղացի կողմը: Թվում էր, թէ արդեն վճռված է կովի ելքը, բայց օգնության են Բասմում մոտ 300 լավ զինված

Երևանի բերդը Հրազդանի ափից,
անհայտ նկարիչ, XVIII դ.:

Կոնդեցիներ, որոնք իրենց քաջությամբ ոգևորում են մյուսներին, և ճակատամարտն ավարտվում է հայերի լիակատար հաղթանակով: Թուրքերը վեց հազար ենիշերի կողմենով, փախչում են. հայերից զոհվում է 1300 մարդ⁷⁰:

Մի քանի օրից թուրքական բանակը գրոհում է Կոնդի վրա, բայց այս անգամ էլ հայերը ջախչախում ու հպատակում են հրանց, ինչպես Աբրահամ Երևանցին է գրում, «Գունդըն հայոց աճապարեցին յայն կողմն՝ զդեմ ունիլ նոցա, մարտ եղին քաջութեամբ, հարին զնոսա և ի բաց դարձուցին»⁷¹:

Դրանից հետո թուրքերը դադարեցնում են իրենց հարձակումը և սպառում երկու փաշաների գլխավորությամբ օգնության շտապող 88 հազարանոց բանակին⁷²:

Վճռական ճակատամարտը, ըստ Աբրահամ Երևանցու, սկսվում է հունիսի 7-ի (այլ տվյալներով՝ սեպտեմբերի 8-ի) լուսաբացին և շարունակվում մինչև երեկո: Հայերը կովում են անձնազնիաբար, բայց հինգ փաշաների միացյալ լոթանասուն հազարանոց հսկա բանակին անհնար էր հաղթել: Ի վերջո, թուրքերը 15 հազար զոհ տալով, մտնում են Երևան և «ի գերութիւն վարեցին օսմանցին զկանայս նոցա և զմանկունս և տարեալ լցին ի բանակս իրեանց և չար գործովք ապականեցին զնոսա»⁷³:

Իսկ դավաճան Մեթրալի խանը առանց կովի հանձնում է բերդն ու նեռնում:

Երևանի գրավման լուրն առնելով, Ստամբուլում 10 օր անընդեջ տեղի են ունենում հրավառություններ ու հանդիսություններ. տոն հայտարարվելու պատճառով տասն օր քաղաքի խանութեները փակ են լինում, և առևտուրը դադարում է, որի հետևանքով, ինչպես թուրք պատմագիրն է բողոքում. «մարդիկ վճառ կրեցին»⁷⁴: Իսկ սովորաբան Ահմադ փաշային հղեց հատուկ կայսերական գրություն, որում նա հայտարարում էր. «Աստծո օգնությամբ Երևանը գրավվեց և իմ հաղթական բանակին որս դարձավ: Այս մեծ պատիստին իմ սրտին խիստ ուրախություն պատճեց, որի համար բարիքներ պարզեցին բազմատեսակ փառք ու գովասանք են մատուցել: Փառք, հազար փառք: Այս բարձր հաղթանակն իմ նվիրական էութանը գոհունակություն է պատճենել և բարձր մտքին ուրախություն է դրոշմել»⁷⁵: Ստամբուլում կազմակերպված տոնական հրավառություններն ու սուլթանի հրճվալից նամակը վկայում են, թե իրապես ինչպիսի աթեղ մարտեր են մղվել Երևանի համար և թե քաղաքի հայությունն ինչ անօրինակ քաջությամբ է կուվել այդ հերոսամարտում⁷⁶:

Երևանի հերոսամարտի արձագանքները ժամանակին հասել են Եվրոպա: Խոպացի դե Սագրեդոն իր «Օսմանյան կայսրության պատմություն» գրքում, որը հրատարակել է հերոսամարտից ընդամենը ութ տարի անց,



Երևանը Հրազդանի ափից,
Նկարիչ՝ Գ. Սերգեև,
փորագրիչ՝ Ա. Պետրով, 1796 թ.:

1732-ին՝ Փարիզում, շատ համառոտ հիշատակում է, որ թուրքերի հարձակումից 30 հազար հայեր են զոհվել և դիմադրությունը տևել է երկու ամիս⁷²: 1750-ին Փարիզում լուս է տեսնում Մամի դե Կլերակի «Պարսկաստանի պատմությունը», որում Երևանի հերոսամարտին ավելի մեծ տեղ է հատկացված: Հեղինակն օգտվել է Սպահանում ապրած լեհ ճիզվիտ միսիոներ Յուղե Կրուշինակու հուշերից և թուրքական զեկուցագրերից⁷³: Նա գրում է. «Ահմադ փաշան... 35 հազարանոց բանակով մտավ Երևանի նահանգ: Դրվար է բառերով արտահայտել այս ներխուժման հետևամբով (թուրքերի) կատարած սպանությունների և այլ ոճրազրծությունների մասին: Ծանապարհին գտնվող բոլոր գյուղերն ու ավաններն ավերվեցին ու կողոպատվեցին... Գերիների թիվն այնքան մեծ էր, որ Էջմիածնի կաթողիկոսների՝ Պարսկաստանի հայերին ողղված նամակներում հայերից գերեվարյալների թիվը նշվում է մինչև երեսուն հազար... Ամսվա վերջին նաև հասավ նահանգի մայրաքաղաք Երևան ու պաշարեց քաղաքը: Այս քաղաքը Պարսկաստանի ամենակարևոր հենակետն է Հայաստանում»: Այնուհետև դե Կլերակը պատմում է բուն հերոսամարտի մասին, որի ընթացքում թուրքերը քանից զախշախվում են և մեծ զոհեր տալիս. «Զնայած նրա (Ահմադ փաշայի) զորքերը կովում էին քաջարար, սակայն հանդիպեցին այնպիսի համար դիմադրության, որ նրան շփոթեցրեց: (Թուրքերը) նույնպիսի դիմադրության հանդիպեցին այլ մասերում: Երեք անգամ ամրող քանակը դիմեց գրոհի, և սպանվածների թիվն այս գրոհների ընթացքում այնքան մեծ էր, որ օդը գարշահություննից ապականվեց: Չորապետը ստիպված եղավ երեք օրվա գինահարար խնդրել նրանց թաղելու համար:

Կուտայի բանակի գալուստն ու բանակին միանալը սերասրյարին հնարավորություն տվեց ևս մեկ անգամ փորձելու քախտը: Սեպտեմբերի 10-ին նա չորրորդ ընդհանուր հարձակման հրաման տվեց, սակայն թուրքերը սասանվեցին, որովհետև անսեղի ավելի շատ կորուսներ ունեցան, քան նախորդ բոլոր հարձակումների ժամանակ: Այս պաշարումը յուրայիններից ավելի քան քսան հազար մարդ խլեց, որոնք մահացան ուզմի դաշտում կամ օդի ապականումից: Մրանք (թուրքերը) անվերջ համալրումներ էին ստանում և ութ հազար ուսմբեր մտիրի էին վերածել քաղաքի մի մասը, սակայն կայազորը, ինչպես միշտ, համառորն դիմադրում էր, ոչ մի առաջնադրում չեր նկատվում: Երբ երկարատև այս անհաջողությունն ի վերջո զինվորներին ստիպեց բացահայտորեն հրաժարվել հետագա մարտերից և բարձրաձայն հայտնել իրենց մտադրությունը (դեկալարությանը), եգիպտական օգնական զորքերի ժամանումը փոխեց գործերի ընթացքը: Այս (եգիպտական) զորախմբերն իրենց օրինակով և խոսքով կարողացան հետ պահել երերող բանակը և կրզիսի կառավարի Սարը Մուսատաֆա փաշա-





ի սեպտեմբերի վերջին զգալի օգնական ուժ բերելուց հետո, վերջ տրվեց զինվորների շրջանում տիրող ահին ու տրտունչին և խնդիր դրվեց հարձակումը հաջողությամբ ավարտին հասցենել»⁷⁹:

Հայտ մի շարք հայ և օտար աղբյուրների՝ Երևանի անօրինակ հերոսամարտն սկսվել է 1724 թ. հունիսի 24-ին, վերջին, վճռական ճակատամարտը քաղաքի հայկական զորքանակը տվել է սեպտեմբերի 8-ին, իսկ Երևանի բերդը թուրքերին է հանձնվել սեպտեմբերի 23-ին⁸⁰:

Թե ինչպես 1735 թ. պարսիկները ետ խլեցին Երևանը, պատմում է Արքահամ Կրետացի կաթողիկոսը:

Պարսից Նադիր շահը բանակում է Փարաքարում և շարժվում Երևանի վրա: Թուրքերը պարտվելով, փախչում, մտնում են բերդը: Պարսիկները քաղաքը չեն պաշարում, այլ հեռանում են ու Եղվարդի դաշտում սպասում Երևանի օգնության շտապող թուրքական նոր զորքին: Արյունամեղ ճակատամարտում պարսիկները և նրանց միացած հայերը շուրջ քառասուն հազար թուրք են կոտորում, իսկ մնացալներին հայածում մինչև Արագածի ստորոտը: Թուրքերն ստիպված դաշինք են առաջարկում և Երևանը հանձնում պարսիկներին:

Սույնին խանը, որ բերդը նվաճելուց հետո 1735 թ. նստել է Երևանում, եղել է Մահմադ Ղուլի խանը, որը թահիկ Գողջն գավառից էր՝ Սուսարեկյանց տոհմից: Նրա պապը շահ Արքայի օրոք մահմեդականություն էր ընդունել: Բայց նրա խանությունը կարճ է տևում՝ մեկ տարի⁸¹:

Վարձահատուց լինելով Հասան Ալի խան Ղաջարին՝ պատերազմների ժամանակ ցուցաբերած օժանդակության համար, շուտով Նադիր շահը նրան է հանձնում Երևանի խանությունը: Հասան Ալի խանը որոշ շափով վերակենանանում է ավերված գյուղերը, որից տեղերից փոխադրում նոր թանկչություն: Բայց Երևանի խանությունը ենթարկվում էր լեզգիների և իրեն անկախ հոչակած Աստրատականի Ազատ խանի հարձակումներին: Զկարողանալով կովել այս երկուսի հետ, Հասան Ալին հապատակություն է հայտնում վրաց Թեյմուրազ թագավորին և նրանից պաշտպանություն խնդրում: Թեյմուրազն ուղարկում է իր որդուն՝ Հերակլին, որը ջախջախում է Ազատ խանին: Նա վերջ է տալիս նաև լեզգիների հարձակումներին: Այս ամենի համար Երևանի խանը պարտավորվում է նրան հարկ վճարել:

Հասան Ալիին հաջորդում է եղբայր՝ Հուսեին Ալի խանը, որն օգտվելով Վրաստանի անկայուն վիճակից, հրաժարվում է հարկ վճարելոց: Սակայն Հերակլը երեք անգամ՝ 1765, 1769 և 1779 թվականներին գալիս է Երևան, ստիպում նրան հապատակվել: Առաջին երկու արշավանքների ժամանակ Երևանն ու շրջակայքը թիւ են տուժել, որովհետև Սիմեոն Երևանցի կաթողիկոսը երկու անգամ էլ խանի խնդրանքով միջնորդել է և հաշտեցրել հակառակորդներին: Բայց երրորդ անգամ արդեն Հերակլը չի ընդունում նրա միջնորդությունը: Խանը նախօրոք ամրանում է բերդում, որ հավաքում է հայերին՝ իրենց տասը գլխավորների հետ: Խակ երկրի մյուս հայ բնակչության մեծ մասին գաղտեցնում է Բայազետի կողմերը: Հերակլը մի խառնինայնց գորքով հարձակվում է Երևանի խանության վրա: Բանակի առաջապահը Ղազախի թուրքերն էին և լեզգիները, որոնք իրենց ճանապարհին այրում, կողոպտում, սպանում ու թալանում էին: Նրանցից հետո գալիս էր թագավորը իր զորքով: Հայոց կաթողիկոսը քանից փորձում է վեճը խաղողությամբ լուծել, բայց չի հաջողվում:

Պաշարումը տևում է երկու ամիս: Երևանն անձնատուր չի լինում: Հերակլը վերադառնում է Թիֆլիս՝ իր հետ քչել տանելով բազում գերիներ և բազմաթիվ ավար: Սրանով, սակայն, չի ավարտվում Երևանցիների տառապանքը: Խանը հայերի մեծամեծներին մեղադրելով, որ նրանք են Հերակլին հորդորել հարձակվելու Երևանի վրա, պահանջում է հսկայական գումար⁸²:

Իրաք հաջորդող խաների կեղերումների և շղահարող արշավանքների հետևանքով Երևանն ընկնում է ծանր կացության մեջ: Բայց բզեստված ու արյունաքամ վիճակում է հայ ժողովուրդը շարունակում է պայքարը, որում մեծ դեր էր վերապահված Երևանին:

18-րդ դարի հայ ազատագրական շարժման արժեքավոր վավերագրերից մեկի՝ հեռավոր Հնդկաստանում լույս ընծայված «Որոգայթ փառացի» մեջ, որով տրվում էր ապագա հայկական հանրապետության օրենքների և սահմանադրության նախագիծը, առաջարկվում էր օտար լծից ազատագրվող Հայաստանի մայրաքաղաք հոչակել Երևանը: Ի հաստատումն, Շ. Չահամիրյանի պատվերով 1778 թ. Վենետիկում հրատարակված պատմական Հայաստանի քարտեզի վրա նույնպես Երևանը գծագրված է որպես մայրաքաղաք:

Նոյն կարծիքին էին նաև ազատագրական շարժման մյուս գործիչները: 1780 թ. ուսական բանակը նախապատրաստվում էր պարսկական արշավանքին, որի նախատակներից մեկն էլ իր հայկական պետականության վերականգնումն էր. ուսահայոց թեմի առաջնորդ Հ. Արդությանն ու իշխան

Հ. Լազարյանը խնդրում են իշխան Գ. Պոտյումկինին «Նորոգել ի մեզ զմանաւոր տէրութիւն ի մեծ Հայաստան ի քաղաքն Երևան»:

18-րդ դարի վերջին քառորդում Երևան այցելած ֆրանսիական դիվանագետ Ֆերիկը Սովորյովը ևս վկայում է, որ «Բայեր... Երևանը դիտում էին որպես իրենց հայրենիքի մայրաքաղաք»⁸³:

Ռուսական Բրամանատարությունը մի քանի անգամ Երևան ու Էջմիածին է ուղարկել իր գործակալներին, որոնք տեղեկություններ էին հավաքում Երևանի ու Կարսի մասին, կազ հաստատում Ղարաբաղի մելիքների մետ:

Հայերն էլ իրենց հերթին են շարունակում դիմել ցարական արքունիք: 1784 թ. գեներալ Պ. Պոտյումկինը ուղարկած համակը ստորագրել էին մի քանի նշանավոր Երևանիներ, այդ թվում քանաքեռոյի մեծահարուստ Ապօվ դի Վիրապ՝ Խաչատոր Արովյանի պալք⁸⁴:

Բայց, ինչպես հայտնի է, դեռ չորս տասնամյակ էլ պիտի անցներ, մինչև ուսական քանակը գրավեր Երևանը: Խոկ մինչ այս, Երևանում իրենց իշխանությունն էին վայելում խաները, որոնք պարսից մեծամեծների և իշխանազունների մեջ ամենահարուստներից էին, քանզի Երևանի խանությունն իր աշխատասեր բնակչության շնորհիվ Պարսկաստանի ամենանշանավոր և ամենաեկամտաբեր երկրամասն էր⁸⁵:

Երևանի խաները ոչ միայն պարսից շահին հարկ չէին տալիս, այլև նրանից էին ոռնիկ ստանում և քավական խոշոր գումար՝ սահմանամերձ խանության գիճական ուժերը պահելու համար⁸⁶:

Երևանի խաները կրում էին «սարդար» տիտղոսը, որը նշանակում էր զորքի հրամանատար, իշխանաց իշխան: Նրանք անկախորեն քանակցում էին դրացի պետությունների մետ, խոկ հատկապես թույլ շահերի օրոք՝ անկախանում⁸⁷: Նրանք ունեցել են սեփական դրամ հատելու արտոնություն, որի համար Երևանում կար դրամահատարան: Դեռևս 14-րդ դարից սկսած, մինչև 1824—25 թթ. Երևանում թողարկվել են ոսկյա, արծաթյա և պղնձյա դրամներ: Վերջին շրջանում հատվում էին ֆուղու կոչվող պղնձյա դրամները, որոնց վրա, քացի քաղաքի անունից և թողարկման տարեթվերից, դրոշմված էին փղի, սիրամարդի, արաղադի, առյուծի, ձկան, ուղտի և այլ կենդանիների պատկերներ: Երևանի դրամահատարանը տարեկան երեք հարյուր թումանով կապարով էր տրվում, և խաների համար լրացուցիչ եկամտի աղբյուր էր: 1658 թվականից սկսած, դրամահատարանը հայերի ձեռքին էր⁸⁸:

Պարսից տիրապետության շրջանում Երևանը սովորական ասիական քաղաք էր: Կյանքը եռում էր միայն շոկաներում, խանութներում, հյուրատներում: Այստեղ վաճառահանվում էին այլ երկրներից բերված քազմաթիվ ապրանքներ՝ քամրակ և բուրդ, կաշի, ձիեր, չոր միրզ, գորգ ու մետաքս, աղ, արյունաբերական և արթեստագործական արտադրանք, երկարե, ապակյա, հախճապակյա իրեր և այլն: Բնականարար, քաղաքում հյուրներու հայրյուրավոր վաճառականների համար կառուցվել էին հյուրատներ ու խանութներ: Միայն հինգ հյուրատներն ունեին մոտ 200 խանութ⁸⁹: Երևանում կար 851 խանութ ու կրպակ⁹⁰:

Երևանում կար հինգ հրապարակ, որոնք հովանակ շրջապատված էին խանութներով: Գլխավորը Մեծ հրապարակն էր, որը գրավում էր բերդի և շոկայի միջև ընկած տարածությունը: Այստեղ էին նաև մեծ և փոքր կշեռքներ՝ «ղանթարը» և «միրզանը»⁹¹:



Հովսեփ Արդուքչյանի նամակը
Պոտյումկինին, Աստրախան,
1784 թ.:

Արարատը սարդարի պալատից,
Նկարը Շելֆերի:



Երևանը հնուց ի վեր զարգացած արհեստագործության կենտրոն էր: Արհեստավորները համախմբված էին համբարությունների մեջ՝ ատաղձագործների, մաշկակարների, կաշեգործների, դարրիների, ներկարարների, քարտաշների, ոսկերիների, գդակ կարողների, դերձակների, վարսավիրների և այլ ՀՊ²: Այս արհեստակցական եղբայրություններից (համբարություններ) յուրաքանչյուր ուներ իր դրոշը, որի վրա պատկերված էր արհեստը հովանավորող սուրբը, օրինակ՝ ատաղձագործների հովանավորը Հովսեփն էր, որը ևս, ըստ Ավետարանի, Բյուսն էր: Որոշ աղբյուրներ Երևանի համբարությունների թիվը 30-ից ավելի են համբարություններն ու խանութաշաբերները: Կային նաև մի քանի կաշեգործական, ներկարարական, օճառագործական և այլ մանր ձեռնարկությունները: Զորագույնը, Հրազդանի ափին էին գտնվում 32 կաշեգործական խանութ-արհեստանոցներն³: Նրանք տարեկան մշակում էին 4 հազար մեծ և 25 հազար մանր մորթիներ:

Երևանի ներկարարները բաժանված էին երկու խմբի՝ բոյախչներ և շիլաշիներ: Բոյախչներն իրավունք ունեին ներկել միայն կապույտ և դրա համար հարկ էին վճարում, իսկ շիլաշիները ներկում էին կարմիր և հարկատվությունից ազատ: Էթօ⁴:

Օճառագործության համար ևս որոշ գումար է վճարվել, և այդ պատճենով անհատներին արգելվում էր օճառ եփել: Դրա հետևանքով այն շատ քանի էր, և շունչներներն օճառի փոխարեն օգտագործում էին աղուտներում աճող շողան (օշնան) բույսից և մոխրից ստացվող ինչ-որ խառնուրդ⁵:

Երևանում շատ տարածված էր ջուրակությունը⁶: Կար նաև ապակու գործարան: Այն արտադրում էր ամանեղեն և յոթ գույնի ապակի⁷:

Երևանում կար նաև թնդանոթածովարան և վառողի գործարան⁸:

Երևանի հայերին կառավարում էին իրենց իշխանները՝ մելիքները, որոնք ել գանձում էին սարդարին հասանելիք հարկը: Երևանի մելիքները օժոված էին լայն իրավունքներով, որը տարածվում էր ամրող խանության հայ բնակչության վրա. ամեն օյուղ հարկ էր վճարում նրանց: Նրանք էին հայերի միջև ծագող վեճերի հատավորները և իրավունք ունեին ոչ միայն բանտարկել, այն, բացի մահապատճից, այս կամ այն պատիժը ահմանել: Հաճախ մահմեղականները ևս դիմում էին նրանց⁹: Երևանի մելիքները մեծ դեր են խաղացել հայ ժողովրդի ազատագրական պայքարում, հատկապես 1724 թվականի հերոսամարտի ժամանակ:

Բնականարար, սարդարներն ամեն կերպ շամում էին սահմանափակել նրանց իրավունքները: Վերջին սարդարների ժամանակ հատկապես աշքի էին ընկնում երկու ազնվական տոհմեր՝ Մելիք-Աղամալյան և Գեղամյան: Մելիք-Աղամալյաններն ապրում էին Կոնդում և ունեին տոհմական եկեղեցի և Հովհաննեսը, որը Երևանի երկրաշարժի ժամանակ ավերվել է և վերաբերի 1710-ին¹⁰:

Գեղամյանները իրենց սերված էին համարում Գեղարքունիքի հին հայկական իշխանական տնից, և նրանցից շատերը պարսկական բանակում վարում էին զինվորական պաշտոններ: Երևանի խանությունը Շուսատանին միացվելուց հետո ոռոսական կառավարությունը նրանց որպես Սևանա լիի նախկին տէրերի, լճից ստացվող եկամտից ամեն տարի որոշ գումար էր հատուցում¹¹: Կայսրությանը միացվելու ժամանակ Երևանում բնակվում էր 8 ազնվական ընտանիք (55 հոգի)¹²:

Դարեր շարունակ Երևանը հայ ժողովրդի մշակութային կյանքի կենտրոններից էր, որտեղ ապրել են բազմաթիվ գիտնականներ, պատմագիրներ, տաղասացներ, գրիչներ: 11-րդ դարի սկզբին Երևանում գործել է նշանավոր գիտնական և տոմարագետ Հովհաննես Կողեններ: Նա թաղվել է քաղաքի հյուսիսում գտնված հնագույն գերեզմանոցում, որը հետագայում կոչվել է նրա անունով:

Երևանում 13-րդ դարում ստեղծագործել է պատմիչ Միհրար Այրիվանեցին: Այստեղ ընդօրինակվել են նաև բազմաթիվ ձեռագիր մատյաններ: 13-րդ դարում գրչության կենտրոն էր Կաթողիկեի և ս. Սարգսի գըրշատները, Նորքի և Ստեփանոս եկեղեցու դպրոցը: 14—15-րդ դարերում տարբեր վայերներում հիշատակվում են մի քանի Երևանի գրիչները: Նրանցից ամենահայտնին բանաստեղծ Տերտեր Երևանցին է, որը Ղրիմում մի քանի ձեռագրեր է ընդօրինակել: Կրթական նշանավոր օջախ էր Անանիա Առաքյալի անապատը: 1409 թ. Անանիա Առաքյալի անապատում հայ նշանավոր գիտնական, բարունապետ Գրիգոր Տարեացին վարդապետական աստիճան է շնորհում Թովմա Մեծոփեցուն և ընկերներին: Հետագայում, 1620 թ. Մովսես Գ. Տարեացի կառողիկոսն այստեղ դպրոց է հիմնում, որի ուսուցիչներից էր Մելիքսեղ Վահանեցին: Երկուսն ել թաղվել են Կողեննի կողքին, և նրանց գերեզմանների վրա կառուցվել է գեղեցիկ մատուռ, որը 1829 թ. մելիք Սահակ Աղամալյանը վերանորոգել է և դարձրել ընտանեկան դամբարան¹³: Անանիա Առաքյալի վանքի դպրոցը գործել է շուրջ երկու տա-



Երևանի դրամահատարանը:

Երևանի աշտարակը.

XVII դ. ֆրանսիական գծանկար:

Յամյակ և տվել այնպիսի անվանի գործիչներ, ինչպիսիք են Զաքարիա Վաղարշապատցին, Եսայի Սյունեցին, Պողոս Տիգրիկեցին և ուրիշներ: Այստեղ են ուսանել նաև մի շաբ գրիչներ: Այս անապատում՝ Անանիա Առաքյալի մատուռին կից է կառուցված և Աստվածածին եկեղեցին: Այն երևանցիներին առավելապես հայտնի է Զորավոր անոնով և այդ անոնն ստացել է 1830-ական թվականներին՝ այնտեղ պահող ավետարանի շնորհիվ, որին վերագրվել են զորավոր հատկություններ¹⁰⁵:

Հնայած դարերի ընթացքում Երևանցի գրիչները հարյուրավոր գրքեր են ընդօրինակել, իսկ եկեղեցիներում էլ բազմաթիվ ձեռագրեր են հավաքվել, բայց դրանցից շատերը կամ ոչնչացվել են, կամ սփռվել աշխարհով մեկ, և զարմանալի չեն, որ 20-րդ դարի 20-ական թվականներին Երևանի եկեղեցիներից հավաքվել է ընդամենը 78 ձեռագիր¹⁰⁶:

17—18-րդ դարերում Երևանը հայ դպրության է պարգևել նշանավոր պատմագիրներ և գործիչներ Զաքարիա Քանաքեռոցն, Աբրահամ Երևանցուն, Ուկան Երևանցուն, Սիմեոն Կաթողիկոս Երևանցուն, Մարգար Խոչնեց Երևանցուն և ուրիշների:

1801 թ. Ռուսաստանի հպատակության տակ անցան նաև Վրաստանու ապրող հարյուր հազարավոր հայեր: Բացի այդ, Ռուսաստանին միացվեցին նաև Լոռին, Տառից և Բյուսիային Հայաստանի մի քանի այլ շրջաններ:

Իսկ Պարսկաստանը բոլորովին էլ մտադիր չէր 24 հազար քառ. կմ տարածք ունեցող Երևանի խանությունը գիշելու¹⁰⁷:

Վրաստանի կառավարչապետ Ցիցիանովը 1804 թ. վերջնագիր գերկայացրեց Երևանի Մահմադ խանին, պահանջեց, որ նա պահպանելով իր խանական իրավունքը, մտնի ռուսական կայսրության մեջ: Մերժում ստանալով, ռուսական բանակը պատրաստվեց արշավանքի: Ավարտելով բերդի ամրացումը, Մահմադ խանը հավաքեց Երևանի հայ բնակիչներին և պատվիրեց, որ ամեն մեկն իր հետ ունենան Երկու լիտր վառող, մի չափ կապար և ուտելիքի պաշար: Բացի այդ, նա ամեն ընտանիքից պատանեներ վերցրեց, սպանալով, որ եթե որևէ մեկն անցնի ռուսների կողմը, ապա նրա հարազատները կսպանվեն: Ողջ խանության հայ բնակչությունը, որպեսզի ռուսներին չօժանդակի, տեղահանվեց:

1804 թ. մայիսին ռուսական առաջապահ գորամասերը հասան Գյումրի: Առաջին լուրջ բախումը տեղի ունեցավ Ազատան գյուղի մոտ: Թեև պարսիկները թվով զգալիորեն գերազանցում էին, բայց ռուսները հայ կամավորների աջակցությամբ հաղթում են պարսիկներին: Այս հաղթանակի շնորհիվ գերությունից ազատվեց չորս հարյուր հայ ընտանիք և Երևանի խանի կողմից Կարսի փաշայություն արտաքսվող յոթ հազար ընտանիքի համար էլ հնարավորություն ստեղծվեց անցնելու Լոռի-Փամբակ:

Այսպես սկսվեց ռուս-պարսկական պատերազմը¹⁰⁸:

Հունիսի 15-ին շորտուկես հազարանոց ռուսական բանակը և ճրան միացած հայ աշխարհազորայիններն առաջացան Երևանի ուղղությամբ: Բայց Էջմիածնում ճրանց իր քանակ հազարանոց բանակով սպասում էր Արա Միրզան: Էջմիածնի մատուցներում ճակատամարտ տալուց հետո, ռուսները շրջանցում են Էջմիածինը և դուրս գալիս Քանաքեռ: Քանաքեռի գրավումից Շատոն, ռուսական ճամբար եկած հայերը հայտնեցին, որ Էջմիածնի վանքի պահեստների սենյամերերի խոշոր պաշարները հանրը սիրով տրամադրում են ճրանց: Ծուտով ռուսներն անցնելով Հրազդանի ձախ ափը, փախուսի մատնեցին Արա Միրզայի գործին և պաշարեցին Երևանի բերդը: Ռուսական բանակի հրամանատար Ցի-



ցիանովը Երևանն առանց ճակատամարտի գործելու հույսով բանակցություններ սկսեց: Այս դանդաղ կոտորությունը ձեռնտու էր միայն պարսիկներին, որոնք շուտով Երևանի մոտ հավաքեցին երեսունհինգ հազարանց բանակ: Հունիսի 15-ի ճակատամարտում ևս ոռուսները հաղթեցին թվով մոտ տասն անգամ գերազանցող թշնամուն և գրոթեցին Երևանի բերդի վրա, բայց չկարողանալով գրավել, վերացրեցին պաշարումն ու հեռացան: Վախենալով պարսիկների Վրեժինդրություններ, Երևանցիներից շատերը ոռուսական բանակի հետ գաղթեցին և հաստատվեցին Հավլարարում:

Ցիցիանովի ճախորդ արշավանքի արդյունքն այն եղավ, որ խիստ սըրվեցին հայերի ու պարսիկների հարաբերությունները և այդուհետև ոռուսական և ոռուս-թուրքական ամեն մի ընդհարություն հետո հայերը, դիտվելով որպես ոռուս ոռուսներին համակիր, հառնում էին քաղաքացիան նոխագ: Այս արշավանքների հետևանքով Երևանի խանությունից հեռացավ չորս հազար հայ ընտանիք, իսկ բերդում պատսպարված հայերը պատերազմի ու որմբակոծության հետևանքով 1895 զոհ տվեցին¹⁰⁹: Երբ ողջ մնացած հայերը դուրս եկան բերդից, իրենց հայրական օջախներն ավերված ու թալանված գտան: Ինչպես գրում է Երևանցիներից մեկը, «Տեսանք տները, այգիները և ուրիշ շինությունները, որոնք առաջ հոյակապ էին, այժմ ավերակների կույտեր և անապատ դարձած: ...Ամրող քաղաքն էր ավերման ենթարկվել, մենք կարծես զոր աշխարհ էինք եկել և զարդենք էինք երկարատև քնից, սկսեցինք վերանորոգել մեր բնակարանները, ամեն քայլի վրա և ամեն րոպէ գտնում էինք մեր դժբախտությունների հետքերը, որոնց հիշողությունը նորից զեղում էր մեր սրտերը»¹¹⁰: Իսկ եք Բայազետի հայերը Ցիցիանովին են հայտնում, որ իրենք 10 հազար ընտանիքով ցանկանում են գաղթել Երևանի խանություն, քանի որ այն վաղ թե ոչ կմիանա կայսրությանը, Ցիցիանովը լկտիարար հայտարարում է. «Եթե նոյնիսկ Երևանի երկիրը մեր ձեռքում էլ գտնվեր, ես նրանց այնուել գաղթեցնելու կարիք չեմ ունենա, ինձ հարկավոր է բնակեցնել Վրաստանը, ուստի, եթե նրանք չեն կամենա բնակվել Վրաստանի խորքերում, ուրեմն նրանք համարյա հարկավոր չեն ինձ, որովհետև բնակեցնելով նրանց Երևանի շրջանում, դժվար կիներ պահել նրանց պարզ ու պատշաճ հնազանդության մեջ և նրանք անարգել պիտի փախչեն Արաքսի մյուս ափը կամ հարաբերություններու ունենան այնտեղի հետ»¹¹¹:

1805 թ. ոռուսական հպատակություն ընդունեց Ղարաբաղի խանությունը: Ռուսաստանին միացվեցին նաև Կապանի, Գորիսի և Սիսիանի շրջանները: Բայց դեպի Մերձավոր Արևելք տանող դուռը՝ Երևանը, դեռևս փակ էր ոռուսների առջև: 1808 թ. սեպտեմբերին ոռուսական բանակը, այս անգամ ֆելդմարշալ Գուրովիչի հրամանատարությամբ, կրկնեց իր արշավանքը Երեւանի վրա: Ծանապարհին քախչախելով Երևանի սարդար Հուսեին-Ղուկի խանի հեծելազորը, հոկտեմբերի 9-ին նրանք պաշարեցին Երևանը: Բայց Գուրովիչը ևս տարբեց անօգուտ բանակցություններով և, ըստ երևույթին, շվատաթելով իր ուժերին, ցանկացավ անախիկ բերդը գրագրությունների միջոցով նվաճել: Եվ միայն շատ ոչ՝ նոյեմբերի 17-ին, ոռուսները գրուեցին Երևանի վրա: Այս աշխանային գրոթը ավարտվեց անհաջողությամբ, և վրա հասնող ցրտերը շտապեցրին Գուրովիչին հեռանալ կայսրության սահմանները¹¹²:

Երևանի բերդը շատ ամուր ընկույզ դուրս եկավ, և ոռուսներն այն կարողացան կոտրել միայն 20 տարի անց: Իսկ մինչ այդ նրանք արյունահետ ճակատամարտեր էին մղում նապոլեոնի բանակների դեմ: Այս քանամայակի ընթացքում Երևան են այցելել մի շարք եկրոպացի ծանապարհորդներ՝ Ֆրեյգանը, Ուիլյամ Ալութերը, Ջեյմս Մորիենը, Ջոն Չոնսոնը, Քեր-Փորթը ու ուրիշներ: Նրանք թողել են բերդի և քաղաքի խիստ արմերավոր նկարագրությունները: Դիվանագետ և խորհրդական Ֆրեյգանը 1812 թ. գրում է. «Բերդը գերազանց կառույց է, և ինձ թվում է, թե նման է հարձակումով գրավել, թեև հեշտ է պաշարել: Այս հյուսիսարևելքից եզերված է ավելի քան հազար երկու հարյուր ոտք խոր, ընդարձակ մի դարավանդով, որի խորքում հոսում է Զանգուն: Վերջին մի քանի տարվա ընթացքում Փրանսիացի ճարտարապետները և ապա անգլիացի սպաներն ամրացրել են բերդը»¹¹³:


Նոյն թվականին Երևան է այցելել նաև արևելագետ և դիվանագետն Ուիլյամ Ալութերը. «Երևանի բնակչությունը մի քանի տարվա ընթացքում չորս հազարից հասել է տասներեք կամ տասնչորս հազարի: Այսուհետերձ, փողոցները լի են ավերակ տներով, բայց միջնարերդը կատարյալ վիճակում է, և համարվում է շահի տիրապետության ամենազրավոր բերդը»¹¹⁴:


Չորս տարի անց, Պարսկաստանում անգլիական դիվանագիտական ներկայացուցիչ Ջեյմս Մորիենը լինելով Երևանում, բավական մանրամասն նկարագրում է քաղաքն ու սարդարի պալատը. «Բերդը Պարսկաստանում ամենազրավորը լինելու համբավն ունի, և մի քանի տարի առաջ ոռուսների կողմից այն գրավելու ձախողանքը հարյուրապատկել է նրա համբավն այն-

Երևանը և Արարատը,
փորագրությունը՝ Հինգի,
կատարող՝ Կանդերովն,
տուեն Բորի՝ «Հայաստան»
գրքից, Փարիզ, 1857 թ.:

Երևանի համայնապատկերը.
Նկարիչ՝ Բելը, 1841 թ.:

Երևանի բերդապարհապը և
Արարատը, անհայտ գերմանացու
վիճակություն, 1850 թ.:





քան, որ սարդարը խոսելով նրա մասին, լրջորեն ասաց.

— Եթե եկորպական երեք-չորս թագավոր այս բերդը գրավելու համար միանան, նրանք միայն նեղություն պիտի կրեն կրկին ետ վերադառնալու, որովհետև նրանց աշխատանքն իզոր պիտի լինի»¹¹⁵:

Իսկ Հնդկաստանում ծառայող բրիտանական բանակի գնդապետ Ջոն Չոնսոնը հայրենիք վերադառնալիս, անցնելով Երևանով, թողել է մի կարծ նկարագրություն. «Քաղաքն ունի բազմաթիվ գեղեցիկ պարտեզներ ու տներ և շատ բնակիչ. հայերը համեմատաբար ավելի շատ են, քան մասմենականները: ...Հայերն ընդհանրապես խարտյաշ են և առողջ ու թարմ տեսք ունեն»¹¹⁶:

Անգլիացի նկարիչ Ռոբերտ Քեր-Փորթը ըստ (1822 թ.) մի ուղեգրական նեպանկար է արել. «Երևանն այնքան անգամ է տերեր փոխել, այնքան բաճակի քանովել, կողովատվել ու կոտորածի ենթարկվել, որ զարմանալի չէ, որ նրա անցյալի փառավորությունը վերածվել է խեղճության: Այս արյունահետ արշավանքներից առաջ եղած մեծաթիվ բնակչությունից այժմ միայն ցաք ու ցրիկ անոգի բեկորներ են մնացել: ...Ինձ ասացին, թե քաղաքի ներկա բնակչությունը տասնհինգ հազարից ավելի չէ»¹¹⁷:

Մինչ ոսւաների երրորդ արշավանքը, Ֆաթ-Ալի շահը և Արա Միրզան անգլիացիների օգնությամբ վերակազմում են պարսկական բանակը: Նախապարատավում էր նաև Երևանի սարդար Հուսեին Ղուլի խանը: 1827 թ. սկզբին սկսվեց Երևանյան երրորդ արշավանքը: Մինչ այդ Բենեմորֆի հրամանատարությամբ, շուրջ շորու հազար հինգ հարյուր մարդուց բաղկացած ոսւական մի զորախումբ գրավեց Էջմիածինը: Ինչպես առաջին և երկրորդ արշավանքների ժամանակ, այս անգամ էլ հայերն անձնութացորեն օգնում էին ոսւաներին, միանալով նրանց այնպիսի անօրինակ սխրանքներ գործում, որ զարմացնում էին նոյնիսկ ոսւական բանակի շատ բան տեսած հրամանատարներին: Թիֆլիսում կազմակերպվում են երեք հայկական գումարտակներ, որոնք հայկական հողի վրա ուր դնելով՝ համալրվում են և դառնում հարվածող հզոր ուժ: Օրինակ, առաջին գումարտակը Երևանի ճանապարհին բազմապատկվում է և դառնում հազար զինվորից կազմված զորախումբ: Եվ եթե չիներ հայերի անձնութաց օգնությունը, շատ ճակատամարտեր բոլորովին այլ վախճան կունենային: Ծուտով Կովկասյան կորպուս՝ գեներալ Պասկիչի հրամանատարությամբ (մոտ ինն հազար հեծյալ և թետևակ, շհաշված Բենեմորֆի ուժերը), մի քանի ամրություններ գրավելով, պաշարում է բերդը: Երևանի պաշտպանությունը Հուսեին Ղուլի խանը հանձնելով եղրորը՝ Հասան խանին, թեուանում է բերդից, որպեսզի նոր ուժեր հավաքի:

Ոսւանական ծանր հրետանին սեպտեմբերի 25-ի լուսաբացին սկսեց որմբակոծել Երևանի բերդը: Բերդում կար վեց հազար զինվոր և հիսունից


Սարդարապատի բերդի
գրավումը 1827 թ. սեպտ. 20-ին,
հեղինակային վիճակորությունը
Վ. Մաշկովի (1792—1839 թթ.):

ավելի թնդանոր: Չնայած պարսիկների կատաղի դիմադրությանը, ուսւներին հաջողվեց մոտենալ պարիսպներին: Չընդհատվող ոմքակոծոքյան հետևանքով, սեպտեմբերի 30-ի լույս հոկտեմբերի 1-ի գիշերը կոտրվեց պարսիկների դիմադրությունը: Ռուսական քառասուն թնդանոթ միայն սեպտեմբերի 30-ի գիշերը հազարից ավելի ոռուր են արձակել նրա վրա:

Հասան խանի վիճակն ավելի ծանրացավ, որովհետև նրա դեմ ապրատամբեցին բերդում գտնվող ավելի քան տասը հազար հայերը:


Հոկտեմբերի 1-ի լուսաբացին սկսվեց ոուսական բանակի վերջին գրությունը: Ե. Լաշինովը, որը մասնակցում էր Երևանի բերդի գրավմանը, այսպես է նկարագրում վերջին մարտը. «Սարսափը տիրել էր բնակչների սրտերին: Երբ պատահում էր մոտ գնալ բերդին, գիշերվա լուության մեջ լսվում էին կանանց աղիղողում լացուկոծը, երեխաների ճիշերը: Դժբախտներն ամեն րոպե սպասում էին տաճաշալից մահվան և հայացքներով հետևում էին ոուսրի ահարկու թոհշքին, մի ակնթաքը և ահա նաև վերևում է, դանաղ օրորվում է, ապա և նորից ուժեղացնում է արագությունը գետին հջնելիս: Նրանից դուրս թռչող կայծերը լուսավորում են նրա ճանապարհ խավարում և երբեմն փրկվելու հնարավորություն են տալիս, բայց հաճախ մի ոումբը շտապում էր հասնել մյուսին: Երբեմն թվում էր, թե հակառակ կողմերից թռչող ոումբերը կարող են բախվել, բայց տարրեր ուղղությունները ցրում էին նրանց ամբողջ տարրեր մասերում և ամեն տեղ կործանում ու ավել տարածում: Վիշտը, վիատությունը, վախը, հուզում էին մեկուսացածների հոգիները... Պաշարման ամբողջ ընթացքում պաշարվածներն իրենց ներթին առատորեն մեզ գնդակներում էին: Խորտակվող հրակնատները եռանդով նորգում էին: Բայց հենց որ կրակոցների ծովուր ցոյց էր տալիս, թե որտեղից են գործում նրանց հրանոթները, նրանց նորից ստիպում էին լուլ: Պարհապնդի վրա վառվեցին ջամերը: Հրացանների տրաքոցները, թնդանոթների պայյունները խառնվում էին բնակչների աղմուկի և վայնասունի հետ: Բայց ինչպես պատկերել այն պահը, երբ մեր հրետանու գործողությունից բոցավառվեց օղը և հառաչեց հողը: Մոնշացին թնդանոթները, և հազարավոր հրացանների համազարկերը խլանում էին նրանց որոտի դղրդյունից: Դժոխային րոպեներ էին դրանք, որ շարունակվեցին մի ժամից ավելի: Կամաց-կամաց բերդն սկսեց լուլ, կրակոցներն ավելի ու ավելի սակավ էին, ավելի ու ավելի լսելի էին դառնում պաշարվածների ձայները: Ծուտով ամեն ինչ լոեց, և ժամապահների հաճախակի կանչերը հնչեցին օդում: Լոեցին և մեր մարտկոցները, վերականգնվեց հրաձգության սովորական կարգը:





Երևանի բերդի գրավումը
1827 թ. հոկտեմբերի 1-ին,
Նկարիչ՝ Վ. Մաշկով:

Ուսական գործի անցոմը
Արաքսով՝ 1827 թ. հունիս,
հեղինակային վիմագրությունը
Վ. Մաշկովի:



Զևանբուզաղի ծակատամարտը
1827 թ. հուլիսի 5-ին,
հեղինակային վիճագորությունը
Վ. Մաշկով:

Աբասապատի (Աստապատի)
բերդի հանձնումը 1827 թ.
հուլիսի 7-ին,
նկարիչ՝ Վ. Մաշկով:



40 հազար հայերի ներգաղթը
Պարսկաստանից ուղևական
սահմանները գնդապետ Լ.
Լազարյանի անժական
տօրինությամբ՝ 1827 թ.,
հեղինակային վիմագրությունը
Վ. Մաշկովի (1832 թ.):


1826—1828 թթ. ողևական
պատերազմի հայուանակի
առջևի մերաւ,
գործ՝ Վ. Ակեբասեկի:

Ողևական բանակի գորահանդեսը
Երևանում, 1827 թ.,
նկարիչ՝ Վ. Մաշկով:

Նորից կարելի էր նկատել, թե ինչպես արագաշարժ արկը կամ նոճակը փողաբերանից հազիկ դուրս եկած, արդեն խրվում էին պարսպի մեջ և ինչպես նրանք իրենցից շատ են էին թողնում ավելի առաջ ։ այց թողնված դանդաղաշարժ ունիմիցն: Հեռվում լսվեց կրակոց, երկրորդը, երրորդը: Կազմակերի շղթայի տարրեր տեղերում բորբոքվեց փոխհրաձգությունը: Հասան խանը յուրայինների հետ փորձեց թեռանալ նաև պատեղից, բայց ամեն տեղ արգելքների հանդիպելով, ստիպված եղավ վերադառնալ: Այնոր ծագեց, աշխատանքները շարունակվում էին: Ժամը 8-ին պատերի վրա երևացին սարրազները և բնակիչները, նրանք թաշկինակներ են թափահարում, ճեղքից իրենց շպրտում են փուր և, մոտենալով մեզ, հայտնեցին, որ բնակիչները և սարրազների մի գումարտակ հանձնվում են, բայց մնացյալ երկու գումարտակները մտադիր են դեռ դիմանալ: Մերոնք նետվեցին դեպի մեղքը, սողացին պատի վրայով, բարձրացան մյուսի վրա և դրա վրա ժամապահներ կարգեցին»¹⁸:

Վերջապես բերդը գրավվեց: Գերվեցին շուրջ երեք հազար պարսիկ զինվորներ, իսկ անպարտելիի անոն վաստակած Հասան խանին և մյուս խաններին գտան մզկիթում թաքնված:

Չընդիատվող ոմբակոծության թետևանքով բերդում հավաքված հայերի մի մասը զոհվեց: Բայց Երևանի բերդն իր վերջին խոսքը դեռ չէր ասել: Երբ նրա վրայից ցրվեցին փոշու ամպերն ու վառողի ծոխը, տեղի ունեցավ շքահանդես, որտեղ Ներսես Աշտարակեցին և Պասկիչը ողջունեցին զինվորներին ու ժողովրդին: Հայերից շատերն իրենց գերդաստան-





Անրով կանգնել էին պարհապների տակ, նստել կիսակործան պատերին: Երբ Հրազդանի ափին շարված թնդանորմները Բամազարկ տվեցին, Բամկարծ պարհապների մի մասը տապալվեց՝ իրենց տակ թաղելով Բավարպաններին¹¹⁹:

Երևանի բերդի գրավմանն այնպիսի մեծ նշանակություն է տրվել, որ սահմանվել է Բատուկ մեղալ: Իսկ նիկոլայ Առաջինն իր տիտղոսներին ավելացրեց ևս մեկը՝ «Տեր և թագավոր Հայկական մարզի», Պասկիչին է շնորհվեց «Երևանյան կոմսի» պատվանուն: Գեներալ Պասկիչը Երևանի բերդի գրավման առիթով կազմակերպված զորահանդեսում զինվորներին դիմեց Բետևյալ խոսքերով. «Երևանն ընկավ ձեր առջն, դուք այլևս ախոյան չունեք բովանդակ պարսից պետության մեջ, ուր էլ դուք զնաք, թշնամիների բազմությունը կոչնչանա ձեր առջն»¹²⁰: Իսկ դեկարիստ Ֆ. Լաշինովն այսպիսի խորհրդածություններ է գրել իր օրագրում. «Դո՛ւ, երբեմնի մեծահոչակ Հայաստան, դո՛ւ, որ մեզ մինչև միմա միացնող այդքան հուշարձաններ ես թողեն, ի՞նչ է քեզ սպասում: Կհայտնվեն, արդյոք, նորից փառքի ասպարեզում, թե քո թախծոտ զավակներին վիճակված է Բավիտյանն լրյալ գոյություն»¹²¹:

1828 թ. Փետրվարի 10-ին Թավրիզ—Թերիան ճանապարհին գտնվող Թուրքմենչայ գյուղում ստորագրվեց ոուս-պարսկական Բաշտության դաշնագիր, ըստ որի Պարսկաստանը 70 միլիոն ոուրի պատերազմական տուգանք պիտի վճարեր: Դաշնագորության 15-րդ հոդվածով թույլատրվում էր երկու երկրների բակակիշներին ազատորեն գաղթել մի երկրից մյուսը¹²²:

Արևելյան Հայաստանը մարդաբակ դարձնելու և Բատկապես Բավատարիմ տարրերով բնակեցնելու Բամար ցարական կառավարությունը ցանկանում էր շուրջ 80 հազար կոզակներ վերաբռնակեցնել Հայաստանում: Սակայն այդ ծրագրի իրագործումը կապված էր որոշ դժվարությունների հետ, մանավանդ որ դրան ընդդիմանում էին Բայ գործիշները: Ի վերջո, որոշվեց Բայերի Ներգաղթ կազմակերպել Պարսկաստանից: Այդ Բանձնարարվում է Թավրիզի պարետ, գնդապետ Լազար Լազարյանին, որին տրամադրվում է չմշին գումար՝ 25 հազար արծաթ ոուրի¹²³, երբ Պարսկաստանից ստացված անոնկի ուղմատուանքից Նիկոլայ Առաջինի Բրամանով Պասկիչին ընծայվեց մեկ միլիոն ոուրի¹²⁴: Ներգաղթի իրագործմանը եռանդուն մասնակցություն ունեցան նաև Պարսկաստանում ոուսական արտակարգ լիազոր դեսպան Ա. Գրիբոյեդովը, Բայազդի բարձրատիման զինվորականությունն ու Բոգուրականությունը: Շահական կառավարությունն ամեն ինչ անում էր, որպեսզի չզրկվի իր աշխատասեր Բարկատուներից: Կարճ ժամանակամիջոցում (1828—29 թթ.) Արևելյան Հայաստան տեղափոխվեցին շուրջ 45 հազար Բայեր: Հայկական մարզում գաղթականները բազմաթիվ դժվարություններ կրեցին. Երանք Բարկատուված էին ապրել Վրաններում կամ էլ մնացին անօթևան: Նրանցից շատերը սովոր մատնվեցին: Դեկարիստ Ա. Բետուումը 1832 թ. իր նամակներից մնկում պարսկահայերի գաղթի մասին գրում է, որ նրանց «ուսկե սարեր խոստացան, և նրանք շարժվեցին... Եկամ և չգտան ցորենի Բատիկ, գլուխ դնելու տեղ, ճյուղ՝ կյանք



Երևանի գրավմանը Նվիրված մերաւ, գործ՝ կոմս Ֆ. Տոլստոյ:

Թուրքմենչայի պայմանագրի կնքումը 1828 թ. Փետրվարի 10-ին, Ակարիչ՝ Վ. Մաշկով:

պահպանելու համար: Ոչինչ չեր պատրաստվել: Նրանց տվեցին կորստաբեր կլիմա, անքերի հող և դրա հետ անհշան դրամական օգնություն, այն էլ մի մասին: Նրանց կեսը կոտորվեց, քառորդը ցրվեց, վերջին քառորդն իր թշվար գոյությունն է քարշ տալիս օտարության մեջ: ...Ամենքը փախչում են, ամեն իմ չորամում է»¹²⁵: Չնայած այս ամենին, այս գաղթականության շնորհիվ, նոր շունչ ստացավ Երևանը, մանավանդ որ այս պատրազմի ընթացքում ևս նրա բնակչությունը քազմաթիվ զոհեր տվեց: Պարսկաստանից Երևան գաղթեց 1715 մարտ, Թուրքիայից՝ 48: Եվ դրա շնորհիվ Երևանի բնակչությունը հասավ 11 463 հոգու: Ասենք, որ Երևանը ոչ միայն Անդրկովկասի, այլև Պարսկաստանի խոշոր քաղաքներից էր համարվում: Այդ տարիներին, օրինակ, Թիֆլիսն ուներ 16 840 բնակիչ¹²⁶:

Ուսաստանին անցած երկրամասից կազմվում է Հայկական մարզ, որը 12—13 տարվա ընթացքում յոթ նահանգապետ ու տեղակալ փոխեց, որոնցից երեքը հայ, գնդապետ, իշխան Մովսես Զաքարի Երկայնարազուկ Արդության (տեղակալ), իշխան Բարսեղ Հովսեսի Բեհրութով, գնդապետ Գևորգ Ստեփանի Մմբատյանց¹²⁷: Նիկոլայ Առաջին կայսեր 1837 թ. Երևան այցելությունից երեք տարի անց, կայսրն ամսակնակալ «նվեր» է մատուցում: 1840-ին Հայկական մարզը վերացվում է, և Երևանը դառնում է համանուն գավառի կենտրոն: Այս շրջանի պատմության համար խիստ արժեքավոր են եվրոպացի ճամապարհորդները ուղեգործությունները:

Առաջիններից մեկը Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պարրուն էր, որ 1829-ին Խաչատոր Արովյանի հետ Արարատի գագաթը նվաճելուց հետո, նոյեմբերի 1-ին այցելում է Երևան: «Անցնում էինք ամրոցի կողքով: Նրա երկու շրջապատող պարիսամերից նայում էին քազմաթիվ թնդանոթներ: Դրսի պարիսամը հսկայական հաստություն ունի և կարծես թե նոդից է կառուցված: Ինքը, քաղաքը սփովել է ամրոցից մի քանի հարյուր քայլ հետո մասամբ դաշտում, մասամբ էլ քարձունքի վրա: Ամրոց այցելուց հետո հետաքրքրությունը մեզ տարավ մեծ շուկան: Պատերազմին ու ժամանակական հակառակ, այն խանութներով ու կրպակներով հարուստ գտանք: Առանձնապես զարմացած էինք թարմ ու շորացած պտուղների հսկայական քանակից, ամրողն ընտիր և աննկարագրելի էժան: Հյութայի խաղողն առնում էինք 1 ֆունոր 2 պղնձե կոպեկով: Ամենավայը արժեքը 1 ֆունոր՝ 4 կոպեկ: Ճամապարի համար վերցրինք շորացած ծիրան ու քիչմիշ: Հատկապես պարսիկները դրանք սիրում են օգտագործել փլավի մեջ: Գնեցինք նաև մի քանի շիրում, մի քանի պարսկական գեղեցիկ հյուսված ծիրու մըտրակներ և ուրիշ արևելյան մանրութներ: Արդեն պատրաստվում էինք գնալ, երբ ճկատեցինք երկու կենց հինգ երեխաների հետ, որոնք մտնում էին շուկա՝ իրար հետ խոսելով գերմաններնի շվարյան քարրառով: Կատարինների գաղութից էին, որը կողոպտված էր ոուս-պարսկական պատերազմի ժամանակ: Այդ գաղութից բնակիչներից ոսանց թշնամին գերեվարել էր և մինչև այժմ նրանց բախտն անհայտ էր: Ես ոչնչով չեի կարող օգնել այդ քարի մարդկանց, քանի որ իրենց միակ ցանկությունը՝ տուս վերադառնալ արդեն կատարվում էր: Ուրախ էին և խնդրեցին ինձ հայտնել իրենց վերադարձի լուրը գերմանական գաղութներում, եթե անցնեմ այնտեղ:

41-րդ գնդի գինովներին, որոնք մշտապես մեզ հետ էին Արարատուն, վարձատրեցինք և ճամապարեցինք: Ընդունեցինք սարկավագի (Խաչատոր Արովյանի) հոր տուն այցելելու հրավերը: Մենք և երկու Դունի կողականը ուղևորվեցինք Քանաքեռ՝ Երևանից 4 մղոն դեպի հյուսիս: Այստեղ ապրում էին սարկավագի ծնողներն ու ընտանիքը: Տների մեծ մասն ավերված էր պարսկական պատերազմի ժամանակ: Քանաքեռը դուրեկան վայրում է՝ Սևանա լեռների գեղեցիկ ու պտղաբեր լանջին: Օդը մաքուր է, մեղմ ու առողջարար: Սարկավագի հայրը մեզ չափազանց սիրալիք ընդունեց»¹²⁸: 1843 թ. ամռանը Երևան գալով, գերմանացի տնտեսագետն և քանակավար, ուղեգիր Ավգուստ ֆոն Հարտինաուզենը Խաչատոր Արովյանի միջոցով մոտիկից ծանոթանում է գավառի ու քաղաքի կյանքին: Նա իր տպակորություններն ամփոփել է «Անդրկովկաս» երկաստոր աշխատության մեջ, որն իրար ետևից տպագրվել է անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և հայերեն¹²⁹: Նոյն շրջանում Երևան են այցելել նշանավոր ճամապարհորդ Դյուրուա ու Մումբերեն, գերմանացի գիտնական, Ենայի և Բելլինի համալսարանների պրոֆեսոր Կարլ Կոխը, որի Հայաստանից ստացած տպավորություններն ամփոփված են «Ճամապարհորդություն Ուսաստանով դեպի Կովկասյան պարանոց» երկաստոր աշխատությունում, իմշալես նաև «Ծրջագայություններ Արևելքում» 1843 և 1844 թվականներին» և «Կովկասյան երկրները և Հայաստանը» գրքերում¹³⁰: Գերմանացի գրող, քանաստեղծ և գիտնական Ֆրիդրիխ Բոդենշտեդը ևս, Խաչատոր Արովյանի օգնությամբ ծանոթանալով հայ գրականության ու քանակայությանը, իր «Հազար ու մեկ օր Արեվելքում» (1850 թ.) գրքում քանաստեղծականորեն է նկարագրում Երևանն ու նրա բնակիչներին¹³¹:



1843-ին Երևանում որոշ ժամանակ մնացել է գերմանացի Աշանավոր բնագետ, աշխարհագրագետ Մորիկ Վագները: Մինչ այդ նա շրջագայել էր մի շարք երկրներում, այնուհետև Արևելյան տարրեր մասերում լինելուց հետո, ուղևորվել է Կենտրոնական Ասերիկա՝ Անդեր, Պանամա, Էկվադոր... Վագները Հայաստանին է նվիրել երկու գիրք՝ «Ուղևորություն դեպի Արարատ և Հայկական բարձրավանդակ» ու «Ուղևորություն դեպի Պարսկատան և Քրηտան» (Երկանոր) ¹⁹²: Հետաքրքրական է, որ աշխարհ տեսած այս ճամապարհորդի ամենաքննությունը հուչերը կապված են Հայաստանի հետ. «Դեպի Ասիա կատարած իմ երեքամյա թափառումների և Արևելքում անցկացրած կյանքին մեջ ճամփորդությանս ամենասիրելի հիշողություններն ստոցել ու պահել եմ Հայաստանից, որպես արդյունք այնտեղ ունեցած իմ ապրումների ու ձեռք բերած ծանոթությունների», — գրել է նա ¹⁹³: Վագների համար անմոռաց մնացին համեմատումները Խաչատոր Արովյանի հետ, որի շնորհիվ նա ծանոթացել է Արևելյան Հայաստանի և Երևանի օերքին կյանքին: Նա խիստ կարևոր մանրամասներով է նկարագրում Երևանում տիրող



վիճակը. «Այս ժամանակից սկսած, երբ Ռուսաստանն իր երկգլխանի արծիվը մինչև Երևանի հովիտն առաջացրեց և իր տիրամիջակ մաքսային սիստեմն անդրկովկասյան համանգների վրա ծավալեց, այդ ժամանակից է այս երկրամասի տարանցիկ առևտուրը, որ առաջ ծաղկած վիճակում էր, բոլորովին քայրայվեց: Պարսկաստան—Վրաստան ճանապարհի մեջտեղն ընկած լինելով՝ Երևանի իշխանները մշտական եռուզենի մեջ էին բազմաթիվ առևտրականների և քարավանների շնորհիվ: Բենակիր ձերը շարունակ խրխնջում էին քարվանսարայներում, ուղտերը մանջում՝ առևտրական իշխանների ընդարձակ, իսկ այժմ ամայի ու մեռած բակերում: Ծովան իի էր ապրանքներով, շրջակարիք գյուղացիներն այնտեղ իրենց կենամթերքներն էին վաճառում լավ գներով, իսկ ով որ գրաստ ուներ, նենց դրանով է ի վիճակի էր լավ փող վաստակելու... Ծագումով նայ, իշխան Բեհրութովը, որ առաջ տարիներ շարունակ այստեղի համագալատն էր, եղել էր երկրի ամենավատքար կողոպտիչը և բունապետը: Ամբողջ ժողովուրդը միաբերան անհծոն է նրան, որպես նահանջի պատուիս: Եվ ոչ մի փաշա, ոչ մի սարդար աղքատ գյուղացու բրտինքից ալնշափ ուկե դրամ չի հանել, որչափ այս հայը: Իր դժբախտ հայրենակիցները նրա բավական երկարատև և դաժան վարչության տակ անհավատալիորն շատ են տանջվել: Յուրաքանչյուր որ այն ժամանակ երազել է միայն այն մասին, որ վերադառնա պարսից իշխանությունը... Այդ մարդու բռնության ահից ամենքի լեզուն կապված է եղել... Գավառական բոլոր պաշտոնյաները նրա երկրպագուներն էին, որովհետև նրանք ազատ էին իրենց շրջաններում ուզածի պես ճնշելու ժողովրդին, միայն թե իրեն լիովին վճարեին ստացված պաշտոնների համար պահանջված գումարները»¹⁵⁴:

Նման անհանդուժելի վիճակը հուզել և մտաჩոգել է Ռուսաստանի ազգի որդիներին. Նրանցից շատերը փորձել են միջամտել, ինչ-որ շափով թեթևացնել նորանվաճ երկրամասի կյանքը: Եվ ցարիզմի դեմ պայքարելով, նրանք պայքարում էին նաև նրա լծի տակ տառապող ժողովուրդների ազատության համար: Ալեքսանդր Գրիբոյեդովը ևս, Ըկատելով ժողովրդի ընթանուր դժգոհությունը և այն, որ շատերը թողել հեռացել են Պարսկաստան, նամակ է գրել Պասկինչին. «Մենք խում ենք խաններից ու բներից նրանց իշխանությունն ու իրավունքները և փոխարենը տալիս ենք ժողովրդին օտար, անհականալի, խճանքած օրենքներ, նրանց, որոնք վստահելով մեզ, թողել են իրենց հայրենիքը և կարեն ծառայություններ են մատուցել մեզ, մենք նախատում ու մուրացիների տեղ ենք դնում:

Պետք է վստահել ժողովրդին, պետք է թողենի, որ նրանք իրենց ներքին գործերն ինքանը կառավարեն իրենց մեծամեծների ձեռքով, համեմատ իրենց ավանդական սովորության և օրենքների, և ոչ թե համանապ մտցրած ուսուական օրենքներով ու լեզվով, և այն երկրին անձանոր տգետ աստիճանավորների ձեռքով»¹⁵⁵: Բայց, իհարկե, Գրիբոյեդովի նման մարդկանց ձայնը երբեք էլ լսելի չի եղել ցարական արքունիքում, և ինչ կարելի էր սպասել, եթե Ռուսաստանն ինքն էր հեծում նորտատիրության հիրաններում:

Երևանը Ռուսաստանին անցնելուց անմիջապես հետո, գեներալ Պասկիչի հրամանով Հայկական մարզի եկամուտների և պետական գոյցերի վարչության նախագահի և. Ծոպենն անց է կացրել մարզի «կամերալ» ցուցագրում: Նրա աշխատությունն ամփոփում է մարզի աշխարհագրությունն ու պատմությունը, ազգագրությունը, վիճակագրությունը¹⁵⁶: (Ըստ ի. Ծոպենի հաշվարկների, այդ տարիներին Երևանում կար 30 որմնադիր, 28 պղըճագործ, 44 մանրավաճառ խանութպան, 27 մասգործ, 38 զինագործ, 41 դերձակ, 64 սափիչ, 120 ջուրհակ, 87 մետաքսավաճառ, 16 մոմագործ, 34 արծաթագործ, 4 շերամապահ, իհաշած ճակնելի 5 վաճառական, 1 կոնֆետագործ, 3 օճառագործ, 1 դրամահատ, 2 ուկրարույժ, 4 ներկարար, 1 սրճագործ, 7 երկաթավաճառ, 2 բրուտ, 4 պանրագործ, 131 մաշիկակար, 3 նպարավաճառ, 12 բաղնիսպան, 6աև 12 զունաշի և այլ նպազածու)՝¹⁵⁷:

Ի. Ծոպենը մանրամասն պատկերել է նաև Երևանի տները, բնակիչների հիստորիացը, սովորությունները, կամացարասին. «Կյանքը եռում է տներում, որոնք շինված են ընդարձակ ծաղկանցներով և շատրվաններով զարդարված բակերի մեջ: Տները գեղեցիկ են և համարյա ամենքը էլ ունեն իրենց առաջ կամ շորս կողմը պարտեզներ՝ դարավոր ընկույզներով ու թթեմիներով: Տները շինված են այնպես, որ դրսից, փողոցից ուշադրություն չգրավեն, նրանք իրենց ճակատով նայում են դեպի բակն ու պարտեզները և փողոցների վրա լուսամուտներ կամ բոլորովին չունեն, կամ շատ քիչ ունեն, այն էլ են ու փոքր լուսամուտներ: Սենյակները լուսավորվում են գլխավորապես մեծ լուսամուտներով վեր ու վար քաշվող գովազգույն ապակիներով զարդարված փեղկերով, որոնք բռնում են տան համարյա ամրող ճակատի պատու: Ունենոր քաղաքացիների սենյակները շատ կոկի են, պատերը գաշով ծեփած և այլ ծեփարվեստի հորինվածքներով զարդարված: Վառարանները չկան, այլ բուխարիկներ, որոնք ավելի գեղեցկության

Հայաստանի քարտեզից հատված,
տպագրված 1828 թ. Վենետիկում:

ჩამარ ხნ, გან თოვადნელი... Հյուրասենյակները «շուշարան» ხნ, այսինքն՝ պատերի, առաստղերի մեջ և բոխարիկների ճაկատին և կողքերին հաջրած ხն ապակու կտորներ և հայելիներ: Կամկարասիք չկա. ჩատակներին փոփած ხն թանկագին գորգեր. պատերի մեջ հանված ხն պատուհաններ, որոնց մեջ շարված ხն արկդիկներ, տուփեր, զարդաջրի սրբակներ և այլ բյուրեղյա, ჩախճապակյա գեղեցիկ անոթներ ու ամառներ, որոնց մեջ մատուցանում ხն Բյուրերին անուշենն ու մրգեր:

...ՏԵՇԻ ԱԵՐԾԻԾ այդպիսի մաքրության, գեղեցկության, կոկիկության հակապատկեր լինելը նրանց անշուր արտաքինից պետք է մենակել տնատերերի ցանկությամբ և ձգտումներով՝ ամեն միշտով թարցնելու իրենց ունեվորությունն իշխանակորների աշքից: Որքան տունը հեռու լիներ քաղաքի կենտրոնից, որքան որ մենավոր ու առանձնակի լիներ քաղաքի հեռավոր ու խոյ անկյուններից մեկում, այնքան էլ նա ավելի գին կունենար: Այդ նախազգուշությունն անհրաժեշտ է եղել երկու կարևոր պատճառներով: Եթե սարդարը Ըկատեր, որ իր հպատակ քաղաքացիներից մենք ավելի ծոխ կյանք է վարում, քան մյուսները, նրա տունը յուր սարը ու կարգով ավելի մաքուր ու կոկիկ է, նրա կիբեց ավելի շքեղ է հագնվում, հարկահանության ժամանակ նրա վրա ավելի ծանր հարկ կոնսեր»¹³⁸:

1850 թ. հունվարի 1-ից Երևանը դատնում է համազուն Զարանգի կենտ-





բոՅ: Այն կառավարում էր գեներալ Զահանգապետը: Վարչական այս բաժանումը պահպանվեց մինչև 1917 թիվը: 1897-ի մարդաբանարով Զահանգում կար 830 հազար բնակչություն:

1860-ական թվականներին Երևանը բաղկացած էր մի քանի թաղերից: Հին թաղը կամ Շիարը գրադեցնում էր և Կաթողիկե եկեղեցուց մինչև այժմյան Խորենացու (Զախկին Մարքսի) փողոցն ընկած տարածքն ու շրջակայքը: Նոր թաղը ներկայիս Թումանյանի թանգարանի շրջակայքում էր և նոր էր Կոչվել, որովհետև նոր բնակչություն նոր էին գաղթել Պարսկաստանից: Երևանի հարավում էր գտնվում Երկաթաղբյուր թաղամասը. հնում հիմնականում այստեղի տուֆն ու բազալտն էին օգտագործում կառուցապատման համար և այդ պատճենով էլ կոչվում էր նաև Քարհանքի թաղ:

Զորագյուղը գրավում էր Հրազդանի ձորի մի հատվածը: Այն իր հերթին բաժանված էր մի քանի փոքր թաղերի, որոնցից էր նաև Կարրվո թաղը, որը բնակվում էին կարրեցի գաղթականները¹³⁹: Մեսրոպ Թաղիադյանը ծնվել է այստեղ, ուստի երբեմն կոչվում է «Կարրեցի»: 1816 թ. Հնդկաստանից կատարած իր ճանապարհորդության ընթացքում նա գալիս է Զորագյուղ՝ մոր մոտ:

Երևանի հնագույն թաղերից էր Կոնդը (Ծիրանի թաղ): Նորը դեռևս շամ Արասի ժամանակ էր գրկվել բնակչությունից, իսկ նոր նորքի բնակիչները նախինանի նորս գյուղից եկած յոթ տուն բրուտների սերունդները¹⁴⁰: Նորը պաշտոնապես Երևանին միացվեց 1837 թ.¹⁴¹:

Ռուսական տիրապետության շրջանում գյուղեկ են նաև ուրիշ թաղեր: Քաղաքում յոթ հայկական եկեղեցի կար՝ Պողոս-Պետրոս, և. Աստվածածին (Կաթողիկե), և. Սարգիս, և. Գրիգոր Լուսավորիչ, և. Սիմեոն, և. Հովհաննես, և. Առանիս առաքյալի (Զորավոր)¹⁴²:

Երևանի բնակչությունը թիսուն տարվա ընթացքում (1829—1879 թթ.) 11 463-ից հասել է 12 449-ի, այսինքն՝ ավելացել է ընդամենը 986 մարդով: Այս ցածր աճը մասամբ բացատրվում է նրանով, որ երկու անգամ Գետառն է Բեղեղել քաղաքը (1860 թ., 1878 թ.): Իսկ 1827-ին¹⁴³, 1840-ին¹⁴⁴ և 1846-ին Երևանում կրկնվել է երկրաշարժը, յոթ-ութ անգամ՝ 1830, 1842, 1845, 1855, 1865 թթ. և այլն, տարածվել է խողերա, ժանտախտ և հընդախտ¹⁴⁵.

Երևանը միշտ էլ եղել է ծառագարդ քաղաք: Նրա այգենապությունը ընդգծել են համարյա բոլոր հայ և օտար հեղինակները: Ֆրեյգանը գրում է: «Հայերը կարծում են, թե Երևանը աշխարհի առաջին բնակավայրն է:

...Նրանց ավանդությունն ավելացնում է, թե նոյզ որթատունկ տնկեց Երեւանի մոտ, և նրանք այնքան են համոզված, որ ցոյց են տալիս տեղը՝ քաղաքից մի քանի վերսու հեռու»¹⁴⁶: Ավանդությունն ավանդություն, բայց թշնամու խորշակները չկարողացան առապարի վերածել կանաչ պարտեզների ակը, ամեն անգամ կյանքը ծիլ է տվել, և կրկին հասակ են առել ու սաղարթապատվել Երևանի այգիները: 19-րդ դարում Երևանում կար 1473 այգի: Եթե հաշվի առնենք, որ քաղաքն ուներ նաև 47 ջրաղաց և 9 քաղաքներ¹⁴⁷, ապա պարզ կլինի, որ Երևանցիները միշտ ել գգացել են առաս ջրի պահանջ:

Դեռ քաղաքի պատմության արշալույսին ջրանցքներ է անցկացրել Արգիշտին: Քաղաքի հնագոյն ջրային հայելին, այսպես կոչված «Թոխմախ» լինն է: Այդ արմեստական ջրամբարը կառուցվել է դեռևս մ. թ. 8-րդ դարում: 1578 թ. Երևանի «Թոխմախ» մականունվ Մամադ խանն այն վերանորոգել է և այդպիսով անվանադիր հարձել լճակին¹⁴⁸:

Քաղաքին ջուր են մատակարարել նաև Դավմայի, Արուհայաթի և նորագոյնի ջրանցքները: 11-րդ դարի սկզբին Երևանը պատկանում էր 12 հազար զորքի տեր Ապիրատ Շշանավոր իշխանին: Նա է, որ փորել է տալիս մի ջրանցք, որի շնորհիվ պեկի են ընդլայնվում քաղաքի այգիներն ու խաղողուտները: 1820—24 թթ. Երևանի Հուսեին խանն այն վերանորոգելով, իր կեռոշ անունով կոչում է Մամոհ ջրանցք:

Թե որքան օքրացած ոռոգման ցանց է ունեցել Երևանը, վկայում է այն, որ եղել են հատուկ վարձված ջրպետներ ու ջրաշխներ: Բայց Երևանցիները նույնպիսի հոգատարություն չեն ցուցաբերել իրենց համար խմելու ջուր բերելու հարցում: Երկար ժամանակ նրանք օգտվում եին Հրազդանի և Գետափի ջրերից: Այս և որոշ աղբյուրների ու առողջերի ջուրը համաճարակների ու մահացությունների պատճառ էին դառնում:

1652 թ. Նորքում գրված մի հիշատակարան վկայում է, որ Երևանցի մեծահարուստ Խոջա Գրիգորն իր ծախսով, Շշանավոր Քառասուն աղբյուրից ջուր է բերել քաղաքի համար: Նա 16 տարեկանում գնացել էր Լեհաստան և 20 տարի որպես վաճառական շրջերով աշխարհով մեկ, մեծ հարըստություն էր կուտակել: Ցանկանալով օգտակար լինել իր համաքաղաքացիներին, վերադարձել է Երևան և բազմաթիվ քարեգործություններ կատարել¹⁴⁹: Հետագայում ևս ջուր է բերվել: Այդ իր ծախսով իրագործել է Տեր-Գրիգորյան գերդաստանը: Բայց, ի վերջո, այդպես էլ չի լուծվում քաղաքի ջրամատակարարման հարցը, և 1882-ին Երևան այցելած ուսու գրող և ճանապարհորդ Դ. Մորդովցևն իր «Ընդուրություն Արարատ...» գրքում քաղաքի առողջերի վնասակար ջրի մասին գրելով, հարցնում է: «Ուրեմն, ո՞վ է ստիպում, որ մարդիկ բնակվեն այս մահաբեր կլիմայում, — և ինքն էլ պատախանում է:— Սակայն այստեղի բնույթինը, հողը և բոցակեզ արևն այնքան երկնային բարիք են տալիս մարդկանց, որքան որ նրանք հնարավորություն ունեն ստանալ: ...Միայն հազար տեսակ խաղող կա»¹⁵⁰:

Իհարկե, ջրի հարցը հուզել է Երևանցիներին, բայց քաղաքային իշխանությունները չեն ցանկացել օգնել նրանց: Հետաքրքրական է, որ քաղաքի համար կրկին ջուր է բերվում Տեր-Գրիգորյան գերդաստանի շնորհիվ: Նրանց շառավիղը, գրող և խմբագիր-հրատարակիչ, հասարակական գործիչ Էմին Տեր-Գրիգորյանի ջանքերով է, որ 1912 թվականին խողովակներով ջուր է բերվել Երևան: Խակ մինչ այդ, նա մի քանի տարի խոսրով ու գործով պայքարել է, անընդհատ ընդհարվել դումայի և քաղաքագլխի հետ և վերջապես, իր հողվածներով ստեղծել հասարակական կարծիք ու հավաքել անհրաժեշտ գումարը: Ահա, այս զուլավ և անուշահամ ջուրն է, որ Երևանին փառք է բերում:

19-րդ դարի երկրորդ կեսին Երևանի կառուցապատումը մեծ փոփոխություններ կրեց: 1856-ին հաստատվեց քաղաքի առաջին հասակագիծը, շուտով՝ 1863-ին բացվեց Բերդի փողոցը, որն անվանվեց Շահանգապետ Աստաֆիի անունով: Այդ ժամանակից ել փողոցներին սկսեցին պաշտոնապես անուններ տալ: Մինչև նարավերջ քաղաքի կենտրոնական մասում ձևավորվեցին Նազարյան (Ամիրյան, այժմ՝ Կոմշապութ արքայի), Բեհրության (Ավերյովի, այժմ՝ Փավստոս Բուզանդի), Ցարական (Սպանդարյան, այժմ՝ Արամի), Թարխանյան (Պուշկինի, Կունյանցի, այժմ՝ Վարդանյանց) և դրանց հատող Նահանգային (Ալավերդյան, այժմ՝ Հանրապետության), Տեր-Ղուկասյան (Նալբանդյան), Աստաֆյան (Արովյան) և Արմյանսկյան (Լեզինի, այժմ՝ Մաշտոցի) փողոցները: Հատկապես քաղաքի կենտրոնական մասում կառուցվեցին եվրոպական ճարտարապետությամբ պետական և հասարակական բազմաթիվ շենքեր, այդ թվում նահանգապետարանը, որ 1864-ին, թողնելով սարդարի պալատը, փոխադրվեց նահանգապետը:

Պետք է նշել, որ կայսրությանը միացվելուց հետո 50 տարվա ընթացքում Երևանի բարեկարգման համար կառավարությունը շնչին գումարներ է


Բատկացրել՝ տարեկան շուրջ 2 հազար ռուբլի, այնինչ, ասենք Երևանում բանականութեան կապուութեան համար 1873 թ. սիրահոժար տվել է 13 800 ռ.¹⁵¹:

Այդուհանդերձ, 1878 թ. հունիսին Երևանի բանտի 250 «անշնորհակալ» կալանավորներն ապատամբում են, բողոքելով իրենց կիսաքաղ գոյությունից, բանտապահների սանձարձակությունից, անտանելի պայմաններից, ինչպես նաև պատժաշափի լրանդուց հետո էլ դատապարտյալներին ամփոփ պահելու հեմ¹⁵²:

Եթե 1863 թ. Երևանի եկամուտները եղել են 25 583 ռ., դրանից միայն 1115 ռ. է տրամադրվել բարեկարգմանը¹⁵³ և պատահական չէ, որ այն մի քանի տասնամյակ գավառական քաղաքը էր, ծուռումուն, անհրապույր փողոցներով, որոնցով ազատորեն երթնեկում էին այն ժամանակ (1887 թ.) Երևանում եղած 549 ձիերը, 775 էշերը և 43 ուղտերը¹⁵⁴: Զևսպորվեցին նաև քաղաքային գրոսայդիները՝ նոր այգին կամ Բուլվարը (Հանրապետության և Շահումյանի անվան հրապարակների միջև ընկած հատվածը) և Անգլիական այգին (26 կոմիսարների անվան այգին): 19-րդ դարի երկրորդ կեսին և մեր դարի սկզբին Երևանում կառուցվեցին նոր եկեղեցներ՝ ս. Սարգիս, ս. Գրիգոր Լուսավորիչ (Ե. Զարենցի անվան դպրոցի տեղում) և ս. Նիկոլայ:

Φοιφησυνιթյուն է կրում ոչ միայն քաղաքի արտաքինը, այլև ներքին կյանքը:

Զարթոնք է ապրում մշակույթը: Դեռևս 1832-ին բացվում է գավառական դպրոցը (Բետագայում՝ արական գիմնազիան), որ տեսուչ և ուսուցիչ է աշխատել Խաչատոր Արովյանը: Պահպանվել է Արովյանի և նրա դպրոցի մասին Մորից Վագմերի հիմուն արծերավոր վկայությունը. «Ես հաճախ եմ այցելել նրա դպրոցը և միշտ եմ գարմանքով եմ դիտել հայ պատանիների արտակարգ առաջադիմությունը: 10—14 տարեկան տղաները զարմանալի հաջողությամբ կարում ու գրում են հայերեն, վրացերեն, թաթարերեն,



3-УЧЕБНЫЙ ГОДАХ. 2-РЕЗУЛЬТАТЫ ОЦЕНКИ ПОДВЫШЕННОГО УРОВНЯ 2-АУТОМНОСТИ ЧЛЮЧЕЛЛОДОВ. 4-ДЛЯЧА ПЕРВЫХ ВІДСЕВ. 5-ІНДІВІДУАЛЬНОСТЬ. 6-УРОВНІ ЗАДАЧНИХ АВТОВІДОВ. 7-УРОВНІ ЕФЕКТИВНОСТІ.

ուստեղն, գերմաներեն ու ֆրանսերեն: ...Կարդում էին Գյոթեր ու Շիլեր երկերը: ...Ուղղակի Բոգեթով էր պատահների այն վերաբերմունքը, որ ունեին իյնց ուսուցչի հանդեպ: Վերջինս էլ իր կողմից էր կարողանում ազդել իր սաների հոգու վրա՝ մի կողմից դասավանդության իր գերազանց մեթոդով ըմբռնելի էր դարձնում նյութը նրանց համար, մյուս կողմից՝ իր հայրական հոգատար վերաբերմունքով»¹⁵⁵:

Այնուհետև շորջ երեք տասնամյակի ընթացքում բացվում են թեմական հոգեր և Նորքի ծխական դպրոցները, իգական և Գայանյան օրիորդաց ուսումնարանները, իսկ 1881-ին՝ ուսուցչական սեմինարիան (Երկային ժողովրդական տնտեսության հնատիտուտի շենքը), որ ուսուցիչներ էին պատրաստում տարրական դպրոցների համար: 1908 թվականին քաղաքում արդեն 31 դպրոց կար:

19-րդ դարի երկրորդ կեսից Երևանին նվիրված մի շարք գրքեր ու հոդվածներ են գրվում: 1851 թ. լույս է տեսնում Կ. Օրլովսկու «Երիվան» փոքրիկ աշխատությունը¹⁵⁶: Այնուհետև Երևանի արական գիմնազիայի ուսուցիչ, ազգագրագետ Ստեփան Զելինսկու «Գորոդ Երիվան»¹⁵⁷ գիրքը (1881 թ.): Երկուսում էլ քաղաքի տնտեսության ու ներքին կյանքին վերաբերող բազմաթիվ վիճակագրական արժեքավոր տեղեկություններ կան: Երևանի բնական պայմանների, պատմության և հայրենագիտության մասին ուշագրավ աշխատություն է Աղամ Աղամյանի «Տեղագրություն...» գիրքը (1889 թ.)¹⁵⁸:

Դարավերջին Երևանում կառուցվում են նաև տպարաններ, հրատարակում մի շարք թերթեր:

Երևանի պարբերական մամուլի առաջնեկները «Պատակ» (1880—84) շաբաթթերթն է (խմբ.՝ Վասակ Պապաջանյան) և «Առողջապահական թերթ» (1881—84) ամսագիրը (խմբ.՝ Լևոն Տիգրանյան): Երկու խմբագիրն էլ Երևանում գործած «Հայասեր-ազգասեր» գաղտնի խմբին անդամակցության մեջ մեղադրվելով՝ 1885-ին աքսորվել են: Իսկ «Երևանի հայտարարություններ» (1883—85) թերթն էլ (խմբ.՝ Էմին Տեր-Գրիգորյան) փակվել է: 1900 թ. է. Տեր-Գրիգորյանին դժվարությամբ հաջողվում է թույլտվություն ստանալ վերաբերատարակելու իր թերթը, բայց միայն ուսւերեն: «Երիվանսկին օրյակլենիյա» (1900—17) թերթում հայերեն նյութեր հնարավոր է դառնում տպագրել միայն 1907-ին:

1907-ին Երևանում լույս է տեսել նաև «Ֆակտի» ուսուերեն թերթը¹⁵⁹, Հետագայում, մինչև 1919—1920 թթ., Երևանում հրատարակվել են նաև «Հարազդան», «Նոր ձայն», «Կոռան», «Նոր մամուլ», «Խոսք», «Զանգ», «Զինվոր», «Հայաստանի աշխատավոր», «Ժողովուրդ», «Կայձ», «Կառավարության լրաբեր», «Հայ ազգային խորմրդի լրատու», «Նոր կյանք», «Շամթ», «Երկիր», «Հառաց» և այլ թերթեր ու ամսագրեր¹⁶⁰:

1907—20 թթ. Երևանում կային տասնյակից ավելի տպարաններ, որոնցից ամենախոշորներն էին «Հովյար», «Կուլտուրան» և «Ուրարտիան», որոնք տպագրել են բազմաթիվ թերթեր ու ամսագրեր, գրքեր ու գրքույներ:

Աշխուժանում է նաև թատերական կյանքը, որն սկզբնավորվել էր դեռևս 1850-ին՝ Կ. Պոլսի «Արամյան թատրոնի» ելույթով: Երևանի թատրոնի պատմությունը սերտորեն կապված է դրամատորգ և հասարակական գործիչ Էմին Տեր-Գրիգորյանի անվանը, որը 1860-ական թվականներից իր պիեսներով ու իր գործունեությամբ մեծապես նպաստել է Երևանի թատերական կյանքի զարգացմանը¹⁶¹:

Իսկ մինչ այդ, 1827-ին Երևանի սարդարի ապարանքում Ալ. Գրիբոյեդովի կերպայությամբ առաջին անգամ բնամարդկան կերպայումների մասին Հաշինովը:

Երևանում սպասերի կազմակերպած Անդրկայացումների մասին Հաշինովը 1828 թ. փետրվարի 7-ին գրում է. «Մեր թատրոնը ժամ առ ժամ բարեկարգվում է, ավելացվում են դեկորացիաները, ստեղծվում է հանդերձարանը, իսկ ինչ վերաբերում է դերասաններին, ապա մուկովյան թատերասերը մի անգամ չէ, որ ուսան կողշեն, եթե ունենային այդպիսիները: Վերջին Անդրկայացումները շատ լավն էին, իսկ հետո ավելի լավը կլինեն: Փառք մեր դերասաններին, փառք մեր զվարճությունների կազմակերպիչներին, փառք նրանց նուրբ ճաշակին:

Բարեկենանանի օրերն զրադապ են, երեկոները՝ նույնպես: Շաբաթ օրը դիմականադես էր գեներալի մոտ, այստեղ սովորականների թվում առանձնապես աշքի ընկան մի քանի լավ դիմակներ: Մի խոսքով, դժվար է հավատալ, որ Երևանում այդքան արագ կերպով այդպիսի զվարճություններ ստեղծվեին: Կիրակի նոյնպես դիմականադես էր և ավելի շատ դիմակներ կային. Շրանցից մի քանիսը հիանալի էին: Վճռականորեն կարող եմ ասել, որ մեր դիմականադեսները ոչնչով չեն զիջում ձեր նախաճաշկան բաղարձերի դիմականադեսներին: Իսկ մի՛թե դա բավական չէ առաջին անգամ վահամար:

1891-ին հիմնվեց քաղաքային ակումբը (այժմ՝ Գայի անվան սպայի համար):

Հին Երևանի շուկան,
XIX դ. վերը:

Երևանի Էլեկտրակայանը
Հրազդանի կիրճում,
XX դ. սկիզբ:

տուն), որը 1906-ին Երևանյան իր առաջին համերգը տվեց Կոմիտասի երգչախումբը: 1910-ական թվականներին թատերական խմբակներ էին գործում «Օգտակար գիտելիքներ տարածող ընկերության» առջևներ: 1913-ին Երևանում բացվում է Ա. Բունիաթյանի թատրոնը: 20-րդ դարի սկզբին Երևանում կար երկու կինոթատրոն՝ «Ապոլլո» և «Գրանտ իմուզին»¹⁶³, 21 իշխանատուն և 13 մյուրանց՝ «Օրիանտ», «Գրանտ Անթել», «Լիոն», «Մարսել», «Վիննա», «Ֆրանսիա», «Կովկաս», «Շաղկեփունչ», «Երկաթուղի» և այլն¹⁶⁴:

19-րդ դարի վերջերից զարգանում են նաև Երևանի տնտեսությունն ու արդյունաբերությունը:

1881-ին գործարկվում է գարեջրի գործարանը, այնուհետև, մինչև դարավերջ բացվում են օդու, սպիրու և գինու, հանքային ջրերի, օշարակի և կոնյակի գործարաններ:

20-րդ դարը քաղաքի կյանքում նշանավորվեց մի շարք նոր կառույցներով: 1902 թվականի հեկտեմբերից սկսեց գործել Ալեքսանդրապոլի Երևան, իսկ չորս տարի անց՝ Երևան—Զովլիք երկարօնին: Այդ նոյն թվականին շահագործման հանձնվեց նաև քաղաքային ձիարարշը, որի կառուցման համար մասնագետներ էին հրավիրվել Բեռնավոր Գերմանիայից: Զիարշը ընդհատումներով գործեց մինչև 1918 թ., թեև պայմանագիրն ըստ



հանգամանքների՝ 36-ից 46 տարով էր, որից հետո այն դառնալու էր քաղաքի սեփականությունը¹⁶⁵: Հայու Երևանյան, Երևանի քաղաքավորությունը ու դումայի պատգամավորները կարծում էին, որ առաջիկա կես դարի ընթացքում դմվար թե աշխարհում գտնվի ձիուն փոխարինող մեկ այլ փոխադրամիջոց:

1907-ին Հրազդանի վրա կառուցվում է «Ամպեր» ընկերության փոքրիկ հիդրոէլեկտրակայանը և միայն կոնյակի գործարանի պահանջների համար՝ «Շուստով և որդիներ» ընկերության հիդրոէլեկտրակայանը¹⁶⁶: Եթե նախկինում քաղաքի կենտրոնական մի քամի փողոցներն էին լուսավորությապտերները (1863-ին՝ 41, 1880-ին՝ 100 հատ, 1904-ին՝ 722)¹⁶⁷, ապա 1907-ից դրանք փոխարինվեցին էլեկտրական լամպերով: Բայց ստացվող էլեկտրականությունն այնքան քիչ էր, որ միշտ դժգությունն էր հարուցում քաղաքի սակավաթիվ այն բնակիչների, որոնք նավթի լամպը փոխարինեն էին «Ամպեր» լամպերով: Առաջ թե 1909 թ. ինչ է գրում «Երիվան-սկիե օրյավլենիյա» թերթում մի զայրացած երևանցի: «Բավկան է, որ «Ելյուզիոնն» կամ թատրոնն ներկայացում լինի և կամ դումայի դամին նիստեր, և տեսնում ենք մյուս տեղերում ու տեղերում ստացվում է վնասակար կարմիր լույս: Նույն լույսն էլ ստացվում է կուրում և թատրոնում: Լույսը մերժ բարձրանում է, մերժ իշնում, իսկ երբեմն էլ միանգամայն հանգչում»¹⁶⁸: 1913 թ. մայիսի 12-ին քաղաքում անցկացվեց 80 համարով թեունուային ցանց¹⁶⁹, իսկ Երևան—Թիֆլիս թեուագրագիծը գործարկվել է 1864-ին¹⁷⁰:

Խնչպես նախկինում, այնպես էլ 20-րդ դարի սկզբին, Երևանում բռնկվում են համաճարակներ. 1908—10 թվականների խոլերան քաղմաթիվ զոթեր է նլում: Այսպիսի արհավիրքների առաջն առնելու համար 1910 թ. Երևանի



բժիշկները համախմբվում են բժշկական ընկերության մեջ: 1913-ին Երևանում կար 4 բուժարան, 3 դեղատուն, ակնարուժարան և հոգեբուժարան: Կային նաև մասնավոր հիվանդանոցներ:

Համաճարակների, ջրի վատորակության, առողջապահության ծանր վիճակի հետևանքը էր այն, որ Երևանում երեխաների մահացությունը շատ բարձր էր՝ 1886-ին՝ 64,3 տոկոս, 1896-ին՝ 84,7, 1906-ին՝ 64,8, 1910-ին՝ 87,8 տոկոս, որի հետևանքով բնական աճը շատ ցածր էր՝ 1886-ին՝ 1,24 տոկոս, 1906-ին՝ 1,07, 1910-ին՝ 0,44 տոկոս¹⁷¹: Ասեօք, որ ուսական կայսրությանը միացվելոց հետո, Երևանի բնակչությունը 50 տարվա՝ 1829—1879 թթ. ընթացքում աճել է ընդամենը 986 մարդով, 11 463-ից հասնելով 12 449-ի, այնինչ, եթե նոյնիսկ քաղաքը նոր բնակչությունը չընդուներ, միայն բնական աճով պետք է որ այդ ընթացքում բնակչությունը առնվազն կրկնապատկվեր¹⁷²: Այդ տասնամյակների ընթացքում նաև հայերի շնորհիվ Թիֆլիսն ու Բաքրուն դարձան մարդաշատ ու ծաղկուն քաղաքներ, Երևանին վերապահելով գավառների ազգականի դեր: Այսպես, եթե դարասկզբին Երևանն ու Թիֆլիսը



բնակչության թվով իրարից շատ քիչ էին տարրերվում, իսկ դարի կեսերին էլ Երևանն ու Բաքրուն մոտավորապես նոյնքան բնակչություն ունեին, ապա արդեն 1897-ին Թիֆլիսում բնակվում էր 160 հազար, Բաքվում՝ 112 հազար, իսկ Երևանում՝ 29 հազար մարդ¹⁷³: Ի դեպ, այդ թվականին Երևանում կային նաև 3 207 ուսներ, 190 լեռներ, 175 հրեաներ, 64 գերմանացիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ:

Սուածին աշխարհամարտի նախօրեին՝ 1912 թ. Երևանն ուներ 36 838 բնակիչ¹⁷⁴: Պատերազմի տարիներին Երևանում էին ապաստանել տասնյակ հազարավոր արևմտահայեր, և թուրքական ու քրդական յաթաղանից փորկվածներին հնձնում էին սովոր ու համաճարակը: Քանի որ Երևանը որբերին ու տնամկներին տեղավորելու քիչ հնարավորություն ուներ, գաղթականներն ուղարկվում էին Հայաստանի տարրեր գավառներ, այնուամենայնիվ, 1917 թ. Երևանում կար 17 595 փախստական, որոնց մի մասը՝ հատկապես որբերը, պատսպարվել էին որբանոցների վերածված դպրոցներում¹⁷⁵: Եվ այս հոգսաշատ քաղաքը կարողացավ իր մեջ աներևակայելի ուժ գտնել ու 1918-ի մայիսին Սարդարապատում ջախչախել Երևանի վրա արշավող թուրքական բանակը:

Երբ 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը վերականգնեց անկախությունը, աշխարհի տարրեր ծայրերից մայրաքաղաք Երևան եկան հայ ազտագրության գործիչներ, բազմաթիվ գիտնականներ ու արվեստագետներ: Համախմբվելով հայրենիքում, նրանք գլխավորեցին հայ ժողովրդի մաքա-



ոռմի և հերոսացման երթը: Ազգի առջև խնդիր էր դրված դիմակայելով քաղում փորձություններին՝ հարատևել որպես հոգեպես ու ֆիզիկապես ուժեղ ազգ: Հայաստանում մարզամիապարակներ ու մարզական ընկերություններ հիմնելու անհրաժեշտության մասին պարզորոշ գրված է Հայաստանի Շորաստեղ կառավարության կողմից Ամերիկայի հայ ազգային խորհրդին ուղարկված համակում. «Մեր մատադ հանրապետության և սերնդի ամրապնդման համար միակ գրավականը մեր ազգի ֆիզիկական և բարոյական ամրապնդումն է: Հայ ժողովրդի ապրած սոսկումները մի կողմից, անհնդատ ճարակվող սոսկալի հիվանդությունները, անվերջանալի տեղահանությունները, սովոր և ծայր աղքատությունը մյուս կողմից, վերջնականապես քայլայել են մեր օրգանիզմը և նսեմացրել նրա կազմը: Հայ ազգի մնացորդները կորցրել են իրենց կենսունակությունը և երբեմնի առույգ ու աշխայությունը այսօր լրված ու ընկնված է բարոյապես, ծերացած՝ ֆիզիկապես: Ուստի մեր առջև առավել, քան ուրիշ մի ազգի առջև, հրամայաբար ծառացում է վերածնության խնդիրը: Մեր ազգը պետք է վերածնվի ֆիզիկապես և բարոյապես, եթե նա ուզում է պահպանել իր գոյությունը պատերազմական և տնտեսական կովի մեջ»¹⁷⁶: Ծուտով Երևանում ստեղծվում են մարզական ընկերություններ, մարզադաշտեր, մարզական խմբեր ու մարզադպրոց:

Հայ կամավորական գունդը
անցնում է Կարմիր կամրջով և
ուղևորվում Արևմտյան
Հայաստան, 1915 թ.:

Հրազդանի կիրքը և ս. Սարգսի
էկեղեցին, XX դ. սկիզբ:

Երևանի շուկան,
XX դ. սկիզբ:

Կառավարությունը եռանդուն գործունեություն է ծավալում նաև հոգեվոր և մշակութային ասպարեզում: Դժվարին պայմաններում, 1919-ին հիմնվում է Ազգային գրադարան, որի համար գործեր են բերվում Թիֆլիս—Երևան վտանգավոր ճանապարհով¹⁷⁷:

1919 թ. մայիսին որոշում է ընդունվում բանալ Բամալսարաց¹⁷⁸: Հիմնվում է Ազգագրական-մարդարանական թանգարան, կազմակերպվում է հայ արվեստագետների միության անդրանիկ պատկերահանդեսը, որը ցուցադրվում են Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյանի և այլոց նկարները¹⁷⁹: 1919 թ. վերջներին Երևանում արդեն գործում էին թատերական վարժարաններ, երաժշտական, հայոց լեզվի, մանկավարժական դասընթացները և կրթական այլ հիմնարկությունները¹⁸⁰:

1920 թ. ամռանը Երևանում տրվեցին մի շարք թատերական ներկայացումներ: Այս դժվարին օրերին քաղաքում գործում էին Հայաստանի գրական ընկերությունը, մարմնամարզական ընդհանուր միությունը, տեխնիկական, իրավաբանական, բժշկական, ուսուցչական, ուսանողական միությունները, հրատարակչական ընկերությունը, նույնիսկ Հայաստանի շահմատիստների ընկերությունը, «Դյուցազն» մարզական ակումբը, երիտասարդ գրողների «Պանդոկ» խումբը, Երևանի Հայությաց միությունը, Վասպորականի կանանց միությունը և եփի շուրջ 20 հայրենակցական միություններ ու ընկերություններ¹⁸¹:

Հանրային կրթական և արվեստի նախարարությանը կից ստեղծվեց Հայաստանի հնությանց պահպանության կոմիտեն, որի նպատակը հուշարձանների պահպանումն ու գիտական ուսումնասիրումն էր¹⁸²:

Անվերջ պատերազմների, սովոր ու հիվանդությունների շրջապատճեռում անգամ, պետական այրերը մտածում էին Երևանի քաղաքաշինական ապագայի մասին. «Ներկայում մշակվում է քաղաքի հատակագիծը համապատասխան եվրոպական շինարարության և քաղաքների բարեկարգման ժամանակակից պահանջների», — 1920 թ. մայիսին կառավարությանը հունական առում է Ալ. Թամանյանը¹⁸³: Այնուհետև Երևանը դառնալու էր կառուցումների ու հուսերի, ազգային հավաքականության և պետականության խորհրդանշից: Բայց ազգային զարթոնքը կացնահարվեց 1920 թ. դեկտեմբերին, երբ 11-րդ կարմիր բանակը մտավ Երևան, և Հայաստանը բռնակցվեց խորհրդային կայսրությանը: Բանտերը լցվեցին, գնդակամարդիքին կամ աքսորվեցին բազմաթիվ Եշանավոր գործիչներ՝ Հայաստանը ու



11-րդ Կարմիր բանակի
մուտքը Երևան, 1920 թ.:

Երևանի նահանգապետի տունը
և գրասենյակը:

Հ. Հովհաննիսյանի տան և
բուժարանի անկյունային
հատվածը:

Պ. Էսապյանի տունը:

Նահանգային վարչությունը և
Ֆոն դեր Նոնեի տունը:

Հատված Նահանգային (այժմ՝
Հանրապետության) փողոցից,
շափազրություն:


Հ. Հովհաննիսյանի տունը և
բուժարանը (1914—1915 թթ.):



Թայրաքաղաք Երևանը վերածվեցին խորհրդային փորձադաշտի. Միայն 1921—22 թթ. ընթացքում Երևանում իրար են Բաջորդյալ քաղխորհրդի գործ կոմի ուր նախագահներ¹⁸⁴:

Հայ ժողովուրդը տոկում էր ո չէր Բրաժրարկում իր երազանքներից: Նրա ազնվագույն զավակները շարունակում էին ավերին Բակադրել կառուցումը: Ալեքսանդր Թամանյանը բոլշևիկյան խառնաշփոթի այդ օրերին էլ շարունակում էր աշխատել Երևանի գլխավոր հատակագծի վրա՝ Բավարարության քաղաքի իր տեսիլքին: 1923-ին նա գրում է. «Քաղաքում տիրապետող զորանոցային թախծի գոյնն է: Կարծես կառուցել էին Բավերժական սգի Բամար: Չարք-շարք, ինչպես ցնորվածներ, կանգնած էին կավածիք, կեղտոտ տմեր, շատերմ այնքան էին գետմին Բակված, որ Անցուկները Բազիվ էին պատու: Քարամձավներ, ոչ պատուման կա, ոչ ծխմելույզ: Սև ծովով դուրս է գալիս դռներից, մրի մեջ ողողելով և տուն, և փողոց, և անցորդներին: Համատարած խրճիթների մեջ սեպի պես խրված էին քարեր շնմքեր. Եվրոպայի օջախներն էին՝ Ասիայի մոխրակուլտերի







Պետական բանկի շենքը
(Սպանդարյան 54):

Բ. Եղիազարյանի
տունը (1908 թ.):

Սպանդարյան 36 տան
շեամուտը:

Ուսուցչական սեմինարիաի շենքը
(Աբովյան 52):

Բնակելի տան
պատշաճմբից դրվագ:

Տ. Թաղենոսյանի առանձնատունը
(Սպանդարյան 44):

Պետական զանարանի շենքը
(Նալբանդյան 48):

